**ՇՏԱՊԵԼ**, բ. *Աշխատել շուտ անել: Աճապարել:*
**ՇՏԱՊՈՂԱԿԱՆ**, ած. *Որտեղ հարկաւոր է շտապել:*
**ՇՏԱՊՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Շտապողական լինելը:*
**ՇՏԱՊՈՎԻ**, ած. մկ. *Շտապով: Աճապարանքով:*
**ՇՏԵՄԱՐԱՆ**, գ. *Ամբարանոց, մթերանոց: Մառան:*
**ՇՏԵՄԱՐԱՆԱԼԻՑ**, ած. *Շտեմարանը լցնող:*
**ՇՏԵՄԱՐԱՆԱՊԱՀ**, ած. գ. *Շտեմարանի պահապան:*
**ՇՏԵՄԱՐԱՆԱՊԵՏ**, գ. *Շտեմարանների գլխաւոր վերահսկիչը:*
**ՇՏԵՄԱՐԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ**, գ. *Շտեմարանապետ լինելը:*
**ՇՏԵՄԱՐԱՆԱՓԱԿ**, ած. *Շտեմարանը փակող:*
**ՇՏԵՄԱՐԱՆԵԼ**, բ. *Շտեմարանի մէջ ժողովել:*
**ՇՏԿԵԼ**, նբ. *Ուղղել, կոկել:*
**ՇՐԱ՜ԽԿ**, միջ. *Բացագանչութիւն՝ որով արտայայտում են շրխկալու ձայնը, շրխկոցը:*
**ՇՐԷՇ**, գ. (Բուս.), *Շուշանազգիներու կարգին պատկանող երկարակեաց բոյս: Շրէշի փոշին, որ գործ է ածուում իբրեւ սոսինձ:*
**ՇՐԷՇԵԼ**, բ. *Շրէշով կպցնել:*
**ՇՐԹԱՎԱՐԻ**, ած. մկ. *Թափթփուած:*
**ՇՐԹՆԱԳԻԾ**, գ. *Շրթունքների օղակող՝ եզերող գիծ:*
**ՇՐԹՆԱԾԱՂԻԿՆԵՐ**, գ. (Բուս.) *Փոշածաղիկների դասին պատկանող բոյսերի կարգ:*
**ՇՐԹՆԱԿԱՆ**, ած. (Քրկն.) *(Տառ) որ արտասանուում է շրթունքներով:*
**ՇՐԹՆԱՀԱՆԴԻՊՈՒՄ**, գ. *Շրթունքների իրար հանդիպելը:*
**ՇՐԹՆԱՀԵՐՁ**, ած. *Որի շրթունքներից մէկը, աւելի յաճախ՝ վերինը, ճեղքուած է բնականից:*
**ՇՐԹՆԱՀԵՐՁՈՒԹԻՒՆ**, գ. (Կազմախ.) *Շրթնահերձ լինելը, շրթունքներից մէկի ճեղքուած լինելը:*
**ՇՐԹՆԱՆԵՐԿ**, գ. *Շրթունքները ներկելու ներկ:*
**ՇՐԹՆԱՏ**, ած. *Շրթունքը կտրած:*
**ՇՐԹՆԱՒՈՐ**, ած. *Շրթունք կմ շուրթ ունեցող:*
**ՇՐԹՈՒՆՔ**, գ. (Կազմախ.) *Բերանի բացուածքի վերեւի եւ ներքեւի կարմրագոյն մասներից ամէն մէկը:* (Բուս.) *Շատ ծաղիկների պսակի երկու բլթակները:*
**ՇՐԹՈՒՆՔԷ**, ած., (դիպվ.): *Շրթունքի:*
**ՇՐԻՇԱԿ**, գ. *Փայտի երկայն, նեղ ու բարակ շերտ, որ կպցնում են դռների, պահարանների եւն փակուող փեղկերի եզերքին:*
**ՇՐԽԿԱՆ**, ած. *Շրխկացող:*
**ՇՐԽԿՈՑ**, գ. *Շրխկալու ձայն:*
**ՇՐՄՓԱԼ**, բ. *Ընկնելիս կմ հարուածելիս ուժեղ ձայն հանել:*
**ՇՐՄՓԱԼԷՆ** }
**ՇՐՄՓԱԼԻ** } մկ. *Շրմփալով:*
**ՇՐՄՓՈՑ**, գ. *Շրմփալու ձայն:*
**ՇՐՇԵԼ**, բ. *Շրշիւն հանել:*
**ՇՐՈՒԱՆԴ**, գ. *Խաղողի ճիթ:*

**ՇՐՈՒՇԱԿ**, գ. *Ձիու բերանակապ: Սանձ:*

**ՇՐՋԱԲԱՆ**, ած. *Խօսքը շրջշրջող:*

**ՇՐՋԱԲԱՆԱԿ**, ած. *Շուրջը բանակ դրած:*

**ՇՐՋԱԲԱՆԵԼ**, բ. *Խօսքը շրջշրջել:*

**ՇՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Խօսքը շըրջշրջելը:*

**ՇՐՋԱԲԵԿՈՒԹԻՒՆ**, գ. (Քրկն.) *Պարոյկ շեշտը: Բառը պարոյկով արտասանելը:*

**ՇՐՋԱԲԵՐ**, ած. *Շուրջ եկող, բոլորակաձեւ:*

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**, ած. *Շրջան կատարող:* ած. գ. *Մատեան, Հրաւիրաթուղթ:*

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Շրջաբերական լինելը:*

**ՇՐՋԱԲԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Շրջանաձեւ պտտուելը:*

**ՇՐՋԱԲՆԱԿ**, ած. *Շուրջը բնակող:*

**ՇՐՋԱԲՈԼՈՐ**, ած. *Բոլորակաձեւ:*

**ՇՐՋԱԳԱՅ**, բ. *Ման է գալիս:*

**ՇՐՋԱԳԱՅ**, ած. *Շրջող:*

**ՇՐՋԱԳԱՅԱԲԱՐ**, մկ. *Շրջագայելով:*

**ՇՐՋԱԳԱՅԵԼ**, բ. *Շուրջ պատել:*

**ՇՐՋԱԳԱՅԻԿ**, ած. *Շրջագայող:*

**ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Շրջան կատարելը:*

**ՇՐՋԱԳԻԾ**, գ. *Այն գիծը, որ առարկայի եզրն է կազմում:*

**ՇՐՋԱԳԻՐ**, ած. գ. *Շրջուած գրութիւն:*

**ՇՐՋԱԳԾԵԼ**, բ. *Շրջագիծը քաշել:*

**ՇՐՋԱԳՐԱԿԱՆ**, ած. *Պարագրող:*

**ՇՐՋԱԴԱՐՁ**, ած. *Ինքն իր վրայ դարձող՝ պտտուող:*

**ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ**, ած. *Շրջադարձի յատկութիւն ունեցող:*

**ՇՐՋԱԴԻՏԱԿ**, *Տեսողական սարք:*

**ՇՐՋԱԶԱՐԴ**, ած. *Շուրջը կմ չորս կողմից զարդարուած:*

**ՇՐՋԱԶԳԵՍՏ**, գ. *Կանանց երկայն զգեստ:*

**ՇՐՋԱԶՆՆՈՒՄ**, *Շրջակայքի՝ չորս բոլորի դիտում՝ զննում:*

**ՇՐՋԱԹՈՒԻՉՔ**, *Թռչելով՝ շրջելը, բոլոր տեղերն այցելելը:*

**ՇՐՋԱԽՈՅԶ**, ած. *Շուրջը խուզարկող:*

**ՇՐՋԱԾԻՐ**, գ. *Այն ծիրը կմ գիծը, որով մոլորակը պտտուում է արեգակի շուրջը:*

**ՇՐՋԱԿԱՅ**, ած. *Շուրջն եղած, շրջապատող: Մերձեկայ:*

**ՇՐՋԱԿԱՅԵԼ**, բ. *Շուրջը կանգնել՝ պատել:*

**ՇՐՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Շրջական լինելը:*

**ՇՐՋԱԿԱՊԵԼ**, բ. *Շուրջը՝ չորս կողմից կապել:*

**ՇՐՋԱԿՏՈՒՐ**, ած. *Շուրջը՝ չորս կողմից կտրուած:*

**ՇՐՋԱՀԱՅԵԱՑ**, ած. *Շուրջը նայող՝ դիտող:* Փոխ. *Զգոյշ:*

**ՇՐՋԱՀԱՅԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Շրջահայեաց լինելը:*

**ՇՐՋԱՀՄԱՅ**, գ. (Սնահաւ.) *Շրջահմայութիւն անող կախարդ:*

**ՇՐՋԱՀՈՍ**, ած. *Շուրջը հոսող:*

**ՇՐՋԱՀՈՍԻՉ**, *Յատուկ կառուցուածք, որը հեշտացնում է գազի կամ հեղուկի հոսումը, ինչի շնորհիւ էապէս նուազում է ջրաօդաշարժական դիմադրութիւնը:*

**ՇՐՋԱՆ**, գ. *Շարժում, որ մի կէտից սկսելով դարձեալ գալիս հասնում է նոյն կէտին. պտոյտ:* (Աստղաբ.) *Այն ժամանակամիջոցը, որից յետոյ կրկնւում են նոյն աստղաբաշխական երեւոյթները միեւնոյն կարգով:* (Երկրաչ.) *Բոլորակաձեւ մակարդակ: Մի պետութեան մէջ որոշ հողամաս: Մարդկանց խումբ: Ժամանակի տեւողութիւն:*

**ՇՐՋԱՆԱԲՆԱԿ**, գ. *Շրջանում բնակուող:*

**ՇՐՋԱՆԱԺԱՄ**, գ. *Շրջան կատարող ժամանակ:*

**ՇՐՋԱՆԱԿ**, գ. *Շրջելը, շրջագայութիւն: Սահման:* (Աստղաբ.) *Գօտի, ծիր:* Նման.

*Ծրագրուած սահման գործունէութեան: Պարունակ, բոլորաձեւ առարկայ:*

ՇՐՋԱՆԱԿԱՁԵՒ, ած. *Շրջանակի ձեւ ունեցող. բոլորշի:*

ՇՐՋԱՆԱԿԱՒՈՐ, ած. *Շրջանակ ունեցող:*

ՇՐՋԱՆԱԿՈՒԱԾ, ած. *Շրջանակի մէջ առնուած:*

ՇՐՋԱՆԱԿՕՐԷՆ, մկ. *Շուրջանակի: Շուրջը պատելը:*

ՇՐՋԱՆԱՄԷՋ, ած. *Երկու շրջանի միջեւ տեղի ունեցող:*

ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Շրջան անելը:* (Կազմախ.) *Արիւնի անդադար շարժումը: Գործածութեան մէջ լինելը:*

ՇՐՋԱՆԱՒԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Նաւարկութիւն աշխարհի շուրջը:*

ՇՐՋԱՆԱՒԱՐՏ, ած. գ. *Նա որ (միջնակարգ դպրոցում) ուսման շրջանն աւարտում է եւ դուրս է գալիս դպրոցից:*

ՇՐՋԱՆԱՒՈՐ, ած. *Շրջան ունեցող, շրջան կատարող:*

ՇՐՋԱՆԿԱՐ, գ. *Մի բանի շուրջն եղած նկարը:*

ՇՐՋԱՉԱՓ, գ. *Մի քաղաքի՝ տեղի շրջապատի չափը:*

ՇՐՋԱՊԱՀ, ած. գ. *Մէկի անձը պահպանող, թիկնապահ:*

ՇՐՋԱՊԱՏ, ած. *Շուրջը՝ շուրջանակի պտտող:*

ՇՐՋԱՊԱՏԵԼ, բ. *Շուրջը՝ շուրջանակի պատել: Պաշարել: Փաթաթել:*

ՇՐՋԱՊԱՏԻԿ, ած. *Շրջապատող:*

ՇՐՋԱՊԱՏՆԷՇՈՒՄ, *Վարակի, հիւանդութիւնների օջախի մեկուսացման եղանակ:*

ՇՐՋԱՊԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Շրջապատ, շրջապատի երկարութիւնը:*

ՇՐՋԱՊԱՏՈՒՄ, գ. *Շրջապատելը:*

ՇՐՋԱՊԱՐԻՍՊ, գ. *Մի տեղի շուրջը քաշած պարիսպ:*

ՇՐՋԱՊԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Շուրջը պար առնելը:*

ՇՐՋԱՊՆԴԵԼ, բ. *Շուրջը պնդացնել:*

ՇՐՋԱՊՏՈՅՏ, գ. *Պտոյտ, շրջագայութիւն:*

ՇՐՋԱՌԱԿԱՆ, ած. *Շրջանառութեան յատկացրած:*

ՇՐՋԱՌԻԿ, ած. *Շրջող:*

ՇՐՋԱՌՈՒՄ, *Տեղաշարժ, որը կատարւում է յուրային զօրքերը հակառակորդի դիրքեր դուրս բերելու եւ նրա թեւին հարուածելու նպատակով:*

ՇՐՋԱՍԱՑՈՒԹԻՒՆ, Տ. *Շրջաբանութիւն:*

ՇՐՋԱՍՓԻՒՌ, ած. *Շուրջը սփռուած:*

ՇՐՋԱՎԱՃԱՌ, գ. *Շրջիկ առեւտրական:*

ՇՐՋԱՎԱՅՐ, գ. *Մի տեղի շուրջն եղած վայրերը, շրջապատ:*

ՇՐՋԱՐԿԵԼ, բ. *Շուրջը տարածել:*

ՇՐՋՎԱՐՉԱԿԱԶՄ, գ. *Շրջանային, շրջանի վարչակազմ:*

ՇՐՋԱՓԱԿ, ած. մկ. *Չորս կողմից փակուած:*

ՇՐՋԱՓԱԿԵԼ, բ. *Չորս կողմից՝ շուրջանակի փակել:*

ՇՐՋԱՓԱԿՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Շրջափակուած լինելը:*

ՇՐՋԱՓՈՒԼԱՅԻՆ, ած. *Շրջափուլին վերաբերող:*

ՇՐՋԱՓՈՒԼԱՍՏԵՂԾ, ած. *Շրջափուլ ստեղծող:*

ՇՐՋԵԼ, բ. *Շուռ տալ, դարձնել: Կանգնած բանը տապալել:*

ՇՐՋԵԼ, բ. *Շրջան կատարել, շրջանաձեւ շարժուել: Պտոյտ կատարել, Շրջագայել, Փոխուել:*

ՇՐՋԵԿ, գ. *Ջբօսաշրջիկ:*

ՇՐՋԻԿ, ած. *Շրջող:*

ՇՐՋԿԷՆ, ած. *Դիւրաշրջիկ, անդադար պտտուող:*

ՇՐՋՄՈԼԻԿ, ած. *Մոլորուածի պէս շրջող, աննպատակ շրջող:*

ՇՐՋՄՈԼԻԿՈՒԹԻՒՆ, գ. *Շրջմոլիկ լի-*

*նելը։*

**ՇՐՋՇՐՋԵԼ**, բ. *Այս ու այն կողմը դառնալ։*

**ՇՐՋՇՐՋՈՒՆ**, ած. *Շրջշրջող։*

**ՇՐՋՈՒՄ**, գ. *Շրջելը։*

**ՇՐՋՈՒՆ**, ած. *Շրջող, դարձող։*

**ՇՐՋՕՂԱԿ**, գ. *Ձայնապնակի մակերեսի օղակաձեւ գիծ։*

**ՇՐՋՕՆ** } **ՇՐՋՕՆՔ** } գ. *Մի առարկայի հակառակ կողմը։*

**ՇՐՏԵԼ**, բ. *Աչքերը պաղել, անթարթ յառած մնալ։*

**ՇՐՏՆՈՒԼ**, բ. *Խրտնել, Շուարել։*

**ՇՓԱԼ**, բ. *Շփածք ունենալ։*

**ՇՓԱԾՔ**, գ. *Շմոլք։ Ածխաթթուով թունաւորուիլ։*

**ՇՓԱՆԱԼ**, բ. *Փքուել, պարծենալ։ Երես առնել։*

**ՇՓԱՐԵԼ**, բ. *Ծեծել։*

**ՇՓԱՑՈՒԿ**, ած. *Շփացած։*

**ՇՓԵԼ**, բ. *Ձեռքը կմ մի այլ բան մի առարկայի քսելով մի քանի անգամ տանել-բերել։ Մաժել, տրորել։ Ձեռք գցել։*

**ՇՓԵՐԹ**, ած. *Վռազով եւ անզգոյշ գործ անող։*

**ՇՓԵՐԹՈՒԹԻՒՆ**, գ. *Շփերթ լինելը, վռազ ու անզգոյշ գործ անելը։*

**ՇՓԹԻԿ**, ած. *Պճնամոլ։*

**ՇՓՇԸՓ**, գ. *Հողաթափ։*

**ՇՓՇՓԱԼԻ**, մկ. *Շը՜փ-շը՜փ ձայներ հանելով*

**ՇՓՇՓԱՀԱՄ**, գ. *Ջրի, գինու՝ կերակուրի եւն անախորժ համ։*

**ՇՓՇՓԱՀԱՄԵԼ**, բ. *Շփշփահամ տալ, անախորժ համ տալ։*

**ՇՓՇՓԵԼ**, բ. *Յաճախ կմ այս ու այնտեղ շփել։*

**ՇՓՈԹ**, ած. *Խառնակ, խառնաշփոթ։*

**ՇՓՈԹ**, գ. *Խիւսի նման կերակուր։*

**ՇՓՈԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Խառնակ խօսք։*

**ՇՓՈԹԱՆՔ**, Տ. *Շփոթում։ Իրարանցում։*

**ՇՓՈԹԵԼ**, բ. *Իրար խառնել, խառնշտորել։*

**ՇՓՈԹԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Շփոթել՚ի, շփոթել։*

**ՇՓՈԹՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Շփոթուած լինելը։*

**ՇՓՈԹՈՒԹԻՒՆ**, գ. *Շփոթ՝ խառնակ լինելը, պարզութեան բացակայութիւն։*

**ՇՓՈԹՈՒՄ**, գ. *Շփոթելը։*

**ՇՓՈՐԹ**, գ. *Փորացաւ։*

**ՇՓՈՒՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Հաղորդակցուելու՝ շփուելու կարողութիւն։*

**ՇՓՈՒՄ**, գ. *Շփելը։*

**ՇՓՌԹՈՒ**, գ. *Կռիւ, աղմուկ։*

**ՇՓՌՏԱԼ**, բ. *Շփռտոց հանելով քայլել։*

**ՇՓՌՏՈՑ**, գ. *Մրերի կմ այլ բաների իրար ընդհարուելուց առաջացած ձայն, շկահիւն։*

**ՇՔԱԴԻՐ**, ած. *Շուք դնող։*

**ՇՔԱԴՐԱՄ**, գ. *Ոսկուց, արծաթից կմ այլ մետաղից տպուած դրամ։*

**ՇՔԱԼ**, բ. *Շուք՝ փառաւորութիւն ցոյց տալ։*

**ՇՔԱԼԻՑ**, ած. *Շատ շուքով։*

**ՇՔԱԽՈՒՄԲ**, գ. *Շքաղիր խումբ։*

**ՇՔԱՀԱՆԴԷՍ**, գ. *Շքեղ հանդէս։*

**ՇՔԱՆՇԱՆ**, գ. *Նշան, որով պարգեւատրում են մէկին՝ պետութեան մատուցած յայտնի ծառայութիւնների համար։*

**ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ**, ած. գ. *Շքանշան կրող։*

**ՇՔԱՊԱՏՇԳԱՄԲ**, գ. *Շէնքի՝ փողոցի կողմի պատշգամբ։*

**ՇՔԱՍԵՂԱՆ**, գ. *Հրաւէրի ճոխ՝ զարդարուած սեղան։*

**ՇՔԱՐՄԱՒ**, գ. (Բուս.) *Արմաւենիների կարգին պատկանող բարձր ծառ։*

**ՇՔԵՂ**, ած. *Ընդհանրապէս՝ շուքով լի, փառաւոր։*

**ՇՔԵՂԱԲԱՐ**, մկ. *Շքեղ կերպով։*

**ՇՔԵՂԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Աւելի շքեղ։*

**ՇՔԵՂԱՁԱՐԴ**, ած. *Շքեղ կերպով զարդարուած:*
**ՇՔԵՂԱՁԱՐԴԵԼ**, բ. *Շքեղ կերպով զարդարել:*
**ՇՔԵՂԱՁԱՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Շքեղազարդ լինելը:*
**ՇՔԵՂԱԶԳԵՍՏ**, ած. *Շքեղ կերպով հագնուած:*
**ՇՔԵՂԱԿԵՐՊ**, ած. *Շքեղ կերպարանք ունեցող:*
**ՇՔԵՂԱԿԵՐՏ**, ած. *Շքեղ կերտուած՝ շինուած:*
**ՇՔԵՂԱՃՈԽ**, ած. *Ճոխ շքեղութեամբ:*
**ՇՔԵՂԱՆԱԼ**, բ. *Շքեղ դառնալ:*
**ՇՔԵՂԱՇՈՒՔ**, ած. *Շատ շքեղ:*
**ՇՔԵՂԱՒՈՐ**, ած. *Շքեղ. փառաւոր:*
**ՇՔԵՂՈՒԹԻՒՆ**, գ. *Շքեղ լինելը:* Հկռ. *Պարզութիւն:*
**ՇՔԵՐԹ**, գ. *Զօրքի հանդիսաւոր գնացք:*
**ՇՔԹԱԿՆԵՐ**, յոգն. գ. (Կենդ.) *Թանձրափուշ ձկների կարգին պատկանող ձըկների ցեղ:*
**ՇՔԹԵԼ**, բ. *Անամօթել:*
**ՇՔՌԱՄԷՋ**, գ. *Շքեռի մէջ, երկու ոտների բացուածքը: Սեռական գործարանից մինչեւ սրբանը: Շէք:*
**ՇՔՌԵԼ**, բ. *Շքեռը լայն բանալ, ոտները լայն բանալ:*
**ՇՔՌՈՒԵԼ**, բ. *Զուգուել-զարդարուել, մազերը՝ վրան գլուխը յարդարել:*
**ՇՕՇԱՓ**, գ. *Շօշափելը, ձեռքով՝ շրթունքով եւն հպելը մի բանի:* (Երաժ.) *Դաշնամուրի ստեղներին մատներով խփելու եղանակը:*
**ՇՕՇԱՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Շօշափական՝ շօշափելի լինելը:*
**ՇՕՇԱՓԵԼ**, բ. *Մօտենալով մի բանի քսուել մակերեւոյթին: Հպիլ, ձեռնել:*
**ՇՕՇԱՓԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է շօշափել:*
**ՇՕՇԱՓԵԼԻՔ**, գ. *Մէկը հինգ զգայարաններից:*
**ՇՕՇԱՓԵԼԻՕՐԷՆ**, մկ. *Շօշափելի կերպով:*
**ՇՕՇԱՓԻՒՆ**, գ. *Շօշափելը:*
**ՇՕՇԱՓՈՂ**, ած. գ. (Երկրաչ.) *Ուղիղ գիծ, որ շօշափում է շրջանի շրջանակի մի կէտը:*
**ՇՕՇԱՓՈՂԱԿԱՆ**, Տ. *Շօշափական:*
**ՇՕՇԱՓՈՒԿ**, գ. *Միջատների բեխերը:*
**ՇՕՇԱՓՈՒՄ**, գ. *Շօշափելը, շօշափուելը:*
**ՇՕՇԵԼ**, բ. *Լուծուել:*
**ՇՕՇԽԵԼ**, բ. *Սաստիկ տօթից թուլանալ:*

# Ո, ո

**Ո, ո (վօ)**, գ. *Հայերէն այբուբենի քսանչորսերորդ տառը եւ վեցերորդ ձայնաւորը: Թուարկութեան վեցհարիւրի համապատասխան:*
**Ո՛, Ո՛Ո**, միջ. *Զարմացական, աւաղական:*
**ՈԲՍԻԴ, ՈԲՍԻԴԱԿԱՆ**, Տ. *Օբսիդ:*
**ՈԳԵԲԵՐԵԼ**, բ. *Շունչ առնել:*
**ՈԳԵԶՄԱՅԼՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեպէս զմայլելը:*
**ՈԳԵԶՐՈՅՑ**, գ. *Մտերիմ զրոյց:*
**ՈԳԵԹԱՓ**, ած. *Շնչասպառ:*
**ՈԳԵԹՈՒՐՄ**, գ. *Բուժիչ լուծոյթ:*
**ՈԳԵԼ**, բ. *Արտասանել, երգել:*
**ՈԳԵԼԻՑ**, ած. *Ոգի՝* սպիրտ *պարունակող, ալկոհոլ պարունակող:*
**ՈԳԵԽԱՌՆ**, ած. *Հոգով խառնուած:*
**ՈԳԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոգեխառնելը,*

*մէկ սիրտ մէկ հոգի լինելը:*
**ՈԳԵԽԵՂՈՒՄ**, գ. *Հոգեկան խեղում:*
**ՈԳԵԽՕՍՈՒԹԻՒՆ**, Տ. Սպիրիտիզմ: *Ոգեկոչութիւն, ոգեհմայութիւն:*
**ՈԳԵԾՆՈՒԹԻՒՆ**, գ. *Արգանդում սաղմի մէջ ոգի՝ կենդանութիւն առաջանալը:*
**ՈԳԵԿՈՉԵԼ**, բ. (Սնահաւ.) *Մեռած մարդկանց ոգիները կանչել:*
**ՈԳԵԿՈՐՈՅՍ**, Տ. *Հոգեկորոյս:*
**ՈԳԵՀԱՃՄ**, ած. *Հոգով հաշմ:*
**ՈԳԵՀԱՐՑ**, գ. *Ոգիների հետ հաղորդակցող:*
**ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ոգիների հետ հաղորդակցութիւն:*
**ՈԳԵՂ**, ած. *Ոգի կրող իր մէջ:*
**ՈԳԵՂԱԲԱՐԲԱՌ**, ած. *Ուժեղ ձայնով:*
**ՈԳԵՂԷՆ**, Տ. *Հոգեղէն:*
**ՈԳԵՇԱՀ**, Տ. *Հոգեշահ:*
**ՈԳԵՇՆՉԵԼ**, բ. *Ոգի ներշնչել, ոգեւորել:*
**ՈԳԵՉԱՓ**, գ. (Ֆիզ.) *Անօսրաչափի մի տեսակը:*
**ՈԳԵՄՆՈՒՄ**, գ. *Հոգեկան սնունդ տալը:*
**ՈԳԵՊԱՀԻԿ**, ած. գ. *Ոգին՝ կեանքը պահպանող (սնունդ), կեանքի պահպանութեան համար անհրաժշետ սակաւ կերակուր:*
**ՈԳԵՊԱՀԱՆՋ**, ած. *Ոգին՝ հոգին պահանջող:*
**ՈԳԵՊԱՏՈՒՄ**, գ. *Ոգու ու ոգեղէն ընթացքի պատմութիւն:*
**ՈԳԵՊԱՐՏ**, ած. *Ոգու համար պարտական:*
**ՈԳԵՍԷՐ**, Տ. *Հոգեսէր:*
**ՈԳԵՍՊԱՌ**, ած. մկ. *Շունչը սպառուած, շնչասպառ:*
**ՈԳԵՏՈՒ**, ած. *Ոգի տուող:*
**ՈԳԵՑՆՑՈՒՂ**, ած. *Ոգեւորութիւն առաջ բերող:*
**ՈԳԵՒՈՐ**, ած. Տ. *Հոգեւոր:*
**ՈԳԵՒՈՐԵԼ**, բ. *Ոգի ներշնչել, քաջալերել, սրտապնդել: Խրախուսել:*
**ՈԳԵՒՈՐԻՉ**, ած. *Ինչ որ ոգեւորում է, ոգեւորող:*
**ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ոգեւորելը, Հոգեկան եռանդ:*
**ՈԳԻ**, *Օդ, փչում, շնչիւն: Շունչ, շնչառութիւն: Անձ, մարդ: Ներշնչում:* (Կրօն.) *Անմահ էակ:* (Սնահաւ.) *Մեռած մարդու հոգին: Տրամադրութիւն, զգացմունք:* (Քիմ.) *Անգոյն՝ այրող՝ դիւրավառ հեղուկ:*
**ՈԳՈՇԵԼ**, բ. *Գոռալ:*
**ՈԳՈՐ**, գ. *Պայքար:*
**ՈԳՈՐԵԼ**, բ. *Լարուած ոյժերով կռիւ դել ախոյեանի դէմ:*
**ՈԳՈՐՈՒՄ**, գ. *Ոգորելը:*
**ՈԴԻՍԱԿԱՆ**, գ. *Արկածալից ուղեւորութիւն:*
**ՈՁՆԵՁՈՒԿ**, գ. (Կենդ.) *Ոսկրոտ ձկների կարգին պատկանող ձուկ:*
**ՈՁՆԵՂԷՆ**, ած. *Ոզնուց կմ ոզնու մորթից շինած:*
**ՈՁՆԻ**, գ. (Կենդ.) *Կաթնասուն փոքր կենդանի ճճեկերների կարգից:*
**ՈՁՈԽ**, գ. *Ընկոյզի կանաչ կեղեւը:*
**ՈՁՈՐԱԾ ՓԱՅՏ**, գ. *Փայտի կապոց՝ ոզորով պատած: հիւսուած:*
**ՈԹԻՍ**, գ. *Ընդհանուր անուն պատենաթեւ բզէզների կմ բնդիռների:*
**ՈԺԲԻԼ**, բ. *Զարնել:*
**ՈԼՈՌՆԱՁԵՒ**, ած. *Ոլոռի ձեւ ունեցող, կլորակ:*
**ՈԼՈՌՆԱՔԱՐ**, գ. (Հանք.) *Արագոնիտի մի տեսակը:*
**ՈԼՈՐԱԾ**, ած. *Ոլորել'ի:*
**ՈԼՈՐԱԾՈՅ**, ած. *Ոլորած:*
**ՈԼՈՐԱԿԱՅԻՆ**, ած. *Ձայնի ոլորակին յատուկ, վերաբերեալ:*
**ՈԼՈՐԱՆ**, գ. (Մենք.) *Գլան, որ երկու բարակ ծայրերով հորիզոնաձեւ դրուած է հաստարանի վրայ:* ած. գ. *Ոլորուող: Ոլորապտոյտ ճանապարհ:*
**ՈԼՈՐԱՊՏՈՅՏ**, ած. *Ոլորուող, պտոյտներ անող:*

ՈՒՈՐԱՄԱՆԴՈՒՂՔ, գ. *Ոլորաձեւ սանդուղք:*
ՈՒՈՐԾՈՒՆ, ած. *Ոլորած:*
ՈՒՈՐԿԾԻԿ ԳԱԼ, բ. *Ոլորուել-կծկուել, կուչ գալ:*
ՈՒՈՐ-ՄՈՒՈՐ, ած. մկ. *Այս եւ այն կողմ ոլորուելով, ոլորապտոյտ:*
ՈՒՈՐՆՈՒՏ, ած. *Վրան ոլորք ունեցող, գալարուն:*
ՈՒՈՐՈՒՂԻ, գ. *Ոլորաններով՝ ոլոր-մոլոր ճանապարհ:*
ՈՒՈՐՈՒՄ, գ. *Ոլորելը, ոլորուելը:*
ՈՒՈՐՈՒՆ, ած. *Ոլորք ունեցող:*
ՈՒՈՐՏ, գ. *Բոլորակ ծիր, Գալարում:*
ՈՒՈՐՏԱԳԻԾ, Տ. *Պարուրաձեւ:*
ՈՒՈՐՏԱԾԱՒԱԼ, ած. *Բոլորակաձեւ ծաւալուող:*
ՈՒՈՐՏԱՆԱԼ, բ. *Մի շրջանակի մէջ ամփոփուել:*
ՈՒՈՐՔ, գ. *Ոլորելը, ոլորուելը:*
ՈՒՈՔ, գ. (Կազմախ.) *Սրունքի հաստ ոսկորը:*
ՈՒՈՔԱՅԻՆ, ած. *Ոլոքին յատուկ:*
ՈՒՐՑՆԵԼ, բ. *Պոչ պտտել:*
ՈԽ, գ. *Դառն զգացմունք: Նախանձի չար զգացմունք: Ատելութիւն:*
ՈԽԱԼՈՒԹԻՒՆ, գ. *Ոխակալութիւն:*
ՈԽԱԿԱԼ, ած. *Նա որ սրտումը ոխ է պահում մէկի դէմ: Հկր. Անյիշաչար:*
ՈԽԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. *Ոխակալ լինելը:*
ՈԽԱՆԱԼ, բ. *Ոխ զգալ մէկի դէմ:*
ՈԽԱՊԱՀ, ած. *Ոխ պահող:*
ՈԽԱՊԱՀՈՒԹԻՒՆ, Տ. *Ոխակալութիւն:*
ՈԽԱՑՆՈՐ, ած. *Ոխից ցնորուած:*
ՈԽԵՐԻՄ, ած. *Ոխակալութեամբ լըցուած, անհաշտ:*
ՈԽՈՒԹԻՒՆ, գ. *Ոխալը:*
Ո՜Հ, միջ. *Բացագանչութիւն վշտի, տըխրութեան: Բացագանչութիւն զմայլմունքի, հիացման:*
ՈՀՄԱԿ, Տ. *Վոհմակ:*
ՈՀՄԱԿԱՅԻՆ, ած. *Ոհմակին բնորոշ՝ յատուկ:*
ՈՂԲ, գ. *Բարձրաձայն լաց: Մեռելը սգալու հին ծէս: Արձակ կմ տաղաչափական խօսք, բանաւոր կմ գրաւոր, որով սգում էին մէկի մահը կմ այլ մեծ աղէտ:*
ՈՂԲԱԳԻՆ, ած. *Ողբալից:*
ՈՂԲԱԳԻՆՕՐԷՆ, բ. *Ողբագին կերպով:*
ՈՂԲԱԼ, բ. *Վշտից բարձր ձայնով լալ:* բ. *Սգալ:*
ՈՂԲԱԼԻ, ած. *Ողբալու արժանի:*
ՈՂԲԱԼԻՑ, ած. *Ողբով լիքը:*
ՈՂԲԱԿԱՆ, ած. *Ողբին յատուկ:*
ՈՂԲԱԿԻՑ, ած. *Ուրիշի ողբին մասնակից:*
ՈՂԲԱԿՈԾ, ած. *Սաստիկ ողբացող:*
ՈՂԲԱԿՑԵԼ, բ. *Ողբակից՝ ցաւակից լինել:*
ՈՂԲԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Ողբակից լինելը, ողբակցելը:*
ՈՂԲԱՁԱՅՆ, գ. *Ողբի ձայն:* մկ. *Ողբի ձայնով:*
ՈՂԲԱՁԱՅՆԵԼ, բ. *Ողբական ձայնով երգել:*
ՈՂԲԱՄԱՅՐ, գ. *Եղերամայր:*
ՈՂԲԱՄԵԾԱՐ, ած. *Ողբացող՝ ողբ մեծարող՝ չարագուշակ:*
ՈՂԲԱՆՈՒԷՐ, ած. *Ողբի նուիրուած:*
ՈՂԲԱՍԱՑ, ած. գ. *Ողբը ասող:*
ՈՂԲԱՐԿ, ՈՂԲԱՐԿՈՒԹԻՒՆ } գ. *Ողբի ձայն ձգելը:*
ՈՂԲԱՐԿՈՒ, ած. Տ. *Ողբերգու:*
ՈՂԲԱՑԵԱԼ, ած. *Որի կորուստը ողբում են:*
ՈՂԲԵՐԳ, գ. *Ողբի երգ, եղերերգութիւն:*
ՈՂԲԵՐԳԱԳԻՆ, Տ. *Ողբագին:*
ՈՂԲԵՐԳԱԳԻՐ, գ. *Ողբերի գրող:*
ՈՂԲԵՐԳԱԿ, ած. *Ողբ երգող:*
ՈՂԲԵՐԳԱԿԱՆ, ած. *Լալագին, ողբ՝ սուգ արտայայտող:*
ՈՂԲԵՐԳԱ-ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ, ած. *Որի*

*մէջ խառն են ողբերգականն եւ կատակերգականը:*

ՈՂԲԵՐԳԱԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Ողբերգական ու կատակերգական խառն ստեղծագործութիւն:*

ՈՂԲԵՐԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ողբերգական լինելը:*

ՈՂԲԵՐԳԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Միասին ողբերգելը:*

ՈՂԲԵՐԳԱՀԱՐՈՅՑ, ած. *Ողբերգութիւն յարուցող:*

ՈՂԲԵՐԳԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է ողբերգել:*

ՈՂԲԵՐԳՈՒ, գ. *Հեղինակ, որ գրում է ողբերգութիւններ:*

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Ողբի երգ երգելը: Ընդհանրապէս՝ վիշտ, սուգ, լացուկոծ: Բեմական գրուածք: Թատերական բեմական գրուածք:*

ՈՂԲԵՐԳՈՒՀԻ, գ. *Դերասանուհի, որ կատարում է դերեր ողբերգութեան մէջ:*

ՈՂԲԷԼԱԼԻՔ, ած. *Ողբացող լալկաններ:*

ՈՂԻԿ-ՈՂԻԿ ԳԱԼ, բ. *Գալարուել, օղի ձեւ ստանալ:*

ՈՂԻՄԲՈՍ, գ. *Ոլիմպոս լեռան կողմից փչող՝ արեւմտեան քամի: Յոյն դիցաբանութեան աստուածներու բնակավայր լերան անունը:*

ՈՂԿՈՅՁ, գ. *Խաղողի հատիկներ:*

ՈՂԿՈՒԶԱԲԵՐ, ած. *Ողկոյզ բերող, խաղող բերող:*

ՈՂԿՈՋԱԲՈՅԾ, ած. *Ողկոյզ բուծանող, ողկուզաբեր:*

ՈՂԿՈՋԱԶԱՐԴ, ած. *Ողկոյզներով զարդարուած:*

ՈՂԿՈՒԶԱԼԻ, ած. *Ողկոյզներով լի:*

ՈՂԿՈՒԶԱԼԻՑ, ած. *Ողկոյզներով լիքը:*

ՈՂԿՈՒԶԱԿ, գ. *Փոքր ողկոյզ:*

ՈՂԿՈՒԶԱՁԵՒ, ած. *Ողկոյզի ձեւ ունեցող:*

ՈՂԿՈՒԶԱՒՈՐ, ած. *Ողկոյզ ունեցող:*

ՈՂԿՈՒԶՈՒԿ, (Բուս.) *Դաղձերի ցեղին պատկանող բոյս:*

ՈՂԿՈՒԶՕՐԷՆ, մկ. *Ողկոյզի պէս:*

ՈՂՆ, գ. (Կազմախ.) *Ողնաշարը կազմող տափակ մանր ոսկորներից ամէն մէկը:* Տ. *Ողնաշար:*

ՈՂՆԱԲԱՐՁ, ած. *Ողների՝ մէջքի վրայ բարձած:*

ՈՂՆԱԲԵԿ, ած. *Ողը կոտրած:*

ՈՂՆԱԽՏ, գ. (Ախտաբ.) *Մանկական հասակի հիւանդութիւն,* ռախիտ: *Ողնաթեքութիւն:*

ՈՂՆԱԽՏԱՒՈՐ, ած. *Ողնախտով հիւանդ:*

ՈՂՆԱԾԱՅՐ, գ. *Ողերի ներքեւի ծայրը:*

ՈՂՆԱՀԱՐ, Տ. *Ողնախտաւոր, Ողնախտ:*

ՈՂՆԱՅՐ, գ. *Ողնաշար:*

ՈՂՆԱՇԱՐ, գ. *Իրար վրայ ագուցուած ողերի շարքը:*

ՈՂՆԱՇԱՐԱՅԻՆ, ած. *Ողնաշարին յատուկ, վերաբերեալ:*

ՈՂՆԱՇԱՐԱՒՈՐ, ած. *Ողնաշար ունեցող:* (Կենդ.) *Կենդանիների մեծ տիպար:*

ՈՂՆԱՓԱՅՏ, գ. *(Հին) նաւի հաստ գերանը:*

ՈՂՆԵԼ, բ. *Դէպի մի կողմ՝ կողքի ընկնել:*

ՈՂՆՈՒՂԵՂ, գ. *Ողնաշարի մէջ եղած ուղեղը:*

ՈՂՆՈՒՂԵՂԱՅԻՆ, ած. *Ողնուղեղին յատուկ:*

ՈՂՈԳՈՄԷՆ, գ. (Կրօն.) *Ծաղկազարդի տօնը:*

ՈՂՈՂ, Տ. *Հեղեղ:*

ՈՂՈՂԱԿԱՆ, ած. *Ողողուող:*

ՈՂՈՂԱՆ, ած. *Ողողում առաջ բերող:*

ՈՂՈՂԱՆՔ, գ. *Ողողելը, ողողուելը:*

ՈՂՈՂԱՏ, գ. *Հողի խաւ, որ առաջացել է վարարած գետերի բերած խճերից եւն:*

ՈՂՈՂԱՏԱՅԻՆ, ած. *Ողողատին յատուկ:*

ՈՂՈՂԵԼ, բ. *Վարարած գետի կմ հեղեղի մի տեղով անցնելը՝ ջրով ծածկելը:*

**ՈՂՈՂԻՉ**,ած. *Այն որ ողողում է, ողողող:*
**ՈՂՈՂՈՒՄ**, գ. *Ողողելը, ողողուելը:*
**ՈՂՈՄՊԻԱՑԻ**,ած. (Կրօն.) *Ողիմպոսում ապրող:*
**ՈՂՈՐԿ**,ած. *Կոկ՝ մակերես ունեցող: Յղկուած:*
**ՈՂՈՐԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Կոկիկ՝ հարթ լեզուով ու ոճով խօսելը:*
**ՈՂՈՐԿԱԹՈՒՂԹ**, գ. *Հաստ թուղթ:*
**ՈՂՈՐԿԱԿԱՆ**,ած. *Ողորկ կմ ողոքող:*
**ՈՂՈՐԿԱՂՈՒԹԻՒՆ**, գ. *Փորլուծութիւն արիւնհոսութեամբ: Մի տեսակ փորհարութիւն:*
**ՈՂՈՐԿԱՏԱՐՐ**,ած. *Որի տարրը կմ նիւթը ողորկ է:*
**ՈՂՈՐԿԱՐԱՆ**, գ. *Այն տեղը, որտեղ ողորկում են կտաւեղէնը կմ որեւէ առարկայ::*
**ՈՂՈՐԿԱՔԱՐ**, գ. *Ողորկ քար:*
**ՈՂՈՐԿԵԼ**, բ. *Ողորկ դարձնել:*
**ՈՂՈՐԿՈՒԹԻՒՆ**, գ. *Ողորկ լինելը:*
**ՈՂՈՐԿՈՒՄ**, գ. *Ողորկելը, ողորկուելը:*
**ՈՂՈՐՄ**, գ. *Ողորմութիւն:*
**ՈՂՈՐՄԱԲԱՐ**, մկ. *Ողորմելով գթալով:* Հկռ. *Անողորմաբար:*
**ՈՂՈՐՄԱԳԻՆ**,ած. *Գութ՝ կարեկցութիւն շարժող:*
**ՈՂՈՐՄԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Աւելի ողորմ:*
**ՈՂՈՐՄԱԹԱՍ**, գ. (Եկեղ.) *Գինու թաս կմ բաժակ, որ խմում են ու ողորմիս տալիս ննջեցեալին:*
**ՈՂՈՐՄԱԼԻՑ**, ած. *Շատ ողորմած:*
**ՈՂՈՐՄԱԾ**, ած. *Ողորմող, գթացող:*
**ՈՂՈՐՄԱԾԻԿ**, ած. (Կրօն.) *Լուսահոգի:*
**ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ողորմած լինելը:*
**ՈՂՈՐՄԱԿԱՆ**, ած. *Ողորմութիւն խընդրող, ողորմելի:*
**ՈՂՈՐՄԱՁԱՅՆ**, ած. մկ. *Խղճալի՝ ողորմուկ ձայնով:*
**ՈՂՈՐՄԱՃԱՇ**, գ. (Եկեղ.) *Ճաշ, որ տալիս են ննջեցեալի թաղումից:*
**ՈՂՈՐՄԱՄԱՀ**, ած. *Խղճալի կերպով մեռած:*
**ՈՂՈՐՄԱՊԷՍ**, Տ. *Ողորմաբար:*
**ՈՂՈՐՄԱՍԷՐ**, ած. *Ողորմած:*
**ՈՂՈՐՄԱՍԻՐԱԿԱՆ**, ած. *Ողորմասէրին յատուկ:*
**ՈՂՈՐՄԱՍԻՐՏ**, ած. *Ողորմած:*
**ՈՂՈՐՄԱՍՐՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ողորմասիրտ լինելը:*
**ՈՂՈՐՄԱՏԵՂԻ**, գ. (Եկեղ.) *Ողորմիս տալու տեղ:*
**ՈՂՈՐՄԵԱ՛**, գ. (Եկեղ.) *Մի սաղմոս, որ սկսուում է «Ողորմեա ինձ» բառերով:*
**ՈՂՈՐՄԵԼ**, բ. *Գթալ, խղճալ, կարեկցել: Ներել, խնայել:* (Եկեղ.) *Բանաձեւ, որով ողջունում է եկեղեցուց դուրս եկողը:*
**ՈՂՈՐՄԵԼԻ**, ած. *Նա որին պէտք է ողորմել, գութ շարժող: Թշուառ, Դըժբախտ:*
**ՈՂՈՐՄԵԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ողորմելի լինելը:*
**ՈՂՈՐՄԵԼԻՕՐԷՆ**, մկ. *Ողորմելի կերպով:*
**ՈՂՈՐՄԻՍ**, գ. (Կրօն.) *«Աստուած ողորմի հոգուն» բարեմաղթութիւն:*
**ՈՂՈՐՄՄԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Ողորմելի մահով մեռնելը:*
**ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ**, գ. *Գթութիւն:*
**ՈՂՈՐՄՈՒԿ**, ած. մկ. *Խղճալի:*
**ՈՂՈՔ**, գ. *Մեղմ՝ գուրգուրիչ՝ համոզիչ խօսք:* Հկռ. *Բողոք:*
**ՈՂՈՔԱԿԱՆ**, ած. *Ողոք պարունակող, յորդորական:*
**ՈՂՈՔԱՆՔ**, գ. *Աղերս: Մեղմ՝ շողոմաբար խօսք:*
**ՈՂՈՔԱՍԷՐ**, ած. *Նա որ սիրում է ողոքել:*
**ՈՂՈՔԵԼ**, բ. *Քաղցր՝ շողոքորթիչ խօսքերով մէկին մեղմացնել, հաճեցնել:*
**ՈՂՈՔԻՉ**, ած. *Նա որ ողոքում է:*

**ՈՂՈՔՈՒՄ**, գ. *Ողոքելը: Աղաչանք:*

**ՈՂՋ**, ած. *Բոլոր մասերը անթերի: Առողջ, ապրող:* Հկռ. *Թերի, կոտրած: Ամբողջ,* Հկռ. *Հիւանդ:*

**ՈՂՋԱԲԱՐ**, մկ. *Ամբողջապէս: Առողջօրէն:*

**ՈՂՋԱԳԻՐ**, ած. գ. *(Կտակ), որ ամբողջապէս գրուած է կտակողի ձեռքով:*

**ՈՂՋԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Աւելի ողջ:*

**ՈՂՋԱԳՈՒՐԱՆՔ**, գ. *Ողջագուրելը:*

**ՈՂՋԱԳՈՒՐԵԼ**, բ. *Համբուրել գգուանքով, փաթաթուել:*

**ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄ**, գ. *Գրկախառնում:*

**ՈՂՋԱԽՈՀ**, ած. *Առողջ մտածողութեան տէր, ողջամիտ: Զգաստ:* Հկռ. *Բղջախոհ, անառակ:*

**ՈՂՋԱԽՈՀԱԲԱՐ**, մկ. *Ողջախոհ կերպով:*

**ՈՂՋԱԽՈՀԱՐԱՆ**, գ. *Ողջախոհ դառնալու տեղ.* փոխ. *բանտ:*

**ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ**, գ. *Ողջախոհ լինելը:*

**ՈՂՋԱԽՈՐՀՈՒՐԴ**, ած. *Ուղիղ մտածող:*

**ՈՂՋԱԾԻՆ**, ած. գ. *Ողջ ծնուած:*

**ՈՂՋԱԿԷԶ**, ած. գ. *Զոհ, որ ամբողջապէս կիզւում էր ի պատիւ աստուածների:*

**ՈՂՋԱԿԻԶԵԼ**, բ. *Զոհի կենդանին (կմ մարդը) ամբողջապէս կիզել:*

**ՈՂՋԱԿԻԶՈՒՄ**, գ. *Ողջակէզ մատուցանելը:*

**ՈՂՋԱՄԱՐՄԻՆ**, ած. մկ. *Ողջ-առողջ մարմնով:*

**ՈՂՋԱՄԲ**, մկ. *Ողջութեամբ: Ամբողջութեամբ:*

**ՈՂՋԱՄԻՏ**, ած. *Առողջամիտ, խելացի դատող:*

**ՈՂՋԱՄՏԱԿԱՆ**, ած. *Ողջամտին յատուկ:*

**ՈՂՋԱՄՏՕՐԷՆ**, մկ. *Ողջամտութեամբ:*

**ՈՂՋԱՆԱԼ**, բ. *Առողջանալ:*

**ՈՂՋԱՆԴԱՄ**, ած. մկ. *Ողջ եւ ամբողջ անդամներ ունեցող:*

**ՈՂՋԱՆԴԱՄՈՒԹԻՒՆ**, գ. *Ողջանդամ լինելը:*

**ՈՂՋԱՊԷՍ**, մկ. *Ողջամտութեամբ:*

**ՈՂՋԵԿ**, գ. *Բարի գալուստ:*

**ՈՂՋԵՐԹ**, գ. *Բարի ճանապարհ:*

**ՈՂՋԵՐԳ**, գ. *Ջօներգ:*

**ՈՂՋԸՆԾԱՅ**, գ. *Ամբողջապէս ընծայ բերուած իր:*

**ՈՂՋԱՄԻՏ**, Տ. *Ողջմիտ: Խոհեմ, զգօն:*

**ՈՂՋԱՄՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ողջամիտ լինելը:*

**ՈՂՋՆՆԱԼ**, Տ. *Ողջանալ:*

**ՈՂՋՈՅՆ**, գ. *Ողջութիւն: Առողջութիւն ցանկալը մէկին: Ընդհանրապէս՝ բարեմաղթութիւն:*

**ՈՂՋՈՅՆ**, ած. *Ողջ, ամբողջ:*

**ՈՂՋՈՏՆ**, ած. *Որի ոտքը ողջ է:*

**ՈՂՋՈՎ**, մկ. *Բոլորով:*

**ՈՂՋՈՒԹԻՒՆ**, գ. *Ողջ՝ անթերի՝ անվնաս լինելը: Կենդանութիւն:*

**ՈՂՋՈՒՆԱԳԻՐ**, գ. *Բարեւագիր:*

**ՈՂՋՈՒՆԱՏՈՒ**, ած. գ. *Ողջոյն տուող, բարեւող:*

**ՈՂՋՈՒՆԵԼ**, բ. *Ողջոյն տալ, բարեւել: Գոհունակութիւն:*

**ՈՂՋՈՒՆԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է կմ պէտք է ողջունել:*

**ՈՃ**, գ. *Յորենի եւ այլ խոտերի ցօղուն: Ծղօտից հիւսած կողով: Ուղղութիւն կրօնի մէջ: Հեղինակի միտք արտայայտելու կերպը:* (Տրամ.) *Մեթոդ:*

**ՈՃԱԲԱՆ**, ած. գ. *Կանոնաւոր՝ գեղեցիկ ոճով գրող:*

**ՈՃԱԲԱՆԱԿԱՆ**, ած. *Ոճին եւ ոճաբանութեան յատուկ:*

**ՈՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոճի գիտութիւն:*

**ՈՃԱԿԱՆ**, ած. *Ոճին յատուկ:*

**ՈՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոճական լինելը:*

**ՈՃԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ**, ած. (գրկն.): *Ոճական եւ հոգեբանական:*

**ՈՃԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ**, գ. (գրկն.): *Մտածելակերպ, աշխարհըմբռնում:*

**ՈՃԱՆՈՒՆ**, գ. *Ոճական յատուկ անուն:*

**ՈՃԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. *Ոճը չափելու գիտութիւն:*

**ՈՃԱՊԱՏԿԵՐ**, գ. (գրկն.): *Ոճական պատկեր:*

**ՈՃԱՒՈՐ**, ած. *Ոճեր պարունակող, գեղեցիկ ոճով գրուած:*

**ՈՃԱՒՈՐԵԼ**, բ. *Որոշ ոճով արտայայտելու ՝ ճաշակով ձեւակերպել (նկարը):*

**ՈՃԱՒՈՐՈՒՄ**, գ. *Ոճաւորելը:*

**ՈՃԻՐ**, գ. *Սպանութիւն, Ծանր քրէական յանցանք:*

**ՈՃՈՐՔ**, գ. *Շինութեան տանիքի ներքեւի*
*կողմը:*

**ՈՃՐԱԳՈՐԾ**, ած. գ. *Ոճիր գործած (մարդ), քրէական յանցաւոր:*

**ՈՃՐԱԳԷՏ**, Տ. *Քրէագէտ:*

**ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ոճիր գործելը:*

**ՈՃՐԱԴԱՏ**, ած. *Ոճիրներ դատող ատեան:*

**ՈՃՐԱՄԷՏ**, ած. *Ոճիր գործելուն միտուած:*

**ՈՃՐԱՓՈՐՁ**, գ. *Մահափորձ:*

**ՈՄՆ**, գ. *Մէկը:*

**ՈՅԺ**, *Հզօրութիւն, Բռնութիւն, Պնդութիւն: Մտաւոր եւ բարոյական կարողութիւններ: Հեղինակութիւն: Զօրութիւն:*

**ՈՆՋՈՒՐԱ**, գ. *Թանթրուենու մի տեսակը:*

**ՈՆՑ**, մկ. *Ինչպէս:*

**Ո՛Չ**, մկ. *Գործ է ածուում բայերի մօտ եւ ժխտում է նրանց նշանակած գործողութիւնը: Բնաւ չէ:*

**ՈՉԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չգիտութիւն:*

**ՈՉԵՂՈՒԹԻՒՆ**, Տ. *Ոչէութիւն:*

**ՈՉԷԱՆԱԼ**, բ. *Ոչնչանալ:*

**ՈՉԷՈՒԹԻՒՆ**, գ. *Անգոյութիւն:*

**ՈՉԸՆՏԻՐ**, ած. *Չընտրուած:*

**ՈՉԻՆՉ**, գ. *Բացակայութիւն որեւէ գոյացութեան՝ էութեան՝ անգոյութիւն: Մի չնչին բան:*

**ՈՉԽԱՐ**, գ. (Կենդ.) *Սմբակաւորների կարգից որոճողների ցեղին պատկանող կենդանի:* ած. գ. *Ոչխարների հօտ, խաշն, խաշինք: Անմիտ, տգէտ:*

**ՈՉԽԱՐԱԲԱՐՈՅ**, ած. *Ոչխարի բնութիւն եւ բարք ունեցող:*

**ՈՉԽԱՐԱԲՈՅԾ**, Տ. *Ոչխարապահ:*

**ՈՉԽԱՐԱԶԳԵՍՏ**, ած. *Ոչխարի զգեստ հագած:*

**ՈՉԽԱՐԱԽՈՏ**, գ. (Բուս.) *Մուգկանաչ խոտ:*

**ՈՉԽԱՐԱԿԱՆ**, Տ. *Ոչխարային:*

**ՈՉԽԱՐԱԿԵՐՊ**, ած. մկ. *Ոչխարին նմանութիւն ունեցող:*

**ՈՉԽԱՐԱՃԱՆՃ**, գ. (Կենդ.) *Ճանճերի ցեղին պատկնող միջատ:*

**ՈՉԽԱՐԱՄԻՏ**, ած. *Ոչխարի նման անմիտ:*

**ՈՉԽԱՐԱՅԻՆ**, ած. *Ոչխարին յատուկ:*

**ՈՉԽԱՐԱՆՄԱՆ**, ած. *Ոչխարի նման, ոչխարակերպ:*

**ՈՉԽԱՐԱՊԱՀ**, ած. գ. *Ոչխար պահող, ոչխարաբոյծ: Գառնարած:*

**ՈՉԽԱՐԱՊԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Ոչխարապահ լինելը:*

**ՈՉԽԱՐԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Ոչխարներ վաճառող:*

**ՈՉԽԱՐԱՏԵՂ**, գ. *Այն հով տեղը, որտեղ ոչխարը ցերեկուայ տօթին հանգստացնում են:*

**ՈՉԽԱՐԱՏԷՐ**, գ. *Ոչխարի տէրը:*

**ՈՉԽԱՐԵՆԻ**, գ. *Ոչխարի մորթ:*

**ՈՉԽԱՐԻԿ**, գ. *Փոքր ոչխար:*

**ՈՉԽԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ոչխարի յատկութիւն: Տխմարութիւն:*

**ՈՉՆՉԱԲԱՆ**, Տ. Ընդվայրախօս: *Անիմաստ խօսող:*

**ՈՉՆՉԱԿԱՆ**, Տ. *Նիհիլիզմ: Ժխտողական, ոչնչական:*

**ՈՉՆՉԱՆԱԼ**, բ. *Ոչինչ դառնալ: Աչքից կորչել: Փչանալ, սաստիկ վնասել: Ջուր անցնել:* (Իրաւբ.) *Ոյժը կորցնել:*

**ՈՉՆՉԱՊԱՇՏ**, գ. *Ոչնչութիւն պաշտող:*

**ՈՉՆՉԱՑՈՒՄ**, գ. *Ոչնչանալը:*
**ՈՉՆՉԱՑՈՒՑԻՉ**, ած. *Ինչ որ ոչնչացնում է:*
**ՈՉՆՉՈՒԹԻՒՆ**, գ. *Ոչինչ լինելը:*
**ՈՉՈՒՓՈՒՉ**, Տ. *Ոչ՛ի տակ:*
**ՈՊՆԻԱԶ**, Տ. *Երենոս: Սեւ, փայլուն յարգի փայտ:*
**ՈՋԻԼ**, գ. (Կենդ.) *Մլուկների կարգին պատկանող մակաբոյծ միջատ:*
**ՈՋԻԼ-ԿՈՏՈՐՈՂ**, գ. *Մանկական եւ ժողովրդական անուն բույթ մատի:*
**ՈՋԼԱԴԵՂ**, գ. (Բուս.) *Շուշանազգիների կարգին պատկանող սաստիկ թունաւոր բոյս:*
**ՈՋԼԱԽՈՏ**, գ. (Բուս.) *Դլփնակի ցեղից խոտ:*
**ՈՋԼԱԽՏ**}
**ՈՋԼԱԽՏՈՒԹԻՒՆ**} Տ. *Ոջլոտութիւն:*
**ՈՋԼԱԿԱԼԵԼ**, բ. *Ոջլով բռնուել, ոջլոտել:*
**ՈՋԼԱԿԵՐ**, ած. *Ոջիլ ուտող:*
**ՈՋԼԱՃԱՆՃԵՐ**, գ. (Կենդ.) *Մժղուկների կարգին պատկանող երկթեւ միջատների ցեղ:*
**ՈՋԼԻ**, գ. (Բուս.) *Անտառային ծառ:*
**ՈՋԼՈՏ**, ած. *Որի վրայ ոջիլ կայ:*
**ՈՋԼՈՏԵԼ**, բ. *Իր վրայից ոջիլը տարածել:*
**ՈՋԼՈՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ոջլոտ լինելը:*
**ՈՌ**, գ. (Կազմախ.) *Մարդու մէջքից ներքեւ երկու թամբաձեւ բոլորշի փափուկ միս, յետոյք, նստատեղ: Հաստ աղիքի ներքեւի անցքը:* Ոռ ունենալ, *Քաջութիւն՝ համարձակութիւն ունենալ:* Մէկի ոռը մտնել, *Քծնել, շողոքորթել:* Ոռին զարնել, դուրս անել, *Անպատուութեամբ մէկին վռնտել տանից:* Այդ ոռի ճիճուն ո՞վ է, որ համարձակւում է մեզ սպառնալ:
**ՈՌԱԼԷԶ**, ած. *Ոռ լիզող:*
**ՈՌԱՃԻՃՈՒ**}
**ՈՌԱՃՃԻ**} գ. *Փորի կլոր ճիճու:*

**ՈՌԱՄԱՏ**, գ. *Խաղողի կուղրակի ոռքից դուրս եկած շառաւիղ:*
**ՈՌԱՇՈՒՌՏՈՒՆ ԸՆԿՆԵԼ**, բ. *Ոռը այս եւ այն կողմ վիճակի մէջ շուռ տալ:*
**ՈՌԱՊԱՏԻԿ**, գ. *Կանանց լայն շրջազգեստ, ուսերից մինչեւ ոտքերը:*
**ՈՌԱՏՈՒ**, ած. *Ոռ տուող:*
**ՈՌԻ**, Տ. *Յոռի:*
**ՈՌԻԿ**, գ. (Փաղաքշ.), *Երեխայի փոքր ոռ:*
**ՈՌԾԵԾ**, գ. *Ոռը ծեծելը:*
**ՈՌՆ**, գ. *Մեծ սեպ, բեւեռ, գամ:*
**ՈՌՆԱԳԻՆ**, ած. *Ոռնոցի նմանուող, ուժգին:*
**ՈՌՆԱԼ**, բ. *Շների եւ գայլերի երկարաձիգ եւ լալագին ձայն արձակելը:* Նման. *Բարձրագոչ ձայնով լալ.* (արհամարհական):
**ՈՌՈԳԵԼ**, բ. *Բոյսերին ջուր տալ, ջրել:*
**ՈՌՈԳԻՉ**, ած. գ. *Նա որ ոռոգում է, ոռոգող:*
**ՈՌՈԳՈՒՄ**, գ. *Ոռոգելը:*
**ՈՌՍՈՂ**, գ. *Փոքր երեխաների նախքան ոտք ելնելը ոռի վրայ սողալով շարժուելը:*
**ՈՌՍՐԲԻՉ**, գ. *Լաթի կտոր, որ գործ էին ածում արտաքնոցում:*
**ՈՌՏԻՏԻԿ**, գ. *Մի տեղ տիտիկ անելը՝ նստելը:*
**ՈՌՔ**, գ. *Ամանի յատակը: Առարկայի յետեւի մասը: Ծայրը, վերջը:*
**ՈՍԻ**, գ. *Անորոշ տեսակի փշոտ բոյս:*
**ՈՍԻՆ**, ած. *Մէջը դատարկ: Նիհար:*
**ՈՍԿԵԱԿ**, գ. *Ոսկի ակ, ոսկեքար:*
**ՈՍԿԵԱՅ**, ած. *Ոսկիէ:*
**ՈՍԿԵԲԵՌ(Ն)**, ած. *Վրան ոսկի բեռնած՝ բարձած:*
**ՈՍԿԵԲԵՒԵՌ**, ած. *Ոսկի բեւեռներ ունեցող:*
**ՈՍԿԵԲԵՐ**, ած. *Ոսկի բերող:*
**ՈՍԿԵԲԵՐԱՆ**, ած. *Ոսկի բերան ունեցող,* փոխ. *Շատ շնորհալի խօսող:*

ՈՍԿԵԲԶԷՁ, գ. *Բզէզ:*
ՈՍԿԵԲԻՒՐԵՂ, գ. (Հանք.) *Մետաղա-կերպ օքսիդների մի տեսակը:*
ՈՍԿԵԲԼՈՒՐ, ած. *Ոսկու բլուրի նմա-նող:*
ՈՍԿԵԲՈՐԱԿ, գ. (Հանք.) *Լուսածնատ-ների կարգին պատկանող բիւրեղական բաղադրութիւն:*
ՈՍԿԵԲՈՒ(Ղ)Խ, ած. *Որտեղից ոսկի է բխում:*
ՈՍԿԵԳԱՆԳՈՒՐ, ած. գ. *Ոսկեգոյն մա-զեր ունեցող:*
ՈՍԿԵԳԵՂՄ, գ. *Ոչխարի ոսկեղէն բուրդ:*
ՈՍԿԵԳԵՍ, ած. *Ոսկեգոյն մազով:*
ՈՍԿԵԳԻՍԱԿ, ած. *Ոսկեգոյն հիւսքով (մարդ):*
ՈՍԿԵԳԻՐ, ած. *Ոսկու փոշուց պատ-րաստուած թանաքով գրուած:*
ՈՍԿԵԳՈՅՆ, ած. *Ոսկու գոյն ունեցող:*
ՈՍԿԵԳՈՐԾ, ած. գ. *Արհեստաւոր, որ ոսկեղէն զարդարանքներ է շինում:*
ՈՍԿԵԳՐՔՈՅԿ, գ. *Ոսկեղէն գրքոյկ, պատուական:*
ՈՍԿԵԳՕՏԻ, ած. *Նա որ կրում է ոսկուց շինած գօտի:*
ՈՍԿԵԴԱՐ, գ. *Այն դարը կմ ժամա-նակաշրջանը, որ մի ազգի համար նշանաւոր է որեւէ լաւ յատկութեամբ:*
ՈՍԿԵԴԱՐԵԱՆ, ած. *Ոսկեդարին յա-տուկ:*
ՈՍԿԵԴԵՂԻՆ, ած. *Ոսկու դեղնութիւն ունեցող:*
ՈՍԿԵԴՐԱՄ, գ. *Ոսկի փող:*
ՈՍԿԵԴՐՈՒԱԳ, ած. *Ոսկով դրուագ-ուած, ոսկեղէն դրուագներ՝ զարդա-րանքներ կրող (շինուածք):*
ՈՍԿԵԶԱՐԴ, ած. *Ոսկով զարդարուած:*
ՈՍԿԵԶԱՐԴԵԼ, ած. *Ոսկեզարդ դարձ-նել:*
ՈՍԿԵԶՄՐՈՒԽՏ, գ. (Հանք.) *Քաղկեդոն քարի մի տեսակը:*
ՈՍԿԵԶՕԾ, ած. *Ոսկեզօծած:*
ՈՍԿԵԶՕԾԵԼ, բ. *Առարկայի մակերեսը ոսկու բարակ խաւով պատել:* Նման. *Ոսկու գոյն տալ:*
ՈՍԿԵԶՕԾԻՉ, ած. գ. *Նա որ ոսկեզօծում է, ոսկեզօծող:*
ՈՍԿԵԶՕԾՈՒՄ, գ. *Ոսկեզօծելը:*
ՈՍԿԵԹԵԼ, ած. մկ. *Ոսկու թելերից հիւսուած՝ գործուած:*
ՈՍԿԵԹԵՐԹ, ած. *Որի թերթերը ոսկուց են:*
ՈՍԿԵԹԻՒ, գ. (Տոմար.) *Լուսնական շրջանը:*
ՈՍԿԵԹՈՅՐ, ած. *Ոսկիի գոյն:*
ՈՍԿԵԼ, բ. *Մանրանկարները կմ գրելը ոսկու լուծուածքով ծածկել:*
ՈՍԿԵԽԱՌՆ, ած. *Որի մէջ ոսկի է խառ-նած:*
ՈՍԿԵԽՆՁՈՐ, գ. *Ոսկուց շինած խնձոր:*
ՈՍԿԵԽՈՅԶ, ած. գ. *Ոսկի փնտռող:*
ՈՍԿԵԾԱՂԻԿ, ած. *Ոսկեգոյն ծաղիկ ունեցող:*
ՈՍԿԵԾԱՄ, ած. *Ոսկեգոյն ծամեր ունե-ցող, ոսկեհեր:*
ՈՍԿԵԾԻՆ, ած. *Ոսկի ծնող կմ ոսկուց ծնած:*
ՈՍԿԵԾՂԻ, ած. *Որի ծղիները՝ բազուկ-ները ոսկուց են: Ծայրերը ոսկի զիրք:*
ՈՍԿԵԿԱԶՄ, ած. *Ոսկեղէն կազմած:*
ՈՍԿԵԿԱՊԱՐՃ, գ. *Ոսկուց շինած կա-պարճ:*
ՈՍԿԵԿԱՐ, ած. *Ոսկեթելով կարած՝ ասեղնագործած:*
ՈՍԿԵԿԵՐՏ, ած. *Ոսկուց շինած:*
ՈՍԿԵԿԻՐ, ած. *Ոսկի կրող:*
ՈՍԿԵԿՆԻՔ, գ. *Ոսկեղէն կնիք:*
ՈՍԿԵԿՇԻՌ, գ. *Ոսկու կշեռք:*
ՈՍԿԵԿՈՒՃ, գ. (Հանք.) *Մարմարիոնի մի տեսակ:*
ՈՍԿԵԿՈՒՌ, ած. *Ոսկուց շինած՝ կռած:*
ՈՍԿԵԿՏՈՒՑ, ած. *Որի կտուցը ոսկուց է կմ ոսկեգոյն է:*

ՈՍԿԵՀԱՆ, ած. *Ոսկի հանող:*

ՈՍԿԵՀԱՆԴԵՐՁ, ած. *Ոսկեթել հանդերձներ կրող:*

ՈՍԿԵՀԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ոսկի հանելը:*

ՈՍԿԵՀԱՆՔ, գ. *Ոսկու հանք:*

ՈՍԿԵՀԱՏ, գ. *Ոսկի կտրելը:*

ՈՍԿԵՀԵՐ, ած. *Ոսկեգոյն մազեր ունեցող:*

ՈՍԿԵՀԻՒՍԵԱԿ, ած. *Ոսկով հիւսած:*

ՈՍԿԵՀՆՉՈՂ, ած. *Ոսկու նման հնչիւն ունեցող:*

ՈՍԿԵՀՈՒՌ, ած. *Ոսկեթել:*

ՈՍԿԵՀՐԱՇ, ած. *Հրաշալի ոսկեղէն սարք՝ կազմած ունեցող:*

ՈՍԿԵՁԵՂՈՒՆ, ած. *Որի ձեղունը ոսկուց է:*

ՈՍԿԵՁՈՅԼ, ած. *Ոսկուց ձուլած:*

ՈՍԿԵՁՈՒԿ, գ. (Կենդ.) *Կրկնաշունչ ձկների կարգին պատկանող ձուկ:*

ՈՍԿԵՂԷՆ, ած. *Ոսկուց շինած, ոսկեայ:*

ՈՍԿԵՂԻՆԻԿ, ած. (Փաղաքշ. ձեւ), *Ոսկեղէն:*

ՈՍԿԵՃԱՃԱՆՉ, ած. *Ոսկու նման ճաճանչող:*

ՈՍԿԵՃԱՄՈՒԿ, ած. *Ոսկեղէն կմ ոսկեթել ճամուկներով՝ զարդերով:*

ՈՍԿԵՃԵՄ, ած. *Որտեղից ոսկի է հոսում:*

ՈՍԿԵՄԱՆ, ած. *Ոսկեթելով մանած կմ հիւսած:*

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ, գ. *Հիւրերու արձանագրութիւնները կրող մատեան: Յոբելիանական հրատարակութիւն:*

ՈՍԿԵՄՈԼ, ած. *Չափազանց ոսկեսէր. փոխ. շատ փողասէր:*

ՈՍԿԵՆԻՒԹ, ած. *Որի նիւթը ոսկի է:*

ՈՍԿԵՆԿԱՐ, ած. *Որի վրայ ոսկեթելով նկարներ են ասեղնագործած:*

ՈՍԿԵՆՄԱՆ, ած. *Ոսկու նման:*

ՈՍԿԵՇԷԿ, ած. *Ոսկեգոյնին տուող շէկ:*

ՈՍԿԵՇՈՂ, ած. *Ոսկու նման շողշողուն, ոսկեփայլ:*

ՈՍԿԵՇՈՒՔ, ած. *Ոսկով շքեղացած:*

ՈՍԿԵՊԱՃՈՅՃ, ած. *Ոսկով պաճուճուած՝ զարդարուած:*

ՈՍԿԵՊԱՏ, ած. *Ոսկով պատած:*

ՈՍԿԵՊԱՏԵԱՆ, ած. *Որի պատեանը ոսկուց է:*

ՈՍԿԵՊՂԻՆՁ, գ. *Բաղադրեալ մետաղ, պղնձից եւ զինկից, որ ոսկու գոյն ունի:*

ՈՍԿԵՊՍԱԿ, ած. *Ոսկեղէն պսակ ունեցող:*

ՈՍԿԵՋՈՒՐ, գ. *Սնդիկով լուծուած:*

ՈՍԿԵՋՐԵԼ, Տ. *Ոսկեզօծել:*

ՈՍԿԵՍԱՆՁ, ած. *Որի սանձը ոսկուց է կմ ոսկով զարդարուած:*

ՈՍԿԵՍԱՐ, ած. *Ոսկէ սարք:*

ՈՍԿԵՍԷՐ, ած. *Ոսկի սիրող, փողասէր:*

ՈՍԿԵՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Փողասիրութիւն, արծաթասիրութիւն:*

ՈՍԿԵՍՏԱՆ, գ. *Ոսկի զարդերի ամբողջութիւնը:*

ՈՍԿԵՎԱՃԱՌ, ած. գ. *Ոսկի վաճառող:*

ՈՍԿԵՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Ոսկեվաճառ լինելը:*

ՈՍԿԵՎԱՌ, ած. *Ոսկեղէն կմ ոսկեթել վառ՝ դրօշակ ունեցող:*

ՈՍԿԵՎԱՆԿ, ած. *Ոսկու հնչիւն ունեցող:*

ՈՍԿԵՎԱՐՍ, ած. *Ոսկեգոյն վարսերով, ոսկեհեր:*

ՈՍԿԵՏԱՌ, Տ. *Ոսկեգիր:*

ՈՍԿԵՏԵՍԱԿ, ած. *Ոսկու տեսակ, :*

ՈՍԿԵՏԵՍԻԼ, ած. *Ոսկետեսակ, ոսկու նման:*

ՈՍԿԵՏԵՐԵՒ, ած. *Ոսկեղէն կմ ոսկեգոյն տերեւներ ունեցող:*

ՈՍԿԵՏԻՊ, ած. *Ոսկեգոյն գրերով:*

ՈՍԿԵՏՈՒՓ, ած. *Որի տուփը՝ պահարանը ոսկուց է:*

ՈՍԿԵՐԱՆԳ, ած. *Ոսկեգոյն:*

ՈՍԿԵՐԻՉ, գ. *Նա որ ոսկերում է, ոսկեջրող կմ ոսկով պատող:*

ՈՍԿԵՐՈՏԻ, գ. *Ոսկորները, կմախքը:*

ՈՍԿԵՐՉԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. *Ոսկերչագործութեանը վերաբերող:*
ՈՍԿԵՐՉԱԿԱՆ, ած. *Ոսկերչին եւ ոսկերչութեան յատուկ:*
ՈՍԿԵՐՉԱՆՈՑ, գ. *Փողոց կամ քաղաքի թաղ, որտեղ ոսկերիչների խանութներն են գտնուում:*
ՈՍԿԵՐՉԱՊԵՏ, գ. *Ոսկերիչների գլխաւորը:*
ՈՍԿԵՐՉՈՒԹԻՒՆ, գ. *Ոսկերիչ լինելը:*
ՈՍԿԵՓԱՅԼ, ած. *Ոսկու նման ցոլացող:*
ՈՍԿԵՓԱՌ, ած. *Ոսկու նման փառաւոր:*
ՈՍԿԵՓՈԿ, ած. *Որի փոկերը ոսկուց են կամ ոսկեթել:*
ՈՍԿԵՓՈՂ, գ. *Ոսկուց շինած՝ ոսկեղէն փող:*
ՈՍԿԵՓՈՐԻԿ, ած. գ. *Որի փորում ոսկի կայ: Ընդհանուր անուն զանազան ձեռագիր ժողովածուների:*
ՈՍԿԵՓՈՒՆՋ, ած. մկ. *Ոսկեղէն կամ ոսկեգոյն փունջի նման:*
ՈՍԿԵՔԱՂ, ած. *Ոսկի քաղող:*
ՈՍԿԵՔԱՆԴԱԿ, ած. *Որի վրայ ոսկեղէն քանդակներ կան:*
ՈՍԿԵՔԱՐ, գ. (Հանք.) *Թանկագին քար* տուրմալինների *կարգից:*
ՈՍԿԵՉԿՆԻԿ, գ. (Կենդ.) *Ծածանների ցեղին պատկանող փոքր ձուկ ոսկեփայլ թեփերով:*
ՈՍԿԵՕԾ, ած. *Ոսկով օծած, ոսկէզօծած, ոսկէզօծ:*
ՈՍԿԵՕՂ, ած. *Որի օղը ոսկուց է:*
ՈՍԿԷ..., փխկ. *ոսկե:*
ՈՍԿԻ, գ. (Հանք.) *Պարզ մետաղական մարմին դեղին գոյնով եւ փայլուն: Ոսկուց շինած իր:* Փոխ. *Հարստութիւն, գանձ:* ած. *Ոսկուց շինած, որի նիւթը ոսկի է: Ընտիր:*
ՈՍԿԻԱԲԱՆ, ած. *Որի խօսքը ոսկի է:*
ՈՍԿԻԱԿԱՊ, ած. *Ոսկով կապած:*
ՈՍԿԻԱԿԻՐ, ած. *Իր մէջ ոսկի կրող:*
ՈՍԿԻԱՅԱՐԿ, Տ. *Ոսկեձեղուն:*
ՈՍԿԻԱՇԱՐ, ած. *Վրան ոսկի շարած:*
ՈՍԿԻԱՊԷՍ, մկ. *Ոսկու պէս:*
ՈՍԿԻԱՎԱՐՍ, Տ. *Ոսկեհեր:*
ՈՍԿԻՆՈՑ, գ. *Դրամ՝ մի ոսկի արժողութեամբ:*
ՈՍԿՈՂ, ած. գ. *Արհեստաւոր:*
ՈՍԿՈՐ, գ. *Պինդ նիւթ կրային եւ ֆոսֆորային բաղադրութեամբ:* Փոխ. *Շահ, օգուտ:* (Ծաղր.) *Ծեծ ուտել:*
ՈՍԿՈՐԱԿՏՈՐ, գ. *Ոսկրի կտոր:*
ՈՍԿՈՐՏԱՆՔ, յոգն. գ. *Ոսկորներ:*
ՈՍԿՐ, Տ. *Ոսկոր*
ՈՍԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Կազմախօսութեան այն մասը, որ քննում է ոսկորները:*
ՈՍԿՐԱԲԵԿ, ած. *Ոսկորները խորտակող՝ կոտրուած:*
ՈՍԿՐԱԲՈՅԺ, գ. *Ոսկորները բժշկող:*
ՈՍԿՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ, գ. *Ոսկրաբոյժ լինելը:*
ՈՍԿՐԱՁԱՆԳՈՒԱԾ, գ. *Ոսկորների քաշ:*
ՈՍԿՐԱՁՕԴՔ, գ. *Ոսկորների զօդուելու տեղը:*
ՈՍԿՐԱԽԱՂ, գ. *Ոսկորների միջի խաղը:*
ՈՍԿՐԱԾՈՒԽ, գ. *Ոսկորից պատրաստած ածուխ:*
ՈՍԿՐԱԿԵՐՊ, ած. *Ոսկորի նման:*
ՈՍԿՐԱՀԱՆ, ած. *Ոսկորը՝ ոսկորները հանած:*
ՈՍԿՐԱՀԱՍՏ, ած. *Որի ոսկորները հաստ են:*
ՈՍԿՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Ոսկորը կըտրելը:*
ՈՍԿՐԱՄԻՋՆ, գ. (Կազմախ.) *Ոսկորի միջն, թաղանթ:*
ՈՍԿՐԱՆԱԼ, բ. *Ոսկոր դառնալ:*
ՈՍԿՐԱՆՄԱՆ, ած. մկ. *Ոսկորի նման:*
ՈՍԿՐԱՆՔ, գ. (Ախտաբ.) *Աղեթափութեան մի տեսակը:*

**ՈՍԿՐԱՉԱՓ**, գ. *Գործիք, որով չափում են ոսկորների մեծութիւնը:*
**ՈՍԿՐԱՊԱՏ**, ած. *Ոսկորով պատած:*
**ՈՍԿՐԱՑԱՒ**, Տ. *Յօդացաւ:*
**ՈՍԿՐԱՓՈՒՏ**, գ. (Ախտաբ.) *Ոսկորի մի տեսակ բորբոքում:*
**ՈՍԿՐԱՔԱՐ**, գ. *Քարացած ոսկոր:*
**ՈՍԿՐԵՂԷՆ**, ած. *Որի նիւթը ոսկոր է, ոսկորից:*
**ՈՍԿՐԿՈՒԼ**, գ. (Կենդ.) *Անգղների ցեղից մեծ յափշտակիչ թռչուն:*
**ՈՍԿՐՈՏԻ**, գ. *Ոսկորները:*
**ՈՍԿՐՈՒՏ**, ած. *Ոսկորները լաւ զարգացած՝ խոշոր, ոսկորոտ, ոսկրահաստ:*
**ՈՍՄԷ**, գ. (Քիմ.) *Պարզ մետաղական մարմին:*
**ՈՍՈԽ**, գ. *Հակառակորդ դատաստանական գործերում: Նախանձորդ: Ոխակալութիւն: Թշնամի:*
**ՈՍՈԽԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Հակառակասիրութիւն:*
**ՈՍՈԽՈՒԹԻՒՆ**, գ. *Ոսոխ՝ թշնամի լինելը:*
**ՈՍՊԱԽԱՇՈՒ**, գ. *Ոսպով ապուր:*
**ՈՍՊԷ**, ած. *Ոսպնեայ:*
**ՈՍՊԻԿ**, գ. *Փոքր ոսպ:*
**ՈՍՊՆԱԿԵՐՊ**, ած. *Ոսպի ձեւ ունեցող:*
**ՈՍՊՆԱՉԱՓ**, ած. *Մի ոսպի մեծութեան:*
**ՈՍՊ ՈՒ ՍՈԽ**, գ. *Մի տեսակ կերակուր:*
**ՈՍՏ**, գ. *Ծառի ճիւղ: Բարակ ճիւղ:*
**ՈՍՏԱԲԵԿ**, ած. *Ոստերը բեկած՝ կոտրուած:*
**ՈՍՏԱԽԻՏ**, ած. *Խիտ ոստեր ունեցող:*
**ՈՍՏԱՅՆ**, գ.*Ջուլհակի գործուածք: Դազգահ, Գորգ գործելու կազմած: Ցանց:*
**ՈՍՏԱՅՆԱԳՈՐԾ**, Տ. *Ոստայնանկ:*
**ՈՍՏԱՅՆԱՆԿԵԼ**, բ. *Ոստայն գործել:*
**ՈՍՏԱՅՆԱՆԿՈՒԹԻՒՆ**, գ. *Ոստայնանկի արհեստը:*
**ՈՍՏԱՆ**, գ. *Արշակունեաց թագաւորութեան ժամանակ՝ արքունիքին պատկանող գաւառ: Թագաւորանիստ կմ իշխանանիստ քաղաք: Գլխաւոր քաղաք մի գաւառի:*
**ՈՍՏԱՆԻԿ**, ած. *Արքունական ոստանի բնակիչ:* Փոխ. *Բարեկիրթ:* Հկռ. *Ռամկական լեզու կմ ռամկօրէն:*
**ՈՍՏԱՐՁԱԿԵԼ**, չբ. *Ճիւղաւորել:*
**ՈՍՏԻԿԱՆ**, գ. *Զինեալ բնակչութեան վստահելի անձ, որ վստահում են պահպանութիւնը:*
**ՈՍՏԻԿԱՆԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ ոստիկան:*
**ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ**, ած. *Ոստիկանին յատուկ:*
**ՈՍՏԻԿԱՆԱՅԻՆ**, Տ. *Ոստիկանական:*
**ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ**, գ. *Մի քաղաքի ոստիկանութեան պետը:*
**ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ոստիկանապետ լինելը:*
**ՈՍՏԻԿԱՆԱՏՈՒՆ**, գ. *Այն շինութիւնը, որտեղ գտնուում է քաղաքի ոստիկանութիւնը:*
**ՈՍՏԻԿԱՆ(Ա)ՆՈՑ**, Տ. *Ոստիկանատուն:*
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոստիկան լինելը: Որեւէ քաղաքի ոստիկանական կազմը:*
**ՈՍՏԻՆ**, ած. *Ցամաքային, անջրդի, անջուր:*
**ՈՍՏԻՒՆ**, գ. *Ոստելը, ցատկելը:*
**ՈՍՏՆԱՏԱԽՏ**, գ. *Տախտակ զանազան ձեւի:*
**ՈՍՏՈՍՏԵԼ**, բ. *Ոստիւնների միջոցով տեղից տեղ շարժուել:*
**ՈՍՏՈՍՏՈՒՄ**, գ. *Ոստոստելը, ցատկելը:*
**ՈՍՏՈՍՏՈՒՆ**, ած. *Ոստոստող:*
**ՈՍՏՈՏ**, ած. *Ոստեր ունեցող:*
**ՈՍՏՈՒՄ**, գ. *Ոստնելը: Ցատկելը:*
**ՈՍՏՐԵԱՆՄԱՆ**, ած. *Ոստրեի նման:*
**ՈՍՏՐԷ**, գ. (Կենդ.) *Միազնդերք խեցիների կարգից խեցեմորթ:*
**ՈՍՏՐԷԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Ոստրէ վաճառող:*
**ՈՎ**, *Ամէն մի մարդ որ: Որեւէ մէկը,*

*անորոշաբար: Հարցական խօսք՝ դիմացինի ասածը կրկնել տալու նպատակով:* Անորոշ անձն. դեր. *Մէկը:*
**Ո՛Վ**, միջ. *որ կցւում է գոյական անուան: Բացագանչութիւն վշտի, աղէտի: Բացագանչութիւն ծաղրի, հեգնութեան:*
**ՈՎԱՍԻՍ**
**ՈՎԱՁԻՍ** } գ. *Անջուր անապատի մէջ ջրոտ եւ դալարազարդ տեղ:*
**ՈՎԷ՛**, *Զարմանքի՝ հիացմունքի բացագանչութիւն: Հեգնութեան բացագանչութիւն:*
**ՈՎԿԻԱԿԱՆ**
**ՈՎԿԻԱՆԵԱՆ** }ած. *Ովկիանոսին պատկանող:*
**ՈՎԿԻԱՆԱՊԱՏ**, ած. *Ովկիանոսով շրջապատուած:*
**ՈՎԿԻԱՆՈՍ**, գ. *Յունաց դիցաբանութեան մէջ՝ ծովերի աստուածը:*
**ՈՎՍԱՆՆԱՅ**, գ. *Օրհնութեան: Ընդհանրապէս ցնծութեան՝ գոհութեան աղաղակ:*
**ՈՎՍԱՆՆԱՅԱԲԵՐ**, ած. *Որ իր մէջ կրում է «ովսաննայ» բառը:*
**ՈՏԱԲԱՑ**
**ՈՏԱԲՈԲԻԿ** } ած. մկ. *Ոտքը բաց, մերկ ոտներով:*
**ՈՏԱՁԱՅՆ**, Տ. *Ոտնաձայն:*
**ՈՏՆԱԻՈՐ**, ած. *Ոտքեր ունեցող, տաղաչափօրէն գրուած:* Տ. *Տաղաչափութիւն:*
**ՈՏԱՇՈՐ**, գ. *Մէջքից վար սպիտակեղէն, վարտիք*
**ՈՏԱՇՈՐԱՑՈՒ**, ած. գ. *Ոտաշոր կարելու յարմար:*
**ՈՏԱՏԱԿ**, գ. *Ոտքի տակը:*
**ՈՏԱՏԱԿ**, մկ. *Ոտնակոխ, առաթուր:*
**ՈՏԱՏԵՂ**, գ. *Ոտաց ճամբայ կմ ճանապարհ, արտաքնոց:*
**ՈՏԱՑ**, գ. *Ոտաց շոր կմ :*
**ՈՏԱՑ**, մկ. *Ոտքի վրայ:*
**ՈՏԱԻՈՐ**, ած. գ. *Ոտով գնացող: Զիւոր:*
**ՈՏԻԿ**, գ. (Փաղաքշ.) *Փոքր՝ սիրուն ոտք, տոտիկ:*
**ՈՏԻՑ**, գ. *Ոտնաման:*
**ՈՏԿԱՂ**, ած. *Մի ոտքով կաղացող:*
**ՈՏՄԱՇ**, ած. *Ոտքերը մաշած:*
**ՈՏՄԱՇՈՒԿ**, ած. *Շատ քայլելուց սաստիկ յոգնած:*
**ՈՏՆԱԲԱՑ**, Տ. *Ոտաբաց:*
**ՈՏՆԱԲԵԿ**, ած. *Ոտքը կմ ոտքերը կոտրած:*
**ՈՏՆԱԲՈՅԺ**, ած. գ. *Ոտք բժշկող:*
**ՈՏՆԱԳՆԱՑ**, ած. *Ոտք ելած երեխայ:*
**ՈՏՆԱԹԱԿ**, ած. *Ոտքի տակ թակուած, ոտնակոխ եղած:*
**ՈՏՆԱԹԵԹԵՒ**, ած. *Ոտքից թեթեւ:*
**ՈՏՆԱԺԱՊԱՒԷՆ**, գ. *Ոտքի ժապաւէն:*
**ՈՏՆԱԼԵՂ**, գ. *Լողալու մի տեսակը:*
**ՈՏՆԱԼՈՒԱՑ**, գ. *Եկեղեցական արարողութիւն:*
**ՈՏՆԱԼՈՒԱՑ**, գ. *Ոտները լուալու աման:*
**ՈՏՆԱԼՈՔԻ**, գ. *Ոտքի վրայով լոք տալը:*
**ՈՏՆԱԼՊԻՐԾ**, ած. *Ոտքի համար լպրծուն:*
**ՈՏՆԱԿԱԽԵԼ**, բ. *Ոտքը կախ ձգել:*
**ՈՏՆԱԿԱՊ**, ած. մկ. *Ոտները կապած:*
**ՈՏՆԱԿԱՊԻՉ**, ած. գ. *Ինչ որ ոտքը կապում է, արգելք է լինում:*
**ՈՏՆԱԿԱՌՈՅՑ**, ած. *Տեղում անշարժ:*
**ՈՏՆԱԿԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ոտքի վրայ կանգնած դրութիւն:*
**ՈՏՆԱԿՈԽ**, ած. *Ոտքի տակ կոխոտելը:*
**ՈՏՆԱԿՈԽՈՂ**, ած. գ. *Ոտքը կոխող:*
**ՈՏՆԱԿՈԽՔ**, գ. *Ոտնակոխ անելը:*
**ՈՏՆԱԿՈՏՈՐ**, ած. *Ոտները կոտրտած՝ ջարդած:*
**ՈՏՆԱՀԱՆ**, ած. *Շատ ման գալուց ոտները ջարդուած կմ ուժասպառ եղած:*
**ՈՏՆԱՀԱՐԱԿԱՆ**, ած. *Ոտնահարութիւն արտայայտող:*
**ՈՏՆԱՀԵՏՔ**, գ. *Ոտքի հետք:*

**ՈՏՆԱՀՈՂ**, գ. *Ոտքի տակի հողը:*
**ՈՏՆԱՁԱՅՆ**, գ. *Ոտքի՝ քայլելու ձայն:*
**ՈՏՆԱՄԱՆ**, գ. *Ոտքի կմ ոտաց աման, կօշիկ:*
**ՈՏՆԱՄԱՏ**, գ. *Ոտքի մատը:*
**ՈՏՆԱՄՈՒՇՏԱԿ**, գ. *Կենդանիների մազածածկ մորթուց ոտքերի տակ գցելու մորթի:*
**ՈՏՆԱՄՈՒՏ**, գ. *Մի տեղ առաջին անգամ ոտք դնելը:*
**ՈՏՆԱՅԻՆ**, ած. *Ոտքի վրայ կատարուած:*
**ՈՏՆԱՆԻ**, ած. *(Այս-ինչքան) ոտներով:*
**ՈՏՆԱՉԱՓ**, գ. *Մի ոտքի չափ:*
**ՈՏՆԱՊԱՐԱՆՋԱՆ**, գ. *Ոտքի վրայ անց կացնելու ապարանջան:*
**ՈՏՆԱՊԻՆԴ**, ած. *Ոտքը պինդ:*
**ՈՏՆԱՌ**, ած. *Լպրծուն:*
**ՈՏՆԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Ոտքի սայթաքում:*
**ՈՏՆԱՍԵՂՄԱԿ**, գ. *Ինքնաշարժի արգելակ:*
**ՈՏՆԱՎԱՐՃ**, գ. *Ոտքի՝ մի տեղ գնալու վարձ:*
**ՈՏՆԱՏԱԿ**, գ. *Ոտքի տակը:*
**ՈՏՆԱՏԱԿԵԼ**, բ. *Ոտնատակ տալ, կոխոտել:*
**ՈՏՆԱՏԵՂ**, գ. *Ոտք դնելու տեղ:*
**ՈՏՆԱՏՐՈՓ**, ած. մկ. *Ոտներով տրոփող:*
**ՈՏՆԱՑԱՒ**, գ. *Ոտքի ցաւ:*
**ՈՏՆԱՒՈՐ**, ած. *Ոտք ունեցող:*
**ՈՏՆԱՓԱԹԱԹ**, գ. *Մէջը ծակ լաթի կըտոր:*
**ՈՏՆԱՓՈԽ**, գ. *Ոտք փոխելը:*
**ՈՏՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ**, գ. *Ոտք փոխելը. քայլափոխ:*
**ՈՏՆԱՔԱՐՇ**, գ. *Ոտները քաշ տալը:*
**ՈՏՆԲԵԿ**, ած. *Ոտքը կոտրած:*
**ՈՏՆԼՈՒԱՅ**, Տ. *Ոտնլուայ:*
**ՈՏՆԾՈՒՌ**, ած. *Ոտքը ծուռ:*
**ՈՏՆԿԱԽ**, մկ. *Ոտները կախ ձգած:*
**ՈՏՆԿԱՅ**, գ. *Ոտքի վրայ կանգնելու տեղ:*

**ՈՏՆԿԱՑ**, ած. մկ. *Ոտքի վրայ կանգնած:*
**ՈՏՆՀԱՐ**, ած. *Ոտքով խփող:*
**ՈՏՆՀԱՐԵԼ**, բ. *Ոտնահար լինել:*
**ՈՏՆՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ոտնահարելը, աքացելը:*
**ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆ**, գ. *Ոտքը ձգելը դէպի մի տեղ:*
**ՈՏՆՄԵԿ**, մկ. *Ոտները մեկնած:*
**ՈՏՆՈՒԳԼՈՒԽ**, գ. *Ոտքերն ու գլուխը:*
**ՈՏՆՈՒԾՈՑ**, Տ. *Ոռ ու գլուխ:*
**ՈՏՆԱՔԱՐ**, գ. *Չէչաքար:*
**ՈՏՆՕՂԱԿ**, գ. *Օղակ, որ ձգում են բազէի ոտքը:*
**ՈՏՈՎ**, մկ. *Ոտքով:*
**ՈՏՔ**, գ. *Մարդու ստորին վերջաւորութիւնները: Մահճակալի ներքեւի կողմը, գլխի հակառակ կողմը: Լեռան ստորոտը: Մշտական նեցուկ: Այցելութիւն՝ իբրեւ գուշակութեան նշան: Նարդախաղի մէջ՝ ազատ անցք:* Հմմտ. *Ոտնաչափ:* Փոխ. *Կօշիկ: Ոտքի կօշիկի չափս, համար:*
**ՈՏՈՒԳԼՈՒԽ**, Տ. *Ոտն ու գլուխ:*
**ՈՐ**, գ. *Կապում է երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան մի բառի հետ: Կապում է երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ասացուածի (բայի) հետ: Գործ է ածուում իբրեւ հարցական բառ:* մկ. *Երբ, երբ որ: Որպէսզի: Թէ:*
**ՈՐԱԿ**, գ. *Որպիսի լինելը:*
**ՈՐԱԿԱԿԱՆ**, ած. *Որակին յատուկ:* (Քիմ.), *Որ արտայայտում է նիւթի որակը:*
**ՈՐԱԿԱՒՈՐ**, ած. (*Լաւ) որակ ունեցող:*
**ՈՐԱԿԱՒՈՐԵԼ**, բ. *Որակաւոր դարձնել:*
**ՈՐԱԿԱՒՈՐՈՒՄ**, գ. *Որակաւորելը:*
**ՈՐԱԿԵԱԼ**, ած. *Որակուած, որակը վկայուած:*
**ՈՐԱԿԵԼ**, բ. *Որակը՝ յատկութիւնը որոշել:*

**ՈՐԱԿԻՉ**, ած. *Ինչ որ որակում է:*
**ՈՐԱԿՈՒՄ**, գ. *Որակելը:*
**ՈՐԱՅ**, գ. *Ցորենի կմ գարու խուրձ:*
**ՈՐԱՅԻՆ**, ած. գ. *Որայի ցօղունը:*
**ՈՐԱՆ**, գ. *Քաղած հունձ:*
**ՈՐԲ**, ած. *Ծնողներին կմ ծնողներից մէկին կորցրած:* Նման. *Պետին՝ հովանաւորին՝ առաջնորդին կորցրած:*
**ՈՐԲԱԽՆԱՄ**, ած. *Որբերին խնամող, անտէր երեխաները պատսպարող՝ կերակրող:*
**ՈՐԲԱԿԱՆ**, ած. *Որբին յատուկ:*
**ՈՐԲԱՀԱՒԱՔ**, գ. *Որբերին հաւաքելը, պատսպարելը:*
**ՈՐԲԱՆԱԼ**, բ. *Որբ դառնալ:*
**ՈՐԲԱՆՈՑ**, գ. *Պետական բարեգործական հիմնարկ, որտեղ հաւաքում եւ խնամում են որբ եւ ընդհանրապէս անտէր երեխաներին:*
**ՈՐԲԱՆՈՑԱՊԱՏԿԱՆ**, ած. *Որբանոցին պատկանող, որբանոցի սեփականութիւն եղող:*
**ՈՐԲԱՎԱՐԻ**, ած. *Որբին յատուկ՝ վայել:*
**ՈՐԲԱՏՈՒՆ**, Տ. *Որբանոց:*
**ՈՐԲԵՒԱՅՐԻ**, ած. գ. *Որբ եւ այրի մնացած կին:*
**ՈՐԲԻԿ**, գ. *Փոքրահասակ որբ:*
**ՈՐԲՈՑ ԵՒ ԱՅՐԵԱՑ**, գ. (Եկեղ.) *Գանձանակ:*
**ՈՐԲՈՒԹԻՒՆ**, գ. *Որբ լինելը:*
**ՈՐԲՈՒԿ**, գ. (Փաղաքշ.) *Փոքրահասակ որբ, որբիկ:*
**ՈՐԲՈՒՀԻ**, գ. *Որբ իգական սեռի:*
**ՈՐԴԵՍԵՐՈՒՄ**, գ. *Որդի սերելը:*
**ՈՐԴՆ**, գ. (Կենդ.) *Ընդհանուր անուն ստորին կենդանիների, որոնք երկայանաձեւ՝ անողնաշար՝ կակուղ՝ կծկուող մարմին ունեն:*
**ՈՐԴԱԿԵՐՊ**, Տ. *Որդանման:*
**ՈՐԴԱՆ (ԿԱՐՄԻՐ)**, գ. *Կարմիր ներկ:*
**ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ ԽՈՏ**, գ. (Բուս.) (*Aeluropus villosus:*
**ՈՐԴԱՆՄԱՆ**, ած. մկ. *Որդի նման:*
**ՈՐԴԱՌԱՏ**, ած, *Որդերով հարուստ:*
**ՈՐԴԵԱԿ**, (Փաղաքշ.), գ. *Փոքր որդի:*
**ՈՐԴԵԲԵՐՈՒԹԻՒՆ**, Տ. *Որդեծնութիւն:*
**ՈՐԴԵԳԻՐ**, ած. *Որդեգրուած, հոգեզաւակ:*
**ՈՐԴԵԳՈՐՈՎ**, ած. *Իր որդու վրայ գորով ունեցող:*
**ՈՐԴԵԳՐԱԿԱՆ**, ած. *Որդեգրին եւ որդեգրութեան յատուկ:*
**ՈՐԴԵԳՐԵԼ**, բ. *Օրինական կերպով մի երեխայ որդեգիր դարձնել:*
**ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Որդեգիր լինելը:*
**ՈՐԴԵԳՐՈՒՄ**, Տ. *Որդեգրութիւն:*
**ՈՐԴԵԶՈՀ**, ած. *Նա որ զոհում է իր որդուն:*
**ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆ**, գ. *Որդի ծնելը:*
**ՈՐԴԵԿԻՐԹ**, ած. *Իր որդուն կմ որդիներին կրթող:*
**ՈՐԴԵԿԻՑ**, ած. *Ուրիշ որդու հետ հաւասարապէս որդի:*
**ՈՐԴԵԿՈՐՈՅՍ**, ած. *Նա որ կորցրել է իր որդուն:*
**ՈՐԴԵՍԷՐ**, ած. *Իր որդուն սիրող, զաւակասէր:*
**ՈՐԴԵՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Որդեսէր լինելը:*
**ՈՐԴԵՏԵՆՉ**, ած. *Նա որ տենչում է՝ շատ փափագում է որդի ունենալ:*
**ՈՐԴԵՏԷՐ**, ած. *Որդիներ ունեցող:*
**ՈՐԴԻ**, գ. *Արու զաւակ:* (Եկեղ.) *Երրորդութեան անձերից մէկը: Կենդանու ձագ: Մի ազգի պատկանող անհատ՝ այդ ազգի նկատմամբ:* (Կրօն.) *Քրիստոս:*
**ՈՐԴԻԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ որդի:*
**ՈՐԴԻԱԿԱՆ**, ած. *Որդուն յատուկ, վերաբերեալ:*
**ՈՐԴԻԱԿԻՑ**, ած. Տ. *Որդեկից:*
**ՈՐԴԻԱՆԱԼ**, բ. *Որդի դառնալ:*
**ՈՐԴԻԱՑՈՒՄ**, գ. *Որդիանալը:*
**ՈՐԴԻՈՒԹԻՒՆ**, գ. *Որդի լինելը:*
**ՈՐԴՆԱԴԵՂ**, գ. *Փորի որդերի դէմ դեղ:*

ՈՐԴՆԱԼԻ, ՈՐԴՆԱԼԻՑ } ած. *Որդերով լի:*
ՈՐԴՆԱԾ, ած. *Մէջը որդեր գոյացած:*
ՈՐԴՆԱԾԻՆ, ած. *Նա որ որդունք՝ որդեր է ծնում:*
ՈՐԴՆԱԿԵՐ, ած. *Որդերից կերուած:*
ՈՐԴՆԱԿԵՐՊ, Տ. *Որդնանման:*
ՈՐԴՆԱՀԱՐ, ած. *Որդերից զարկուած:*
ՈՐԴՆԱՀԱՐԵԼ, բ. *Որդնահար լինել:*
ՈՐԴՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Որդնահար լինելը:*
ՈՐԴՆԱՁԵՒ, Տ. *Որդնանման:*
ՈՐԴՆԱՅԻՆ, ած. *Որդին՝ ճճին յատուկ, վերաբերեալ:*
ՈՐԴՆԱՆՄԱՆ, ած. մկ. *Որդի նման, որդի պէս:*
ՈՐԴՆԱՆՈՑ, գ. *Որտեղ շերամի որդ են պահում:*
ՈՐԴՆԵԼ, Տ. *Որդնոտել:*
ՈՐԴՆԿԵՐ, ած. գ. *Որդ ուտող:* *(*Կենդ.) *Պիծակների մի տեսակը:*
ՈՐԴՆՈՏ, ած. *Որի մէջ որդեր կան:*
ՈՐԴՆՈՏԵԼ, բ. *Մէջը կմ վրան որդեր գոյանալ:*
ՈՐԴՆՈՒԿ, գ. *Փոքր որդ:*
ՈՐԵԱՐ, գ. *Ցեղի այր մարդիկ:*
ՈՐԵՒԷ, ած. *Անխտիր (ինչ-բան):*
ՈՐԹ, գ. (Բուս.) *Որթատունկերի կարգին պատկանող թուփ:*
ՈՐԹ, գ. *Բարակ ճիւղերից հիւսած կողով:*
ՈՐԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Որթ շինելը:*
ՈՐԹԱՏՈՒՆԿ, գ. *Որթի տունկ:* (Բուս.) *Որթատունկեր, Աստղածաղիկների դասին պատկանող բոյսերի կարգ:*
ՈՐԹԱՒԵՐ, ած. *Որթը՝ խաղողի վազը:*
ՈՐԹԱՔԱՐ, Տ. *Թերթաքար:*
ՈՐԻ, գ. *Ագռաւների մի տեսակ:*
ՈՐԻՁ(Ն), Տ. *Բրինձ:*
ՈՐԻՁԱԿԵՐ, գ. *Բրնձի որդ:*
ՈՐԻՁԱՀԱՏ, գ. *Բրնձի հատիկը:*
ՈՐԻՁԱՍՏԱՆ, գ. *Բրինձ ցանած արտեր:*

ՈՐԾ, գ. *Ստամոքսից յետ եկած անմարս կերակուր. փսխած:*
ՈՐԾԱԼ, բ. *Ստամոքսի պարունակութիւնը բերանը բերել:*
ՈՐԾԱՆՔ, գ. *Փսխածը:*
ՈՐԾԱՑՆԵԼ, գ. *Ործալ տալ:*
ՈՐԾԱՑՈՒՑԱՆԵԼ, անց. ձեւ *Ործալ՛ի*, նոյն նշ.:
ՈՐԾԿԱԼ, բ. *Ործալ:*
ՈՐԾԿՈՑ, գ. *Ործկալը:*
ՈՐԾԿՈՑԱԲԵՐ, ած. *Ործկալ առաջացնող:*
ՈՐԿՈՐ, գ. (Կազմ.) *Կոկորդի եւ ստամոքսի միջաւի կերակրափողը:* Փոխ. *Ուտելու ցանկութիւն, շատակերութիւն:*
ՈՐԿՈՐԱԳԱՀ, Տ. *Որկրամոլ:*
ՈՐԿՈՐՈՒՍՏ, ած. *Որկրամոլ:*
ՈՐԿՐԱՄՈԼ, ած. գ. *Մոլութեան չափ որկորին՝ ուտել-խմելու անձնատուր:*
ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ, գ. *Որկրամոլ լինելը:*
ՈՐՁ, ած. *Արական սեռին պատկանող:*
ՈՐՁԱՑ, գ. *Որոշ բոյսերի լերկ եւ ողորկ ցողուն:*
ՈՐՁԱԲՈՂԿ, գ. *Մեծացած՝ սերմակալած բողկ:*
ՈՐՁԱԽՈՒՆԿ, գ. *Մի տեսակ երկար եւ սպիտակ խունկ:*
ՈՐՁԱԿ, գ. *Հաւի արուն, աքլոր:*
ՈՐՁԱԿԿԱՆՉ, ՈՐՁԱԿԱՆՉ } գ. *Որձակների կանչելը:*
ՈՐՁԱԿԱՃՈՒՏ, գ. *Ճուտ-որձակ, արու ճուտ:*
ՈՐՁԱԿՈՏՈՐ, ած. *Որձերին՝ արական սեռին կոտորող:*
ՈՐՁԱՄՈԼ, Տ. *Արուամոլ:*
ՈՐՁԱՏԵԼ, նբ. *Ներքինացնել:*
ՈՐՁԱՏՈՒ, ած. *(Բոյս) որ թողնուում է սերմնակալելու համար:*
ՈՐՁԱՐՄԱՏ, գ. *Ընդհանուր անուն բոյսերի մի կարգի, որոնց արմատը*

*ամորձիքի նմանութիւն ունի:*

**ՈՐՁԱՔԱՐ**, գ. (Հանքաբ.) *Շատ պինդ քար* կվարցների *կարգից:*

**ՈՐՁԱՔԱՐԵԱՅ**, ած. *Որձաքարից բաղկացած:*

**ՈՐՁԵՂԷՆ**, գ. *Մի տան՝ քաղաքի եւն արական սեռի անդամները:*

**ՈՐՁԻ**, գ. *Անասունների որձը:*

**ՈՐՁԱԽՈՏ**, գ. *Անորոշ տեսակի բոյս:*

**ՈՐՁՈՒՌԻ**, գ. (Բուս.) *Ուռենիների կարգին պատկանող փոքր ծառ կմ թուփ:*

**ՈՐՁՌԵԼ**, բ. *Սերմակալել:*

**ՈՐՄ**, գ. *Քարից, աղիւսից, փայտից կմ այլ պինդ նիւթերից զազաթնահայեաց կառուցուածք: Պատ:*

**ՈՐՄԱԴԱՐԱՆ**, գ. *Պատի մէջ շինուած դարան:*

**ՈՐՄԱԽՈՐՇ**, գ. *Պատի մէջ խորշ:*

**ՈՐՄԱԾԵՐՊ**, գ. *Պատի մէջ ծակ ու ճեղք:*

**ՈՐՄԱԿԱԼՔ**, յոգն. գ. *Ննջարանի վարագոյրներ կմ զարդեր:*

**ՈՐՄԱՀԻՍ**, ած. գ. *Որմ՝ ցանկապատ հիւսող, որմածու:*

**ՈՐՄԱՆԿԱՐ**, գ. *Նկար նոր ծեփուած պատի վրայ ջրաներկով: Որմնանկար:*

**ՈՐՄԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ**, գ. *Որմանկարներ նկարելու արուեստը:*

**ՈՐՄԱՇԷՆ**, Տ. *Որմնադիր:*

**ՈՐՄԱՍԻՒՆ**, գ. *Սիւն, որ կիսով չափ պատի մէջ է մտնում:*

**ՈՐՄԱՓԱԿ**, ած. *Պատերով փակուած:*

**ՈՐՄԱՓՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Պատը փորելը՝ ծակելը:*

**ՈՐՄԵԼ**, նբ. *Պատ քաշել:*

**ՈՐՄԶԴԱԿԱՆ**, (Կրօն.), *(Որմիզդ յատուկ անունից), ած. Որմզդի, Որմզդին նուիրուած:*

**ՈՐՄԶԴԵՂՆ**, գ. (Կենդ.) *Եղջերուների կարգից ամենամեծ եղջերուն:*

**ՈՐՄԻԶԴ**, գ. (Կրօն.) *Յատուկ անուն զրադաշտական պարսիկների բարի աստծու, Զրուանի որդու:*

**ՈՐՄՆԱԴԻՐ**, գ. *Որմ՝ պատ դնող, քարից՝ աղիւսից պատ շարող:*

**ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ**, ած. *Որմնադրին եւ որմնադրութեան յատուկ:*

**ՈՐՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Որմնադիր լինելը:*

**ՈՐՄՆԱՀԱՐԹԱԿ**, գ. *Պատի հարթակ:*

**ՈՐՄՆԱՀԻՄՆ**, գ. *Պատի հիմք:*

**ՈՐՈԳԱՅԹ**, գ. *Թակարդ՝ ծուղակ՝ անասուններ, այլ եւ մարդիկ բռնելու եւ կաշկանդելու:* Նման. *Խորամանկ միջոց:* (Ծանկ.), *Յետոյք:*

**ՈՐՈԳԱՅԹԱԴԻՐ**, ած. *Որոգայթ դնող՝ լարող:*

**ՈՐՈԳԱՅԹԱՇԱՏ**, ած. *Որտեղ շատ որոգայթներ կան:*

**ՈՐՈԳԱՅԹԱՒՈՐ**, ած. *Որտեղ որոգայթներ են դրուած:*

**ՈՐՈԳԱՅԹԱՐԱՆ**, գ. *Որոգայթներ դրուած տեղ:*

**ՈՐՈԳԱՅԹԵԼ**, բ. *Որոգայթի մէջ գցել:*

**ՈՐՈԹ**, գ. *Բաժակ, թաս:*

**ՈՐՈԿ**, գ. *Զառիվայր:*

**ՈՐՈՃ**, գ. *Որոճալը:*

**ՈՐՈՃ**, գ. (Բուս.) *Թիթեռնածաղիկների կարգին պատկանող բազմաճիւղ փոքր թուփ:*

**ՈՐՈՃԱՅԻՆ**, ած. *Որոճող:*

**ՈՐՈՃԵԼ**, բ. *Արածած խոտը ծամել:*

**ՈՐՃՈՂԱԲԱՐ**, մկ. *Որոճելու եղանակով:*

**ՈՐՈՃՈՂՆԵՐ**, գ. յոգն. (Կենդ.) *Դարասմբակների կարգին պատկանող կենդանիներ:*

**ՈՐՈՃՈՒՄ**, գ. *Որոճելը, կերակուրը երկրորդ անգամ՝ լաւ ծամելը:*

**ՈՐՈՄ**, գ. (Բուս.) *Խոտազգիների կարգից գարիների ցեղին պատկանող բոյս:*

**ՈՐՈՄՆԱԲԱՐ**, մկ. *Որոմի նման,* փխբ. *երկպառակելու նպատակով:*

**ՈՐՈՄՆԱԲԵՐ**, ած. *Որոմ բերող:*

**ՈՐՈՄՆԱԲՈՅՍ**, ած. *Որոմ բուսցնող:*

**ՈՐՈՄՆԱԽԱՌՆ**, ած. *Որի մէջ որոմ կայ խառնուած:*

**ՈՐՄՆԱՆՑՔ**, գ. *Որմի մէջ անցք:*

**ՈՐՈՄՆԱՇԱՏ**, ած. *Որտեղ կմ երբ որոմը շատ է լինում:*

**ՈՐՈՄՆԱՏԵՍԱԿ**, ած. *Որոմի տեսակ:*

**ՈՐՈՄՆԱՑԱՆ**, ած. *Որոմ ցանող:*

**ՈՐՈՆԵԼ**, բ. *Փնտռել: Քրքրել:*

**ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ**, ած. *Որոնողական եւ փրկարարական:*

**ՈՐՈՆՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Որոնելը: Փընտռելը:*

**ՈՐՈՆՈՒՄ**, գ. *Որոնելը: Մանրամասն հետազօտութիւն:*

**ՈՐՈՇ**, ած. մկ. *Ուրիշներից որոշուած՝ ջոկուած, Սահմանուած, Բացայայտ: Անորոշ կերպով: Յստակ, յայտնի:*

**ՈՐՈՇԱԲԱՐ**, մկ. *Առանձին՝ ջոկուած կերպով:*

**ՈՐՈՇԱԿԻ**, մկ. *Որոշ՝ պարզ՝ բացայայտ կերպով:*

**ՈՐՈՇԱԿԻԱՑՆԵԼ**, բ. *Որոշակի դարձնել:*

**ՈՐՈՇԱՊԷՍ**, մկ. *Որոշ կերպով:*

**ՈՐՈՇԱՐԿՈՒՄ**, 1. *Որոշակիացում:* 2. *Զատորոշում:*

**ՈՐՈՇԵԱԼ**, ած. *Որոշուած, սահմանուած:*

**ՈՐՈՇԵԼ**, բ. *Մի բան ուրիշ նման բաներից ջոկել: Պարզ սահմանել: Վճիռ կայացնել:*

**ՈՐՈՇԻՉ**, ած. *Նա որ որոշում է:* Հմմտ. *Որոշեալ:*

**ՈՐՈՇՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Որոշելու կարողութիւն:*

**ՈՐՈՇՈՒՄ**, գ. *Վճիռ: Զատելը, զատուելը:* (Կրօն.) *Եկեղեցուց հեռացնելը:*

**ՈՐՈՇՈՒՄՆԱՌՈՒ**, գ. *Որոշում ընդունողը:*

**ՈՐՈՋԱԿ**, գ. (Փաղաքշ.) *Գառնիկ:*

**ՈՐՈՋԵՆԻ**, գ. (Կազմախ.) *Մօր արգանդում սաղմը պատող թաղանթի ներքին նուրբ եւ թափանցիկ խաւը:*

**ՈՐՈՎԱՅՆ**, գ. *Մարմնի ստորին խոռոչը: Սննդառութեան ներքին գործարան, ստամոքս եւ աղիքներ:*

**ՈՐՈՎԱՅՆԱԳԱՐ**, ած. գ. *Ստամոքսի ցաւ:*

**ՈՐՈՎԱՅՆԱԺԷՏ**, Տ. *Որկրամոլ:*

**ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍ**, ած. գ. *Որովայնից խօսող:*

**ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ**, գ. *Որովայնից խօսելը:*

**ՈՐՈՎԱՅՆԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Փորլուծութիւն:*

**ՈՐՈՎԱՅՆԱՀԱՏ**, ած. գ. *Որովայնահատութիւն կատարող (բժիշկ):*

**ՈՐՈՎԱՅՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *(Վիրաբուժ.) Որովայնը կտրելը՝ ճեղքելը վիրահատական որեւէ գործողութիւն կատարելու նպատակով:*

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼ**, ած. *Մոլութեան աստիճան որովայնին՝ ուտել-խմելու անձնատուր եղած:*

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Որովայնամոլ՚ի, Աւելի որովայնամոլ:*

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ**, գ. *Որովայնամոլ լինելը:*

**ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ**, ած. *Որովայնին յատուկ:*

**ՈՐՈՎԱՅՆԱՆՑ**, ած. *Փորլուծութիւն պատճառող:*

**ՈՐՈՎԱՅՆԱՊԱՇՏ**, ած. *Իր որովայնը պաշտող:*

**ՈՐՈՎԱՅՆԱՊԱՐԱՐ**, ած. *Իր որովայնը պարարող: Կշտացնող:*

**ՈՐՈՎԱՅՆԱՊԻՆԴ**, ած. *Որովայնը պինդ, փորը կապ:*

**ՈՐՈՎԱՅՆԱՊՆԴՈՒԹԻՒՆ**, գ. *Որովայնի պնդութիւն:*

ՈՐՈՎՀԵՏԵՒ, շղկ. *Կապում է պատճառ. նախադասութիւնը մի ուրիշ նախադասութեան հետ: Քանզի, քանի որ:*
ՈՐՈՏ, գ. *Թոյլ կմ ուժեղ թնդիւն՝ աղմուկ:* Նման. *Թնդիւն, ժխոր: Չարութիւն:*
ՈՐՈՏԱԳՈՉ,ած. մկ. *Որոտումի ձայն հանող:*
ՈՐՈՏԱԳՈՌ, ած. *Որոտացող:*
ՈՐՈՏԱԼ, բ. *Ամպը գոռալ, ամպի գոռոց լսուել: Գոռ՝ ահեղ ձայնով գոչել:*
ՈՐՈՏԱԼԻ, ՈՐՈՏԱԼԻՐ, ՈՐՈՏԱԼԻՑ, ած. *Որոտումով լի:*
ՈՐՈՏԱՁԱՅՆ, գ. *Որոտման ձայն, որոտում, որոտ:*
ՈՐՈՏԸՆԴՈՍՏ, ած. մկ. *Որոտումի ձայնով վեր թռցնող:*
ՈՐՈՏՈՒՄ, գ. *Որոտալը:* Նման. *Ուժեղ գոռոց:*
ՈՐՈՏՈՑ, գ. *Որոտալը:*
ՈՐՈՏՈՒՆ, ած. *Որոտացող:*
ՈՐՈՐՆԵՐ, գ. (Կենդ.) *Մաշկոտնեայ թռչունների մի ցեղ:*
ՈՐՉԱՓ, ած. եւ մկ. *յարաբերական եւ հարցական խօսքերում: Ինչքան, որքան:*
ՈՐՉԱՓԱԿԱՆ, ած. *Որչափութիւնն արտայայտող:*
ՈՐՊԷՍ, մկ. Տ. *Ինչպէս:*
ՈՐՊԷՍՈՒԹԻՒՆ, Տ. *Որպիսութիւն:*
ՈՐՊԻՍԻ, Տ. *Ինչպիսի:*
ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ, գ. *Ո՞րպէս՝ ի՞նչպէս լինելը:*
ՈՐՋ, գ. *Փոս, խոռոչ:* Նման. *Պատսպարան՝ թաքստոց:*
ՈՐՋԱԲԱՐ, մկ. *Ինչպէս որջում:*
ՈՐՋԱԿՈՒՄԲ, գ. *Հիմնականում կասկածելի զբաղմունքի անձանց հաւաքատեղի:*
ՈՐՋԱՁԵՒ, ած. *Որջի նմանութիւն ունեցող:*
ՈՐՋԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ, բ. *Իր որջը մտնել:*

ՈՐՋԱՐԱՆ, գ. *Որջանալու տեղ, որջ:*
ՈՐՍ, գ. *Որսալը, զէնքով կմ գործիքներով կենդանիներ՝ թռչուններ՝ ձուկ բռնելը:* Փոխ. *Մարդ, որին ուզում են բռնել, թակարդը ձգել:*
ՈՐՍԱԳՈՂ, գ. *Գողունի կմ գաղտուկ կերպով որսորդութիւն անող:*
ՈՐՍԱԼ, բ. *Զէնքով կմ գործիքով կենդանիներ՝ թռչուններ՝ ձուկ բռնել կմ սպանել:* Նման. *Խորամանկութեամբ մէկին իր կողմ դարձնել:*
ՈՐՍԱԼԻՑ, ած. *Որսերով լիքը:*
ՈՐՍԱԿԻՑ, ած. գ. *Միասին որս անող:*
ՈՐՍԱՄԱԿՈՅԿ, գ. *Որսի համար նախատեսուած փոքրիկ նաւակ:*
ՈՐՍԱՄԱՍ(Ն), գ. *Որսի մասը:*
ՈՐՍԱՇԱՏ, ած. *Որտեղ որսի կենդանիներ շատ կան:*
ՈՐՍԱՇՈՒԿԱՅ, գ. *Որսի վաճառատեղ:*
ՈՐՍԱՊԱՀ, ած. գ. *Որսատեղի պահապան:*
ՈՐՍԱՊԵՏ, գ. *Որսի կարգադրիչ:*
ՈՐՍԱՍԷՐ, ած. *Որս՝ որսորդութիւն սիրող:*
ՈՐՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Որսասէր լինելը:*
ՈՐՍԱՏԵՂ, գ. *Որսի՝ որսորդութեան տեղ:*
ՈՐՍԱՏԵՆՉ, ած. *Որսորդութեան տենչ ունեցող:*
ՈՐՍԵՐԳ, գ. *Որսի՝ որսի մասին՝ որսորդութեան ժամանակ երգւող երգ:*
ՈՐՍԿԱՆ, գ. *Որս անող մարդ:*
ՈՐՍՈՐԴ, գ. *Նա որ պարապում է որսորդութեամբ:*
ՈՐՍՈՐԴԱԲԱՐ, մկ. *Որսորդի պէս:*
ՈՐՍՈՐԴԱԽԱԲ, ած. *Որսորդին խաբող:*
ՈՐՍՈՐԴԱԿԱՆ, ած. *Որսորդին յատուկ:*
ՈՐՍՈՐԴԱՊԵՏ, գ. *Գլխաւոր որսորդ:*
ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. *Զէնքով կմ այլ գործիքներով որսալը:*
ՈՐՐԱՆ, գ. *Օրորան, օրօրոց:*

**ՈՐՑԵԼ**, բ. *Վեր հանել:*

**ՈՐՔԱՆ**, ած. *Քանակ՝ չափ արտայայտող յարաբերական բառ: Որչափ, ինչքան:*

**ՈՐՔԱՆԱԲԱՐ**, մկ. *Որքանով որ:*

**ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Որքան լինելը:*

**ՈՒ**, շղկ. *Կապում է իրար հետ սերտ առնչութիւն ունեցող երկու բառ կմ նախադասութիւն:*

**ՈՒԱՏՏ**, գ. (Ֆիզ.) *Ելեկտրական ոյժի միաւոր:*

**ՈՒԶԱՆ**, ած. *Միշտ ուզող:*

**ՈՒԶԵԱՆ**, ած. գ. *Մէկին ուզող:*

**ՈՒԶԵԼ**, **ՈՒԶԵՆԱԼ** } բ. *Փնտռել, պտրտել: Ամուսնութեան խնդրել: Սիրել:*

**ՈՒԶԸՆԿԱՅ**, գ. *Աղջիկ ուզելու համար նրա հօր մօտ խնամախօսութեան գնալը:*

**ՈՒԶԸՆԿԱՆ**, գ. *Աղջիկ ուզող տղան:*

**ՈՒԶՈՂ**, ած. գ. *Ողորմութիւն խնդրող, մուրացկան:*

**ՈՒԶՈՒՈՐ**, Տ. *Ուզող:*

**ՈՒԹ**, ած. *Եօթը՝ վրան աւելացրած մէկ:* գ. *Ութ միաւոր պարունակող քանակութիւն:*

**ՈՒԹԱԹԵՐԹ**, ած. *Ութ թերթիկ ունեցող:*

**ՈՒԹԱԾԱԼ**, ած. (*Տպար.) (Գիրք), որի տպագրական թերթը ծալուած է ութ թերթի եւ ունի 16 երես:*

**ՈՒԹԱԿՈՂՄ**, ած. *Ութ կողմ ունեցող:*

**ՈՒԹԱՂԵԱՅ**, **ՈՒԹԱՂԻ** } ած. *Ութ լար ունեցող:*

**ՈՒԹԱՄԵԱՅ**, ած. *Ութ տարեկան:*

**ՈՒԹԱՄՍԵԱՅ**, ած. *Ութ ամսական:*

**ՈՒԹԱՆԻՍՏ**, ած. գ. (Երկրաչ.) *Հաստատուն մարմին, որ ութ երես կմ կողմ ունի:*

**ՈՒԹԱՆԿԻՒՆ**, ած. *Ութ անկիւն ունեցող:*

**ՈՒԹԱՆԿԻՒՆԻ**, գ. (Երկրաչ.) *Երկրաչափական ձեւ:*

**ՈՒԹԱՊԱՏԻԿ**, ած. մկ. *Ութ անգամ աւելի:*

**ՈՒԹԱՊԱՏԿԵԼ**, բ. *Ութ անգամ աւելացնել:*

**ՈՒԹԱՍԻՒՆ**, ած. *Ութ սիւն ունեցող:*

**ՈՒԹԵՐՈՐԴ**, ած. *Եօթից յետոյ եկող:*

**ՈՒԹԵՐՈՐԴԵՑԻ**, ած. գ. *Ութերորդ դասարանի աշակերտ:*

**ՈՒԹԹԵՒԵԱՆ**, ած. (Կրօն.) *Ութ թեւ ունեցող:*

**ՈՒԹԺԱՄԵԱՅ**, ած. *Ութ ժամ տեւող:*

**ՈՒԹԻԳԱՅ**, ած. (Բուս.) *Ութ իգայ կմ վարսանգ ունեցող:*

**ՈՒԹԻԶԵԱՆ**, ած. *Որի մի երեսի վրայ ութ էջ կայ:*

**ՈՒԹՆԵԱԿ**, գ. *Մի ամբողջութիւն՝ բաղկացած ութ հատից:* (Երաժ.) *Ձայնի աստիճան:*

**ՈՒԹՆՈՑ**, ած. գ. *Ութ միութիւն պարունակող:*

**ՈՒԹՈՏԱՆԻ**, ած. *Ութ ոտք ունեցող:*

**ՈՒԹՈՏՆԵԱՆ**, ած. *Ութ ոտք ունեցող, ութ վանկանի:*

**ՈՒԹՈՐՁԵԱՅ**, ած. (Բուս.) *Ութ որձայ՝ ութ փոշանօթ ունեցող:*

**ՈՒԹՍՈՒՆ**, ած. *Տասն անգամ ութ:*

**ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ**, ած. *Ամէն մէկին ութսուն: Ութսունից մինչեւ իննսուն տարեթուերի մէջ եղած:*

**ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿ**, գ. *Ութսուն տարուայ շրջան:*

**ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱՅ**, ած. *Ութսուն տարեկան:*

**ՈՒԹՍՈՒՆ(Ա)ՆՈՑ**, ած. *Ութսուն միութիւն, միաւոր պարունակող:*

**ՈՒԹՍՈՒՆԱՊԱՏԻԿ**, մկ. *Ութսուն անգամ աւելի:*

**ՈՒԹՍՈՒՆԱՒՈՐ**, ած. *Ութսուն միաւորից բաղկացած:*

**ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ**, ած. *Եօթանասուն եւ իննին յաջորդող, եօթանասուն եւ իննից յետոյ եկող:*

**ՈՒԹՕՐԵԱՅ**, ած. *Ութ օրական։*
**ՈՒԹՕՐԷՔ**, գ. (Եկեղ.) *Ծննդեան տօնին յաջորդող ութ օրը։*
**ՈՒԹՕՐԷՆՔ**, գ. (Եկեղ.) *Ութերորդ օրը զատկի՝ ծննդի։* (Եկեղ.) *Մասնաւորապէս՝ կրօնական արարողութիւն, օրէնք, որ կատարում են ննջեցեալի վրայ նրա թաղման ութերորդ օրը։*
**ՈՒԺ**, Տ. *Ոյժ՚ի տակ։*
**ՈՒԺԱԲԱՆԱԿԱՆ**, Տ. *Ոյժի արտադրութեան գիտութեան վերաբերեալ։*
**ՈՒԺԱԲԵԿ**, ած. *Ոյժը բեկուած։ Ուժասպառ։*
**ՈՒԺԱԲԵԿԵԼ**, բ. *Ուժաբեկ անել։*
**ՈՒԺԱԲԵԿՈՒԹԻՒՆ**, *Ուժաբեկ լինելը։*
**ՈՒԺԱԹԱՓ**, ած. *Կենսական ոյժերը թուլացած, տկարացած։*
**ՈՒԺԱԹԱՓԵԼ**, բ. *Ուժաթափ անել։*
**ՈՒԺԱԹԱՓՈՒԹԻՒՆ**, գ. *Ուժաթափ լինելը։*
**ՈՒԺԱՀԱՏ**, Տ. *Ուժասպառ։*
**ՈՒԺԱՅԻՆ**, Տ. *Ոյժի վերաբերեալ։։*
**ՈՒԺԱՆԱԿ**, Տ. *Պայթուցիկ։*
**ՈՒԺԱՍՊԱՌ**, ած. *Ուժերն սպառուած։*
**ՈՒԺԱՍՊԱՌԵԼ**, բ. *Ուժասպառ անել։*
**ՈՒԺԱՍՊԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Ուժասպառ լինելը։*
**ՈՒԺԱՒՈՐ**, ած. *Շատ ուժեղ, հսկայական։*
**ՈՒԺԱՔԱՄՈՒԵԼ**, բ. *Ուժերից քամուել՝ սպառել։*
**ՈՒԺԳԻՆ**, ած. *Շատ ուժեղ։*
**ՈՒԺԳՆԱԲԱՐԲԱՌ**, Տ. *Ուժգնաձայն։*
**ՈՒԺԳՆԱՁԱՅՆ**, ած. մկ. *Ուժեղ՝ սաստիկ ձայն ունեցող։*
**ՈՒԺԳՆԱՊԷՍ**, մկ. *Ուժգին կերպով։*
**ՈՒԺԳՆԱՊԻՐԿ**, ած. *Ուժեղ կերպով պրկուած։*
**ՈՒԺԳՆԱՍԻՐՏ**, ած. *Սիրտը պինդ։*
**ՈՒԺԳՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոյժ, զօրութիւն։ Սաստկութիւն։*
**ՈՒԺԳՆՕՐԷՆ**, մկ. *Սաստիկ թափով։*
**ՈՒԺԵԼ**, բ. *Ոյժ ունենալ դիմադրելու։*
**ՈՒԺԵՂ**, ած. *Ֆիզիկական ոյժ ունեցող։ Ազդեցիկ, կարող։ Բուռն, սաստիկ։*
**ՈՒԺԵՂԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Ուժեղ՚ի, Աւելի ուժեղ։*
**ՈՒԺԵՂԱՆԱԼ**, բ. *Ուժեղ դառնալ. Հզօրանալ, Սաստկանալ։*
**ՈՒԺԵՂԱՊԷՍ**, մկ. *Ուժեղ կերպով։*
**ՈՒԺԵՂՆԱԿԱՆ**, ած. *Ուժեղի եւ ոյժի վերաբերեալ։*
**ՈՒԺԵՂՈՒԹԻՒՆ**, գ. *Ուժեղ լինելը։*
**ՈՒԺՈՎ**, ած. *Ոյժ ունեցող։*
**ՈՒԺՈՎ(Ա)ՆԱԼ**, բ. *Ուժով դառնալ։ Զօրանալ։*
**ՈՒԺՈՎՈՒԹԻՒՆ**, գ. *Ուժով լինելը։*
**ՈՒԼ**, գ. *Այծի ձագ, արու կմ էգ։*
**ՈՒԼԱԿԱՆՋ**, գ. (Կենդ.) *Երկղնդեր խեցեմորթների կարգին պատկանող խեցեմորթ։*
**ՈՒԼԱՏԵԼ**, բ. *Ուլը վիժել՝ ձգել։*
**ՈՒԼԱՏՈՒՆ**, գ. *Ուլերը պատսպարելու տեղ, փարախ։*
**ՈՒԼԱՐԱԾ**, գ. *Ուլերը արածեցնող։*
**ՈՒԼԵՆԻ**, ած. գ. *Ուլի մորթ։*
**ՈՒԼԻԿ**, գ. *Փոքր ուլ։*
**ՈՒԼԻՃ**, ած. գ. *Փոքրիկ չարճճի (աղջիկ)։*
**ՈՒԼԽԱՂ**, գ. *Ուլի նման խաղ։*
**ՈՒԼԿՈՒՄԻԼ**, գ. *Սալորի նման անուշահամ պտուղ։*
**ՈՒԼՆ**, գ. *Վիզ։*
**ՈՒԼՆ**, Տ. *Ուլունք։*
**ՈՒԼՆԱԳԵԼ**, ած. *Վիզը գելուած։ Ձղաձգուած։*
**ՈՒԼՆԱԳԵԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ուլնագել՝ ծուռ ճիտ լինելը։*
**ՈՒԼՆԱԽԱՂԱՑ**, ած. *Վէզ խաղացող։*
**ՈՒԼՆԱՓՈՂ**, գ. *Պարանոցի փողը։*
**ՈՒԼՈՒ**, գ. *Գեղձ։*
**ՈՒԼՈՒԼԻԿ-ՃՈՒԼՈՒԼԻԿ**, ած. *Փոքրիկ եւ սիրուն, քնքուշիկ։ Ճարպիկ։*
**ՈՒԼՈՒԼՈՅ**, գ. *Վայնասուն։*
**ՈՒԼՈՒՆՔ**, գ. *Ապակիէ գնդաձեւ զարդ։։*

**ՈՒԼՈՒՆՔԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ուլունքներ եւ ուլունքներով տարբեր զարդեր պատրաստելու արուեստը:*

**ՈՒԽԱ՛Յ**, Տ. *Օխա՛յ:*

**ՈՒԽՉԱՐ**, գ. *Մթնոլորտային օդ:*

**ՈՒԽՏ**, գ. *Հաստատուն խօսք, խոստում:* (Կրօն.) *Խոստում, որով մարդկանց մի խումբ պարտաւորուում է հաւաքաբար նուիրուել մի բարեպաշտական գործի: Դաշինք:* (Կրօն.) *Խնդրուածք, աղօթք աստծուն:* (Եկեղ.) *Վանք, մենաստան, որտեղ ապրում են միասին ուխտ՝ երդում դնողները:* (Կրօն.) *Որոշ սրբի տօն: Հրովարտակ:*

**ՈՒԽՏԱԲԱՐ**, մկ. *Ուխտով, ուխտ դնելով:*

**ՈՒԽՏԱԳՆԱՑ**, ած. գ. (Կրօն.) *Ուխտի գնացող:*

**ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Ուխտ գնալը:*

**ՈՒԽՏԱԴՐԵԼ**, բ. *Ուխտ դնել:*

**ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուխտ՝ դաշն դնելը:*

**ՈՒԽՏԱԴՐՈՒԺ**, ած. *Իր ուխտը դրժող՝ դաւաճանող: Խոստումնադրուժ:*

**ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹԻՒՆ**, գ. *Ուխտադրուժ լինելը:*

**ՈՒԽՏԱԴՐԺՕՐԷՆ**, մկ. *Ուխտը դրժելով:*

**ՈՒԽՏԱԶԱՆՑ**, Տ. *Ուխտադրուժ:*

**ՈՒԽՏԱԿԱՆ**, ած. գ. *Ուխտադիր:*

**ՈՒԽՏԱԿԻՑ**, գ. *Մէկի հետ ուխտով կապուած:*

**ՈՒԽՏԱՆԵՆԳ**, Տ. *Ուխտադրուժ:*

**ՈՒԽՏԱՆՈՐՈԳ**, ած. *Ուխտը նորոգած:*

**ՈՒԽՏԱՊԱՀ**, ած. գ. *Ուխտը պահող:*

**ՈՒԽՏԱՊԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Ուխտապահ լինելը:*

**ՈՒԽՏԱՎԱՅՐ**, գ. *Սրբավայր:*

**ՈՒԽՏԱՏԵՂԻ**, գ. (Կրօն.) *Ուխտի տեղ, տաճար, սրբի վկայարան:*

**ՈՒԽՏԱՐԱՆ**, գ. *Որտեղ ուխտը պահւում է:*

**ՈՒԽՏԱՒՈՐ**, ած. գ. (Կրօն.) *Նա որ ուխտ է դրել:*

**ՈՒԽՏԱՒՈՐԱԲԱՐ**, բ. *Ուխտաւորի նման:*

**ՈՒԽՏԱՒՈՐԱԿԱՆ**, Տ. *Ուխտաւոր:*

**ՈՒԽՏԱՒՈՐԵԼ**, բ. (Կրօն.) *Ուխտաւոր դառնալ:*

**ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Ուխտաւոր լինելը:*

**ՈՒԽՏԵԱԼ**, ած. (Կրօն.) *Ուխտած, ուխտ դրած:*

**ՈՒԽՏԵԼ**, բ. *Ուխտ՝ դաշինք դնել: Հաստատուն խօսք տալ: Երդուիլ:*

**ՈՒԽՏԸՆԿԱԼ**, Տ. *Ուխտակալ:*

**ՈՒԾԱԿԵՐ**, ած. *Սառը բան ուտող:*

**ՈՒԾԱԿԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուծակեր լինելը:*

**ՈՒԾԱՑՈՒՄ**, գ. *Ուծանելը, սառչելը:*

**ՈՒԾԻ**, ած. *Սառը:*

**ՈՒԾՐԵԼ**, բ. *Ցորենի թեփը հանել:*

**ՈՒԿՐԱԻՆԱՀԱՅ**, գ. *Ուկրաինայում բնակուող հայ:*

**ՈՒԿՐԱԻՆԱՑԻ**, ած․ գ. *Ուկրաինա հանրապետութեան քաղաքացի:*

**Ո՛ՒՀ**, միջ. *Ձայնարկութիւն դժկամութեան, ցաւի, տհաճութեան:*

**ՈՒՀԻ**, *Իգականացուցիչ վերջադիր մասնիկ:*

**ՈՒՂԱՐԿ**, գ. *Ուղարկելը:*

**ՈՒՂԱՐԿԱԳԻՐ**, գ. *Գիր, փաստաթուղթ, որի մէջ նշանակում են ուղարկուած իրը, քանակը եւն:*

**ՈՒՂԱՐԿԵԼ**, բ. *Մէկին մի տեղից ուրիշ տեղ գնալ տալ, դրկել, առաքել:*

**ՈՒՂԵԲԱԺԱՆՔ**, գ. *Ուղու բաժանուելու տեղ:*

**ՈՒՂԵԲԱՑԻՉ**, ած․ *Ուղին բացող:*

**ՈՒՂԵԳԻԾ**, գ. *Ճանապարհի գիծը:*

**ՈՒՂԵԳԻՐ**, գ. *Օրագիր, որի մէջ ուղեւորն ամէն օր արձանագրում է տեղեկութիւններ այդ օրն անցած տեղերի: Թուղթ, որ տալիս են հիմնարկները*

*բանուորներին եւ ծառայողներին, որով նրանք իրաւունք են ձեռք բերում բուժարանում ստանալու բուժում:*

**ՈՒՂԵԳՐԱԿԱՆ**, ած. *Ուղեգրութիւն պարունակող:*

**ՈՒՂԵԳՐԵԼ**, բ. *Ուղեգրով ուղարկվել:*

**ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղիի՝ ուղեւորութեան նկարագրութիւն:*

**ՈՒՂԵԳՐՈՒՄ**, գ. *Ուղեգրով ուղարկուել հետազօտման եւ այլ նպատակներով:*

**ՈՒՂԵԴԱՐՁ**, գ. *Ճանապարհորդութիւնից յետ դառնալը, վերադարձ:*

**ՈՒՂԵԿԱԼ**, գ. *Խճուղիների վրայ՝ լայնքին դրուած գերան, որով կապում են ճանապարհը կառքերի առաջ:*

**ՈՒՂԵԿԱՌՔ**, գ. *Ճանապարհորդութեան կառք:*

**ՈՒՂԵԿԻՑ**, ած. գ. *Ուղիի՝ ճանապարհի ընկեր:*

**ՈՒՂԵԿԻՑՔ**, գ. *Այն տեղը, որտեղ երկու ճանապարհ խաչուում են:*

**ՈՒՂԵԿՈՐՈՅՍ**, ած. *Ուղին, ճանապարհը կորցրած:*

**ՈՒՂԵԿՑԵԼ**, բ. *Ուղեկից լինել:*

**ՈՒՂԵԿՑՈՐԴ**, գ. *Մի կամ մի քանի զինուոր, որոնք ուղեկցում են կալանաւորին:*

**ՈՒՂԵԿՑՈՐԴՈՒՀԻ**, գ. *Կին ուղեկցող:*

**ՈՒՂԵԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղեկից լինելը:*

**ՈՒՂԵԿՑՈՒՀԻ**, գ. *Ուղեկից իգական սեռի:*

**ՈՒՂԵԿՑՈՒՐԴ**, *Ուղեկցող զինուած պահակախումբ:*

**ՈՒՂԵՀԱՐԹԻՉ**, *Կցորդուող կամ ինքնագնաց ճանապարհաշինարարական սարած՝ սարք:*

**ՈՒՂԵՂ**, գ. *Նեարդային նիւթ, սպիտակ եւ գորշ գոյնի, որ ամփոփուած է մարդու եւ ողնաշարաւոր կենդանիների գանգում:* Փոխ. *Մտաւոր կարողութիւն:*

**ՈՒՂԵՂԱԼՈՒԱՑՈՒՄ**, գ. *Նպատակադիր ձեւով մարդկանց համակել որեւէ գաղափարով:*

**ՈՒՂԵՂԱՅԻՆ**, ած. *Ուղեղին յատուկ, վերաբերեալ:*

**ՈՒՂԵՂԱՏԱՊ**, գ. *Ուղեղի տապ, ուղեղի բորբոքում:*

**ՈՒՂԵՆՇԵԼ**, բ. *Ուղին նշել:*

**ՈՒՂԵՆՇՈՒՄ**, գ. *Ուղու նշելը:*

**ՈՒՂԵՉԱՓ**, գ. *Ժամացոյցի նման գործիք, որ չափում է ոտքով գնացող մարդու կմ կառքի անցած ճանապարհը:*

**ՈՒՂԵՊԱՀԱԿԵՏ**, գ. *Ուղու վրա պահակակետ:*

**ՈՒՂԵՊԱՆ**, գ. *Բանուոր, որ մաքրում եւ բարեկարգ վիճակի մէջ է պահում հասարակական ճանապարհները:*

**ՈՒՂԵՍԱՅԼ**, գ. *Ճանապարհասայլ:*

**ՈՒՂԵՎԱՐ**, գ. *Ուղին վարողը, գնալը՝ քայլելը վարողը՝ ղեկավարողը:*

**ՈՒՂԵՎԱՐՈՒՄ**, *Գործունեութիւն ըստ ուղեվարութեան: Ուղեվարելը:*

**ՈՒՂԵՏՈՄՍ**, գ. *Տոմս, որ գնում են նշանակուած կարգի փոխադրամիջոցով ուղեւորուելու:*

**ՈՒՂԵՐՁ**, գ. *Նուէր, որ հեռաւոր ճանապարհից եկողը բերում է բարեկամներին: Գրաւոր դիմում մի կազմակերպութեան կմ մի խմբի կողմից մէկին, որով շնորհաւորում են նրան:*

**ՈՒՂԵՐՁԵԼ**, բ. *Ընծայաբեր լինել:*

**ՈՒՂԵՑՈՅՑ**, ած. գ. *Ճանապարհը ցոյց տուող: Ուղեգիրք:*

**ՈՒՂԵՑՈՒՑՈՐԴ**, գ. *Ուղին ցոյց տուող:*

**ՈՒՂԵՒՈՐ**, ած. գ. *Ճանապարհի գնացող:*

**ՈՒՂԵՒՈՐԱԿԱՄՐՋԱԿ**, գ. *Ուղեւորների համար կամրջակ:*

**ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ**, ած. *Ուղեւորին յատուկ:*

**ՈՒՂԵՒՈՐԱՄԱՆԴՈՒՂՔ**, գ. *Մանդուղք ուղեւորների համար:*

**ՈՒՂԵՒՈՐԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ**, գ. *Ուղեւորների սպասարկում:*

**ՈՒՂԵՒՈՐԱՓՈԽԱԴՐԵԼ**, բ. *Ուղեւոր-*

*ներ փոխադրել:*

**ՈՒՂԵՒՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ**, գ. *Ուղեւորներ փոխադրող:*

**ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Իբրեւ ուղեւոր մի տեղ գնալը:*

**ՈՒՂԵՒՈՐՈՒՀԻ**, ած. գ. *Ուղեւոր իգական սեռի:*

**ՈՒՂԵՒՈՐՈՒՄ**, գ. *Ուղեւորուելը, ճանապարհ ընկնելը:*

**ՈՒՂԵՒՈՐՈՒԵԼ**, բ. *Ճանապարհ ընկնել:*

**ՈՒՂԵՓԱԿՈՑ**, գ. *Ճանապարհի վրայի փակոց:*

**ՈՒՂԵՓՈԽԻՉ**, *Արհեստագիտական սարք:*

**ՈՒՂԵՔԱՐՏԵԶ**, գ. *Անցնելիք ուղու քարտեզ:*

**ՈՒՂԷՇ**, գ. *Ճիւղ, բարունակ:*

**ՈՒՂԻ**, գ. *Ճանապարհ: Երկաթուղու գիծը:*

**ՈՒՂԻՂ**, ած. մկ. *Ինչ որ չի շեղւում այս կմ այն կողմը: Հարթ:* Հկր. *Խորտուբորտ, դարուփոս: Կանոնաւոր:* Հկր. *Թարս՝ շրջոնք:* Փոխ. *Անսխալ:* Հկր. *Սխալ: Ճըշմարիտ: Բուն, իսկական:* մկ. *Իսկ եւ իսկ, բոլորովին: Ճիշտ, ուղղակի:*

**ՈՒՂԻՇԱԲԵՐՁ**, ած. *Բարձր ուղէշներով:*

**ՈՒՂԽ**, գ. *Հոսող ջուր, գետ, առու եւն:*

**ՈՒՂԽԱՋՈՒՐ**, ած. *Հոսող ջրով ոռոգուող:*

**ՈՒՂԽԱՒՈՐ**, ած. *Ջրանցք ունեցող:*

**ՈՒՂԽԻՆԱՀՈՍ**, ած. *Առատօրէն հոսող, յորդ:*

**ՈՒՂԽՕՐԷՆ**, մկ. *Ուղխի պէս:*

**ՈՒՂՂ**, Տ. *Ուղեղ, Ծուծ:*

**ՈՒՂՂԱԲԱՆ**, Տ. *Ուղղախօս:*

**ՈՒՂՂԱԲԱՐ**, մկ. *Ուղիղ կերպով:*

**ՈՒՂՂԱԲԱՐՈՅ**, ած. *Ուղիղ բարք ունեցող:*

**ՈՒՂՂԱԳԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղեղային հիւանդութիւն:*

**ՈՒՂՂԱԳԻԾ**, ած. *Ուղիղ գիծ ունեցող:*

**ՈՒՂՂԱԳՆԱՑ**, ած. *Նա որ գնում է՝ իրանը եւ գլուխը ուղիղ բռնած:*

**ՈՒՂՂԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղագնաց լինելը:*

**ՈՒՂՂԱԳՈՐԾ**, ած. *Ուղիղ՝ արդար բան անող:*

**ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ**, ած. *Ուղղագրութեան յատուկ:*

**ՈՒՂՂԱԳՐԵԼ**, բ. *Տառասխալներն ուղղել:*

**ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղիղ գրելը: Մի լեզուի մէջ բառերի գրութեան համակարգ:*

**ՈՒՂՂԱԴԱՒԱՆ**, (Կրօն.), Տ. *Ուղղահաւատ:*

**ՈՒՂՂԱԴԱՏ**, ած. *Ուղիղ՝ ճշմարիտ դատող:*

**ՈՒՂՂԱԴԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղադատ լինելը:*

**ՈՒՂՂԱԴԱՒԱՆ**, ած. *Ուղղափառ:*

**ՈՒՂՂԱԴԻՐ**, ած. *Ուղիղ կերպով դըրուած:*

**ՈՒՂՂԱԹԵՒ**, ած. *Ուղիղ թեւեր ունեցող:*

**ՈՒՂՂԱԹԵՔ**, ած. *Ուղիղ թեքուած՝ դէպի մի կողմ հակուած:*

**ՈՒՂՂԱԽՈՀ**, ած. *Ուղիղ մտածող, առողջ դատողութեան տէր:*

**ՈՒՂՂԱԽՈՀՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղախոհ լինելը:*

**ՈՒՂՂԱԽՕՍ**, ած. *Ուղիղը խօսող:*

**ՈՒՂՂԱԽՕՍԱԿԱՆ**, ած. *Ուղղախօսին եւ ուղղախօսութեան յատուկ:*

**ՈՒՂՂԱԽՕՍԵԼ**, բ. *Ուղիղ խօսել:*

**ՈՒՂՂԱԽՕՍՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղիղ՝ կանոնաւոր խօսելը:*

**ՈՒՂՂԱԾՈՒԾ**, ած. *Ուղեղը ծծուած՝ դուրս հանած:*

**ՈՒՂՂԱԿԱՆ**, ած. *Ուղիղ, ճշմարիտ:* (Քրկն.) *Հոլովող բառերի սկզբնական ձեւը:* Հկր. *Թեք:*

**ՈՒՂՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, Տ. *Ուղղութիւն:*

**ՈՒՂՂԱԿԱՐԾ**, ած. *Ուղիղ կարծուած:*

**ՈՒՂՂԱԿԵՐՊ**, ած. *Ուղիղ կերպ:*

**ՈՒՂՂԱԿԻ**, մկ. *Ուղիղ կերպով, ճշմարտապէս: Անմիջապէս:* ած. *Անմիջական:* (Հկռ.) *Անուղղակի հարկ:*

**ՈՒՂՂԱԿՇԻՌ**, ած. *Ուղիղ կշռող:*

**ՈՒՂՂԱԿՏՈՒՐ**, ած. *Ուղիղ կտրուած:*

**ՈՒՂՂԱԿՏՈՒՑ**, ած. *Որի կտուցն ուղիղ է:*

**ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ**, ած. մկ. *Ուղիղ մի բանի նայող:* (Երկրաչ.) *Ուղիղ գիծ:*

**ՈՒՂՂԱՀԱՅԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղահայեաց լինելը:*

**ՈՒՂՂԱՀԱՒԱՏ**, ած. (Կրօն.) *Ուղիղ՝ ճշմարիտ հաւատք ունեցող:*

**ՈՒՂՂԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Ուղղահաւատ լինելը:*

**ՈՒՂՂԱՁԵՒԵԼ**, բ. *Ուղիղ ձեւել:*

**ՈՒՂՂԱՁԻԳ**, ած. *Ուղիղ գծով ձգող՝ քաշող:*

**ՈՒՂՂԱՄԷՋՔ**, ած. *Ուղիղ մէջք ունեցող:*

**ՈՒՂՂԱՄԻՏ**, ած. *Միտքը՝ մտածողութիւնն ուղիղ:* Հկռ. *Խորամանկ:*

**ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղամիտ լինելը:*

**ՈՒՂՂԱՆԿԻՒՆ**, ած. *Որի անկիւններն ուղիղ են: Եռանկիւնի:*

**ՈՒՂՂԱՆԿԻՒՆԱՁԻԳ**, Տ. *Ձեւայ:*

**ՈՒՂՂԱՆԿԻՒՆԻ**, գ. (Երկրաչ.) *Երկրաչափական ձեւ, որի բոլոր անկիւններն ուղիղ են:*

**ՈՒՂՂԱՇԱՐԺ**, ած. *Ուղիղ շարժուող կմ շարժուած:*

**ՈՒՂՂԱՇԱՒԻՂ**, ած. *Նա որ ճանապարհը գնում է ուղիղ, առանց տատանուելու, ուղիղ քայլուածք ունեցող:*

**ՈՒՂՂԱՇՆՉՈՒԹԻՒՆ**, գ. (Ախտաբ.) *Հիւանդութիւն, որի ժամանակ մարդը չի կարող պառկած դրութեամբ շունչ քաշել:*

**ՈՒՂՂԱՊԱՏՈՒՄ**, Տ. *Ճշմարտապատում:*

**ՈՒՂՂԱՊԷՍ**, մկ. *Ուղիղ կերպով:*

**ՈՒՂՂԱՍԻՐՏ**, Տ. *Ուղղամիտ:*

**ՈՒՂՂԱՏԵՍ**, ած. *Ուղիղ տեսնող:*

**ՈՒՂՂԱՏԵՍՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղիղ տեսնելը:*

**ՈՒՂՂԱՒՈՐԻՉ**, ած. գ. *Ուղղութիւն տուող:*

**ՈՒՂՂԱՓԱՌ**, ած. (Կրօն.) *Համաձայն այն կրօնական կարծիքին, որ ճանաչուած է իբրեւ ուղիղ:*

**ՈՒՂՂԱՓԱՌԱԳՈՅՆ**, (Կրօն.) բաղդ. աստ. *Ուղղափառ'ի, Աւելի ուղղափառ:*

**ՈՒՂՂԱՓԱՌԱՊԷՍ**, մկ. (Կրօն.) *Իբրեւ ուղղափառ:*

**ՈՒՂՂԱՓԱՌԱՀԱՒԱՏ**, ած. (Կրօն.) *Ուղղափառ հաւատ ունեցող:*

**ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Ուղղափառ լինելը:*

**ՈՒՂՂԱՔՆԻՒՆ**, ած. *Ուղիղ քննող:*

**ՈՒՂՂԵԼ**, բ. *Ուղիղ դիրք տալ, շտկել: Կարգի բերել: Բարւոքել: Ուղղութիւն տալ: Աղաւաղուած բառերի ուղիղ ընթերցուածքը վերականգնել:* (Տպար.) *Շարուածքը սրբագրել:*

**ՈՒՂՂԵԼԻ**, ած. *Ինչ որ պէտք է կմ կարելի է ուղղել:*

**ՈՒՂՂԸՆԹԱՑ**, ած. *Ուղիղ ընթացք ունեցող:*

**ՈՒՂՂԸՆԹԱՑԱԿԱՆ**, ած. *Ուղիղ ընթանալու գիծը:*

**ՈՒՂՂԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Նաւի ընթացքը չորս գլխաւոր կողմերից մէկի ուղղութեամբ:*

**ՈՒՂՂԻՉ**, ած. գ. *Նա որ ուղղում է, ուղղող:*

**ՈՒՂՂՈՐԴ**, ած. *Ուղիղ կանգնած, ուղիղ:* մկ. *Ուղիղ կերպով:*

**ՈՒՂՂՈՐԴԱԲԱՆ**, Տ. *Ուղղախօս:*

**ՈՒՂՂՈՐՈՇԻՉ**, *Սարք, որը նախանշանակուած է առարկայի անկիւնային ուղղութեան որոշման համար:*

**ՈՒՂՂՈՒԹԱՇԵՂՈՒՄ**, գ. *Ուղղութիւնը*

*շեղելը։*

**ՈՒՂՂՈՒԹԱՒՈՐՈՒՄ**, գ. *Ուղղութիւն տալը։*

**ՈՒՂՂՈՒԹԱՑՈՅՑ**, գ. *Ուղղութիւնը ցոյց տուող սարք։*

**ՈՒՂՂՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղիղ լինելը։ Ուղիղ գործ։ Շարժման ուղղուածութիւն։*

**ՈՒՂՂՈՒՄ**, գ. *Ուղղելը, սխալը շտկելը։*

**ՈՒՂՂՈՒՅԹ**, *Շարժվող սարքիշարժման ուղղութիւնը։*

**ՈՒՂՈՒՆԿ**, գ. *Անորոշ տեսակի բոյս։*

**ՈՒՂՏ**, գ. (Կենդ.) *Սապատաւոր դարաամբակ որոճողների կարգին պատկանող խոշոր կենդանի։*

**ՈՒՂՏԱԲԱՐՈՅ**, ած. *Ուղտի բարք՝ բնաւորութիւն ունեցող։*

**ՈՒՂՏԱԲԵՌ**, գ. *Ուղտի բեռ։*

**ՈՒՂՏԱՆ-ԲԱԲԱՇ**, (Մանկ.), գ. *Ուղտ։*

**ՈՒՂՏԱՄԷՋ**, ած. *Ուղտի մէջքի նման։*

**ՈՒՂՏԱՊԱՆ**, գ. *Ուղտ պահող, ուղտով բեռ փոխադրող։*

**ՈՒՂՏԱՍԻՐՏ**, ած. *Ուղտի սիրտ ունեցող։*

**ՈՒՂՏԱՓՈՒՇ**, Տ. *Տատասկափուշ։*

**ՈՒՂՏԱՔԱՂ**, գ. *Երեւակայական կենդանի, մասամբ ուղտ։*

**ՈՒՂՓ**, գ. *Լոյս, արփի։*

**ՈՒՄԵԿ**, գ. *Յոյս։*

**ՈՒՄԵԿԱՒՈՐ**, ած. *Յուսալի։*

**ՈՒՄԻ**, ած. *Միամիտ։*

**ՈՒՄՊ**, գ. *Խմելը։*

**ՈՒՄՊԷՏ**, ած. *Անշահ, անպէտ։*

**ՈՒՆԱԲ**, Տ. *Յունապ, Յունապի։*

**ՈՒՆԱԿ**, ած. *Ունեցող։ Կարող։*

**ՈՒՆԱԿԱԲԱՐ**, մկ. *Ունակութեամբ, ունակութիւն դարձնելով։*

**ՈՒՆԱԿԱԿԱՆ**, ած. *Ունակութիւն դարձած։*

**ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Ունենալը, ունողութիւն։ Մնայուն յատկութիւն, ձիրք։*

**ՈՒՆԱՅՆ**, ած. *Մէջը դատարկ, պարապ, Անհիմն,* մկ. *Ընդունայն։*

**ՈՒՆԱՅՆԱԲԱՆ**, ած. *Ընդունայնախօս։*

**ՈՒՆԱՅՆԱԲԱՆԵԼ**, բ. *Շաղակրատել։*

**ՈՒՆԱՅՆԱԲԱՐ**, մկ. *Ի զուր։*

**ՈՒՆԱՅՆԱԽՈՐՀ**, ած. *Փուչ՝ դատարկ բաներ մտածող։*

**ՈՒՆԱՅՆԱԽՕՅՁ**, ած. *Փուչ բաներ փընտռող։*

**ՈՒՆԱՅՆԱՀԱՆԴԵՐՁ**, ած. *Հանդերձներից թափուր։*

**ՈՒՆԱՅՆԱՁԱՅՆ**, ած. *Դատարկ հնչիւն պարունակող։*

**ՈՒՆԱՅՆԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. *Դատարկաբանութիւն։*

**ՈՒՆԱՅՆԱՁԵՌՆ**, ած. մկ. *Ձեռքը դատարկ։*

**ՈՒՆԱՅՆԱՄԻՏ**, ած. *Ունայնախոհ. դատարկամիտ։*

**ՈՒՆԱՅՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ**, գ. *Չափազանց ունայնասիրութիւն։*

**ՈՒՆԱՅՆԱՆԱԼ**, բ. *Դատարկուել, թափուր մնալ։*

**ՈՒՆԱՅՆԱՇՈՒՆՉ**, ած. *Դատարկ։*

**ՈՒՆԱՅՆԱՊԱՐԾ**, ած. *Սնապարծ։*

**ՈՒՆԱՅՆԱՍԷՐ**, ած. *Ունայնութիւն սիրող։*

**ՈՒՆԱՅՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ունայնասէր լինելը։*

**ՈՒՆԱՅՆԱՎԱՐ**, ած. *Աւելորդ։*

**ՈՒՆԱՅՆԱՏՈՒՐ**, ած. *Զուր տեղը տըրուած։*

**ՈՒՆԱՅՆԱՓԱՌ**, Տ. *Ունայնակրօն։*

**ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ունայն՝ դատարկ։ Դատարկութիւն։*

**ՈՒՆԱՅՆՈՒՄ**, գ. *Ունայն բաներով զբաղուելը։*

**ՈՒՆԳ, ՈՒՆԿ**, գ. *Մանրուք։*

**ՈՒՆԴ**, գ. *Հունտ։*

**ՈՒՆԴԱԿԵՐ**, Տ. *Ընդակեր։*

**ՈՒՆԵԼԻ**, ած. գ. *Նա որ ունի, ունեցող։*

**ՈՒՆԵԼԻՔ**, գ. *Երկաթէ բռնելու գործիք։*

**ՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ունենալը։*

**ՈՒՆԵՆԱԼ**, բ. Սահմ. ներկան *(ունենում*

*եմ, ես, է, ենք, էք, են): Տէր դառնալ, ստանալ:*
**ՈՒՆԵՏԷՐ**, գ. *Կին ունեցող մարդ:*
**ՈՒՆԵՑԱԾ-ՉՈՒՆԵՑԱԾ**, ած. *Ինչ որ մէկը ունի-չունի:*
**ՈՒՆԵՒՈՐ**, ած. գ. *Ունեցող, գոյք՝ կարողութիւն ունեցող: Հարուստ:*
**ՈՒՆԵՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ունեւոր լինելը:*
**ՈՒՆԻՄ-ՉՈՒՆԻՄ**, բ. *Ինչ որ ունեմ:*
**ՈՒՆԻՏՈՐ**, (Լատին.) (Կրօն.) (լատ. unitor, *միարար*), գ. *Լատին կրօնաւոր միջին դարերում:*
**ՈՒՆԻՏՈՐԱԿԱՆ**, ած. Ունիտորին *յատուկ, վերաբերեալ:*
**ՈՒՆԿ**, գ. Նման. *Ամանների ականջ. կանթ, ոնկ:* Ունկ չունենալ, *Անվստահելի լինել:*
**ՈՒՆԿԱՆԱԲՈԹ**, գ. *Ականջի բլթակի ներքեւի կակուղ միսը:*
**ՈՒՆԿԻ**, գ. *Հռոմէական եւ յետոյ ընդհանրացած կշիռ:*
**ՈՒՆԿՆ**, Տ. *Ականջ:*
**ՈՒՆԿՆԱՒՈՐ**, ած. *Ունկ ունեցող:*
**ՈՒՆԿՆԴԻՐ**, ած. *Ականջ դնող:* (Եկեղ.) *Չմկրտուած: Նա որ բարձրագոյն դպրոցներում լսում է դասախօսութիւններ. ուսանող:*
**ՈՒՆԿՆԴՐԱՍԷՐ**, ած. *Նա որ սիրում է ունկնդրել:*
**ՈՒՆԿՆԴՐԵԼ**, բ. *Ականջ դնել՝ լսել մէկին:*
**ՈՒՆԿՆԴՐՈՑ**, գ. *Տեղ, որտեղից մէկը առանց տեսնուելու, թաքուն լսում է ուրիշների խօսակցութիւնները:*
**ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ականջ դնելը:*
**ՈՒՆԿՆԴՐՈՒՀԻ**, գ. *Ունկնդիր իգական սեռի:*
**ՈՒՆԿՆԵԼ**, բ. *Ունկ դնել կմ դնել տալ:*
**ՈՒՆՆ ՈՒ ԲՈՒՆԸ**, գ. *Բուն եղելութիւնը:*
**ՈՒՆՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Ունենալը:*
**ՈՒՆՉ**, գ. *Հոտառութեան գործարան: Քթի ներքեւի բացուածքը:*
**ՈՒՆՉԱՏ**, ած. *Ունչ՝ քիթ չունեցող, քիթը կտրած:*
**ՈՒՆՋ**, գ. *Ծխնելոյզների մէջ նստած մուր:*
**ՈՒՆՋԱԹԱԹԱԽ**, ած. *Ունջի՝ մուրի մէջ թաթախուած:*
**ՈՒՆՋԱԿԱԼԵԼ**, բ. *Մուր կապել, մուր բռնել:*
**ՈՒՆՋԱՋՈՒՐ**, գ. *Մրախառն ջուր:*
**ՈՒՆՋՈՏ**, ած. *Մրոտած:*
**ՈՒՆՋՈՏԵԼ**, բ. *Ունջով կեղտոտել:*
**ՈՒՆՏ**, գ. *Կոկորդի խոռոչ կմ կոկորդի մի մասը:*
**ՈՒՆՑ**, գ. *Ունցելը, հունցելը:*
**ՈՒՆՔ**, *գործ է ածուում բունք'ի հետ, Ունքն ու բունքը: Յօնք:*
**ՈՒՆՔԱԲԱՑՈՒԵԼ**, բ. *Պռստած յօնքերը բացուել:*
**ՈՒՆՔԱԽԱՌՆ**, ած. *Երկու յօնքը իրար խառնուած՝ միացած:*
**ՈՒՆՔԱԿԱՆ**, ած. *Յօնքերը կախած:*
**ՈՒՆՔԱԿԱԽԵԼ**, բ. *Յօնքերը կախել՝ կիտել:*
**ՈՒՆՔԱՄԷՋ**, գ. *Երկու յօնքի մէջտեղը:*
**ՈՒՆՔԾՌՈՒԹԻՒՆ**, գ. *Յօնքերը ծռելը:*
**ՈՒՇ**, գ. *Խելք, միտք: Մտադրութիւն, ուշադրութիւն:* Տ. *Ուշք:* ած. *Զգաստ, ուշքը վրան:*
**ՈՒՇ**, մկ. ած. *Սովորական կմ պայմանաւորուած ժամանակից յետոյ: Յապաղած:* Հկռ. *Յաճախ, շուտ-շուտ:*
**ՈՒՇԱԲԱՐՁ**, ած. *Ուշքը վերացնող:*
**ՈՒՇԱԲԱՐՁԵԱԼ**, ած. *Յիշողութիւնից դուրս եկած:*
**ՈՒՇԱԲԵՐ**, ած. *Ուշքը վրան բերող:*
**ՈՒՇԱԲԵՐԵԼ**, բ. *Միտքը բերել, յիշել:*
**ՈՒՇԱԳՆԱՑ**, Տ. *Ուշաթափ: Մարած:*
**ՈՒՇԱԳՐԱՒ**, ած. *Ուշադրութիւնը գրաւող:*
**ՈՒՇԱԳՐԱՒՕՐԷՆ**, բ. *Ուշագրաւ կերպով:*
**ՈՒՇԱԴԻՐ**, ած. *Ուշադրութեամբ մի*

*բանի հետեւող: Ուշադրութիւն արտայայտող:*

**ՈՒՇԱԴԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուշադիր լինելը:*

**ՈՒՇԱԴՐԵԼ**, բ. *Ուշադիր լինել:*

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեկան կարողութիւն՝ միտքը կմ արտաքին զգայարանքները լարելու՝ մի բան ըմբռնելու:*

**ՈՒՇԱԹԱՓ**, ած. մկ. *Ուշքը գնացած:*

**ՈՒՇԱԹԱՓՈՒԵԼ**, բ. *Ուշաթափ լինել:*

**ՈՒՇԱԹԱՓՈՒԹԻՒՆ**, գ. *Ուշքը գնալը:*

**ՈՒՇԱՄՈՌԱՑ**, ած. *Ուշքը կորցրած, ուշաթափ:*

**ՈՒՇԱՆԱԼ**, բ. *Ուշ գալ, նշանակուած ժամին չգալ:*

**ՈՒՇԱՏՈՒ**, ած. *Ուշքը մի բանի տուող:*

**ՈՒՇԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Ուշանալ՛ի,* նոյն նշ.:

**ՈՒՇԱՑՆՈՐ**, ած. մկ. *Ուշադրութիւնը ցրուած:*

**ՈՒՇԱՑՈՒՄ**, գ. *Ուշանալը:*

**ՈՒՇԵՂ**, ած. *Լաւ յիշողութեան տէր:*

**ՈՒՇԵՂԱՊԷՍ**, մկ. *Ուշեղութեամբ, ուշադրութեամբ:*

**ՈՒՇԻ**, գ. *Անորոշ տեսակի ծառ:*

**ՈՒՇԻՄ**, ած. *Նրբամիտ, բանիմաց: Խելացի:*

**ՈՒՇԻՄՈՒԹԻՒՆ**, գ. *Ուշիմ լինելը:*

**ՈՒՇԿԵԿ**, մկ. *Փոքր ինչ ուշ:*

**ՈՒՇԿԻԿ**, մկ. *Յուշիկ, կամացուկ կերպով:*

**ՈՒՇՀԱՍՈՒԿ**, ած. *Ուշ հասնող (պըտուղ):*

**ՈՒՇՈՒԹԻՒՆ**, Տ. *Ուշիմութիւն:*

**ՈՒՇՈՒՄ ԱՆԵԼ**, բ. *Քաշուել:*

**ՈՒՇՈՒՆՑ**, գ. *Յիշոցք, հայհոյանք:*

**ՈՒՇՈՒՆՑԱԿՈԽ ԱՆԵԼ**, բ. *Ուշունցների տարափ թափել մէկի վրայ:*

**ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒ**, ած. *Շատ ուշունց տուող, հայհոյաբան:*

**ՈՒՇՈՒՆՑԱՏՈՒՈՒԹԻՒՆ**, գ. *Ուշունց տալը:*

**ՈՒՇՈՒՆՑԱՏԵՂ**, գ. *Ուշունց տալու տեղիք:*

**ՈՒՇՔ**, գ. *Ուշադրութիւն: Խելք, առողջ դատողութիւն:*

**ՈՒՇՔԱՄԱՂ**, ած. մկ. *Ուշաթափ, ուշաթափուած:*

**ՈՒՊԱՍԵՆԻ**, գ. (Բուս.) *Հացապտուղների կարգից սաստիկ թունաւոր բոյս:*

**ՈՒՌ**, գ. *Խաղողի որթի ողկուզաբեր ճիւղը:*

**ՈՒՌ**, գ. *Ոչխարի, մատակի, մանաւանդ կովի ստինք:*

**ՈՒՌ**, գ. *Մարմնի վրայ դուրս եկած ուռոյց:*

**ՈՒՌԱ՛**, միջ. *Աղաղակ, որ արձակում են զինուորները գրոհի դիմելիս: Գոհունակութեան աղաղակ: Իբրեւ* գ. *«Ուռա», ձայնը:*

**ՈՒՌԱՄԻՋԱԿ**, ած. *Մէջքը ուռի նման բարակ՝ ճկուն, չինարի:*

**ՈՒՌԵՆԱԶԱՐԴ**, ած. *Ուռենիներով զարդարուած:*

**ՈՒՌԵՆԻ**, Տ. *Ուռի:* (Բուս.), *Ծաղկապատեանով տունկերի դասին պատկանող տունկերի կարգ:*

**ՈՒՌԻ**, գ. (Բուս.) *Ուռենիների կարգին պատկանող ծառ:*

**ՈՒՌԿԱՆ**, գ. *Լարերից կմ բարակ թոկերից հիւսած ցանց, թակարդ* (Կրօն.) Փոխ. *Ս. Պետրոսի քարոզութիւնը, որով մարդկանց որսում էր դէպի քրիստոնէական հաւատը:*

**ՈՒՌԿԱՆԱԻՈՐ**, ած. գ. *Ուռկան ունեցող:*

**ՈՒՌԿԱՆՈՍ**, գ. *Հրաբուխ լեռ:*

**ՈՒՌՃԱԼԻ**, ած. *Ուռճացած:*

**ՈՒՌՃԱՆԱԼ**, բ. *Առատանալ, լցուել մի բանով: Պարարտանալ:*

**ՈՒՌՆ**, գ. *Դարբնի (մեծ) մուրճ:*

**ՈՒՌՆԱԳ**, գ. *Դռան ուռնակ: Թակ:*

**ՈՒՌՆԱԴՂՈՐԴ**, ած. *Մուրճի հարուածներով դղրդիւն հանող:*

**ՈՒՌՆԱՆՄԱՆ**, ած. *Ուռնաձեւ, մուրճի*

*նման:*

**ՈՒՌՆԵՆԻ**, գ. *Ուռի տեսակ:*

**ՈՒՌՈՅՑՔ**, գ. *Մարմնի այս կմ այն մասի ծաւալի հիւանդագին ուռչելը:*

**ՈՒՌՈՒԳԵՐ**, գ. *Լիք մարմին ունենալը, գիրութիւն:*

**ՈՒՌՈՒՆ**, ած. *Ուռած:*

**ՈՒՌ ՈՒ ՈԼՈՐ**, ած. *Կաշմբուռն, առոյգ, կտրիճ, կայտառ:*

**ՈՒՌՈՒՑ**, գ. *Ուռիների պուրակ:*

**ՈՒՌՈՒՑԱՒՈՐ**, ած. *Ուռած, ուռուցիկ:*

**ՈՒՌՈՒՑԻԿ**, ած. *Ուռած:*

**ՈՒՌՈՒՑԿՈՏ**, ած. *Ուռած, կրած վիրաւորանքից նեղացած, սրտնեղած:*

**ՈՒՌՈՒՑՈՒՈՐ**, ած. *Որի վրայ ուռոյցներ են դուրս եկել:*

**ՈՒՌՉԱՆ**, գ. *Աւելորդ բուսած միս սըրբանի վրայ:*

**ՈՒՌՉԵԼ**, բ. *Ծաւալը մեծանալ, ստուարանալ:* Փոխ. *Յանկարծ պատուի հասնելուց գոռոզանալ:*

**ՈՒՍ**, գ. (Կազմախ.) *Մարմնի այն մասը, որտեղ մարդկանց բազուկները կցւում են պարանոցին:*

**ՈՒՍԱԲԱՐՁԻԿ**, գ. *Հագուստի մաս, ուսին դրող բարձիկ:*

**ՈՒՍԱԲԵՐԱՆ**, գ. *Ուսի ներքեւի մասը:*

**ՈՒՍԱԳԼՈՒԽ**, գ. *Ուսի վերեւի մասը:*

**ՈՒՍԱԽԱՌՆ**, մկ. *Ուսը հետը:*

**ՈՒՍԱԾԱԿ**, գ. *Լուծի վրայի այն ծակերը, որոնց միջոցով անց են կացնում սամին:*

**ՈՒՍԱՄ**, գ. *Անորոշ ծաղկի անուն:*

**ՈՒՍԱՄԲԱՐՁ**, ած. մկ. *Ուսի վրայ բարձրացած:*

**ՈՒՍԱՄԵՐԿ**, ած. մկ. *Ուսերը մերկ՝ բաց կանացի տարազ:*

**ՈՒՍԱՆԵԼ**, բ. Տ. *Սովորել:*

**ՈՒՍԱՆԵԼԻ**, ած. *Ինչ որ պէտք է ուսանել:*

**ՈՒՍԱՆԵԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսանելու կարողութիւն:*

**ՈՒՍԱՆՈՂ**, գ. *Նա որ ուսանում է բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում:*

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ**, ած. *Ուսանողին յատուկ, վերաբերեալ:*

**ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսանող լինելը:*

**ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ**, գ. *Ուսանող իգական սեռի:*

**ՈՒՍԱՆՈՑ**, գ. *Ուսի վրայ ձգելու կմ հագնելու իր:* (Եկեղ.) *Վակաս:*

**ՈՒՍԱՆՈՑԱԳՈՐԾ**, գ. *Արհեստաւոր, որ ուսանոցներ է շինում:*

**ՈՒՍԱՇՈՐ**, գ. *Ուսի վրայ շորի կտոր:*

**ՈՒՍԱՊԱՆ**, գ. *Ուսերը պաշտպանելու զրահ:*

**ՈՒՍԱՒՈՐ**, ած. *Երկայնաձիգ:*

**ՈՒՍԵԱԼ**, ած. գ. *Ուսած, ուսում առած:*

**ՈՒՍԵԼ**, բ. *Ուսն առնել:*

**ՈՒՍԻԿ**, գ. *Փոքր ուս:*

**ՈՒՍԿԻՑ**, մկ. *Որտեղից, որտեղից որ:*

**ՈՒՍՄԱՍՎԱՐ**, գ. *Կրճատուած ձեւ՝ փոխանակ ուսումնական մասի վարիչի:*

**ՈՒՍՄԱՍՎԱՐԱԿԱՆ**, ած. *Ուսմասվարի վերաբերեալ:*

**ՈՒՍՄԱՍՎԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսմասվար լինելը:*

**ՈՒՍՄՈՒՆՔ**, գ. *Ուսանելը, ուսում:*

**ՈՒՍՆՈՑ**, գ. *Ուսերը ծածկելու կտոր, ուսնոցակ:*

**ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Թուաբանութիւն:*

**ՈՒՍՈՄԿՐ**, Տ. *Անրակ:*

**ՈՒՍՈՒԴԻԽԻ**, գ. (Բուս.) *Խոտի մի տեսակ:*

**ՈՒՍՈՒՄ**, գ. *Ուսանելը, մտքի մարզութիւն: Ինչ որ ուսուցանում են:*

**ՈՒՍՈՒՄՆԱԳԷՏ**, ած. *Ուսում գիտցող, ուսում առած, ուսեալ:*

**ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ**, գ. *Պարբերական հրատարակութիւն:*

**ՈՒՍՈՒՄՆԱԾԱՐԱՒ**, ած. *Ուսման ծարաւի:*

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ**, ած. *Ուսման վերաբերեալ:*
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսումնական լինելը:*
**ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ**, ած. *Ուսման ընկեր:*
**ՈՒՍՈՒՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսումնակից լինելը:*
**ՈՒՍՈՒՄՆԱՊԱՀ**, ած. *Ուսած բանը միտքը պահող:*
**ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ**, գ. *Նա որ կառավարում է միջնակարգ կմ բարձրագոյն դպրոցի ուսումնական մասը:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ**, ած. *Ուսում՝ կրթութիւն սիրող:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ**, ած. *Ուսումնասէրին յատուկ:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՊԷՍ**, մկ. *Իբրեւ ուսումնասէր:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ**, բ. *Որեւէ հարցով՝ գիտութեամբ կմ առարկայով մանրամասն զբաղուել: Դիտարկել:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսումնասէր լինելը: Գրուածք, որ պարունակում է ուսումնասիրութիւն:*
**ՈՒՍՈՒՄՆԱՍՐԱՀ**, գ. *Սրահ, որ յատկացրած է որեւէ մասնագիտական ուսումնասիրութիւն կատարելու:*
**ՈՒՍՈՒՄՆԱՎԱՅՐ**, գ. *(Բարձրագոյն) ուսում առնելու տեղ, համալսարան, ինստիտուտ եւն:*
**ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԱԿԱՆ**, ած. *Ուսումնավարի վերաբերեալ:*
**ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺ**, ած. *Ուսման մէջ վարժ:*
**ՈՒՍՈՒՄՆԱՏԵԱՑ**, ած. *Ուսում ատող:*
**ՈՒՍՈՒՄՆԱՏԵՆՉ**, ած. *Ուսման տենչացող:*
**ՈՒՍՈՒՄՆԱՏՈՒՐ**, ած. գ. *Ուսում տուող:*
**ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ**, գ. *Ուսում առնելու տեղ, հիմնարկ, որտեղ աշակերտներին ուսում են տալիս, դպրոց:*
**ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ**, ած. *Ուսումնարանին յատուկ:*
**ՈՒՍՈՒՄՆԱՒԱՐՏ**, ած. գ. *Մի դպրոցում ուսումն աւարտած:*
**ՈՒՍՈՒՑԱՆԵԼ**, անց. ձեւ *Ուսանել'ի:*
**ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻ**, ած. *Ինչ որ պէտք է կմ կարելի է ուսուցանել:*
**ՈՒՍՈՒՑԱՆՈՂ**, ած. գ. *Նա որ ուսուցանում է, ուսուցանող, ուսուցիչ:*
**ՈՒՍՈՒՑԻՉ**, գ. *Ուսուցանող:*
**ՈՒՍՈՒՑՈՂ**, ած. գ. *Ուսուցանող:*
**ՈՒՍՈՒՑՈՒՄ**, գ. *Ուսուցանելը: Ուսանելը, սովորելը:*
**ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑ**, գ. *Սենեակ, որտեղ ուսուցիչները հանգստանում են դասամիջոցների ժամանակ:*
**ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ**, Տ. Պրոֆէսոր: *Գլխաւոր ուսուցիչ (տիտղոս):*
**ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԱԿԱՆ**, Տ. *Վարդապետական:*
**ՈՒՍՈՒՑՉԱՐԱՆ**, գ. *Ուսուցչանոց:*
**ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆ**, գ. *Ուսուցիչ լինելը:*
**ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ**, գ. *Ուսուցիչ իգական սեռի:*
**ՈՒՍՏ**, գ. *Որտեղից լինելը:* մկ. *Ո՞րտեղից. ուստի՞:*
**ՈՒՍՏ**, *Վերջաղիր մասնիկ, որ տալիս է բառին բացառականի նշանակութիւն:*
**ՈՒՍՏԻ**, յարաբ. *մակբայ, որ դրւում է երկրորդ. Նախադասութեան մէջ: Հետեւաբար:*
**ՈՒՍՏԻՆ**, գ. *Մարդակ, գերան:*
**ՈՒՍՏՈՒԹԻՒՆ**, գ. *Վարպետ լինելը, վարպետութիւն:* Փոխ. *Հնագիտութիւն:*
**ՈՒՍՏՐ**, գ. *Արու զաւակ, որդի:*
**ՈՒՍՏՐԻԿ**, գ. *Փոքրահասակ արու զաւակ:*
**ՈՒՎԱՐՈՎԻՏ**, գ. (Հանք.) *Կարկեհանի կմ նռնաքարի մի հազուագիւտ եւ թանկագին տեսակը:*
**ՈՒՏԱՆ**, ած. *Շատ ուտող:*
**ՈՒՏԵԼ**, *պակասաւոր բայ*, Բ. արմ. *կերի:*

*Մնունդ ստանալ, սնուել։ Ուրիշի ունեցածը իւրացնել։ Անարգանք՝ վիրաւորանք կրել։ Մաշել, քայքայել։ Խօսքերի մի մասը կուլ տալ։ Ճաշակել։*

**ՈՒՏԵԼԵՂԷՆ**, գ. *Ինչ որ պիտանի է ուտելու։*

**ՈՒՏԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է ուտել։*

**ՈՒՏԵԼԻՔ**, գ. *Ինչ որ մարդ ուտում է. կերակուր։*

**ՈՒՏԵՍՏ**, գ. *Ուտելիք, սնունդ, պարէն։ Ապրուստ։*

**ՈՒՏԵՍՏԵՂԷՆ**, գ. *Ուտելիքի տեսակներ։*

**ՈՒՏԵՍՏԱՎԱՃԱՌ**, Տ. *Նպարավաճառ։*

**ՈՒՏԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Ուտել՚ի*, նոյն նշ.։

**ՈՒՏԻՃ**, գ. *Ընդհանուր անուն զանազան տեսակ մանր որդերի։* (Կենդ.) *Փայտակերների ցեղին պատկանող փոքր երկայնաձեւ միջատ։*

**ՈՒՏԻՉ**, ած. *Ուտող, լափող։*

**ՈՒՏԻՔ**, ած. (Եկեղ.) *Ուտելու օր. այն օրը, երբ եկեղեցական օրէնքով թոյլ է տրուում ուտել միս, կաթնեղէն եւն։*

**ՈՒՏՈՒՄ**, գ. *Ուտելը։*

**ՈՒՐ**, *Յարաբերական մակբայ։ Որտեղ։*

**ՈՒՐԱԳ**, գ. *Հիւսնի երկաթէ գործիք։*

**ՈՒՐԱԳԱՒՈՐ**, ած. *Ուրագ ունեցող։*

**ՈՒՐԱԳԱՏԱՇ**, ած. *Ուրագով տաշած։*

**ՈՒՐԱԽ**, ած. *Նա որ զգում է ուրախութիւն։* Հկռ. *Տխուր, սառն։ Գոհ, բաւական։ Զուարթ։*

**ՈՒՐԱԽԱԲԵՐ**, ած. *Ուրախութիւն բերող, ուրախացնող։*

**ՈՒՐԱԽԱԼԻ**, ած. մկ. *Մեծ ուրախութիւն պարունակող։*

**ՈՒՐԱԽԱԽԱՌՆ**, ած. *Որտեղ խառնուած է ուրախութիւն։*

**ՈՒՐԱԽԱԿԻՑ**, ած. *Միասին ուրախացնող։*

**ՈՒՐԱԽԱԿՑԵԼ**, բ. *Ուրախակից լինել։*

**ՈՒՐԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ուրախակից լինելը։*

**ՈՒՐԱԽԱՄԻՏ**, ած. *Ուրախ մտքով։*

**ՈՒՐԱԽԱՆԱԼ**, բ. *Ուրախ դառնալ։* Հկռ. *Տրտմել, տխրել։*

**ՈՒՐԱԽԱՊԱՅԾԱՌ**, ած. *Ուրախ եւ պայծառ։*

**ՈՒՐԱԽԱՊԱՐ**, գ. *Ուրախութիւնից պարելը։*

**ՈՒՐԱԽԱՌԻԹ**, ած. *Ուրախութիւն պատճառող։*

**ՈՒՐԱԽԱՍԷՐ**, ած. *Ուրախութիւն սիրող, զուարճասէր։*

**ՈՒՐԱԽԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուրախասէր լինելը։*

**ՈՒՐԱԽԱՍԻՐՏ**, ած. մկ. *Ուրախ սիրտ ունեցող։*

**ՈՒՐԱԽԱՐԱՐ**, ած. *Ուրախութիւն պատճառող։*

**ՈՒՐԱԽԱՒԷՏ**, ած. *Շատ ուրախացնող։*

**ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ**, գ. *Ուրախ լինելը։ Ուրախ ժամանց։*

**ՈՒՐԱՆԱԼ**, բ. *Ճշմարտութեան հակառակ մերժել։*

**ՈՒՐԱՆՈՍ**, գ. (Աստղաբ.) *Արեգակնային մոլորակներից մէկը։*

**ՈՒՐԱՆՈՍ**, գ. (Քիմ.) *Պարզ մետաղական մարմին։*

**ՈՒՐԱՐ**, գ. (Եկեղ.) *Ուսից կախուող երկայն ժապաւինաձեւ կտոր։ Ուսից կախուող։*

**ՈՒՐԱՐԱԿԻՐ**, ած. գ. (Եկեղ.) *Ուրար կրող։*

**ՈՒՐԱՐՈՒՄ**, գ. *Ուրարով պատատելը։*

**ՈՒՐԱՑՈՂ**, (Կրօն.) *Ուրանալ՚ի անցեալ եւ ներկայ դերբայները։*

**ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ**, **ՈՒՐԱՑՈՒՄ** } գ. *Ուրանալը, ուրացածի վիճակը։*

**ՈՒՐԲԱԹ**, գ. *Շաբաթուայ վեցերորդ օրը, հինգշաբթիի եւ շաբաթի մէջ։ Իբրեւ* մկ. *Ուրբաթ օրը։*

**ՈՒՐԲԱԹԱԼԷԶ**, ած. (Եկեղ.) *Ուրբաթ օրուայ պասը լուծող։*

**ՈՒՐԲԱԹԱԽՕՍ**, ած. (Ծաղրական),

*Ուրբաթ օրերը կմ ուրբաթէ ուրբաթ խօսող, սակաւախօս:*

**ՈՒՐԲԱԹԱՄՈՒՏ,** գ. *Հինգշաբթի երեկոն:*

**ՈՒՐԲԱԹԱՐՈՒՐ,** գ. (Մնստ.) *Չար աչքի դէմ յուռութ, բաղկացած կիսալուսնաձեւ կմ խաչաձեւ մի կտոր երկաթից:*

**ՈՒՐԲԱԹԱՆԱԼ,** (Եկեղ.) բ. *Ուրբաթ դառնալ:*

**ՈՒՐԴ,** գ. *Առու, որով ջուրը գնում է պարտէզը:*

**ՈՒՐԴԵԼ,** բ. *Առու բանալով ճահիճ չորցնել:*

**ՈՒՐԵՄՆ,** մկ. *Ինչ-որ մի տեղ, ինչ-որ մի տեղում:* (հմմտ. *Ուստի*):

**ՈՒՐՁԷՁ,** գ. *Տակառագործի դանակ:*

**ՈՒՐԻՇ,** ած. *Ոչ այս (ոչ այդ, ոչ այն), այլ: Իբրեւ* գ. *Այլ ոք:*

**ՈՒՐԿԱՆԱԼ,** բ. *Սաստիկ բորոտել:*

**ՈՒՐԿԱՆՈՑ,** գ. *Հասարակական հիմնարկ, որտեղ պատսպարում՝ պահում են ուրուկներին: Բորոտանոց:*

**ՈՒՐԿՈՏ,** ած. *Ուրկութիւն ունեցող: Բորոտ:*

**ՈՒՐԿՈՏՈՒԹԻՒՆ**, **ՈՒՐԿՈՒԹԻՒՆ** } գ. *Ծանր տեսակի բոր՝ բորոտութիւն:*

**ՈՒՐՈՅՆ,** ած. *Իր, սեփական: Զատ, առանձին: Յատուկ:* մկ. *Զատուած:*

**ՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ,** գ. *Առանձնութիւն, զատութիւն:*

**ՈՒՐՈՒ,** գ. *Ուրուական:*

**ՈՒՐՈՒԱԳԻԾ,** գ. (Նկարչ.) *Նկարի՝ պատկերի՝ արձանի՝ մեքենայի առաջին եւ հարեւանցի գծագրութիւն թղթի վրայ. ստուերագիր: Ծրագիր մի գրական երկի: Նախագիծ: Համառօտ ակնարկ:*

**ՈՒՐՈՒԱԳԻՐ,** Տ. *Ուրուագիծ:* Տ. *Նախագիծ:*

**ՈՒՐՈՒԱԳԾԵԼ,** բ. *Նկարի՝ պատկերի եւն առաջին հարեւանցի գծագրութիւնն անել թղթի վրայ: Ամփոփ նկարագրել մի բան:*

**ՈՒՐՈՒԱԴԷՏ**, **ՈՒՐՈՒԱԴԻՏԱԿ** } գ. (Ֆիզ.) *Տեսաբանական գործիք:*

**ՈՒՐՈՒԱԿԱՆ,** ած. *Ուրուին յատուկ, երեւակայական:* գ. *Մեռած մարդու ոգի:* Նման. *Երեւակայական աղէտ:*

**ՈՒՐՈՒԿ,** գ. *Բորոտ:*

**ՈՒՐՈՒԱՁԱՅՆ,** ած. *Ուրուականները կանչող, սնոտի:*

**ՈՒՐՈՒԱՄԻՏ,** ած. *Ցնորամիտ:*

**ՈՒՐՈՒԱՆԿԱՐ,** Տ. *Ուրուագիծ:*

**ՈՒՐՈՒԱՊԱՇՏ,** Տ. *Դիցապաշտ:*

**ՈՒՐՈՒԱՏԵՍԻԼ,** ած. *Ուրուականի տեսք ունեցող:*

**ՈՒՐՈՒԱՏԻՊ,** ած. *Ուրուատեսիլ, ուրուական:*

**ՈՒՐՈՒԷ,** գ. *Անյայտ տեսակի բոյս:*

**ՈՒՐՈՒՆՋԻ,** ած. *Մուգ կանաչ գոյն ունեցող:*

**ՈՒՐՈՒՏՈՒԹ,** գ. *Շան կատաղի հաջոց:*

**ՈՒՐՈՒՐ,** Տ. *Ցին:* ած. Փոխ. *Շատ այս ու այն կողմ ընկնող:*

**ՈՒՐՁ,** Տ. *Վերջ.* (անստ. բառ):

**ՈՒՐՁՈՒ,** գ. *Խորթ որդի:*

**ՈՒՐՎԱԳԾՈՒՄ,** գ. *Ուրուագծելը:*

**ՈՒՐՎԱՊԱՏԿԵՐՈՒՄ,** գ. *Ուրուականի պէս պատկերելը:*

**ՈՒՐՑ, ԴԱՇՏԻ ՈՒՐՑ,** *Շրթնածաղիկների կարգից համեմային բոյս:*

**ՈՒՐՑԱԿԱՆ,** ած. *Ուրցին՝ ծոթրինին յատուկ, ծոթրինի:*

**Ո՜ՒՖ, Ո՜ՒՖՖ,** միջ. *Ձայնարկութիւն ցաւի զգացմուքից: Ձայնարձակութիւն:*

**ՈՒՖԱՁ,** գ. *Արմաւենու մի տեսակ:*

**ՈՔ,** *Ամէն մէկը, ամէն մարդ:*

**ՈՔՍԻՐԻՆՔՈՍ,** ած. գ. *Գրի մի տեսակ ձեւ, նոտրագիր:*

# Չ, չ

**Չ, չա, չայ**, գ. *Հայերէն այբուբենի քսանհինգերորդ տառը եւ տասնիններորդ բաղաձայնը: Թուարկութեան եօթ հարիւրի համարժէք: Եօթ հարիւրերորդ:*

**Չ**, *(ձայնաւորից առաջ՝ չ, բաղաձայնից առաջ չը), (բացասական մասնիկ, առաջ եկած Ոչ՚ի սղումից)*, մկ. *Գործ է ածուում բայերի հետ՝ կցուելով սկզբին, ոչ՚ի նշանակութեամբ:*

**ՉԱԶԳ**, գ. *Ոչ-ազգ, անպիտան ազգ, ազգ կոչուելու անարժան:*

**ՉԱ՛Թ**, միջ. *Որ արտայայտում է կոտրուելու ուժեղ ձայն՝ ճայթիւն:*

**ՉԱԹՈՒ**, գ. *Թոկ, չուան:*

**ՉԱԹ-ՉԱԹ**, ած. *Ճեղքոտած:*

**ՉԱԹ–ՉԱԹ**, գ. *Անորոշ տեսակի տերեւաւոր խոտ:*

**ՉԱԹ-ՉՈՒԹ**, միջ. *Յաճախ լսուող ճայթիւնների ձայնի արտայայտութիւն:*

**ՉԱԹՌՏՈՒԿ**, գ. *Չա՛թ-չա՛թ ձայն հանող:*

**ՉԱԹ-ՓԱԹ**, *Անկանոն, կիսատ-պռատ, ծուռումուռ:*

**ՉԱԹ-ՓՈՒԹ**, գ. *Սիմինդրի աղանձած հատիկներ:*

**ՉԱԼ**, (Թրք.) ած, *Խատուտիկ, սիրուն:*

**ՉԱԼԱՁՈՒԿ**, գ. *Սեւանայ լճում բռնուող ձկների մի տեսակը:*

**ՉԱԼԱՂԱՊՏՈՒՂ**, ած. *Չալ՝ կապոյտ եւ կանաչ աչքեր ունեցող:*

**ՉԱԼԿՏԱԼ**, չբ. *Փայլփլել, սպիտակին տալ:*

**ՉԱԼՊՂՈՃ**, գ. *Չալ պղոճ, զատկի ճիճուն:*

**ՉԱԼՕՐ**, մկ. *Հինգերորդ օրը այսօրուանից հաշուելով:*

**ՉԱԽ**, գ. *Յանդիմանութիւն, կշտամբանք:*

**ՉԱԽԵԼ**, բ. *Չախ տալ: Կշտամբել:*

**ՉԱԾԱՆ**, ած. *Ձու չածող:*

**ՉԱԿԵՐՏ**, գ. *Տրոհութեան նշան: Բացայայտութեան նշան: Մէջբերումի նշան:*

**ՉԱԿԵՐՏԱԻՈՐ**, ած. *Չակերտ կրող:*

**ՉԱԿԵՐՏԵԼ**, բ. *Չակերտի մէջ դնել:*

**ՉԱՀԱԳԻՆ**, ած. *Ոչ ահագին:*

**ՉԱՄԱՆ**, գ.(Բուս.) *Հովանոցաւորների կարգից բոյս:*

**ՉԱՄԱՆ**, գ. *Իգական սեռական անդամ:*

**ՉԱՄԻՉ**, գ. *Չորացրած կմ չորացած խաղող:*

**ՉԱՄԻՉ-ԽԱՂՈՂ**, գ. *Խաղողի մի տեսակ:*

**ՉԱՄՉԱԳՈՅՆ**, ած. *Չամչի գոյն ունեցող:*

**ՉԱՄՉԱԽՈՒՆԿ**, գ. *Չամչի խունկ:*

**ՉԱՄՉԱՀԱՏ**, գ. *Չամչի հատիկ:*

**ՉԱՄՉԱՊՈՒՐ**, գ. *Պասուայ ապուր:*

**ՉԱՄՉԱՐԱԿ**, գ. *Չամիչով եւ այլ պտուղներով միասին խառնած քաղցր ըմպելիք:*

**ՉԱՄՉԵԱՅ**, ած. *Չամչից պատրաստուած, չամչի:*

**ՉԱՄՉԵՂԷՆ**, ած. գ. *Չամիչ եւ ինչ որ չամչի նման է:*

**ՉԱՄՐՕՐ (Է)**, գ. *Հնդկաստանում աճող անորոշ տեսակի մի ծառ:*

**ՉԱՆԱՐԳԱԿԱՆ**, ած. *Ոչ անարգական:*

**ՉԱՆԱՔ**, գ. *Հասած բամբակը հաւաքելը:*

**ՉԱՆԱՔԱԻՈՐ**, ած. գ. *Չանաք անող:*

**ՉԱՆԱՔԵԼ**, բ. *Չանաք անել:*

**ՉԱՆԹ**, գ. *Շատ մաշուած ոտնաման։*

**ՉԱՆԹՌԵԽ**, ած. *Պատռած բերան, թոյլբերան։*

**ՉԱՆԿԱՒՈՐ**, գ. *Մի տեսակ հիւանդութիւն։*

**ՉԱՆԿԼԱՊԱՆ**, գ. Չանգալով՝ *կարթով ձուկ որսացող։*

**ՉԱՆԿԼԱՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չանկլապան լինելը։*

**ՉԱՆԿՉԱՆԿՈՏ**, ած. *Ճանկռոտող։*

**ՉԱՆՁՆԱՒՈՐ**, ած. *Ոչ անձնաւոր։*

**ՉԱՆՉ**, գ. *Խաղողի ողկոյզը։*

**ՉԱՆՉԱԳԻՆԻ**, գ. *Գինու համ տուող ըմպելիք։*

**ՉԱՆՉԱՀԱՆ**, ած. *Չանչը հանած։*

**ՉԱՆՉԱՆ**, ած. *Չանչախ։*

**ՉԱՆՉԵԼ**, բ. *Ձեռքի մատերը լայն բացած գրող չափել։*

**ՉԱՆՉՈՒԼ**, գ. *Բացուած ձեռք կմ թաթ, թաթուլ, թանթուլ։*

**ՉԱՆՉՈՒԼ**, ած. *Հարուածից անզգայ դարձած։ Անբան։*

**ՉԱՆՍԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չանսալը։*

**ՉԱՆՔ**, գ. *Հանելուկ։*

**ՉԱՆՔԻ**, կ. *Մինչեւ ի։*

**ՉԱՇՄԻԿ**, գ. (Բուս.) *Ակացիայի նման փշոտ ծառ։*

**ՉԱՇՈՒՐ**, գ. *Սամիթի նման բոյս։*

**ՉԱՉ**, գ. *Շաղգամի, բազկի եւ նման գընդարմատ բոյսերի տերեւները։*

**ՉԱՉ**, գ. *Ճիւղի կտոր՝ տնկելու համար։*

**ՉԱՉԱԲԱՆՋԱՐ**, գ. *Կերակուր։*

**ՉԱՉԱՆԱԿ**, ած. գ. *Անդադրում խօսող, շաղակրատ։*

**ՉԱՉԱՐՈՒՄ**, ած. *Ժրաջան, լաւ աշխատող։*

**ՉԱՉՉԱԳՕՏԻ**, գ. *Ծիրանի գօտի։*

**ՉԱՋՈՂԱԾ**, ած. *Չյաջողուած։*

**ՉԱՋՈՂԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Չյաջողած լինելը։* Հկռ. *Ճարպկութիւն։*

**ՉԱՋՈՂԱԿ**, ած. *Ոչ յաջողակ։*

**ՉԱՋՈՂԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Անյաջողութիւն։*

**ՉԱՌ**, գ. *Անասունների հիւանդութիւն։*

**ՉԱՌՈՒԵԼ**, բ. *Չառով բռնուել, չառով հիւանդանալ։*

**ՉԱՍՏՈՒԱԾ**, գ. (Կրօն.) *Ոչ աստուած, սուտ աստուած։*

**ՉԱՍՏՈՒԱԾՈՒՀԻ**, գ. (Կրօն.) *Չաստուած իգական սեռի։*

**ՉԱՐ**, ած. *Ի բնէ վնասակար յատկութիւն ունեցող։ Նա որ ներքին տրամադրութիւն ունի ուրիշին վնասելու, նրան անախորժ բան անելու։ Վնասող, վնասաբեր։ Անկարգապահ, վատ։* (Կրօն.) *Սատանայ։*

**ՉԱՐԱԲԱԽՏ**, Տ. *Վատաբախտ։*

**ՉԱՐԱԲԱԽՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չարաբախտ լինելը։*

**ՉԱՐԱԲԱՍՏ**, *Չարաբախտ, դժբախտ։*

**ՉԱՐԱԲԱՍՏԻԿ**, ած. *Չար բախտի հանդիպած։*

**ՉԱՐԱԲԱՍՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չարաբախտութիւն։*

**ՉԱՐԱԲԱՐ**, մկ. Չարի պէս։

**ՉԱՐԱԲԱՐՈՅ**, ած. *Չար բարքի տէր։*

**ՉԱՐԱԲԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չարաբարոյ լինելը, վատ բարք՝ բնաւորութիւն ունենալը։*

**ՉԱՐԱԲԵԿ**, ած. *Սաստիկ՝ չարաչար ջարդուած։*

**ՉԱՐԱԲԵՐ**, ած. *Չարիք բերող։*

**ՉԱՐԱԳԱՋԱՆ**, ած. *Չար գազանի յատկութիւն ունեցող։*

**ՉԱՐԱԳԱՆ**, ած. *Սաստիկ ծեծուած։*

**ՉԱՐԱԳԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չարագան լինելը։*

**ՉԱՐԱԳԵՂ**, ած. *Գեղեցկութեան կողմից վատթար, տգեղ։*

**ՉԱՐԱԳՈՅԺ**, ած.*Մի չարիք՝ դժբախտութիւն գուժող։*

**ՉԱՐԱԳՈՅՆ**, ած. *Վատ գոյնով։*

**ՉԱՐԱԳՈՐԾ**, ած. *Չարիքներ՝ չար բաներ գործող. չար։*

**ՉԱՐԱԳՈՐԾԱԲԱՇԽ**, ած. *Աստղահմայ-*

*ութեան մէջ՝ աստղի շարժման այն րոպէն, որին ենթարկուողը չարագործ է դառնում:*

ՉԱՐԱԳՈՐԾԱԿԻՑ, ած. *Չարագործութեան ընկեր:*

ՉԱՐԱԳՈՐԾԵԼ, բ. *Չար գործ՝ չարագործութիւն կատարել:*

ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Չարագործ լինելը: Ոճրագործութիւն:*

ՉԱՐԱԳՈՒԹ, ած. *Նա որ գութի փոխարէն չարութիւն է տածում դէպի մէկը:*

ՉԱՐԱԳՈՒՇԱԿ, ած. *Չարիք գուշակող:*

ՉԱՐԱԳՐԳԻՌ, ած. *Չարիք՝ չարութիւն գրգռող:*

ՉԱՐԱԴԱՏ, ած. *Չարաչար դատող՝ աշխատող:*

ՉԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Չարադատ լինելը:*

ՉԱՐԱԴԱՒ, ած. *Սաստիկ դաւաճան:*

ՉԱՐԱԴԵՒՈՒԹԻՒՆ, Տ. *Չարադիւութիւն:*

ՉԱՐԱԴԷՄՔ, ած. *Չար դէմք՝ կերպարանք ունեցող:*

ՉԱՐԱԴԷՊ, ած. *Ձախորդ դիպուածով պատահած:*

ՉԱՐԱԴԻՒԹ, ած. գ. *Չար դիւթութիւն անող:*

ՉԱՐԱԴԻՒԹՈՒԱԾ, ած. *Չարութիւնից դիւթուած:*

ՉԱՐԱԴԻՒԹՈՒԹԻՒՆ, գ. *Չարադիւթ լինելը:*

ՉԱՐԱԶԳԱԾ, ած. *Չարը իր մէջ կմ իր վրայ կրող:*

ՉԱՐԱԶԳԻ, ած. *Վատ ազգից:*

ՉԱՐԱԶԳԵՍՏՈՒԹԻՒՆ, գ. *Չարազգեստ լինելը:*

ՉԱՐԱԶԻՆԵԱԼ, ած. *Չարութեամբ զինուած:*

ՉԱՐԱԶՐԱՒ, ած. *Թշուառ, ողբալի:*

ՉԱՐԱԹՈՅՆ, ած. *Չար թոյն կրող:*

ՉԱՐԱԹԻՒՐ, ած. *Դէպի չարը թիւրած՝ թեքուած:*

ՉԱՐԱԺՈՂՈՎ, ած. *Որտեղ ժողովուած են չարերը:*

ՉԱՐԱԼԵԶՈՒ, ած. *Չար լեզու ունեցող:*

ՉԱՐԱԼԼՈՒԿ, ած. *Չարից՝ սատանայից լլկուած: Տանջուած, բռնաբարուած:*

ՉԱՐԱԽՆԱՄ, ած. *Չար բանի տրամադիր:*

ՉԱՐԱԽՆԴԱՑ, ած. *Նա որ ուրախանում է ուրիշին հասած չարիքի վրայ:*

ՉԱՐԱԽՆԴԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Չարախընդաց լինելը:*

ՉԱՐԱԽՆԴԻՐ, ած. *Չար բաների՝ չարութեան հետամուտ:*

ՉԱՐԱԽՈՐԺԱԿ, ած. *Նա որ չարի ախորժակ ունի:*

ՉԱՐԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. *Չար բան մտածող, չարամիտ:*

ՉԱՐԱԽՈՑ, ած. *Չարաչար խոցուած:*

ՉԱՐԱԽՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Չար ախտերի մասնակցութիւն, չարակրութիւն:*

ՉԱՐԱԽՐԱՏ, ած. *Չար բան խրատող:*

ՉԱՐԱԽՐԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Չարախրատ լինելը:*

ՉԱՐԱԽՕՍ, ած. *Մէկի մասին չար խօսող:*

ՉԱՐԱԽՕՍԱԿԱՆ, ած. *Չարախօսին յատուկ:*

ՉԱՐԱԽՕՍԱՆՔ, Տ. *Չարախօսութիւն:*

ՉԱՐԱԽՕՍԵԼ, բ. *Մէկի մասին չար խօսել: Ամբաստանել, մեղադրանքներ բարդել մէկի վրայ:*

ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. *Չարախօս լինելը: Ամբաստանութիւն:*

ՉԱՐԱԾԱԿԱՆ, ած. *Չարիք բերող :*

ՉԱՐԱԾՆՈՒՆԴ, ած. *Չար ծնունդ կմ ծնող:*

ՉԱՐԱԿԱՄ. ած. գ. *Ուրիշին չարիք կամեցող:*

ՉԱՐԱԿԱՄԱԲԱՐ. մկ. *Իբրեւ չարակամ, չարակամութեամբ:*

ՉԱՐԱԿԱՄՈՒԹԻՒՆ, գ. *Չարակամ լինելը:*

ՉԱՐԱԿԱՍԿԱԾ, ած. *Ինչ որ կասկածելի է իբրեւ չար:*

ՉԱՐԱԿԱՐԾ, ած. *Չար կարծիքներ առաջացնող:*

ՉԱՐԱԿԵԱՑ, ած. *Չար՝ թշուառական կեանք վարող:*

ՉԱՐԱԿԵՂՏ. ած. *Չար կեղտ բերող:*

ՉԱՐԱԿԵՐ, ած. *Չարաչար ուտող:*

ՉԱՐԱԿԵՐՈՒԹԻՒՆ. գ. *Չարակեր լինելը:*

ՉԱՐԱԿՆ, ած. *Աչքը չար մարդ:*

ՉԱՐԱԿՆԱԲԱՐ, մկ. *Չարակնելով:*

ՉԱՐԱԿՆԵԼ, բ. *Չար աչքով նայել ուրիշին:*

ՉԱՐԱԿՆՃԻՌ, ած. *Չարութեամբ կընճռոտած:*

ՉԱՐԱԿՆՈՒԹԻՒՆ. գ. *Չարակն՝ նախանձոտ լինելը:*

ՉԱՐԱԿՇԻՌ, ած. *Չարաչար կշռող:*

ՉԱՐԱԿՈՐԾԱՆ, ած. *Չարաչար կործանուած:*

ՉԱՐԱԿՍԿԻԾ, ած. *Չարաչար կսկծեցնող:*

ՉԱՐԱԿՐՈՒԹԻՒՆ, գ. *Չարիքներ կրելը:*

ՉԱՐԱՀԱԼԱԾ, ած. *Չարը կմ չարիքը հալածող:*

ՉԱՐԱՀԱՄԲԱՒ, Տ. *Վատահամբաւ:*

ՉԱՐԱՀԱՄԲԱՒԵԼ, բ. *Մէկի մասին վատ համբաւ տարածել:*

ՉԱՐԱՀԱՄԲԱՒՈՒԹԻՒՆ, գ. *Չարահամբաւ լինելը:*

ՉԱՐԱՀԱՄԲՈՅՐ, ած. *Վատ վերաբերուող:*

ՉԱՐԱՀԱՄՈՁ, ած. *Նա որ համոզում է մէկին մի չար բան անելու:*

ՉԱՐԱՀԱՏՈՅՑ, ած. *Չարիքով հատուցող: Ապերախտ:*

ՉԱՐԱՀԱՒԱՆ, ած. *Չար բանի հաւանող:*

ՉԱՐԱՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Չարահաւան լինելը:*

ՉԱՐԱՀԱՒԱՏ, ած. *Անզգամ: Չարին հաւատացող:*

ՉԱՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Չարահաւատ լինելը:*

ՉԱՐԱՀՆԱՐ, ած. *Չարիք հնարող՝ նիւթող:*

ՉԱՐԱՀՆԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Չարահնար լինելը:*

ՉԱՐԱՀՈՏ, Տ. *Գարշահոտ:*

ՉԱՐԱՀՌՉԱԿ, Տ. *Չարահամբաւ:*

ՉԱՐԱՁԱՅՆԵԼ, բ. *Վատ՝ անախորժ ձայն հանել:*

ՉԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. *Չարաձայն լինելը:* Հկռ. *Բարեհնչիւնութիւն:*

ՉԱՐԱՂԱՆԴ, ած. (Կրօն.) *Չար աղանդի հետեւող, աղանդաւոր:*

ՉԱՐԱՂԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. *Չարաղանդ լինելը:*

ՉԱՐԱՂԷՏ, ած. *Չար եւ աղէտալի:*

ՉԱՐԱՃՃԻ, ած. *Ճճիի նման խայթող:* Նման. *Աշխոյժ, զուարթ:*

ՉԱՐԱՃՃԻՈՒԹԻՒՆ,

ՉԱՐԱՃՃՈՒԹԻՒՆ, գ. *Չարաճճի լինելը. Մանկական անմեղ չարութիւն ընող:*

ՉԱՐԱՄԱՀ, ած. մկ. *Չարաչար՝ տանջալից մահ կրող:*

ՉԱՐԱՄԱՂԹԱԿԱՆ, ած. *Չարամաղթութիւն պարունակող:*

ՉԱՐԱՄԱՂԹՈՒԹԻՒՆ, գ. *Մէկին չարիք մաղթելը:*

ՉԱՐԱՄԱՂՁՈՒԹԻՒՆ, գ. (Ախտաբ.) *Մաղձի ապականութիւն:*

ՉԱՐԱՄԱՐԴ, ած. *Չար մարդկանցով լիքը*:

ՉԱՐԱՄԵՌ, ած. *Չարաչար մահով մեռած, չարամահ:*

ՉԱՐԱՄԷՏ, ած. *Դէպի չարը միտուած:*

ՉԱՐԱՄԻՏ, ած. *Չար միտք ունեցող, չարիք մտածող:*

ՉԱՐԱՄՈՅՆ, ած. *Չարաբաստիկ, վատ՝ խղճալի վիճակում գտնուող:*

ՉԱՐԱՄՈՌԱՑ, ած. *Նա որ մոռանում է իրեն արուած չարիքը:*

ՉԱՐԱՄՏԱԲԱՐ, մկ. *Չար մտքով:*

**ՉԱՐԱՄՏԵԼ**, բ. *Չարամիտ լինել:*
**ՉԱՐԱՄՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չարամիտ լինելը:* Հկր. *Բարեմտութիւն:*
**ՉԱՐԱՅԻՇԱՏԱԿ**, ած. *Չար յիշատակ թողած:*
**ՉԱՐԱՅՈՅԶ**, ած. *Խռովարար, գրգռիչ:*
**ՉԱՐԱՅՕԺԱՐ**, ած. *Դէպի չարը յօժարած:*
**ՉԱՐԱՆԱԼ**, բ. *Չար դառնալ, դէպի չարը փոխուել: Կատաղել, զայրանալ:*
**ՉԱՐԱՆԱԽԱՆՁ**, ած. *Չար նախանձ ունեցող:*
**ՉԱՐԱՆԱԽԱՆՁՈՒԹԻՒՆ**, գ. *Չարանախանձ լինելը:*
**ՉԱՐԱՆԵՆԳ**, ած. *Չար եւ նենգաւոր:*
**ՉԱՐԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ**, գ. *Չարանենգ լինելը:*
**ՉԱՐԱՆՈՒԱԳ**, ած. *Վատ նուագող կմ երգող:*
**ՉԱՐԱՆՊԱՏԱԿ**, ած. *Չար նպատակով:*
**ՉԱՐԱՇԱՀ**, ած. *Չափազանց շահի յետեւից ընկնող, շահամոլ:*
**ՉԱՐԱՇԱՀԵԼ**, բ. *Ի չարը գործ դնել: Շահի համար ուրիշը օգտագործել:*
**ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Չարաշահ լինելը: Շահագործելը:*
**ՉԱՐԱՇԱՀՈՒՄ**, Տ. *Չարաշահութիւն:*
**ՉԱՐԱՇԵՇՏ**, ած. *Չար շեշտ ունեցող:*
**ՉԱՐԱՇՇՈՒԿ**, ած. *Չարաղէտ, բօթաբեր:*
**ՉԱՐԱՇՈՒՆՉ**, ած. *Վատ շունչ ունեցող, գարշահոտ:*
**ՉԱՐԱՇՈՒՔ**, ած. *Չափազանց անշուք, խղճալի:*
**ՉԱՐԱՉԱՐ**, ած. մկ. *Խիստ չար, խիստ վատ:*
**ՉԱՐԱՉՔ**, գ. *Հիւանդութիւն, որ առաջ է գալիս չար աչքով տալուց:*
**ՉԱՐԱՊԱՇՏ**, *Չար պաշտամունք ունեցող:*
**ՉԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չարապաշտ լինելը:*
**ՉԱՐԱՊԱՏԿԵՐ**, ած. *Գարշատեսիլ:*
**ՉԱՐԱՊԷՍ**, Տ. *Չարաչար:*
**ՉԱՐԱՌ**, ած. *Չարից առնուած:*
**ՉԱՐԱՍԵՐՄ**, ած. *Վատ սերմից սերուած:*
**ՉԱՐԱՍԷՐ**, ած. *Չարը՝ չարութիւնը սիրող:* Հկր. *Բարեսէր:*
**ՉԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չարասէր լինելը:*
**ՉԱՐԱՍԻՐՏ**, ած. *Չար սիրտ ունեցող, չարասէր:*
**ՉԱՐԱՍՈՒՆ**, ած. *Չարիքով կմ չարիքների մէջ սնուած:* (Ախտաբ.) *Վատ սնունդ ստացող, որով չի կարող սնուել:*
**ՉԱՐԱՍՐՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չարասիրտ լինելը:*
**ՉԱՐԱՎԱՒԱՇ**, ած. *Խիստ վաւաշոտ: Հեշտամոլ:*
**ՉԱՐԱՎՈՒՇ**, գ. *Խաղողը ճմլելու հնձան:*
**ՉԱՐԱՏԱՆՋ**, ած. *Չարաչար տանջող:*
**ՉԱՐԱՏԵԱՑ**, ած. *Չարը չարութիւնը ատող:*
**ՉԱՐԱՏԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չարատեաց լինելը:*
**ՉԱՐԱՐԱՐ**, ած. գ. *Չարիք գործող, չարագործ:* Հկր. *Բարերար*:
**ՉԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չարարար լինելը:*
**ՉԱՐԱՐԿԵԼ**, բ. *Ի չարը գործ դնել:*
**ՉԱՐԱՐԿՈՒԹԻՒՆ** } գ. *Չարարկելը, իր*
**ՉԱՐԱՐԿՈՒՄ** }
*միջոցները կմ իշխանութիւնը ի չարը գործ դնելը:*
**ՉԱՐԱՐՄԱՏ**, ած. *Չար՝ վատ արմատ ունեցող:*
**ՉԱՐԱՑԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Չարացած լինելը:*
**ՉԱՐԱՓԱՌ**, ած. (կրօն.) *Ինչ որ հակառակ է կրօնի մէջ ուղիղ ճանաչուած կարծիքին:* Հկր. *Ուղղափառ:*
**ՉԱՐԱՓԱՌՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Չարափառ լինելը:*
**ՉԱՐԴ**, գ. *Անորոշ տեսակի սեւ թռչուն*

*ագռաւների ցեղից:*
**ՉԱՐԵԱՑԱՊԱՐՏ**, ած. *Չարիքների պարտական:*
**ՉԱՐԵԿԱՄ**, ած. գ. *Ոչ բարեկամ:*
**ՉԱՐԵՆՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չարենցական կերպը, ընկալումը:*
**ՉԱՐԵՆՑԱՊԱՇՏ**, ած. գ. *Չարենցի ստեղծագործութիւնը պաշտող:*
**ՉԱՐԸՄԲԵՐ**, ած. *Դժուարակիր:*
**ՉԱՐԸՆԿԱԼ**, ած. *Չարաչար կերպով իր մէջ ընդունող:*
**ՉԱՐԹ-ՉՈՒՐԹ**, միջ. *Բոցով վառուող փայտի արձակած ձայնը:*
**ՉԱՐԺԱՆԻ**, Տ. *Անարժան:*
**ՉԱՐԻԿ-ՉԱՐԻԿ**, մկ. *Չարաչար կերպով, սաստիկ:*
**ՉԱՐԻՄԱՍՏ**, ած. *Չարամիտ:*
**ՉԱՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չարիմաց լինելը:*
**ՉԱՐԻՔ**, գ. *Չար գործ, չարագործութիւն:* Հկռ. *Բարիք: Աղէտ, Վնասակար հանգամանք, փորձանք:* Փոխ. *Բախտ:*
**ՉԱՐԽԱՓԱՆ**, ած. (Կրօն.) *Չարը խափանող՝ վերացնող:*
**ՉԱՐԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Չարախորհուրդ լինելը:*
**ՉԱՐԿԱՄ**, ած. *Չարակամ:*
**ՉԱՐՀԱՄԲԱՒ**, ած. *Վատ համբաւ ունեցող:*
**ՉԱՐՈՒԵՍՏ**, գ. *Ոչ արուեստ:*
**ՉԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չար լինելը: Չարիք գործելու՝ վնասելու տրամադրութիւն: Զայրոյթ, բարկութիւն: Անկարգութիւն, անմեղ կատակներ:*
**ՉԱՐՈՒՏ**, գ. *Որեւէ վատ բան:*
**ՉԱՐՉԱՐԱԿԱՆ**, ած. *Չարչարանքի ենթակայ:*
**ՉԱՐՉԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չարչարական լինելը:*
**ՉԱՐՉԱՐԱԿԻՑ**, ած. *Ուրիշի հետ միասին չարչարուող:*
**ՉԱՐՉԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չարչարակից լինելը:*
**ՉԱՐՉԱՐԱՆ**, գ. (Կրօն.) *Չարչարանքի գործիք:*
**ՉԱՐՉԱՐԱՆՔ**, գ. *Չարչարելը, չարչարուելը: Մարմնական ցաւ: Տառապանք, վիշտ:*
**ՉԱՐՉԱՐԵԼ**, բ. *Ֆիզիկական հարուածների ենթարկել: Հարստահարել, Նեղութիւն պատճառել: Տանջել:*
**ՉԱՐՉԱՐԵԼԻ**, ած. *Ինչ որ ենթակայ է չարչարանքի:*
**ՉԱՐՉԱՐԵԼԻՈՒԹԻՒՆ**, գ. *Չարչարելի լինելը:*
**ՉԱՐՉԱՐՄՈՒՆՔ**, գ. *Չարչարանք:*
**ՉԱՐՉՐԿԵԼ**, բ. *Շարունակ չարչարել՝ նեղել:*
**ՉԱՐՓՈՒՇ**, գ. *Անորոշ տեսակի վատ խայթող մի փուշ:*
**ՉԱՐՔ**, գ. (Մնստ.) *Մատանայ:*
**ՉԱՐՔԱՇ**, ած. մկ. *Նեղութիւններ քաշած:*
**ՉԱՐՔԱՇՈՒԹԻՒՆ**, գ. *Չարքաշ լինելը:*
**ՉԱՓ**, գ. *Իրերի քանակ: Պայմանաւորուած միաւոր: Քանակը նիւթի, Տարածութիւն: Երաժշտութեան մէջ՝ արագութեան աստիճանը: Աստիճան, Կարգ, կանոն:*
**ՉԱՓԱԲԱՐ**, մկ. *Չափով:*
**ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆ**, ած. *Չափաւոր, չափով եղած:*
**ՉԱՓԱԲԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չափ պահպանելը, համաչափութիւն:*
**ՉԱՓԱԳԷՏ**, Տ. *Մաթեմատիկոս:*
**ՉԱՓԱԶԱՆՑ**, մկ. *Չափն անց կացած, չափից դուրս:*
**ՉԱՓԱԶԱՆՑԵԼ**, բ. *Իրականից շատ աւելի (կմ շատ պակաս) չափով ներկայացնել մի բան:*
**ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չափազանցելը: Ծայրայեղութիւն:*
**ՉԱՓԱԶԱՆՑՕՐԷՆ**, մկ. *Չափազանց կերպով:*

**ՉԱՓԱԽՕՍ**, ած. *Չափով խօսող:*

**ՉԱՓԱԽՕՍՈՒԹԻՒՆ**, գ. *Չափերի եւ կշիռների գիտութիւն:*

**ՉԱՓԱԾՈՅ**, ած. *Չափուած:* Հկռ. *Արձակ:*

**ՉԱՓԱԾՈՅԱՍՏԵՂԾ**, ած. *Չափածոյ ստեղծող:*

**ՉԱՓԱԾՈՅԱՑՈՒՄ**, գ. *Չափածոյ դարձնելը՝ դառնալը:*

**ՉԱՓԱԿԱՆ**, ած. *Չափի վերաբերեալ:*

**ՉԱՓԱԿԻՑ**, ած. *Չափերով իրար նման կմ հաւասար:* Հկռ. *Անչափակից:*

**ՉԱՓԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Չափակից լինելը:*

**ՉԱՓԱՀԱՍ**, ած. *Արբունքի հասած:*

**ՉԱՓԱՀԱՍԱԿ**, Տ. *Չափահաս:*

**ՉԱՓԱՀԱՍՈՒԹԻՒՆ**, գ. *Չափահաս լինելը:*

**ՉԱՓԱՆ**, գ. *Զանազան ձեւի սարածներ, որոնք ծառայում են այս կմ այն քանակը չափելու:*

**ՉԱՓԱՆԻՇ**, գ. *Նշան կմ միջոց, որով կարելի է չափել կմ գնահատել մտաւոր եւ բարոյական արժէքները:*

**ՉԱՓԱՐԱՆ**, գ. (ճարտարպ.) *Համեմատական չափ:* (Մաթեմ.) *Այն թուանըշանը, որով մի կարգի լոգարիթմը պէտք է բազմապատկել՝ ուրիշ կարգի լոգարիթմ ստանալու համար:*

**ՉԱՓԱՐԱՐ**, գ. *Հողաչափ:*

**ՉԱՓԱՒՈՐ**, ած. *Չափով, պատշաճ: Չափածոյ:*

**ՉԱՓԱՒՈՐԱԿԱՆ**, ած. Տ. *Չափաւոր:*

**ՉԱՓԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քաղաքական հարցերում միջին ճանապարհ բռնելու համակարգ:*

**ՉԱՓԱՒՈՐԱՊԷՍ**, մկ. *Չափաւոր կերպով:*

**ՉԱՓԱՒՈՐԵԼ**, բ. *Չափաւոր դարձնել:*

**ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չափաւոր՝ սահմանաւոր լինելը: Ծայրայեղութիւններից հեռու լինելը:*

**ՉԱՓԱՒՈՐՈՒՄ**, գ. *Չափաւորելը:*

**ՉԱՓԵԼ**, բ. *Որեւէ բանի քանակը որոշել:*

**ՉԱՓԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է չափել:*

**ՉԱՓԻՉ**, ած. գ. *Նա որ չափում է, չափող:*

**ՉԱՓՈՒԿ**, գ. *Փոքր կողով:*

**ՉԱՓՈՒՁԵՒԵԼ**, բ. *Չափ ու ձեւ անել:*

**ՉԱՓՈՒՄ**, գ. *Չափելը, չափուելը:*

**ՉԱՓՉՓԵԼ**, բ. *Մի քանի անգամ չափել:*

**ՉԱՓՍ**, գ. *Չափ:*

**ՉԲԵՐ**, ած. *Անբերրի, բերքը պակաս, երաշտ: Ամուլ, զաւակ չբերող:*

**ՉԳԷՏ**, ած. *Չգիտցող, անգէտ:*

**ՉԳԻՏՈՒՆ**, ած. *Անգէտ:*

**ՉԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. *Չգէտ լինելը:*

**ՉԳԻՒՏ**, գ. *Չգտնուելը:*

**ՉԳՈՅ**, գ. *Չլինելը:*

**ՉԳՈՅԱՆԱԼ**, բ. *Չգոյ դառնալ:*

**ՉԳՈՅՈՒԹԻՒՆ**, գ. *Չլինելը:*

**ՉԵԽ**, ած. գ. *Սլաւոնական ցեղից ազգութիւն:*

**ՉԵ՛Խ**, միջ. *Շունը վռնտելու բացագանչութիւն, օ՛շտ:*

**ՉԵԽԵԼ**, նբ. *Կշտամբել, յանդիմանել:*

**ՉԵԽԵՐԷՆ**, ած. գ. կմ. *Չեխերի խօսած լեզուն:*

**ՉԵԽՈՍԼՈՎԱԿ**, գ. *Չեխիայի եւ Սլովակիայի միացեալ երկիրների բնիկ՝ քաղաքացի:*

**ՉԵՂԱՐԿԵԼ**, բ. *Չեղեալ համարել:* Հկռ. *Գործարկել:*

**ՉԵՂԵԱԼ**, ած. *Չեղած:*

**ՉԵՄ, ՉԵՍ, ՉԷ**, *Եմ, ես, է օժանդակ բայի բացասական ձեւերը:*

**ՉԵՄՉՄԵԼ**, Տ. *Չեմ ու չում անել:*

**ՉԵՄ ՈՒ ԽԱՄԻ**, գ. *Անվճռականութիւն, տատանուելը:*

**ՉԵՄ ՈՒ ՉՈՒՄ**, գ. *Բերանով «չեմ» «չեմ» ասելը, չհամաձայնելը, այն-ինչ սրտանց ուզում է, նազ ծախելը:*

**ՉԵՉ**, Տ. *Չանչ:*

**ՉԵՉ**, գ. *Մեղրի խորիսխը առանց մեղրի:* Նման. *Ծաղիկ հիւանդութիւնից մարմնի վրայ մնացած փոս ընկած հետքերը:*

**ՉԵՉԱՔԱՐ**, գ. *Հրաբխային ծագում ունեցող խիստ կարծր, բայց թեթեւ՝ ծակոտկէն՝ գորշագոյն քար:*
**ՉԵՉՈՏ**, ած. *Երեսին ծաղկի չեչեր ունեցող:*
**ՉԵՉՈՏԵԼ**, բ. *Չեչոտ դառնալ, ծաղկատար լինել:*
**ՉԵՐԵԻԵԿ**, գ. (Իրաւբ.) *Ատեան կանչուած անձի երեւան չգալը:*
**ՉԵՐՉԻՐ**, գ. *Գործիք, որով բամբակը մաքրում են կորիզներից:*
**ՉԵՓՈՒՆ**, ած. *Շուտ չեփուող:*
**ՉԷ** կմ **ՉԻ**, *Եմ բայի սահմ. Ներկ. Եզ. 3-րդ դէմքը բացասական ձեւով, ոչ է:*
**ՉԷԱՆԱԼ**, բ. *Ոչ էանալ:*
**ՉԷԶՈՔ**, ած. գ. *Որ ո՛չ մէկն է, ոչ միւսը:* Տ. *Չէզոքական: Դիրք չբռնող:*
**ՉԷԶՈՔԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ չէզոք:*
**ՉԷԶՈՔԱԿԱՆ**, ած. (Քրկն.) *Բայ, որի գործողութիւնը փոխադրական չէ:*
**ՉԷԶՈՔԱՆԱԼ**, բ. *Չէզոք դառնալ:*
**ՉԷԶՈՔԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Չէզոքանալ՚ի,* նոյն նշ.:
**ՉԷԶՈՔԱՑՈՒՄ**, գ. *Չէզոքանալը:*
**ՉԷԶՈՔԱՑՈՒՑԻՉ**, ած. *Նա որ չէզոքացնում է:*
**ՉԷԶՈՔՈՒԹԻՒՆ**, գ. *Չէզոք լինելը:*
**ՉԷՐՔԷԶ**, գ. *Կովկասեան ցեղից ժողովուրդ:*
**ՉԷՐՔԷԶ**, գ. *Տղամարդկանց վրայի զգեստ:*
**ՉԷՐՔԷԶՈՒՀԻ**, գ. *Չէրքէզ կին:*
**ՉԸ՛Թ**, միջ. *Այն ձայնը, որ լսւում է մի չոր բան ճաքելիս կմ կոտրուելիս:*
**ՉԸԼԱՒ**, գ. *Փլաւի մի տեսակ:*
**ՉԸՂՁԱՆԱԼԻ**, ած. *Ոչ ըղձալի:*
**ՉԹԵՂԷՆ**, (Թրք.) ած. *Չիթ եւ նման կտորներ:*
**ՉԻԳԻՏԱՄ**, գ. (Բուս.) *Անորոշ տեսակի ծաղիկ:*
**ՉԻՄ**, ած. գ. *Բոլորը, ամենքը, ամէն ինչ:*
**ՉԻՄԱՍՏՈՒՆ**, ած. *Ոչ իմաստուն:*
**ՉԻՆԱԿԱՆ**, ած. *Չինացուն եւ Չինաստանին յատուկ:*
**ՉԻՆԱՐԷՆ**, ած. գ. մկ. *Չինացու լեզու. Չինացու լեզուով:*
**ՉԻՆԱՑԻ**, ած. գ. *Չինաստանի բնիկ:*
**ՉԻՆԱՐԻ**, գ. (Բուս.) Տ. *Սօսի:*
**ՉԻՉԽԱՆ**, գ. (Բուս.) *Վայրի փշալից թուփ:*
**ՉԻՊԱՒՈՐՈՒՄ**, գ. *Չիպի տեղադրումը:*
**ՉԻՐ**, գ. *Չորացրած միրգ:*
**ՉԻՐ-ՉԱՄԻՉ**, գ. *Մի տեսակ կերակուր, որ պատրաստում են չիրով:*
**ՉԻՓԱԿ**, գ. *Կարճ վերնազգեստ:*
**ՉԻՔ**, գ. *Ոսպաչափ պալար:*
**ՉԻՔ**, բ. *Էական բայի սահմ. եզ. 3-րդ դէմքը բացասական ձեւով:*
**ՉԼԽՏԻ**, ած. *Լիրբ, շփացած:*
**ՉԼՈ՛ՄՓ**, միջ. *Այն ձայնը, որ լսւում է, երբ մի ծանր բան զարկւում է ջրի մակերեւոյթին:*
**ՉԼՉԼԻԿ**, ած. մկ. *Խիստ բարակ վազող, ճռիկ:*
**ՉԼՊԼՏՈՒՐԻԿ**, Տ. *Չալմալալիկ:*
**ՉԼՓԻԿ**, ած. *Փողոցները թափառող:*
**ՉԽԿԱԼ**, բ. *Չը՛խկ ձայն հանել:*
**ՉԽԿԼԻ**, ած. *Կաղ:*
**ՉԽԿՈՑ**, գ. *Չխկալու ձայնը:*
**ՉԽԿՉԽԿԱՆ**, ած. *Չխկչխկացող:*
**ՉԽՉՓԵԼ**, բ. *Ծառը ցնցել՝ շարժել:*
**ՉԽՕՍ**, ած. *Քիչ խօսող:*
**ՉԽՕՍԿԱՆ**, ած. *Չխօսող:*
**ՉԽՕՍԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չխօսկան լինելը:*
**ՉԿԱՄՈՒԹԻՒՆ**, գ. *Չկամ լինելը:*
**ՉԿԱՅՈՒՆ**, Տ. *Անկայուն:*
**ՉԿԵՐ**, ած. *Շատ քիչ ուտող:*
**ՉԿԵՑՈՒ**, ած. *Ապրելու անարժան:*
**ՉՀԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Հայկականութիւն չունենալը:*
**ՉՀԱՍ**, ած. *(Ամուսնութիւն), որ պետական կմ եկեղեցական օրէնքով արգելւում էր:*

**ՉՀԱՍՈՒԹԻՒՆ**, գ. *Չհաս լինելը:*

**ՉՂՋԱԹԵԻՒԿ**, բ. (դիպվ.): *Թեւերը չղջիկի պէս թափահարելով:*

**ՉՂՋԻԿԱԲԱՆ**, գ. *Չղջիկների մասնագէտ:*

**ՉՄԱՀԱՒԱՆ**, ած. *Ոչ մի բանի չհաւանող:*

**ՉՄԱՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չմահաւան լինելը:*

**ՉՄԱՐԹԻ**, *Անկարելի է:* Հկռ. *Մարթ է:*

**ՉՄԱՐԹՈՒԹԻՒՆ**, գ. *Անմարդութիւն, տմարդութիւն:*

**ՉՄԵՂ**, ած. *Չմեղանչող:*

**ՉՄԵՂՔ**, գ. *Ոչ մեղք:*

**ՉՄՇԿԱԿԱՐ**, ած. գ. *Չմուշկներ կարող արհեստաւոր:*

**ՉՄՇԿԱՒՈՐ**, ած. *Չմուշկներ կրող:*

**ՉՄՇԿԱՐՇԱՒ**, գ. *Սառոյցի վրայ սահելով արշաւ:*

**ՉՄՇԿԵԼ**, բ. *Չմուշկներով սառոյցի վրայ սահել:*

**ՉՄՇԿՈՒՄ**, գ. *Չմշկելը:*

**ՉՄՈՒՇԿ**, գ. *Պայտած կրունկներով ու սուր քթով կօշիկ:*

**ՉՄՈՒՇԿԱԾԱՂԻԿ**, գ. (Բուս.) *Խոլորձների կարգին պատկանող բոյս:*

**ՉՄՉՄԵԼ**, Տ. *Չեմչեմել:*

**ՉՄՌԵԼ**, բ. *Խիստ եւ ուժեղ կանաչել:*

**ՉՄՔԵԼ**, բ. *Հիւթը պակասել:*

**ՉՆԱՇԽԱՐՀԻԿ**, ած. *Ոչ այս աշխարհի, այս աշխարհում չտեսնուած:*

**ՉՆՉԱՀԱՒԱՏ**, ած. *Անհաւատ:*

**ՉՆՉԵՆԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Չնչին՝ մանր մունր բաներ վաճառող, փերեզակ:*

**ՉՆՉԻԿ**, ած. *Ոչնչութիւն ներկայացնող:*

**ՉՆՉԻՆ**, ած. *Ոչինչ բան, աննշան: Շատ թոյլ: Ոչնչութիւն ներկայացնող:*

**ՉՆՉՌՆԵԼ**, բ. *Ծառի արմատի մօտից երկրորդական ծիլեր դուրս գալը:*

**ՉՈՆԹ**, ած. *Անդամալոյծ:*

**ՉՈ՛Շ**, միջ. *Ձայնարկութիւն, որով էշը կանգնեցնում են:*

**ՉՈՇՈՆ**, գ. (Մանկ.) *Էշ, իշուկ:*

**ՉՈՉ**, գ. *Դեռ ոտք չելած երեխաների չորեքթաթ գնալը:*

**ՉՈՉԱՇՈՐ**, գ. *Մանկական հագուստ:*

**ՉՈՉԵԼ**, բ. *Չորեքթաթ գնալ:*

**ՉՈՉՕ**, գ. (Մանկ.) *Հեծնելու անասուն, ձի, էշ, ջորի:*

**ՉՈՌ**,գ. *Անորոշ տեսակի ծանր հիւանդութիւն. Հարբուխ:*

**ՉՈՌՈՏ**, ած. *Չոռով վարակուած:*

**ՉՈՐ**, ած. *Խոնաւութիւն չունեցող: Չորացած,* Հկռ. *Դալար: Կարծր:* Հկռ. *Փափուկ: Կոպիտ:* Հկռ. *Մեղմ:*

**ՉՈՐԱԲԵԿ**, ած. *Որտեղ չոր հաց են կտրում ուտելու:*

**ՉՈՐԱԹՈՒՋ**, գ. *Չորացրած՝ չոր թուզ, թզան չիր:*

**ՉՈՐԱԿԵԱՑ**, ած. *Չոր կերակրով ապրող:*

**ՉՈՐԱԿԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չորակեր լինելը:*

**ՉՈՐԱՀԱՑԻԿ**, գ. *Թխուածքի տեսակ:*

**ՉՈՐԱՑԻՆ**, ած. *Անանձրեւ, երաշտ:*

**ՉՈՐԱՆԱԼ**, բ. *Խոնաւութիւնը քաշուել:*

**ՉՈՐԱՆՈՑ**, գ. *Այն տեղը, ուր խոնաւ կմ թաց իրերը փռում են չորանալու համար:*

**ՉՈՐԱՆՈՒՏ**, ած. *Չոր ու ցամաք, ապառաժուտ:*

**ՉՈՐԱՐԱՆ**, Տ. *Չորանոց:*

**ՉՈՐԱՑՈՒՄ**, գ. *Չորանալը:*

**ՉՈՐԱՑՈՒՑԻՉ**, ած. *Նա որ չորացնում է, չորացնող:*

**ՉՈՐԵԼ**, բ. *Յանդիմանել, նախատել:*

**ՉՈՐԵՂԷՆ**, ած. գ. *Չոր՝ ոչ ջրալի ուտելիքները:*

**ՉՈՐԵՓՈՑ**, ած. (*Կերակուր), որ չոր է բաւականաչափ ջուր չունի:*

**ՉՈՐԵՔԱՄԵԱՅ**, ած. մկ. *Չորս տարեկան:*

**ՉՈՐԵՔԱՄՍԵԱՅ**, ած. մկ. *Չորս ամսական:*

**ՉՈՐԵՔԱՆԿԻՒՆՈՒԹԻՒՆ**, գ. *Չորեքան-*

*կիւնի լինելը:*

**ՉՈՐԵՔԴԱՄԵԱՆ**, Տ. *Չորսդասեան:*

**ՉՈՐԵՔԹԱԹ ՏԱԼ**, *Ձեռքերի եւ ոտքերի օգնութեամբ բերնստղս շարժուել (երեխայի), չոչ անել:*

**ՉՈՐԵՔԹԵՐԹԵԱՆ**, ած. *Չորս թերթ կմ ծաղկատերեւ ունեցող (ծաղիկ):*

**ՉՈՐԵՔԺԱՄԵԱՆ**, ած. *Չորս ժամուայ, չորս ժամ տեւող:*

**ՉՈՐԵՔԿԵՐՊ**, ած. *Չորս կերպարանք:*

**ՉՈՐԵՔՀԱԶԱՐԵԱՆ**, ած. *Չորս հազարից բաղկացած:*

**ՉՈՐԵՔՇԱԲԹԻ**, ած. *Շաբաթուայ չորրորդ օրը:*

**ՉՈՐԵՔՈՐՁԱՅՈՒԹԻՒՆ**, գ. (Բուս.): *Բոյսերից ոմանց չորս որձայ կմ չորս առէջք ունենալը:*

**ՉՈՐԵՔՊԱՏԻԿ**, ած. մկ. *Չորս անգամ աւելի:*

**ՉՈՐԵՔՊԱՏԿԵԼ**, բ. *Չորս անգամ աւելացնել:*

**ՉՈՐԵՔՎԱՆԿԵԱՆ**, Տ. *Չորսվանկանի:*

**ՉՈՐԵՔՏԱՐՐԵԱՆ**, ած. *Չորս տարրեր ունեցող:*

**ՉՈՐԵՔՕՐԵԱՅ**, մկ. *Չորս օրուայ, չորս օրական:*

**ՉՈՐԹԱՆ**, գ. *Թանի մէջ մնացած պանրային եւ այլ նիւթերը:*

**ՉՈՐԹԱՆԱԳՈՂ**, գ. *Ազռաւի մի տեսակ:*

**ՉՈՐԹԱՆԱՊՈՒՐ**, գ. *Չորթանով պատրաստած ապուր:*

**ՉՈՐԹԱՆՏԱՐՈՒԿ**, ած. գ. *Չորթան տանող:*

**ՉՈՐԹԹՈՒ**, գ. *Մանր ձողիկների նման կտրտած շաղգամի թթու:*

**ՉՈՐԻՑՍ**, մկ. *Չորս անգամ:*

**ՉՈՐՆԱԼ**, Տ. *Չորանալ:*

**ՉՈՐՈՏ**, ած. *Կծծի, ժլատ:*

**ՉՈՐՈՑՔ**, գ. *Չորացրած մթերքներ:*

**ՉՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չոր լինելը:*

**ՉՈՐՈՒԿ**, ած. գ. *Չոր, չորցած:*

**ՉՈՐՈՒՏ**, ած. *Չոր, չորային:*

**ՉՈՐՊԱՍ**, գ. (Եկեղ.) *Խիստ պահեցողութիւն, ծոմ:*

**ՉՈՐՍ**, թւ. ած. *Երեք եւ մէկ: Չորս թիւը:*

**ՉՈՐՍԱԿՆԵԱՆ**, ած. *Չորս ակունք ունեցող:*

**ՉՈՐՍԱՄԵԱՅ**, ած. *Չորս տարի տեւող:*

**ՉՈՐՍԱՄՍԵԱԿ**, Տ. *Քառամսեակ:*

**ՉՈՐՍԱՉՔԱՆԻ**, ած. *Չորս աչք ունեցող:*

**ՉՈՐՍԳԼԽԱՆԻ**, ած. *Չորս գլուխ ունեցող:*

**ՉՈՐՍԴԱՍԵԱՆ**, ած. *Չորս դասարան ունեցող:*

**ՉՈՐՍԽԱԶԱՆԻ**, ած. *Որի մէջ մի տող գրելու համար չորս խազ:*

**ՉՈՐՍՀԱՐԻՒՐ**, թւ. ած. *Չորս անգամ հարիւր:*

**ՉՈՐՍՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ**, գ. *Այն տարին, երբ լրանում է չորս հարիւր տարի:*

**ՉՈՐՍՀԵՐՁՈՒԹԻՒՆ**, գ. *Չորս կտոր պատառելը:*

**ՉՈՐՍՁԵՌՆԱՆԻ**, ած. *Չորս ձեռք ունեցող:*

**ՉՈՐՍՅԱՐԿԱՆԻ**, ած. *Չորս յարկ ունեող:*

**ՉՈՐՄՆՈՑ**, ած. գ. *Չորս միաւոր պարունակող:*

**ՉՈՐՄՆՈՒԿ**, գ. *Երեքնուկ բոյսի տեսակը:*

**ՉՈՐՍՈՏԱՆԻ**, ած. *Չորս ոտք ունեցող:*

**ՉՈՐՍՎԱՆԿԱՆԻ**, ած. *Չորս վանկից բաղկացած:*

**ՉՈՐՍՏՈՂԱՆԻ**, ած. *Չորս տողից բաղկացած:*

**ՉՈՐՍՏՐԱՔԱՆԻ**, ած. *Չորս փամփուշտով լցուած, չորս անգամ միմեանց յետեւից կրակուող:*

**ՉՈՐՐԵԱԿ**, ած. գ. *Չորս միաւորից բաղկացած:*

**ՉՈՐՐՈՐԴ**, *Երեքին յաջորդող (միաւորը):*

**ՉՈՐՐՈՐԴԵԱՆ**, ած. *Չորրորդ անգամ ամուսնացող:*

**ՉՈՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Չորս տարրերից բաղկացած լինելը:*

**ՉՈՐՑՆԵԼ**, Տ. *Չորացնել:*

**ՉՈՐՑՈՒԿ**, ած. *Չորացած:*

**ՉՈՐՓԱՅՏ**, գ. (Ծածկ.) *Մզկիթի մինաբայ:*

**ՉՈՐՔ ԵՒ ՏԱՄՆ**, Տ. *Չորեքտասան:*

**ՉՈՐՔՈՏԱՆԵԱՅ**,Տ. *Չորքոտանի:*

**ՉՈՐՔՈՏԱՆԻ**, ած. գ. *Որեւէ կենդանի, որ չորս ոտքով է ման գալիս:*

**ՉՈՒ**, գ. *Ընդհանրապէս՝ տեղից տեղ գընալը, տեղափոխութիւն ցամաքով կմ ջրով: Զօրքի ճանապարհ գնալը կազմով: Թռչունների տեղափոխութիւնը աշնանը:*

**ՉՈ՛Ւ**, միջ. *Ձայնարկութիւն, որով քշու մ են էշը կմ ձին:*

**ՉՈՒԱԿԱՆ**, ած. *Չուի՝ չուելու վերաբերեալ:*

**ՉՈՒԱՆ**, գ. *Կանեփէ հիւսուած լար:*

**ՉՈՒԱՆԱԳՕՏԻ**, ած. *Չուանով գօտեւորուած:*

**ՉՈՒԱՆԱԳՕՏԻ**, գ. *Չուանէ գօտի կապող:*

**ՉՈՒԱՆԱԽԱՂԱՑ**, Տ. *Լարախաղաց:*

**ՉՈՒԱՆԱՁԳՈՒԹԻՒՆ**, գ. *Չուանով քաշելը:*

**ՉՈՒԱՆԱՁԻԳ**, գ. *Մշակ, որ չուանով լծուում էր նաւին եւ չուանը քաշելով նաւը շարժում էր առաջ:*

**ՉՈՒԱՆԱՄԱՆ**, ած. գ. *Չուան մանող, չուան շինող արհեստաւոր:*

**ՉՈՒԱՆԱՔԱՔ**, ած. *Չուանի նման հաստ քաքնող:*

**ՉՈՒԱՆԵՂԷՆ**, ած. *Չուանից շինուած, չուանեայ:*

**ՉՈՒԱՌ**, Տ. *Թշուառ:*

**ՉՈՒԱՑՈՒՑԱԿ**, գ. *Ցուցակ, որտեղ նշանակուած են երկաթուղային՝ նաւային օդային կմ այլ պարբերական հաղորդակցութիւնների երթեւեկի ժամերը:*

**ՉՈՒԳՈՒՆ**, գ. (Քիմ.) *Երկաթի մի տեսակը:*

**ՉՈՒԳՈՒՆԷ**, ած. *Չուգունից պատրաստուած:*

**ՉՈՒԵԼ**, բ. *Չու ելնել, ճանապարհ ընկնել: Մեկնիլ:*

**ՉՈՒԶԵԱՆ**, ած. գ. *Չուզող:*

**ՉՈՒԿԷՏ**, գ. *Այն կէտը, այն տեղը, որտեղից չուն սկսուում է:*

**ՉՈՒՄ**, գ. *Թանից պատրաստած անհամ ու փխրուն պանիր:*

**ՉՈՒՆԳՈՒՐ**, Տ. *Չոնգուր: Թառի նման լարային նուագարան:*

**ՉՈՒՆԵՒՈՐ**, ած. *Հարստութիւն չունեցող, չքաւոր:*

**ՉՈՒՆԵՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Չունեւոր լինելը:*

**ՉՈՒՆԻՄՈՒԹԻՒՆ**, գ. *Հարստութիւն չունենալը:*

**ՉՈՒՆԿ**, գ. *Ծառի բունի վրայ կտրած ճիւղի տեղում մնացած ուստ՝ անհարթութիւն:*

**ՉՈ՛ՒՇ**, միջ. *Ձայնարձակութիւն, որով կանգնեցնում են գնացող էշը:* Նման. *Յանդիմանական եւ զայրոյթի բացականչութիւն:*

**ՉՈՒՉԻԿ**, գ. (Մանկ.) *Երեխայի զգեստ:*

**ՉՈՒՌ**, ած. *Գանգուր:*

**ՉՈՒՌ**, ած. *Շատ շէկ (մազ):*

**ՉՈՒՌ ՈՒ ՂՈՒՌ ԱՆԵԼ**, *Գետնից ձեռքով միանգամից սրբել-հաւաքել:*

**ՉՈՒՐ**, մկ. *Մինչեւ:*

**ՉՈՒՔԱՅ**, գ. (Կենդ.) *Թառափների ցեղից, բայց նրանցից փոքր համեղ ձուկ:*

**ՉՈՓ ՏԱԼ**, *Երկու ափով ջուրը երեսին զարնել:*

**ՉՈՓԻՆ**, գ. (Մանկ.) *Լուացուելը, ջրով չոփ տալը:*

**ՉՈՓ-ՉՈՐ**, ած. *Բոլորովին չոր, շատ չոր:*

**ՉՈՔԵԼ**, բ. *Ծնկան կմ ծնկերի վրայ կանգնել:*

**ՉՈՔԷՉՈՔ**, մկ. *Չոքած դրութեամբ ծընկների վրայ քայլելով:*

**ՉՈՒՔԻ-ՊՈՒԿԻ ԱՆԵԼ,** բ. *Ջերմեռանդ երկիւղածութեամբ ծնրադրել, աղօթել։*

**ՉՈՔՄԱՆ,** մկ. *Ծունկ չոքած։*

**ՉՈՔՌՏԵԼ,** բ. *Շարունակ չոքել։*

**ՉՌԵԼ,** բ. *Լայն բանալ։ Աչքերը զարմանքից կմ սարսափից լայն բանալ։*

**ՉՌԹԵԼ,** բ. *Դդմի արեւածաղկի եւն կորիզը ատամներով կոտրել։ Դանակով սոխը մանր կտրատել։*

**ՉՍԹԻԿ,** ած. *Շատ թոյլ կազմուածքով։*

**ՉՍՏԼԻԿ,** ած. *Չուստ։*

**ՉՎՇՏԱՍԷՐ,** ած. *Վշտեր՝ նեղութիւններ չսիրող։*

**ՉՏԵՍ,** ած. գ. *Չտեսնող, Բան չտեսած։*

**ՉՏԵՍՈՒԹԻՒՆ,** գ. *Չտես լինելը։*

**ՉՏԻԿ,** գ. *Անորոշ ցեղի թռչուն։*

**ՉՐԱԳՈՐԾ,** գ. *Չրագործութեամբ զբաղուող մարդ։*

**ՉՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ,** գ. *Չիր պատրաստելը։*

**ՉՐԹԻ-ՎԻՐԹԻ,** գ. *Դատարկաբանութիւն, ցնդաբանութիւն։*

**ՉՐԹՉՐԹԱԼԻ,** մկ. *Չրթչրթալով։*

**ՉՓՈՅԹ,** գ. *Անփոյթ լինելը։*

**ՉՓՉՓԱԼ,** բ. *Չը՛փ-չըփ ձայն հանել։ Թրջած շորը մի բանի դիպչելիս չը՛փ-չը՛փ ձայն հանել։*

**ՉՓՉՓԱՑՆԵԼ,** անց.ձեւ *Չփչփալ՚ի։*

**ՉՓՉՓՈՑ,** գ. *Չփչփալու ձայնը։*

**ՉՔԱՀԱՆԱՅ,** գ. (Կրօն.) *Ոչ քահանայ։*

**ՉՔԱՆԱԼ,** բ. *Չիք դառնալ, կորչել։*

**ՉՔԱՍՏԱՆ,** ած. գ. *Չիք դառնալու երկիր։*

**ՉՔԱՏԱԿ,** գ. *Անորոշ տեսակի բժշկական բոյս։*

**ՉՔԱՅՈՒՄ,** գ. *Չքանալը,։*

**ՉՔԱՒՈՐ,** ած. *Կարողութիւն չունեցող*։ *Աղքատ։* Հկռ. *Ունեւոր։*

**ՉՔԱՒՈՐԱԳՈՅՆ,** բաղդ. աստ. *Չքաւոր՚ի, Աւելի չքաւոր։*

**ՉՔԱՒՈՐԱԿԱՆ,** Տ. *Չքաւոր։*

**ՉՔԱՒՈՐԵԼ,** բ. *Չքաւոր դառնալ։*

**ՉՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ,** գ. *Չքաւոր լինելը։*

**ՉՔՄԵՂ,** ած. *Մեղք չունեցող։*

**ՉՔՄԵՂԱՆՔ,** գ. *Իր անմեղ լինելն ապացուցել ջանալը։*

**ՉՔՄԵՂԵԼ,** բ. *Ջանալ ապացուցել իր անմեղութիւնը։*

**ՉՔՄԵՂԱՆՔ,** գ. *Իր անմեղ լինելն ապացուցել ջանալը։*

**ՉՔՄԵՂԵԼ,** բ. *Ջանալ ապացուցել իր անմեղութիւնը։*

**ՉՔՄԵՂՈՒԹԻՒՆ,** գ. *Չքմեղ լինելը։*

**ՉՔՆԱՂ,** ած. *Աննման, իր նմանը չունեցող։*

**ՉՔՆԱՂԱԳԵՂ,** ած. *Չքնաղ գեղեցկութեամբ։*

**ՉՔՆԱՂԱԴԷՄ,** ած. *Չքնաղ դէմքով։*

**ՉՔՆԱՂԱԶԱՐԴ,** ած. *Չքնաղ կերպով զարդարուած։*

**ՉՔՆԱՂԱԶԳԵՍՏ,** ած. *Չքնաղ զգեստներ կրող։*

**ՉՔՆԱՂԱԿԵՐՏ,** ած.*Գեղեցիկ շինուած, հոյակերտ։*

**ՉՔՆԱՂԱԿԵՐՊ,** ած. *Չքնաղ կերպարանքով։*

**ՉՔՆԱՂԱՁԵՒ,** ած. *Չքնաղ ձեւով։*

**ՉՔՆԱՂԱՏԵՍ,** ած. *Չքնաղ տեսք ունեցող։*

**ՉՔՆԱՂՈՒԹԻՒՆ,** գ. *Չքնաղ լինելը։*

**ՉՔՈՒԵԼ,** բ. *Չիք դառնալ։*

**ՉՕՐԻՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ,** գ. *Օրինաւոր չլինելը։*

**ՉՕՐՏԻԿ, ՉՈՐՏԻԿ,** գ. (Բուս.) *Panaces asclepin թուփը։*

# *Պ, պ*

**Պ. պէ**, գ. *Հայերէն այբուբէնի քսանվեցերորդ տառը եւ քսաներորդ բաղաձայնը: Թուարկութեան ութ հարիւրի համարժէք: Ութ հարիւրերորդ:*

**ՊԱԳ**, գ. *Պագնելը, համբոյր, պաչ:*

**ՊԱԳԵԼ**, Տ. *Պագնել:*

**ՊԱԳԻԿ**, (Փաղաքշ.), գ. *Համբոյրիկ, քընքոյշ համբոյր:*

**ՊԱԳՆԵԼ**, բ. *Համբուրել, պաչել:*

**ՊԱԳՎՏԵԼ**, բ. *Իրար հետ համբուրուել:*

**ՊԱԹԵԼ**, բ. *Յարմարուել:*

**ՊԱԼԱԺՈՐԵԼ**, բ. *Տապալել:* Փոխ. *Միրտը կոտրուել:*

**ՊԱԼԱՆ-ՊԱԼԱՆ**, Տ. *Բալան-բալան:* Հմմտ. *Պալ:*

**ՊԱԼԱՆՏՐԱԿ**, գ. *Կարճ զաւազան:*

**ՊԱԼԱՊԱՆ**, ած. *Խոշոր, ահագին:*

**ՊԱԼԱՍԱՆ**, Տ. *Բալասան:*

**ՊԱԼԱՏ**, գ. *Շքեղ տուն, որտեղ բնակուում է թագաւորը. ապարանք:*

**ՊԱԼԱՏԱԿԱՆ**, ած. *Պալատի վերաբերեալ:*

**ՊԱԼԱՐ**, գ. (Ախտար.) *Մարմնի որեւէ մասի ծաւալի հիւանդագին մեծացումը: Թարախոտ վէրք:*

**ՊԱԼԱՐԱԲԱՐ**, մկ. *Պալարի նման:*

**ՊԱԼԱՐԱԾԻՆ**, ած. *Պալարներ ծնող:*

**ՊԱԼԱՐԱՅԻՆ**, ած. *Պալարին յատուկ:*

**ՊԱԼԱՐՈՏ**, ած. *Պալարախտով հիւանդ:*

**ՊԱԼԱՔ-ՊԱԼԱՔ**, Տ. *Բալան-բալան:*

**ՊԱԼԷՈԼԻԹ**, ած. գ. (Հնագր.) *Քարային շրջանի նախնական ժամանակը:*

**ՊԱԼԻՈՒՆ**, գ. (Եկեղ.) *Քահանայական* եմիփորոն: *Եկեղեցիական զգեստի մաս:*

**ՊԱԼԼԱԴԻՈՆ**, գ. (Քիմ.) *Պարզ մետաղ արծաթագոյն սպիտակ, կռանելի եւ շատ պինդ:*

**ՊԱԽԱՃՃԱՄ**, գ. *Կարկանդակի մի տեսակ:*

**ՊԱԽԱՐԱԿԱՆՔ**, գ. *Պախարակելը, պախարակութիւն:*

**ՊԱԽԱՐԱԿԵԼ**, բ. *Պարսաւել:*

**ՊԱԽԱՐԱԿԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է կմ պէտք է պախարակել:*

**ՊԱԽԱՐԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Պախարակելը:*

**ՊԱԽՃԱՒԱՆԴ**, գ. *Կնոջ լանջապան, սէղմիրան:*

**ՊԱԽՈՒՑ**<br>**ՊԱԽՈՒՐՑ** } գ. *Ձիու սանձ:*

**ՊԱԽՈՒՐՑԱԹԱՓ**, ած. *Պախուրցը թափած: Սանձաթափ:*

**ՊԱԽՈՒՑԵԼ**, բ. *Սանձել:*

**ՊԱԽՐԱԿՈՎ**, գ. *Պախրայի կովը, էգ այծեամ:*

**ՊԱԽՐԱՅ**, գ. *Այծեամ:*

**ՊԱԽՐԷ**, գ. *Ընդհանրապէս՝ տաւար, եզ, կով, արջառ:*

**ՊԱԽՐՈՒՃԻ**, գ. (Բուս.) *Անորոշ տեսակի փոքր ծառ կմ թուփ:*

**ՊԱԿ**, գ. *Կանացի զարդ:*

**ՊԱԿ**, գ. *Վախ, երկիւղ:*

**ՊԱԿԱԳՈՐԾ**, գ. *Արհեստաւոր, որ գոհարեղէն զարդեր է շինում:*

**ՊԱԿԱՍ**, ած. *Ոչ ամբողջ, թերի, անկատար: Քիչ, սակաւ: Ինչ որ չկայ:* մկ. *Պակաս կերպով, պակաս չափով:*

**ՊԱԿԱՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Պակաս՝ քիչ խօսելը:*

**ՊԱԿԱՍԱԲԱՐ**, մկ. *Պակաս կերպով՝ չափով:*

**ՊԱԿԱՍԱԿԱՆ**, ած. *Պակասութիւն արտայայտող:*

**ՊԱԿԱՍԱԿՈՂ**, գ. *Պակաս կողմը:*

**ՊԱԿԱՍԱՀՈՂ**, ած. *Որտեղ կմ որի հողը*

*պակաս է:*
ՊԱԿԱՍԱՄԻՏ, ած. *Խելքը պակաս:*
ՊԱԿԱՍԱՄՏԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Պակասամիտ'ի, Աւելի պակասամիտ:*
ՊԱԿԱՍԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. *Պակասամիտ լինելը:*
ՊԱԿԱՍԱՄՕՐՈՒՔ } ՊԱԿԱՍԱՄՕՐՈՒՍ } ած. *Որի մօրուքը ցանցառ է:*
ՊԱԿԱՍԱՒՈՐ, ած. *Պակասութիւն՝ որեւէ արատ ունեցող:*
ՊԱԿԱՍԵԼ, բ. *Թերի լինել, ամբողջութիւն չկազմել: Չլինել, չգտնուել: Չքաւականանալ:*
ՊԱԿԱՍԸՆԹԱՑ, ած. *Ընթացքը պակաս:*
ՊԱԿԱՍԻԿ ԳԱԼ, *Կեանքը պակասել:*
ՊԱԿԱՍՈՐԴ, գ. *Պակաս մնացած մասը:*
ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ, գ. *Պակաս լինելը, բացակայութիւն: Մարմնական կմ բարոյական արատ, թերութիւն:*
ՊԱԿԱՎԱՃԱՌ, Տ. *Գոհարավաճառ:*
ՊԱԿԵՑՈՒՑԱՆԵԼ, Տ. *Պակուցանել:*
ՊԱԿՇՈՏ, ած. *Յանկասէր:*
ՊԱԿՇՈՏԱԲԱՐ, մկ. *Իբրեւ պակշոտ:*
ՊԱԿՇՈՏԱԿԱՆ, ած. *Պակշոտին յատուկ, վերաբերեալ, ցանկական:*
ՊԱԿՇՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Յանկասիրութիւն:*
ՊԱԿՈՒՑԻՉ, ած. *Ահարկու, սարսափելի:*
ՊԱԿՈՒՑՈՒՄ, գ. *Ահաբեկելը, ահաբեկուելը: Սոսկում:*
ՊԱԿՉԵԼ, բ. *Ահաբեկուել, երկիւղ զգալ:*
ՊԱԿՍԵԼ, բ. Տ. *Պակասել:*
ՊԱԿՍՈՒԹԻՒՆ, Տ. *Պակասութիւն:*
ՊԱՀ, գ. *Արմատ պահել'ի. պահելը: Երեք ժամուայ ժամանակ, որի ընթացքում պահապանը պահպանութիւն էր անում: Ընդհանրապէս՝ կարճ ժամանակ:*
ՊԱՀԱԳՈՒՆԴ, Տ. *Կայազօր:*
ՊԱՀԱԴԱՐԱԿ, գ. *Այցելուի ձեռքի իրերը ժամանակաւորապէս պահելու դարակ:*
ՊԱՀԱԴԱՐԱՆ, գ. *Իրեր պահելու տեղ՝ պահարան:*
ՊԱՀԱԺԱՄԿԷՏ, գ. *Պահելու ժամկէտ:*
ՊԱՀԱԾՈՅ, ած. *Կարեւոր դէպքի համար պահուած (կենսամթերք), պահծու:*
ՊԱՀԱԿ, գ. *Պահապան, պահպանող: Ներկայումս՝ զինուորների մեծ կմ փոքր խումբ, որ պահպանում է պետական մթերանոցները, բանտերը, հասարակական բարեկարգութիւնը:*
ՊԱՀԱԿԱԴԻՐ, ած. *Պահակ դնող:*
ՊԱՀԱԿԱԶՕՐՔ, գ. *Զինուորների խումբ:*
ՊԱՀԱԿԱԽՈՒՄԲ, գ. *Պահակների խումբ:*
ՊԱՀԱԿԱԽՈՒՄԲ, Տ. *Պահակազօրք:*
ՊԱՀԱԿԱՇՈՒՆ, գ. *Պահակի շուն:*
ՊԱՀԱԿԱԿԷՏ, գ. *Այն տեղը, որտեղ պահակը կանգնում է պահպանութեան համար:*
ՊԱՀԱԿԱՆԱՒ, գ. *Զինուորական նաւ, որ նաւահանգիստների մօտ որոշ ոստիկանական պաշտօն է կատարում:*
ՊԱՀԱԿԱՆՈՅ, գ. *Շէնք, որտեղ պահակն ապրում է:*
ՊԱՀԱԿԱՊԱՆ, գ. *Պահակ, պահապան:*
ՊԱՀԱԿԱՊԵՏ, գ. *Պահակների պետը՝ գլխաւորը:*
ՊԱՀԱԿԱՓՈԽ, գ. *Պահակի փոխուելը, պահակի հերթափոխութիւն:*
ՊԱՀԱԿԵԼ, բ. *Պահակ՝ պահապան լինել:*
ՊԱՀԱԿԵՐ, գ. *Պահպանութիւն անող, պահապան, գիշերապահ:*
ՊԱՀԱԿԵՐՈՒԹԻՒՆ, գ. *Պահանորդութիւն:*
ՊԱՀԱԿԻՑ, ած. *Պահեցողութեան մասնակից՝ ընկեր:*
ՊԱՀԱԿՈՒԹԻՒՆ, գ. Պահակ լինելը:
ՊԱՀԱՅՈՅԶ, ած. գ. *Գիշերուայ պահապան:*

**ՊԱՀԱՆՈՐԴ**, ած. գ. *Պահպանութիւն անող:*

**ՊԱՀԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Պահանորդ լինելը:*

**ՊԱՀԱՆՈՑ**, գ. *Արգելարան, բանտ:*

**ՊԱՀԱՆՋ**, գ. *Ստիպողական կարիք: Ինչ որ մէկը իրաւունքով կամ բռնութեամբ ուզում է ուրիշից: Պարտադիր հրաման,* Իրաւունք: (Հաշուապ.) *Հաշուապահական մատեանում մէկի անունով բացուած հաշուի այն երեսը, որտեղ նշանակուում է, թէ այդ մարդը ո՞րքան ստանալիք ունի:* Հկռ. *Պարտք:*

**ՊԱՀԱՆՋԱԿԱՆ**, ած. *Պահանջի վերաբերեալ:*

**ՊԱՀԱՆՋԱՆՔ**, Տ. *Պահանջ:*

**ՊԱՀԱՆՋԱՏԷՐ**, գ. *Պահանջի տէր:*

**ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Պահանջատէր լինելը:*

**ՊԱՀԱՆՋԱՐԱՆ**, գ. *Դատարան:*

**ՊԱՀԱՆՋԱՐԿՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Պահանջարկուած լինելը:*

**ՊԱՀԱՆՋԵԼ**, բ. *Իրաւունքով կամ բռնութեամբ մի բան ուզել ուրիշից: Ստիպել, վրէժխնդիր լինել: Ինչ որ իրաւունք ուզել:*

**ՊԱՀԱՆՋԵԼԻ**, ած. *Ինչ որ կարելի է կամ պէտք է պահանջել:*

**ՊԱՀԱՆՋԵԼԻՔ**, գ. *Ինչ որ մէկը պահանջ ունի ուրիշից:*

**ՊԱՀԱՆՋԻՉ**, ած. *Վրէժխնդիր:*

**ՊԱՀԱՆՋԿՈՏ**, ած. *Շատ պահանջներ անող, խստապահանջ:*

**ՊԱՀԱՆՋԿՈՏՈՒԹԻՒՆ**, գ. *Պահանջկոտ լինելը:*

**ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ**, գ. *Պահանջելիք:*

**ՊԱՀԱՆՋՈՂՈՒԹԻՒՆ**, Տ. *Պահանջկոտութիւն:*

**ՊԱՀԱՆՋՈՒՄ**, գ. *Պահանջելը:*

**ՊԱՀԱՆՋՔ**, Տ. *Պահանջում:*

**ՊԱՀԱՆՑԻԿ**, ած. *Անցողիկ:*

**ՊԱՀԱՆՔ**, գ. *Արգելքի տակ պահելը, բանտարկութիւն:*

**ՊԱՀԱՊԱՆ**, գ. *Նա որ պահպանում է մէկին կամ մի բան: Պետական ստորին պաշտօնեայ:*

**ՊԱՀԱՊԱՆԱՊԵՏ**, գ. *Պահապանների պետը:*

**ՊԱՀԱՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Պահապան լինելը:*

**ՊԱՀԱՏԵՂ**, գ. *Դրամատներում անձնական իրերի երաշխաւորուած պահպանութեան համար տրամադրուող դարակ:*

**ՊԱՀԱՐԱՆ**, գ. *Շինութեան մէջ բաժանմունք, որտեղ պահում են իրեր, մթերքներ: Փոքր տուփ, որի մէջ դնում եւ պահում են մի թանկարժէք իր:*

**ՊԱՀԱՐԱՆ**, գ. *Նամակի, թղթի պահպանակ:*

**ՊԱՀԱՐԱՆԵԼ**, բ. *Պահարանի մէջ դնել՝ ամփոփել:*

**ՊԱՀԱՐԿԵԼ**, բ. *Պահապանութիւն անել:*

**ՊԱՀԱՐԿՈՒ**, Տ. *Պահապան:*

**ՊԱՀԱՑՈՅՑ**, ած. գ. *Գիշերապահ, որ զանգակը խփելով ցոյց է տալիս պահերը, ժամերը:*

**ՊԱՀԵԼ**, բ. *Պահպանել: Հսկել մի բանի վրայ, խնամք ունենալ, պաշտպանել, ծածկել: Ուրիշից թաքցնել: Պաս բռնել, Շարունակել մնալ նոյն վիճակում: Զսպել, սանձահարել: Կառավարել:*

**ՊԱՀԵԿՈՒԹԻՒՆ**, գ. *Պահեկ լինելը:*

**ՊԱՀԵՆԻ**, ած. *Մաքուր պահուած:*

**ՊԱՀԵՍՏ**, գ. *Պահելը, Պահպանութիւն: Այն տեղը, որտեղ պահում են ապրանքներ:* ած. *Պահած:*

**ՊԱՀԵՍՏԱՅԻՆ**, ած. գ. *Պահեստի (զինուոր):*

**ՊԱՀԵՍՏԱՏԵՂ**
**ՊԱՀԵՍՏԱՐԱՆ** } գ. *Ապրանք՝ մթերք եւն պահելու տեղ, պահեստ:*

**ՊԱՀԵՍՏԻ**, ած. *Պահած ապագայ կարիքի համար:*

**ՊԱՀԵՑՈՂ,** ած գ. *Պաս բռնող:*

**ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ,** գ. *Պաս պահելը:*

**ՊԱՀԷՋԻԿ,** գ. *Կաթոլիկ կրօնաւորների գլխի գագաթին ածիլուած տեղը:*

**ՊԱՀԻԿ,** գ. *Փոքր՝ կարճ ժամանակ:*

**ՊԱՀԼԱՒ,** Տ. *Պարթեւ:*

**ՊԱՀԼԱՒԵՐԷՆ,** ած. գ. մկ. *Միջին պարսկերէն լեզուն:*

**ՊԱՀԼԱՒԱԿԱՆ,** ած. *Պահլաւների վերաբերեալ:*

**ՊԱՀԾՈՒ,** ած. *Պահած:*

**ՊԱՀՆԱԼ,** բ. *Զուգաւորութիւնից բեղմընաւորուել, յղիանալ:*

**ՊԱՀՆԷՊԱՀ,** մկ. *Մի պահից մի պահ, երբեմն երբեմն:*

**ՊԱՀՆՈՐԴ,** գ. *Պահանորդ, պահապան: Գաղտնի ոստիկան:*

**ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ,** ած. *Պահնորդին յատուկ:*

**ՊԱՀՆՈՐԴԵԼ,** բ. *Պահնորդութիւն անել:*

**ՊԱՀՆՈՐԴՈՒԹԻՒՆ,** գ. *Պահնորդ լինելը:*

**ՊԱՀՆՏՈՒԵԼ,** Տ. *Պահուտել:*

**ՊԱՀՈՒԱՆԴ,** գ. *Մի բան՝ մանուանդ գիրք պահելու տեղ:*

**ՊԱՀՈՒՍՏ,** գ. *Պահեստ:*

**ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ,** ած. *Պահուստին վերաբերող:*

**ՊԱՀՊԱՀ,** գ. (Մանկ.) *Պահելը:*

**ՊԱՀՊԱՆԱԽՈՒՄԲ,** գ. *Պահպանների խումբ:*

**ՊԱՀՊԱՆԱԿ,** գ. *Ինչ որ մարմինը պահպանում է զէնքի հարուածից:*

**ՊԱՀՊԱՆԱԿԱՆ,** ած. *Պահպանող:*

**ՊԱՀՊԱՆԱԿԻՑ,** ած. *Պահպանութեան ընկեր:*

**ՊԱՀՊԱՆԱՆԻՒԹ,** գ. *Պահպանելու նիւթ:*

**ՊԱՀՊԱՆԱՊԵՏ,** Տ. *Պահապանապետ:*

**ՊԱՀՊԱՆԱՐԱՆ,** գ. *Պահպանութեան՝ պահելու՝ պատսպարելու տեղ:*

**ՊԱՀՊԱՆԵԼ,** բ. *Իբրեւ պահապան հսկել: Հովանի լինել, ապահով պահել: Պահել անկորուստ:*

**ՊԱՀՊԱՆԻՉ,** ած. *Նա որ պահպանում է:* գ. (Եկեղ.) *Կարճ աղօթք:*

**ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ,** ած. *Պահպանութեան վերաբերեալ:*

**ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Պահպանողական լինելը:* Հկռ. *Առաջադիմականութիւն:*

**ՊԱՀՊԱՆՈՐԴ,** գ. *Պահապան:*

**ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Պահպանելը, պաշտպանութիւն:*

**ՊԱՀՊԱՆՈՒՄ,** գ. *Պահպանելը:*

**ՊԱՀՊՀԵԼ,** բ. *Այս եւ այնտեղ պահել:*

**ՊԱՀՍ,** Տ. *Պաս, Պահք:*

**ՊԱՀՈՒԸՏԵԼ,** բ. *Այս եւ այնտեղ պահուել, թաք կենալ:*

**ՊԱՀՈՒԸՏՈՑԻԿ,** գ. *Երեխաների խաղերը մէկը պահ է մտնում (թաք է կենում):*

**ՊԱՀՈՒԸՏՈՒՔ,** գ. *Պահ մտնելը, թաք կենալը:*

**ՊԱՀՐԷԶ,** գ. *Պահք, ծոմապահութիւն:*

**ՊԱՀՔ,** Տ. *Պաս:*

**ՊԱՂ,** գ. *Սառոյց, ցրտութիւն, սառն, ցուրտ:* Հկռ. *Տաք: Համակրութիւն չշարժող: Ոչ սիրալիր, չոր:* Հկռ. *Ջերմ: Անպատշաճ:*

**ՊԱՂԱԾ ԱՊՈՒՐ,** Տ. *Պաղերես:*

**ՊԱՂԱԿ**
**ՊԱՂԱԿՆ** } Տ. *Պաղպաղակ:*

**ՊԱՂԱՆԱԼ,** բ. *Սառչել:*

**ՊԱՂԱՊՈՒՐ,** գ. *Լոբուց եւ կորկոտից պատրաստած խիւս:* Փոխ. Տ. *Պաղերես:*

**ՊԱՂԱՌՈՒԹԻՒՆ,** գ. *Պաղ, ցուրտ անելը, մրսելը:*

**ՊԱՂԱՏ,** գ. *Պաղատանք:*

**ՊԱՂԱՏԱԳԻՆ,** ած. մկ. *Մեծ պաղատանքով:*

**ՊԱՂԱՏԱԽԱՌՆ,** ած. *Որի մէջ խառնուած է պաղատանք:*

**ՊԱՂԱՏԱՆՔ,** գ. *Թախանձագին խնդրուածք:*

ՊԱՂԱՏԱԻՈՐ, ած. *Պաղատանք անող:*
ՊԱՂԱՏԵԼ, բ. *Թախանձագին խնդրել:*
ՊԱՂԱՏՏԻԿ, գ. *Չոր ընկոյզի, թզի կմ այլ պտուղների շարոց:*
ՊԱՂԱՏՈՒՄ, գ. *Պաղատելը: Աղաչաքը:*
ՊԱՂԱՐԱՐ, ած. գ. *Նա որ պաղ՝ սառն ըմպելիքներ է պատրաստում:*
ՊԱՂԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Պաղարարի արհեստը:*
ՊԱՂԱՐԻՒՆ, ած. (Կենդ.) *Պաղ արիւն ունեցող (կենդանի):* Փոխ. *Չյուզուող, չշփոթուող: Սառնասիրտ:*
ՊԱՂԱՐԻՒՆՈՒԹԻՒՆ, գ. *Պաղարիւն լինելը: Սառնասրտութիւն:*
ՊԱՂԱՐԻՒՆՕՐԷՆ, մկ. *Պաղարիւն կերպով:*
ՊԱՂԲԵՐԱՆ, ած. *Ապուշ կտրած:*
ՊԱՂԲԵՐՆԵԼ, բ. *Պաղել, ապշած մնալ:*
ՊԱՂԵԼ, բ. *Պաղ՝ սառոյց դառնալ, Ապշած մնալ:* Փոխ. *Մի բանից սառչել: Շիպ, արզն:*
ՊԱՂԵՐԵՍ, ած. *Պաղ երես՝ դէմքի պաղ արտայայտութիւն ունեցող:*
ՊԱՂԵՑՈՒՑԻՉ, ած. *Նա որ պաղեցնում է, պաղեցնող:*
ՊԱՂԼԵՂ, գ. *Պաղ լեղ* (Քիմ.) *Քիմիական աղ:*
ՊԱՂԼԵՂԱԾԻՆ, Տ. *Ալիւմինիոն:*
ՊԱՂԼԵՂԱՀԱՆՔ, գ. *Պաղլեղի՝ շպի, հանք:*
ՊԱՂԼԵՂԱՅԻՆ, ած. *Պաղլեղի շպի պարունակող:*
ՊԱՂԼԵՂԱՔԱՐ, գ. (Հանք.) *Բիւրեղային քարեղէն նիւթ սպիտակ կմ գորշ գոյնով:*
ՊԱՂԼԵՂԻԿ, գ. (Քիմ.) *Պաղլեղի թթուկ:*
ՊԱՂԼԵՂՈՒՄ, գ. *Պաղլեղելը:*
ՊԱՂԼԻԿ, ած. *Բաւական պաղ:*
ՊԱՂՄԻՍ, գ. *Խաշած ու պաղեցրած միս:*
ՊԱՂՇԱՔԱՐ, *Պաղ շաքար:*
ՊԱՂՇԿԵԼ, բ. *Ջովանալ:*
ՊԱՂՇՈՐԹ, ած. *Տժգոյն:*
ՊԱՂՈՐԱԿ, ած. *Սառնորակ:*
ՊԱՂՈՒԹԻՒՆ, գ. *Պաղ՝ սառը՝ ցուրտ լինելը:*
ՊԱՂՈՒԿ, ած. *Հաճելի սառնութիւն ունեցող:*
ՊԱՂՊԱՂԱԿ, գ. Տ. *Վանակն:* Փոխ. Տ. *Պաղերես: Սառնանոյշ:*
ՊԱՂՊԱՂԱԿԱՎԱՃԱՌ, ած. *Պաղպաղակ շինող ու վաճառող:*
ՊԱՂՊԱՋԵԼ, բ. *Փայլել, շողալ. փայփլել:*
ՊԱՂՊԱՋՈՏ, ած. *Պաղպաջներ՝ փայլուն բծեր կմ սպիներ ունեցող:*
ՊԱՂՊԱՋՈՒՄ, գ. *Պաղպաջելը:*
ՊԱՂՊԱՋՈՒՆ, ած. *Պսպղացող:*
ՊԱՂՊՂԻԿ, ած. *Պաղորակ:*
ՊԱՂՍԻՐՏ, Տ. *Պաղարիւն:*
ՊԱՂՍՐՏԵԼ, բ. *Սիրտը մէկից սառել:*
ՊԱՂՏԱՍԱՐ, Տ. *Պաղերես:*
ՊԱՂՔԱՇ, ած. *Ցուրտը իրեն քաշող:*
ՊԱՃ, գ. *Ցորենի եւ այլ ընդեղէնների արտաքին պատեանը:*
ՊԱՃԱՐԱԳՈՂՈՒԹԻՒՆ, Տ. *Անասնագողութիւն:*
ՊԱՃԱՐԱԽՏՈՒԹԻՒՆ, գ. *Անասունների ցաւ:*
ՊԱՃԱՐԱՄԻՏ, Տ. *Անասնամիտ:*
ՊԱՃԱՐԱՊԷՍ, Տ. *Անասնապէս:*
ՊԱՃԱՐԵԼ, բ. *Հայթայթել:*
ՊԱՃԱՐԵՂԷՆ, ած. *Պաճարին յատուկ, անասնական, կենդանական:*
ՊԱՃԻ, գ. (Մանկ.) *Քնելու համար պառկելը:*
ՊԱՃԻՃ, գ. *Բրդէ թելից հիւսած զանկապան:*
ՊԱՃԻՏԱԿ, ած. գ. *Աւելորդ կերուխում կմ կերակրի աւելորդ հանդերձանք:*
ՊԱՃՈՅ, ած. *Մեծ ու տափակ (քթի մասին): Ջարդ:*
ՊԱՃՈՅՃ, արմ. գ. Տ. *Պաճուճանք:* ած. *Պաճուճուած:*
ՊԱՃՈՒՃԱԲԱՆ, ած. *Ջարդարուն լեզուով խօսօղ:*
ՊԱՃՈՒՃԱԲԱՆԵԼ, բ. *Ջարդարուն*

*լեզուով խօսել:*

ՊԱՃՈՒՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Զարդարուն խօսք:*

ՊԱՃՈՒՃԱԲԱՐ, մկ. *Պաճուճուած՝ զարդարուած կերպով:*

ՊԱՃՈՒՃԱԳՈՐԾ, ած. գ. *Պաճուճանքներ շինող:*

ՊԱՃՈՒՃԱԶԱՐԴ, ած. *Պաճուճանքներով զարդարուած:*

ՊԱՃՈՒՃԱԶԳԵՍՏ, ած. *Պաճուճուած՝ զարդարուած զգեստ հագած:*

ՊԱՃՈՒՃԱՆՔ, գ. *Բոլորը՝ ինչ որ մի բանի վրայ դրուում է՝ նրան գեղեցկացնելու նպատակով: Զարդարանք:*

ՊԱՃՈՒՃԱՊԱՏԱՆՔ, գ. *Որեւէ իր, որ պաճուճանքներով պատելով մարդու են նմանացնում:*

ՊԱՃՈՒՃԱՍԷՐ, ած. *Պաճուճանքներ կամ պաճուճուել սիրող:*

ՊԱՃՈՒՃԵԼ, բ. *Պաճուճանքներով զարդարել, պերճաբանել:*

ՊԱՄՊՈՒԼԻԿ, ած. գ. *Թեթեւսոլիկ:*

ՊԱՅ<br>ՊԱՅՆ } գ. *Առասպելական կենդանի:*

ՊԱՅԱԶԱՏ, գ. *Ազնուական տոհմի սեռունդ՝ յաջորդ:*

ՊԱՅԱԶԱՏԱԲԱՐ, մկ. *Իբրեւ պայազատ:*

ՊԱՅԱԶԱՏԵԼ, բ. *Իբրեւ պայազատ ստանալ իշխանութիւնը:*

ՊԱՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Ազնուական ցեղից ծագում:*

ՊԱՅԹԱԿ, գ. *Երեխաների պայթուցիչ խաղալիք:*

ՊԱՅԹԱԿԱՆ, ած. *Պայթող կամ պայթեցնող յատկութիւն ունեցող: Բաղաձայնների տեսակ:*

ՊԱՅԹԱԿԵՆԻ ԾԱՌԱՁԵՒ, գ. (բուս.) *Թիթեռնածաղիկների կարգին պատկանող թուփ:*

ՊԱՅԹԵԼ, բ. *Ներքին սաստիկ ճնշումից կամ փքուելուց յանկարծ պատառուել: Պայթուցիկ նիւթի բռնկուելուց խիտ գազեր առաջանալ, որոնք շառաչումով ձգտում են տարածուել օդի մէջ:* Նման. *Յանկարծ երեւան գալ աղմկալի կերպով:* Փոխ. *Սաստիկ փքուել:*

ՊԱՅԹԵՑՆԵԼ, բ. *Պայթել տալ:*

ՊԱՅԹԵՑՈՒՑԱՆԵԼ, անց. ձեւ *Պայթել'ի:*

ՊԱՅԹԻՒՆ, գ. *Պայթելու ոյժը, շառաչիւնը:*

ՊԱՅԹԻՒՆԱՄԵՐՁ, ած. *Պայթելու պատրաստ:*

ՊԱՅԹԻՒՆԱՎՏԱՆԳ, ած. *Պայթիւնի վտանգ ունեցող:*

ՊԱՅԹԿԵՆԻ, գ. (Բուս.) *Colutea arboriscens* (Ս.):

ՊԱՅԹՈՑ<br>ՊԱՅԹՈՒՄ } գ. *Պայթելը:*

ՊԱՅԹՈՒՑԻԿ, ած. *Պայթող, պայթեցնող:*

ՊԱՅԻԿ, *Սուրհանդակ, թղթատար:*

ՊԱՅԼ, գ. *Միջնադարեան հիւպատոսական տիտղոս:*

ՊԱՅԼԱՆՔ, գ. *Երես առած՝ շփացած տղայ:*

ՊԱՅԾԱՌ, ած. մկ. *Շատ լուսաւոր: Շքեղ, պարզ, փայլուն:*

ՊԱՅԾԱՌԱԲԱՆ, Տ. *Պերճախօս:*

ՊԱՅԾԱՌԱԲԱՆԵԼ, բ. *Ճոռոմաբանել:*

ՊԱՅԾԱՌԱԲՈՐԲՈՔ, ած. *Պայծառ բորբոքուած:*

ՊԱՅԾԱՌԱԳԵՂ, ած. *Պայծառ՝ աչքի ընկնող գեղեցկութեամբ:*

ՊԱՅԾԱՌԱԳՈՅՆ, ած. *Պայծառ գոյնով:*

ՊԱՅԾԱՌԱԳՈՐԾԵԼ, բ. *Պայծառ դարձնել:*

ՊԱՅԾԱՌԱԶԱՐԴ, ած. *Պայծառ զարդարուած:*

ՊԱՅԾԱՌԱԶԱՐԴԵԼ, բ. *Պայծառ զարդարել:*

ՊԱՅԾԱՌԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. *Պայծառազարդ լինելը:*

ՊԱՅԾԱՌԱԶԳԵՍՏ, ած. *Պայծառ զգեստներ հագած:*

ՊԱՅԾԱՌԱԶՈՒԱՐՃ, ած. *Պայծառ եւ*

*զուարթ:*

ՊԱՅԾԱՌԱԹԵՒ, ած. *Պայծառ թեւեր ունեցող:*

ՊԱՅԾԱՌԱԺՊԻՏ, ած. *Պայծառ ժպիտ ունեցող:*

ՊԱՅԾԱՌԱԽՕՍ, ած. *Պայծառ՝ գեղեցիկ խօսող:*

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊ, ած. *Պայծառ կերպարանք ունեցող:*

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊԵԼ, բ. *Պայծառ երեւցընել:*

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. *Պայծառակերպ լինելը:*

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՏ, ած. *Պայծառ շինուած, գեղեցիկ, փառահեղ:*

ՊԱՅԾԱՌԱԿՇԻՌ, ած. *Բնականին համաչափ:*

ՊԱՅԾԱՌԱՀՐԱՇ, Տ. *Հրաշապայծառ:*

ՊԱՅԾԱՌԱՆԱԼ, բ. *Լուսափայլ դառնալ:* Նման. *Շքեղանալ, Զուարթանալ:*

ՊԱՅԾԱՌԱՆՇԱՆ, ած. *Պայծառ, երեւելի կմ պայծառ հրաշքով:*

ՊԱՅԾԱՌԱՇԷՆ, ած. *Պայծառ՝ գեղեցիկ շինուած:*

ՊԱՅԾԱՌԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. *Պայծառաշէն լինելը:*

ՊԱՅԾԱՌԱՇՈՂ, ած. *Պայծառ եւ շողացող:*

ՊԱՅԾԱՌԱՊԱՐԾ, ած. *Շատ պանծալի:*

ՊԱՅԾԱՌԱՊԷՍ, մկ. *Պայծառ կերպով:*

ՊԱՅԾԱՌԱՊՍԱԿ, ած. *Պայծառ պսակ կրող՝ ունեցող:*

ՊԱՅԾԱՌԱՍԷՐ, ած. *Պայծառութիւն սիրող:*

ՊԱՅԾԱՌԱՍՓԻՒՌ, ած. *Պայծառութիւն սփռող:*

ՊԱՅԾԱՌԱՎԱՅԵԼՈՒՉ, ած. *Պայծառ՝ ինչպէս վայել է:*

ՊԱՅԾԱՌԱՏԱՐԱԾ, ած. *Պայծառութիւն տարածող:*

ՊԱՅԾԱՌԱՏԵՍ, ած. *Յստակամիտ:*

ՊԱՅԾԱՌԱՏԵՍԻԼ, ած. *Պայծառ տեսքով:*

ՊԱՅԾԱՌԱՏԻՊ, ած. *Շողշողուն, փայլուն:*

ՊԱՅԾԱՌԱՐԱՐ, ած. *Պայծառացնող:*

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼ, ած. *Պայծառ փայլող:*

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ, գ. *Պայծառափայլ լինելը:*

ՊԱՅԾԱՌԱՓԱՌ, ած. *Փառքով պայծառացած:*

ՊԱՅԾԱՌԵՐԱՆԳ, ած. *Պայծառ գոյներ ունեցող:*

ՊԱՅԾԱՌԵՐԵՍ, ած. *Պայծառ երես՝ պայծառ աչքեր ունեցող:*

ՊԱՅԾԱՌԱՀԱՒԱՏ, ած. (Կրօն.) *Լուսաւոր՝ ուղղահաւատ:*

ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Պայծառ լինելը, Զուարթութիւն:*

ՊԱՅՄԱՆ, գ. *Սահմանուած չափ՝ կանոն խօսքի: Ոճ, ձեւ, եղանակ: Համաձայնութեան դաշինք, պայմանաժամ: Անհրաժեշտ յատկութիւն:*

ՊԱՅՄԱՆԱԲԱՌ, գ. *Գաղտնաբառ:*

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, գ. *Գրուած կմ գրաւոր պայման: Համաձայնագիր:*

ՊԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆ, ած. *Պայմանագրին կմ պայմանագրութեան վերաբերեալ:*

ՊԱՅՄԱՆԱԳՐԵԼ, բ. *Գրաւոր պայման կապել:*

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Պայման գրելը: Համաձայնագրութիւն:*

ՊԱՅՄԱՆԱԴԻՐ, ած. *Նա որ պայման է դրել:*

ՊԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ, ած. *Պայմանադրուած::*

ՊԱՅՄԱՆԱԴՐԵԼ, բ. *Պայման դնել:*

ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. *Պայման դնելը:*

ՊԱՅՄԱՆԱԹՈՒՂԹ, գ. *Պայմանի թուղթը:*

ՊԱՅՄԱՆԱԺԱՄ, գ. *Այն ժամանակը, որի ընթացքում ույժ ունի պայմանը:*

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ**, ած. *Ինչ որ կախում ունի մի պայմանից:*

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Պայմանական լինելը:*

**ՊԱՅՄԱՆԱՒՈՐ**, ած. *Պայման ունեցող:*

**ՊԱՅՄԱՆԱՒՈՐԵԼ**, բ. *Որեւէ պայմանով սահմանափակել:*

**ՊԱՅՄԱՆԵԼ**, բ. *Պայման՝ դաշինք կապել:*

**ՊԱՅՄԱՆՆԱՄԱԿ**, Տ. *Պայմանագիր:*

**ՊԱՅՈՒՍԱԿ**, գ. *Փոքր պարկ՝ քսակ:*

**ՊԱՅՏ**, գ. *Ձիու, էշի, եզան ոտքի ձեւով ու մեծութեամբ շինուած տափակ երկաթ:*

**ՊԱՅՏԱՀԱՐ**, Տ. *Պայտար:*

**ՊԱՅՏԱՁԵՒ**, ած. *Պայտի ձեւ ունեցող:*

**ՊԱՅՏԱՌ**, **ՊԱՅՏԱՐ** } գ. *Արհեստաւոր, որ անասունների ոտները պայտում է:*

**ՊԱՅՏԱՌՈՒԹԻՒՆ**, **ՊԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ** } գ. *Պայտառի արհեստը:*

**ՊԱՅՏԵԼ**, բ. *Անասունի ոտքին պայտ զարնել:*

**ՊԱՅՏՈՒՄ**, գ. *Պայտելը:*

**ՊԱՅՔԱՐ**, գ. *Վէճ, կռիւ, բանակռիւ:*

**ՊԱՅՔԱՐԵԼ**, բ. *Վէճ ունենալ, բանակռիւ մղել: Հակառակուել:*

**ՊԱՅՔԱՐՈՒՄ**, գ. *Պայքարելը, պայքար մղելը:*

**ՊԱՆ**, գ. *Չհալած մեղր:*

**ՊԱՆ**, *Պան աստծու անունից:*

**ՊԱՆ**, *Վերջադաս մասնիկ, որ կազմում է շատ բարդութիւններ՝ պահող, ջորեպան, խանութպան եւն:*

**ՊԱՆԱՄԱ**, *Պանամա թերակղզու անունից:* գ. *Շատ խոշոր դրամական խարդախութիւն: Շատ փափուկ յարդէ գըլխարկ:*

**ՊԱՆԴԽՏԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ պանդուխտ, պանդուխտի պէս:*

**ՊԱՆԴԽՏԱԼԻՑ**, ած. *Պանդուխտներով լի:*

**ՊԱՆԴԽՏԱԿԱՆ**, ած. *Պանդուխտին յատուկ:*

**ՊԱՆԴԽՏԱԿԻՑ**, ած. գ. *Պանդխտութեան ընկեր:*

**ՊԱՆԴԽՏԱՆԱԼ**, Տ. *Պանդխտել:*

**ՊԱՆԴԽՏԱՌԱՏ**, ած. *Պանդուխտներով առատ:*

**ՊԱՆԴԽՏԱՍԷՐ**, ած. *Պանդխտութիւն սիրող:*

**ՊԱՆԴԽՏԱՎԱՅՐ**, գ. *Այն տեղը՝ երկիրը, որտեղ ապրում են պանդուխտները:*

**ՊԱՆԴԽՏԵԼ**, բ. *Իբրեւ պանդուխտ ապրել մի օտար երկրում:*

**ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ**, գ. *Պանդուխտ լինելը:*

**ՊԱՆԴՈԿ**, գ. *Հիւրատուն, իջեւան ճանապարհի վրայ, տեղ:* Տ. *Հիւրանոց:*

**ՊԱՆԴՈԿԱԲՆԱԿ**, ած. *Պանդոկում՝ հիւրանոցում ապրող:*

**ՊԱՆԴՈԿԱՊԱՆ**, գ. *Պանդոկի տէր:*

**ՊԱՆԴՈԿԱՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Պանդոկապետ լինելը:*

**ՊԱՆԴՈԿԱՊԵՏ**, գ. *Պանդոկի տէրը:*

**ՊԱՆԴՈԿԱՏԻՐՈՒՀԻ**, գ. *Պանդոկապանուհի, կին պանդոկատէր:*

**ՊԱՆԴՈՅՐ**, ած. *Ապուշ, յիմար: Անխելք:*

**ՊԱՆԴՈՐԵԱՆ ՏՈՒՓ**, գ. Փոխ. *Որեւէ հանգամանք, որ արտաքուստ հրապուրիչ տեսք ունի, բայց իրօք կարող է պատճառ դառնալ, կմ արդէն դարձել է, խոշոր չարիքների:*

**ՊԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ**, գ. *Պանդոյր լինելը: Անխելք, յիմար:*

**ՊԱՆԴՈՒԽՏ**, գ. *Օտարի տանը ապրող:*

**ՊԱՆԴՐԵԼ**, բ. *Ծառի ճիւղը հողի տակ թաղել:*

**ՊԱՆԵՐ**, գ. *Դատարանի կոչնագիրը տանող պաշտօնեայ:*

**ՊԱՆԹԷՈՆ**, (Յուն.) գ. *Հին Հռոմում տաճար բոլոր աստուածներին նուիրուած:* (Նման.) *Տաճար, որտեղ թաղուում են մի ազգի նշանաւոր անձերը: Բազմաստ-*

*ուածարան: Դիցարան:*

ՊԱՆԻՐ, գ. *Կաթնեղէն ուտելիք: Մակարդուած կաթէ պատրաստուած ուտելիք:*

ՊԱՆԾԱԲԱՆ, ած. *Ճոռոմաբան, պարծենալով խօսող:*

ՊԱՆԾԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Աւելի պանծալի:*

ՊԱՆԾԱԼԻ, ած. *Ինչով կարելի է պանծալ՝ պարծիլ:*

ՊԱՆԾԱՆԱԼ, բ. *Իր յաջողութեամբ կմ առաւելութիւններով շփանալ:*

ՊԱՆԾԱՆԱԼ, Տ. *Պանծալ: Պարծենալ, փառաբանիլ:*

ՊԱՆԾԱՊԱՏԻՒ, ած. *Բարձր՝ պանծալի պատուով:*

ՊԱՆԾՈՒԹԻՒՆ, գ. *Պանծալը:*

ՊԱՆԿՐԱՏ
ՊԱՆԿՐԱՏԻՈՆ } (Յուն.) գ. *Ոլիմպիական խաղերի մէջ մրցութեան ձեւ:*

ՊԱՆՏ, գ. *Ոչխարների ոտների հիւանդութիւն:*

ՊԱՆՏԱ, գ. *Վայրի մանր տանձ:*

ՊԱՆՏՈՄԻՄ, (Յուն.) Տ. *Մնջկատակ:*

ՊԱՆՐԱԲԱՇԽ, գ. (Կենդ.) *Պանրի վրայ գոյացող հազիւ նշմարելի ակար:*

ՊԱՆՐԱԳՈՂ, ած. *Պանիր գողացող:*

ՊԱՆՐԱԳՈՐԾ, ած. գ. *Պանիր շինող վարպետ:*

ՊԱՆՐԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. *Պանրագործութեան յատուկ:*

ՊԱՆՐԱԳՈՐԾԱՐԱՆ, գ. *Գործարան, որտեղ մեծ քանակութեամբ պանիրներ են պատրաստում:*

ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Պանիրներ պատրաստելը մեծ քանակութեամբ:*

ՊԱՆՐԱԿԵՐՊ, ած. մկ. *Պանրի նման:*

ՊԱՆՐԱՄԱՆ, գ. *Աման, որի մէջ պանիրը աղաջրով պահում են:*

ՊԱՆՐԱՅԻՆ, ած. *Պանրին յատուկ:*

ՊԱՆՐԱՆԱԼ, բ. *Պանիր դառնալ:*

ՊԱՆՐԱՎԱՃԱՌ, ած. գ. *Պանիր վաճառող:*

ՊԱՆՐԱՏԷՐ, գ. *Պանրի տէրը:*

ՊԱՆՐԽՈՏ, գ. *Շրթնածաղիկների կարգին պատկանող բոյս:*

ՊԱՇ, մկ. *Խեթիւ, ծուռ աչքով:*

ՊԱՇԱՐ, գ. *Ուտելեղէն:* (Եկեղ.) *Չոր մրգեղէն: Պահէստի պարէն:*

ՊԱՇԱՐԱԲԱՐՁ, ած. *Նա որ պաշարը վերցնում է կմ որի վրայ բառնում են՝ կրելու համար:*

ՊԱՇԱՐԱՄԱՆ, գ. *Ճանապարհի պաշարը պահելու աման:*

ՊԱՇԱՐԱԿԻՐ, ած. գ. *Ճանապարհի պաշարը կրող:*

ՊԱՇԱՐԱՊԻՆԴ, ած. *Առատ պաշարով ապահովուած:*

ՊԱՇԱՐԵԼ, բ. *Զօրքով մի քաղաք կմ ամրացրած դիրք շրջափակել:* Նման. *Չորս կողմից պատել: Միտքը սաստիկ զբաղեցնել, ամբողջապէս գրաւել:*

ՊԱՇԱՐԵՂԷՆ, գ. *Ինչ որ պատրաստուած է իբրեւ պաշար:*

ՊԱՇԱՐՈՂԱԿԱՆ, ած. *Պաշարման յատուկ:*

ՊԱՇԱՐՈՒՄ, գ. *Պաշարելը, պաշարուելը:*

ՊԱՇՈՒԼԱԿ, գ. *Իբրեւ սերմացու թողնուած՝ դեղնած վարունգ:*

ՊԱՇՏ, *Բարդութիւնների վերջում գործ է ածուում «պաշտող» նշանակութեամբ:*

ՊԱՇՏԱԿ, գ. *Սպասաւոր, պաշտօնեայ:*

ՊԱՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտակ լինելը, պաշտօն, ծառայութիւն:*

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, գ. (Եկեղ.) *Աստուածապաշտութեան կարգ:* (Եկեղ.) *Կրօնական յարգանք:*

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱԽԱՌՆ, ած. *Պաշտամունքի աստիճանի հասնող:*

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՏԵՂԻ, գ. *Պաշտամունք մատուցելու վայր:*

ՊԱՇՏԵԼ, բ. *Ծառայել, սպասաւորել մէկին: Պարտականութիւնը կատարել:*

(Կրօն.) *Աստծուն ծառայել:* Նման. *Հոգաչափ սիրել: Դաւանել, երկրպագել:*

ՊԱՇՏԵԼԻ, ած. *Պաշտելու ենթակայ:*

ՊԱՇՏԵԼՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտելը:*

ՊԱՇՏՈՒՄ, գ. (Եկեղ.) *Պատարագից յետոյ տրուած ճաշ (մատաղ?):*

ՊԱՇՏՈՒՄԱՀԱՑ, գ. (Եկեղ.) *Հոգու հաց:*

ՊԱՇՏՊԱՆ, *թիկունքը պահպանող. թիկնապահ.* գ. *Պաշտպանող, Հովանաւոր:* (Իրաւբ.) *Փաստաբան, որ դատարանում հանդէս է գալիս իբրեւ մեղադրեալի շահերի ներկայացուցիչ:*

ՊԱՇՏՊԱՆԱԳԻՐ, գ. *Պաշտպանութիւն արտայայտող գիր՝ փաստաթուղթ:*

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, Տ. *Պաշտպանողական:*

ՊԱՇՏՊԱՆԱՅԻՆ, ած. *Պաշտպանութեան վերաբերեալ:*

ՊԱՇՏՊԱՆԵԱԼ, ած. անց. դերբ. *Պաշտպանել՛ի,* գ. (Իրաւբ.) *Այն անձը, որին պաշտպանում է փաստաբանը դատարանում:*

ՊԱՇՏՊԱՆԵԼ, բ. *Յարձակման ենթարկուածին օգնել, Պատսպարել, Հովանաւորել, Ապահով՝ զերծ պահել: Դատարանում մեղադրեալի օգտին խօսել: Հոգ տանել, սպասարկել:*

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ, ած. *Պաշտպանելու կամ պաշտպանուելու յատուկ:*

ՊԱՇՏՊԱՆՈՂՕՐԷՆ, մկ. *Իբրեւ պաշտպանող:*

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտպանելը, պաշտպանուելը: Պատսպարութիւն: Հովանաւորութիւն: Ջատագովութիւն: Շախմատի խաղի մէջ՝ դիրքը ամրացնելը:*

ՊԱՇՏՊԱՆՈՒԺԻ, գ. *Պաշտպան իգական սեռի:*

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ, գ. *Պաշտպանելը, պաշտպանուելը:*

ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿ, ած. *Ինքն իրեն պաշտպանելու ընդունակ:*

ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտպանունակ լինելը:*

ՊԱՇՏՕՆ, գ. *Ծառայութիւն, տեւական յատուկ գործ հիմնարկում:* (Կրօն.) *Ծառայութիւն աստծուն:* (Կրօն.) *Կրօնական արարողութիւններ:*

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ, գ. *Մէկին պաշտօն տալը:*

ՊԱՇՏՕՆԱԳԻՐ, գ. *Պաշտօնական գրութիւն:*

ՊԱՇՏՕՆԱՋԳԵՍՏ, գ. *Զգեստ, որ յատուկ է որոշ պաշտօնի:*

ՊԱՇՏՕՆԱԶՈՒՐԿ, ած. *Պաշտօնից զրկուած:*

ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտօնից զրկուելը:*

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ, գ. *Պաշտօնական թերթ:*

ՊԱՇՏՕՆԱԹՈՂ, ած. *Պաշտօնը թողած:*

ՊԱՇՏՕՆԱԹՈՒՂԹ, Տ. *Պաշտօնագիր:*

ՊԱՇՏՕՆԱԽՈՒՄԲ, գ. *Պաշտօնեաների խումբ:*

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ, ած. *Ինչ որ մէկը կատարում է իբրեւ պաշտօնեայ, պաշտօնի պահանջով: Ոչ մտերմական, ընդհանուր, սովորական:*

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտօնական լինելը:*

ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ, գ. *Նա որ կատարում է մի պաշտօն ժամանակաւորապէս:*

ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտօնակատար լինելը:*

ՊԱՇՏՕՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտօնի կարգելը:*

ՊԱՇՏՕՆԱԿԻՑ, ած. գ. *Պաշտօնով ընկեր:*

ՊԱՇՏՕՆԱՄՈԼ, ած. *Պաշտօն գտնելու չափազանց հետամուտ:*

ՊԱՇՏՕՆԱՆԿ, ած. *Պաշտօնից ընկած, պաշտօնից ձգուած: Պաշտօնազուրկ:*

ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտօնանկ լինելը:*

ՊԱՇՏՈՆԱՊԵՏ, Տ. *Պաշտոնատար:*
ՊԱՇՏՈՆԱՊԷՍ, մկ. *Պաշտոնական կերպով:*
ՊԱՇՏՈՆԱՍԷՐ, ած. *Պաշտոն սիրող:*
ՊԱՇՏՈՆ(Ա)ՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտոնասէր լինելը:*
ՊԱՇՏՈՆԱՎԱՅՐ, Տ. *Պաշտոնատեղ(ի):*
ՊԱՇՏՈՆԱՎԱՐ, ած. *Պաշտոն վարող:*
ՊԱՇՏՈՆԱՎԱՐԵԼ, բ. *Պաշտոն կատարել:*
ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտոն վարելը, պաշտոնում ծառայելը:*
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ, ած. գ. *Որեւէ պաշտոն կատարող:*
ՊԱՇՏՈՆԱՏ(Ա)ՐՈՒՄ, գ. *Պաշտոնատար լինելը:*
ՊԱՇՏՈՆԱՏԵՂ(Ի), գ. *Պաշտոնը կատարելու տեղը:*
ՊԱՇՏՈՆԱՏԷՐ, գ. *Պաշտոն ունեցող, ծառայող:*
ՊԱՇՏՈՆԱՐԱՆ, Տ. *Նախարարություն:*
ՊԱՇՏՈՆԱՐԱՐ, ած. (Կրօն.) *Պաշտոնատար, կրօնական պաշտամունք կատարող:*
ՊԱՇՏՈՆԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Կրօնական պաշտամունք կատարելը:*
ՊԱՇՏՈՆԱՑԱՆԿ, գ. *Պաշտոնների ցանկ:*
ՊԱՇՏՈՆԱՒՈՐ, ած. *Պաշտոն ունեցող:* Հկռ. *Անպաշտօն:*
ՊԱՇՏՈՆԵԱՅ, գ. *Որեւէ հիմնարկում մնայուն պաշտոն վարող:* Տ. *Նախարար:* (Կրօն.) *Աստծու երկրպագու:*
ՊԱՇՏՈՆԵՐԳՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Կրօնական պաշտամունքի երգեցողություն, ժամերգություն:*
ՊԱՇՏՈՆԷԱԿԱՆ, ած. *Պաշտոնեայի կմ պաշտոնի վերաբերեալ:*
ՊԱՇՏՈՆԷՈՒԹԻՒՆ, գ. *Պաշտոնեաների կազմը:*
ՊԱՇՏՈՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ } գ. *Պաշտոն-*
ՊԱՇՏՈՆԸՆԿԻՑՈՒԹԻՒՆ }
*անկ անելը, պաշտոնից հեռացնելը:*
ՊԱՉԵԼ, բ. *Պագնել:*
ՊԱՉԻԿ, գ. (Փաղաքշ.) *Պագիկ:*
ՊԱՉՊՉԵԼ,
ՊԱՉՊՉՈՒԵԼ, բ. *Մի քանի անգամ, մի քանի բան՝ պաչել:*
ՊԱՉՊՉՈՒԵԼ, բ. *Համբուրռուել:*
ՊԱՊ, գ. *Հօր կմ մօր հայրը:*
ՊԱՊ, գ. (Կրօն.) *Հոգեւոր հայր, քահանայապետ:*
ՊԱՊԱ, գ. *Հայր, հայրիկ: Մեծ հայր:*
ՊԱՊԱԴԱՒԱՆ, ած. գ. (Եկեղ.) *Մոլեռանդ ջատագով պապերի իշխանութեան:*
ՊԱՊԱԿ, գ. *Սաստիկ ծարաւ:* Նման. *Սաստիկ*
ՊԱՊԱԿԱՆ, ած. *Պապին յատուկ, վերաբերեալ:*
ՊԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Պապական լինելը:*
ՊԱՊԱԿԵԼ, բ. *Սաստիկ ծարաւ զգալ:*
ՊԱՊԱԿԻՉ, ած. *Նա որ պապակեցնում է, պապակեցնող:*
ՊԱՊԱԿԼՈՒՆՋ, գ. *Անորոշ տեսակի մի բոյս: Աչքի գարի:*
ՊԱՊԱԿՈՒՄ, գ. *Պապակելը:*
ՊԱՊԱԾԻԿ, գ. *Տափակ ու կլոր՝ մէջտեղը ծակ հաց. գուլգուտ:*
ՊԱՊԱՆՁԱԿԱՆ, ած. *Պապանձեցնելու արժանի:*
ՊԱՊԱՆՁԵԼ, բ. *Լռել: Լեզուն կապուիլ:*
ՊԱՊԱՆՁՈՒԵԼ, բ. *Լեզուն կապուել:* Նման. *Յանդիմանուելով լռել: Յամառութեամբ լուռ մնալ:*
ՊԱՊԱՆՁՈՒՄ, գ. *Պապանձուելը:*
ՊԱՊԱՉԻՒՆ, գ. *Պապաչելը:* Կապիկի *ձայն հանել:*
ՊԱՊԱՐ, գ. (Մանկ.) *Պար, պարպար, երեխայի խաղալը:*
ՊԱՊԵՆԱԿԱՆ, ած. *Պապի, պապից մնացած: Հնուց մնացած:*
ՊԱՊԸՆՏԻՐ, ած. *Պապ ընտրող:*

**ՊԱՊԺՈՒՌ**, գ. *Մի տեսակ դեղնաւուն խաղող:*
**ՊԱՊԻ**, գ. *Մեծ հայր, պապ:*
**ՊԱՊԻՐՈՒՍ, ՊԱՊԻՒՐՈՍ**, գ. (Բուս.) *Պրտուների մի տեսակը, որ բուսնում է Եգիպտոսում:*
**ՊԱՊԼԻՍ**, գ. (Բուս.) *Վայրի խաշխաշ բոյսը:*
**ՊԱՊԿԵ ԳԼՈՒՑ**, գ. (Բուս.) *Եղեսպակի մի տեսակը:*
**ՊԱՊԿԼՈՐ**, գ. (Բուս.) *Շուշանազգիների կարգին պատկանող բոյս:*
**ՊԱՊՈՆՔ**, գ. *Պապի մեծ հօր ընտանիքը:*
**ՊԱՊՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Պապ լինելը:*
**ՊԱՊՈՒԼԱՅ**, գ. *Յնցոտիներ հագած մարդ:*
**ՊԱՊՈՒԿ**, գ. *Խեղճ ծերուկ: Ծեր մուրացկան:*
**ՊԱՊՈՒԿ**, գ. (Կենդ.) *Գորշագոյն բազմոտանի միջատ:*
**ՊԱՊՈՒՆԱՃ**
**ՊԱՊՈՒՆԻՃ** } (Արաբ. Պարս.) Տ. *Երիցուկ:*
**ՊԱՌԱԿԱՄԱՅՐ**, գ. *Հորթ ունեցող կով:*
**ՊԱՌԱԿԱՆ**, գ. *Որսի շներ, որսկան շների խումբ:*
**ՊԱՌԱԿԼԻՏՈՍ**, (Յուն.) ած. (Կրօն.) *Մխիթարիչ:*
**ՊԱՌԱԿՏԵԼ**, բ. *Ոչխարների պառակը:* Նման. *Միաբանութիւնը խախտել: Բաժանել, ջլատել:*
**ՊԱՌԱԿՏԻՉ**, ած. գ. *Նա որ պառակտում է: Բաժանիչ, ջլատիչ:*
**ՊԱՌԱԿՏՈՒԹԻՒՆ**
**ՊԱՌԱԿՏՈՒՄ** } գ. *Պառակտելը:*
**ՊԱՌԱՒ**, ած. *Ծերացած, հասակն առած (կնոջ մասին): Գործ է ածւում եւ ծերացած տղամարդու մասին:*
**ՊԱՌԱՒԱԿԱՆ**, ած. *Պառաւներին յատուկ, վերաբերեալ:*
**ՊԱՌԱՒԱՇԷՆՔ**, ած. *Պառաւ շինող:*
**ՊԱՌԱՒԵԼ**, բ. *Ծերանալ, տարիքն անցնել:* Նման. *Հնանալ:*
**ՊԱՌԱՒԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Պառաւելի,* նոյն նշ.:
**ՊԱՌԱՒՈՏԵԼ**, բ. *Պառաւի տեսք ստանալ:*
**ՊԱՌԱՒՆԱԿ**, մկ. *Պառաւի պէս:*
**ՊԱՌԱՒՈՐԴԻ**, գ. (Կրօն.) *Պառաւի որդի:*
**ՊԱՌԱՒՈՒԹԻՒՆ**, գ. *Պառաւ լինելը:*
**ՊԱՌԱՒՈՒՄ**, գ. *Պառաւելը:*
**ՊԱՌԻԿ**, գ. *Պառաւիկ:*
**ՊԱՌԿԱՅՈՅՑ**, գ. *Յոյց, որ արուում է պառկած:*
**ՊԱՌԿԵԼ**, բ. *Գետնի վրայ մեկնուել, մարմնի երկայնութեամբ տարածուել: Անկողին մտնել քնելու: Հիւանդութեան պատճառով անկողին մտնել: Քնել:*
**ՊԱՌԿԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Պառկել'ի,* նոյն նշ.:
**ՊԱՌԿՈՒԿ**, ած. մկ. *Պառկած:*
**ՊԱՌՆԱՍԱԿԱՆ**, ած. *Պառնաս լեռան անունից Յունաստանում: Պառնասում ապրող: Վիպապաշտ բանաստեղծութեան հետեւող:*
**ՊԱՌՇԱՎՈՇԱՆ**, գ. (Բուս.) *Զարխոտի մի տեսակը:*
**ՊԱՌՈՒԽ**, գ. (Եկեղ.) *Ծխատէր քահանայ:*
**ՊԱ՜Ռ-ՊԱՌ**, մկ. *Բարձրաձայն:*
**ՊԱՌՈՒԿ**, գ. (Փաղաքշ.) *Պառաւած, թառամած:*
**ՊԱՍ**, գ. *Պահեցողութիւն: Ձեռնպահութիւն ուրիշ բաներից:* ած. *Ինչ որ արգելուում է ուտել պաս օրերում:*
**ՊԱՍ**, գ. *Ոսպով սպաս:*
**ՊԱՍԱԿԱՆ**, ած. գ. *Թանապուր:*
**ՊԱՍԱԿԵՐ**, ած. *Պասը ուտող:*
**ՊԱՍԱՀԱՆ ԱՆԵԼ**, *Մեծ պասի երկուշաբթի օրը ամանեղէնները լուալ:*
**ՊԱՍԱՀԱՐԵԼ**, բ. *Երկարատեւ պաս պահելուց հիւծուել:*
**ՊԱՍԱՆԻԿ**, գ. *Զինուորական հասարակ պաշտօնեայ, սպասաւոր:*

**ՊԱՍԲԱՐԵԻ**, գ. *Այցելութիւն, որ կատարում է փեսան աներանց տունը՝ մեծ պասը շնորհաւորելու:*
**ՊԱՍԲԵՐԱՆ**, ած. *Պաս բռնած բերանով:*
**ՊԱՍԷՔԹԱՆ**, գ. *Թանով ապուր, որ եփում են զատկին:*
**ՊԱՍԿՈՒՃ**, գ. (Կենդ.) *Անգղների ցեղին պատկանող թռչուն:*
**ՊԱՍՈՒՑ**, ած. *Պաս օրուայ, պաս օրը գործածելու սահմանուած:*
**ՊԱՍՊԱՐԱԿ**, գ. *Բահի մի մասը:*
**ՊԱՍ-ՊԱՐԱՊ**, ած. մկ. *Բոլորովին պարապ:*
**ՊԱՍՏԱՌ**, գ. *Փռոց, սփռոց: Ընդհանրապէս լաթի կտոր:*
**ՊԱՍՏԱՌ**, գ. *Շարժանկարի կմ հեռատեսիլի հեռարձակումի սարք (էկրան):*
**ՊԱՍՏԱՌԱԳՈՐԾ**, ած. *Արհեստաւոր, որ սենեակներում պաստառ է խփում:*
**ՊԱՍՏԱՌԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Պաստառագործ լինելը:*
**ՊԱՍՏԱՌԱԴՐՈՒԱԾ**, ած. *Սփռոց, փռոց դրուած:*
**ՊԱՍՏԱՌԱԼԻ**, ած. *Պաստառներով լցուած, առատ:*
**ՊԱՍՏԱՌԱԿԱԼ**, գ. *Պաստառը բռնած, պահիչ:*
**ՊԱՍՏԱՌԱԿԻՐ**, ած. գ. *Պաստառ կրող:*
**ՊԱՍՏԵՂ**, գ. *Քաղցրեղէն ուտելիք:*
**ՊԱՍՏԷՕՐԱՑՈՒՄ**, գ. *Կաթը՝ գինին եւ այլ հեղուկներ որոշ աստիճան տաքացնելը:*
**ՊԱՍՔԵԼ**, բ. *Սաստիկ ծարաւ զգալ:*
**ՊԱՍՔՈՒԹԻՒՆ**, գ. *Պասքելը:*
**ՊԱՏ**, գ. *Պատելը, արգելապատ:*
**ՊԱՏԱԲԵԿՈՐ**, գ. *Պատի բեկոր՝ կտոր:*
**ՊԱՏԱԾԱԿ**, գ. *Պատի մէջ ծակ:*
**ՊԱՏԱԾԱԿՈՒՄ**, գ. *Պատը ծակելը:*
**ՊԱՏԱՀ**, գ. *Պատահմունք: Պատահար:*
**ՊԱՏԱՀԱԲԱՐ**, մկ. *Պատահմամբ:*
**ՊԱՏԱՀԱԿԱՆ**, ած. *Պատահմամբ տեղի ունեցած:*
**ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Պատահական լինելը:*
**ՊԱՏԱՀԱՊԷՍ**, Տ. *Պատահաբար:*
**ՊԱՏԱՀԱՐ**, գ. *Պատահմունք:*
**ՊԱՏԱՀԵԼ**, բ. *Մի դէպք տեղի ունենալ անսպասելի կերպով: Պատահաբար հանդիպել:*
**ՊԱՏԱՀՄՈՒՆՔ**, գ. *Անսպասելի պատահած դէպք:*
**ՊԱՏԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Իրար պատահելը՝ հանդիպելը:*
**ՊԱՏԱՀՕՐԷՆ**, Տ. *Պատահաբար:*
**ՊԱՏԱՂԵԼ**, բ. *Մի բանով զբաղուել:*
**ՊԱՏԱՂԻՃ**, գ. *Պատաատուկ բոյս:*
**ՊԱՏԱՂԻՉ**, ած. *Ինչ որ զբաղեցնում է:*
**ՊԱՏԱՂՈՒՄ**, գ. *Պատաղելը: Զբաղում:*
**ՊԱՏԱՆ**, գ. *Փաթաթան, վիրակապ:*
**ՊԱՏԱՆԱՒՈՐԵԼ**, Հմմտ. *Պատանել:*
**ՊԱՏԱՆԴ**, գ. *Կաշկանդուած, կապկապած: Մարդ, որին մէկը թողնում է մի ուրիշի մօտ իբրեւ գրաւական:*
**ՊԱՏԱՆԴԱՌՈՒ**, ած. *Նա որ պատանդ է վերցնում:*
**ՊԱՏԱՆԴԱՌՈՒՄ**, գ. *Պատանդ վերցնելը:*
**ՊԱՏԱՆԴԱՏՈՒ**, ած. *Նա որ պատանդ է տալիս:*
**ՊԱՏԱՆԴԵԼ**, բ. *Կաշկանդել:*
**ՊԱՏԱՆԴԻՉ**, ած. *Պատանդող:*
**ՊԱՏԱՆԴՈՒԹԻՒՆ**, գ. *Պատանդ լինելը:*
**ՊԱՏԱՆԵԱԿ**, (Փաղաքշ.), գ. *Փոքր պատանի:*
**ՊԱՏԱՆԵԱԿ**, գ. *Փոքր պատանի:*
**ՊԱՏԱՆԵԼ**, բ. *Մեռելը պատանքով փաթաթել:*
**ՊԱՏԱՆԵԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, Տ. *Արուագիտութիւն:*
**ՊԱՏԱՆԵԿԻԿ**, գ. *Շատ փոքր պատանի:*
**ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ**, Տ. *Պատանութիւն:*
**ՊԱՏԱՆԻ**, գ. *Ջահել տղայ:*
**ՊԱՏԱՆԻՈՒԹԻՒՆ**,

ՊԱՏԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պատանի լինելը:*
ՊԱՏԱՆՈՎԻ, մկ. *Պատէ պատ ընկնելով:*
ՊԱՏԱՆՔ, գ. *Սպիտակ սաւան, որի մէջ պատատում են մեռելը եւ վրան կարում եւ ապա դագաղ դնում:*
ՊԱՏԱՆՔԵԼ, ՊԱՏԸՆՔԵԼ, Տ. *Պատանել:*
ՊԱՏԱՇԱՐ, գ. *Շարած պատ:*
ՊԱՏԱՌ, գ. *Մի ամբողջից պատառելով բաժանած մի կտոր:* ած. մկ. *Փոքր ինչ, մի քիչ:*
ՊԱՏԱՌԱԲՈՅԾ, Տ. *Հացկատակ:*
ՊԱՏԱՌԱՊԱՏԻՐ, ած. *Մի պատառ հացից խաբուող:*
ՊԱՏԱՌԱՔԱՂ, գ. Տ. *Մսահան: Պատառ վերցնելու սեղանի անօթ, մետաղեայ ատամներով:*
ՊԱՏԱՌԵԼ, բ. *Մի նուրբ բան ուժով ձգելով կտրել: Ներքին ուժով պայթեցնել: Ճեղքել, քանդել: Ծակել, կտրել:*
ՊԱՏԱՌԻԿ, գ. *Փոքր պատառ:*
ՊԱՏԱՌՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Պատառող լինելը:*
ՊԱՏԱՌՈՏԵԼ, բ. *Յաճախ կամ շատ տեղերից պատառել:*
ՊԱՏԱՌՈՏԻ}
ՊԱՏԱՌՈՏՈՒՆ} ած. *Պատառոտուած:*
ՊԱՏԱՌՈՒԱԾՔ, գ. *Պատառուելը, պատառում:* Փոխ. *Պառակտում, երկպառակութիւն:*
ՊԱՏԱՌՈՒՄ, գ. *Պատառելը:*
ՊԱՏԱՍԽԱՆ, գ. *Խօսք, որ մէկն ասում է իրեն տրուած հարցին բաւարարելու համար: Նամակ, հեռագիր, որ մէկն ուղարկում է իր ստացած նամակի կամ հեռագրի հետեւանքով: Ինքնարդարացման խօսք: Գործողութիւն, որ մէկը կատարում է իբրեւ հակակշիռ հակառակորդի կամ ախոյեանի մի գործողութեան դէմ:*
ՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պատասխանատուութիւն:*

ՊԱՏԱՍԽԱՆԱԳԻՐ, գ. *Պատասխան պարունակող գիր:*
ՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆ, ած. *Պատասխան պարունակող:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ած. *Նա որ պատասխան պէտք է տայ իր արածի համար:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ, գ. *Պատասխան տալը:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՐԵԼ, բ. *Պատասխան տալ:*
ՊԱՏԱՍԽԱՆԵԼ, բ. *Ասել կամ գրել մի բան: Եղած առարկութիւնը խօսքով կամ գրով հերքել: Պատասխանատու լինել:*
ՊԱՏԱՏ, գ. *Փաթէթ,փաթաթան:*
ՊԱՏԱՏԱԿ, գ. *Պատի տակը:*
ՊԱՏԱՏԵԼ, բ. *Փաթաթել:*
ՊԱՏԱՏՈՒԿ, գ. *Բրդի կծիկ:* (Բուս.) *Պատատուկներ:*
ՊԱՏԱՏՈՒՄ, գ. *Պատատելը, պատատուելը: Փաթաթուելը:*
ՊԱՏԱՐԱԳ, գ. (Կրօն.) *Նուէր, ընծայ: Պատարագի երգեցողութիւնը: Զոհաբերում, զոհի նուէր:*
ՊԱՏԱՐԱԳԱԲԱՐՁ, ած. *Ընծաները կըրող՝ բերող:*
ՊԱՏԱՐԱԳԱԲԵՐ, ած. *Ընծայ բերող:*
ՊԱՏԱՐԱԳԱՋՈՀ, ած. (Կրօն.) *Որտեղ Աստծուն մատուցւում էր զոհերով:*
ՊԱՏԱՐԱԳԱԿԻՑ, ած. (Եկեղ.) *Միասին պատարագ անող:*
ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ած. (Եկեղ.) *Զոհ կամ նուէր մատուցող:* ած. գ. (Եկեղ.) *Գիրք, որի մէջ գրուած են աղօթքները:*
ՊԱՏԱՐԱԳԱՏՈՒՆ, Տ. *Մեռելատուն:*
ՊԱՏԱՐԱԳԱՐԱՆ, գ. *Որտեղ պատարագ են անում:*
ՊԱՏԱՐԱԳԻՉ, ած. գ. (Եկեղ.) *Պատարագ մատուցանող:*
ՊԱՏԱՐԱԳՈՒՄ, գ. *Զոհ կամ պատարագ մատուցանելը:*
ՊԱՏԱՐԵԼ, բ. *Լիուլի լցնել:*

**ՊԱՏԱՐՈՒՆ**, ած. *Լիուլի լցուած:*
**ՊԱՏԱՔԱՐ**, գ. *Պատ շարելու քար:*
**ՊԱՏԳԱՄ**, գ. *Պատուէր, արտայայտուած կամք: Հեթանոսական աստուածների կամքը:* (Կրօն.) *Աստծու կամքը: Հեղինակաւոր անձի կողմից գրուած պատուէր:*
**ՊԱՏԳԱՄԱԲԱՐ**, մկ. *Պատգամի նման, հեղինակաւոր կերպով:*
**ՊԱՏԳԱՄԱԲԵՐ**, ած. գ. *Նա որ պատգամը տանում հասցնում է՝ ում հարկն է, դեսպան:*
**ՊԱՏԳԱՄԱԳԻՐ**, ած. (Կրօն.), *Աստծու պատգամները գրող:*
**ՊԱՏԳԱՄԱԽՕՍ**, ած. գ. (Կրօն.) *Նա որ աստուածների կամ աստծու պատգամը խօսում է՝ յայտնում է:*
**ՊԱՏԳԱՄԱԾԻՆ**, ած. (Կրօն.) *Պատգամները ծնող:*
**ՊԱՏԳԱՄԱՍԱՑ**, ած. գ. *Մէկի կողմից ուղարկուած պատգամը:*
**ՊԱՏԳԱՄԱՏԱՐ**, ած. *Պատգամը տանող:*
**ՊԱՏԳԱՄԱՏՈՒ**, ած. գ. *Պատգամ տուող:*
**ՊԱՏԳԱՄԱՒՈՐ**, ած. գ. *Նա որ մէկի կամ մի խմբի կողմից ուղարկւում է ուրիշի մօտ՝ ուղարկողների կամքը կամ առաջարկութիւններն յայտնելու. ներկայացուցիչ: Նա որ մէկի կողմից լիազօրւում է բանակցել ուրիշի հետ որոշ հարցի մասին: Ազգի կամ նրա մի մասի կողմից ընտրուած անձ, որ լիազօրւում է մասնակցելու պետական կամ հասարակական բնոյթ ունեցող ժողովների նիստերի:*
**ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ**, ած. *Պատգամաւորին յատուկ:*
**ՊԱՏԳԱՄԱՒՈՐԵԼ**, բ. *Պատգամաւոր ուղարկել:*
**ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Պատգամաւոր լինելը:*
**ՊԱՏԳԱՄԵԼ**, գ. *Պատգամ տալ:*
**ՊԱՏԳԱՐԱԿ**, գ. *Երկու ձողերի վրայ ամբացած տախտակամած, որի վրայ նստեցնում կամ պառկեցնում են հիւանդին կամ վիրաւորին:*
**ՊԱՏԳԱՐԱԿԱԲԱՐՁ**
**ՊԱՏԳԱՐԱԿԱԿԻՐ** } ած. գ. *Պատգարակը վերցնող:*
**ՊԱՏԳԱՐԱԿԱՒՈՐ**, ած. *Պատգարակ ունեցող:*
**ՊԱՏԵԱՆ**, գ. *Ինչ որ ծառայում է մի բան պատելու: Երկայնաձեւ ու նեղ աման: Մի քանի պտուղների պինդ կեղեւ:* Նման. *Զրահ: Պահպանակ:*
**ՊԱՏԵԱՆԱԿԻՐ**, ած. գ. *Պատեան կրող:*
**ՊԱՏԵԼ**, բ. *Պատ՝ ցանկապատ քաշել: Պատանել, Ծածկել: Շրջեցնել:*
**ՊԱՏԵՀ**, ած. *Տեղին կամ ժամանակին պատահած:*
**ՊԱՏԵՀԱԲԱՐ**, մկ. *Պատեհ կերպով, պատշաճաբար:*
**ՊԱՏԵՀԱԿԱՆ**, ած. *Պատեհ, Ինչ որ կատարւում է հանգամանքներին յարմարուելով:*
**ՊԱՏԵՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քաղաքականութիւն՝ ըստ որում մարդ դժուար հանգամանքներում մեղմացել ու չափաւորել է իր սկզբունքները:*
**ՊԱՏԵՀԱՊԱՇՏ**, ած. *Պատեհ հանգամանքները իր շահերին օգտագործող:*
**ՊԱՏԵՀԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ**, գ. *Պատեհապաշտ լինելը:*
**ՊԱՏԵՀԱՒՈՐ**, ած. *Պատեհ:*
**ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ**, գ. *Պատեհ՝ պատշաճ լինելը:*
**ՊԱՏԵՆԱԳՈՐԾ**, գ. *Պատեաններ շինող:*
**ՊԱՏԵՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Պատենագործ լինելը:*
**ՊԱՏԵՆԱԶԷՆ**, ած. *Պատեաններով զինուած, զրահաւորուած:*
**ՊԱՏԵՆԱԹԵՒ**, ած. *Թեւերի վրայ պատեաններ ունեցող:*
**ՊԱՏԵՆԱՁԵՒ**, ած. *Պատեանի ձեւ ունեցող:*

ՊԱՏԵՆԱՄԵՐԿ, ած. *Պատեանից մերկացրած:*

ՊԱՏԵՆԱՊԱՏ, ած. *Պատեանի նման պատուած:*

ՊԱՏԵՆԱՒՈՐ, ած. *Պատեան ունեցող:*

ՊԱՏԵՆԻԿ, գ. *Փոքր պատեան (բզէզների):*

ՊԱՏԵՐԱԶՄ, գ. *Զինուած ոյժերով ընդհարում: Միանուագ ընդհարում:* Նման. *Կագ ու կռիւ: Հակառակ զգացումների ընդհարում:*

ՊԱՏԵՐԱԶՄԱԳԷՏ, Տ. *Ռազմագէտ:*

ՊԱՏԵՐԱԶՄԱԳԼՈՒԽ, գ. *Պատերազմի գլխաւորը:*

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ, ած. *Պատերազմին յատուկ: Պատերազմի հետեւանքնով ձեռք բերուած:* Հմմտ. *Պաշարողական դրութիւն:*

ՊԱՏԵՐԱԶՄԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Պատերազմակից լինելը:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՇՈՒՆՉ, ած. *Պատերազմ շնչող:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՊԱՏ, ած. *Պատերազմով պատուած:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՊԱՏՈՒՄ, գ. *Պատերազմի մասին ստեղծագործութիւններ:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՍԷՐ, ած. *Պատերազմ սիրող: Կռուասէր:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Պատերազմասէր լինելը:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՏԵԱՑ, ած. *Պատերազմը ատող:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՏՈՒ, ած. *Պատերազմ տուող:*

ՊԱՏԵՐԱԶՄԱՓՈՐՁ, ած. *Պատերազմի մէջ փորձուած:*

ՊԱՏԵՐԱԶՄԵԼ, բ. *Զինուած ոյժերով պատերազմ մղել: Ընդհանրապէս՝ կռուել:* Նման. *Պայքարել մի բանի դէմ:*

ՊԱՏԵՐԱԶՄԻԿ, ած. *Պատերազմող, ռազմիկ:*

ՊԱՏԵՐԱԶՄԻՉ, ած. գ. *Նա որ պատերազմում է:*

ՊԱՏԵՐԱԶՄՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Պատերազմող լինելը:*

ՊԱՏԺԱԳԻՐՔ, Տ. *Պատժական օրէնսգիրք:*

ՊԱՏԺԱԳՈՐԾԻՔ, գ. *Պատժելու համար նախատեսուած՝ օգտագործուող գործիք:*

ՊԱՏԺԱԿԱՆ, ած. *Պատժի եւ պատժելու յատուկ:*

ՊԱՏԺԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պատժելի՝ պատժի արժանի լինելը:*

ՊԱՏԺԱԿԻՐ, ած. *Պատիժ կրող:*

ՊԱՏԺԱԿԻՑ, ած. *Պատժի ընկեր:*

ՊԱՏԺԱՀԱԼԱԾ, ած. *Պատիժը հալածող, պատժից խուսափող:*

ՊԱՏԺԱՀԱՐ, ած. *Պատժով հարուածուած:*

ՊԱՏԺԱՊԱՐՏ, ած. գ. *Նա որ գործած յանցանքի համար պարտաւոր է պատիժ կրել:*

ՊԱՏԺԱՊԱՐՏԵԼ, բ. *Պատժի ենթարկել:*

ՊԱՏԺԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. *Պատժապարտ լինելը:*

ՊԱՏԺԱՋՈԿԱՏ, Տ. *Պատժիչ ջոկատ:*

ՊԱՏԺԱՍԷՐ, ած. *Պատժել սիրող:*

ՊԱՏԺԱՏԵՍԱԿ, գ. *Պատժի տեսակ:*

ՊԱՏԺԱՐԱՆ, գ. *Պատժի տեղ:*

ՊԱՏԺԱՐԱՐ, ած. *Պատիժ տուող:*

ՊԱՏԺԱՒՈՐ, ած. *Պատժի ենթարկուած:*

ՊԱՏԺԵԼ, բ. *Մէկին՝ գործած յանցանքի համար օրէնքով սահմանուած պատիժը տալ:*

ՊԱՏԺԵԼԻ, ած. *Ինչ որ ըստ օրէնքի արժանի է պատժի:*

ՊԱՏԺԻՉ, ած. *Պատժող, պատժելու համար կազմակերպուած:*

ՊԱՏԺՈՂԱԿԱՆ, ած. *Պատժելու վերաբերեալ:*

ՊԱՏԺՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Պատժելը:*

ՊԱՏԻԺ, գ. *Զգալի չարիք, որին ենթարկուում է մէկը քրէական դատարանի*

*վըժռով:*
ՊԱՏԻՃ, գ. *Մի քանի բոյսերի պատեանը: Կանաչ լոբիա: Ակացիա ծառը:*
ՊԱՏԻՃԱՂ, ած. *Ոլորապտոյտ, մանուածապատ:*
ՊԱՏԻՃԱՒՈՐ, ած. *Պատիճ ունեցող:*
ՊԱՏԻՐ, ած. *Արտաքին հրապոյրով խաբող, խաբէական:*
ՊԱՏԻԻ, գ. *Փառք, շուք, յարգանք: Բարի անուն՝ համբաւ: Պարծանք, Բարձր դիրք, Շքանշան, Ընծայ, նուէր:* (Քրկն.) *Մի նշան, ւ գրի նման, որ դնում էին համառօտութեամբ գրուած բառերի վրայ:*
ՊԱՏՕԱԿԱՆ, ած. *Մէկի տան պատը ծակող:*
ՊԱՏԿԱՆ, ած. *Պատկանաւոր, պատշաճ: Օրինաւոր:*
ՊԱՏԿԱՆԱԲԱՐ, մկ. *Ինչպէս պատկանում է, պատշաճաբար:*
ՊԱՏԿԱՆԱԳԻՐ, ած. *Պատշաճաբար գրուած:*
ՊԱՏԿԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Պատշաճաւոր գրութիւն:*
ՊԱՏԿԱՆԱԿԻՐ, ած. *Պատկանաւոր, գեղեցկայարմար:*
ՊԱՏԿԱՆԱՏԵՍԱԿ, ած. *Պատշաճ՝ վայելուչ տեսք ունեցող:*
ՊԱՏԿԱՆԱՒՈՐ, ած. *Նա՝ որին պատշաճ է. յարմարաւոր, արժանաւոր: Տեղին:*
ՊԱՏԿԱՆԱՒՈՐԱԲԱՐ, մկ. *Պատկանաւոր կերպով:*
ՊԱՏԿԱՆԴԱՐԱՆ, գ. *Նետի աման:* Տ. *Կապարճ:*
ՊԱՏԿԱՆԵԼ, բ. *Յարմարեցնել: Կցել:*
ՊԱՏԿԱՆԵԼ, բ. *Պատշաճ լինել, Սեփականութիւնը լինել: Սեփականիլ:*
ՊԱՏԿԱՆԵԼԻ, ած. *Ինչ որ պատկանելու է: Սեփականութիւն ըլլալը:*
ՊԱՏԿԱՆՈՒԹԻՒՆ, ՊԱՏԿԱՆՈՒՄ } գ. *Պատկանելը:*
ՊԱՏԿԱՌ, գ. Տ. *Պատկառանք: Ամօթ:*
ՊԱՏԿԱՌԱԶԴՈՒ, ած. *Յարգանք պարտադրող:*
ՊԱՏԿԱՌԱԿԱՆ, ած. *Ինչից պէտք է պատկառել, ամօթալի:*
ՊԱՏԿԱՌԱՆՔ, գ. *Ամօթի զգացում, Ակնածութիւն:*
ՊԱՏԿԱՌԵԼ, բ. *Ամօթ զգալ:*
ՊԱՏԿԱՌԵԼԻ, ած. *Որից կմ ինչից որ մարդ պատկառում է: Վեհաշուք:*
ՊԱՏԿԱՌԿՈՏ, Տ. *Ամօթխած:*
ՊԱՏԿԱՌՈՏ, ած. *Ամօթխած:*
ՊԱՏԿԱՌՈՒԹԻՒՆ, Տ. *Պատկառանք:*
ՊԱՏԿԱՌՈՒԿ, գ. (Բուս.) *Թիթեռնածաղիկների կարգին պատկանող գեղեցիկ բոյս:*
ՊԱՏԿԱՐ, գ. *Հանդերձի եզերքների պատաձեւ կարը:*
ՊԱՏԿԵԼ, բ. *Կուտել:*
ՊԱՏԿԵՐ, գ. *Կերպարանք: Դէմքի դրոշմ մետաղի վրայ: Նկար: Դէմք՝ կերպարանք: Պատկերաւուր:*
ՊԱՏԿԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Գիտութիւն եւ բացատրութիւն հին պատկերների, քանդակների եւ արձանների:*
ՊԱՏԿԵՐԱԲԵԿՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Քրիստոնէական մի աղանդ, որ ծագեց ութերորդ դարում եւ քարոզում էր ջարդել սրբերի պատկերները:*
ՊԱՏԿԵՐԱԳԷՏ, ած. գ. *Պատկերագիտութեան հմուտ:*
ՊԱՏԿԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Գիտութիւն նկարուած կմ քանդակուած պատկերների:*
ՊԱՏԿԵՐԱԳԻՐ, ած. *Պատկեր գրող:*
ՊԱՏԿԵՐԱԳՈՐԾ, ած. *Պատկերներ շինող:*
ՊԱՏԿԵՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերագործ լինելը:*
ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ, ած. *Պատկերագրութեան յատուկ:*
ՊԱՏԿԵՐԱԳՐԵԼ, բ. *Պատկեր նկարել: Պատկերացնել:*

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերացնելը, նմանեցնելը:*

ՊԱՏԿԵՐԱԴԱՇՏ, գ. (փխբ.): *Պատկերման ոլորտ՝ տարածք:*

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, ած. *Պատկերներով զարդարուած:*

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԵԼ, բ. *Պատկերներով զարդարել:*

ՊԱՏԿԵՐԱԶԳԵՍՏ, ած. *Մէկի պատկերը՝ կերպարանք զգեցած:*

ՊԱՏԿԵՐԱԿԱԶՄ, ած. գ. *Պատկեր կազմող:*

ՊԱՏԿԵՐԱԿԱԼ, ած. գ. *Պատկերը պահող:*

ՊԱՏԿԵՐԱԿԵՐՊ, ած. *Պատկերի կերպ ունեցող:*

ՊԱՏԿԵՐԱԿԻՑ, ած. *Պատկերով՝ կերպարանքով ուրիշին նման:*

ՊԱՏԿԵՐԱԿՈՓ, ՊԱՏԿԵՐԱԿՈՒՌ, ած. գ. *Քարից պատկերներ կոփող, արձանագործ:*

ՊԱՏԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերակից՝ կերպարանակից լինելը:*

ՊԱՏԿԵՐԱՀԱԼԱԾ, ած. (Եկեղ.) *Սրբերի պատկերները հալածող:*

ՊԱՏԿԵՐԱՀԱՆ, ած. գ. *Մէկի պատկերը հանող՝ նկարող:*

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ, գ. *Ցուցահանդէս, որտեղ ի ցոյց են դրուում մի կմ մի քանի նկարիչների նկարները:*

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԵԼ, բ. *Մէկի պատկերը նկարել:*

ՊԱՏԿԵՐԱՀԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերահան լինելը:*

ՊԱՏԿԵՐԱՃՈԽ, ած. *Ճոխ պատկերով:*

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏ, ած. գ. (Եկեղ.) *Պատկերամարտութեան կողմնակից:*

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԵԼ, բ. (Եկեղ.) *Սրբերի պատկերների դէմ մարտնչել:*

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբերի պատկերների դէմ կռիւ, հալածանք սրբերի պատկերների դէմ:*

ՊԱՏԿԵՐԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերային մտածողութիւն:*

ՊԱՏԿԵՐԱՅԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբերի պատկերները յարգելը:*

ՊԱՏԿԵՐԱՆԱԼ, բ. *Մէկի պատկերն ստանալ: Պատկերի կերպարանք առնել:*

ՊԱՏԿԵՐԱՌՃ, գ. *Պատկերման՝ նկարելու ոճ:*

ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏ, ած. գ. (Եկեղ.) *Պատկերապաշտութեան հետեւող: Սրբապատկերներ պաշտել:*

ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. (Եեկեղ.) *Պատկերապաշտ լինելը:*

ՊԱՏԿԵՐԱՍԷՐ, ած. գ. (Եկեղ.) *Սրբերի պատկերներ սիրող՝ յարգող:*

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. *Պատկեր ստեղծելը՝ պատկերակերտում:*

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ, գ. *Սրահ, դահլիճ, որտեղ կախուած են պատկերներ դիտելու համար:*

ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌ, գ. *Հեռատեսիլ, հեռուստացոյց:*

ՊԱՏԿԵՐԱՎԱՃԱՌ, ած. գ. *Պատկերներ վաճառող:*

ՊԱՏԿԵՐԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերավաճառ լինելը:*

ՊԱՏԿԵՐԱՏԵԱՑ, ած. (Եկեղ.) *Սրբերի պատկերներն ատող:*

ՊԱՏԿԵՐԱՏԻՊ, Տ. *Պատկերակերպ:*

ՊԱՏԿԵՐԱՑԱՆՑ, *Ցանց, որը նախանըշանակուած է լոյսի ճառագայթների փնջի կառուցուածքային փոխակերպման համար:*

ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ, գ. *Պատկերանալը:*

ՊԱՏԿԵՐԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ, գ. *Դէմքին նայելով նկարագիրը նախատեսել:*

ՊԱՏԿԵՐԱՒՈՐ, ած. *Պատկերներ պարունակող:*

ՊԱՏԿԵՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. *Պատկերաւոր լինելը:*

ՊԱՏԿԵՐԱՒՈՐՈՒԵԼ, բ. *Պատկերի*

*տպաւորել:*
ՊԱՏԿԵՐԱՔԱՐ, գ. (Հանք.) *Խեցաքարի մի տեսակ:*
ՊԱՏԿԵՐԵԼ, Տ. *Պատկերացնել:*
ՊԱՏԿԵՐՀԱՆ, Տ. *Դիմանկարիչ, լուսանկարիչ:*
ՊԱՏԿԵՐՈՒՄ, գ. *Պատկերանալը:*
ՊԱՏԿԻՑ, ած. *Որոնց տների պատերը իրար կպած են:*
ՍՐԲԱՀԱՅԵԱՑ, ած. *Մաքուր հայեացք ունեցող:*
ՍՐԲԱՀՈԳԻ, ած. (Եկեղ.) *Հոգով սուրբ:*
ՍՐԲԱՁԻԳ, ած. (Եկեղ.) *Սրբութեամբ երկարատեւ պաս պահող:*
ՍՐԲԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբամասն լինելը:*
ՍՐԲԱՄԱՔՈՒՐ, ած. *Սուրբ եւ մաքուր, ջինջ, պայծառ:*
ՍՐԲԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբամիտ լինելը:*
ՍՐԲԱՆ, գ. (Կազմախ.) *Նախաղիքի վերջին ծայրը: Յետոյք:*
ՍՐԲԱՆԱԼ, բ. *Սուրբ դառնալ:*
ՍՐԲԱՆԱԿ, գ. (Կազմախ.) *Տարածութիւնը սրբանի եւ սեռական գործարանների միջեւ:*
ՍՐԲԱՆՈՐՈԳ, ած. (Եկեղ.) *Սրբութեամբ նորոգուած:*
ՍՐԲԱՆՈՒԷՐ, ած. *Սուրբ եւ նուիրական, սրբազան:*
ՍՐԲԱՇԷՆ, ած. *Մաքուր շինուած:*
ՍՐԲԱՊԱՀՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Պասը սուրբ պահելը:*
ՍՐԲԱՊԷՍ, մկ. *Սրբաբար:*
ՍՐԲԱՊԻՂԾ, ած. *Սրբութիւնը պղծող:*
ՍՐԲԱՊՂԾԵԼ, բ. *Սրբապղծութիւն անել:*
ՍՐԲԱՊՂԾՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբապղծելը:*
ՍՐԲԱՍԱՀՄԱՆ, ած. (Եկեղ.) *Սրբութեամբ կամ սրբութեան համար սահմանուած:*
ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Աստծուն փառաբանելը:*
ՍՐԲԱՍԷՐ, ած. (Եկեղ.) *Սրբութիւն՝ մաքրութիւն սիրող:*
ՍՐԲԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբասէր լինելը:*
ՍՐԲԱՍԻՐՏ, ած. *Սուրբ սիրտ ունեցող:*
ՍՐԲԱՎԱՅԵԼ, ած. (Եկեղ.) մկ. *Ինչպէս վայել է սրբին:*
ՍՐԲԱՎԱՅԵԼՈՒՉ, ած. (Եկեղ.) *Սրբերին վայելուչ:*
ՍՐԲԱՎԱՅՐ, գ. *Սուրբ՝ նուիրական տեղ. տաճար:*
ՍՐԲԱՏԱՇ, ած. *Մաքուր տաշած:*
ՍՐԲԱՏԱՌ, ած. (Եկեղ.) *Գործ է ածւում բացառապէս իբրեւ մակդիր հայոց կաթողիկոսների կոնդակների:*
ՍՐԲԱՏԵՂ }
ՍՐԲԱՏԵՂԻ } Տ. *Սրբավայր:*
ՍՐԲԱՏՈՒՆ, գ. (Եկեղ.) *Սրբի տուն, վանք:*
ՍՐԲԱՏՈՒՓ, Տ. *Մասնատուփ:*
ՍՐԲԱՐԱՆ, գ. (Եկեղ.) *Սրբի (Աստծու) բնակարան, տաճար:*
ՍՐԲԱՐԱՐ, ած. (Եկեղ.) *Սուրբ անող, մաքրող:*
ՍՐԲԱՐԱՐԱԿԱՆ, ած. (Եկեղ.) *Սրբացնող:*
ՍՐԲԱՑՈՒՄ, գ. (Եկեղ.) *Սրբանալը, սրբացնելը:*
ՍՐԲԱՒԱՆԴ, ած. *Ինչ որ սուրբ աւանդ է*

*յետնորդների համար:*
ՄՐԲԱՓԱՅԼ, ած. *Սրբութեամբ՝ մաքրութեամբ փայլող:*
ՄՐԲԱՔԱՐ, գ. *Սրբատաշ քար:*
ՄՐԲԱՔՆՆԵԼ, բ. (Եկեղ.) *Մէկին կմ մի գրուածք խստութեամբ քննել կրօնական տեսակէտից:*
ՄՐԲԱՔՆՆՈՒԹԻՒՆ, (Եկեղ.) Տ. *Հաւատաքննութիւն:*
ՄՐԲԵԼ, բ. *Ընդհանրապէս՝ մաքրել:*
ՄՐԲԵՐԳՈՒԹԻՒՆ, (Եկեղ.) գ. *Սուրբ սուրբ երգելը, սրբասացութիւն:*
ՄՐԲԻՉ, ած. *Նա որ սրբում է, սրբող:* *Որեւէ լաթ: Անձեռոց, երեսսրբիչ:*
ՄՐԲՈՒԹԻՒՆ, գ. *Սուրբ՝ մաքուր լինելը:* *Մեղքերի քաւութիւն:* (Եկեղ.) *Հաղորդութիւն:*
ՄՐԲՈՒՀԻ, ած. գ. (Եկեղ.) *Սուրբ անձ՝ իգական սեռի:*
ՄՐԴՈՂԵԼ, (արեւմտահայ լեզուով), բ. *Սիրտը շուռ գալ, բարկանալ, նեղանալ:*
ՄՐԴՈՂՈՒՄ, գ. *Զայրոյթ, զարշում:*
ՄՐԵԼ, բ. *Կտրող գործիքի բերանը բարակացնել: Նրբացնել: Բորբոքել:*
ՄՐԸՆԹԱՑ, ած. մկ. *Սուր՝ արագ ընթացք ունեցող:*
ՄՐԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Սրընթաց լինելը:*
ՄՐԹԱԼ, բ. *Վազելուց հեւալ:*
ՄՐԹՄՐԹԱԼ, բ. *Ցրտից դողդողալ:*
ՄՐԹՄՐԹԱԼԻ, մկ. *Մրթմրթալով:*
ՄՐԹՄՐԹԱՆ, ած. *Մրսկան:*
ՄՐԻԿ, ած. գ. *Սուր՝ զիլ ձայն ունեցող:*
ՄՐԻԿԱՅ, ած. գ. *(Սրով) զինուած աւազակ: Դատարկապորտ, փողոցային: Ստոր՝ անազնիւ մարդ:*
ՄՐԻԿԱՅԱԲԱՐ, մկ. *Սրիկայի պէս:*
ՄՐԻԿԱՅԱԿԱՆ, ած. *Սրիկային յատուկ:*
ՄՐԻԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. *Սրիկայ լինելը:*
ՄՐԻՆԳ, գ. *Փչողական երաժշտական գործիք:*
ՄՐԻՉ, ած. գ. *Նա որ սրում է, սրող:*

ՄՐԾԵԼ
ՄՐԾԷԼ } գ. *Աքցան:*
ՄՐՀԱՐ, գ. *Սուր փուշ:*
ՄՐՃԱԿԱԹ, գ. *Կաթով սուրճ:*
ՄՐՃԱՀԱՄ, ած. (փխբ.): *Սրճաբոյր:*
ՄՐՃԱՂԱՑ, գ. *Ձեռքի աղօրիք:*
ՄՐՃԱՄԱՆ, գ. *Աման, որի մէջ պահում են աղացած սուրճը:*
ՄՐՃԱՍՏԱՆ, գ. *Որտեղ սրճենիներ՝ սուրճի թուփեր են մշակւում:*
ՄՐՃԱՎԱՃԱՌ, ած. գ. *Սուրճ վաճառող:*
ՄՐՃԱՐԱՆ, գ. *Խանութ՝ ճաշարան, որտեղ զնում են սուրճ խմելու:*
ՄՐՃԱՐԱՆԱՊԵՏ, գ. *Սրճարանի պետ, կառավարիչ:*
ՄՐՃԱՐԺԷՔ, գ. *Սրճի արժէքը՝ վաճառքի գինը:*
ՄՐՃԵՓ, ած. *Սուրճ եփող: Սուրճ եփելու սարք:*
ՄՐՃԵՓՈՑ, գ. *Մետաղէ աման, որի մէջ սուրճը եփում են:*
ՄՐՆԳԱԿԱՆ, ած. *Սրինգին յատուկ:*
ՄՐՆԳԱՀԱՐ, ած. գ. *Սրինգ ածող:*
ՄՐՆԳԱՀՆՉԻՒՆ, գ. *Սրնգանուագ՝ սրնգի հնչիւն:*
ՄՐՆԳԵԼ, բ. *Սրինգի ձայն հանել:*
ՄՐՆԳԵՆԻ, գ. (Բուս.) *Սրտազգիների կարգին պատկանող թուփ:*
ՄՐՆՉԱԿՆԵՐ, յոգն. գ. (Կենդ.) *Ճճեկեր կենդանիների կարգին պատկանող կենդանիների ցեղ:*
ՄՐՈՏ, *Սրուած, սուր:*
ՄՐՈՏԵԼ, բ. *Բոլորը սրել:*
ՄՐՈՏՆ, ած. *Սուր՝ արագ ընթացք ունեցող:*
ՄՐՈՑ, գ. *Յեսանաքար:*
ՄՐՈՑԱՔԱՐ, Տ. *Սրոց:*
ՄՐՈՒԱԿ, *Եղջիւր, որ գործ էր ածուում մէջը հեղուկ ածելու համար: Եղջիւր, որով բժիշկներն արիւն էին առնում: Ապակիէ նուրբ շիշ:*
ՄՐՈՒԱԿԱԿԱԼ, գ. *Աման կմ մատու-*

*ցարան, որի վրայ դրուում է սրուակը։*

**ՍՐՈՒԹԻՒՆ**, գ. *Սուր լինելը։*

**ՍՐՈՒԿ**, ած. *Փոքր ինչ սուր։*

**ՍՐՈՒՄ**, գ. *Սրելը, սրուելը։*

**ՍՐՈՒՆՔ**, գ. (Կազմախ.) *Մարդու եւ չորքոտանիների ոտները։*

**ՍՐՄԿԱՊԱՆ**, *Քօղ՝ որով ծածկում էին հարսի երեսը։ Հարսի անկողինը առանձնացնող վարագոյր։*

**ՍՐՄԿԱՐԱՆ**, գ. (Կրօն.) *Տաշտ կմ սկաւառակ զոհերի արիւնը սրսկելու համար։*

**ՍՐՄԿԵԼ**, բ. *Ջուրը կմ այլ հեղուկ մանր կաթիլներով կմ փոշու նման ցանել։* Տ. *Ներարկել։* Նման. *Գաղափարներով ուրիշին վարակել։*

**ՍՐՄԿԻՉ**, ած. գ. *Նա որ սրսկում է, սրսկող։*

**ՍՐՄԿՈՒՄ**, գ. *Սրսկելը։*

**ՍՐՍՓԱԼ**, բ. *Սարսուռ զգալ։ ողալ։*

**ՍՐՍՓԱՏ**, գ. *Անձրեւից լաւ թրջուելը։*

**ՍՐՍՓՈՒՔ**, գ. *Սարսափ, դող։*

**ՍՐՏԱԲԱԽ**, ած. *Որի սիրտը բաբախում է երկիւղից։*

**ՍՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Սրտի ուսումնասիրութիւն։*

**ՍՐՏԱԲԱՑ**, ած. Սիրտը բացող։

**ՍՐՏԱԲԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Սրտաբաց լինելը։*

**ՍՐՏԱԲԵԿ**, ած. մկ. *Սիրտը բեկուած։ Սրտակոտոր։*

**ՍՐՏԱԲԵԿԵԼ**, բ. *Սրտաբեկ անել, սիրտը կոտրել։*

**ՍՐՏԱԲԵԿՈՒԹԻՒՆ**, գ. *Սրտաբեկ լինելը։*

**ՍՐՏԱԲՈՐԲ**, գ. (Ախտաբ.) *Սրտի բորբոքում։*

**ՍՐՏԱԲՈՐԲՈՔ**, ած. *Սիրտը բորբոքող։*

**ՍՐՏԱԲՈՒԽ**, ած. *Սրտից բխած, ամբողջ սրտից եղած։։*

**ՍՐՏԱԳԷՏ**, ած. *Մարդու սրտում եղածը գիտցող։ Սրտի հիւանդութեան մասնագէտ։*

**ՍՐՏԱԳԻՆ**, ած. մկ. *Սրտանց։*

**ՍՐՏԱԳԻՐ**, գ. *Բժշկական գործիք, որ թղթի վրայ զիգզագներով գծում է սրտի բաբախումները։*

**ՍՐՏԱԳՈՉ**, ած. *Սրտից դուրս եկած գոչումով։*

**ՍՐՏԱԳՐԱՒ**, ած. *Սիրտ գրաւող։*

**ՍՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Սրտի բաբախումները սրտագրով գրելը։*

**ՍՐՏԱԴԷՏ**, գ. *Գործիք, որով դիտում են անասունների սրտի բաբախումները։*

**ՍՐՏԱԴՈՂ**, գ. *Սրտի դող։*

**ՍՐՏԱԶԴԵՑԻԿ**, ած. *Սրտի վրայ ազդող՝ ներգործող։*

**ՍՐՏԱԶԵՂ**, ած. *Սիրտը լցուած, յորդութեամբ սրտից դուրս եկած։*

**ՍՐՏԱԶԵՂՈՒՄ**, գ. *Սրտի լցուելը։*

**ՍՐՏԱԹԱՓ**, ած. մկ. *Սիրտը թափած։*

**ՍՐՏԱԹԱՓՈՒՄ**, գ. *Սրտաբեկութիւն։*

**ՍՐՏԱԹՈՎ**, ած. *Սիրտ թովող, սրտապարար։*

**ՍՐՏԱԹՈՒՆԴ**, ած. մկ. *Սիրտը թունդ ելած։*

**ՍՐՏԱԺԱԺ**, գ. *Սրտի ժաժ գալը, սիրտը խառնուելը։*

**ՍՐՏԱԺԱՅԹՔ**, ած. *Սրտից ժայթող։*

**ՍՐՏԱԼԻ**, ած. մկ. *Լիասիրտ։*

**ՍՐՏԱԼԻՐ**, ած. *Լիասիրտ։*

**ՍՐՏԱԽԱՌՆՈՑ**, գ. *Սիրտը խառնուելը, սրտաժաժ։* Փոխ. *Ջզուանք։*

**ՍՐՏԱԽՈՐՇ**, գ. *Սրտի խորշ, սրտի փորոք։*

**ՍՐՏԱԽՈՑ**, ած. մկ. *Սիրտը խոցուած։*

**ՍՐՏԱԽՏ}**

**ՍՐՏԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ}** գ. *Սրտի հիւանդութիւն։*

**ՍՐՏԱԽՏԱՒՈՐ**, ած. *Սրտախտ՝ սրտի հիւանդութիւն ունեցող։*

**ՍՐՏԱԽՕՍԻԿ**, ած. *Սրտից խօսող։*

**ՍՐՏԱԿԱԹ**, ած. գ. *Խանդակաթ, սիրավառ։*

ՄՐՏԱԿԱՐՕՏ, ած. *Սրտով կարօտած, շատ կարօտած։*

ՄՐՏԱԿԵՂԵՔ, ած. *Սիրտը կեղեքող։ Սրտաճմլիկ։*

ՄՐՏԱԿԷԶ, ած. *Սիրտը կիզող՝ այրող։*

ՄՐՏԱԿԷՍ, ած. մկ. *Կիսասիրտ։*

ՄՐՏԱԿԷՐ, փխբ. *Սիրտ ուտող, գրաւիչ։*

ՄՐՏԱԿԻՑ, ած. *Սրտերով իրար մօտ։*

ՄՐՏԱԿՈՏՈՐ, ած. մկ. *Սիրտը կոտրած, անսիրտ։*

ՄՐՏԱԿՏՈՒՐ, ած. *Սրտաբեկ։*

ՄՐՏԱԿՐԱՆՔ, գ. (Կազմախ.) *Թաղանթ, որ պատում է սիրտը։*

ՄՐՏԱՀԱՃՈՅ, ած. *Սրտին հաճելի։*

ՄՐՏԱՀԱՃՈՒԹԻՒՆ, գ. *Սրտահաճ լինելը։*

ՄՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Համբերութիւնից հանելը, գրգռելը։*

ՄՐՏԱՀԱՌԱՉ, ած. մկ. *Սրտից հառաչող։*

ՄՐՏԱՀԵՌԻՉ, ած. *Ուրիշի համար սիրտը ցաւող։*

ՄՐՏԱՀՈՎԱՆՔ, գ. *Սրտի հովութիւն։*

ՄՐՏԱՃԱՔ, ած. մկ. *Սիրտը ճաքած։*

ՄՐՏԱՃՄԼԻԿ, ած. *Խիստ տխրալի։*

ՄՐՏԱՄԱՇ, ած. *Սիրտը մաշող։*

ՄՐՏ(Ա)ՄԱՇՈՒՔ, գ. *Ինչ որ սրտամաշ է անում։*

ՄՐՏԱՄԵՌ, ած. Տխուր։

ՄՐՏԱՄՈՐՄՈՔ, ած. *Սիրտ մորմոքեցնող, խղճալի։ Սրտաճմլիկ։*

ՄՐՏԱՅԻՆ, ած. *Սրտին յատուկ։*

ՄՐՏԱՅՈՅԶ, ած. *Սիրտ յուզող։*

ՄՐՏԱՅՈՒԶՈՒԹԻՒՆ, գ. *Սրտայոյզ լինելը։*

ՄՐՏԱՅՕԺԱՐ, ած. *Սրտանց՝ յօժարութեամբ եղած։*

ՄՐՏԱՆՑ, մկ. *Ամբողջ սրտով։*

ՄՐՏԱՇԱՐԺ, ած. *Սիրտ շարժող՝ յուզող։*

ՄՐՏԱՇԱՐԺԵԼ, բ. *Յուզել։*

ՄՐՏԱՇԷՆ, ած. *Սիրտ բացող։*

ՄՐՏԱՊԱԿԱՍ, ած. *Դժգոհ։*

ՄՐՏԱՊԱՏԱՌ, ած. մկ. *Սրտաճաք։ Լեղապատառ։*

ՄՐՏԱՊԱՐԱՐ, ած. *Զմայլեցնող, հոգեպարար։*

ՄՐՏԱՊԻՆԴ, ած. *Սիրտը պինդ՝ քաջասիրտ։*

ՄՐՏԱՊՆԴԵԼ, բ. *Սիրտ տալ։ Քաջալերել։*

ՄՐՏԱՊՆԴՈՒԹԻՒՆ, գ. *Սրտապնդելը։*

ՄՐՏԱՌԵԼ, բ. *Նեղանալ։*

ՄՐՏԱՌՈՒՉ, ած. *Սրտառած։ Սրտաշարժ։*

ՄՐՏԱՏԱՆՋ, Տ. *Մտատանջ։*

ՄՐՏԱՏԵՍ, ած. Տ. *Սրտագէտ։*

ՄՐՏԱՏԷՐ, ած. *Սիրտ ունեցող, գթոտ, ողորմած։*

ՄՐՏԱՏՈՉՈՐ, ած. *Սիրտ տոչորող, այրող։*

ՄՐՏԱՏՐՈՓ, ած. մկ. *Որի սիրտը տրոփում է։*

ՄՐՏԱՑԱՒ, գ. *Ընդհանրապէս սրտի ցաւ։ Կարեկից։*

ՄՐՏԱՑԱՒԱԲԱՐ, մկ. *Ցաւակցաբար։*

ՄՐՏԱՑԱՒԱՆՔ, գ. *Սիրտ ցաւեցնող։*

ՄՐՏԱՑԱՒՈՒԹԻՒՆ, գ. *Սրտի ցաւ ունենալը։ Կարեկցութիւն։*

ՄՐՏԱՒԵՐ, ած. *Սիրտը աւերուած։*

ՄՐՏԵՂ, ած. *Սրտոտ։*

ՄՐՏԻԿ, գ. *Փոքր սիրտ։*

ՄՐՏԿԵՂ, ած. *Սիրտը վիրաւորող։*

ՄՐՏՄԱՇՈՒՔ, Տ. *Սրտամաշուք։*

ՄՐՏՄՏԵԼ, բ. *Զայրանալ։ Սրտնեղիլ։*

ՄՐՏՄՏԻ, ած. *Զայրացկոտ։*

ՄՐՏՄՏՈՏ, ած. *Բարկացկոտ։*

ՄՐՏՄՏՈՒԹԻՒՆ, գ. *Սաստիկ բարկութիւն։*

ՄՐՏՆԵՂԵԼ, բ. *Սիրտը նեղանալ, բարկանալ։*

ՄՐՏՆԵՂԻՉ, ած. *Սիրտը նեղացնող։*

ՄՐՏՆԵՂՈՒԹԻՒՆ, գ. *Սրտի նեղութիւն։*

ՄՐՏՆԵՂՈՒԿ, ած. *Սրտնեղիչ։*

ՄՐՏՈՎԱՆՈՒԵԼ, բ. *Սրտով դառնալ։*

ՄՐՏՈՎԻՆ, մկ. *Սրտանց։*

ՍՐՏՈՏ, ած. *Քաջասիրտ:*
ՍՐՏՈՏԵԼ, բ. *Սրտովանալ, սրտոտ դառնալ:*
ՍՐՏՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Սրտոտ լինելը, քաջութիւն:*
ՍՐՏՈՒԿ, գ. (Բուս.) *Բոյսերի սիրտը:*
ՍՐՏՑԱՒ, Տ. *Սրտացաւ:*
ՍՐՏՕՔ, ած. մկ. *Սրտի ուզածի պէս:*
ՍՓԱԹ, գ. *Կերպարանք:*
ՍՓԱԾԱՆԵԼԻ, գ. *Մէջքը կապելու լաթ, գոգնոց:*
ՍՓԻՒՌ, ած. *Սփռուած,* գ. *Սփռում:*
ՍՓԻՒՌՔԱԳԷՏ, գ. *Սփիւռքագիտութեան հարցերով զբաղուող մասնագէտ:*
ՍՓԻՒՌՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Սփիւռքահայութեան կեանքի հասարակական, մշակութային եւ այլն կողմերը ուսումնասիրող գիտութիւն:*
ՍՓԻՒՌՔԱՊԱՀՊԱՆ, ած. *Սփիւռքը պահպանող:*
ՍՓԻՒՌՔԱՊԱՏՈՒՄ, գ. *Սփիւռքի թեմայով երկերի ամբողջութիւնը:*
ՍՓՈՓ, գ. Տ. *Սփոփանք: Ամոքում:*
ՍՓՈՓԱԿԱՆ, ած. *Սփոփանք պարունակող:*
ՍՓՈՓԱՆՔ, գ. *Ինչ որ տխուր սիրտը բաց է անում: Մխիթարանք: Ամոքում:*
ՍՓՈՓԵԼ, բ. *Վիշտը ամոքել, մեղմացնել: Ամոքել, մխիթարել:*
ՍՓՈՓԻՉ, ած. գ. *Սփոփող:*
ՍՓՌԵԼ, բ. *Ի սփիւռ տարածել, ծաւալել: Պարզել, փռել:*
ՍՓՌԻՉ, ած. գ. *Սփռող:*
ՍՓՌՈՑ, գ. *Լաթի կտոր, որ փռում են սեղանի վրայ:*
ՍՓՌՈՒՄ, գ. *Սփռելը:*
ՍՓՐԹՆԵԼ, բ. *Գունատուել:*
ՍՓՐԹՆՈՒՄ, գ. *Սփրթնելը: Գունատուիլ:*
ՍՔԱՆՉԱԿԱՆ, ած. *Սքանչացնող:*
ՍՔԱՆՉԱՆԱԼ, բ. *Հիանալ: Զմայլիլ:*
ՍՔԱՆՉԱՆՔ, գ. *Սքանչանալը:*
ՍՔԱՆՉԱՏԵՍ, Տ. *Սքանչելատես:*
ՍՔԱՆՉԱՑՈՒՄ, գ. *Հիացում, զմայլում:*
ՍՔԱՆՉԵԼԱԶՕՐ, ած. *Սքանչելի զօրութեամբ:*
ՍՔԱՆՉԵԼԱԽՕՍ, ած. *Գեղեցիկ խօսող:*
ՍՔԱՆՉԵԼԱԾԻՆ, ած. *Սքանչելի կերպով ծնող:*
ՍՔԱՆՉԵԼԱԿԵՐՊ, ած. *Սքանչելի կերպարանք ունեցող:*
ՍՔԱՆՉԵԼԱՃՈՒՔ, ած. մկ. *Շատ շքեղ:*
ՍՔԱՆՉԵԼԱՏԵՍ, ած. *Սքանչելի տեսք ունեցող:*
ՍՔԱՆՉԵԼԱՏԻՊ, Տ. *Սքանչելի:*
ՍՔԱՆՉԵԼԱՐՈՒԵՍՏ, ած. *Սքանչելի արուեստ ունեցող:*
ՍՔԱՆՉԵԼԱՓԱՌ, ած. *Սքանչելի եւ փառաւոր:*
ՍՔԱՆՉԵԼԻ, ած. *Հրաշալի, հիանալի:*
ՍՔԱՆՉԵԼԻՔ, գ. *Սքանչելի գործ:*
ՍՔԱՆՉԵԼՈՒԹԻՒՆ, գ. *Սքանչելի՝ զմայլելի լինելը:*
ՍՔԵՄ, գ. *Կրօնաւորի տարազ:*
ՍՔԵՄԱԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Սքեմ առնելը, կրօնաւոր դառնալը:*
ՍՔԵՄԱԹՈՂ, ած. *Կրօնաւորի վիճակը լքած:*
ՍՔԵՄԱՒՈՐ, ած. գ. (Եկեղ.) *Սքեմ ունեցող:*
ՍՔԵՓՈՆ, գ. (Կենդ.) *Խիստ թունաւոր օձ:*
ՍՔՕՂԵԼ, Տ. *Քօղարկել: Ծածկել:*
ՍՕԴ, գ. (Բուս.) *Կիպարիսների կարգին պատկանող բոյս:*
ՍՕԼ, գ. *Ոտքի հագանելիք, կօշիկ:*
ՍՕԼ՛, գ. *Եւրոպական երաժշտութեան մէջ՝ ութնեակի հինգերորդ ձայնաստիճանը ներքեւից:*
ՍՕՍ, ած. *Սօսի ծառի նման բարձրահասակ:*
ՍՕՍԻ, գ. (Բուս.) *Կնձենիների կարգին պատկանող շքեղ ծառ:*
ՍՕՍԱՄԲ, Տ. *Սուսամբար:*

**ՍՕՍԱՒԻՒՆ**
**ՍՕՍԱՓԻՒՆ** } գ. *Տերեւների ձայն, խըշ-խըշոց:*

**ՍՕՍԱՓԵԼ,** բ. *Տերեւների խշխշալ:*
**ՍՕՍԻՒՆ,** Տ. *Սօսափիւն:, խշռտոց:*

# Վ, վ

**Վ, վ, վեւ,** գ. *Հայերէն այբուբենի երեսուներորդ տառը եւ քսանչորսերորդ բաղաձայնը: Թուարկութեան երեք հազարի համարժէք, երեք հազարերորդ:*
**ՎԱ՜,** միջ. *Զարմացական բացագանչութիւն:*
**ՎԱԳԵՐԱՁԻ,** գ. *Վագրի նման խայտաբղէտ մորթով ձի:*
**ՎԱԳՈՆ,** (Լատ., գերմ., անգլ.) գ. *Ծածկած մեծ կառք, որ երթեւեկում է երկաթուղագծի վրայով:*
**ՎԱԳՐ,** գ. (Կենդ.*) Կատուազգիների ցեղին պատկանող խոշոր գազան:*
**ՎԱԳՐԱԲԱԶՈՒԿ,** ած. *Որի բազուկն ուժեղ է ինչպէս վագրի թաթը:*
**ՎԱԳՐԱԿԵՐՊ**
**ՎԱԳՐԱԿԵՐՊԵԱՆ** } ած. մկ. *Վագրի նման:*
**ՎԱԳՐԱՃԻՐԱՆ,** գ. *Վագրի ճիրանների նման ճիրան ունեցող:*
**ՎԱԳՐԱՆՄԱՆ,** ած. *Վագրի նմանող՝ նմանութիւն տուող:*
**ՎԱԳՐԵՆԻ,** գ. *Վագրի մորթ:*
**ՎԱԶ,** գ. Տ. *Վազք: Վազ տալ, վազել:*
**ՎԱԶ,** գ. *Անօթ:*
**ՎԱԶ,**
**ՎԱՋՆ,** գ. *Խաղողի որթի յօտած մատերից ընձիւղած ուղէշ:*
**ՎԱԶ,** գ. (Բուս.) *Պատատուկ ծառ:*
**ՎԱԶԱՆ,** ած. *Լաւ կմ շատ վազող:*
**ՎԱԶԵԼ,** բ. *Յատկել, ոստիւն գործել: Արագ քալել:*
**ՎԱԶԿԱՆ,** ած. *Լաւ վազող:*
**ՎԱԶԷ ՎԱԶ**
**ՎԱԶԷՎԱԶ** } մկ. *Վազ տալով, փութով:*
**ՎԱՋՆՈՒՏ,** գ. *Վազ տնկած տեղ:*
**ՎԱԶՈՒԿ,** ած. *Վազող, հոսող:*
**ՎԱԶ ՎԱԶ ԱՆԵԼ**
**ՎԱԶՎԶԵԼ** } բ. *Այս եւ այն կողմը վազել:*
**ՎԱԶՎԶՈՑ**
**ՎԱԶՎԶՈՒՔ** } գ. *Վազվզելը:*
**ՎԱԶՔ,** գ. *Վազելը:*
**ՎԱԶՔԱԹԱՓ,** գ. *Վազքի թափ՝ արագութիւն:*
**ՎԱԶՔԱՊԱՀ,** գ. *Վազելու պահը:*
**ՎԱԶՔՈՒՆԱԿ,** ած. *Վազքի ունակ, վազել կարողացող:*
**ՎԱԹՍՈՒՆ,** թ. *Վեց անգամ տասը:*
**ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ,** գ. *Վաթսուն տարին իբրեւ մի միաւոր:*
**ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱՅ,** ած. *Վաթսուն տարի տեւող:*
**ՎԱԹՍՈՒՆԱՊԱՏԻԿ,** ած. մկ. գ. *Վաթսուն անգամ աւելի:*
**ՎԱԹՍՈՒՆ,** ած. *Վեց անգամ տասը:* գ. *Վաթսուն թիւը:*
**ՎԱԹՍՈՒՆՆՈՑ,** ած. *Վաթսուն միաւոր պարունակող: Վաթսուն տարեկան:*
**ՎԱԽ,** գ. *Գահավէժ տեղ, դարաւանդ:*
**ՎԱԽ,** գ. *Հոգեկան ընկճուած դրութիւն:*
**ՎԱ՜Խ,** միջ. *Վշտի բացագանչութիւն:*
**ՎԱԽԱԶԵՐԾՈՒՄ,** գ. *Վախը անցկացնելը:*
**ՎԱԽԱԿԱԼԵԼ,** բ. *Վախով բռնուել:*
**ՎԱԽԱԿՈԽ,** ած. *Վախակալած:*

ՎԱԽԱՇԱՏ, ած. Վախով լի:
ՎԱԽԵՆԱԼ, բ. Հոգեկան ճնշման ենթարկուել: Երկիւղ կրել մէկից:
ՎԱԽԵՆԱԿ, գ. Վախից առաջ եկած հիւանդութիւն:
ՎԱԽԵՐԱԿ, գ. Այն երակը, որ վախ բռնողը բռնում է:
ՎԱԽԼԱՆ, Տ. Վախկոտ: Երկչոտ:
ՎԱԽԿՈՏ, ած. Չնչին բաներից վախեցող: Անհամարձակ: Վեհերոտ:
ՎԱԽԿՈՏՈՒԹԻՒՆ, գ. Վախկոտ լինելը:
ՎԱԽՃԱՆ, գ. Վերջ: Հկր. Սկիզբ: Աւարտ:
ՎԱԽՃԱՆԱԿԱՆ, ած. Վախճանի, վերջի:
ՎԱԽՃԱՆԵԼ, բ. Վերջացնել, աւարտել: Մեռնիլ:
ՎԱԽՃԱՆԵԼ, բ. Վերջանալ:
ՎԱԽՃԱՆՈՒԵԼ, Տ. Վախճանել:
ՎԱԽՃԱՆԵՐԳԱԿ, ած. Վախճանը՝ վերջը երգող:
ՎԱԽՆԱԼ, Տ. Վախենալ:
ՎԱԽՎՈՐԵԼ, բ. Շատ վախենալ:
ՎԱԽՑՆԵԼ, Տ. Վախեցնել:
ՎԱԿԱՆԱԿ, ած. Լաւ հասած (ցորենի հասկ):
ՎԱԿԱՍ, գ. (Եկեղ.) Եբրայեցիների մէջ՝ քահանայապետի կրծանոցը, եփուդ:
ՎԱԿԱՍԱԿԻՐ, ած. (Եկեղ.) Վակաս կրող (անձ):
ՎԱԿԵԼ, չբ. Մլաւել:
ՎԱ՜Հ, միջ. Բացագանչութիւն, զարմանքի արտայայտութիւն:
ՎԱՀԱԳՆԱՆԱԼ, բ. (բնստ.): Վահագն՝ աստուածային դառնալ:
ՎԱՀԱՆ, գ. Տ. Ասպար: Մարմինը պաշտպանելու համար շարժուն զինուորական սկաւարակ:
ՎԱՀԱՆԱԳԵՂՁ, գ. (Կազմախ.) Գեղձ, որ մարդու մէջ զետեղուած է շնչափողի վերին ծայրում:
ՎԱՀԱՆԱԿ, գ. Փոքր վահան:
ՎԱՀԱՆԱԿԵՐՊ, Տ. Վահանաձեւ:
ՎԱՀԱՆԱԿԻՐ, ած. Վահան կրող:
ՎԱՀԱՆԱԿԻՑ, ած. Նիզակակից:
ՎԱՀԱ134
ՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Վահանակից լինելը:
ՎԱՀԱՆԱՁԵՒ, ած. Վահանի ձեւ ունեցող:
ՎԱՀԱՆԱՁՈՒԿ, գ. (Կենդ.) Տափաձըկերի ցեղին պատկանող տափակ եւ կլոր ձուկ:
ՎԱՀԱՆԱՄԱՐՏ, ած. Վահանով մարտընչող:
ՎԱՀԱՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. Վահաններով զինուած զինուորների կռիւ:
ՎԱՀԱՆԱՇԵՐՏ, գ. Վահանների շերտ, շերտ կազմող վահանների շարք:
ՎԱՀԱՆԱՎԱՌ, ած. Վահանով զինուած:
ՎԱՀԱՆԱՒՈՐ, ած. Վահան կրող:
ՎԱՀԱՆԱՓԱԿ, ած. Վահաններով փակուած:
ՎԱՀԱՆԸՆԿԷՑ, ած. Վահանը դէն ձգող:
ՎԱՀՐ, Տ. Ժահր:
ՎԱՀՐԱՄԱՔՈՒՐ, ած. Վահրից մաքուր, վահրը՝ թարախը, մաքրած, վահր չեղած:
ՎԱՂ, ած. Կանուխ: Հկր. Ուշ, անագան:
ՎԱՂԱԲԱԲԱԽ, ած. Շուտ բաբախող, ամէն առիթով յուզուող:
ՎԱՂԱԲԱՇԽ, ած. Վաղ բաշխուած՝ բաժանուած:
ՎԱՂԱԲԱՐԲԱՌ, ած. Առաջուց ասուած, նախազուշակուած:
ՎԱՂԱԳԱՂԹ, ած. Շուտ՝ վաղուց գաղթած:
ՎԱՂԱԳԻՒՏ, ած. Վաղուց գտնուած՝ հայտնաբերուած:
ՎԱՂԱԳՈՉ, 1. ած. Վաղ կանչող: : 2. գ. (հզվդ.): Առաւոտը շուտ՝ կանուխ հնչող գոչ՝ կանչ:
ՎԱՂԱԳՐԳԻՌ, ած. Շուտ գրգռող ներազդող::
ՎԱՂԱԳՈՅԺ, գ. Անժամանակ՝ վաղաժամ գոյժ՝ բոթ:
ՎԱՂԱԴԱՅԼԱՅԼ, ած. Վաղ՝ կանուխ

*դայլայլող՝ երգող՝ գեղգեղող:*

ՎԱՂԱԴԱՍ, Տ. *Նախադաս:*

ՎԱՂԱԴԱՐՁ, ած. *Շուտ՝ արագ՝ ժամկէտից կանուխ դարձած:*

ՎԱՂԱԴԺԲԱԽՏ, ած. *Շուտ դժբախտացած:*

ՎԱՂԱԵՓ, ած. *Շուտ եփուած՝ խորովուած:*

ՎԱՂԱԶԱՐԴ, ած. *Վաղ զարդարուած (կանաչած, ծաղկած եւն):*

ՎԱՂԱԶԵԿՈՅՑ, ած. *Կանխազեկոյց:*

ՎԱՂԱԶՈՒՍՊ, ած. *Արագ՝ կանուխ զսպուած:*

ՎԱՂԱԶՐՈՅՑ, գ. *Հին՝ հինաւուրց զրոյց՝ պատմութիւն:*

ՎԱՂԱԹԱՌԱՄ, ած. *Շուտով թառամող:*

ՎԱՂԱԹԱՓ, ած. *Շուտ՝ բնականից կանուխ թափուած՝ թափուող:*

ՎԱՂԱԹԵՒ, ած. *Շուտ՝ կանուխ՝ արագ թեւած՝ թռած՝ հեռացած:*

ՎԱՂԱԹՌՉ, ած. *Շուտ՝ արագ թռչող՝ գրաւող: Շատ հրապուրող:*

ՎԱՂԱԹՐԹԻՌ, ած. *Ժամանակից շուտ թրթռացող, զգայուն:*

ՎԱՂԱԺԱՄ, ած. մկ. *Ժամանակից առաջ եղած:*

ՎԱՂԱԺԱՄՈՒԹԻՒՆ, գ. *Վաղաժամ լինելը:*

ՎԱՂԱԺԱՄՕՐԷՆ, բ. *Վաղաժամ կերպով, ժամանակից շուտ:*

ՎԱՂԱԼԵՐԿ, ած. *Ժամանակից շուտ լերկացած՝ մերկացած՝ ծածկոյթից զրկուած:*

ՎԱՂԱԼՔԵԱԼ, ած. *Վաղուց լքուած:*

ՎԱՂԱԽԱԲ, ած. *Շուտ խաբ(ու)ող:*

ՎԱՂԱԽԱԽՏ, ած. *Վաղուց խախտուած:*

ՎԱՂԱԽԱԾ, ած. *Վաղուց խածուած՝ կծուած՝ խայթուած:*

ՎԱՂԱԽԱՅԹ, ած. Նոյնն է՝ *Վաղախած:*

ՎԱՂԱԽԱՉ, ած. *Վաղուց խաչուած:*

ՎԱՂԱԽԵՂԴ, ած. *Վաղուց խեղդուած:*

ՎԱՂԱԽՈԽՈՋ, ած. *Ժամանակից շուտ՝ վաղ խոխոջող:*

ՎԱՂԱԽՈՂԽՈՂ, ած. *Վաղուց խողխողուած՝ խոցոտուած:*

ՎԱՂԱԽՈՏՈՐ, ած. *Վաղուց խոտորուած՝ ուղիղ ճանապարհից շեղուած:*

ՎԱՂԱԾԱԳ, ած. *Շուտ՝ կանուխ ծագած:*

ՎԱՂԱԾԱԾԿ, ած. *Վաղուց ծածկուած,* փխբ. *ապաքինուած՝ բուժուած:*

ՎԱՂԱԾԱՆՕԹ, ած. *Վաղուց ծանօթ:*

ՎԱՂԱԾԻՆ, ած. *Ժամանակից շուտ ծնուած:*

ՎԱՂԱԾՆՈՒՆԴ, ած. *Վաղ ծնած:*

ՎԱՂԱԾՈՒՓ, ած. *Ժամանակից առաջ, սովորականից աւելի շուտ ծփացող:*

ՎԱՂԱԿԱԹ, ած. *Վաղուց, վաղուցուանից կաթող:*

ՎԱՂԱԿԱՐԳ, ած. *Վաղուց կարգաւորուած:*

ՎԱՂԱԿԱՏԱՐ, Տ. *Գերակատար:*

ՎԱՂԱԿԱՐԾ, ած. մկ. *Աւելի վաղ, քան կարծում էր:*

ՎԱՂԱԿԷԶ, ած. *Շուտ՝ կանուխ կիզող՝ այրող:*

ՎԱՂԱԿՈՉ, ած. *Շուտ կանչուած՝ կոչուած՝ հրաւիրուած:*

ՎԱՂԱԿՈՅՐ, ած. *Շուտ կուրացած, վաղուց կոյր:*

ՎԱՂԱՀԱՅԹԱՅԹ, ած. *Շուտ՝ հեշտ՝ արագ գտնուող, ճարուող, ձեռք բերելը դիւրին:*

ՎԱՂԱՀԱՍ, ած. *Շուտ հասնող:*

ՎԱՂԱՀԱՏ, ած. *Վաղուց հատուած՝ կտրուած:*

ՎԱՂԱՀԱՍՈՒԹԻՒՆ, գ. *Վաղահաս լինելը:*

ՎԱՂԱՀԱՍՈՒԿ, ած. *Վաղահաս:*

ՎԱՂԱՀԵՒ, ած. *Վաղուց՝ շուտուանից հեւացող:*

ՎԱՂԱՀԵՐԿ, գ. *Վաղ գարնանը կատարուող հերկ:*

ՎԱՂԱՀԻՒՍ, ած. *Վաղուց հիւսուած՝ ստեղծագործուած:*

ՎԱՂԱՀՌՉԱԿ, ած. *Վաղուցուանից հռչակուած՝ հռչակ ձեռք բերած:*

ՎԱՂԱՁԱՅՆԵԼ, բ. *Վաղ՝ առաւօտը շուտ՝ կանուխ ձայնել՝ ձայն տալ՝ կոչել՝ կանչել:*

ՎԱՂԱՁԻԳ, ած. *Վաղուց՝ շատ ժամանակ առաջ ձգուած:*

ՎԱՂԱՁԻՒՆ, գ. *Ժամանակից շուտ տեղացած ձիւն:*

ՎԱՂԱՂՈՂԱՆՋ, ած. *Վաղ՝ շուտ՝ կանուխ ղողանջող:*

ՎԱՂԱՃԵՄ, ած. *Վաղ՝ շուտ՝ կանուխ ճեմող:*

ՎԱՂԱՄԱՀ }
ՎԱՂԱՄԵՌ } ած. *Շուտ, մատաղ հասակում մեռած:*

ՎԱՂԱՄԷԳ, գ. *Վաղ՝ առաւօտը շուտ յայտնուած մէգ՝ մառախուղի թանձր շերտ:*

ՎԱՂԱՄԵՌՈՒԿ, գ. (Բուս.) *Կնիւնի մի տեսակ:*

ՎԱՂԱՄԵՐՁ, ած. *Շուտ՝ արագ մերձեցող՝ մտերմացող:*

ՎԱՂԱՄԽԻԹԱՐ, ած. *Շուտ՝ արագ՝ վաղուց մխիթարուած:*

ՎԱՂԱՅԱՋՈՐԴ, գ. *Վաղուայ օրը, յաջորդ օրը:*

ՎԱՂԱՆՑԻԿ }
ՎԱՂԱՆՑՈՒԿ } ած. *Շուտով անցնող:*

ՎԱՂԱՇԱՀ, ած. *Շուտ՝ արագ շահ՝ եկամուտ բերող:*

ՎԱՂԱՇԱՂԱԽ, ած. (հզվդ.): *Վաղ՝ շուտ շաղախուած:*

ՎԱՂԱՇԷՆ, ած. *Վաղուց՝ անցած-գնացած ժամանակներում շինուած՝ կառուցուած:*

ՎԱՂԱՇԷՋ, ած. *Շուտ հանգչող:*

ՎԱՂԱՇՆՈՐՀ, ած. *Վաղուց շնորհ(ու)ած՝ պարգեւ(ու)ած՝ տրուած:*

ՎԱՂԱՉՈՒ, ած. 1. *Վաղ չուող:* 2. *Վաղուց չուած՝ չու կատարած:*

ՎԱՂԱՊԱԳ, ած. *Վաղուց պագած՝ համբուրած՝ դաւանած՝ պաշտած:*

ՎԱՂԱՊԱՏԻՐ, ած. *Շուտով խաբուող:*

ՎԱՂԱՊԻՂԾ, ած. *Վաղուց պղծուած:*

ՎԱՂԱՍԱՀ, ած. *Վաղուց՝ շուտ՝ արագ սահող՝ անցնող:*

ՎԱՂԱՍՔՈՂ, ած. *Վաղուց սքող(ու)ած՝ ծածկուած:*

ՎԱՂԱՎԱԽՃԱՆ, ած. *Վաղ վախճանած:*

ՎԱՂԱՎԱՃԱՌ, ած. *Վաղ՝ արագ վաճառուող, գնայուն:*

ՎԱՂԱՎԱՌ, ած. *Վաղուց վառուած:*

ՎԱՂԱՏՈՉՈՐ, ած. *Վաղ՝ շուտ՝ շուտուանից տոչորուած:*

ՎԱՂԱՏՐՈՓ, ած. *Վաղ՝ շուտ տրոփող, զգայուն, դիւրազգրգիռ:*

ՎԱՂԱՑԱՅՏ, ած. *Վաղ՝ շուտ ցայտող:*

ՎԱՂԱՑԱՆ, ած. *Վաղ՝ շուտ ցանած:*

ՎԱՂԱՑԱՆՔՍ, գ. *Վաղ ցանքս:*

ՎԱՂԱՒԵՐ, ած. *Վաղ կործանուած:*

ՎԱՂԱՓԱԽ, ած. *Վաղուց փախած՝ հեռացած:*

ՎԱՂԱՓԱԿ, ած. *Վաղ փակուած:*

ՎԱՂԱՓՈՐՁ, գ. *Վաղ՝ սկզբնական փորձ:*

ՎԱՂԱՓՈՒԼ, ած. *Շուտ փլած:*

ՎԱՂԱՔԱՂ, ած. *Շուտ քաղուող՝ հաւաքուող:*

ՎԱՂԵՄԻ, ած. *Վաղուցուայ: Հնամենի:*

ՎԱՂԵՄՈՒԹԻՒՆ, գ. *Վաղեմի՝ հին լինելը:*

ՎԱՂԸ }
ՎԱՂՆ } գ. *Այն օրը, որ յաջորդում է այս օրուան:*

ՎԱՂԺԱՄԱՆԱԿԵԱՅ, ած. *Վաղ՝ հին ժամանակի:*

ՎԱՂՀԱՍ, ած. *Շուտ հասնող:*

ՎԱՂՀԱՍՈՒԿ, ած. *Վաղ հասնող:*

ՎԱՂՄԵՌՈՒԿ, Տ. *Վաղամեռուկ:*

ՎԱՂՆՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Հին լեզուին*

*յատուկ ոճերի եւ բառերի գործածութիւն նոր լեզուի մէջ:*
ՎԱՂՆՋԱԿԱՆ, ած. *Վաղնջուց եղած:*
ՎԱՂՆՋԱՀԱՅ, գ. *Վաղնջական ժամանակներում ապրած հայ:*
ՎԱՂՆՋՈՒՑ, ած. *Վաղեմի, վաղնջական:*
ՎԱՂՈՐԴԵԱՆ, ած. *Առաւօտեան:*
ՎԱՂՈՒԵԱՆ, ած. *Վաղուայ, էգուցուայ:*
ՎԱՂՈՒՑ, մկ. *Շատ ժամանակ առաջ:*
ՎԱՂՈՒՑՈՒԱՅ, ած. *Հին, անցած գնացած:*
ՎԱՂՎԱՂԱԿԻ, մ. *Անմիջապէս:*
ՎԱՂՎԱՂԿՈՏ, ած. *Չափից աւելի շտապող, փութկոտ:*
ՎԱՂՎԱՂՈՒԿ, ած. *Վռազող: Շտապող:*
ՎԱՂՕՐՕՔ, մկ. *Օր առաջ:*
ՎԱՃԱՌ, գ. *Վաճառում: Վաճառականութիւն: Նուէր:*
ՎԱՃԱՌԱԲԱՋՐԻՔ, գ. *Վաճառատեղը շրջափակող բազրիք՝ ճաղաշար:*
ՎԱՃԱՌԱԲԱԺԱՆ, ած. *Վաճառելով՝ գինը գանձելով բաժանուած:*
ՎԱՃԱՌԱԲԱԺԱՆՔ, գ. *Որեւէ բանի (օր.՝ օգնութեան եւն) բաժանումը վաճառքի միջոցով:*
ՎԱՃԱՌԱԲԱԽՏ, գ. *Վաճառելու՝ առեւտրական գործունէութեան բախտ:*
ՎԱՃԱՌԱԲԱՂՁ, ած. *Վաճառելու՝ առեւտրով զբաղուելու բաղձանք՝ իղձ՝ ցան-*
*կութիւն ունեցող:*
ՎԱՃԱՌԱԲԱՆՈՒԿ, ած. *Վաճառքով՝ առեւտրով զբաղուելու համար բանուկ:*
ՎԱՃԱՌԱԲԱՆՋԱՐ, գ. *Վաճառքի համար նախատեսուած կանաչեղէն:*
ՎԱՃԱՌԱԲԱՇԽ, ած. *Վաճառելով բաշխուած՝ բաժանուած:*
ՎԱՃԱՌԱԲԱՐԲԱՌ, գ. *Վաճառողների՝ վաճառքով զբաղուողների բարբառ՝ խօսուածք:*
ՎԱՃԱՌԱԲԱՐՔ, գ. *Վաճառողներին՝ վաճառականներին՝ առեւտրով զբաղուողներին յատուկ բարք՝ վարքագիծ:*
ՎԱՃԱՌԱԲԵՌ, գ. *Վաճառքի համար նախատեսուած բեռ:*
ՎԱՃԱՌԱԲԵՐԵԼ, բ. *Վաճառք՝ ապրանք ներմուծել:*
ՎԱՃԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Վաճառականական գործի գիտութիւն:*
ՎԱՃԱՌԱԳԻՐ, գ. *Ապրանքների ցուցակ, ապրանքագիր:*
ՎԱՃԱՌԱԳԻՂ, գ. (փխբ.): *Վաճառքի՝ առեւտրական գործառնութիւնների՝ առուվաճառքի գիւղ՝ տեղ՝ տարածք:*
ՎԱՃԱՌԱԳՈՎՔ, գ. *Վաճառուող ապրանքների գովք՝ գովազդ:*
ՎԱՃԱՌԱԳՈՒՄԱՐ, գ. *Վաճառուած ապրանքների գումարը:*
ՎԱՃԱՌԱԳՐԵԼ, բ. *Ապրանքը վաճառագրի մէջ մուծել:*
ՎԱՃԱՌԱԳՐՈՒՄ, գ. *Վաճառագրելը:*
ՎԱՃԱՌԱԴԱԴԱՐ, գ. *Վաճառքի դադար՝ ընդմիջում:*
ՎԱՃԱՌԱԴԱՅԼԱՅԼ, գ. (փխբ.): *Առնողծախողների ձայնի զեղզեղանք:*
ՎԱՃԱՌԱԴԱՍ, գ. *Վաճառականական դաս:*
ՎԱՃԱՌԱԴԱՐԱԿ, գ. *Վաճառքի ապրանքների դարակ:*
ՎԱՃԱՌԱԴԻՐ, ած. *Հեշտ՝ արագ վաճառուող, գնայուն:*
ՎԱՃԱՌԱԴՂԵԱԿ, գ. *Դղեակի տեսք ունեցող վաճառատուն:*
ՎԱՃԱՌԱԴՈՒՌ, գ. *Դուռ, որտեղից վաճառք է կատարուում:*
ՎԱՃԱՌԱԴՐՈՇՄ, գ. *Առեւտրական դրոշմ:*
ՎԱՃԱՌԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. *Ապրանքը վաճառելու համար, ի ցոյց դնելը:*
ՎԱՃԱՌԱԶԱՆՑ, ած. գ. *Վաճառքի կանոնները զանց առնող (առած):*
ՎԱՃԱՌԱԶԵՂՉ, գ. *Վաճառքի գնի զեղչ:*
ՎԱՃԱՌԱԶՕՐ, ած. *Վաճառելու զօրու-*

*թիւն՝ ուժ՝ ունակութիւն՝ կարողութիւն ունեցող:*

ՎԱՃԱՌԱԸՆՏՐԱՆԻ, գ. *Վաճառականների՝ վաճառականական դասի ընտրանի:*

ՎԱՃԱՌԱԸՆՏՐԱՆՔ, գ. *Որեւէ ապրանք (հումք, արժոյթ, արժեթուղթ եւն) վաճառելու իրաւունք տուող ընտրանք:*

ՎԱՃԱՌԱԹԱԽՏ, գ. *Թախտ, որի վրայ դարսուում՝ դրուում են վաճառուող ապրանքները:*

ՎԱՃԱՌԱԹԱՆԿ, ած. *Թանկավաճառ:*

ՎԱՃԱՌԱԹԱՓ, գ. *Վաճառքի թափ՝ արագութիւն:*

ՎԱՃԱՌԱԹԱՔ, ած. *Թաքցնելով վաճառքի չհանուող:*

ՎԱՃԱՌԱԹԻ, գ. *Թիաձեւ գործիք՝ վաճառաիր, որով սորացող նիւթերը լցուում են տոպրակները՝պարկերը եւն՝ կշռելու՝ վաճառելու եւն նպատակով:*

ՎԱՃԱՌԱԹԻԿՆՈՑ, գ. *Վաճառողի թիկնոց:*

ՎԱՃԱՌԱԹՈՒՂԹ, գ. 1. *Վաճառուող ապրանքը փաթեթաւորելու թուղթ:* 2. *Վաճառքը վկայող թուղթ՝ փաստաթուղթ:*

ՎԱՃԱՌԱԺԽՈՐ, գ. *Վաճառքի՝ առեւտրի ժամանակ մարդաշատ վայրերում եղող ժխոր՝ աղմուկ:*

ՎԱՃԱՌԱԼԱԹ, գ. *Վաճառուող լաթ՝ մաշուած հնոտի հագուստեղէն:*

ՎԱՃԱՌԱԽԱԲ, ած. *Վաճառքում խաբուած:*

ՎԱՃԱՌԱԽԱԲՈՒԹԻՒՆ, գ. *Առեւտրի մէջ խաբեբայութիւն:*

ՎԱՃԱՌԱԽԱՅԾ, գ. *Վաճառքի՝ ապրանքներ ծախելու համար օգտագործուող խայծ:*

ՎԱՃԱՌԱԿԱՆ, գ. *Ապրանքներ գնող եւ վաճառող: Մանրածախ վաճառական:*

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ, ած. *Վաճառականին եւ վաճառականութեան յատուկ:*

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԴԵՏ, գ. *Վաճառականների արհեստակիցներու աւագը:*

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վաճառական լինելը:*

ՎԱՃԱՌԱԿԱՏԱՐՈՒՄ, գ. *Վաճառքի կատարում:*

ՎԱՃԱՌԱԿԻՑ, ած. *Վաճառականութեան՝ առեւտրի մէջ ընկեր:*

ՎԱՃԱՌԱԿՈՆՔ, գ. *Վաճառուող ապրանքի մէջ լցրած՝լցնելու կոնք:*

ՎԱՃԱՌԱՀԱՆԵԼ, բ. *Օտար երկիր ապրանք արտածել ծախելու:*

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վաճառահանելը:*

ՎԱՃԱՌԱՀԱՐԿ, գ. 1. *Վաճառուող իւրաքանչիւր ապրանքից գանձուող հարկ:* 2. *Վաճառքը թոյլատրելու վճարում՝ գանձում:*

ՎԱՃԱՌԱՀՈԳՍ, գ. *Վաճառքի հոգս՝ մտահոգութիւն:*

ՎԱՃԱՌԱՂԵԿ, գ. (փխբ.): *Վաճառքի՝ առեւտրի կազմակերպման՝գների սահմանման ղեկ՝ուղղութիւն տուող ուժ:*

ՎԱՃԱՌԱՃԵՂՔ, գ. *Վաճառքի՝ վաճառելու՝ ապրանքը տալու եւ փողը ստանալու նեղ անցք:*

ՎԱՃԱՌԱՃԻԳ, գ. *Վաճառք կազմակերպելու մտահոգութիւն:*

ՎԱՃԱՌԱՃԻՂ, գ. *Առեւտրական գործունէութեան բնագաւառներից իւրաքանչիւրը:*

ՎԱՃԱՌԱՄԱՍ, գ. *Վաճառք կազմակերպելու մաս:*

ՎԱՃԱՌԱՄԱՏԵԱՆ, գ. *Մատեան, որտեղ գրանցուում են վաճառուած ապրանքները:*

ՎԱՃԱՌԱՄԱՐՏ, գ. (փխբ.): *Ապրանքներ, ծառայութիւններ վաճառելու, մատուցելու կռիւ՝մրցութիւն:*

ՎԱՃԱՌԱՄՈԼ, ած. գ. *Վաճառելու՝ առեւտրական գործառնութեան մոլուցքով բռնուած:*

**ՎԱՃԱՌԱՅԱՆԳՈՅՑ**, գ. *Վաճառքի՝ առեւտրի կարեւոր՝ աշխոյժ՝ գործուն յանգոյց (շուկայ, տօնավաճառ եւն):*

**ՎԱՃԱՌԱՆԵՐՈՒԺ**, գ. *Առանձին վաճառողի շուկայի ներուժի բաժինը, վաճառքի ներուժ:*

**ՎԱՃԱՌԱՆԻՇ**, գ. *Ապրանքի վրայ դրուած գործարանային նշան:*

**ՎԱՃԱՌԱՆՈՐՈՅԹ**, գ. *Վաճառքի հանուած նորոյթ՝ նոր ապրանք կամ ծառայութիւն:*

**ՎԱՃԱՌԱՆՈՑ**, գ. *Շուկայ վաճառատուն::*

**ՎԱՃԱՌԱՇԱՀ**, ած. *Վաճառականութիւնից շահուող՝ շահուած:*

**ՎԱՃԱՌԱՇԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Վաճառաշահ լինելը:*

**ՎԱՃԱՌԱՇԱՐՔ**, գ. *Վաճառքի՝ առեւտրական կէտերի՝ խանութների եւն շարք:*

**ՎԱՃԱՌԱՇԵՂՋ**, գ. *Վաճառուող ապրանքների շեղջ՝ կոյտ:*

**ՎԱՃԱՌԱՇՐՋԻԿ**, ած. գ. *Վաճառելով շրջող՝ շրջելով վաճառք կատարող, շրջիկ առեւտրական: Փերեզակ:*

**ՎԱՃԱՌԱՊԱՀՈՒՍՏ**, գ. *Վաճառքի համար պահուած ապրանքների ամբողջութիւնը:*

**ՎԱՃԱՌԱՊԱՇԱՐ**, գ. *Վաճառելու ապրանքների պաշար:*

**ՎԱՃԱՌԱՊԱՏՈՒԷՐ**, գ. *Վաճառելու պատուէր:*

**ՎԱՃԱՌԱՍԱՅԼ**, գ. *Սայլ, որի վրայից կատարուում է առեւտուրը:*

**ՎԱՃԱՌԱՍԵՆԵԱԿ**, գ. *Սենեակ, որտեղ վաճառք է կատարուում, վաճառքի սենեակ:*

**ՎԱՃԱՌԱՍԷՐ**, ած. *Առեւտուր սիրող:*

**ՎԱՃԱՌԱՍՐԱՀ**, գ. *Սրահ, որտեղ առեւտուր է կատարուում:*

**ՎԱՃԱՌԱՏԱՐԱԾՔ**, գ. *Առեւտրական նպատակներով օգտագործուող տարածք:*

**ՎԱՃԱՌԱՏԵՂԻ**, գ. Տ. *Վաճառանոց:*

**ՎԱՃԱՌԱՏԷՐ**, գ. 1. *Վաճառքի կէտի տէր՝ սեփականատէր:* 2. *Վաճառուող ապրանքի տէր՝ սեփականատէր:*

**ՎԱՃԱՌԱՏՈՒՆ**, գ. *Առեւտրի տուն, առեւտրի խանութ:*

**ՎԱՃԱՌԱՐԿՈՒ**, ած. գ. *Առեւտրի միջնորդ:*

**ՎԱՃԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. *Միջնորդութիւն:*

**ՎԱՃԱՌԱՑԱՆԿ**, գ. *Վաճառուող ապրանքների ցուցակը:*

**ՎԱՃԱՌԱՑԱՆՑ**, գ, *Առեւտրի կէտերի ցանց:*

**ՎԱՃԱՌԱՑՈՒՑԱՓԱՅՏ**, գ. (հզվդ.): *Վաճառողի ցուցափայտ:*

**ՎԱՃԱՌԱՓԱՍՏ**, գ. *Վաճառուած՝ գընուած լինելու փաստ՝ իրողութիւն:*

**ՎԱՃԱՌԱՓԵՂԿ**, գ. *Փեղկ (լուսամուտի եւն), որտեղով ապրանք է վաճառուում:*

**ՎԱՃԱՌԵԼ**, բ. *Ծախել:*

**ՎԱՃԱՌԵԼԻ**, ած. *Ինչ որ վաճառուում է:*

**ՎԱՃԱՌՈՐԴ**, գ. *Վաճառողը:*

**ՎԱՃԱՌՈՒՄ**, գ. *Վաճառելը, վաճառուելը:*

**ՎԱՃԱՌՔ**, գ. *Վաճառում, առեւտուր:*

**ՎԱՃԱՌՔԱՅԻՆ**, ած. *Վաճառքին վերաբերող:*

**ՎԱՄՊԻՐ**, (Գերմ., ֆրանս.) գ. *Արիւնառուշտ:* Փոխ. *Ուրիշի արիւնը ծծող: Արիւնարբու:*

**ՎԱՅ**, միջ., *որ արտասանուում է զանազան շեշտերով ու տարբեր նշանակութիւններով:*

**ՎԱՅԱՍԱՑ**, ած. *Վա՜յ ասող:*

**ՎԱՅԱՍԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Վա՜յ ասելը:*

**ՎԱՅԲԵՐԱՆ**, ած. *Բերանը վայով՝ ափսոսանքով բացող:*

**ՎԱՅԵԼ**, բ. *Վա՜յ աղաղակել, ճչալ: Բամբասել:*

**ՎԱՅԵԼ**, գ. Տ. *Վայելք:*

ՎԱՅԵԼ, ած. *Պատշաճ, համապատասխան:*
ՎԱՅԵԼԱՄՈԼ, ած. գ. *Վայելքների մոլի սիրահար, կեանքը հաճոյքներ վայելելուն նուիրած (անձ):*
ՎԱՅԵԼԵԼ, բ. *Հաճոյքի՝ բաւականութեան մէջ գտնուել: Հաղորդակից՝ մասնակից լինել մի բարիքի:*
ՎԱՅԵԼԵԼ, բ. *Վայել լինել, պատշաճ:*
ՎԱՅԵԼԵԼԻ, ած. *Վայելող: Ինչ որ վայելելու է:*
ՎԱՅԵԼՈՒՄ, գ. *Վայելելը:*
ՎԱՅԵԼՈՒՉ, ած. *Ինչ որ վայել է, պատշաճ: Օրինաւոր, Պարկեշտ, Գեղեցիկ:*
ՎԱՅԵԼՉԱԲԱՆ, ած. *Վայելուչ լեզուով կմ ոճով խօսող:*
ՎԱՅԵԼՉԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վայելչաբան լինելը:*
ՎԱՅԵԼՉԱԲԱՐ, մկ. *Վայելուչ կերպով:*
ՎԱՅԵԼՉԱԳԵՂ, ած. *Վայելուչ եւ գեղեցիկ:*
ՎԱՅԵԼՉԱԳԵՂՈՒԹԻՒՆ, գ. *Վայելչագեղ լինելը:*
ՎԱՅԵԼՉԱԳԻՐ, ած. *Վայելուչ գրուած:*
ՎԱՅԵԼՉԱԳՐԱԿԱՆ, ած. *Վայելչագրութեան յատուկ:*
ՎԱՅԵԼՉԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Կանոնաւոր եւ գեղեցիկ գրութիւն:*
ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴ, ած. *Վայելուչ կերպով զարդարուած, զարդարուն:*
ՎԱՅԵԼՉԱԶԳԵՍՏ, ած. *Վայելուչ զգեստներ հագած:*
ՎԱՅԵԼՉԱԴԵՄ, ած. *Գեղեցիկ դէմք ունեցող:*
ՎԱՅԵԼՉԱԼԻՑ, ած. *Վայելչութեամբ լի: Վայելուչ կազմուածք ունեցող:*
ՎԱՅԵԼՉԱԽՕՍ, ած. *Շնորհալի խօսող:*
ՎԱՅԵԼՉԱԿԱԶՄ, ած. *Վայելուչ կերպով կազմակերպուած:*
ՎԱՅԵԼՉԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. *Վայելուչ յօրինուածք:*
ՎԱՅԵԼՉԱԿԱՆ, Տ. *Վայելուչ:*
ՎԱՅԵԼՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վայելչական լինելը:*
ՎԱՅԵԼՉԱԿԵՆՑԱՂ, ած. *Վայելուչ կերպով՝ պատշաճօրէն ապրող՝ կենցաղավարող, վայելչակեաց:*
ՎԱՅԵԼՉԱԿԵՐՊ, ած. *Վայելուչ կերպարանք ունեցող:*
ՎԱՅԵԼՉԱԿԻՑ, ած. *Վայելչութեամբ իրար ընկեր:*
ՎԱՅԵԼՉԱՀԻՒՍ, ած. *Վայելուչ՝ գեղեցիկ կերպով հիւսուած:*
ՎԱՅԵԼՉԱՆԱԼ, բ. *Վայելուչ դառնալ:*
ՎԱՅԵԼՉԱՆՔ, գ. *Վայելչանալը, գեղեցկանալը:*
ՎԱՅԵԼՉԱՇԱՐ, ած. *Վայելուչ կերպով շարադրուած:*
ՎԱՅԵԼՉԱՇԷՆ, ած. *Վայելուչ կերպով շինուած:*
ՎԱՅԵԼՉԱՊԷՍ, մկ. *Վայելուչ կերպով:*
ՎԱՅԵԼՉԱՍԷՐ, ած. *Կեանքի վայելքներ սիրող:*
ՎԱՅԵԼՉԱՎԱՅՐ, գ. *Որտեղ գեղեցիկ վայրեր կան:*
ՎԱՅԵԼՉԱՏԵՍ, ած. *Վայելուչ տեսքով:*
ՎԱՅԵԼՉԱՏԻՊ, Տ. *Վայելչազարդ:*
ՎԱՅԵԼՉԱՒՈՐ, ած. *Վայելուչ, սազող:*
ՎԱՅԵԼՉԱՓԱՅԼ, ած. *Գեղեցկութեամբ փայլող:*
ՎԱՅԵԼՉԱՓԱՌ, ած. *Շքեղ:*
ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ, գ. *Պատշաճութիւն:*
ՎԱՅԵԼՉՕՐԷՆ, Տ. *Վայելչապէս:*
ՎԱՅԵԼԵԼ, նբ. *Հաճոյանալ, ըմբոշխնել:*
ՎԱՅԵԼՔ, գ. *Ինչ որ մարդ կեանքում վայելում է: Հաճոյք:*
ՎԱՅԹԵԼ, բ. *Թափել:*
ՎԱՅԼԵԼ, բ. *Վայելել: Պատշաճիլ, յարմարիլ:*
ՎԱՅԼԵՑՆԵԼ, անց. ձեւ *Վայելել՛ի եւ Վա-*
*յել՛ի,* նոյն նշ.:
ՎԱՅՀԱԶԱՆ, ած. *Վայրահաջ:*
ՎԱՅՆԱՍՈՒՆ, գ. *Վայի ձայներ, լաց ու*

*կոծ:* Նման. *Մեծ աղմուկ:*
ՎԱՅՈՑ, գ. *Վա՜յ ասելը:*
ՎԱՅՎԵՐԻԿ, ած. *Անճարակ, անճրկած:*
ՎԱՅՐ, գ. *Անորոշ նշանակութեամբ՝ Տեղ:*
ՎԱՅՐԱԲԵՐԵԼ, բ. *Վայր բերել, իջեցնել:*
ՎԱՅՐԱԲՆԱԿ, ած. *Բաց՝ անբնակ տեղերում: Ամայի:*
ՎԱՅՐԱԲՆԱԿԻՉ, ած. *Նա որ ապրում է բաց վայրերում:*
ՎԱՅՐԱԳ, ած. *Վայրաբնակ, կատաղի, վայրենի:*
ՎԱՅՐԱԳԱԲԱՐՈՅ, ած. *Վայրագի բարք՝ բնոյթ ունեցող:*
ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆ, գ. *Բարբարոսութիւն:*
ՎԱՅՐԱՀԱԿ, ած. *Ներքեւ ծռած:*
ՎԱՅՐԱՊԱՐԱԽՕՍ, Տ. *Դատարկախօս:*
ՎԱՅՐԱՍԱՀ, ած. *Ներքեւ սահող:*
ՎԱՅՐԱՍԼԱՑ, ած. *Ներքեւ սլացող:*
ՎԱՅՐԱՑԱՆ, ած. *Ցիրուցան:*
ՎԱՅՐԱՓԱԿ, ած. *Ամէն կողմից փակուած:*
ՎԱՅՐԱՔԱՐՇ, ած. *Դէպի վար քաշող:*
ՎԱՅՐԵՆԱԲԱՐ, մկ. *Վայրենու նման:*
ՎԱՅՐԵՆԱԲԱՐՈՅ, ած. *Վայրենու բարք ունեցող:*
ՎԱՅՐԵՆԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ, գ. *Վայրենաբարոյ լինելը:*
ՎԱՅՐԵՆԱԲԱՐՔ, ած. *Վայրենու բարք ունեցող:*
ՎԱՅՐԵՆԱԿԱՆ, ած. *Վայրենուն յատուկ:*
ՎԱՅՐԵՆԱՀԱԵԱՑ, ած. բ. *Վայրենու տեսքով:*
ՎԱՅՐԵՆԱՄԻՏ, ած. *Գազանամիտ:*
ՎԱՅՐԵՆԱՆԱԼ, բ. *Վայրենի դառնալ:*
ՎԱՅՐԵՆԱՍՏԱՆ, գ. (Արհամարհ.) *Որտեղ վայրենիներ են ապրում:*
ՎԱՅՐԵՆԱՏԵՍԻԼ, ած. (բնստ.): *Վայրենու տեսք՝ արտաքին ունեցող:*
ՎԱՅՐԵՆԱՑՈՒՄ, գ. *Վայրենանալը:*

ՎԱՅՐԵՆԻ, ած. *Բաց տեղերում՝ անտառներում՝ անապատներում ապրող:* Հկր. *Ընտանի: Անկիրթ, բիրտ:*
ՎԱՅՐԵՆՈՒԹԻՒՆ, գ. *Վայրենի լինելը:*
ՎԱՅՐԷՋ, ած. *Վերից վար իջնող, զառիվայր:*
ՎԱՅՐԷՋՔ, գ. *Վէրից վար իջնելը:*
ՎԱՅՐԷՋՔԱԳԻԾ, գ. *Վայրէջքի գիծ:*
ՎԱՅՐԷՋՔԱՄՈՒՏ, գ. *Վայրէջքի պատրաստուելը:*
ՎԱՅՐԷՋՔԱՆՇԱՆ, գ. *Վայրէջքի տեղը նշող նշան:*
ՎԱՅՐԷՋՔԱՆՑՈՒՄ, գ. (օդգ.): *Անցում վայրէջքի, վայրէջքի անցնելը, վայրէջք կատարելը:*
ՎԱՅՐԷՋՔԵԼ, բ. *Վայրէջք կատարել:*
ՎԱՅՐԷՋՔՈՒՂԻ, գ. *Վայրէջքատեղ: Ճամբայ:*
ՎԱՅՐԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Դէպի վար ընթանալը, անկում:*
ՎԱՅՐԸՆԿԵՑ, ած. 1. *Վայրընթաց:* 2. *Դէպի ցած իջնող՝ թեքուած՝ ձգուող:*
ՎԱՅՐԻ, ած. Տ. *Վայրենի:*
ՎԱՅՐԻԿ, գ. *Շատ կարճ ժամանակ:*
ՎԱՅՐԻՎԵՐՈՅ, ած. մկ. *Տակից-վրայից, խառնիխուռն:*
ՎԱՅՐԿԵԱՆ, գ. *Անորոշ կերպով՝ ժամանակի շատ կարճ միջոց, ակնթարթ:*
ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ, ած. *Մի վայրկեան տեւող:*
ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վայրկենական՝ շատ կարճատեւ լինելը:*
ՎԱՅՐԿԵՆԱՊԷՍ, մկ. *Մի վայրկեան ժամանակով:*
ՎԱՅՐՆԵՏՈՒՄ, գ. *Ցած նետելը:*
ՎԱՅՐՈՒՂԻ, գ. *Վայր իջնելու ուղի:*
ՎԱՆ, գ. Արմ. *Վանում:*
ՎԱՆ, Տ. *Վանք:*
ՎԱՆ, գ. *Բտում ծառի խէժը:*
ՎԱՆԱԴ, գ. (Քիմ.) *Խիստ սակաւագիւտ պարզ մետաղական մարմին:*
ՎԱՆԱԿԱՆ, ած. (Եկեղ.) *Վանքին յա-*

*տուկ:* գ. *Վանքում ապրող կրօնաւոր:*

**ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Վանական լինելը: Վանքեր հիմնելու՝ վանքերում ապրելու կարգը:*

**ՎԱՆԱԿԱՆՕՐԷՆ,** բ. *Վանականի նման՝ պէս, ինչպէս վանականը:*

**ՎԱՆԱԿԻՑ,** ած. գ. *Նոյն վանքում կմ նոյն բնակարանում ապրող:*

**ՎԱՆԱԿՆ,** գ. (Հանք.) *Բիւրեղացած* կուարց:

**ՎԱՆԱՀԱՅՐ,** գ. (Եկեղ.) *Վանքի առաջնորդ: Վանքի մեծաւոր:*

**ՎԱՆԱՀԱՅՐԱԿԱՆ,** ած. (Եկեղ.) *Վանահօր յատուկ:*

**ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԻՒՆ,** գ. (Եկեղ.) *Վանահայր լինելը:*

**ՎԱՆԱՏՈՒ,** ած. գ. *Բնակարան՝ իջեւան տուող:*

**ՎԱՆԱՏՈՒՆ,** գ. *Վանք, իջեւան:*

**ՎԱՆԱՏՈՒՐ,** ած. *Վանատու, հիւրընկալ:*

**ՎԱՆԱՏՐՈՒԹԻՒՆ,** գ. *Վանատուր լինելը:*

**ՎԱՆԳ,** գ. *Հնչիւն, ձայն:*

**ՎԱՆԴԱԼ,** գ. *Ասիայէն Եւրոպա ասպատակող ցեղախումբ: Վայրագ: Աւերող:* Փոխ. *Վայրենաբարոյ մարդ:*

**ՎԱՆԴԱԼԱԿԱՆ,** ած. *Վանդալին յատուկ:*

**ՎԱՆԴԱԼՈՒԹԻՒՆ,** գ. *Վանդալ լինելը:*

**ՎԱՆԴԱԿ,** գ. *Արկղաձեւ շինուածք: Ցանցակերպ հիւսուածք երկաթէ ձողերից: (Արեւմտահայերէնով) դռների կմ պատուհանների շրջանակ:*

**ՎԱՆԴԱԿԱԱՂԲ,** գ. (հզվդ.): *Վանդակի մեջ կուտակուած աղբ:*

**ՎԱՆԴԱԿԱԲԱԺԱՆ,** ած. *Վանդակները բաժանող, հարեւան վանդակների միջեւ ընկած:*

**ՎԱՆԴԱԿԱԲԱՆՏ,** ած. (փխբ.): *Վանդակում բանտարկ(ու)ած, անելանելի՝ անյոյս վիճակում գտնուող:*

**ՎԱՆԴԱԿԱԲԱՑ,** ած. *Վանդակը՝ վանդակի մուտքը բացուած:*

**ՎԱՆԴԱԿԱԳՈՐԾ,** ած. *Վանդակ շինող:*

**ՎԱՆԴԱԿԱԹԱԿԱՐԴ,** գ. (գրք.): *Թռչուններ՝ կենդանիներ որսալիս որպէս թակարդ օգտագործուող վանդակ:*

**ՎԱՆԴԱԿԱԽՈՅՍ,** ած. *Վանդակից խոյս տուած՝ փախած:*

**ՎԱՆԴԱԿԱԽՈՐՇ,** գ. *Վանդակաձեւ խորշ:*

**ՎԱՆԴԱԿԱԽՈՒՑ,** գ. *Բանտի՝ արգելափակման վայրի ճաղապատ:*

**ՎԱՆԴԱԿԱԾԱԾԿ,** ած. *Վանդակներով ծածկուած՝ պատուած:*

**ՎԱՆԴԱԿԱԿԱՊ,** ած. *Վանդակով կապած:*

**ՎԱՆԴԱԿԱԿԱԿԵՐՊ**
**ՎԱՆԴԱԿԱԿՁԵՒ** } ած. մկ. *Վանդակի կերպ, վանդակի նման:*

**ՎԱՆԴԱԿԱԿԱՊԱՏ,** ած. *Վանդակով պատած:*

**ՎԱՆԴԱԿԱԿԵԱՑ,** ած. *Վանդակ(ներ)ում կեանք վարող՝ ապրող՝ մնացող:*

**ՎԱՆԴԱԿԱՀԱԿ,** ած. *Վանդակին հակուած, վանդակի վրայ կռացած:*

**ՎԱՆԴԱԿԱՀԱՏ,** ած. (փխբ.): *Վանդակը հատած՝ կտրած:*

**ՎԱՆԴԱԿԱՀԱՐ,** ած. *Վանդակին հարող՝ մօտ ընկած՝ կպած:*

**ՎԱՆԴԱԿԱՀՈՏ,** գ. *Վանդակներից փչող հոտ:*

**ՎԱՆԴԱԿԱՄԱՀ,** ած. *Վանդակում մահացած՝ սատկած:*

**ՎԱՆԴԱԿԱՄԱՍ,** գ. *Վանդակի մաս՝ հատուած:*

**ՎԱՆԴԱԿԱՄԵՐՁ,** ած. *Վանդակին մերձ՝ մօտ:*

**ՎԱՆԴԱԿԱՄՕՏ,** ած. Նոյնն է՝ **ՎԱՆԴԱԿԱՄԵՐՁ:**

**ՎԱՆԴԱԿԱՄՈՒՏ,** գ. *Վանդակ մտնելը՝ վանդակում տեղաւորուելը, վանդակա-*

*յին կեանք սկսելը:*

**ՎԱՆԴԱԿԱՆԱԽՇ**, ած. *Վանդակաձեւ նախշերով:*

**ՎԱՆԴԱԿԱՃԷՄ**, գ. *Վանդակի շէմ՝ մուտք:*

**ՎԱՆԴԱԿԱՄԱՅԼ**, գ. *Վանդակի ձեւ ունեցող սայլ:*

**ՎԱՆԴԱԿԱՏԵՂ**, գ. *Վանդակները դնելու տեղ:*

**ՎԱՆԴԱԿԱՑՈՅՑ**, գ. *Վանդակի տեղը ցոյց տուող՝ մատնանշող ցուցանակ:*

**ՎԱՆԴԱԿԱՐԳԵԼ**, ած. *Վանդակում արգելուած:*

**ՎԱՆԴԱԿԱՓԱԿ**, ած. *Վանդակում փակուած՝ արգելափակուած, վանդակարգել:*

**ՎԱՆԴԱԿԱՓԱՅՏ**, գ. *Վանդակ(ներ) պատրաստելու՝ սարքելու շինափայտ (ճաղեր, տախտակներ եւն):*

**ՎԱՆԴԱԿԱՓԵՂԿ**, գ. *Պատուհանի փեղկ վանդակի ձեւով:*

**ՎԱՆԴԱԿԱՓՈԽ**, ած. *Վանդակը փոխած՝ մի վանդակից միւսը տարուած:*

**ՎԱՆԴԱԿՈՐՄ**, գ. *Վանդակի նման՝ ձողերից շինած որմ:*

**ՎԱՆԵԼ**, բ. *Դէն մղել: Վտարել:*

**ՎԱՆԵՐԷՑ**, գ. *Վանքի՝ բնակարանի կմ հայրապետանոցի աւագ պաշտօնեայ:*

**ՎԱՆԵՑԻ**, ած. (Եկեղ.) *Վանքում ապրող:*

**ՎԱՆԵՑԻ**, ած. գ. *Վան քաղաքի բնակիչ:*

**ՎԱՆԻՉ**, ած. գ. *Նա որ վանում է, վանող:*

**ՎԱՆԿ**, գ. *Հնչիւն, արտասանութիւն:* (Քրկն.) *Մէկ անգամից արտասանուող մարդկային հնչիւն կամ հնչիւնախումբ:*

**ՎԱՆԿԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ վանկ:*

**ՎԱՆԿԱԿԱՆ**, **ՎԱՆԿԱՅԻՆ** } ած. *Վանկին յատուկ:*

**ՎԱՆԿԱՆԱԼ**, բ. *Վանկ դառնալ:*

**ՎԱՆԿԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. *Վանկերը չափելը:*

**ՎԱՆԿԱՊԷՍ**, մկ. *Իբրեւ վանկ:*

**ՎԱՆԿԱՏԵԼ**, բ. *Վանկերի բաժանել:*

**ՎԱՆԿԱՐԱՆ**, գ. *Ընթերցանութիւն սովորելու առաջին ձեռնարկ:*

**ՎԱՆԿԵԼ**, բ. *Վանկ կազմել:*

**ՎԱՆՈՂԱԿԱՆ**, ած. *Վանելու կարողութիւն ունեցող:*

**ՎԱՆՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Վանող լինելը:*

**ՎԱՆՈՐԱՅՔ**, գ. *Վանքեր:*

**ՎԱՆՔ**, գ. *Բնակարան, օթեւան: Մենաստան:*

**ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ**, ած. (Եկեղ.) *Վանքին պատկանող:*

**ՎԱ՜Շ**, միջ. *Ուրախութեան՝ զմայլմունքի բացագանչութիւն:*

**ՎԱՇԽ**, գ. *Դրամի մեծ եւ անիրաւ տոկոս:*

**ՎԱՇԽԱԺՈՂՈՎ**, ած. *Վաշխ ժողովող:*

**ՎԱՇԽԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Վաշխառութիւն:*

**ՎԱՇԽԱՌՈՒ**, գ. *Ապօրինի տոկոսով փող պարտք տուող:*

**ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ**, ած. *Վաշխառուին յատուկ:*

**ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Վաշխառու լինելը:*

**ՎԱՇԽԱՍԷՐ**, ած. *Վաշխ սիրող:*

**ՎԱՇԽԱՎԱՃԱՌ**, ած. *Վաշխով վաճառող, վաշխով փող պարտք տուող:*

**ՎԱՇԽԱՏՈՒ**, ած. *Վաշխ տուող:*

**ՎԱՇԽԵԼ**, բ. *Վաշխով պարտք տալ:*

**ՎԱՇ – ՎԱՇ**, **ՎԱՇՎՇՈՑ** } գ. *Ափսոսանք, ախուվախ, հեծեծանք:*

**ՎԱՇՏ**, գ. *Զինուած մարդկանց խումբ: Ներկայումս՝ զինուորական միաւոր:*

**ՎԱՇՏԱՆԱԼ**, բ. *Վաշտ կազմել:*

**ՎԱՇՏԱՊԵՏ**, գ. *Վաշտի հրամանատար:*

**ՎԱՇՏԿԱՆ**, ած. գ. *Վաշտի զինուոր:*

**ՎԱՉԷ**, գ. *Սայլ՝ վրայից եւ կողքերից մորթով կմ այլ կտորով ծածկուած:*

**ՎԱՉԿԱՏՈՒՆ**, ած. *Որի տունը վաչիկ կմ վաչէ է, վաչէում ապրող: Սայլաբնակ՝ թափառական:*

ՎԱՌ, ած. մկ. Վառուած, վառուող: Պայծառ, փայլուն: Ցայտուն:

ՎԱՌ, գ. Դրօշակ:

ՎԱՌ, ած. Շարականի ութ ձայներից մէկը:

ՎԱՌԱԿ, գ. Փոքրիկ վառ, դրօշակ:

ՎԱՌԱՐԱՆ, գ. Սարած, որի մէջ վառելանիւթ են ածում ու վառում:

ՎԱՌԵԱԿ, Տ. Վառեկ: Ճուտիկ:

ՎԱՌԵԼ, բ. Բոցավառել: Տաքացնել: Այրել: Ոգեւորել, բորբոքել:

ՎԱՌԵԼԱՆԻՒԹ, գ. Որեւէ նիւթ, որ կարող է գործածուել իբրեւ վառելիք:

ՎԱՌԵԼԱՓԱՅՏ, գ. Փայտ, որ գործ է ածուում իբրեւ վառելիք:

ՎԱՌԵԼԻՔ, գ. Վառելու պիտանի որեւէ նիւթ:

ՎԱՌԵԼԻՔԱԼՑԱՒՈՐԻՉ, գ. ած. Վառելիք լցաւորիչ:

ՎԱՌԵԼԻՔԱԼՑԱՒՈՐՈՒՄ, գ. Փոխադրամիջոցը վառելիքով լիցքաւորելը:

ՎԱՌԵԿ, գ. Հաւի էգ ձագ: Հկր. Որձակ:

ՎԱՌԵԿԻԿ, գ. Փոքր վառեկ:

ՎԱՌԻՉ, ած. գ. Նա որ վառում է:

ՎԱՌՈՏԵԼ, բ. Այս եւ այնտեղ վառել:

ՎԱՌՈՑ, գ. Վառելը, վառուելը:

ՎԱՌՈՒՄ, գ. Վառելը:

ՎԱՌՎՌԵԼ, բ. Շատ բան կմ շարունակ վառուել:

ՎԱՌՎՌՈՒՆ, ած. Կրակոտ:

ՎԱՌՔ, գ. Վառուելը:

ՎԱՌՕԴ, գ. Դիւրաբորբոք եւ պայթուցիկ նիւթ:

ՎԱՌՕԴԱԳՈՐԾ, ած. Վառօդ շինող՝ պատրաստող:

ՎԱՌՕԴԱՊԵՏ, գ. Պետութեան վառօդարանի տեսուչ:

ՎԱՌՕԴԱՐԱՆ, գ. Վառօդ պատրաստելու գործարան: Ջինարան:

ՎԱՌՕԴԵՂԷՆ, ած. Վառօդի տեսակներ: (փխբ.): Շատ շոգ, սաստիկ այրող՝ տապ:

ՎԱՍԱԿ, ած. Չար, քսու: Մատնիչ:

ՎԱՍԱԿՈՒԹԻՒՆ, գ. Դաւաճանութիւն:

ՎԱՍՆ, Համար, նպատակով: Պատճառով: շղկ. Ուստի:

ՎԱՍՏԱԿ, գ. Ֆիզիկական կմ մտաւոր ոյժերի լարում, աշխատանք: Որեւէ շահ:

ՎԱՍՏԱԿԱԲԵԿ, ած. Ծանր աշխատանքով բեկող: Սաստիկ յոգնած:

ՎԱՍՏԱԿԱԲԵԿՈՒԹԻՒՆ, գ. Վաստակաբեկ լինելը:

ՎԱՍՏԱԿԱԲԵՐ, ած. Ինչ բանի մէջ որ վաստակ կայ:

ՎԱՍՏԱԿԱԼԻՑ, ած. Ինչ բանի մէջ շատ վաստակ կայ:

ՎԱՍՏԱԿԱԿԻՑ, գ. Վաստակի ընկերակից: Աշխատակից:

ՎԱՍՏԱԿԱՍԷՐ, ած. Աշխատանք սիրող:

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ, ած. Վաստակ՝ աշխատանք ունեցող:

ՎԱՍՏԱԿԵԼ, բ. Որեւէ աշխատանք կատարել, մշակել: Շահիլ:

ՎԱՍՏԱԿԵԼ, բ. Աշխատել:

ՎԱՍՏԱԿՔ, գ. Վաստակ:

ՎԱՎԱ, գ. (Մանկ.), Ցաւ:

ՎԱՏ, ած. մկ. Ինչ որ լաւ չէ, գէշ: Չար, չարասիրտ: Չարագուշակ: Ձախորդ, Վտանգաւոր: Սառն: Պախարակելի: Անախորժ, Փոխ. Սխալ, վնասակար:

ՎԱՏԱԲԱԽՏ, ած. Չարաբախտ, դըժբախտ: Գէշ բախտ ունեցող:

ՎԱՏԱԲԱԽՏՈՒԹԻՒՆ, գ. Վատաբախտ լինելը: Դժբախտութիւն:

ՎԱՏԱԲԱՆԵԼ, բ. Մէկի կմ մի բանի մասին վատ խօսել: Հկր. Վատաբանել: Չարախօսել:

ՎԱՏԱԲԱՐ, մկ. Վատի պէս: Չարօրէն:

ՎԱՏԱԲԱՐՈՅ, ած. Վատ բարքի տէր:

ՎԱՏԱԲԵՐԱՆ, ած. Վատ բերան ունեցող: Չարախօս:

ՎԱՏԱԲՈՅՐ, ած. Տհաճ հոտ ունեցող:

ՎԱՏԱԶԳԻ, ած. Ցած՝ ստոր ցեղից:
ՎԱՏԱԶՐՈՅՑ, ած. Վատ բաների մասին զրոյց անող:
ՎԱՏԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. Վատ խորհուրդներ ունեցող կմ տուող:
ՎԱՏԱԿԱԶՄ, ած. Վատ՝ տգեղ կազմըուածք ունեցող:
ՎԱՏԱՀԱՃՈՅ, ած. Դժուարաւ հաճելի:
ՎԱՏԱՀԱՄ, ած. Վատ համ ունեցող: Հկռ. Բարեհամ:
ՎԱՏԱՀԱՄԲԱՒ, ած. Վատ համբաւ ունեցող:
ՎԱՏԱՀՈՏ, ած. Վատ հոտ ունեցող:
ՎԱՏԱՀՌՉԱԿ, Տ. Վատահամբաւ:
ՎԱՏԱՁՈՅԼ, ած. Վատ՝ անորակ ձուլուած:
ՎԱՏԱՄԱՐԴ / ՎԱՏԱՄԱՐԴԻ, ած. Վատ մարդ երեւացող:
ՎԱՏԱՄԱՐՄԻՆ, ած. Նիհար մարմին ունեցող:
ՎԱՏԱՄԻՏ, ած. Չարամիտ, նենգաւոր:
ՎԱՏԱՅՈՅՍ, ած. Յոյսը վատ, թերայոյս:
ՎԱՏԱՆԱԼ, բ. Վատ՝ երկչոտ՝ ծոյլ դառնալ:
ՎԱՏԱՆՇԱՆ, ած. Վատանուն:
ՎԱՏԱՆՈՒՆ, ած. Վատ անուն հանած:
ՎԱՏԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Վատանուն լինելը:
ՎԱՏԱՌՈՂՋ, ած. Առողջութիւնը վատ, հիւանդոտ:
ՎԱՏԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, գ. Վատառողջ լինելը:
ՎԱՏԱՍԱՀ, ած. Վատ՝ անվարժ՝ ոչ հըմուտ սահող՝ սղղացող:
ՎԱՏԱՍԻՐՏ, ած. Վատ սիրտ ունեցող:
ՎԱՏԱՍՆՈՒՆԴ, ած. Վատ՝ անբաւարար սնունդ ստացած:
ՎԱՏԱՍՐՏՈՒԹԻՒՆ, գ. Վատասիրտ լինելը: Չարասրտութիւն:
ՎԱՏԱՏԵՆՉ, ած. Վատ՝ վատութիւն՝ վատ բաների մասին տենչացող, վատութիւն անել ձգտող:
ՎԱՏԱՏԵՍ, ած. Վատ տեսնող, աչքերը տկար:
ՎԱՏԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. Վատատես լինելը:
ՎԱՏԱՏՈՀՄԻԿ, ած. Վատ տոհմից սերած:
ՎԱՏԱՓԱՌ, ած. Անփառունակ:
ՎԱՏԵԼ, բ. Վատանալ, տկարանալ:
ՎԱՏԹԱՐ, ած. Շատ վատ:
ՎԱՏԹԱՐԱԳՈՅՆ, բաղդ. աստ. Վատթար'ի, Աւելի վատթար:
ՎԱՏԹԱՐԱՆԱԼ, բ. Վատթար դառնալ:
ՎԱՏԹԱՐԱՊԷՍ, մկ. Վատթար կերպով:
ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ, գ. Վատթարանալը:
ՎԱՏԹԱՐԱՑՈՒՑԻՉ, ած. Նա որ վատթարացնում է:
ՎԱՏԹԱՐՈՒԹԻՒՆ, գ. Վատթար լինելը:
ՎԱՏՆԵԼ, բ. Վատ բանի վրայ կմ վատ միջոցներով կարողութիւնը ծախսել: Սպառել, մսխել:
ՎԱՏՆԻՉ, ած. գ. Նա որ վատնում է, վատնող: Սսխող:
ՎԱՏՆՈՂՈՒԹԻՒՆ, գ. Վատնող լինելը:
ՎԱՏՆՈՒԹԻՒՆ, գ. Վատնելը:
ՎԱՏՇՈՒԷՐ, ած. Անզգամ, անպիտան:
ՎԱՏՈԳԻ, ած. Վատասիրտ:
ՎԱՏՈՏՆ, ած. Ոտքը վատ:
ՎԱՏՈՐԱԿ, ած. Վատ որակի, վատ յատկութեան:
ՎԱՏՈՒԹԻՒՆ, գ. Վատ լինելը: Չարութիւն, վատ վարք: Անսարքութիւն:
ՎԱՏՈՒԺ, ած. Ոյժերը պակաս, անզօր: Ուժասպառ:
ՎԱՏՈՒԺ(Ա)ՆԱԼ, բ. Թուլանալ, նիհարել:
ՎԱՏՈՒԺՈՒԹԻՒՆ, գ. Վատուժ՝ թուլակազմ:
ՎԱՏՍԻՐՏ, ած. Վատասիրտ: Չարասիրտ:
ՎԱՏՍՐՏՈՒԹԻՒՆ, գ. Վատսիրտ լինելը:
ՎԱՐ, գ. Վարում:

ՎԱՐ, գ. *Հողը վարելը՝ հերկելը, Վարած տեղ:*

ՎԱՐ, գ. *Ներքեւի կողմը:* ած. *Ցած, ստոր:*

ՎԱՐԱԳԱՄԵՐՁ, գ. *Վարագայ սարին մօտակայ:*

ՎԱՐԱԳՈՅՐ, գ. *Լաթի կտոր: Բեմական գրուածքներում՝ գործողութեան աւարտ: Բեմի դրան ծածկ:*

ՎԱՐԱԳՈՒՐԵԼ, բ. *Վարագոյրով ծածկել:*

ՎԱՐԱԶ, գ. *Վայրի խոզ:* ած. *Հուժկու, հզօր:*

ՎԱՐԱԶԱԲԱՐ, մկ. *Վարազի նման հուժկու կերպով:*

ՎԱՐԱԶԱԳԻՐ, ած. *Որի վրայ վարազի պատկեր է գրուած:*

ՎԱՐԱԶԱԹԵՒՔ, գ. *Ուժեղ թեւեր:*

ՎԱՐԱԶԱԿԵՐՊ, ած. մկ. *Վարազի կերպարանք ունեցող:*

ՎԱՐԱԶԱԿՈՐԻՒՆ, գ. *Վարազի ձագ:*

ՎԱՐԱԶԱՀԱՒ, գ. *Յափշտակիչ թռչուն:*

ՎԱՐԱԶԱՅԻՆ, ած. *Վարազին յատուկ:*

ՎԱՐԱԶԱՆԱԼ, բ. *Վարազ դառնալ:*

ՎԱՐԱԶԱՓԵՏՈՒՐ, գ. *Թռչունների թեւերի կամ պոչի ուժեղ փետուրները:*

ՎԱՐԱԶԵՆԻ, գ. *Վարազի մորթ:*

ՎԱՐԱԶՕՐԷՆ, մկ. Տ. *Վարազաբար:*

ՎԱՐԱԿ, գ. *Կապ:* (Բուս.) *Եղէգի եւ նման*
*բոյսերի ծղօտի մէջ ուռած տեղը: Հիւանդացուցիչ մանրէներ կամ մանրացուցային սնկիկներ պարունակող նիւթ:*

ՎԱՐԱԿԱԶԵՐԾ, ած. *Վարակուելուց զերծ:*

ՎԱՐԱԿԵԼ, բ. *Կապել-կաշկանդել:* (Ախտաբ.) *Հիւանդացուցիչ վարակը աննկատելի կերպով տարածել կամ հաղորդել:*

ՎԱՐԱԿԻՉ, ած. *Վարակող:*

ՎԱՐԱԿՈՏ, ած. *Վարակ ունեցող:*

ՎԱՐԱԿՈՒՄ, գ. *Վարակելը:*

ՎԱՐԱՂԵԼ, բ. *Վարաղով՝ բարակ ոսկեգոյն թերթով պատել:*

ՎԱՐԱՆ, գ. *Տարակուսանք, երկմտութիւն:*

ՎԱՐԱՆԱԿԱՄՔ, գ. *Վարանած՝ տարակուսած կամք:*

ՎԱՐԱՆԱԿԱՆ, ած. *Որտեղ կայ վարանում: Տարակուսանքով*

ՎԱՐԱՆԱՆԱԼ, Տ. *Վարանել: Տարակուսիլ:*

ՎԱՐԱՆԵԼ, բ. *Երկմտութեան մէջ լինել:*

ՎԱՐԱՆՈՏ, ած. *Նա որ վարանում է, երկու մտքի մէջ տատանուող, անվճռական:*

ՎԱՐԱՆՔ, գ. *Վարանելը: Տարակուսանք:*

ՎԱՐԱՏԱԿԱՆ, ած. մկ. *Տեղահան եղած:*

ՎԱՐԱՏԵՂ, գ. *Վարելու՝ հերկելու տեղ:*

ՎԱՐԱՐ, ած. մկ. *Յորդ:*

ՎԱՐԱՐ, ած. *Վաւաշոտ, ցանկասէր:*

ՎԱՐԱՐԵԼ, բ. *Յորդանալ:*

ՎԱՐԱՐԵԼ, բ. *Տռփալ:*

ՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Վարար լինելը:*

ՎԱՐԱՐՈՒՄ, գ. *Վարարելը:*

ՎԱՐԳԱՄՐՑՈՅԹ, գ. (մարզ.): *Վարգարշաւ: Վազարշաւ:*

ՎԱՐԳԵԼ, բ. *Սլանալ: Վազել:*

ՎԱՐԳԵՂՆ, գ. (Կենդ.) *Եղջերուների մի խոշոր տեսակը:*

ՎԱՐԴ, գ. *Վարդենու ծաղիկը:*

ՎԱՐԴԱԲԵՐ, ած. *Վարդ բերող:*

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ, գ. (փխբ.): *Վարդերից՝ վարդափնջերից՝ վարդապսակներից կազմուած բլուր՝ բլրակ:*

ՎԱՐԴԱԲՈՂԲՈՋ, ած. *Վարդի նման բողբոջած՝ բողբոջող, կիսաբաց, նորաբողբոջ, մատղաշ:*

ՎԱՐԴԱԲՈՅՐ, ած. *Վարդի բուրմունք ունեցող:*

ՎԱՐԴԱԲՈՐԲ, ած. *Վարդի նման բորբ՝ տաք՝ ջերմ:*

ՎԱՐԴԱԳԵՂ, ած. *Վարդի նման գեղեցիկ:*
ՎԱՐԴԱԳԼԽԻԿ, գ. *Վարդի գլխիկ:*
ՎԱՐԴԱԳՈՅՆ, ած. *Վարդի գոյն ունեցող:*
ՎԱՐԴԱՋԱՐԴԵԼ, բ. *Վարդազարդ դարձնել, վարդերով պատել:*
ՎԱՐԴԱԹԱԻՇ, ած. *Վարդի նման նուրբ՝ քնքուշ՝ գեղեցիկ:*
ՎԱՐԴԱԹԷՅ, գ. *Վարդի (չորացած) պսակաթերթիկներով պատրաստուած թէյ:*
ՎԱՐԴԱԹՈՅՐ, ած. *Վարդի գոյնով:*
ՎԱՐԴԱԹՈՎ, ած. *Վարդով՝ նրա գեղեցկութեամբ ու հմայքով թովուած:*
ՎԱՐԴԱԹՈՒՓ, գ. *Վարդի թուփ:*
ՎԱՐԴԱԹՐԹԻՌ, ած. (փխբ.): *Վարդի նման թրթռուն՝ նուրբ ու քնքուշ:*
ՎԱՐԴԱԽԱՅԹ, 1. գ. (փխբ.): *Վարդի՝ վարդենու փշի խայթելը՝ ծակելը:* 2. ած. *Վարդից խայթուած:*
ՎԱՐԴԱԽԱՅԾ, գ. (փխբ.): *Վարդի նման՝ ինչ-որ արտակարգ գեղեցիկ ու գրաւիչ բան, որը օգտագործուում է որպէս խայծ:*
ՎԱՐԴԱԽՏ, Տ. *Կարմրուկ:*
ՎԱՐԴԱԾԱՂԻԿՆԵՐ, գ. (Բուս.) *Բոյսերի կարգ, որոնք ունին գեղեցիկ ծաղիկներ:*
ՎԱՐԴԱԾԱՂԿՈՒՆ, ած. *Վարդերով՝ վարդենիներով ծաղկուն:*
ՎԱՐԴԱԿ, գ. *Վարդի ձեւով զարդ: Եւ, սա-*
*բակ:*
ՎԱՐԴԱԿԱՐՄԻՐ, ած. *Վարդի կարմրութիւն ունեցող:*
ՎԱՐԴԱԿՈԹ, գ. *Վարդենու ծաղկի՝ վարդի կոթը՝ կոթունը:*
ՎԱՐԴԱՀԱՍՈՅԹ, գ. *Վարդերի փաճառքից՝ վարդերից ստացուող հասոյթ՝ շահ:*
ՎԱՐԴԱՀՈՎԻՏ, գ. *Վարդերի՝ վարդենիներով պատուած՝ ծածկուած հովիտ:*
ՎԱՐԴԱՀՐԱՊՈՅՐ, գ. *Վարդի հրապոյր՝ գրաւչութիւն:*
ՎԱՐԴԱՀՈՏ, ած. *Վարդի հոտ ունեցող:*
ՎԱՐԴԱՁԵՒ, ած. *Վարդի ձեւ ունեցող:*
ՎԱՐԴԱՄԱՏ, ած. *Վարդի նման մատներ ունեցող:*
ՎԱՐԴԱՄԱՑԱՌ, ած. գ. *Վարդենու՝ մասրենու մացառներով պատուած (հանդամաս, հողակտոր եւն):*
ՎԱՐԴԱՄՇԱԿ, ած. *Վարդ(ենիներ) մշակող՝ խնամող:*
ՎԱՐԴԱՅՏ, ած. *Որի այտերը վարդի են նմանուում գոյնով:*
ՎԱՐԴԱՆՄԱՆ, ած. մկ. *Վարդի նմանուող:*
ՎԱՐԴԱՆՈՑ, գ. *Բուրաստան:*
ՎԱՐԴԱՆՈՅՇ}
ՎԱՐԴԱՆՈՒՇ}գ. *Վարդի անուշ կմ կանացի անուն:*
ՎԱՐԴԱՊԵՏ, գ. *Ուսման պետ, Ուսուցիչ:* (Եկեղ.) *Գիտական աստիճան: Դոկտորի գիտական աստիճան ունեցող, դոկտոր:* (Եկեղ.) *Կուսակրօն քահանայ:*
ՎԱՐԴԱՊԵՏԱԲԱՐ, մկ. *Իբրեւ վարդապետ:*
ՎԱՐԴԱՊԵՏԱԽՕՍ, ած. *Վարդապետի խօսած:*
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ, ած. *Վարդապետութիւն պարունակող:*
ՎԱՐԴԱՊԵՏԱՆԱԼ, բ. *Վարդապետի աստիճան ստանալ:*
ՎԱՐԴԱՊԵՏԱՆՈՑ, գ. *Վարդապետ պատրաստելու դպրոց:*
ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ, գ. Տ. *Վարդապետանոց:*
ՎԱՐԴԱՊԵՏԵԼ, բ. *Իբրեւ վարդապետ ուսուցանել: Դաստիարակել:*
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Վարդապետելը, ուսուցանելը: Դաւանանք, տեսութիւն:*
ՎԱՐԴԱՊԵՏՈՒՀԻ, գ. (Կրօն.) *Վարդապետ իգական :*
ՎԱՐԴԱՊԻԾԱԿ, գ. (Կենդ.) *Գխտորա-*

*բերների ցեղին պատկանող փոքր միջատ։*

ՎԱՐԴԱՊՍԱԿ, ած. *Վարդերով պսակուած։*

ՎԱՐԴԱՋՈՒՐ, գ. *Վարդի ջուր։*

ՎԱՐԴԱՋՐԵԼ, բ. *Վրան վարդաջուր սրսկել։*

ՎԱՐԴԱՍՏԱՆ, գ. *Որտեղ մեծ քանակութեամբ վարդեր են բուսնում։*

ՎԱՐԴԱՎԱՌ, գ. (Եկեղ.) *Քրիստոսի պայծառակերպութեան տօնը։*

ՎԱՐԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Վարդավառի տօնը։*

ՎԱՐԴԱՐԱՆ, գ. Տ. *Վարդանոց։*

ՎԱՐԴԱՑՈՂ, ած. *Վարդի պէս՝ գոյնով ցոլացող։*

ՎԱՐԴԱՑՈՂՔ, գ. *Վարդագոյն ցոլք։*

ՎԱՐԴԱՓԹԻԹ, ած. *Վարդի կոկոնի պէս փթթած՝ բացուած։*

ՎԱՐԴԱՓՈՒՆՋ, գ. *Վարդերի փունջ։*

ՎԱՐԴԱՔԱՂ, ած. *Վարդ քաղելը։*

ՎԱՐԴԱՔԱՄՈՒԱԾՔ, գ. *Վարդի ծաղկաթերթիկներից ստացուած քամուածք՝ քամուկ։*

ՎԱՐԴԵՆԻ, գ. (Բուս.) *Վարդածաղիկների կարգին պատկանող թուփ։*

ՎԱՐԴԵՒՈՐԻ, գ. (Բուս.) *Մեխակենիների կարգին պատկանող անուշահոտ ծաղիկ։*

ՎԱՐԴԻԿ, գ. *Փոքր վարդ։*

ՎԱՐԵԼ, բ. *Քշել, Առաջ տանել։ Մշակել։*

ՎԱՐԶ, գ. *Գունդ գլխով կռուի հին զէնք։*

ՎԱՐԺ, գ. *Ուսում, ուսման հրահանգ։ Հմուտ։*

ՎԱՐԺԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ճարտարաբանութիւն, արուեստաբանութիւն։*

ՎԱՐԺԱԳՆԴԱԿ, գ. (մարզ.)։ *Բռնցքամարտիկներին մարզելիս օգտագործուող գնդակաձեւ մարզաիր։*

ՎԱՐԺԱԿԱՆ, ած. *Կրթական։*

ՎԱՐԺԱՀԱՐԹԱԿ, գ. *Վարժական՝ ուսումնական հարթակ։*

ՎԱՐԺԱՀՐԱՀԳՈՒԹԻՒՆ, գ. (մնգ.)։ *Վարժական՝ ուսումնական՝ մարզական հրաձգութիւն։*

ՎԱՐԺԱՃԱՄԲԱՐ, գ. *Վարժանքների ճամբար։*

ՎԱՐԺԱՆՄԱՆԱԿ, գ. *Վարժանքների նմանակ։*

ՎԱՐԺԱՊԵՏ, գ. *Ուսման պետ։*

ՎԱՐԺԱՊԵՏԱԲԱՐ, մկ. *Իբրեւ վարժապետ։*

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ, ած. *Վարժապետին յատուկ։*

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԻՑ, գ. *Միասին վարժապետութիւն անող։*

ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑ, գ. *Դպրոց, որտեղ աշակերտներին պատրաստում են վարժապետական պաշտօնի։*

ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Վարժապետ լինելը։*

ՎԱՐԺԱՍԱՐՔ, *Անձնակազմի մէջ տարբեր մասնագիտութիւններով մասնագիտական հմտութիւնների գործնական ձեւավորման, կատարելագործման ու վերահսկման համար նախանշանակուած ուսումնավարժական սարք՝ յարմարանք։*

ՎԱՐԺԱՍԱՐՔ, գ. *Մարզասարք։*

ՎԱՐԺԱՍԷՐ, Տ. *Ուսումնասէր։*

ՎԱՐԺԱՐԱՆ, գ. *Ուսումնարան, դպրոց։*

ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ, ած. *Վարժարանին յատուկ, վերաբերեալ։*

ՎԱՐԺԵԼ, բ. *Վարժեցնել։*

ՎԱՐԺԻՉ, ած. գ. *Նա որ վարժեցնում է։*

ՎԱՐԺՈՂԱԿԱՆ, ած. *Վարժութեան՝ վարժեցնելու վերաբերեալ։*

ՎԱՐԺՈՎԻ, ած. *Վարժեցուած։*

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. *Վարժ՝ վարժուած լինելը։ Ուսումնական առաջադրանք։ Սովորութիւն։*

ՎԱՐԺՈՒՀԻ, գ. *Վարժապետ իգական սեռի։*

ՎԱՐԻՉ, ած. գ. *Գրասենեակի կամ կառ-*

*քը վարող: Ղեկավար, տեսուչ:*
ՎԱՐԻՉՔ, գ. *Վարք, վարմունք:*
ՎԱՐԿ, գ. *Համարում, յարգանք:*
ՎԱՐԿԱԲԵԿ, ած. *Վարկը կոտրուած: Անպատուած, անարգ:*
ՎԱՐԿԱԲԵԿԵԼ, բ. *Վարկաբեկ անել:*
ՎԱՐԿԱԲԵԿՈՒԹԻՒՆ, գ. *Վարկաբեկ լինելը: Անպատուութիւն:*
ՎԱՐԿԱԲԵԿՈՒՄ, գ. *Վարկաբեկելը:*
ՎԱՐԿԱԲԵԿՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Վարկաբեկուած լինելը: Անարգուիլը:*
ՎԱՐԿԱԳԻՐ, գ. *Նամակ, որով մի բանկ կմ առեւտրական անձ այսքան գումարի վարկ է բաց անում այս-ինչ անձին:*
ՎԱՐԿԱԾ, գ. *Կարծիք կմ ենթադրութիւն: Տեսութիւն:*
ՎԱՐԿԱՅԻՆ, ած. *Վարկի վրայ հիմնըուած:*
ՎԱՐԿԱՆԻՇ, գ. *Վարկի՝ վստահութեան չափանիշ:*
ՎԱՐԿԱՆԻՇԱՒՈՐՈՒՄ, գ. *Վարկանիշի սահմանում:*
ՎԱՐԿԱՆՈՒՄ, գ. *Վարկանելը, վարկած:*
ՎԱՐԿԱՒՈՐ, ած. *Վարկ ունեցող, վըստահելի:*
ՎԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. *Վարկաւոր լինելը:*
ՎԱՐԿԵԼ, բ. *Վարկը հաստատել:*
ՎԱՐԿՊԱՐԱԶԻ, ած. մկ. *Չնչին, աննշանակ: Պարզ, անպաճոյճ: Մակերեսային, հարեւանցի:*
ՎԱՐՁ, գ. *Դրամ, որ մէկին վճարում են նրա կատարած աշխատանքի կմ ծառայութեան համար: Այն գումարը, որ մէկը վճարում է տանտիրոջը՝ այնտեղ ապրելու իրաւունքի համար:*
ՎԱՐՁԱԲԵՐ, ած. *Վարձ բերող:*
ՎԱՐՁԱԲՆԱԿ, ած. *Վարձով բնակուող, վարձուոր:*
ՎԱՐՁԱԳԱՆՁԵԼ, բ. *Վարձը գանձել:*
ՎԱՐՁԱԳԻՆ, գ. *Այն գումարը, որ վճարուում է կալուածի կմ տանտիրոջ՝ վարձուած կալուածի կմ բնակարանի համար:*
ՎԱՐՁԱԿ, գ. *Խնջոյքներում եւ հասարակական տեղերում պարող՝ երգող կին. գուսան: Պոռնիկ կին:*
ՎԱՐՁԱԿԱՆ, ած. գ. *Վարձով ծառայող, վարձկան:*
ՎԱՐՁԱՀԱՏՈՒ, Տ. *Վարձահատոյց:*
ՎԱՐՁԱՀԱՏՈՅՑ, ած. *Վարձատրող, հատուցանող:*
ՎԱՐՁԱՆԱԿ, գ. *Վարձատրութիւն կմ նուէր մի գնահատելի գործի՝ ծառայութեան համար:*
ՎԱՐՁԱՆՔ, գ. *Պոռնիկի տրուած դրամ:*
ՎԱՐՁԱՆՔ, գ. *Այն նուէրը, որ փեսան կմ փեսայի ընտանիքը տալիս են հարսին:*
ՎԱՐՁԱՇԷՆՔ, գ. *Վարձու շէնք:*
ՎԱՐՁԱՏՈՒՐ, ած. *Վարձ կմ վարձը տուող:*
ՎԱՐՁԱՏՐԵԼ, բ. *Կատարուած աշխատանքի վարձը տալ:*
ՎԱՐՁԱՏՐԻՉ, ած. գ. *Նա որ վարձատրում է, վարձատրող:*
ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ, գ. *Վարձը տալը՝ վճարելը: Մրցանակ:*
ՎԱՐՁԵԼ, բ. *Մէկի հետ պայմանաւորուել որոշ աշխատանք կատարելու՝ նրան որոշ վարձ վճարելով:*
ՎԱՐՁԵՐԹ, գ. *Փոխադրամիջոցի լրիւ կամ մասնակի վարձակալում, վճարով փոխադրամիջոցը ամբողջութեամբ կամ նրա մի մասը վարձակալելը (չարտեր):*
ՎԱՐՁԵՐԹԱԿԱԼ, գ. *Փոխադրամիջոցը վարձակալած անձ:*
ՎԱՐՁԿԱԼ, գ. *Նա որ վարձով ապրում է մէկի տանը:*
ՎԱՐՁԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. *Վարձակալ լինելը:*
ՎԱՐՁԿԱՆ, ած. գ. *Վարձով աշխատող:*
ՎԱՐՁԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վարձկան լինելը:*

ՎԱՐՁԿԱՆՕՐԷՆ, մկ. *Իբրեւ վարձկան, վարձուած մարդու նման:*

ՎԱՐՁՈՒՄ, գ. *Վարձելը, վարձուելը:*

ՎԱՐՁՈՒՈՐ, ած. *Վարձով աշխատող, վարձու, վարձկան:*

ՎԱՐՁՔ, գ. (Եկեղ.) *Բարեպաշտական գործ:*

ՎԱՐՁՔ, գ. *Վարձատրութիւն:*

ՎԱՐՄ, գ. *Հիւսուած ցանց:*

ՎԱՐՄՈՒՆՔ, գ. *Վարուելու եղանակ:*

ՎԱՐՆԳԵՆԻ, գ. (Բուս.) *Դդմազգիների կարգին պատկանող տարեւոր բոյս:*

ՎԱՐՆՈՑ, ած. *Ստորին տեսակի, էժանագին:*

ՎԱՐՇԱՄԱԿ, գ. *Թաշկինակ: Դաստառակ:*

ՎԱՐՈՐԴ, գ. *Հողը վարող, մշակող: Ինքնաշարժ քշող:*

ՎԱՐՈՑ, գ. *Անասունները քշելու ճիպոտ:*

ՎԱՐՈՒԺԱՆ<br>ՎԱՐՈՒԺ(Ա)ՆԱԿ } գ. *Թռչունների արուն:*

ՎԱՐՈՒՆ, ած. *Վարած:*

ՎԱՐՈՒՆԳ, գ. *Վարնգենու պտուղը, խիար:*

ՎԱՐՈՒՑԱՆԵԼ, բ. *Վարուցանք անել:*

ՎԱՐՈՒՑԱՆՔ, գ. *Վարելը եւ ցանելը:*

ՎԱՐՉԱԳԷՏ, ած. *Վարչական գործերի հմուտ:*

ՎԱՐՉԱԿԱՆ, ած. *Վարիչին յատուկ:*

ՎԱՐՉԱԿԵՆՏՐՈՆ, գ. *Վարչական կենտրոն:*

ՎԱՐՉԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Գաւազանով ծեծելը:*

ՎԱՐՉԱՇԷՆՔ, գ. *Վարչական՝ կառավարչական շէնք:*

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ած. *Վարչական եւ տարածքային:*

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Իբրեւ վարչութիւն՝ ձեւական հրամաններ արձակելը առանց կենդանի կերպով գործով հետաքրքրուելու:*

ՎԱՐՉԱՊԵՏ, գ. *Տեղական կառավարողական իշխանութեան պետը:*

ՎԱՐՉԱՒՈՐ, ած. *Նա որ ձեռքին գաւազան է բռնած:*

ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. *Վարչական եւ քաղաքական:*

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, գ. *Գործերը վարելը:*

ՎԱՐՊԵՏ, գ. *Հնարագէտ, մասնագիտութեան մէջ հմտացած:*

ՎԱՐՊԵՏԱԿԱՆ, ած. *Վարպետին յատուկ:*

ՎԱՐՊԵՏԱՆԱԼ, բ. *Վարպետ դառնալ:*

ՎԱՐՊԵՏՈՐԴԻ, ած. գ. *Վարպետի որդի: Ճարպիկ, հնարամիտ:*

ՎԱՐՊԵՏՈՐԴԻՈՒԹԻՒՆ, գ. *Վարպետորդի լինելը:*

ՎԱՐՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Վարպետ լինելը:*

ՎԱՐՊԵՏՈՒՀԻ, գ. *Վարպետ իգական սեռի:*

ՎԱՐՊԵՏՉԷՔ, գ. *Վարպետին վճարուող վարձը:*

ՎԱՐՊԵՏՕՐԷՆ, մկ. *Վարպետի պէս, հմտաբար:*

ՎԱՐՍԱԲԱԺԱՆ, գ. *Վարսերը կիսող գիծ, բաժուկ:*

ՎԱՐՍԱԿ, գ. Տ. *Խրբուկ: Հատիկաւոր բոյս:*

ՎԱՐՍԱԿԱԼ, գ. *Գլխի մազերի զարդարուն կապ:*

ՎԱՐՍԱԿԱՀԱՏ, գ. *Վարսակի հատիկը, սերմը:*

ՎԱՐՍԱԿԱՀՈՒՆՏ, գ. *Վարսակի հունտ՝ հատիկ՝ սերմ՝ վարսակ:*

ՎԱՐՍԱԿԱՀՈՒՆՁ, ած. *Վարսակ հընձող:*

ՎԱՐՍԱԿԷ, ած. *Վարսակից պատրաստուած՝ թխուած:*

ՎԱՐՍԱԿՏՈՒՐ, ած. *Վարսերը կտրած:*

ՎԱՐՍԱՁԵՒ, ած. մկ. *Վարսի ձեւով, վարսի նման:*

ՎԱՐՍԱՄ, գ. *Գաւազան, բիր:*

**ՎԱՐՍԱՄՆԱՀԱՐ**, ած. *Խելացնորութեամբ հիւանդացող:*
**ՎԱՐՍԱՅԱՐԴԱՐ**, ած. գ. *Վարսերը՝ մազերը յարդարող:*
**ՎԱՐՍԱՆԳ**, գ. *Թակ:*
**ՎԱՐՍԱՊՍԱԿ**, գ. *Վարսերի՝ մազերի պսակ:*
**ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑԱՅԻՆ**, ած. *Վարսավիրանոցին յատուկ:*
**ՎԱՐՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վարսաւոր՝ սաղարթախիտ լինելը:*
**ՎԱՐՍԵԼ**, բ. *Ուժով խրեցնել, ցցել:*
**ՎԱՐ-ՎԱՍՏԱԿ**, գ. *Եկամուտ:*
**ՎԱՐՎԱՐՈՏ**, ած. *Մարդկանց հետ վարուել չգիտցող, խռովասէր:*
**ՎԱՐՈՒԵԼ**, բ. *Իրեն այս կամ այն կերպ պահել մէկի վերաբերութեամբ:*
**ՎԱՐՈՒԵԼԱՈՃ**, գ. *Վարուեցողութեան կերպը՝ ձեւը՝ վարուելակերպ:*
**ՎԱՐՈՒԵՑՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Վարուելու կերպը:*
**ՎԱՐՈՒՆԳԱՋՈՒՐ**, գ. *Վարունգահիւթ:*
**ՎԱՐՏԵՑԿԱՊ**, գ. *Վարտիքի կապ:*
**ՎԱՐՏԻՔ**, գ. *Տղամարդկանց եւ կանանց ներքին զգեստ:*
**ՎԱՐՏԻՔԱՒՈՐ**, ած. *Վարտիք ունեցող:*
**ՎԱՐՏԻՔՑՈՒ**, ած. *Վարտիք կարելու յարմար (կտոր):*
**ՎԱՐՔ**, գ. *Վարելը, գործածելը: Կեանք վարելը: Ապրելակերպ, կենցաղ:*
**ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ**, ած. *Ապրելակերպի՝ վարուելու վերաբերեալ:*
**ՎԱՐՔԱԿԱՆՈՆ**, գ. *Վարուելակերպի կանոնները:*
**ՎԱՐՔԱՏԷՐ**, ած. *Վարքի տէր:*
**ՎԱՐՕՔ**, մկ. *Վարով: Աւելի վար:*
**ՎԱՒԱՇ**, ած. *Յանկասէր, տռփոտ:*
**ՎԱՒԱՇԱԿԱՆ**, ած. *Վաւաշութիւն պարունակող, վաւաշոտ:*
**ՎԱՒԱՇՈՏ**, ած. *Վաւաշ, խիստ ցանկասէր:*
**ՎԱՒԱՇՈՏԱԲԱՐ**, մկ. *Վաւաշոտ կերպով:*
**ՎԱՒԱՇՈՏՈՒԹԻՒՆ**, գ. *Վաւաշ՝ վաւաշոտ լինելը:*
**ՎԱՒԱՇՈՒՆՉ**, ած. *Վաւաշական:*
**ՎԱՒԵՐԱԲԱՐ**, մկ. *Վաւերական կերպով:*
**ՎԱՒԵՐԱԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**, ած. *Վաւերագրական եւ գեղարուեստական:*
**ՎԱՒԵՐԱԳԻՐ**, գ. *Գրութիւն, որով վաւերացւում է որեւէ բան, փաստաթուղթ:*
**ՎԱՒԵՐԱԳԻՐՔ**, գ. *Փաստագրական նիւթի վրայ հիմնուած գիրք:*
**ՎԱՒԵՐԱԳՐԵԼ**, Տ. *Վաւերացնել: Փաստագրել:*
**ՎԱՒԵՐԱԹՈՒՂԹ**, Տ. *Վաւերագիր:*
**ՎԱՒԵՐԱԿԱՆ**, ած. *Ստոյգ, հաւաստի: Հկռ. Անվաւեր:*
**ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Վաւերական՝ ստոյգ՝ վստահելի լինելը:*
**ՎԱՒԵՐԱՆԿԱՐ**, գ. *Իրական դէպք ներկայացնող շարժանկար (ֆիլմ):*
**ՎԱՒԵՐԱՊԱՏՈՒՄ**, գ. *Վաւերական իրադարձութիւններ ներկայացնող ստեղծագործութիւն(ներ):*
**ՎԱՒԵՐԱՑՆԵԼ**, բ. *Մի գրութեան ստուգութիւնը հաստատել: Հաստատել, հաւաստել:*
**ՎԱՒԵՐԱՑՈՒՄ**, գ. *Վաւերացնելը:*
**ՎԱՒԵՐԱՑՈՒՑԻՉ**, ած. *Նա որ վաւերացնում է, վաւերացնող:*
**ՎԱՒԵՐՈՒԹԻՒՆ**, Տ. *Վաւերականութիւն:*
**ՎԱՔ**, գ. *Ջրաղացի խողովակ:*
**ՎԱՔԴԷԶ**, գ. *Վաքի գլխին ծառազարդ հովասուն տեղ:*
**ՎԵԴԱ**, գ. *Հին հնդիկների բրահմական կրօնի ընդարձակ սրբազան գրականութիւն:*
**ՎԵԴԱՅԱԿԱՆ**, ած. *Վեդաներին յատուկ:*

ՎԵՀ, ած. *Բարձր արժանիքներ ունեցող: Գերագոյն, բարձրագոյն: Եկեղեցական բարձր պաշտօն, իշխան: Վսեմ:*
ՎԵՀԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Վեհ'ի, Աւելի վեհ:*
ՎԵՀԱԶԳԻ, Տ. *Վեհազն:*
ՎԵՀԱԶՆԵԱՅ, ած. *Վեհ ազգից սերուած:*
ՎԵՀԱԶՆՈՒԹԻՒՆ, գ. *Վեհազն լինելը:*
ՎԵՀԱԺՈՂՈՎ, գ. *Զանազան պետութիւնների բարձրաստիճան ներկայացուցիչների ժողով:*
ՎԵՀԱԿԱՆ, ած. *Վեհին յատուկ:*
ՎԵՀԱՆԱԼ, բ. *Վեհ՝ վսեմ դառնալ:*
ՎԵՀԱՆՁՆ, գ. *Վեհ անձ, բարձր՝ ազնուական ծագումով կմ աստիճանով մարդ:*
ՎԵՀԱՆՁՆԱԲԱՐ, մկ. *Վեհանձնի պէս:*
ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ, գ. *Վեհանձն լինելը:*
ՎԵՀԱՆՁՆՕՐԷՆ, մկ. Տ. *Վեհանձնաբար:*
ՎԵՀԱՇՈՒՔ, ած. *Վեհ եւ շքեղ:*
ՎԵՀԱՊԱՆԾ, ած. *Վեհ եւ պանծալի:*
ՎԵՀԱՊԱՏԻՒ, ած. *Բարձրապատիւ, գերապատիւ:*
ՎԵՀԱՊԵՏ, գ. *Բարձրագոյն պետ:*
ՎԵՀԱՊԵՏԱԿԱՆ, ած. *Վեհապետին յատուկ:*
ՎԵՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Վեհապետ լինելը:*
ՎԵՀԱՊԵՏՕՐԷՆ, մկ. *Իբրեւ վեհապետ:*
ՎԵՀԱՍՏԻՃԱՆ, ած. *Բարձր աստիճան ունեցող:*
ՎԵՀԱՍՔԱՆՉ, ած. *Վեհ եւ սքանչելի:*
ՎԵՀԱՏԵՍԻԼ, ած. *Վեհ տեսք ունեցող:*
ՎԵՀԱՐԱՆ, գ. (Եկեղ.) *Վեհի բնակարան, կաթողիկոսի բնակութեան տունը:*
ՎԱՀԱՓԱՌ, ած. *Վեհ եւ փառաւոր:*
ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Վեհափառի պատիւը, աստիճանը:*
ՎԵՀԱՓԱՌՕՐԷՆ, Տ. *Վեհափառապէս:*
ՎԵՀԵՐԵԼ, բ. *Մի դժուարութեան կմ վտանգի առաջ լքուել, սիրտ չանել: Վախենալ, երկչոտիլ:*
ՎԵՀԵՐՈՏ, ած. *Նա որ վեհերում է: Երկչոտ: Վախկոտ:*
ՎԵՀԵՐՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Վեհերոտ լինելը:*
ՎԵՀԵՐՈՒԹԻՒՆ, Տ. *Վեհերոտութիւն:*
ՎԵՀԵՐՈՒՄ, գ. *Վեհերելը: Վախենալը:*
ՎԵՀԻՄԱՍՏ, ած. *Բարձր՝ վսեմ մտքերի տէր կմ մտքեր պարունակող:*
ՎԵՀՈՒԹԻՒՆ, գ. *Վեհ՝ բարձր՝ ազնիւ՝ սխրալի լինելը: Վսեմութիւն:*
ՎԵՀՈՒՆԱԿ, ած. *Բարձր տեղում եղող:*
ՎԵՀՕՐԷՆ, մկ. *Վեհութեամբ: Վսեմօրէն:*
ՎԵՂԱՐ, գ. (Եկեղ.) *Հայ կրօնաւորների գլխի ծածկոյթ:*
ՎԵՂԱՐԱԶՈՒՐԿ, ած. *Վեղար չունեցող, վեղարից զրկուած:*
ՎԵՂԱՐԱՒՈՐ, ած. (Եկեղ.) *Վեղար կրող:*
ՎԵՃԼՈՒԿ, ած. *Չար, ստահակ:*
ՎԵՍՏ, ած. *Ազատ, իշխանաւոր:*
ՎԵՍՏԱԼՈՒՀԻ, գ. *Հին Հռոմում՝ կոյս, որ նուիրուած էր վեստայի պաշտամունքին:*
ՎԵՐ, գ. *Բարձր եղած կողմը, բարձր դիրք:* ած. *Բարձր, մեծ: Մի բանից գերազանց:* մկ. *Վերը, վերեւում:*
ՎԵՐԱԱՄՐԱԳՐԵԼ, բ. *Կրկին ամրագրել:*
ՎԵՐԱԲԱԶՄԵԼ, բ. *Վերը բազմել, գըլխաւոր տեղը բռնել: Վերստին բազմիլ:*
ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼ, բ. *Վերստին բաժանել:*
ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. *Վերաբաժանելը:*
ՎԵՐԱԲԱՆԱԼ, բ. *Փակուածը նորից բանալ:*
ՎԵՐԱԲԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Բաց անելը, պարզաբանելը:*
ՎԵՐԱԲԱՑՈՒՄ, գ. *Վերաբանալը, վերաբացուելը (փակուածի):*
ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ, ած. *Վերաբեր յատկութիւն ունեցող:*
ՎԵՐԱԲԵՐԵԼ, բ. *Վեր բերել, Վեր հանել:*

ՎԵՐԱԲԵՐԵԼ, բ. *Յարակցութիւն՝ կապ ունենալ:*
ՎԵՐԱԲԵՐԵԼԻ, ած. *Ինչ որ կարելի է կմ պէտք է վերաբերել:*
ՎԵՐԱԲԵՐԻՉ, ած. գ. *Նա որ վերաբերում է, վեր է բարձրացնում:*
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ, գ. *Մէկին կմ մի բանի վերաբերուելը:*
ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. *Վերաբերելը:*
ՎԵՐԱԲԵՐՈՒՄ, գ. *Վեր բարձրանալը, վեր գալը:* (Եկեղ.) *Պատարագի ժամանակ ընծան խորանից հանդիսաւոր կերպով բեմ բերել: Համեմատութեամբ:*
ՎԵՐԱԲՆԱԿԵԼ, բ. *Վերը կմ վերստին բնակել, առանձնանալ:*
ՎԵՐԱԲՈՐԲՈՔԵԼ, բ. *Նորից բորբոքել:*
ՎԵՐԱԳԱՆԳ, ած. *Գանգի վրայ եղած:*
ՎԵՐԱԳԻՏՈՂ, ած. *Քաջահմուտ:*
ՎԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Շատ լաւ գիտնալը:*
ՎԵՐԱԳԼԽՈՒԹԻՒՆ, գ. *Բովանդակութիւն:*
ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ, բ. *Նորից գնահատել:*
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. *Վերագնահատելը:*
ՎԵՐԱԳՆԵԼ, բ. *Ծախածը նորից յետ գնել:*
ՎԵՐԱԳՆՈՒԹԻՒՆ
ՎԵՐԱԳՆՈՒՄ } գ. *Վերագնելը:*
ՎԵՐԱԳՈՉԵԼ, բ. *Բարձր ձայնով գոչել:*
ՎԵՐԱԳՈՉՈՒՄ, գ. *Վերագոչելը:*
ՎԵՐԱԳՈՎԵԼ, բ. *Շատ կմ կրկին գովել:*
ՎԵՐԱԳՈՒՇԱԿԻՉ, ած. *Նախապէս գուշակող:*
ՎԵՐԱԳՐԵԼ, բ. *Վերնագիր դնել, Արձանագրել, Մէկին ընծայել, Վերաբերել:*
ՎԵՐԱԳՐՈՒՄ, գ. *Վերագրելը:*
ՎԵՐԱԴԱՌՆԱԼ, բ. *Նորից դառնալ այն տեղը, որտեղ եկել էր:*
ՎԵՐԱԴԱՍ, ած. *Վեր դասուած:* Հկռ. *Ստորադաս:*
ՎԵՐԱԴԱՍԵԼ, բ. *Վեր դասել, բարձր շարքերում դնել:*
ՎԵՐԱԴԱՐՁ, գ. *Վերադառնալը:*
ՎԵՐԱԴԱՐՁԵԼ, Տ. *Վերադառնալ:*
ՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹԻՒՆ, գ. *Վերադարձնելի լինելը:*
ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄ, *Հակառակորդի տարածքից լիակատար վերադարձը:*
ՎԵՐԱԴԻՏԱԿ, ած. գ. *Վեր՝ բարձր դրուած՝ դիտելու համար:*
ՎԵՐԱԴԻՏՈՂ, ած. գ. *Վերեւից դիտող:*
ՎԵՐԱԴԻՐ, ած. գ. *Վրան դրուած՝ դրուող: Յաւելում, յավելուած:*
ՎԵՐԱԴՐԱԿԱՆ, ած. *Վերադրուած:*
ՎԵՐԱԶԱՐԹՆԵԼ, բ. *Նորից զարթնել:*
ՎԵՐԱԶԱՐԹՈՒՄ, գ. *Վերազարթնելը:*
ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔ, գ. *Վերստին զարթօնք ապրելը:*
ՎԵՐԱԶԻՆԵԼ, բ. *Զինաւորումը նորոգել:*
ՎԵՐԱԶԻՆՈՒՄ, գ. *Վերազինելը:*
ՎԵՐԱԶՆՆԵԼ, բ. *Նորից զննել:*
ՎԵՐԱԶՆՆՈՒԹԻՒՆ, գ. *Վերազննելը:*
ՎԵՐԱԹԱՐՄԱՆԱԼ, բ. *Կրկին անգամ թարմանալ:*
ՎԵՐԱԹԱՐՄԱՑՆԵԼ, անց. ձեւ *Վերաթարմանալ՛ի, Նորից թարմացնել:*
ՎԵՐԱԹՈՐԵԼ, բ. *(Թորուած) հեղուկը նորից թորել:*
ՎԵՐԱԹՈՐՈՒՄ, գ. *Վերաթորելը:*
ՎԵՐԱԹՌԻՉ, ած. *Վեր թռչող:*
ՎԵՐԱԹՌՉԵԼ, բ. *Վեր՝ դէպի վեր թռչել:*
ՎԵՐԱԾԱԳԵԼ, բ. *Վերից կմ նորից ծագեցնել:*
ՎԵՐԱԾԱԾԿՈՅԹ, գ. *Ծածկոյթ, վրան ծածկելու օթոց:*
ՎԵՐԱԾԱԿԱՆ, ած. *Վեր բարձրացնող:*
ՎԵՐԱԾԱՂԿԵԼ, բ. *Նորից ծաղկել:*
ՎԵՐԱԾԱՅՐԱԿՑԵԼ, բ. *Կրկին ծայրերը կցել:*
ՎԵՐԱԾԵԼ, բ. *Վեր բերել, վեր հանել: Ձեւափոխել:*
ՎԵՐԱԾԻՉ, ած. *Նա որ վերածում է:*
ՎԵՐԱԾԽԵԼ, բ. *Դէպի վեր կմ վերստին*

*ծխել:*
ՎԵՐԱԾՆԵԼ, բ. *Նորից ծնել: Նոր ույժ տալ:*
ՎԵՐԱԾՆՆԴԵԱՆ, ած. *Վերածննդին յատուկ՝ վերաբերող:*
ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ, գ. *Վերածնուելը:*
ՎԵՐԱԾՆՈՒՄ, Տ. *Վերածնութիւն:*
ՎԵՐԱԾՈՒՄ, գ. *Վեր ածելը աւելի բարձր վիճակի: Ձեւափոխելը: Ուրիշ ձեւով արտայայտելը: Հանքերի քիմիական զըտում:*
ՎԵՐԱԿ, գ. *Միջնորմ:*
ՎԵՐԱԿԱԶՄԵԼ, բ. *Նորից կազմակերպել:*
ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ } ՎԵՐԱԿԱԶՄՈՒՄ } գ. *Վերակազմելը:*
ՎԵՐԱԿԱՀԱՒՈՐԵԼ, բ. *Կրկին կամ նոր ձեւով կահաւորել:*
ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆԵԼ, անց. բ. *Նորից կանգնեցնել: Աղճատուած բնագիրն ըստուգել: Նորից հաստատել: Վերանորոգել:*
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, գ. *Վերականգնելը:*
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. *Վերստին կառուցելը:*
ՎԵՐԱԿԱՐԳԵԼ, բ. *Վեր՝ բարձր պաշտօնի վրայ կարգել:*
ՎԵՐԱԿԱՐԳ, գ. *Վերակարգում:*
ՎԵՐԱԿԱՐԳՈՒՄ, գ. *Վերակարգելը:*
ՎԵՐԱԿԱՑՈՒ, ած. գ. *Վերը կացող, մի բանից բարձր գտնուող:*
ՎԵՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Վերակացու լինելը:*
ՎԵՐԱԿԱՑՈՒՄ, գ. *Վեր բարձրացնելը:*
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱԼ, բ. *Նորից կենդանութիւն ստանալ:*
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ, անց. ձեւ *Վերակենդանանալ'ի :*
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ, գ. *Վերակենդանանալը:*
ՎԵՐԱԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ, Տ. *Վերակենդանացում:*
ՎԵՐԱԿԵՐՊԵԼ, բ. *Կերպարանափոխ անել:*
ՎԵՐԱԿԵՐՊՈՒՄ, գ. *Վերափոխում:*
ՎԵՐԱԿՆԱՐԿԵԼ, բ. *Վեր նայել:*
ՎԵՐԱԿՆՔԵԼ, բ. *Նորից կնքել:*
ՎԵՐԱԿՈՉԵԼ, բ. *Վեր կանչել:*
ՎԵՐԱԿՈՉՈՒԹԻՒՆ, գ. *Վերակոչելը:*
ՎԵՐԱԿՐԹԵԼ, բ. *Նորից կրթել, նոր կրթութեամբ պակասութիւնները վերացնել:*
ՎԵՐԱԿՐԹՈՒԹԻՒՆ, գ. *Վերակրթելը:*
ՎԵՐԱԿՐԿՆԵԼ, բ. *Նորից ու նորից կրկնել:*
ՎԵՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ, գ. *Վերակրկնելը:*
ՎԵՐԱՀԱՂՈՐԴԻՉ, գ. *Վերստին հաղորդիչ:*
ՎԵՐԱՀԱՅԵԱՑ, ած. *Վեր նայող:*
ՎԵՐԱՀԱՆԴԵՐՁԱՒՈՐԵԼ, բ. *Նորից՝ նոր ձեւով հանդերձաւորել:*
ՎԵՐԱՀԱՆԵԼ, բ. *Վեր հանել:*
ՎԵՐԱՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ, գ. *Նորից նպատակադրում:*
ՎԵՐԱՀԱՍ, ած. *Վրայ հասած:*
ՎԵՐԱՀԱՍՈՒ, ած. *Որի խելքը մի բանի հասնում է:*
ՎԵՐԱՀԱՍՈՒԹԻՒՆ, գ. *Վերահասու լինելը:*
ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ, բ. *Նորից հաստատել:*
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Վերահաստատելը, վերահաստատուելը:*
ՎԵՐԱՀԱՅԵԱՒՈՐԵԼ, բ. *Կրկին հայցէաւորել:*
ՎԵՐԱՅԱՐՄԱՐՈՒԵԼ, բ, *Կրկին հարմարուել:*
ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ, գ. *Կրկնակի հեռարձակում:*
ՎԵՐԱՀՍԿԵԼ, բ. *Բարձր հսկողութիւն ունենալ:*
ՎԵՐԱՀՍԿԻՉ, ած. գ. *Նա որ վերահըսկում է:*
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Բարձր՝ զըլ-*

*խաւոր հսկողութիւն:*
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԵԼ, բ. *Վերստին՝ նորից հրատարակել:*
ՎԵՐԱՁԱՅՆԱԳՐԵԼ, բ. *Կրկին ձայնագրել:*
ՎԵՐԱՁԳԵԼ, բ. *Դէպի վեր ձգել՝ բարձրացնել:*
ՎԵՐԱՁԵՌՆԵԼ, բ. *Վերստին մէկին ձեռք մեկնել:*
ՎԵՐԱՁԵՒԱՉԱՓԵԼ, բ. *Վերակառուցել, բաժանումը վերափոխել: Վերստին ձեւաչափել:*
ՎԵՐԱՁԵՒԱՉԱՓՈՒՄ, գ. *Վերաձեւաչափելը:*
ՎԵՐԱՃԱՌԵԼ, բ. *Նորից ճառել:*
ՎԵՐԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Վերաճառելը:*
ՎԵՐԱՃԵԼ, բ. *Աճելով վերափոխուել:*
ՎԵՐԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՈՒՄ, գ. *Վերամարդկայնանալը:*
ՎԵՐՋՆԱՄԱՐՏ, գ. *Եզրափակիչ մարտ:*
ՎԵՐԱՄԱՔՐԵԼ, բ. *Նորից մաքրել:*
ՎԵՐԱՄԲԱՌՆԱԼ, բ. *Վեր բարձրացնել:*
ՎԵՐԱՄԲԱՌՆԱԼ, բ. *Վեր բարձրանալ:*
ՎԵՐԱՄԲԱՐՁ, ած. *Վեր բարձրացրած՝ բարձրացած:* Փոխ. *Գոռոզացած:*
ՎԵՐԱՄԲԱՐՁԱՀԱՆ, ած. *Վեր բարձրացնող:*
ՎԵՐԱՄԻԱՆԱԼ, բ. *Վերստին միանալ:*
ՎԵՐԱՄԿՐՏԵԼ, բ. *Մի անգամ մկրտուածին նորից մկրտել:*
ՎԵՐԱՄԿՐՏԻՉ, ած. գ. *Վերամկրտութեան կողմնակից:*
ՎԵՐԱՄԿՐՏՈՒԹԻՒՆ, գ. *Երկրորդ անգամ մկրտելը:*
ՎԵՐԱՄԿՐՏՈՒՄ, գ. *Վերամկրտելը:*
ՎԵՐԱՄՇԱԿԵԼ, բ. *Նորից մշակել:*
ՎԵՐԱՄՇԱԿՈՒԹԻՒՆ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ } գ. *Վերամշակելը:*
ՎԵՐԱՄՈՒՄՆԱՆԱԼ, բ. *Նորից ամուսնանալ:*
ՎԵՐԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, գ. *Նորից ամուսնանալը:*
ՎԵՐԱՄՓՈՓԵԼ, բ. *Ամփոփել, վեր հաւաքել:*
ՎԵՐԱՅԱՅՏՆՈՒՄ, գ. *Վերստին յայտնում:*
ՎԵՐԱՆԱԼ, բ. *Վեր բարձրանալ: Բաժանուել: Ոչնչանալ:*
ՎԵՐԱՆԱՅԵԼ, բ. *Վերեւից մի բանի վրայ նայել: Նորից՝ կրկին նայել:*
ՎԵՐԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ, գ. *Նորից ներկայացում:*
ՎԵՐԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ, գ. *Վերստին ձեռք բերուած անկախութիւն:*
ՎԵՐԱՆԿԱՐԵԼ, բ. *Նորից նկարել:*
ՎԵՐԱՆԿԱՐՈՒՄ, գ. *Վերանկարելը:*
ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼ, բ. *Կրկին նշանակել:*
ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ, բ. *Նորոգել հինը:*
ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ, ած. գ. *Նա որ վերանորոգում է:*
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ, գ. *Վերանորոգելը:*
ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ, ած. *Վերանորոգչին յատուկ:*
ՎԵՐԱՆՈՒԱԳ, ած. *Դէպի վեր բարձրացող երգով:*
ՎԵՐԱՆՊԱՏԱԿԱՌԻՂՂՈՒԵԼ, բ. *Վերըստին նպատակաուղղուել:*
ՎԵՐԱՇԱՐԺԵԼ, բ. *Վեր շարժուել:*
ՎԵՐԱՇԻՆԵԼ, բ. *Քանդուածը նորից շինել:*
ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. *Վերաշինելը, վերաշինուելը:*
ՎԵՐԱՇՐՋՈՒԹԻՒՆ, գ. *Ինքն իր վրայ շրջելը՝ դառնալը:*
ՎԵՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ, գ. *Աշխարհագրական չափում:*
ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ, գ. *Կրկնակի կմ երկրորդ անգամ ապահովագրելը:*
ՎԵՐԱՊԱՀԵԼ, բ. *Մի բան պահել մէկի համար, յատկացնել՝ թողնել մէկի տրամադրութեան տակ:*
ՎԵՐԱՊԱՀՈՒԹԻՒՆ,

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**, գ. *Վերապահելը: Մի բան ասել, առանց երաշխաւորելու նրա ճշտութիւնը:*

**ՎԵՐԱՊԱՏՄԵԼ**, բ. *Բարձրաձայն պատմել:*

**ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ**, ած. *Շատ պատուելի, բարձրապատիւ:*

**ՎԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ**, գ. *Վերապատիւ լինելը:*

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**, գ. *Լրացուցիչ պատրաստութիւն որեւէ առարկայից:*

**ՎԵՐԱՊՐԵԼ**, բ. *Նորից ապրել:*

**ՎԵՐԱՊՐՈՂ**, գ. *Փրկուած:*

**ՎԵՐԱՊՐՈՒՄ**, գ. *Վերապրելը:*

**ՎԵՐԱՌԱՋԱԴՐՈՒԵԼ**, բ. *Կրկին առաջադրուել:*

**ՎԵՐԱՌԱՔԵԼ**, բ. *Դէպի վեր՝ երկինք ուղարկել կմ վերստին առաքել:*

**ՎԵՐԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Վեր առնելը:*

**ՎԵՐԱՍԱՍ**, ած. գ. *Սաստիկ կմ ուժեղ հնչուող ձայնաւոր:*

**ՎԵՐԱՍԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Բարձրաձայն ասելը, յայտարարութիւն:*

**ՎԵՐԱՍԵՐԵԼ**, բ. *Վերափոխուել: Վերածընիլ:*

**ՎԵՐԱՍԵՐՈՒՄ**, գ. *Վերածնում:*

**ՎԵՐԱՍԼԱՑ**, **ՎԵՐԱՍԼԱՑԻԿ** } ած. *Նա որ վերասլանում է:*

**ՎԵՐԱՍԼԱՑՈՒՄ**, գ. *Վեր՝ երկինք սլանալը:*

**ՎԵՐԱՍՏԵՂԾԱԿԱՆ**, ած. *Մտքից նորից ստեղծուած, մտացածին:*

**ՎԵՐԱՍՏԵՂԾԵԼ**, բ. *Նորից ստեղծել:*

**ՎԵՐԱՍՏԵՂԾԻՉ**, ած. գ. *Նա որ վերաստեղծում է:*

**ՎԵՐԱՍՏԵՂԾՈՒՄ**, գ. *Վերաստեղծելը:*

**ՎԵՐԱՍՏՈՒԳԵԼ**, բ. *Նորից ստուգել:*

**ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ**, ած. գ. *Նա որ վերաստուգում է:*

**ՎԵՐԱՍՏՈՒԳՈՒՄ**, գ. *Վերաստուգելը:*

**ՎԵՐԱՎՋՏՈՒԿ**, ած. մկ. *Վերիվերոյ, հարեւանցի կերպով:*

**ՎԵՐԱՐՏԱԴՐԻՉ**, ած. *Վերստին արտադրող:*

**ՎԵՐԱՏԵՍՈՒՉ**, գ. *Վերադիտող, վերահըսկող:*

**ՎԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ**, ած. *Վերատեսչին յատուկ:*

**ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆ**, գ. *Վերատեսուչ լինելը:*

**ՎԵՐԱՏԻՐԱՆԱԼ**, բ. *Նորից տիրանալ:*

**ՎԵՐԱՏԻՊ**, գ. *Վերստին տպուած կրկնօրինակ:*

**ՎԵՐԱՏՊԱՒՈՐԵԼ**, բ. *Նորից տպաւորել:*

**ՎԵՐԱՎՃԱՌՈՂ**, գ. *Նորից վաճառող:*

**ՎԵՐԱՎՃԱՌՈՒՀԻ**, գ. *Վերավաճառող կին:*

**ՎԵՐԱՐԹՆԱՑՆԵԼ**, բ. *Վերստին արթնացնել:*

**ՎԵՐԱՐԺԵՒՈՐԵԼ**, բ. *Վերստին արժեւորել:*

**ՎԵՐԱՐԾԱՐԾԵԼ**, բ. *Նորից արծարծել:*

**ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄ**, գ. *Վերարծարծելը:*

**ՎԵՐԱՐԿՈՒ**, գ. *Ինչ որ վրայից ձգում է: Թիկնոց: Վրայի զգեստ:*

**ՎԵՐԱՐԿՈՒԱՑՈՒ**, ած. *Վերարկու կարելու յարմար (կտոր):*

**ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ**, բ. *Նորից արտադրել:*

**ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վերարտադրելը:*

**ՎԵՐԱՑԱԲԱՐ**, մկ. *Վերացական կերպով:*

**ՎԵՐԱՑԱԿԱՆ**, ած. (Փիլիս.) *Տեսաբանական, ոչ առարկայական:*

**ՎԵՐԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Վերացական լինելը:*

**ՎԵՐԱՑԵԱԼ**, ած. *Վերացած:*

**ՎԵՐԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Վերանալ'ի:*

**ՎԵՐԱՑՈՒՄ**, գ. *Վերանալը վերացնելը:* (Փիլիս.) *Առարկայի յատկութիւնը առարկայից. անջատելը: Բարձրացում:*

**ՎԵՐԱՓԱՅԼԵԼ**, բ. *Շատ փայլեցնել:*

**ՎԵՐԱՓԹԹՈՒՄ**, գ. *Վերստին փթթելը՝*

*ծաղկիլը:*
ՎԵՐԱՓՈԽԵԼ, բ. (Կրօն.) *Վեր՝ երկինք փոխադրել:*
ՎԵՐԱՓՈԽՈՒՄ, գ. (Եկեղ.) *Վերափոխուելը՝ երկինք վերանալը:*
ՎԵՐԱՔԱՐՈԶ, ած. *Վերստին քարոզող:*
ՎԵՐԱՔՆՆԵԼ, բ. *Նորից՝ երկրորդ անգամ քննել:*
ՎԵՐԱՔՆՆԵԼԻ, ած. *Նա որ պէտք է վերաքննուի:*
ՎԵՐԱՔՆՆԻՉ, ած. գ. *Նա որ վերաքըննում է, վերաքննող:*
ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ, գ. *Մի քննուած՝ վերջացած գործի երկրորդ անգամ քըննութիւն:*
ՎԵՐԱՔՈՒԷԱՐԿԵԼ, բ. *Երկրորդ անգամ քուէարկել:*
ՎԵՐԱՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Վերաքուէարկելը:*
ՎԵՐԱԲԱՆԱԼ, բ. *Բաց անել:*
ՎԵՐԱԲԵՆԱԶԳԻՆԵՐ, գ. (Բուս.) *Փոշածաղիկների դասին պատկանող բոյսերի ցեղ:*
ՎԵՐԴԻ, գ. *Վերի դին:*
ՎԵՐԵԼ, ած. *Վեր ելնող:*
ՎԵՐԵԼԱԿ, ած. գ. *Յարկ-յարկ ժամանակաւոր տախտակամածներ նոր շինութիւնների պատերի երկարութեամբ: Շէնքի յարկերի միջեւ փոխադրամիջոց:*
ՎԵՐԵԼԱԿԱՎԱՐՈՒՀԻ, գ. *Կին վերելակավար:*
ՎԵՐԵԼՔ, Հկր. *Վայրէջք:*
ՎԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Ընդարձակ տաղաչափութեան վերջից կցուած համառօտ երգ՝ տաղաչափութիւն:*
ՎԵՐԵՐԿՐԱՅԻՆ, ած. *Երկրից վերեւ ընկած, երկրից՝ երկրայինից կտրուած:*
ՎԵՐԵՒ, գ. *Վերի կողմը:*
ՎԵՐԵՒԱՆԱԼ, բ. *Քիչ վեր գնալ:*
ՎԵՐԵՒԻ, ած. *Վերը եղած:*
ՎԵՐԵՒՆԵՐ, գ. *Վերիններ:*
ՎԵՐԶԳԱՅԱԿԱՆ, ած. *Զգայականից վեր:*
ՎԵՐԸՆԹԱՆԱԼ, բ. *Դէպի վեր ընթանալ:*
ՎԵՐԸՆԹԱՑ, ած. *Վեր ընթացող, վեր վազող:*
ՎԵՐԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ, գ. *Ընթացք դէպի վեր:*
ՎԵՐԸՆԹԵՐՑՈՒՄ, գ. *Մի անգամ կարդացածը նորից կարդալը:*
ՎԵՐԸՆԾԱՅԵԼ, բ. (Կրօն.) *Վեր բարձրացնելով կմ վերստին ընծայել:*
ՎԵՐԸՆՁԻՒՂԵԼ, բ. *Գետնից բուսնել, բարձրանալ:*
ՎԵՐԸՆՁԻՒՂՈՒՄ,գ. *Վերընձիւղելը:*
ՎԵՐԸՆՏՐԵԼ, բ. *Նորից մէկին նոյն պաշտօնին ընտրել:*
ՎԵՐԸՆՏՐԵԼԻ, ած. *Նա որ կարող է նորից ընտրուել նոյն պաշտօնին:*
ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ, գ. *Վերընտրելը, մէկին նորից նոյն պաշտօնին ընտրելը:*
ՎԵՐԹԻՌ,
ՎԵՐԹՌԻՉՔ, *Թռչող գործիքի վեր բարձրանալը:*
ՎԵՐԺԱՄԱՆԱԿԵԱՑ, ած. *Ժամանակից դուրս:*
ՎԵՐԻ, ած. *Վերը եղած:* Հկր. *Վարի:*
ՎԵՐԻՄԱՍՏ, ած. *Գերիմաստ:*
ՎԵՐԻՆ, ած. *Վերը՝ բարձրը եղած, վերի: Արտաքին:*
ՎԵՐԻՎԱՅՐԵԼ, բ. *Վեր ու վար անել:*
ՎԵՐԻՎԵՐՈՅ, մկ. *Մօտաւորապէս, ընդամէնը:*
ՎԵՐԻՐԱԿԱՆ, ած. *Իրականից վեր:*
ՎԵՐԼՈՒԾԱԲԱՐ, մկ. *Վերլուծելով:*
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ, ած. *Վերլուծութեան յատուկ:*
ՎԵՐԼՈՒԾԵԼ, բ. *Մի ամբողջ (նիւթ, քանակ, խօսք): Քննել:*
ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ, գ. *Վերլուծելը:* Հկր. *Համադրութիւն:*
ՎԵՐԼՈՒԾՕՐԷՆ, մկ. *Վերլուծական եղանակով:*
ՎԵՐԾԱՆԵԼ, բ. *Կարդալ (հասկանալով):*

*Կարողանալ կարդալ: Մեկնել, պարզել:*
ՎԵՐԾԱՆՈՂ, ած. գ. *Ընթերցող:*
ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վերծանելը:*
ՎԵՐԾԱՆՈՒՄ, գ. *Վերծանելը, վերծանութիւն: Մեկնութիւն:*
ՎԵՐՀՊՈՒՄ, գ. *Վերստին հպում:*
ՎԵՐՁԳՏԵԼ, բ. *Վերստին ձգտել:*
ՎԵՐՄԱԿ, գ. *Հաստ գործուած փափուկ կտոր:*
ՎԵՐՄԱԿԱԾԱԾԿ, ած. (դիպվ.): *Վերմակով փաթաթուած:*
ՎԵՐՄՂԵԼ, բ. *Վեր մղել, վեր բարձրացնել:*
ՎԵՐՄՂԻՉ, ած. *Վերմղող:*
ՎԵՐՄՂՈՒՄ, գ. *Վերմղելը:*
ՎԵՐՅԱՌՆՈՒՄ, գ. *Վերստին յառնելը:*
ՎԵՐՅԻՇԵԼ, բ. *Նորից յիշել:*
ՎԵՐՅԻՇՈՒՄ, գ. *Վերյիշելը:*
ՎԵՐՆԱԲԵՐԴ, գ. *Քաղաքի բարձր կէտում շինուած բերդ:*
ՎԵՐՆԱԳԱՒԱՌ, գ. *Բարձր դիրք ունեցող գաւառ:*
ՎԵՐՆԱԳԻՐ, գ. *Գրքի բուն սկզբում կարճ գրութիւն: Խորագիր:*
ՎԵՐՆԱԳՆԱՑ, ած. *Դէպի վեր գնացող:*
ՎԵՐՆԱԳՐԵԼ, բ. *Վերնագիր դնել:*
ՎԵՐՆԱԶԳԵՍՏ, գ. *Վերին՝ վրայի զգեստ:*
ՎԵՐՆԱԽԱՂ, գ. *Շարականի հին խաղերից մէկը:*
ՎԵՐՆԱԽԱՐԻՍԽ, գ. (Ճարտարպ.) *Զարդարուն սիւների վերի մասը:*
ՎԵՐՆԱԽԱՒ, գ. *Վերեւի՝ վրայի խաւը:* Նման. *Բարձր աստիճանի մարդիկ:*
ՎԵՐՆԱԽՆԱՄ, ած. (Եկեղ.) *Աստուածային նախախնամութեամբ եղած:*
ՎԵՐՆԱԿՈՂՄԵԱՆ, ած. *Վերնակողմն եղող, վերնակողմի:*
ՎԵՐՆԱԿՐՕՆ, ած. (Կրօն.) *Վերինների՝ հրեշտակների բարք ու վարք ունեցող:*
ՎԵՐՆԱՁԱՅՆ, գ. *Տղամարդու կմ կնոջ բարձր՝ սուր ձայն,* տենօր:
ՎԵՐՆԱՁԵՂՈՒՆ, գ. *Շինութեան վերին յարկը:*
ՎԵՐՆԱՄԱՇԿ, գ. (Կազմախ.) *Մարդու մորթի վրայի բարակ՝ ծակոտկէն եւ թափանցիկ մաշկը:*
ՎԵՐՆԱՄԱՇԿԱՅԻՆ, ած. *Վերնամաշկին յատուկ, վերաբերեալ:*
ՎԵՐՆԱՄՐՅԱՆԱԿ, ած. (Կրօն.) *Ինչ որ վերեւից տրուած է իբրեւ մրցանակ:*
ՎԵՐՆԱՅԱՐԿ, գ. *Վերին յարկ:* Հկռ. *Ներքնայարկ:*
ՎԵՐՆԱՆՔԱՅԻՆ, ած. *Յօնքերից վերեւ ձգուող:*
ՎԵՐՆԱՇԱՊԻԿ, գ. *Վրայի շապիկ:*
ՎԵՐՆԱՊԱՐԳԵՒ, ած. (Կրօն.) *Վերեւից՝ աստծուց պարգեւուած:*
ՎԵՐՆԱՍՐԱՀ, գ. *Վերի սրահ:*
ՎԵՐՆԱՏՈՒՆ, գ. *Տան վերին յարկը, վերնայարկ:*
ՎԵՐՆԱՏՈՒՐ, ած. *Վերեւից՝ աստծուց տրուած:*
ՎԵՐՆԻԻԹԱԿԱՆ, ած. *Նիւթականից վեր:*
ՎԵՐԸՆԹԱՑ, ած. *Վեր ընթացող:*
ՎԵՐՆՈՏ, ած. *Դիւահար, լուսնոտ:*
ՎԵՐՆՈՏՈՒԹԻՒՆ, Տ. *Ընկնաւորութիւն:*
ՎԵՐՆՈՑ, գ. *Տան վերեւի վանդակապատ մասը:*
ՎԵՐՆՈՒՂԻ, գ. *Վերեւ տանող ուղի:*
ՎԵՐՍՏԵՂԾՈՒՄ, գ. *Վերստին ստեղծում:*
ՎԵՐՈԳՐԵԱԼ, ած. գ. *Վերը գրուած, վերոյիշեալ:*
ՎԵՐՈՅԻՇԵԱԼ, ած. *Վերը յիշուած:*
ՎԵՐՈՆՇԱՆԱԿԵԱԼ, ած. *Վերը նշանակուած, վերոգրեալ:*
ՎԵՐՈՐՈՎԱՅՆ, գ. (Կազմ.) *Որովայնի վերի մասը:*
ՎԵՐՈՒԴԻՐ, գ. *Վերցնել-դնելը: Շարունակ կռանալն ու վեր կենալը:*
ՎԵՐՈՒՂԷՇ, Տ. *Ամբարձուղէշ: Դէպի վեր պարզած:*
ՎԵՐՈՒՆԻՍՏ, գ. *Վեր կենալ-նստել:*

**Ի ՎԵՐՈՒՍՏ**, մկ. *Վերից, վերեւից, երկնքից:*
**ՎԵՐՋ**, գ. *Այն ծայրը, որտեղ մի բան դադարում է: Կեանքի աւարտ: Ինչով որ մի գործ վերջանում է:*
**ՎԵՐՋԱԲԱՆ**, գ. *Գրուածքի վերջում համառօտ յիշատակարան՝ գրութեան հանգամանքների մասին:* Հկռ. *Առաջաբան: Վէպի՝ քերթուածի վերջին մասը:*
**ՎԵՐՋԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Ամենավերջին, ամենայետին:*
**ՎԵՐՋԱԴԱՍ**, ած. (Քրկն.) *Բառի վերջում դրուած, յետադաս:* Հկռ. *Նախադաս:*
**ՎԵՐՋԱԴՐԱԿԱՆ**, ած. *Վերջադրութիւն կազմող:*
**ՎԵՐՋԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. (Քրկն.) *Բառի վերջից կցուած տառ կմ վանկ:*
**ՎԵՐՋԱԼՈՅՍ**, գ. *Երկրի այն լուսաւորութիւնը, որ տեւում է արեգակի մայր մտնելուց յետոյ մինչեւ գիշերն ընկնելը:* Հկռ. *Արշալոյս:* Փոխ. *Կեանքի վերջին շրջանը:*
**ՎԵՐՋԱԾԱՆՑ**, ած. (Քրկն.) (*Բառ), որ ածանցական մասնիկը կրում է վերջում:*
**ՎԵՐՋԱԾԻՆ**, ած. *Վերջը ծնած:*
**ՎԵՐՋԱԿԱՅԱՆ**, ած. *Վերջին կայարան:*
**ՎԵՐՋԱԿԷՏ**, գ. (Քրկն.) *Մէկը միւսի գլխին դրուած երկու կէտ (:):*
**ՎԵՐՋԱՀԱՍ**, ած. *Վերջը՝ ուշ հասնող (պտուղ):*
**ՎԵՐՋԱՀՈԼՈՎ**, ած. (Քրկն.) *Վերջի կողմից հոլովուող:*
**ՎԵՐՋԱՂԻ**, գ. *Աղիքների վերջին մասը, հաստ աղիքներ:*
**ՎԵՐՋԱՄՆԱՑ**, ած. *Մէկի մահից յետոյ կենդանի մնացած, յաջորդ:*
**ՎԵՐՋԱՄՈՒՏ**, ած. *Վերջը՝ վերջին ժամանակները մտած:*
**ՎԵՐՋԱՆԱԼ**, բ. *Վերջին կէտին հասնել:* Հկռ. *Սկսուել: Վերջին ծայրին հասնել: Կատարուել, գլուխ գալ: Հետեւանքի հասնել: Հատնել, սպառուել: Դադարել, Հրաժարուել: Աւարտիլ:*
**ՎԵՐՋԱՆԱԼԻՔ**, գ. *Վերջանալու յատկութիւն:*
**ՎԵՐՋԱՆՈՒԱԳ**, գ. *Նուագի աւարտական մասը:*
**ՎԵՐՋԱՊԱՀ**, ած. գ. *Շարժուող զօրքի յետեւից գնացող:*
**ՎԵՐՋԱՊԷՍ**, մկ. *Վերջիվերջոյ:*
**ՎԵՐՋԱՏԱՆՋ**, ած. գ. *Հին յունական եւ լատինական բանաստեղծութեան մէջ եռավանկ անդամ:*
**ՎԵՐՋԱՏԱՆՋԱԿԱՆ**, ած. *Վերջատանջ չափով գրուած:*
**ՎԵՐՋԱՒՈՐ**, ած. *Վերջ ունեցող:*
**ՎԵՐՋԱՒՈՐԵԼ**, բ. *Վերջացնել, կատարել:*
**ՎԵՐՋԱՒՈՐԵԼ**, բ. *Վերջին հասցնել, աւարտել:*
**ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վերջ, վերջանալ:* (Կազմախ.) *Ոտներն ու ձեռները:*
**ՎԵՐՋԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ**, գ. *Յետ դառնալը:*
**ՎԵՐՋԵԼ**, բ. *Յետաձգել:*
**ՎԵՐՋԸՆԹԵՐ**, ած. *Ընդհանրապէս՝ վերջինից անմիջապէս առաջ եղած:*
**ՎԵՐՋԻ**, ած. Տ. *Վերջին:* մկ. *Վերջը:*
**ՎԵՐՋԻՆ**, ած. *Վերջում եղող՝ գտնուող: Ծայրագոյն աստիճանի, ծայրայեղ:*
**ՎԵՐՋ(Ի)ՆԵԿ**, ած. գ. *Ամենից վերջը եկած:*
**ՎԵՐՋՆԱԳԻՐ**, գ. (Իրաւբ.) *Վերջին՝ որոշակի եւ վճռական առաջարկութիւն:*
**ՎԵՐՋՆԱԿԱՆ**, ած. *Վերջին, որ այլեւս չի փոփոխուելու:*
**ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ**, մկ. *Վերջնական կերպով:*
**ՎԵՐՋՆԱՀԱՆԳՐՈՒԱՆ**, գ. *Վերջին հանգրուան՝ կայան:*
**ՎԵՐՋՆԱՀԱՆԴԷՍ**, գ. *Եզրափակիչ հանդիսութիւն:*
**ՎԵՐՋՆԱՅԱՆԳ**, գ. *Տողավերջի յանգը:*

**ՎԵՐՋՆԱՊԱՏԱՍԽԱՆ**, գ. *Վերջնական, աւարտման պատճառ։*
**ՎԵՐՋՆԱՍՏՈՒԳՈՒՄ**, գ. *Վերջնական ստուգում։*
**ՎԵՐՋՆԱՎՃԻՌ**, գ. *Վերջնական որոշում։*
**ՎԵՐՋՆԱՐԴԱՐ**, ած. *Արդարութեամբ վերջացած. վերջը արդար։*
**ՎԵՐՋՆԱՐԴԻՒՆՔ**, գ. *Վերջնական արդիւնք։*
**ՎԵՐՋՆԱՕՂԱԿ**, գ. *Վերջին օղակ։*
**ՎԵՐՋՆՕՐԷՆ**, Տ. *Վերջնականօրէն։*
**ՎԵՐՋՈՏՆԵԼ**, չբ. *Ետ մնալ։*
**ՎԵՐՍԿՍԵԼ**, բ. *Նորից սկսել մի բան, որ մի անգամ սկսուած, բայց կիսատ էր թողուած։*
**ՎԵՐՍԿՍՈՒՄ**, գ. *Վերսկսելը, նորից սկսելը։*
**ՎԵՐՍՏ**, գ. *Հին ռուսական երկարութեան չափ։*
**ՎԵՐՍՏԱՉԱՓ**, ած. գ. *Սիւն, որի վրայ նշանակուած են ճանապարհի վերստերը։*
**ՎԵՐՍՏԻՆ**, մկ. *Նորից, դարձեալ միւս անգամ։*
**ՎԵՐ-ՎԵՐ**, գ. *Մի պարի անուն։*
**ՎԵՐՎԵՐԱՆ**, գ. *Անորոշ տեսակի ընդեղէն։*
**ՎԵՐՎԵՐՈՒԿ**, գ. *Պարի մի տեսակ։*
**ՎԵՐՏ**, ած. *Խիտ հիւսուած։*
**ՎԵՐՏԱՌԵԼ**, բ. *Նախկին տարրերին վերածել։*
**ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Նախկին տարրերին վերածելը։*
**ՎԵՐՏԵԼ**, բ. *Վեր-վեր ընկնել, ցատկոտել։*
**ՎԵՐՕՐՀՆԵԼ**, բ. *Օրհնութիւնը վերառաքել։*
**ՎԵՑ**, թւ. ած. *Հինգ եւ մէկ, եօթից մէկով պակաս։*
**ՎԵՑԱԽՈՐՇ**, ած. *Վեց խորշ ունեցող։*
**ՎԵՑԱԿԱՆ**, ած. *Ամէն մէկը կմ ամէն մէկին վեց։*
**ՎԵՑԱԿԻ**, Տ. *Վեցեակ։*
**ՎԵՑԱՄԵԱԿ**, գ. *Վեց տարին իբրեւ մի միաւոր։*
**ՎԵՑԱՄԵԱՅ**, ած. *Վեց տարի տեւող։*
**ՎԵՑԱՄՍԵԱԿ**, գ. *Վեց ամիսը վերցրած իբրեւ մի միութիւն։*
**ՎԵՑԱՄՍԵԱՅ**, ած. *Վեց ամիս տեւող։*
**ՎԵՑԱՆԻՍՏ**, ած. գ. (Երկրաչ.) *Երկրաչափական մարմին։*
**ՎԵՑԱՆԿԻՒՆ**, գ. (Երկրաչ.) *Երկրաչափական ձեւ, որ ունի վեց անկիւն։*
**ՎԵՑԱՆԿԻՒՆԻ**, ած. *Վեց անկիւն ունեցող։*
**ՎԵՑԱՉԱՓ**, ած. գ. *Հին յունական եւ լատինական տաղաչափութեան տեսակ։*
**ՎԵՑԱՉԻ**, ած. *Վեց աչք ունեցող։*
**ՎԵՑԱՊԱՏԻԿ**, ած. մկ. *Վեց անգամ աւելի։*
**ՎԵՑԴԱՐԵԱՆ**, ած. *Վեց դար տեւող։*
**ՎԵՑԵԿԻ**, ած. մկ. *Վեց տեսակ։*
**ՎԵՑԵՐՈՐԴ**, ած. *Հինգին յաջորդող մէկը։*
**ՎԵՑԹԵՒԵԱՆ**, ած. *Վեց թեւ ունեցող։*
**ՎԵՑԿԻՆ**, մկ. *Վեցապատիկ, վեց անգամ։ Վեց կերպով։*
**ՎԵՑՀԱԶԱՐԵԱՅ**, գ. *Կախարդութեան եւ հմայութեան գիրք։*
**ՎԵՑՀԱՏՈՐԵԱԿ**, գ. *Վեցհատորեայ հրատարակութիւն։*
**ՎԵՑՀԱՐԻՒՐԵՐՈՐԴ**, ած. *Հինգ հարիւր իննսուն եւ իննին յաջորդող թիւը։*
**ՎԵՑՁԵՌՆԻ**, ած. *Վեց ձեռք ունեցող։* Վեցձեռնանի հրէշ։
**ՎԵՑՄԱՏԵԱՆ**, ած. գ. *Վեց մատ ունեցող (մի ձեռքի վրայ)։*
**ՎԵՑՆՈՑ**, գ. ած. *Վեց միաւոր պարունակող։*
**ՎԵՑՈՍՏԵԱՆ**, ած. *Վեց ոստ՝ ճիւղ ունեցող։*
**ՎԵՑՇԱՐ**, ած. *Վեց շարք պարունակող։*
**ՎԵՑՇԵՐՏԱՆԻ**, ած. *Վեց շերտից կազմ-*

*ուած:*
**ՎԵՑՈՏԱՆԻ**, ած. *Վեց ոտք ունեցող:*
**ՎԵՑՎԱՆԿԱՆԻ**, ած. *Վեց վանկից բաղկացած:*
**ՎԵՑՏՐԱՔԱՆԻ**, ած. գ. *Վեց անգամ տրաքուող (հրազէն):*
**ՎԵՑՕՐԵԱԿ**, գ. *Վեց օրը իբրեւ մի միաւոր:*
**ՎԵՑՕՐԵԱՅ**, ած. *Վեց օր տեւող:*
**ՎԵՒԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղագրութեան համակարգ:*
**ՎԵՒԱՄՈԼՈՒԹԻՒՆ**, գ. *Վեւագրութեան չարաչար կիրառութիւնը:*
**ՎԶԱԹԱԿ**, ած. *Վիզը թակած:*
**ՎԶԱԿՈԹ**, գ. *Վզի յետեւի կողմը:*
**ՎԶԱՄԱՍ**, գ. *Հագուստի վիզը:*
**ՎԶԱՆ**, ած. *Վիզը տնկած:*
**ՎԶԱՏԱԿ**, գ. *Վզի տակը:*
**ՎԶԶԱԼ**, բ. *Վը զզ ձայն հանել:*
**ՎԶԶԱՆ**, ած. *Վզզացող:*
**ՎԶԶՈՑ**, գ. *Վզզալու ձայնը:*
**ՎԶԻԿ-ՎԶԻԿ**, մկ. *Արագ-արագ:*
**ՎԶԿԱՊ**, գ. *Վզի կապ:*
**ՎԶՆՈՑ**, գ. *Կանացի զարդ, բաղկացած ոսկիների եւ մարգարիտների շարոցից:*
**ՎԶՈՒՐԿ**, ած. *Մեծ. (պատուանուն հին Պարսկաստանի աւագ գլխաւորների):*
**ՎԶՎԶՈՑ**, գ. *Վզվզալու ձայն:*
**ՎԶՏԱԿ**, գ. *Ուռոյց:*
**ՎԷԳ**, գ. *Վէճ, կռիւ:*
**ՎԷԳ**, գ. *Կճղակաբաշխ կենդանիների ծնկան յօդի ոսկորը:* Փոխ. *Փորձ անել:*
**ՎԷԶԻՐ**, (Արաբ., թրք.) գ. *Ամենաբարձր աստիճանի քաղաքացիական պաշտօնեայ:*
**ՎԷԶԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վեզիրի աստիճանը:*
**ՎԷԺ**, արմ. *Վիժել՚ի:*
**ՎԷԺ**, Տ. *Բէժ:*
**ՎԷՃ**, գ. *Կարծիքների տարբերութիւներ: Տարաձայնութիւն:*
**ՎԷՄ**, գ. *Միակտուր պինդ քար:*
**ՎԷՄԱՏԱՇ**, Տ. *Վիմատաշ: Քարտաշ:*
**ՎԷՄՔԱՐ**, գ. (Եկեղ.) *Այն քարը, որ դրուում է եկեղեցու սեղանի հիմքում:*
**ՎԷՊ**, գ. *Չրոյց ՝աւանդութիւն պատմական բովանդակութեամբ, արձակ կմ ոտանաւոր: Գրական պատմութիւն:*
**ՎԷՊԻԿ**, գ. *Փոքր վէպ:*
**ՎԷՋ**, գ. *Հոգս, փոյթ:*
**ՎԷՍ**, ած. *Ամբարտաւան, գոռոզ:*
**ՎԷՍՏ**, ած. գ. *Ազնուական տոհմից ծագած, ազատ:*
**ՎԷՍՕՐԷՆ**, մկ. *Վէսի պէս:*
**ՎԷՏ**, գ. *Մանր ալիք ջրերի երեսին թեթեւ հողմից:*
**ՎԷՏՎԷՏ**, ած. *Ալիքաւոր, ծփուն:*
**ՎԷՏՎԷՏԻԼ**, ած. *Ալիքի պէս ծփալ, ծածանիլ:*
**ՎԷՐ**, գ. Տ. *Վէրք: Խոց:*
**ՎԷՐ**, սղուած ձեւ *Վայր՚ից*, Տ. *Վար:*
**ՎԷՐՔ**, գ. *Մարմնի մորթի կմ նաեւ ներքին մասերի վնասուածք: Խոց:* Նման. *Հոգեկան վիշտ:*
**ՎԸԶ-ՎԸԶ**, գ. *Շարունակ լսուող վզզոց, քամու ձայն:*
**ՎԹԱՐ**, գ. *Վնաս, վտանգ: Վճռական աղէտալի դէպք:*
**ՎԹԱՐԱՀԱՐՈՅՑ**, ած. *Վթար առաջացնող:*
**ՎԹԱՐԱՊԱՇԱՐ**, գ. *Պարէնի համար նախատեսուած պահուստային պաշար:*
**ՎԹԱՐԵԼ**, բ. *Վնասել:*
**ՎԹԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վնաս, վնասուածք:*
**ՎԺԺԱԼ**, բ. *Վը ժժ ձայն հանել:*
**ՎԺԺԱՆ**, ած. *Վժժացող:*
**ՎԺԺՈՑ**, գ. *Վժժալու ձայնը:*
**ՎԺՎԺԱԼԻ**, ած. մկ. *Վժվժացող:*
**ՎԺՏԻԿ**, ած. *Այրուած, խորովուած:*
**ՎԺՐՏԱԼ**, բ. *Վխտալ:*
**ՎԻԳ**, գ. *Զօրավիգ: Օգնութիւն, պաշտպան:*
**ՎԻԹ**, գ. (Կենդ.) *Սնամէջ եղջերաւոր-*

*ների կարգին պատկանող կենդանի։*
**ՎԻԹԵԼ,** բ. *Վայթել, վոթել, թափել։*
**ՎԻԹԽԱՐԱՆԱԼ,** բ. *Վիթխարի դառնալ։*
**ՎԻԹԽԱՐԱՉԱՓ,** ած. *Շատ մեծ չափ ունեցող։*
**ՎԻԹԽԱՐԻ,** ած. *Անհեթեթ մեծութեամբ։*
**ՎԻԹԽԱՐ(Ի)ՈՒԹԻՒՆ,** գ. *Վիթխարի լինելը։*
**ՎԻԺԱԿ,** գ. *Հոսում, ջրի հոսանք։ Վերից վար։*
**ՎԻԺԱՆՈՒՏ,** ած. *Վիժող, հոսող։*
**ՎԻԺԱՆՔ,** գ. *Ջրի բուռն հոսում, գահավիժում։*
**ՎԻԺԵԼ,** բ. *Ուժով շպրտել (որեւէ ուղղութեամբ)։* Նման. *Բնական ժամանակից առաջ արգանդից դուրս մղել սաղմը։*
**ՎԻԺՈՒԱԾՔ,** գ. *Վիժելը։* (Փոխ.) *Ինչ որ պէտք է դուրս ձգուի իբրեւ աւելորդ։*
**ՎԻԺՈՒԿ,** գ. *Անժամանակ ծնուած երեխայ, վիժած։*
**ՎԻԺՈՒՄ,** գ. *Վիժելը։*
**ՎԻԼ,** ած. մկ. *Պարապ։*
**ՎԻԼԱԿ,** գ. *Փայտէ սարած, բաղկացած կլոր, ծայրը սուր կոթից եւ վրան բոլորակաձեւ ագուցուած բարակ ձողերից։*
**ՎԻԼԱՅԷԹ,** (Արաբ., թրքք.) գ. *Թուրքիայում նահանգ։*
**ՎԻԿ** / **ՎԻԿՆ** } գ. (Բուս.) *Առուոյտների ցեղին պատկանող բոյսերի ընտանիք։*
**ՎԻԿԻՆԳՆԵՐ,** գ. *Միջին դարերում ծովահէնների զինուորներ։*
**ՎԻՀ,** գ. *Խոր փոս, գուբ։ Մեծ խորութիւն, մեծ տարբերութիւն։*
**ՎԻՃԱԲԱՆ,** ած. գ. *Վիճաբանող, վիճող։*
**ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ,** ած. *Վիճաբանութեան յատուկ։*
**ՎԻՃԱԲԱՆԵԼ,** բ. *Վիճել, մի հարցի մասին տարբեր կարծիքներ ունենալով՝ աշխատել իր կարծիքը պաշտպանել։*
**ՎԻՃԱԲԱՆԵԼԻ,** Տ. *Վիճելի։*
**ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Վիճաբանելը, մի հարցի մասին տարբեր կարծիքներ յայտնելը։ Գիտական կաճառում՝ առաջարկուած աւարտական աշխատանքի (ատենախօսութեան) քննադատութիւն մասնագէտների կողմից։*
**ՎԻՃԱԽՆԴԻՐ,** ած. *Վէճ փնտռող։*
**ՎԻՃԱԿ,** գ. *Որեւէ փոքրիկ իր։ Աման, որի մէջ վիճակները պահում են։ Վիճակի միջոցով մէկի ապագան գուշակելը։ Բախտ, նախասահմանում։ Կացութիւն, որպիսութիւն։*
**ՎԻՃԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ,** գ. *Մի զոյք բաժանելը վիճակով։*
**ՎԻՃԱԿԱԳԻՐ,** ած. գ. *Նա որ պարապում է վիճակագրութեամբ։*
**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ,** ած. *Վիճակագրութեան յատուկ, վերաբերեալ։*
**ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ,** գ. *Գիտութիւն, որ ուսուցանում է եղանակներ՝ համակարգային կերպով դիտելու հասարակական կեանքի երեւոյթները։ Կացութեան մը տուեալներուն դասաւորուած ցանկ՝ հաշիւ։*
**ՎԻՃԱԿԱԽԱՂ,** գ. *Բախտախաղ։*
**ՎԻՃԱԿԱԿԱԼՈՒԹԻՒՆ,** գ. *Ժառանգութիւն, կալուած։*
**ՎԻՃԱԿԱԿԻՑ,** ած. *Նոյն վիճակն ունեցող։*
**ՎԻՃԱԿԱԿՑԵԼ,** բ. *Մէկին վիճակակից՝ մասնակից դարձնել*
**ՎԻՃԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ,** գ. *Վիճակակից լինելը։*
**ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Վիճակ քաշելը կմ հանելը։ Բախտախաղի տեսակ։*
**ՎԻՃԱԿԱՅԻՆ,** ած. (Եկեղ.) *Վիճակին՝ թեմին յատուկ։*
**ՎԻՃԱԿԱՊԱՏԿԱՆ,** ած. *Վիճակին՝ թեմին պատկանող։*
**ՎԻՃԱԿԱՊԵՏ,** գ. *Առաջնորդ վիճակի։*
**ՎԻՃԱԿԱՏՈՄՍ,** գ. *Վիճակախաղի տոմս։*

**ՎԻՃԱԿԱՐԿՈՒ**, ած. գ. *Նա որ վիճակ է ձգում:*

**ՎԻՃԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. *Վիճակ ձգելը:*

**ՎԻՃԱԿԱՑՈՅՑ**, ած. գ. Տ. *Վիճակագրութիւն: Ցուցակ, որ պարունակում է որոշ վիճակագրական տուեալներ՝ թուանըշաններ:*

**ՎԻՃԱԿԱՒՈՐ**, ած. գ. (Եկեղ.) *Հոգեւորական դասին պատկանող, կղերական:*

**ՎԻՃԱԿՈՐԴ**, Տ. *Վիճակակից:*

**ՎԻՃԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Վիճակ:*

**ՎԻՃԱՀԱՐՑ**, գ. *Վիճարկելի հարց:*

**ՎԻՃԱՍԷՐ**, ած. *Վիճել սիրող:*

**ՎԻՃԵԼ**, բ. *Վէճ անել, աշխատել խօսքով կմ գրով իր կարծիքը պաշտպանել: Սեփականութեան իրաւունքի մասին դատական գործ վարել:*

**ՎԻՃԵԼԻ**, ած. *Ինչ որ կարող է վէճ յարուցանել:*

**ՎԻՃԻ-ՎԻՃԻ**, ած. *Շատախօս:*

**ՎԻՃՈՂԱԲԱՐ**, մկ. *Վիճելով:*

**ՎԻՃՈՂԱԿԱՆ**, ած. *Վէճ յարուցանող, վիճաբանական:*

**ՎԻՃՈՒՄ**, գ. *Վիճելը: Ընդդիմախօսութիւն:*

**ՎԻՄԱԳՈՐԾ**, Տ. *Քարագործ:*

**ՎԻՄԱԳԻՐ**, ած. *Քարի վրայ գրուած:*

**ՎԻՄԱԳՐԱԿԱՆ**, ած. *Վիմագրութեան յատուկ:*

**ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ**, գ. *Արհեստանոց, որտեղ վիմագրում են:*

**ՎԻՄԱԳՐԵԼ**, բ. *Վիմագրութեան միջոցով բազմացնելու մի գրուածք կմ նկար:*

**ՎԻՄԱԳՐԻՉ**, ած. գ. *Արհեստաւոր: Վիմագրութիւն կատարող:*

**ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Գրուածք կմ նկար բազմացնելու մի եղանակ:*

**ՎԻՄԱԴԱՄԲԱՆ**, գ. *Վէմի մէջ փորուած դամբան:*

**ՎԻՄԱԴՐԱԿԱՆ**, ած. *Որի հիմքը դրուած է վէմի՝ քարի վրայ: Քարի վրայ փորագրուած արձանագրութիւն:*

**ՎԻՄԱԿԱՆ**, ած. *Վէմին յատուկ:*

**ՎԻՄԱԿԱՌՈՅՑ**, ած. *Վէմից շինուած, քարաշէն:*

**ՎԻՄԱԿԵՐՏ**, ած. *Քարից շինուած:*

**ՎԻՄԱՀԱՍԱԿ**, ած. *Բարձր քարերի հասակով:*

**ՎԻՄԱՁԵՒ**, ած. մկ. *Քարի նման:*

**ՎԻՄԱՆԱԼ**, բ. *Քարանալ:*

**ՎԻՄԱՇԷՆ**, ած. *Քարի՝ ապառաժի վրայ շինուած:*

**ՎԻՄԱՏԱՇ**, ած. *Քարի՝ ապառաժի մէջ փորուած:*

**ՎԻՄԱՏԻՊ**, ած. *Քարի վրայ տպուած՝ դրոշմուած: Վիմագրութեամբ տպուած:*

**ՎԻՄԱՐԳԵԼ**, ած. *Քարերի մէջ արգելուած:*

**ՎԻՄԱՓԱԿ**, ած. *Քարով փակուած:*

**ՎԻՄԱՓՈՐ**, ած. *Քար փորող, քարտաշ:*

**ՎԻՄԱՓՈՒԼ**, գ. *Քարի փուլ գալը:*

**ՎԻՆ**, գ. *Լարաւոր նուագարանի մի տեսակ:*

**ՎԻՆՏ**, գ. Տ. *Պտուտակ: Մի տեսակ թըղթախաղ:*

**ՎԻՇԱՊ**, գ. (Դիցաբ.) *Ամպրոպային չար ոգի: Առասպելական հրէշ, թեւաւոր օձ:*

**ՎԻՇԱՊԱԲԱՐ**, մկ. *Վիշապի նման:*

**ՎԻՇԱՊԱԲԱՐՈՅ**, ած. *Վիշապանման՝ վիշապի բարք ունեցող:*

**ՎԻՇԱՊԱԳԼՈՒԽ**, ած. *Վիշապի գլխով:*

**ՎԻՇԱՊԱԶՈՒՆ**, ած. գ. *Վիշապից սերուած:*

**ՎԻՇԱՊԱԶՕՐ**, ած. *Վիշապի նման զօրաւոր:*

**ՎԻՇԱՊԱԿ**, գ. (Կենդ.) *Փորի որդի մի տեսակ, որ նման է չորացած աղիքի: Թանձրալեզու մողէնների ցեղին պատկանող մողէս:*

**ՎԻՇԱՊԱԿԵՐՊ**, ած. *Վիշապի կերպ:*

**ՎԻՇԱՊԱՁԱՅՆ**, ած. մկ. *Վիշապի ձայնով, վիշապի նման շչալով:*

**ՎԻՇԱՊԱՁՈՒԿ**, գ. Տ. *Կէտ:*

**ՎԻՇԱՊԱՄԱՐԴ**, գ. *Հրէշ՝ կէս վիշապ,*

*կէս մարդ:*
ՎԻՇԱՊԱՄԱՐՏ, գ. *Վիշապների՝ օձերի կռիւ իրար հետ:*
ՎԻՇԱՊԱՆԱԼ, բ. *Վիշապ դառնալ:*
ՎԻՇԱՊԱՊԱՏԻՐ, ած. *Վիշապի՝ օձի պատրանքը:*
ՎԻՇԱՊԱՍՊԱՆ, ած. *Վիշապներ սպաննող:*
ՎԻՇԱՊԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. (գրկն.): *Վիշապին սպանելը:*
ՎԻՇԱՊԱՐԻՒՆ, գ. *Կարմիր խէժ:*
ՎԻՇԱՊԱՔԱՂ, ած. *Վիշապները քաղող:*
ՎԻՇԱՊԱՔԱՐ, գ. *Ակ կմ քար, որը կարծում էին վիշապի գլխից դուրս եկած լինի (Drac):*
ՎԻՇԱՊԵՆԻ, գ. (Բուս.) *Ծնեբեկազգիների կարգին պատկանող ծառերի ցեղ:*
ՎԻՇԱՊԻԿ, գ. *Փոքր վիշապ:*
ՎԻՇԱՊՈՏՆ, ած. *Վիշապի ոտքերի նըման ոտքեր ունեցող:*
ՎԻՇՏ, գ. *Ֆիզիկական տառապանք, չարչարանք: Մորմոք, կսկիծ:*
ՎԻՊԱԲԱՆ, ած. գ. *Վէպեր՝ առասպելներ պատմող կմ յօրինող:*
ՎԻՊԱԳԻՐ, ած. գ. *Պատմական վէպեր գրող:*
ՎԻՊԱԳՈՐԾ, ած. գ. *Վէպեր յօրինող:*
ՎԻՊԱԳՐԱԿԱՆ, ած. *Վիպագրութեան յատուկ:*
ՎԻՊԱԳՐԵԼ, բ. *Պատմողաբար կմ քերթողաբար գրել:*
ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Վէպեր գրելը, պատմագրութիւն:*
ՎԻՊԱԽԱՌՆ, ած. *Որի մէջ խառն է վէպը՝ առասպելականը:*
ՎԻՊԱԿ, գ. *Համառօտ վէպ:*
ՎԻՊԱԿԱՆ, ած. *Վիպելու՝ պատմելու արժանի:*
ՎԻՊԱԿԱՆԱՆԱԼ, բ. *Ստանալ վիպական բնոյթ:*
ՎԻՊԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. *Վիպականացնելը:*
ՎԻՊԱՁԵՒ, ած. *Վէպի ձեւ ունեցող:*
ՎԻՊԱՅԻՆ, ած. *Վէպին բնորոշ:*
ՎԻՊԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. *Վիպային լինելը:*
ՎԻՊԱՆԻՒԹ, գ. *Վէպի նիւթ, գրելու՝ նկարագրելու՝ պատկերելու առարկայ:*
ՎԻՊԱՇԱՐ, գ. *Վէպերի շարք:*
ՎԻՊԱՇԱՐՔ, գ. *Վէպերի շարք:*
ՎԻՊԱՊԱՇՏ, ած. գ. *Ռոմանթիք:*
ՎԻՊԱՊԱՏՈՒՄ, ած. *Որի մէջ վէպեր են պատմուած:*
ՎԻՊԱՍԱՆ, ած. գ. *Հին Հայաստանում՝ ժողովրդական երգիչ: Վիպագիր:*
ՎԻՊԱՍԱՆԱԲԱՐ, մկ. *Վիպասանական ոճով:*
ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ, ած. *Վիպասանութիւն պարունակող:*
ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վէպ, հին անցքերի պատմութիւն:*
ՎԻՊԱՍԱՆՈՒՀԻ, գ. *Կին-վիպասան:*
ՎԻՊԱՍԱՆՕՐԷՆ, մկ. *Վիպասանական ձեւով:*
ՎԻՊԱՍՔ, գ. *Վիպային ասք:*
ՎԻՊԱՍՔԱՅԻՆ, ած. (գրկն.): *Վիպասըքին յատուկ:*
ՎԻՊԵԼ, բ. *Պատմել:*
ՎԻՊԵՐԳ, ՎԻՊԵՐԳՈՒԹԻՒՆ } գ. *Երգ՝ գողտրիկ*
ՎԻՍՏԱՌԻԻԾ, գ. *Ճաշի սեղանի սպասաւոր:*
ՎԻՎԻԱՆԻՏ, գ. (Հանք.) *Ֆոսֆատների խմբին պատկանող բիւրեղացած կապոյտ երկաթային հանք:*
ՎԻՏՎԻՏ, ած. *Թեթեւսոլիկ:*
ՎԻՐԱԲԵՐԱՆ, գ. *Վէրքի բերանը:*
ՎԻՐԱԲՈՅԺ, ած. գ. *Բժիշկ, որի մասնագիտութիւնն է վիրաբուժութիւնը:*
ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ՎԻՐԱԲՈՒԺԱՅԻՆ } ած. *Վիրաբոյժին եւ վիրաբուժութեան յատուկ:*
ՎԻՐԱԲՈՒԺԱՊԵՏ, գ. *Աւագ՝ գլխաւոր վիրաբոյժ (հիւանդանոցներում):*

**ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ**, գ. *Գործողութիւն ընող բժշկականութեան ձեւ:*
**ՎԻՐԱԳ**, ած. գ. *Վայրագ, գազանաբարոյ:*
**ՎԻՐԱԺ**, գ. *Ոսկու կմ պլատինի լուծոյթ:*
**ՎԻՐԱԺ**, գ. *Արշաւի ուղիների վրայ ուղեղարձ:*
**ՎԻՐԱԼ**, նբ. *Սափրել:*
**ՎԻՐԱԼԻՑ**, ած. *Վէրքերով լիքը:*
**ՎԻՐԱԽՈՏ**, գ. (Բուս.) *Թիթեռնածաղիկների կարգից կորնկանի սեռին պատկանող խոտ՝ դեղին գնդածաղիկներով:*
**ՎԻՐԱԾ**, ած. *Վիրահատութեան ենթակայ:*
**ՎԻՐԱԿԱՆ**, ած. *Վէրքի վերաբերեալ, վէրքի:*
**ՎԻՐԱԿԱՊ**, գ. *Վէրքը կապելու՝ փաթաթելու լաթ:*
**ՎԻՐԱԿԱՐ**, գ. *Վէրքի կար:*
**ՎԻՐԱՀԱՏ**, ած. գ. *Վէրքը՝ գործողութիւն ընող՝ կարող, բժիշկ:*
**ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ**, ած. *Վիրահատութեան յատուկ:*
**ՎԻՐԱՀԱՏԵԼ**, բ. *Վիրահատութիւն կատարել:*
**ՎԻՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Վիրաբուժութեան մէջ՝ վէրքը կմ վիրաւորուած մասերը սուր գործիքներով կտրելը բժշկելու նպատակով:*
**ՎԻՐԱՀԵՏՔ**, գ. *Վէրքի նշան: Սպի:*
**ՎԻՐԱՄԱՀ**, ած. *Ծանր՝ մահացու կերպով վիրաւորուած:*
**ՎԻՐԱՊ**, գ. *Խոր փոս, գուբ, անջուր հոր: Զնտան:*
**ՎԻՐԱՊԱՏ**, ած. *Վէրքերով պատած, վիրալից:*
**ՎԻՐԱՒՈՐ**, ած. *Վէրք ունեցող, վէրք ստացած:*
**ՎԻՐԱՒՈՐԱԿԱՆ**, ած. *Ինչ որ կարող է վիրաւորանք պատճառել: Ցաւ պատճառող:*
**ՎԻՐԱՒՈՐԱՆՔ**, գ. *Խօսք կմ գործ, որ նպատակ ունի մէկին անպատուութիւն հասցնել:*
**ՎԻՐԱՒՈՐԵԼ**, բ. *Հարուածով վէրք հասցնել, մարմինը խոցել: Խօսքով ցաւ պատճառել:*
**ՎԻՐԱՎՈՐԻՉ**, ած. գ. *Նա որ վիրաւորում է, վէրք է հասցնում: Ցաւ պատճառող:*
**ՎԻՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վիրաւոր լինելը:*
**ՎԻՐԱՎՈՐՈՒՄ**, գ. *Վիրաւորելը, վիրաւորուելը:*
**ՎԻՐԳ**, գ. *Քարի բեկոր:*
**ՎԻՔԻԱԿՈՒՄԲ**, գ. *Վիքիի օգտատէրերի ակումբ:*
**ՎԻՔԻՊԵԴԻԱ**, գ. *Ազատ հանրագիտարան, որը բաց է խմբագրման եւ լրացման համար:*
**ՎԼՎԼԱԼ**, բ. *Աղմուկ հանել, աղմկել:*
**ՎԼՎԼՈՑ**, գ. *Տարաձայնութիւն, տարածուած մի լուր:*
**ՎԼՎԼՈՒԿ**, գ. *Աղմուկ, տարաձայնութիւն:*
**ՎԽՏԱԼ**, բ. *Մեծ բազմութեամբ մի տեղում գտնուել եւ խառն շարժումներ անել:*
**ՎԿԱՅ**, գ. *Նա որ իր աչքով տեսել է կմ իր ականջով լսել է մի բան եւ կարող է հաստատել այդ բանը իր տեսածի կմ լսածի հիման վրայ: Գործ է ածուում երդման մէջ:* (Իրաւբ.) *Քրէական եւ քաղաքացիական դատավարութեան մէջ՝ քննուող գործի հանգամանքներին տեղեակ կողմնակի անձ*
**ՎԿԱՅԱԲԱՆ**, ած. գ. (Կրօն.) *Վկաների՝ կրօնի համար նահատակուածների մասին գրող:*
**ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ**, ած. *Վկայաբանութիւն պարունակող:*
**ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Գրուածք, որ պարունակում է վկաների կեանքի եւ նահատակութեան պատմութիւնը:*
**ՎԿԱՅԱԲԵՐ**, ած. *Վկաներ բերող՝ ար-*

*տաղրող։*

**ՎԿԱՅԱԳԻՐ**, գ. *Գրութիւն կմ թուղթ, որով մի բան վկայուում է, վկայական։*

**ՎԿԱՅԱԳՐԱԿԱՆ**, ած. *Վկայագրի։*

**ՎԿԱՅԱԹՈՒՂԹ**, գ. *Վկայութեան գրութիւն։*

**ՎԿԱՅԱԿԱՆ**, ած. *Վկայութիւն պարունակող։*

**ՎԿԱՅԱԿԻՑ**, ած. *Վկայի ընկեր, ուրիշի հետ միասին վկայող։*

**ՎԿԱՅԱՐԱՆ**, գ. (Կրօն.) *Մատուռ, որ շինուած է վկայի նահատակութեան տեղում։*

**ՎԿԱՅԵԱԼ**, ած. գ. *Որեւէ ուսումնարանի դասընթացն աւարտելու վկայական ստացած (անձ)։*

**ՎԿԱՅԵԼ**, բ. *Իբրեւ վկայ ցուցմունք տալ։*

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Վկայ լինելը, իբրեւ վկայ ցուցմունք տալը։ Ինչ որ վկան ասում է. վկայի ցուցմունքը։*

**ՎԿԱՆԴԵԼ**, նբ. *Յաղթահարել, ենթարկել։*

**ՎՀԱՏ**, ած. մկ. *Վհատուած։ Յուսալքուած։*

**ՎՀԱՏԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Վհատ՛ի, Աւելի վհատ։*

**ՎՀԱՏԵԼ**, բ. *Անյաջողութեան հանդիպելուց յետոյ սիրտը կոտրուել, յուսախաբ լինելով թուլանալ։ Յուսալքուիլ։*

**ՎՀԱՏԿՈՏ**, ած. *Շուտով վհատուող։*

**ՎՀԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեկան ընկճուած դրութիւն։*

**ՎՀԱՏՈՒՄ**, գ. *Վհատելը։ ։ Յուսալքում։*

**ՎՀԿՈՒԹԻՒՆ**, գ. *Վհուկ լինելը։*

**ՎՀՈՒԿ**, գ. *Կախարդ (տղամարդ կմ կին), զանազան կեղծ արուեստներով կմ իրերով գուշակութիւններ անող։*

**ՎՃԱՐ**, գ. *Վերջ, վախճան։ Որեւէ գումար տալը։*

**ՎՃԱՐԱԺԱՄ**, գ. *Այն ժամանակը, երբ մէկը պարտաւոր է որոշ գումար վճարել։*

**ՎՃԱՐԱՀԱՇՈՒԱՐԿԱՅԻՆ**, գ. *Վճարումի հաշուարկներով։*

**ՎՃԱՐԱՆՔ**, գ. Տ. *Վճարում։*

**ՎՃԱՐԵԼ**, բ. *Վերջացնել, աւարտել։ Պարտականութիւնը կատարել։ Գինը տալ։*

**ՎՃԱՐԵԼԻ**, ած. *Ինչ որ պէտք է վճարել։*

**ՎՃԱՐԵԼԻՔ**, գ. *Ինչ որ մէկը վճարելու է, պարտք։*

**ՎՃԱՐՈՎԻ**, ած. մկ. *Ինչ բանի համար որ վճարուում է, փողով ձեռք բերուող։*

**ՎՃԱՐՈՒՄ**, գ. *Վերջացնելը, աւարտելը։ Ազատուելը։*

**ՎՃԱՐՔ**, գ. *Ինչ որ պէտք է վճարել։*

**ՎՃԻՌ**, գ. *Դատարանի կմ դատաւորի որոշում։*

**ՎՃԻՏ**, ած. *Յստակ, մաքուր։*

**ՎՃՌԱԲԱՆ**, ած. *Վճիռ կտրող, վճռող։*

**ՎՃՌԱԲԱՐ**, մկ. *Առանց տատանուելու, վճռականութիւն։*

**ՎՃՌԱԲԵԿ**, ած. *Վճիռը բեկանող։* (Իրաւբ.) *Ինչ վերաբերում է ստորին դատարանի վճռի վերաքննութեան եւ փոփոխման։ Վճիռը կտրող։*

**ՎՃՌԱԲԵԿՈՒԹԻՒՆ**, գ. (Իրաւբ.) *Դատաստանական վճիռների վերաքննութիւն այն տեսակէտից, թէ արդեօք օրէնքն ուղի՞ղ է կիրառուած տուեալ գործում եւ պահպանուե՞լ են օրէնքով սահմանուած դատավարական ձեւերն ու կարգերը։*

**ՎՃՌԱԲԵԿՈՒՄ**, գ. (Իրաւբ.) *Կայացած վճիռը բեկանելը։*

**ՎՃՌԱԳԻՐ**, գ. *Վճիռը պարունակող գրութիւն։*

**ՎՃՌԱԿԱՆ**, ած. *Վճռի ենթակայ, դատապարտելի։ Հաստատուն։*

**ՎՃՌԱԿԱՆԱՊԷՍ**, մկ. *Վճռական կերպով։*

**ՎՃՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, մկ. *Վճռական լինելը։*

**ՎՃՌԱԿԱՆՕՐԷՆ**, Տ. *Վճռականապէս։*

ՎՃՌԵԼ, բ. *Դատարանում որոշում կայացնել վիճելի գործի մասին: Վերջնական որոշում կայացնել մի հարցի մասին:*
ՎՃՌՈՂԱԿԱՆ, Տ. *Վճռական: Վճռող, վճիռ տալու իրաւունք ունեցող:*
ՎՃՌՈՒՄ, գ. *Լուծելը, վճռելը:*
ՎՃՏԱԿԱՆ }
ՎՃՏԱՀՈՍ } ած. *Վճիտ, վճիտ հոսանք ունեցող:*
ՎՆԱՍ, գ. *Յանցանք, պակասութիւն:* Հկռ. *Օգուտ: Կորուստ առեւտրի մէջ:* Հկռ. *Վաստակ, շահ:* մկ. *Վնասակար ուղղութեամբ:* Հկռ. *Յօգուտ:*
ՎՆԱՍԱԲԵՐ, ած. *Վնաս՝ կորուստ բերող:*
ՎՆԱՍԱԳՈՐԾ, ած. գ. *Չարամիտ մարդ:*
ՎՆԱՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Վնասագործ լինելը:*
ՎՆԱՍԱԽՕՍ, ած. *Չարախօս:*
ՎՆԱՍԱԿԱՐ, ած. *Յանցաւոր, մեղաւոր: Ինչ որ վնաս է տալիս:*
ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Վնասակար լինելը:*
ՎՆԱՍԱՀԱՐ, ած. *Վնասից զարկուած:*
ՎՆԱՍԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Վնասելու նպատակով հարուածելը:*
ՎՆԱՍԱՊԱՐՏ, ած. *Մեղապարտ:*
ՎՆԱՍԱՏՈՒ, ած. *Վնաս տուող:*
ՎՆԳՍՏՈՑ, գ. *Վնգստալը: Շան կաղկանձելը:*
ՎՇԱԼ, բ. *Յաւել մէկի մասին:*
ՎՇԵՂԷՆ, ած. *Վշից պատրաստուած:*
ՎՇՏԱԲԵԿ, ած. *Վշտերով ուժասպառ անող, կմ վշտերով բեկուած՝ ուժասպառ եղած:*
ՎՇՏԱԲԵՐ, ած. *Վիշտ բերող: Յաւ պատճառող:*
ՎՇՏԱԳԻՆ, ած. մկ. *Սաստիկ վշտացած:*
ՎՇՏԱՁԳԱԾ, ած. *Վշտով համակուած:*
ՎՇՏԱԼԻ}
ՎՇՏԱԼԻՑ} ած. *Վշտերով լի: Յաւալի:*
ՎՇՏԱԽԱՌՆ, ած. *Որի մէջ վիշտ կայ խառնուած:*
ՎՇՏԱԾԻՆ, ած. *Վշտով ծնուած:*
ՎՇՏԱԾՆՈՒԹԻՒՆ, գ. *Վշտածին լինելը:*
ՎՇՏԱԿԵԱՑ, ած. *Վշտերով ապրող:*
ՎՇՏԱԿԵՑՈՒԹԻՒՆ, գ. *Վշտակեաց լինելը: Յաւատանջութիւն:*
ՎՇՏԱԿԻՑ, ած. *Ուրիշի հետ միասին վիշտ կրող:*
ՎՇՏԱԿՐՈՒԹԻՒՆ, գ. *Վշտակիր լինելը:*
ՎՇՏԱԿՑԵԼ, բ. *Վշտակից լինել:*
ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Վշտակից լինելը, կարեկցութիւն: Յաւակցութիւն:*
ՎՇՏԱՀԱՆ, ած. *Իր համար վիշտ հնարող:*
ՎՇՏԱՀԱՐ, ած. *Վշտերից զարկուած:*
ՎՇՏԱՄԱՀ, ած. *Վշտերից մեռած:*
ՎՇՏԱՆԱԼ, բ. *Վշտերից տառապել:*
ՎՇՏԱՇԱՏ, ած. *Որտեղ շատ վիշտ կայ, վշտալից:*
ՎՇՏԱՉԱՐՉԱՐ, ած. *Վշտերից չարչարուած, չարաչար վշտացած:*
ՎՇՏԱՍԷՐ, ած. *Նա որ սիրում է վիշտ պատճառել:*
ՎՇՏԱՍՈՒԳ, բ. *Վշտահար:*
ՎՇՏԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. *Վշտատես լինելը:*
ՎՇՏԱՑՈՒՑԻՉ, ած. *Ինչ որ վշտացնում է, վշտացնող:*
ՎՇՏՕՐԷՆ, մկ. *Վշտացած:*
ՎՈԼ՛Տ, գ. (Ֆիզ.*) Ելեկտրաշարժիչ ույժի միաւոր:*
ՎՈԼ՛ՏԱԺ, գ. (Ֆիզ.) *Վոլ՛տի քանակը:*
ՎՈԼ՛ՏԱՄԵՏՐ, Տ. *Վոլ՛տաչափ:*
ՎՈԼ՛ՏԱՉԱՓ, գ. (Ֆիզ.) *Ելեկտրական սարած:*
ՎՈԼ՛ՏԷՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Թերահաւատ եւ ազատ վերաբերմունք դէպի քաղաքական եւ կրօնական հարցերը:*
ՎՈԼ՛ՖՐԱՄ, գ. (Քիմ.) *Պարզ մետաղ:*
ՎՈ՛ՒՅ, մկ. *Վա՛յ, ափսո՛ս: Կոչական ձայնարկութիւն:*

ՎՈ՛ՒՇ}

ՎՈ՛ՒՇ- ՎՈ՛ՒՇ} միջ. *Ձայնարկութիւն ափսոսանքի, ցաւակցութեան:*

ՎՈՒՇԱԳՈՅՆ, ած. *Վուշի գոյն ունեցող:*

ՎՌԱՋ, գ. *Շտապ, հապճեպ:* մկ. *Շտապով:,*

ՎՌԱՋԵԼ, բ. *Շատ շտապել:*

ՎՌԱԿ, ած. *Փոփոխամիտ:*

ՎՌԱԼ, բ. *Պարծենալ:*

ՎՌԱՆ, ած. *Պարծենկոտ:*

ՎՌԹԱԼ, բ. *Բռնկել:*

ՎՌԻԿ, գ. *Անորոշ տեսակի խոտ:*

ՎՌԻԿ, գ. *Հասարակ անսննդարար ապուր:*

ՎՌՆԵԿ, ած. *Նիհար, լղար:*

ՎՌՆՏԵԼ, բ. *Վանել, մօտիցը դուրս անել: Ձիու գլուխը բաց թողնել, քշել:*

ՎՌՇԻԿ, ած. գ. *Ռշտունեաց եւ Մոկաց գաւառների բնակիչ:*

ՎՌՇՆԵԼ, բ. *Կարմրատակել, շառագունել:*

ՎՌՉԱԼ, բ. *Ցաւի սաստկութիւնից բարձրաձայն հառաչել:*

ՎՌՎՌՈՒՆ, գ. *Սրտի թրթռոց:*

ՎՌՏԵԼ, բ. *Այրել, փաղաղել:*

ՎՌՑԻՆ, մկ. *Լիքը, լիուլի:*

ՎՍԳՈՀ, մկ. *Անկարգ կերպով:*

ՎՍԵՀ, ած. *Վտարուած կմ հեռու:*

ՎՍԵՄ, ած. *Վեհ, բարձր, գերազանց:*

ՎՍԵՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Բարձր՝ պանծալի խօսք:*

ՎՍԵՄԱԲԱՐ, մկ. *Վսեմութեամբ:*

ՎՍԵՄԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Աւելի վսեմ:*

ՎՍԵՄԱԶԱՐՄ, ած. *Բարձր՝ վեհ զարմից:*

ՎՍԵՄԱԽՈՀ, ած. *Վսեմամիտ:*

ՎՍԵՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմախոհ լինելը:*

ՎՍԵՄԱԿԱՆ, ած. *Վսեմ՝ վեհ կերպով:*

ՎՍԵՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմական լինելը:*

ՎՍԵՄԱԿԵՐՊ, ած. *Վսեմ կերպարանքով:*

ՎՍԵՄԱՄԻՏ, ած. *Վսեմախոհ:*

ՎՍԵՄԱՆԱԼ, բ. *Վսեմ՝ վեհ դառնալ:*

ՎՍԵՄԱՇՈՒՔ, ած. *Մեծաշուք:*

ՎՍԵՄԱՊԵՏ, գ. *Վեհապետ:*

ՎՍԵՄԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմապետ լինելը:*

ՎՍԵՄԱՓԱՅԼ, ած. *Բարձր փառաւոր, մեծափառ:*

ՎՍԵՄԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմափայլ լինելը:*

ՎՍԵՄԱՓԱՌ, ած. *Վեհաշուք:*

ՎՍԵՄԱՓԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմափառ լինելը:*

ՎՍԵՄՈՒԹԻՒՆ, գ. *Վսեմ լինելը, վեհութիւն:*

ՎՍԵՐ, ած. *Յանդուգն:*

ՎՍՎՍԱԼ, բ. *Դժգոհել:*

ՎՍՏԱՀ, ած. *Նա որ համոզուած է մի բանի մէջ, աներկմիտ:* Հկռ. *Անվստահ, երկմիտ:*

ՎՍՏԱՀԱԲԱՐ, Տ. *Վստահօրէն:*

ՎՍՏԱՀԱՆԱԼ, բ. *Վստահութիւն՝ համարձակութիւն զգալ:*

ՎՍՏԱՀԱՊԷՍ, մկ. *Վստահ կերպով:*

ՎՍՏԱՀԱԻԱՏ, ած. *Վստահ հաւատով:*

ՎՍՏԱՀԵԼ, բ. *Վստահ լինել մէկին, հաւատալ նրան:*

ՎՍՏԱՀԵԼԻ, ած. *Որին կարելի է վստահել:* Հկռ. *Անվստահելի:*

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ, գ. *Մի բանի մէջ համոզուած լինելը:*

ՎՍՏԱՀՕՐԷՆ, մկ. *Վստահ կերպով, վստահապէս:*

ՎՍՏԼՐ ՀԱ ՎՍՏԼՐ, ած. *Ճապուկ՝ արագ շարժումներով:*

ՎՏԱԿ, գ. *Լայն առուակ, փոքր գետ: Հոսող ջուր:*

ՎՏԱԿԱԲԱՐ, մկ. *Վտակի պէս:*

ՎՏԱԿԱՀՈՍ, ած. *Վտակի նման հոսող:*

ՎՏԱԿԱՆԱԼ, բ. *Վտակ դառնալ, վտակ ձեւացնել:*

**ՎՏԱԿԵԼ**, բ. *Վտականալ:*
**ՎՏԱՆԳ**, գ. *Դրութիւն՝ երբ մի շարք կմ փորձանք կարող է պատահել: Փորձանք, Նեղութիւն:*
**ՎՏԱՆԳԱԳՈՐԾ**,ած. *Վտանգ պատճառող՝ բերող:*
**ՎՏԱՆԳԱԼԻ** } **ՎՏԱՆԳԱԼԻՑ** } ած. *Վտանգներով լի:*
**ՎՏԱՆԳԱԿԻՐ**, ած. *Վտանգ կրող:*
**ՎՏԱՆԳԱԿԻՑ**, ած. *Վտանգի մէջ ընկեր:*
**ՎՏԱՆԳԱԻՈՐ**, ած. *Վտանգ բերող, չարիք հասցնող:*
**ՎՏԱՆԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վտանգաւոր լինելը:*
**ՎՏԱՆԳԵԼ**, բ. *Նեղել, Վնասել, Վտանգի ենթարկել:*
**ՎՏԱՆԳՈՒՄ**, գ. *Վտանգելը:*
**ՎՏԱՌ**, գ. *Ձկների բազմութիւն:*
**ՎՏԱՌՔ**, գ. *Մորթի ծակտիկները:*
**ՎՏԱՌ**, գ. *Մարմնի վրայ աչքով տեսանելի ծակ՝ բացուածք:*
**ՎՏԱՐԱԿ**, ած. *Վտարական, վտարուած:*
**ՎՏԱՐԱԿԱՆ**, ած. *Վտարող: Տարագիր, վտարանդի:*
**ՎՏԱՐԱՆԴԻ**, ած. գ. *Հայրենիքից քշուած:*
**ՎՏԱՐԱՆԴՈՒՄ**, գ. *Օտարութեան մէջ լինելը:*
**ՎՏԱՐԵԼ**, բ. *Ուժով մղել, դուրս քշել, տարագրել:*
**ՎՏԱՐՈՒԹԻՒՆ** } **ՎՏԱՐՈՒՄ** } գ. *Վտարելը:*
**ՎՏԻՏ**, ած. *Նիհար, լղար: Ազազուն:*
**ՎՏՏՈՒԹԻՒՆ**, գ. *Վտիտ լինելը:*
**ՎՐԱԳԼԽԻՆ**, մկ. *Գլխի վրայ:*
**ՎՐԱԳԼՈՒԽ**, Տ. *Վրայ գլխու:*
**ՎՐԱԴԻՐ**, գ. *Մի բանի վրայ դրուած իբրեւ յաւելում: Փոխ տրուած փողի կմ ընդէղենի տոկոս: Յաւելում:*
**ՎՐԱԹԻԿՆՈՑ**, գ. *Վրայի թիկնոց:*
**ՎՐԱՀԱՍ**, մկ. *Վրայ հասնելով:*
**ՎՐԱՁԳՈՑ**, ած. գ. *Իրար վրայ ձգելու, ինչ որ ոչ ոք չի ուզում անել, ուրիշի վրայ է ձգում:*
**ՎՐԱՑ**, գ. *Վերեւի՝ բարձր կողմը: Հկռ. Տակը, ներքեւը: Արտաքին կողմը, երեսը: Զգեստ, որ ծածկում է մարմինը: Մակերեւոյթին, Մասին, Շուտով: Համեմատութեամբ:*
**ՎՐԱՆ**, գ. *Պինդ ու հաստ կտորից կառուցուածք կոնաձեւ կմ չորսկողմանի, որ կանգնեցնում են բաց տեղում գետնի վրայ:*
**ՎՐԱՆԱԲՆԱԿ**, ած. *Վրանում բնակուող:*
**ՎՐԱՆԱԳՈՐԾ**, գ. *Վրան շինող՝ վրան կարող արհեստաւոր:*
**ՎՐԱՆԱԽՈՒՄԲ**, գ. *Վրանների խումբ:*
**ՎՐԱՆԱԿԻՑ**, ած. *Վրանով ընկեր: Կողք կողքի վրաններ:*
**ՎՐԱՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վրան զարնելը, վրան կանգնեցնելը:*
**ՎՐԱՆԱՁԵՒ**, ած. *Վրանի ձեւ ունեցող:*
**ՎՐԱՆԱՆՄԱՆ**, ած. *Վրանի նման:*
**ՎՐԱՆԱՍԵՆԵԱԿ**, գ. *Վրանից պատրաստուած սենեակ:*
**ՎՐԱՆԱՏԵՂԻ**, գ. *Այն տեղը, որտեղ վրաններ են զարկած:*
**ՎՐԱՆԱՒՈՐ**, ած. *Վրան ունեցող:*
**ՎՐԱՆԱՔԱՂԱՔ**, գ. *Վրաններու քաղաք:*
**ՎՐԱՑԱԳԷՏ**, ած. գ. *Վրացերէն լեզուի՝ գրականութեան մասնագէտ:*
**ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. *Վրացագէտ լինելը:*
**ՎՐԱՑԱԽՕՍ**, ած. *Վրացերէն խօսող:*
**ՎՐԱՑԱԿԱՆ**, ած. *Վրացուն եւ Վրաստանին յատուկ:*
**ՎՐԱՑԱՆԱԼ**, բ. *Վրացի դառնալ:*
**ՎՐԱՑԱՊԱՏՈՒՄ**, գ. *Վրացիների եւ Վրաստանի մասին պատմութիւն:*
**ՎՐԱՑԱՍԷՐ**, ած. *Վրացիներին եւ վրացականը սիրող:*
**ՎՐԱՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Վրացասէր լինելը:*
**ՎՐԱՑԱՏԵԱՑ**, ած. *Վրացիներին եւ*

*վրացականը ատող: Հկր. Վրացասէր:*
**ՎՐԱՑԱՏԵՑՈՒԹԻՒՆ,** գ. *Վրացատեաց լինելը:*
**ՎՐԱՑԵՐԷՆ,** մկ. *Վրացու լեզուով:* գ. *Վրացու բնիկ լեզուն:*
**ՎՐԱՑԻ,** ած. գ. *Վրաստանի բնիկ, Վրաստանի քաղաքացի:*
**ՎՐԱՑԻԱՆԱԼ,** Տ. *Վրացանալ:*
**ՎՐԱՑՈՒՀԻ,** ած. գ. *Վրացի իգական սեռի:*
**ՎՐԴՈՎ,** գ. *Վրդովմունք, աղմուկ, խառնակութիւն: Խռովք:*
**ՎՐԴՈՎԵԼ,** բ. *Աղմկել: Խռովել:*
**ՎՐԴՈՎՄՈՒՆՔ,** գ. *Յուզմունք:*
**ՎՐԷԺ,** գ. *Բուռն զզացմունք: Չարիքի փոխարէն չարիք հասցնելը:* Տ. *Վրէժխնդիր լինել: Քէն, ոխ:*
**ՎՐԷԺԱՌՈՒԹԻՒՆ,** Տ. *Վրիժառութիւն:*
**ՎՐԷԺԽՆԴԻՐ,** ած. *Վրէժ պահանջող:*
**ՎՐԷԺԽՆԴՐԱԲԱՐ,** մկ. *Վրէժխնդիր լինելով, վրէժխնդրութեամբ:*
**ՎՐԷԺԽՆԴՐԱԿԱՆ,** ած. *Վրէժխնդրին ու վրէժխնդրութեան յատուկ:*
**ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ,** գ. *Վրէժխնդիր լինելը:*
**ՎՐԷՊ,** ած. *Նպատակէն շեղած, թիւր:*
**ՎՐԻԺԱԲԱՐ,** մկ. *Իբրեւ վրէժ, իբրեւ պատիժ:*
**ՎՐԻԺԱԳՈՐԾ,** ած. *Վրէժխնդրութեան արժանի գործ կատարող:*
**ՎՐԻԺԱԿ,** ած. գ. *Վրիժառու:*
**ՎՐԻԺԱԿ,** գ. *Գազանի դուրս ցցուած ատամ:*
**ՎՐԻԺԱԿԱՐՕՏ,** ած. *Վրէժի բուռն ցանկութեամբ համակուած:*
**ՎՐԻԺԱՊԱՐՏ,** ած. *Վրէժ տալու պարտական:*
**ՎՐԻԺԱՌՈՒ,** Տ. *Վրէժխնդիր:*
**ՎՐԻՆՉ:** գ. *Խրխինջ, ձիու ձայն:*
**ՎՐԻՊԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ,** գ. *Ուղղութիւնից շեղուելը:*
**ՎՐԻՊԱԳՈՒԹ,** ած. *Որի գութը վրիպում է:*
**ՎՐԻՊԱԾ,** ած. Անց. *դերբ. Վրիպել՛ի: Ձախողած:*
**ՎՐԻՊԱԿ,** *ած. Վրիպած, թիւրած: Ուշադրութենէ սպրդած տպագրական սխալ:*
**ՎՐԻՊԱԿԱՆ,** ած. *Վրիպող:*
**ՎՐԻՊԱԿՈՒԹԻՒՆ,** գ. *Սխալ լինելը, սխալմունք:*
**ՎՐԻՊԱՆՈՒՆ,** ած. *Սխալ անուն կրող:*
**ՎՐԻՊԱՆՔ,** գ. *Վրիպելը:*
**ՎՐԻՊԱՐՀԵՍՏ,** ած. *Որի արհեստը վրիպական է:*
**ՎՐԻՊՈՒՄ,** գ. *Սխալ լինելը: Շեղում*
**ՎՐԻՐԱԿ,** ած. *Վաւաշոտ:*
**ՎՐՁԻՆ,** գ. *Նուրբ խոզանակ: Նկարելու գործիք, եղանակ:*
**ՎՐՁՆԱՀԱՐՈՒՄ,** գ. *Վրձնահարելը:*
**ՎՐՁՆԵԼ,** բ. *Վրձինով նկարել:*
**ՎՐՆՁԱԼ,** Տ. *Վրնջել:*
**ՎՐՆՋԵԼ,** բ. *(Ձիերի) խրխնջել:*
**ՎՐՆՋԻՒՆ,** գ. *Ձիերի վրնջելը:*
**ՎՐՆՋՈՂՈՒԹԻՒՆ,** գ. *Վրնջելու յատկութիւն:*

# Տ, տ

**Տ, տ, տիւն,** գ. *Հայերէն այբուբենի երեսունմէկերորդ տառը եւ քսանհինգերորդ բաղաձայնը: Թուարկութեան չորս հազարի համարժէք: Չորս հազարերորդ:*
**ՏԱԲԱՏ,** գ. *Մէջքից վար հագնելիք:*

ՏԱԲՈՒ, գ. *Պոլինեզիայում կրօնական օրէնք: Արգելանք:*
ՏԱԳՆԱՊ, գ. *Ընդհանրապէս՝ դժուար կացութիւն: Ահ, ահաբեկութիւն: Վիշտ, աղէտ: Խուճապ, ճգնաժամ:*
ՏԱԳՆԱՊԱԲԱՐ, մկ. *Տագնապեցնելով, տագնապով:*
ՏԱԳՆԱՊԱԶԴ, գ. (ռազմ): *Տագնապի ազդանշան:*
ՏԱԳՆԱՊԱԼԻ, ած. *Տագնապներով լի:*
ՏԱԳՆԱՊԱՀԱՐ, ած. *Տագնապով զարնուած:*
ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. *Տագնապի զգացողութիւն:*
ՏԱԳՆԱՊԱՆՔ, գ. *Տագնապելը:*
ՏԱԳՆԱՊԱՇԱՏ, ած. *Տագնապալից:*
ՏԱԳՆԱՊԱՍՈՅԶ, ած. *Տագնապալից՝ տագնապով լեցուն՝ մտահոգ:*
ՏԱԳՆԱՊԵԼ, բ. *Հոգեպէս ճնշուած դրութեան մէջ լինել: Խուճապել, Վշտանալ:*
ՏԱԳՆԱՊԵՑՆԵԼ, անց. ձեւ *Տագնապել՛ի:*
ՏԱԳՆԱՊԵՑՈՒՑԻՉ, ած. *Նա որ տագնապեցնում է, տագնապող:*
ՏԱԳՆԱՊՈՒՄ, գ. *Տագնապելը:*
ՏԱԳԵՐԿՆԻԿ,
ՏԱԳԵՐԿԻՆ, գ. *Տագերոջ կինը:*
ՏԱԳՐ, գ. *Կնոջ համար նրա ամուսնու եղբայրը:*
ՏԱՋ ԱՆԵԼ, բ. *Լուռ կենալ:*
ՏԱԺԱՆԱԲԱՐ, մկ. *Տաժանելով, մեծ չարչարանքով:*
ՏԱԺԱՆԱԳՈՐԾ, ած. *Չարչարալից:*
ՏԱԺԱՆԱԼԻՑ, ած. *Չարչարալից:*
ՏԱԺԱՆԱԿԻՐ, ած. *Ինչ որ մարդ կրում է չարչարանքով:*
ՏԱԺԱՆԱԿՈԾ, ած. *Դառն կոծ պարունակող:*
ՏԱԺԱՆԱՇԱՏ, ած. *Շատ տաժանելի, դժնդակ:*
ՏԱԺԱՆԱՔԱՅԼ, ած. մկ. *Յոգնեցնող:*
ՏԱԺԱՆԵԼ, բ. *Չարչարել, նեղել:*
ՏԱԺԱՆԵԼԻ, ած. *Չարչարող, դժնդակ:*
ՏԱԺԱՆՔ, գ. *Տաժանելը:*
ՏԱԼ, գ. *Կնոջ համար նրա ամուսնու քոյրը:*
ՏԱԼ, բ. *Ձեռքէ ձեռք փոխադրել: Ընծայել: Յանձնել: Մատնել: Ամուսնացնել:*
ՏԱԼԱՅՐ, գ. *Տալին՝ փեսայի քրոջ ամուսինը:*
ՏԱԼԱՊ, գ. (աստղաբ.) *Երկնային հանգոյց, երկու հակադիր կէտեր:*
ՏԱԼԱՒՈՐ, գ. *Փոքր տախտակ:*
ՏԱԼԻԿ, (Փաղաքշ.) գ. *Փոքրիկ կմ սիրելի տալ:*
ՏԱԼԻՔ, ած. գ. *Ինչ որ մէկը պարտաւոր է տալ:*
ՏԱԼ՚Կ, գ. *(Հանք.) Սատափի նման փայլ ունեցող (որից գետնի աստղ՝ տալկ անունը):*
ՏԱԽՏԱԿ, գ. *Փայտի տափակ ու երկայն շերտ:*
ՏԱԽՏԱԿԱԳԼՈՒԽ, ած. *Տախտակի նման գլուխ ունեցող: Կարծրագլուխ:*
ՏԱԽՏԱԿԱԳՈՐԾ, ած. գ. *Արհեստաւոր, որ կտրտած տախտակներից պատկերներ է շինում:*
ՏԱԽՏԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Տախտակագործի արհեստը:*
ՏԱԽՏԱԿԱՄԱԾ, ած. *Տախտակով պատած:* գ. *Տախտակով ծածկուած կմ տախտակից շինուած յատակ:*
ՏԱԽՏԱԿԱՄԱԾԵԼ, բ. *Տախտակամած շինել:*
ՏԱԽՏԱԿԱՄԱԾԵ, ած. *Տախտակապատ, տախտակներով ծածկուած:*
ՏԱԽՏԱԿԱՇԱՐՔ, գ. *Տախտակների շարք:*
ՏԱԽՏԱԿԱՇԷՆ, ած. *Տախտակներով շինուած:*
ՏԱԽՏԱԿԱՊԱՏ, ած. *Տախտակով պատած:*
ՏԱԽՏԱԿԱՊԱՏԵԼ, բ. *Տախտակով պատել:*
ՏԱԽՏԱԿԱՓԱԿ, ած. *Տախտակով փակ-*

*ուած։*

ՏԱԽՏԱԿԷ, ած. *Տախտակից շինած։*

ՏԱԽՏԱԿԵՂԷՆ, ած. *Տախտակից շինած, տախտակեայ։*

ՏԱԾԵԼ, բ. *Խնամք տանել։ Հոգ տանիլ։*

ՏԱԾՈՂԱԿԱՆ, ած. *Խնամող։*

ՏԱԾՈՒՄ, գ. *Տածելը։*

ՏԱԿ, գ. *Առարկայի ներքեւի կողմը։* Հկռ. *Վրայ, վրան։ Ներքեւի կողմը, յատակ։ Այն առարկան, որի վրայ մի բան դըրուում է։* Հկռ. *Վերեւ։*

ՏԱԿԱՀԱԼԱՒ, գ. *Տակի հալաւ։ Շապիկ։*

ՏԱԿԱՇՈՐ, գ. *Տակի շոր։*

ՏԱԿԱՊՈՒՐ, գ, *Մի տեսակ կերակուր։*

ՏԱԿԱՌ, *կարաս, սափոր։*

ՏԱԿԱՌԱԳՈՐԾ, ած. գ. *Տակառ շինող արհեստաւոր։*

ՏԱԿԱՌԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Տակառ շինելու արհեստը։*

ՏԱԿԱՌԱԿԱՊԻՉ, գ. *Փայտեայ տակառաշերտերը ամրակապող։*

ՏԱԿԱՌԱՀԱՄ, ած. *Տակառի համ ունեցող։* գ. *Տակառի համը։*

ՏԱԿԱՌԱՉԱՓ, գ. *Նաւի տարողութեան չափ՝ հաշուած տակառներով։*

ՏԱԿԱՌԱՊԵՏ, գ. *Պաշտօնեայ, որ հըսկում էր արքունական սեղանի ըմպելիքների վրայ։*

ՏԱԿԱՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Տակառապետի պաշտօնը։*

ՏԱԿԱՌԻԿ, գ. *Փոքր տակառ։*

ՏԱԿԱՒ, *Մի քիչ, կամաց-կամաց։*

ՏԱԿԱՒԻՆ, մկ. *Դեռեւս, մինչեւ հիմայ դեռ։*

ՏԱԿԱՔԱՐ, գ. *Տակի քար։*

ՏԱԿԱԲԵՐԱՆ, գ. (Կենդ.) *Ծովամայրերի մի տեսակը։*

ՏԱԿԴԻՐ, գ. *Մի առարկայի տակ դրուած։*

ՏԱԿԵՒԱՆՑ, մկ. *Տակից։*

ՏԱԿԷՏԱԿ, ած. մկ. *Տակեւանց գործող, խորամանկ, ծածկամիտ։*

ՏԱԿՆՈՒՎՐԱՅՈՒԹԻՒՆ, գ. *Տակն ու վրայ լինելը։*

ՏԱԿՈՒԳԼՈՒԽ, գ. *Մաղուած ընդեղէնի տականքն ու երեսի աղբը։*

ՏԱԿՌԱՀԱՆ ԱՆԵԼ, բ. *Արմատով պոկել հանել։*

ՏԱԿՌԵԼ, բ. *Տակռի բռնել։ Արմատակալել։*

ՏԱՀԵԼ, բ. *Սաստիկ յոգնել, դադրել։*

ՏԱՀԵԼ, բ. *(Կերակուրը) կատիկը թռչել։*

ՏԱՀՈՒՆԱԿ, գ. (Բուս.) *Խաչաբերների կարգին պատկանող բոյս։*

ՏԱՂ, գ. *Տաղաչափական գրուածք։*

ՏԱՂԱՆԴ, գ. *Ձիրք, շնորհ։*

ՏԱՂԱՆԴ, գ. *Ծանրութեան չափ։*

ՏԱՂԱՆԴԱՊԱՐՏ, ած. գ, *Նա որ մի տաղանդ պարտական է։*

ՏԱՂԱՆԴԱՒՈՐ, (ած), ած. *Տաղանդ ունեցող, շնորհալի։*

ՏԱՂԱՉԱՓ, ած. գ. *Տաղաչափութեամբ գրող։*

ՏԱՂԱՉԱՓԱԳԷՏ, գ. *Տաղաչափագիտութեան մասնագէտ։*

ՏԱՂԱՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ, ած. *Տաղաչափագիտութեանը յատուկ՝ վերաբերող։*

ՏԱՂԱՉԱՓԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Գրականագիտութեան բնագաւառ, որն ուսումնասիրում է չափածոյ խօսքի՝ որպէս լեզուի առանձնայատուկ համակարգի, ձեւական կառուցուածքի տարրերը։*

ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ, ած. *Տաղաչափութեան յատուկ, վերաբերեալ։*

ՏԱՂԱՉԱՓԵԼ, բ. *Տաղաչափութեամբ գրել։*

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ, գ. *Արուեստ՝ խօսքը գրելու տաղաչափական կանոններով, ամբողջութիւնը։*

ՏԱՂԱՍԱՑ, ած. գ. *Տաղեր՝ ոտանաւորներ յօրինող։*

ՏԱՂԱՐԱՆ, գ. *Տաղերի ժողովածու։*

ՏԱՂԱՒԱՐ, գ. *Ընդհանրապէս՝ Յարկ։ Վրան, խորան։*

ՏԱՂԱՒԱՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) *Տաղաւար՝ վրան զարնելը:*
ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Ոտանաւոր գըրուածք:*
ՏԱՂԻԿ, գ. *Փոքր տաղ:*
ՏԱՂՏ, գ. *Ձանձրոյթ:*
ՏԱՂՏԱՄ, ած. *Անդուրեկան:*
ՏԱՂՏԵԼ, բ. *Շարժել:*
ՏԱՂՏԿԱԼ, չբ. *Ձանձրանալուց զզուել, նողկալ:*
ՏԱՂՏԿԱԼԻ, ՏԱՂՏԿԱԼԻՑ } ած. *Զզուելի, զարշելի:*
ՏԱՂՏԿԱԼՈՒՐ, ած. *Որը լսելը տաղտկութիւն՝ զզուանք է պատճառում:*
ՏԱՂՏԿԱԽԱՒԱՐ, ած. *Տաղտուկ խաւարով:*
ՏԱՂՏԿԱՀՆՉԻՒՆ, ած. *Տաղտուկ հնչիւն ունեցող:*
ՏԱՂՏԿԱՆԱԼ, բ. *Զզուել, զարշել, նողկալ:*
ՏԱՂՏԿԱՆՔ, գ. *Տաղտկանալը:*
ՏԱՂՏԿԱՑՈՒՑԻՉ, ած. *Տաղտկացնող, տաղտկալի:*
ՏԱՂՏԿՈՏ, ած. *Շուտով տաղտկացող:*
ՏԱՂՏԿՈՒԹԻՒՆ, գ. *Զզուանք, զարշանք:*
ՏԱՂՏԿՕՐԷՆ, մկ. *Տաղտուկ կերպով:*
ՏԱՂՏՈՒԿ, ած. *Տաղտկալի:*
ՏԱՃ, գ. *Դաճելու գործիք:*
ՏԱՃԱՐ, գ. *Պաշտամունքի շէնք: Ապարանք, շքեղ բնակարան: Վանք:*
ՏԱՃԱՐ, գ. *Կարճ ու հաստ ձեռնափայտ:*
ՏԱՃԱՐԱԲՆԱԿ, ած. *(Թռչուն), որ սիրում է տաճարների կտուրներում ապրել:*
ՏԱՃԱՐԱԳՄԲԵԹ, գ. *Տաճարի գմբէթ:*
ՏԱՃԱՐԱԶԱՆԳ, 1. գ. *Տաճարի զանգ:* 2. (փխբ.): ած. *Վեհ, հպարտ, վսեմ (ինչպէս տաճարի զանգը):*
ՏԱՃԱՐԱԿԱՆ, ած. գ. (Եկեղ.) *Երուսաղէմում Քրիստոսի տաճարի պաշտպանութեան նուիրուած:*
ՏԱՃԱՐԱԿԱՊԱՐ, ած. *Սրբազան առարկաներ կողոպտող:*
ՏԱՃԱՐԱԿԵՐՏ, ած. *Տաճարի նման շինուած, շքեղ:*
ՏԱՃԱՐԱԿԻՑ, ած. գ. *Սեղանակից:*
ՏԱՃԱՐԱՅԱՐՄԱՐ, ած. *Ինչ որ յարմար է տաճար դառնալու:*
ՏՂԱԲԵՐԱԿԱՆ, ած. *Ծննդաբերութեան վերաբերեալ:*
ՏՂԱԲԵՐՔ, գ. *Երեխայ բերելը:*
ՏՂԱԹՈՌ, գ. *Թոռ, որ մէկի տղայից (արու զաւակից) է ծնուած:*
ՏՂԱՀԱՅՐ, գ. *Զաւակ ունեցող հայր:*
ՏՂԱՃՈՒՏ, գ. *Փոքրիկ մանչ:*
ՏՂԱՄԱՅՐ, գ. *Զաւակ ունեցող մայր:*
ՏՂԱՄԱՐԴ, գ. *Ընդհանրապէս՝ արական սեռի մարդ, առանց հասակի խտրութեան, էրիկմարդ: Կատարեալ հասակի հասած: Ամուսնացած մարդ:* Փոխ. *Քաջ, կտրիճ:*
ՏՂԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. *Տղամարդ լինելը:*
ՏՂԱՅ, գ. *Նորածին կամ ծծկեր երեխայ, մանչ կամ աղջիկ: Փոքր, տհաս:*
ՏՂԱՅԱԹԱՂ
ՏՂԱՅԱԹԱՂՈՒՄ } գ. Եկեղ.) *Երեխայի թաղումը, երեխայ թաղելու եկեղեցական կարգ:*
ՏՂԱՅԱԿԱՆ, ած. *Երեխային յատուկ:*
ՏՂԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Երեխայի յատկութիւն:*
ՏՂԱՅԱԿԻՑ, ած. *Տղայութեան ընկեր:*
ՏՂԱՅԱՀԱՆԴԷՍ, գ. *Մանկական հանդէս:*
ՏՂԱՅԱՀԱՆՃԱՐ, Տ. *Տղայամիտ:*
ՏՂԱՅԱՀԵՂՁ, ած. *Երեխաներին խեղդող:*
ՏՂԱՅԱՄԻՏ, Տ. *Երեխայամիտ:*
ՏՂԱՅԱՆԱԼ, բ. *Երեխայ լինել:*
ՏՂԱՅԱՍՊԱՆ, ած. *Տղաներ՝ երեխաներ սպանող:*
ՏՂԱՅԱՏԵՍԱԿ, ած. *Տղայի՝ երեխայի նման:*
ՏՂԱՅԵԿ, Տ. *Տղեկ, Տղայիկ:*
ՏՂԱՅԻԿ, գ. *Փոքրիկ տղայ:*
ՏՂԱՅՈՒԹԻՒՆ, Տ. *Երեխայութիւն:*
ՏՂԱՅՕՐԷՆ, Տ. *Տղայաբար:*
ՏՂԱՏԷՐ, ած. գ. *Ամուսնացող տղայի տէրը՝ հայրը:*
ՏՂԱՑԿԱՆ, գ. *Կին՝ որ նոր երեխայ է ծնել:*
ՏՂԵԿ, գ. *Փոքրիկ տղայ:*
ՏՂԵԿՈՒԹ, մկ. *Տղայութեան ժամանակ:*
ՏՂԵԿՈՒԹԻՒՆ, գ. *Տղայութիւն:*
ՏՂՋԵԼ, բ. *Ծանրութեան տակ ծռուել, ճկուել:*
ՏՂԷՁ, գ. *Իշամեղու:*
ՏՂԼԱՓ, գ. *Կաշու կտոր:*
ՏՂՄԱԲՆԱԿ, ած. *Տիղմի մէջ ապրող:*
ՏՂՄԱԳԻՆ, ած. *Տղմոտ:*
ՏՂՄԱԹԱԹԱՒ, ած. *Տիղմի մէջ թաթախուած:*
ՏՂՄԱԹԱՒԱԼ, ած. *Տիղմի մէջ թաւալուող:*
ՏՂՄԱԼԻՐ
ՏՂՄԱԼԻՑ } ած. մկ. *Տիղմով լիքը, շատ տղմոտ:*
ՏՂՄԱԽԱՌՆ, ած. *Որի մէջ տիղմ է խառնուած:*
ՏՂՄԱԽՂՈՒՆՋ, գ. (Կենդ.) *Թոքաւոր խղունջների կարգին պատկանող խղունջ:*
ՏՂՄԱԽՈՐ, ած. *Որտեղ խորունկ տիղմ կայ:*
ՏՂՄԱԿԱԼԵԼ, բ. *Տիղմ բռնել, տիղմ կապել (հողի) երեսին:*
ՏՂՄԱԿԵՐՊ, ած. *Տիղմի նման:*
ՏՂՄԱԿԻՐ, ած. գ. *Տիղմը կրող:*
ՏՂՄԱԿՈՅՏ, գ. *Տիղմի կոյտ:*
ՏՂՄԱՀԱՆ, գ. *Ոտների տիղմը քերելու երկաթէ սարած տան մուտքի մօտ:*
ՏՂՄԱՀՈՏ, գ. *Տիղմի հոտ:*
ՏՂՄԱՁՈՒԿ, գ. (Կենդ.) *Ճարպաթեփ ձկների մի տեսակ:*

ՏՂՄԱՅԻՆ, ած. *Տիղմին յատուկ:*

ՏՂՄԱՇԱՂԱԽ, ած. *Տիղմի մէջ շաղախուած:*

ՏՂՄԱՇԱՏ, ած. *Որտեղ շատ տիղմ կայ:*

ՏՂՄԱՍԷՐ, ած. *Տիղմ սիրող, տիղմի մէջ ապրող:*

ՏՂՄԱՍՈՅԶ, ած. *Տիղմի մէջ սուզուող՝ սուզուած:*

ՏՂՄԱՏԱՐԱԾ, ած. *Որտեղ ընդարձակ տարածուած է տիղմը:*

ՏՂՄԱՏԵՍԱԿ, ՏՂՄԱՏԻՊ } ած. *Տիղմի տեսք ունեցող:*

ՏՂՄՈՏ, ած. *Տիղմ պարունակող:*

ՏՂՄՈՏԵԼ, բ. *Տիղմով կեղտոտել, ցեխոտել:*

ՏՂՄՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Տղմոտ լինելը:*

ՏՂՈՊԱՃ, գ. *Մի տեսակ կերակուր:*

ՏՂՈՎ(Ա)ՆԱԼ, բ. *Տղով դառնալ, յղիանալ:*

ՏՂՈՒԿ, գ. *Աղբիւրների մանր որդ:*

ՏՂՏՂԻԿ, ած. գ. *Տանձի մի տեսակ:*

ՏՂՏՈՐԻԿ, գ. *Մոլոշների կարգին պատկանող բոյս:*

ՏՃԿԵԼ, բ. *Ուռչել:*

ՏՄԱՐԴ, ած. Տ. *Տմարդի:*

ՏՄԱՐԴԱՆԱԼ, բ. *Տմարդի դառնալ:*

ՏՄԱՐԴԻ, ած. *Ոչ մարդկային: Անգութ: Ապերախտ: Յած, ստոր:*

ՏՄԱՐԴ(Ի)ՕՐԷՆ, մկ. *Տմարդի կերպով:*

ՏՄԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. *Տմարդի լինելը:*

ՏՄԲԱՀԱՆ, ած. *Տեղից շարժուած:*

ՏՄԲԼԱՃԱԿԱՏ, ած. *Ճակատը դուրս ցցուած:*

ՏՄԲԼԱՉԻ, ած. գ. *Թմբուկ կմ դհոլ նուագող, թմբկահար:*

ՏՄԲԼԹԱԿԻ, գ. *Կոպալ:*

ՏՄԲՏՄԲԱԼ, բ. *Իր տեղում շարունակ շարժուել, ցնցել:*

ՏՄԲՏՄԲԱՑՆԵԼ, անց. ձեւ *Տմբտմբալ'ի:*

ՏՄԲՏՄԲՈՑ, գ. *Տմբտմբալը:*

ՏՄԼՈՇ, ած. մկ. *Ապուշ:*

ՏՄԿԵԼ, բ. *Տամկանալ, խոնաւութիւնից փափկել:*

ՏՄՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. *Տմոյն լինելը:*

ՏՄՊՈՒԶ, ած. *Ուռած, լիքը:*

ՏՆԱԲՈՅՍ, Տ. *Տնասուն:*

ՏՆԱԳԼՈՒԽ, մկ. *Տուն-գլուխ:*

ՏՆԱԳՈՐԾ, ած. *Տանը գործուած:*

ՏՆԱՁԱՎԱՐԻ, մկ. *Տնազի ձեւով:*

ՏՆԱՁԱՏԵՂ, գ. *Տնազի տեղիք տուող:*

ՏՆԱԹԻՍԻ, ած. *Միշտ տանը նստող:*

ՏՆԱԾԱԿ, Տ. *Տնաքանդ:*

ՏՆԱԿ, գ. *Փոքր՝ անշուք տուն:*

ՏՆԱԿԱԼ, ած. գ. *Տունը պահող:*

ՏՆԱԿԱՆ, ած. *Տան վերաբերեալ, տնային:*

ՏՆԱԿԵԱՑ, ած. *Տանը կեցող:*

ՏՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Տնակից լինելը:*

ՏՆԱՀԱՆ, ած. *Տանից հանած:*

ՏՆԱՀԱՏ, ած. *Տունը կտրող:*

ՏՆԱՀԱՐԿ, գ. *Տան վարձ:*

ՏՆԱՄԵՐՁ, ած. *Տանը մօտ գտնուող:*

ՏՆԱՄԷՋ, ած. գ. *Ինչ որ տան մէջ կայ:*

ՏՆԱՅԻՆ, ած. *Տան ներքին կառավարութեան վերաբերեալ:։*

ՏՆԱՅՆԱԳՈՐԾ, գ. *Տնայնագործութեամբ պարապող:*

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. *Տնայնագործին եւ տնայնագործութեան յատուկ, վերաբերեալ:*

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Մանր տնային, ոչ գործարանային արդիւնաբերութիւն:*

ՏՆԱՆԿ, ած. մկ. *Տնից -տեղից ընկած:*

ՏՆԱՆԿԱԲԱՐ, մկ. *Տնանկի պէս:*

ՏՆԱՆԿԱՆԱԼ, բ. *Տնանկ դառնալ:*

ՏՆԱՆԿԱՆՈՑ, գ. *Տնանկների ապաստարան:*

ՏՆԱՆԿԱՑՈՒՄ, գ. *Տնանկանալը:*

ՏՆԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. *Տնանկ լինելը:*

ՏՆԱՇԱՐՔ, գ. *Տների շարք:*

ՏՆԱՇԷՆ, ած. գ. *Տուն շինող, ճարտարապետ: Մտերմական յանդիմանական*

*կոչում:*
ՏՆԱՊԱՆ, ած. գ. *Տունը պահող:*
ՏՆԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Ուրիշի տունը նրա ձեռքից առնելը:*
ՏՆԱՍԷՐ, ած. *Տունը սիրող:*
ՏՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. *Տնասէրին յատուկ:*
ՏՆԱՍՈՒՆ, ած. *Տանը սնուած: Ընտանի: Հկռ. Վայրի:*
ՏՆԱՎԱՐԻ, մկ. *Ընտանեբար: Իբրեւ տանեցի:*
ՏՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Տնավարի լինելը:*
ՏՆԱՏԵՂ, գ. *Տան տեղը:*
ՏՆԱՐԱՐ, ած. *Տան տնտեսական գործերը լաւ կառավարող:*
ՏՆԱՐԱՐԱԿԱՆ, ած. *Տնարարին եւ տնարարութեան յատուկ:*
ՏՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Տնարար լինելը:*
ՏՆԱՐԳԵԼ, ած. *Տանը արգելուած:*
ՏՆԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ, գ. *Տնարգել լինելը:*
ՏՆԱՒԵՐ, ած. *Տուն աւերող:*
ՏՆԱՒԵՐԱՆՔ, ՏՆԱՒԵՐՈՒԹԻՒՆ } գ. *Տան աւերած, տանը հասնող մեծ վնաս, տնաքանդութիւն:*
ՏՆԱՒՈՐԵԼ, բ. *Մէկին տուն ու տեղ անել:*
ՏՆԱՔԱՆԴ, ած. *Տուն քանդող:*
ՏՆԱՔԱՆԴԻ, ած. *Տուն քանդող:*
ՏՆԱՔԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. *Տուն քանդելը, տունը քանդուելը:*
ՏՆԳԼԻ, ած. *Տատանուող:*
ՏՆԳՕ, գ. Տ. *Մի տեսակ խմբական պար:*
ՏՆԻԿ, գ. *Փոքր տուն:*
ՏՆԿԱԲԱՆ, Տ. *Բուսաբան:*
ՏՆԿԱԲԵՐ, ած. *Տունկ բերող:*
ՏՆԿԱԳԷՏ, Տ. *Բուսաբան:*
ՏՆԿԱԳՈՐԾ, ած. գ. *Հողագործ:*
ՏՆԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. *Տնկագործին յատուկ:*
ՏՆԿԱԳՈՐԾԱՐԱՆ, գ. *Այն տարածքը, որի վրայ որոշ տեսակի բոյսեր են աճեցնում:*
ՏՆԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. *Այգի կմ պարտէզ տնկելը:*
ՏՆԿԱԳՈՐԾՈՒՄ, գ. *Որոշ տեսակի բոյսեր տնկելը:*
ՏՆԿԱԼՈՒՉ, ած. *Տուն պահող, տան տնտեսութիւն անող:*
ՏՆԿԱԽԻՏ, ած. *Խիտ տունկեր ունեցող, խիտ բուսած:*
ՏՆԿԱԾՈՅ, ած. *Տնկած:*
ՏՆԿՆԿԵՐՊ, ած. *Տունկի նմանութիւն ունեցող:*
ՏՆԿԱԿԻՑ, ած. *Միասին տնկուած:*
ՏՆԿԱԿՈՏՈՐՈՒԹԻՒՆ, գ. *Տունկերը կոտորելը՝ ջարդելը:*
ՏՆԿԱՀԱՏ, ած. գ. *Տունկը՝ ծառը կտրող:*
ՏՆԿԱՂ, գ. (Քիմ.) *Որոշ տունկերից հանած աղ:*
ՏՆԿԱՂ, գ. (Հանք.) *Ջրալից բիւրեղացած բորակաքար:*
ՏՆԿԱՄԱՂԱՐԹ, ած. *Տնկի նման սաղարթազեղ բուսնող՝ աճող:*
ՏՆԿԱՐԱՆ, գ. *Որտեղ տունկեր կան, այգի:*
ՏՆԿԱՐԱՐ, Տ. *Տնկագործ:*
ՏՆԿԱՐԿ, Տ. *Տնկագործ:*
ՏՆԿԱՒՈՐ, ած. *Տունկին յատուկ:*
ՏՆԿԱՔԱՐ, գ. (Հանք.) *Բրածոյ՝ քարացած տունկ:*
ՏՆԿԵԼ, բ. *Բոյսի արմատը հողի մէջ դնել: Վարսել, ցցել գետնի մէջ: Գետնի երեսին կանգնեցնել: Հաստատել:*
ՏՆԿԵԼ, բ. *Յորենը դինկով ծեծել:*
ՏՆԿԵՑ, ած. գ. *Տանը կեցող, տունը պահպանող: Մէկի տանը վարձով ապրող:*
ՏՆԿԵՑՈՒԹԻՒՆ, գ. *Իբրեւ տնակից կմ տնկեց միասին ապրելը:*
ՏՆԿԸԼ, ած. *Ոչ կայուն հաստատուն յենարան չունեցող:*
ՏՆԿԻ, գ. *Մատղաշ ծառ:*
ՏՆԿԻՆԱԳՈՐԾ, ած. *Տնկագործուած:*
ՏՆԿԻՉ, ած. գ. *Նա որ տնկում է:*

**ՏՆԿԼՈՒԵԼ**, բ. *Գլխիվայր գլորուել:*
**ՏՆԿՄԱՆ**, մկ. *Տնկուած դիրքով:*
**ՏՆԿՈՂ**, ած. *Ամենալաւ որակի: Լաւ զուգուած-զարդարուած:*
**ՏՆԿՈՂՆԱԼ**, բ. *Զուգուել-զարդարուել:*
**ՏՆԿՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Զուգս ու զարդարանքով՝ արտաքին վայելչութեամբ սիգանալը:*
**ՏՆԿՈՂ**, գ. *Բոյսերի տունկերը աճեցնելու պարտէզ:*
**ՏՆՄՆԱՑ**, ած. *Տանը մնացած, ամուսնանալու ժամանակն անցած:*
**ՏՆՈՎ.ՏԵՂՈՎ**, Տ. *Տունտեղ'ի տակ:*
**ՏՆՈՎԻ**, Տ. *Տնով-տեղով:*
**ՏՆՈՒՈՐ**, գ. *Մի տան մէջ ապրող, ընտանիք, գերդաստան:*
**ՏՆՉԱԼ**, բ. *Շնչասպառ հեւալ:*
**ՏՆՊԱՀ**, ած. գ. *Տունը պահպանող:*
**ՏՆՊԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Տնպահ լինելը:*
**ՏՆՏԵՍ**, գ. *Տան տեսուչ: Հոգատար, մատակարար:*
**ՏՆՏԵՍԱԲԱՆ**, Տ. *Տնտեսագէտ:*
**ՏՆՏԵՍԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ տնտես, խնայողաբար:*
**ՏՆՏԵՍԱԳԷՏ**, ած. գ. *Գիտնական, տընտեսութեան մասնագէտ:*
**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ**, Տ. *Քաղաքատընտեսական:*
**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ.*Տնտեսութիւն ուսումնասիրող գիտութիւն:*
**ՏՆՏԵՍԱԿԱՆ**, ած. *Տան տնտեսութեան յատուկ: Տան ապրուստի վերաբերեալ: Տնտեսութեամբ կատարուող:*
**ՏՆՏԵՍԱԿԱՆԱՊԷՍ**, Տ. *Տնտեսապէս:*
**ՏՆՏԵՍԱՊԷՍ**, մկ. Տ. *Տնտեսաբար:*
**ՏՆՏԵՍԱՎԱՐ**, ած. գ. *Տնտեսավարող, տնտեսութիւնը կառավարող:*
**ՏՆՏԵՍԱՏՈՒՆ**, գ. *Որտեղ տնտեսական գործերն են կատարուում:*
**ՏՆՏԵՍԵԼ**, նբ. *Մատակարարել, խնայել:*
**ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ**, գ. *Տնտես լինելը: Տան գործեր, տան գործերի կառավարութիւն: Հոգատարութիւն, խնամք:*
**ՏՆՏԵՍՈՒՀԻ**, գ. *Տնտես կին, տնարար կին:*
**ՏՆՏԵՍՈՒՄ**, գ. *Տնտեսելը:*
**ՏՆՏԵՍՕՐԷՆ**, Տ. *Տնտեսաբար:*
**ՏՆՏՂԵԼ**, բ. *Այս եւ այն կողմը դարձնել քննելու համար:*
**ՏՆՓԵՍԱՅ**, գ. *Երիտասարդ՝ որ մէկի աղջկան հետ ամուսնանալով ապրում է կնոջ հետ նրա տանը:*
**ՏՆՔԱԼ**, բ. *Հիւանդի ընդհատ-ընդհատ ձայնով հառաչելը: Ծանրութեան ճնշման տակ կմ յոգնելուց հառաչել:*
**ՏՆՔՈՑ**, գ. *Տնքալը:*
**ՏՆՔՏՆՔԱԼԻ**, մկ. *Տնքտնքալով:*
**ՏՆՕՐԷՆ**, գ. *Տան գործերը կարգադրող: Հաստատութեան վարիչ:*
**ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ**, գ. *Կարգաւորութիւն, տեսչութիւն:*
**ՏՆՕՐԻՆԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ տնօրէն, տեսչաբար:*
**ՏՆՕՐԻՆԱԿԱՆ**, ած. *Տնօրէնին եւ տնօրինութեան յատուկ:*
**ՏՆՕՐԻՆԱՊԷՍ**, Տ. *Տնօրինաբար:*
**ՏՆՕՐԻՆԵԼ**, բ. *Տնտեսել, կարգաւորել:*
**ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ**, Տ. *Տնօրէնութիւն:*
**ՏՆՕՐԻՆՈՒՀԻ**, գ. *Տնօրէն իգական սեռի:*
**ՏՆՕՐՀՆԷՔ**, գ. (Կրօն.) *Տուն օրհնելը. կրօնական ծէս:*
**ՏՈԳՈՐԵԼ**, բ. *Մի հեղուկ նիւթ ծծեցնել: Լիացնել, համակել, ներշնչել:*
**ՏՈԳՈՐՈՒՄ**, գ. *Տոգորելը:*
**ՏՈԳՈՐՈՒՆ**, ած. *Տոգորուած: Ոգեւորուած:*
**ՏՈԼԻ**, գ. *Խաղողի որթ:*
**ՏՈԿ**, գ. *Տոկալը, դիմացկունութիւն:*
**ՏՈԿ**, գ. *Ելեկտրական հոսանք:*
**ՏՈԿԱԼ**, բ. *Դիմանալ: Շարունակել կըրել:*
**ՏՈԿԱՆՔ**, գ. *Տոկալու հանգամանք, տանջանք:*
**ՏՈԿՈՍ**, գ. *Դրամական վարձատրու-*

*թիւն:*

ՏՈԿՈՍԱԲԵՐ, ած. *Տոկոս բերող:*

ՏՈԿՈՍԱԴՐԱՄ, գ. *Տոկոս, այն դրամը, որ գոյացել է տոկոսից:*

ՏՈԿՈՍԱԴՐՈՅՔ, գ. *Տոկոսի չափը:*

ՏՈԿՈՍԱԴՐՈՅՔԱՉԱՓ, գ. *Տոկոսի դրոյքի չափը:*

ՏՈԿՈՍԱՀԱՒԱՔ, ած. *Տոկոս հաւաքող:*

ՏՈԿՈՍԱՅԻՆ, ած. *Տոկոսին յատուկ, վերաբերեալ:*

ՏՈԿՈՍԱՆՈՑ, ած. *Այս-ինչքան տոկոս պարունակող:*

ՏՈԿՈՍԱՌՈՒ, ած. գ. *Տոկոս առնող:*

ՏՈԿՈՍԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Տոկոսառու լինելը:*

ՏՈԿՈՍԱՏՈՒ, ած. գ. *Տոկոս տուող, տոկոս բերող:*

ՏՈԿՈՍԱՒՈՐ, ած. *Շահաբեր, տոկոս բերող:*

ՏՈԿՈՍԱՒՈՐԵԼ, բ. (Առեւտուր.) *Տոկոսը աւելացնել դրամագլխի վրայ:*

ՏՈԿՈՒՄ, գ. *Տոկալը:*

ՏՈԿՈՒՆ, ած. *Տոկացող:*

ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. *Տոկուն լինելը, տոկալու ընդունակութիւն:*

ՏՈՀՄ, գ. *Մարդկանց խումբ, որ սերուած է մի նախահօրից:*

ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Տոհմի ճիւղագրութիւն:*

ՏՈՀՄԱԳԼՈՒԽ, գ. *Տոհմի գլուխը:*

ՏՈՀՄԱԳՐԱԿԱՆ, Տ. *Ազգաբանական:*

ՏՈՀՄԱԿԱՆ, ած. *Տոհմին յատուկ, վերաբերեալ: Տոհմիկ, ազնուական: Ազգական:*

ՏՈՀՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Տոհմական լինելը:*

ՏՈՀՄԱԿԻՑ, ած. գ. *Նոյն տոհմին պատկանող:*

ՏՈՀՄԱԿՑԵԼ, բ. *Տոհմակից դարձնել:*

ՏՈՀՄԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Տոհմակից լինելը:*

ՏՈՀՄԱՅԻՆ, ած. *Տոհմական:*

ՏՈՀՄԱՊԵՏ, գ. *Տոհմի սկիզբը, նախապետ:*

ՏՈՀՄԱՊԵՏԱԿԱՆ, ած. *Տոհմապետին յատուկ:*

ՏՈՀՄԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Տոհմապետ լինելը:*

ՏՈՀՄԱՒՈՐ, ած. *Լաւատոհմիկ:*

ՏՈՀՄԵԼ, բ. *Սերուել, ծագել մի տոհմից:*

ՏՈՀՄԻԿ, ած. *Լաւ տոհմից, բարետոհմիկ: Ցեղակից, ազնուական:*

ՏՈՀՄՆԸՆՏԻՐ, ած. *Տոհմի մէջ ընտիր:*

ՏՈՀՄՈՒԹԻՒՆ, գ. *Տոհմակցութիւն:*

ՏՈՂ, գ. *Կողք կողքի՝ երկայնութեամբ ուղիղ դասաւորուած իրերի շարք:* (Տպար.) *Տպարանական տառեր: Շարք, գիծ:*

ՏՈՂԱԲԱՆ, ած. *Խօսքեր շարող:*

ՏՈՂԱԳԼՈՒԽ, գ. *Այն բառը, որով նոր տող է սկսուում:*

ՏՈՂԱԳԾԵՐ, գ. *Տողի գծեր:*

ՏՈՂԱԴԱՐՁ, գ. *Բառի կիսատ մնացած մասը միւս տողն անցկացնելը:*

ՏՈՂԱԴԱՐՁԱԿԱՆ, ած. *Տողադարձին յատուկ:*

ՏՈՂԱԴԱՐՁԵԼ, բ. *Տողադարձ անել:*

ՏՈՂԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ, Տ. *Տողադարձ:*

ՏՈՂԱԴՐԵԼ, բ. *Շարքով դնել:*

ՏՈՂԱԴՐԵԼ, նբ. *Շարուած տողերու էջաւորել:*

ՏՈՂԱԴՐՈՒՄ, գ. *Շարուածքի էջաւորում:*

ՏՈՂԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. *Շարքով՝ մի գծով դնելը:*

ՏՈՂԱԿԱՊ, գ. *Կէտ գիծ:*

ՏՈՂԱՄԷՋ, գ. *Երկու տողի մէջ եղած բաց տեղը:*

ՏՈՂԱՄԻՋԵԼ, Տ. *Ընդմիջարկել:*

ՏՈՂԱՆ, գ. *Շարք, ուղիղ գիծ:*

ՏՈՂԱՆԻ, ած. մկ. *Շարադասուած, կարգով շարուած: Տողեր ունեցող:*

ՏՈՂԱՆՑԵԼ, բ. *Զօրքի՝ տողանտողան անցնելը:*

**ՏՈՂԱՆՑՈՒՄ**, գ. *Տողանցք, տողադարձ։*

**ՏՈՂԱՆՑՔ**, գ. *Հանդիսաւոր երթ, զօրքի, մարզիկներու։*

**ՏՈՂԱՇԱՐ**, գ. *Թուղթ, որի վրայ սեւ թանաքով գծուած են ուղիղ զուգահեռ գծեր։*

**ՏՈՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. *Տողեր գրելը մէկը միւսի յետեւից։*

**ՏՈՂԱՎԱՐՁ**
**ՏՈՂԱՎՃԱՐ** } գ. *Վարձատրութիւն, որ վճարուում է հեղինակին նրա գրուածքի տողերի հաշուով։*

**ՏՈՂԱՓԱԿ**, ած. *Տողը փակող։*

**ՏՈՂԵԼ**, բ. *Կողք կողքի ուղիղ գծով շարել։*

**ՏՈՂԸՆԴՄԷՋ**, ած. մկ. *Որտեղ մի տող մէջ է տրուում։*

**ՏՈՂԻՔ**, գ. *Լորձունք։*

**ՏՈՂԿԵԼ**, նբ. *Ձուի ճերմակուցով փայլեցնել։*

**ՏՈՂՔ**, գ. *Թուք, լորձունք։*

**ՏՈՄԱՐ**, գ. *Գիրք մատեան։ Աստղաբաշխական հաշիւների վրայ հիմնուած ժամանակագրական համակարգ, տարեցոյց։ Հուշուեգիրք։*

**ՏՈՄԱՐԱԳԷՏ**, ած. *Տոմարի՝ տոմարական՝ աստղաբաշխական հաշիւների հմուտ մասնագէտ։*

**ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ**, Տ. *Տոմարակալ։*

**ՏՈՄԱՐԱԿԱԼ**, գ. *Հաշուապահ։*

**ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ելումուտի հաշուապահութիւն։*

**ՏՈՄԱՐԱԿԱՆ**, ած. *Տոմարին յատուկ։*

**ՏՈՄՍ**, գ. *Թղթի մագաղաթի կտոր։ Քարտ։*

**ՏՈՄՍԱԿ**, գ. *Տոմս, փոքր տոմս։ Մուտքի իրաւունքի թղթիկ։*

**ՏՈՄՍԱԿԱԳԻՐ**, գ. *Տոմսակ գրողը։*

**ՏՈՄՍԱԿԱԿԻՐ**, ած. գ. *Նա՝ որի ձեռքին գտնուում է տոմսակը։*

**ՏՈՄՍԱԿԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Տոմսակ վաճառող։*

**ՏՈՄՍԱՐԿՂ**, *Կայարաններում, թատրոններում եւն փոքր սենեակ, որտեղից պաշտօնեան տոմսակներ է ծախում։*

**ՏՈՄՍԱՎԱՃԱՌ**, Տ. *Տոմսակավաճառ։*

**ՏՈՅԺ**, գ. *Յանցանքի դէմ հատուցում՝ պատիժ։ Կատարուած ծախսերի հատուցում։*

**ՏՈՆ**, (Յուն.) գ. Տ. *Ձայնաստիճան։ Արտայայտութեան ձեւ՝ եղանակ։*

**ՏՈՆԻՐ**, գ. *Տորոնի բոյսը։*

**ՏՈՆՆԱ**, գ. *Մետրական չափերի մէջ՝ ծանրութեան չափ։*

**ՏՈՉՈՐ**, Տ. *Տոչորում։ Կիզում, այրուացք։*

**ՏՈՉՈՐԱԿԱՆ**, ած. *Տոչորելու յատկութիւն ունեցող։*

**ՏՈՉՈՐԱԿԷԶ**, ած. *Տոչորող՝ կիզող։*

**ՏՈՉՈՐԵԼ**, բ. *Այրել, կիզել։*

**ՏՈՉՈՐԻՉ**, ած. *Նա որ տոչորում է, տոչորող։ Այրող, կիզող։*

**ՏՈՉՈՐՈՒՄ**, գ. *Տոչորելը։*

**ՏՈՉՈՐՈՒՆ**, ած. *Տոչորող։*

**ՏՈՉՈՐՔ**, գ. (Ախտաբ.) *Ստամոքսի խանգարումից առաջացած էրոցքի նըման զգացում սրտի շրջանին։*

**ՏՈՊՐԱԿ**, գ. *Ձեռքով գործած կմ կտորից կարած գրպանաձեւ աման։* (հեգն. ծաղր.), *Գլուխը դատարկ։ Պարկ։*

**ՏՈՊՐԱԿԵԼ**, բ. *Տոպրակն ածել։*

**ՏՈՊՐԱԿՑՈՒ**, ած. *Տոպրակ շինելու կմ կարելու յարմար։*

**ՏՈՌ**, գ. *Չուան։ Կապանք։*

**ՏՈՌՃԻ**, ած. *Լիքը, գէր։*

**ՏՈՌՆ**, գ. *Չուան, թոկ։*

**ՏՈՌՆ**, գ. *Տոռնի թփի պտուղը։*

**ՏՈՌՆԵԼ**, բ. *Տոռել։ Չուանով կապել։*

**ՏՈՌՈՄ**, գ. *Բռնելու կոթ, բռնատեղ՝ պատգարակի։*

**ՏՈՎՐԻՉ**, գ. *Հիւսնական գործիք խարտոցի նման։*

**ՏՈՏ**, գ. *Ոտք, ոտն։ Տաբատի կմ փոխանի ներքեւի մասը։* Տ. *Տուտ։*

**ՏՈՏԱՇՈՐ**, գ. *Օրօրոցի երեխային քնեցնելիս ոտները փաթաթելու շորը։*

**ՏՈՏԵՄ**, գ. (Ազգաբ.), *Մի քանի նախնական ժողովուրդների հաւատով՝ կենդանի, որ մոգական զօրութիւն ունի:*
**ՏՈՏԻԿ**, (Մանկ.), գ. *Ոտիկ, փոքր ոտք:*
**ՏՈՏԻԿ**, Տ. *Փոքր թռնիր:*
**ՏՈՏՈՋ**, ած. *Սրածայր:*
**ՏՈՏՈՋԵԼ**, բ. *Ջուգել զարդարել: Սրցնել:*
**ՏՈՏՈԼՈՋ**, ած. *Սրածայր:*
**ՏՈՏՈՎԱՆՔ**, գ. *Տոտոռւելը, յանդիմանութիւն:*
**ՏՈՏՈՎԵԼ**, բ. *Մեղադրել:*
**ՏՈՐԱԽ**, գ. *Խիստ թթու բան:*
**ՏՈՐԲԱՆԵԼ**, բ. *Վարդապետել:*
**ՏՈՐԳ**, գ. *Սարդի ոստայն: Գլանաձեւ փայտ:*
**ՏՈՐԴԻԿ** / **ՏՈՐԹԻԿ** գ. (Կենդ.) *Կեռնեխների ցեղին պատկանող փոքր թռչուն:*
**ՏՈՐՄ**, գ. (Բուս.) *Թունաւոր խոտ:*
**ՏՈՐՄ** / **ՏՈՐՄԻՂ** գ. *Պատերազմական նաւերի խումբ:*
**ՏՈՐՈՄԵԼ**, բ. *Ուռչել:* Փոխ. *Ուռել, փքուել:*
**ՏՈՐՈՆ**, գ. (Բուս.) *Տորոնազգիների կարգին պատկանող կարմիր ներկ տուող երկարակեաց բոյս:*
**ՏՈՐՈՆԱԶԳԻՆԵՐ**, գ. (Բուս.) *Փողածաղիկների դասին պատկանող բոյսերի կարգ:*
**ՏՈՐՈՆԱՆԵՐԿ**, գ. *Տորոնի ներկ*, ալիզարին:
**ՏՈՐՈՆԵԼ**, բ. *Տորոնի ներկով ներկել:*
**ՏՈՐՈՆԽՈՏ**, գ. (Բուս.) *Բոգերի կարգին պատկանող բոյս:*
**ՏՈՐՈՒ**, գ. *Խարտոցի մի տեսակ:*
**ՏՈՐՐ**, գ. *Ծառի ճիւղ:*
**ՏՈՐՐԻՉԵԼԵԱՆ ԴԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. (Ֆիզ.) *Անօդ տարածութիւն:* Փոխ. *Խելքի՝ մտածելու կարողութեան բացարձակ բացակայութիւնը:*
**ՏՈՐՖ**, Տ. *Կիզահող:*
**ՏՈՒԱԾՈՒՐԻԿ**, ած. գ. (Կրօն.) *Աստծոյ կմ սրբերից տրուած՝ իբրեւ յատուկ շնորհ:*
**ՏՈՒԱՅՏ**, ած. *Տուայտած: Տառապած:*
**ՏՈՒԱՅՏԱՆՔ**, գ. *Հոգեկան տառարանք:*
**ՏՈՒԱՅՏԱԼԻՑ**, ած. *Տուայտանքներով լի՝ լեցուն:*
**ՏՈՒԱՅՏԵԼ**, բ. *Տառապել:*
**ՏՈՒԱՅՏՈՒԹԻՒՆ**, գ. *Տուայտելը:*
**ՏՈՒԱՅՐ**, գ. *Վարձանք, օժիտը:*
**ՏՈՒԱՐԱԾ**, Տ. *Տաւարած: Խոզարած:*
**ՏՈՒԱՐԱԾԱԿԱՆ**, ած. գ. *Հովիւ:*
**ՏՈՒԲ**, գ. (Բուս.) *Վայրի մեկոն:*
**ՏՈՒԳԱՆՔ**, գ. *Ընդհանրապէս պատիժ՝ գործած յանցանքի կմ զանցառութեան համար: Դրամական վճար այն դէպքում, եթէ մէկը սահմանուած ժամանակին չի վճարում պետական կմ համայնական տուրքը:*
**ՏՈՒԳԱՆԱԳԻՐ**, Տ. *Տուժանագիր:*
**ՏՈՒԳԱՆԵԼ**, բ. *Տուգանքի ենթարկել:*
**ՏՈՒԳԱՆԵԼԻ**, ած. *Ինչ որ ենթակայ է տուգանքի:*
**ՏՈՒԳԱՆՈՒՄ**, գ. *Տուգանելը, տուգանքի՝ դրական պատիժի ենթարկելը:*
**ՏՈՒԳԱՆՔԱԾՐԱՐ**, գ. *Տուգանքի ծանուցում պարունակող ծրար:*
**ՏՈՒԳԱՆՔԱՉԱՓ**, գ. *Տուգանքի չափը:*
**ՏՈՒԳԱՏ**, *Հին ոսկեայ դրամ:*
**ՏՈՒՋ ՏԱԼ**, բ. *Աչքը յառել:*
**ՏՈՒՋՄՈՒՋ**, ած. *Տզկած, խխում եղած, խիստ թրջուած:*
**ՏՈՒԺԱԳՈՒՄԱՐ**, գ. *Որպէս տոյժ՝ տուգանք գանձուող գումար, տուժավճար:*
**ՏՈՒԺԱՆԱԳԻՐ**, գ. *Պայմանագիր, որի մէջ նշանակուած է տուժանք՝ պայմանք:*
**ՏՈՒԺԱՆՔ**, գ. *Տուժելը, տուգանք:*
**ՏՈՒԺԱՊԱՐՏ**, ած. *Տուգանք տալու պարտական:*
**ՏՈՒԺԵԼ**, բ. *Տոյժ կրել:* բ. *Կորուստ կրել:*
**ՏՈՒԺՈՒՄ**, գ. *Տուժելը:*

**ՏՈՒԻՉ**, ած. *Նա որ տալիս է, տուող:*

**ՏՈՒԼԱՇ**, գ. (Կենդ.) *Սեւ ագռաւի նման, բայց նրանից փոքր թռչուն:* Փոխ. *Ապուշ մարդ:*

**ՏՈՒԿԼՈՒՋ**, ած. *Քիստեր չունեցող (ցորեն):*

**ՏՈՒՂՏ**, գ. (Բուս.) *Մոլոշների կարգին պատկանող միամեայ կմ երկարակեաց բոյս:*

**ՏՈՒՃ**
**ՏՈՒՃԻԿ** } գ. *Փոքր կարաս գինու համար:*

**ՏՈՒՄԲԼԻ-ՏՈՒՄԲԼԻ**, ած. *Որի միսը գիրութիւնից շարժուում է՝ ման գալիս:*

**ՏՈՒՆ**, գ. *Բնակելու մեծ կմ փոքր շինութիւն: Ապարանք, պալատ: Շինութիւն: Առեւտրական հիմնարկ: Ազգատոհմ, ցեղ: Ոտանաւորի մի մաս:*

**ՏՈՒՆ-ԴԱՐՁ**, գ. *Տուն դառնալը, վերադարձ:*

**ՏՈՒՆԴՈՒՌՈՒՋ**, գ. *Մարդու կմ անասունի յետոյքը:*

**ՏՈՒՆԴՐԱ**, (ֆին.) գ. *Սառուցեալ գօտու գաւառներում անտառազուրկ տարածութիւն:*

**ՏՈՒՆԿ**, գ. *Թուփ, բոյս:* Հկռ. *Խոտ, բոյս:*

**ՏՈՒՆՏՈՒՆԱԼ**, բ. *Յած ձայնով իրեն համար խօսել կմ երգել:*

**ՏՈՒՇՏԻԿ**, մկ. *Կամաց-կամաց:*

**ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**, գ. *Տալը, տուրք:*

**ՏՈՒՊ**, գ. *Արտերի մէջ բուսնող բոյս:*

**ՏՈՒՊԻԿ**, գ. *Փողոց, որ մի կողմից մուտք ունի:*

**ՏՈՒՌ**, գ. *Շեղջ, կոյտ, դէզ:*

**ՏՈՒՏ**, գ. *Ծառի ճիւղ, ոստ: Գետի ճիւղ:*

**ՏՈՒՏՆ**, գ. *Կենդանիների, մանաւանդ օձի պոչը:*

**ՏՈՒՏԼՈՒՏՈՒՋ**, Տ. *Տուտուզ:*

**ՏՈՒՏՈՒ**, գ. *Մայր, մայրիկ:*

**ՏՈՒՏՈՒՋ**, ած. *Ուռած, դուրս ցցուած:* գ. *Յետոյք:*

**ՏՈՒՏՈՒՋԻԿ**, ած. *Տուտուզ:*

**ՏՈՒՏՈՒՑ**, ած. մկ. *Անխելք:*

**ՏՈՒՏՈՒՑՈՒԹԻՒՆ**, գ. *Տուտուց լինելը:*

**ՏՈՒՐ**, գ. *Տալը:* Հկռ. *Առ: Յանձնել: Թողնել մէկին, ենթարկուելով մի բանի: Համաձայնել:*

**ՏՈՒՐ ՈՒ ԴՄԲՈՑ**, *միասին, տուրուդմբոց, տուրութակ եւն:*

**ՏՈՒՐ**, գ. *Հիւանդութեան ժամանակ ծոմ պահելը:*

**ՏՈՒՐԵՒԱՌ**, գ. *Առնել-տալը: Իրար բան տալ-առնելը: Առուտուր:*

**ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Առնելտալը, առեւտուրութիւն:*

**ՏՈՒՐՈՒՏԱՊ**, գ. *Հոգին տալու տագնապը, հոգեվարք:*

**ՏՈՒՐՏԻԿ**, ած. *Անհամ, անժուր:*

**ՏՈՒՐՏՈՒՐԻ**, գ. *Մի տեսակ սեւ խաղող:*

**ՏՈՒՐՔ**, գ. *Ինչ որ տրուում է մէկին իբրեւ ձիրք:* (Կրօն.) *Նուէր, պարգեւ: Ընդհանուր անուն բոլոր տեսակ հարկերի:*

**ՏՈՒՓ**, գ. *Փոքրիկ արկղիկ:*

**ՏՈՒՖ**, գ. (Հանք.) *Հրաբխային ժայթքումից առաջացած քար:*

**ՏՈՓԱՆ**, գ. *Տոփելու գործիք, թակ, թակիչ:*

**ՏՈՓԵԼ**
**ՏՈՓՆԵԼ** } բ. *Տոփանով թակել՝ ծեծել:*

**ՏՊԱԳԻՐ**, ած. *Տպագրուած:* Հկռ. *Գրչագիր:*

**ՏՊԱԳՐԱԿԱՆ**, ած. *Տպագրութեան յատուկ:*

**ՏՊԱԳՐԱՆԿԱՐ**, գ. *Տպագրուած նկար, տպագիր նկար:*

**ՏՊԱԳՐԱՏԱԽՏԱԿ**, գ. *Տախտակ, որի վրայ տպագրում են:*

**ՏՊԱԳՐԱՏՈՒՆ**, Տ. *Տպարան:*

**ՏՊԱԳՐԵԼ**, բ. *Գծագրել իբրեւ տիպ: Տպագրութեան միջոցով բազմապատկել:*

**ՏՊԱԳՐԻՉ**, ած. գ. *Նա որ տպագրում է, տպագրող:*

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Տպագրելը։*

**ՏՊԱԳՐՈՒՄ**, գ. *Տպագրելը, տպագրրուելը։*

**ՏՊԱԶԱՐԴ**, ած. *Տիպով՝ դրոշմածով զարդարուած։*

**ՏՊԱԶԻՈՆ**, գ. (Հանք.) *Կայծաքարատների կարգին պատկանող հանք։*

**ՏՊԱԶՈԽ**, գ. *Տուպ բոյսի զոխը, որի վրայ ծաղիկ պիտի գոյանայ։*

**ՏՊԱԾՈՅ**, ած. *Տպած, տիպով դրոշմուած։*

**ՏՊԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ**, գ. *Տիպ ստեղծելը։*

**ՏՊԱՐԱԿ**, գ. *Ջրաղացի չախչախ։*

**ՏՊԱՐԱՆ**, գ. *Տպագրական գործարան։*

**ՏՊԱՐԱՆԱԿԱՆ**, ած. *Տպարանին յատուկ։*

**ՏՊԱՐԱՆԱՊԵՏ**
**ՏՊԱՐԱՆԱՏԷՐ** } գ. *Տպարանի տէրը։*

**ՏՊԱՒՈՐԱԲԱՐ**, մկ. *Մի բանի տպով՝ օրինակով՝ նմանութեամբ։*

**ՏՊԱՒՈՐԱՊԷՍ**, Տ. *Տպաւորաբար։*

**ՏՊԱՒՈՐԻՉ**, ած. *Ինչ որ տպաւորուում է,*
*տպաւորութիւն գործող։*

**ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Տպաւորելը։ Ազդեցութիւն։*

**ՏՊԵԼ**, բ. *Տպով մի նկար կմ նախշ դրոշմել։* Փոխ. *Լաւ հասկացնել։*

**ՏՊԻՉ**, գ. *Տպելու սարք։*

**ՏՌԱԼ**, գ. *Գող, աւազակ։*

**ՏՌԱՄԷՋ**, ած. գ. *Մէջը տռելու, չնչին անարժէք (բան)։*

**ՏՌԵԼ**, նբ. *Տտռել, յետոյքէն աղիքի օդը արձակել։*

**ՏՌԶԻԿ**, ած. *Լիքը, գիրուկ, չաղլիկ։*

**ՏՌԶՈՏԵԼ**, բ. *Տռզել։*

**ՏՌԻ**, ած. *Վախկոտ, դասալիք։*

**ՏՌԻՓ**, գ. *Սեռային մոլուցք, կիրք, հեշտանք։*

**ՏՌԼՆԳԱԼ**, բ. *Գոմէշների բառաչելը։*

**ՏՌԼՆԳՈՑ**, գ. *Տռլնգալը։*

**ՏՌԾԱԿ**, գ. *Սրբան (գռեհիկ բառ)։*

**ՏՌՃԱՆ**, ած. *Շատ անհանգիստ, չար։ Դաժանաբարոյ։*

**ՏՌՃԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Տռճան լինելը։*

**ՏՌՆՉԱԼ**, բ. *Մի բանի ծանրութեան տակ հեծել։*

**ՏՌՈՃԱՆ**, ած. *Փորը ուռած, հաստափոր (մարդ)։*

**ՏՌՈՏԵԼ**, բ. *Յաճախ տռել։ Տտռել։*

**ՏՌՈՒԶ**, ած. *Ուռած, տկռած։ Մէջը լիքը, լաւ մեծացած։ Մեծ, խոշոր։*

**ՏՌՏԻՆԳ**, գ. *Չորքոտանի անասունների ուրախուրախ ցատկելը, խայտալը։*

**ՏՌՏՆԳԻՊՈՒՊՈՒԶ**, ած. *Թեթեւամիտ, թեթեւսոլիկ։*

**ՏՌՏՈԶ**, գ. *Ցատկոտելը։*

**ՏՌՏՈՇ**, ած. *Դանդաղ, անհոգ։ Անմիտ, միամիտ։*

**ՏՌՏՌԱԼ**, նբ. *Տրտնջալ, չժգոհիլ, քըրթմընջիլ։*

**ՏՌՓԱԼ**, նբ. *Սեռային մեծ սիրով ցանկալ, փաւաշիլ։*

**ՏՌՓԱԿԱՆ**, ած. *Տռփանք արտայայտող կմ յարուցանող։*

**ՏՌՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Տռփանք։*

**ՏՌՓԱՆ**, Տ. *Տռփանք։*

**ՏՌՓԱՆՔ**, գ. *Անժուժկալ, սեռական կիրք։ Մոլուցք, հրայրք։*

**ՏՌՓՈՂԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ տռփող։*

**ՏՌՓՈՏ**, ած. *Շատ ցանկասէր։*

**ՏՌՓՈՏՈՒԹԻՒՆ**, գ. *Տռփոտ լինելը, փաւաշոտութիւն։*

**ՏՌՓՈՒԹԻՒՆ**, գ. *Տռփալը։*

**ՏՏԻՊ**, ած. *Տտիպութիւն ունեցող։* գ. *Անորոշ տեսակի վայրի բոյս։ Խեղդող, լեզուն կապող, անախորժ համ։*

**ՏՏՈՅ**, գ. *Արտաքնոց։*

**ՏՏՊԱՀԱՄ**, ած. *Տտիպ համ ունեցող։*

**ՏՏՊԵԼ**, բ. *Կուչ բերել։ Տտիպութիւն առաջ բերել։*

**ՏՐԱՄ**, ած. *Պինդ, կարծր, հաստատուն։*

**ՏՐԱՄ...**, *բաղադր. մասնիկ, որ նշանակում է միջով։*

ՏՐԱՄԱԲԱՆ, ած. *Տրամաբանութեան մասնագէտ՝ հմուտ:*

ՏՐԱՄԱԲԱՆԱԲԱՐ, Տ. *Տրամաբանօրէն:*

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ, ած. *Տրամաբանութեան յատուկ:*

ՏՐԱՄԱԲԱՆԵԼ, բ. *Տրամաբանօրէն մտածել: Տրամախօսել, Պատճառաբանել: Խելքով դատել:*

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Մարդկային հոգեկան կարողութիւն: Մտածողութիւն:*

ՏՐԱՄԱԲԱՆՕՐԷՆ, մկ. *Տրամաբանական կարգով:*

ՏՐԱՄԱԲԱՇԽԱԿԱՆ, ած. *Ինչ որ հաւասարապէս բաժանուում է իւրաքանչիւրի վրայ:*

ՏՐԱՄԱԳԻԾ, գ. (Մաթ.) *Ուղիղ գիծ, որ անցնում է շրջանի՝ բոլորակի կենտրոնով:*

ՏՐԱՄԱԳԻՐ, գ. *Անստ. նշ. բառ. գուցէ բազմապատկիչ կմ արտադրեալ:*

ՏՐԱՄԱԳԾԱԿԱՆ, ած. *Տրամագծի պէս:*

ՏՐԱՄԱԳԾԱՅԻՆ, ած. *Տրամագծին յատուկ:*

ՏՐԱՄԱԳԾՈՒԹԻՒՆ, գ. *Համեմատական գծագրութիւն:*

ՏՐԱՄԱԳԾՕՐԷՆ, մկ. *Տրամագծի երկու ծայրին գտնուելով:*

ՏՐԱՄԱԴԻՏԱԿԱՆ, ած. *Քննական, քննադատական:*

ՏՐԱՄԱԴԻՐ, ած. *Տրամադրուած: Յօժար, հակամէտ:*

ՏՐԱՄԱԴՐԱԿԱՆ, ած. *Կարգաւորուած:*

ՏՐԱՄԱԴՐԵԼ, բ. *Հաստատ կարգել, Ապահովել: Մէկի իրաւունքի տակ դնել մի բան: Պատրաստակամ:*

ՏՐԱՄԱԴՐԵԼԻ, ած. *Ինչ որ կարելի է տրամադրել: Տնօրինել ձեռքի տակ պատրաստ:*

ՏՐԱՄԱԴՐԵԼԻՈՒԹԻՒՆ, գ. *Տրամադրելի լինելը:*

ՏՐԱՄԱԴՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Տրամադրուած լինելը:*

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. *Կարգաւորութիւն, յարմարութիւն: Հակամիտութիւն դէպի մի բան, բարեհաճութիւն: Դիտում, նպատակ: Ձեւ, որակ, հանգամանք: Պատրաստակամութիւն, հոգեկան վիճակ:*

ՏՐԱՄԱՁՈՅԳ, ած. *Զուգահեռական:*

ՏՐԱՄԱԼՈՒԾԱՆԵԼ, բ. *Ծայրէ ծայր լուծանել:*

ՏՐԱՄԱԼԱՐ, գ. *Բարձրացող պատի ուղղութիւնը ճշտող, որմնադիրի լար:*

ՏՐԱՄԱԽԱՂ, (Յուն.) (արեւմտահայ լեզուով), Տ. *Դրամա, թատերական (խաղ՝ ներկայացում):*

ՏՐԱՄԱԽՈՀ, ած. *Դատողութեան մէջ շրջահայեաց, խոհեմ:*

ՏՐԱՄԱԽՈՀԱԿԱՆ, ած. *Տրամախոհին եւ տրամախոհութեան յատուկ:*

ՏՐԱՄԱԽՈՀԵԼ, բ. *Ուշի ուշով դատել:*

ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ, գ. *Տրամախոհելը:*

ՏՐԱՄԱԽՕՍ, ած. *Տրամախօսութեան հմուտ: Թատերախօս*

ՏՐԱՄԱԽՕՍԱԿԱՆ, ած. *Տրամախօսութեան՝ տրամաբանութեան յատուկ, վերաբերեալ:*

ՏՐԱՄԱԽՕՍԵԼ, բ. *Վարժ վիճաբանել:*

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ, Տ. *Թատերական ներկայացում, զրուցատրութիւն:*

ՏՐԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. *Կերպաւորութիւն:*

ՏՐԱՄԱՉԱՓ, ած. *Տրամագծօրէն հակադիր:*

ՏՐԱՄԱՉԱՓԱԿԱՆ, Տ. *Տրամագծային:*

ՏՐԱՄԱՉԱՓԱՊԷՍ, Տ. *Տրամագծօրէն:*

ՏՐԱՄԱՉԱՓՈՂ, ած. *Տրամաչափի նման:*

ՏՐԱՔԱՑՆԵԼ, անց. ձեւ *Տրաքել՛ի:*

ՏՐԱՔԵԼ, բ. *Ճաքել: Պայթիւնի ձայն լըսուել: Շատ լիքը լինել:*

ՏՐԱՔԻՉ, գ. *Հրացան կմ ատրճանակ:*

**ՏՐԱՔԻՏ**, գ. (Հանք.) *Եռացական քարերի կարգին պատկանող պինդ քար:*
**ՏՐԱՔՈՑ**, գ. *Պայթիւնի ձայն:*
**ՏՐԱՔՈՒՄ**, ած. *Տրաքուելու չափ լիք՝ կոխուն:*
**ՏՐԱՔՏՐԱՔՈՏԵԼ**, բ. *Շարունակ մէկը միւսի յետեւից տրաքուել, պայթել:*
**ՏՐԱՔՏՐԱՔՈՑ**, գ. *Յաճախակի պայթիւն:*
**ՏՐԵԽ**, գ. *Փափուկ՝ կիսամշակ կաշուց ոտքի հագնելիք առանց կրունկների եւ երեսը բաց.* չարըխ:
**ՏՐԵԽԱԳՈՐԾ**, ած. գ. *Տրեխ շինող:*
**ՏՐԵԽԱՑՈՒ**, ած. *Տրեխ շինելու յարմար:*
**ՏՐԵԽԱՒՈՐ**, ած. *Տրեխ հագած:*
**ՏՐԵԽԱՒՈՐՈՒԵԼ**, բ. *Տրեխները հագնել:*
**ՏՐԵՄՈԼԻՏ**, գ. (Հանք*) Ամփիբոլի տեսակներից մէկը:*
**ՏՐԷ**, գ. *Հայոց 4-րդ ամիսը (նոյ. 9-դեկտ. 8), դղման (*մաքարոն):
**ՏՐԷՋ**, գ. *Կողմնակի աւելցուած կերպասի կտոր կմ ժապաւէն:*
**ՏՐԻԳՈՆ**, գ. (Կենդ.) *Տափակ ձկների կմ վահանաձկների մի տեսակը:*
**ՏՐԻՏՈՆ**, գ. (Կենդ.) *Մեծ խխունջների մի տեսակը:*
**ՏՐԻՏՈՒՐ**, գ. *Փոխարինութիւն:*
**ՏՐԻՓ**, Տ. *Տոփանք:*
**ՏՐԻՕ**, (Իտալ.) գ. (Երաժ.) *Երաժշտական գրուածք: Զանազան երաժշտական երկերի երկրորդ մասը: Երեք հոգի կազմուած երաժշտական խումբ: Եռանուագ:*
**ՏՐՄՂՈՒԹԻՒՆ**, գ. *Տրմուղ լինելը:*
**ՏՐՌՀԱԿ**, Տ. *Տրոհութեան նշան:*
**ՏՐՌՀԵԼ**, բ. *Իրարից բաժանել: Զատել, Զանազանել:*
**ՏՐՌՀՈՒԹԻՒՆ** } **ՏՐՌՀՈՒՄ** } գ. *Տրոհելը, տրոհուելը: Զատելը, զանազանելը:*
**ՏՐՈՐԵԼ**, բ. *Մի կակուղ բան շփել: Մի կակուղ բան այս եւ այն ուղղութեամբ ճնշել:* Փոխ. *Նեղել, ճնշել:*
**ՏՐՈՐՈՒՄ**, գ. *Տրորելը:*
**ՏՐՈՐՏԱԿ ՏԱԼ**, բ. *Ոտքի տակ տալ:*
**ՏՐՈՒԲԱԴՈՒՐ**, (Յուն., լատ., ֆպանս.) գ. *Միջնադարեան ժողովրդական երգիչ: Աշուղ:*
**ՏՐՈՒԽ**, ած. *Վերջին, յետնեալ:*
**ՏՐՈՓ**, գ. *Տրոփում:*
**ՏՐՈՓԵԼ**, բ. *Ոտներով կոխոտել:*
**ՏՐՈՔԻԼՈՍ**, գ. *Շատ փոքրիկ թռչուն:*
**ՏՐՏՄԱԲԱՐ**, մկ. *Տրտում կերպով:*
**ՏՐՏՄԱԳԻՆ**, ած. մկ. *Շատ տրտում, մեծ տրտմութեամբ:*
**ՏՐՏՄԱԹԱԽԻԾ**, գ. *Վշտահար:*
**ՏՐՏՄԱԼԻ** } **ՏՐՏՄԱԼԻՑ** } ած. *Տրտմութեամբ լի:*
**ՏՐՏՄԱԽՌՀ**, ած. *Տրտում եւ խոհուն, տրտմօրէն խոհուն:*
**ՏՐՏՄԱԾԻՆ**, ած. *Տրտմութիւն ծնող:*
**ՏՐՏՄԱԿԱՆ**, ած. *Տրտմութիւն պարունակող:*
**ՏՐՏՄԱԿԻՑ**, ած. *Տրտմութեան մասնակից:*
**ՏՐՏՄԱԿՑԵԼ**, բ. *Տրտմակից լինել:*
**ՏՐՏՄԱՀԱԼԱԾ**, ած. *Տրտմութիւնը հալածող:*
**ՏՐՏՄԱՀԱՂՈՐԴ**, ած. *Որի մէջ խառն է տրտմութիւն:*
**ՏՐՏՄԱՍԷՐ**, ած. *Տրտմութիւն սիրող:*
**ՏՐՏՄԵԼ**, բ. *Տրտում դառնալ:* Հկռ. *Ուրախանալ: Տխրիլ, թախծիլ:*
**ՏՐՏՄԵՑՈՒՑԻՉ**, ած. *Ինչ որ տրտմեցնում է, տրտմեցնող: Տխրեցնող:*
**ՏՐՏՄՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեկան վիշտ:*
**ՏՐՏՄՕՐԷՆ**, մկ. *Տրտմաբար:*
**ՏՐՏՆՋԱԼ**, Տ. *Տրտնջել:*
**ՏՐՏՆՋԱԿԱՆ**, ած. *Տրտունջ պարունակող:*
**ՏՐՏՆՋԱՆՔ**, գ. *Տրտնջելը:*
**ՏՐՏՆՋԵԼ**, բ. *Խօսքերով իր դժգոհու-*

*թիւնը կմ անբաւականութիւնն արտա-յայտել մէկից: Գանգատիլ, դժգոհիլ:*
**ՏՐՏՈՒՄ**, ած. *Տրտմութիւն ունեցող: Տխուր:* Հկռ. *Ուրախ, զուարթ:*
**ՏՐՏՈՒՆՋ**, գ. *Դժգոհութիւն՝ անբաւա-կանութիւն մէկից: Ֆանֆուտ:*
**ՏՐՑԱԿ**, գ. *Մի կապոց, խուրձ:*
**ՏՐՑԱԿԵԼ**, բ. *Տրցակ կապել:*
**ՏՓԱՆՄԱՆ**, գ. *Տուփի նման:*
**ՏՓԵԼ**, բ. *Բախել: Ծեծել, զնահատել:*
**ՏՓՈՑ**, գ. *Ծեծ, զոռսող:*
**ՏՔԼԱԾ**, ած. *Թոռոմած:*
**ՏՔՆԱԼԻՑ**, ած. *Տքնութեամբ լի:*
**ՏՔՆԱՋԱՆ**, ած. *Որտեղ տքնութիւն եւ ջանք կայ: Յոգնաջան:*
**ՏՔՆԱՍԷՐ**, ած. *Տքնութիւն:*
**ՏՔՆԵԼ**, բ. *Գիշերն անքուն անց կացնել: Ջանք թափել:*
**ՏՔՆՈՂԱԿԱՆ**, ած. *Տքնական:*
**ՏՔՆՈՒԹԻՒՆ**, գ. *Տքնելը, անքուն գիշեր-ներ անցկացնելը:*
**ՏՕ՛**, միջ. *Կոչական ձայնարկութիւն զոյականից առաջ:*
**ՏՕԹ**, գ. *Ամառուայ եղանակի սաստիկ շոգ:* ած. *Սաստիկ շոգ: Հեղձուցիչ օդ:*
**ՏՕԹԱԳԻՆ**, ած. *Շատ տօթ:*
**ՏՕԹԱԽԱՌՆ**, ած. *Շատ տօթ:*
**ՏՕԹԱԽԱՐՇ**, **ՏՕԹԱԿԵԶ** } ած. *Տօթից խաշած՝ կիզուած:*
**ՏՕԹԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Տօթահար լի-նելը:*
**ՏՕԹԱՅԻՆ**, ած. *Տօթ, տօթագին:*
**ՏՕԹԵԼ**, բ. *Տօթ եղանակ անել, տօթն ընկնել:* Փոխ. *Յօնքերը կիտել:*
**ՏՕԹՈՒԹԻՒՆ**, գ. *Տօթ լինելը, տօթ, սաս-տիկ տաքութիւն:*
**ՏՕԼԱԹ**, գ. *Առիւծի բաշ:*
**ՏՕՆ**, գ. *Սկզբնապէս՝ զոհաբերութիւն աստուածներին: Ուրախութիւն, ցնծու-թիւն: Յիշատակող հանդիսութիւն:*
**ՏՕՆԱԲԱՐ**, մկ. *Ինչպէս տօն:*
**ՏՕՆԱԽՄԲԱԿԱՆ**, ած. *Տօնախմբութ-եամբ եղած:*
**ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ**, գ. *Խմբով եւ հան-դէսով տօն կատարելը:*
**ՏՕՆԱԾԱՌ**, գ. *Եղեւնի փոքր ծառ:*
**ՏՕՆԱԿԱՆ**, ած. *Տօնին յատուկ, վերա-բերեալ:*
**ՏՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Տօն լինելը:*
**ՏՕՆԱԿԱՏԱՐ**, ած. գ. (Եկեղ.) *Տօնը կա-տարողը:*
**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Տօն կա-տարելը:*
**ՏՕՆԱԿԱՐԳ**, գ. *Տօնը կատարելու կարգ:*
**ՏՕՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ**, գ. *Տօներ սահմա-նելը:*
**ՏՕՆԱԿԻՑ**, ած. *Տօնին մասնակից:*
**ՏՕՆԱՀՄԱՅ (կմ Տօնով հմայուած)**, գ. *Հմայութեան տօն:*
**ՏՕՆԱՄԵՐՁ**, ած. *Տօնին մօտ:*
**ՏՕՆԱՊԵՏ**, գ. *Տօնի հանդիսաղիրը:*
**ՏՕՆԱՍԷՐ**, ած. *Տօներ՝ տօնախմբու-թիւններ սիրող:*
**ՏՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Տօնասէր լինելը:*
**ՏՕՆԱՎԱՃԱՌ**, գ. *Տօնի՝ հանդէսի ժա-մանակ կազմակերպուած առեւտուր:*
**ՏՕՆԱՎԱՃԱՌԱՆՈՑ**, գ. *Որտեղ տօնա-վաճառ կայ:*
**ՏՕՆԱՑՈՅՑ**, ած. գ. *Գիրք, որտեղ նշա-նակուած են եկեղեցու տարեկան տօ-ները եւ նրանց տօնելու օրերը:*
**ՏՕՆԱՒՈՐ**, ած. *Տօն ունեցող:*
**ՏՕՆԱՒՈՒՐ**, ած. *Տօն եւ կիրակի օրուան յատկացրած:*
**ՏՕՆԵԼ**, բ. (Եկեղ.) *Տօնը կատարել: Յի-շատակել:*
**ՏՕՆԵԼԻ**, ած. *Որին (ինչը) պէտք է տօ-նել, տօնելու արժանի:*
**ՏՕՆԸՆԾԱՅ**, գ. *Տօնի առիթով մէկին ուղարկուած ընծայ:*
**ՏՕՆՇՆՈՐՀԱՒՈՐ**, գ. *Մէկի տօնը շնորհաւորելու այցելութիւն:*
**ՏՕՆՈՒՏ**, ած. *Տօնային, հանդիսաւոր:*

**ՏՕՆՉԷՔ**, ած. *Տօնական:*

**ՏՕ՛Շ ՏՕ՛Շ**, միջ. *Շունը վռնտելու ձայնակցութիւն, օ՜շտ:*

**ՏՕՄԱԽ**, գ. (Բուս.) *Կաղանչանազգիների կարգին պատկանող կարծր փայտով թուփ, որմէ սանտր կը պատրաստէին:*

**ՏՕՄԱԽԱՒՈՐ**, ած. *Տօսախ պարունակող:*

**ՏՕՄԱԽՈՒՏ**, ած. գ. *Որտեղ շատ տօսախ է բուսնում կմ բուսած:*

# Ր, ր

**Ր, ր, րէ**, գ. *Հայերէն այբուբենի երեսուներկուերորդ տառը եւ քսանվեցերորդ բաղաձայնը: Թուարկութեան հինգ հազարի համարժէք: Հինգ հազարերորդ:*

**ՐԱԲԲՈՒՆԻ**, Տ. *Ռաբբունի: Վարդապետ, ուսուցիչ:*

**ՐԱԲՈՒՆԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ րաբունի, վարդապետաբար:*

**ՐԱԲՈՒՆԱՊԵՏ**, գ. *Գլխաւոր րաբունի:*

**ՐՈՊԷ**, գ. *Ժամանակի մաս, կարճ ժամանակ, ակնթարթ:* (Արեւմտահայ. *վայրկեան):*

**ՐՈՊԷ**, գ. *(Գործ է ածուած միայն յոգն. սեռ. հոլովով՝ րոպէից):*

**ՐՈՊԷԱԲԱՐ**, Տ. *Րոպէապէս:*

**ՐՈՊԷԱԿԱՆ**, ած. *Մի րոպէի, մի ակընթարթի:*

**ՐՈՊԷԱՀԱՄԱՐ**, ած. գ. *Րոպէները համարող*

**ՐՈՊԷԱՉԱՓ**, մկ. *Մի րոպէի չափ:*

**ՐՈՊԷԱՊԷՍ**, մկ. *Նոյն րոպէին:*

**ՐՈՊԷԱՑՈՅՑ**, ած. *Րոպէները ցոյց տուող:*

**ՐՈՏԻՆ**, փխկ. *Հրողին: Տկար, անզօր:*

**ՐՈՒՊ**, ած. *Կրճատուած Տրուպ'ից:*

**ՐՈՒՐԻ**, գ. *Օրօր, նանիկ:*

# Ց, ց

**Ց, ց. ցոյ**, գ. *Հայերէն այբուբենի երեսուն եւ երեքերորդ տառը եւ քսանեւեօթներորդ բաղաձայնը: Թուարկութեան վեց հազարի համարժէք: Վեց հազարերորդ:*

**Ց** (բաղաձայնից առաջ ցը), *Նախդիր, որ գործ էր ածուում հայցական հոլովի հետ եւ նշանակում էր մինչեւ:*

**ՑԱԲԻ**, գ. *Մշտադալար բոյս՝ մանիշակագոյն ծաղիկներով:*

**ՑԱԹԵԼ**, նբ. *Լոյս սփռել, ծաթիլ, ծագիլ (լոյս):*

**ՑԱԽ**, գ. *Խոպան տեղեր բուսնող թուփ, մացառ:*

**ՑԱԽԱՀԱՒԱՔ**, գ. *Ցախ հաւաքող:*

**ՑԱԽԱՇԱՐ**, ած. *Ցախերով հիւսուած:*

**ՑԱԽԱՍՏԱՆ**, գ. *Որտեղ ցախեր՝ մացառներ են բուսնում:*

**ՑԱԽԱՏՈՒՆ**, գ. *Տան մէջ բաժանմունք, որտեղ պահում են վառելափայտը:*

**ՑԱԽԱՒԵԼ**, գ. (Բուս.) Տ. *Ցախի:* Նման.

Իբրեւ ած. *Անճարակ, Գործի անպէտք:*
**ՑԱԽԱՒԵԼԻ**, գ. *Ցախաւելի բոյսը*, Տ. *Ցախի:*
**ՑԱԽԱՒԼԵԼ**, բ. *Ցախաւելով սրբել, աւելել:*
**ՑԱԽԻ**, գ. (Բուս.) *Հաւասմրգիների կարգին պատկանող մշտադալար թուփ:*
**ՑԱԽ-ՄԱԽ**, Տ. *Ցախ ու ցուխ:*
**ՑԱԽՈՒՏ**, գ. *Որտեղ ցախ՝ փայտ է բուսնում:*
**ՑԱԽՍԱՐԵԿ**, գ. (Կենդ.) *Բուն երգեցիկների կարգին պատկանող փոքրիկ թռչուն:*
**ՑԱԾ**, ած. *Գետնի մակերեւոյթից քիչ բարձրացած: Թոյլ հնչող: Վատ, գռեհիկ:* Հկռ. *Բարձր, ուժեղ: Ստորին, հասարակ, համեստ:* Փոխ. *Հեզ, համեստ:* Հկռ. *Գոռոզ, վէս:*
**ՑԱԾԱԲԱՐ**, մկ. *Ցած՝ ստոր կերպով, անարգաբար:*
**ՑԱԾԱԳԻՆ**, ած. մկ. *Ցած՝ էժան գնանոց:*
**ՑԱԾԱԽՕՍ**, ած. *Ցած ձայնով խօսող:*
**ՑԱԾԱՀՈԳԻ**, ած. *Ցած հոգու տէր:*
**ՑԱԾԱՄԻՏ**, ած. *Խոնարհամիտ:*
**ՑԱԾԻԿ**, ած. *Ցած, մեղմ: Ցածիկ ձայն:*
**ՑԱԾԼԻԿ**, ած. *Բաւական ցած:*
**ՑԱԾՀՈԳԻ**, Տ. *Ցածահոգի:*
**ՑԱԾՆՈՑ**, ած. *Ցած գնի, էժանանոց:*
**ՑԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ցած լինելը:* Հկռ. *Բարձրութիւն:*
**ՑԱԾՐ**, ած. գ. *Գործ է ածուում արեւելահայ գրական լեզուում եւ մի քանի բարբառներում ցած'ի փոխարէն:*
**ՑԱԾՐԱՀԱՆ**, մկ. *Ցածրից:*
**ՑԱԾՐԱՄԱՍ**, գ. *Ստորին մաս՝ հատուած՝ վայր:*
**ՑԱԾՐԱՆԱԼ**, բ. *Ցած դառնալ, բարձրութիւնը նուազել:*
**ՑԱԾՐԱՇԷՆ**, ած. *Ցած շինած:*
**ՑԱԾՐՈԳԻ**, Տ. *Ցածահոգի:*
**ՑԱԿՆ**, գ. *Տառապանք:*
**ՑԱՄԱՔ**, ած. *Որի մէջ խոնաւութիւն չկայ, չոր:* Հկռ. *Խոնաւ: Խոնաւութիւնը պակասած:* Փոխ. *Անզարդ:*
**ՑԱՄԱՔԱԲՆԱԿ**, ած. *Ցամաքի վրայ բնակող՝ ապրող:*
**ՑԱՄԱՔԱԴԵՂ**, գ. *Դեղ կմ օծանելիք, որ ցամաքեցնում է:*
**ՑԱՄԱՔԱԹԵՒ**, ած. մկ. *Թեւերը ցամաք, չթրջուած:*
**ՑԱՄԱՔԱԿԱՆ**, Տ. *Ցամաքային:*
**ՑԱՄԱՔԱԿԷՏ**, գ. *Այն կէտը, որտեղ սկսւում է ցամաքը:*
**ՑԱՄԱՔԱԿՂԶԻ**, գ. *Մեծ թերակղզի:*
**ՑԱՄԱՔԱՀԱՆՈՒՄ**, գ. *Զորքի էջք ցամաքի վրայ:*
**ՑԱՄԱՔԱՀՈՂ**, գ. *Ցամաք երկիր:*
**ՑԱՄԱՔԱՅԻՆ**, ած. *Ցամաքին յատուկ:*
**ՑԱՄԱՔԱՆԱԼ**, բ. *Ցամաք դառնալ:*
**ՑԱՄԱՔԵԼ**, բ. *Ցամաք դառնալ: Չորանալ:*
**ՑԱՄԱՔԵԼԻ**, ած. *Ինչ որ կարող է ցամաքել:*
**ՑԱՄԱՔԵՑՈՒՄ**, գ. *Ցամաքեցնելը, չորացնելը:*
**ՑԱՄԱՔԸՆԹԱՑ**, ած. *Ցամաքով գնացող:* Հկռ. *Ծովագնաց:*
**ՑԱՄԱՔՈՒԹԻՒՆ**, գ. *Ցամաք՝ չոր լինելը: Չորութիւն:*
**ՑԱՄԱՔՈՒՄ**, գ. *Ցամաքելը:*
**ՑԱՄԱՔՈՒՐԴ**, գ. *Ճահճային տեղի ջրերը ցամաքեցնելը: Չորցնելը:*
**ՑԱՄՔԵԼ**, Տ. *Ցամաքել: Չորնալ:*
**ՑԱՄՔԵՓՈՑ**, ած. *Ցամաք եփած, կերակուր, որի մէջ ջուրը քիչ է:*
**ՑԱՄՔԻՉ**, գ. *Հաստ ու խաւաւոր կտոր բամբակից: Չորցնող:*
**ՑԱՅԳ**, մկ. *Մինչեւ այգ, մինչեւ լոյս, գիշերը: Մինչեւ առաւօտ:*
**ՑԱՅԳԱԶԳԵՍՏ**, գ. *Գիշերային հագուստ:*
**ՑԱՅԳԱԹԻԹԵՌ**, գ. *Գիշերային թիթեռ:*
**ՑԱՅԳԱԽՈՒՄԲ**, գ. *Գիշերային հաւաքոյթ, երեկոյթ:*
**ՑԱՅԳԱՀԱՆԴԵՐՁ**, Տ. *Գիշերազգեստ:*

**ՅԱՅԳԱՆՈՒԱԳ**, գ. *Երաժշտութիւն նուագարաններով ու ձայնով, որ գիշերը, բաց երկնքի տակ, կատարում են մէկի պատուհանի առաջ: Serenade.*

**ՅԱՅԳԱՎԱՌ**, ած. գ. *Գիշերը վառ պահող կանթեղ:*

**ՅԱՅԵԼ**, նբ. *Պաղջուրով շփելով լուալ:*

**ՅԱՅԹԵԼ**, բ. Տ. *Յայտել: Ջուրի ժայթքիլ:*

**ՅԱՅԺՄ**, մկ. *Մինչեւ այժմ:*

**ՅԱՅԼԱԿԱՆ**, ած. *Յայլերի աճուկում գտնուող:*

**ՅԱՅԼՈՋԻԼ**, գ. (Կենդ.) *Ոջիլի մի տեսակը:*

**ՅԱՅԼՈՍԿՐ**, գ. (Կազմ.) *Աճուկի ոսկոր:*

**ՅԱՅՆԺԱՄ**, Տ. *Յայսվայր:*

**ՅԱՅՍՔԱՆ**, մկ. *Այսքան մինչեւ այստեղ:*

**ՅԱՅՍՕՐ**, մկ. *Մինչեւ այսօր:*

**ՅԱՅՏ**, գ. *Ջուրի ժայթքում:*

**ՅԱՅՏԱՂԲԻՒՐ**, գ. *Աւազանէ ցայտող ջուր:*

**ՅԱՅՏԱՔԱՐ**, գ. (Հանք.) *Արագոնիտի տեսակներից մէկը:*

**ՅԱՅՏԵԼ**, բ. *Հեղուկի կաթիքները ուժով դուրս թռչել, դուրս ցայթել:*

**ՅԱՅՏԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Յայտել'ի,* նոյն նշ.:

**ՅԱՅՏՈՒՄ**, գ. *Յայտելը: Ջուրի ժայթքումը:*

**ՅԱՅՏՈՒՆ**, ած. *Յայտած, դուրս մղուած.* փոխ. *շատ աչքի ընկնող:*

**ՅԱՅՔ**, գ. *Երանքին եւ ստորին որովայնի միացման մաս:*

**ՅԱՆ**, գ. արմ. *Յանել'ի: Գործ է ածուում բարդութիւնների վերջում, օր. Սերմնացան, Հրացան, Ջրցան:*

**ՅԱՆԱԾՈՒԿ**, ած. *Յանած, ցանովի:*

**ՅԱՆԵԼ**, բ. *Սերմը հողի վրայ շաղ տալ: Շիթ-շիթ հեղուկ ցօղել:*

**ՅԱՆԻՉ**, ած. *Յանող, ինչով որ ցանում են:*

**ՅԱՆԿ**, գ. *Շրջափակ:*

**ՅԱՆԿ**, Հմմտ. *անկանել: Արգանդի աղտ:*

**ՅԱՆԿ**, գ. *Գրքի վերջում (երբեմն՝ սկըզբում) գրուած ցուցակ:*

**ՅԱՆԿԱԳԵՂՁ**, գ. (Բուս.) *Գեղձի՝ պատուտակի մի տեսակը:*

**ՅԱՆԿԱԳՈՅՆ**, ած. *Աւելի հաճոյական:*

**ՅԱՆԿԱԹԱՒԱԼ**, ած. *Միշտ՝ շարունակ թաւալուող:*

**ՅԱՆԿԱԼ**, Տ. *Յանկանալ: Փափագիլ, բաղձալ:*

**ՅԱՆԿԱԼԻ**, ած. *Ինչ բանի մարդ ցանկանում է:*

**ՅԱՆԿԱԿԱՆ**, ած. *Սեռական ցանկութիւն արտայայտող:*

**ՅԱՆԿԱԿԱՐԿԱՏ**, ած. *Քայքայուած ցանկը կարկատող՝ նորոգող:*

**ՅԱՆԿԱՆԱԼ**, բ. *Սրտանց կամենալ:*

**ՅԱՆԿԱՊԱՏ**, ած. *Յանկով պատած:*

**ՅԱՆԿԱՊԱՏԱՌ**, ած. *Յանկը՝ ցանկապատը պատառող:*

**ՅԱՆԿԱՊԱՏԵԼ**, բ. *Յանկով՝ շրջափակով պատել:*

**ՅԱՆԿԱՍԷՐ**, ած. գ. *Սեռական ցանկութիւն շատ ունեցող:*

**ՅԱՆԿԱՍԻՐԵԼ**, բ. *Յանկալ եւ սիրել:*

**ՅԱՆԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ**,գ. *Յանկասէր լինելը:*

**ՅԱՆԿԱՍՓԻՒՌ**, ած. *Որտեղ սփռուած է ցանկութիւն:*

**ՅԱՆԿԱՐԱՐ**, ած. *Յանկութիւնը գրգռող:*

**ՅԱՆԿԱՐԳԵԼ**, ած. *Յանկապատի մէջ արգելուած:*

**ՅԱՆԿԱՓԱԿ**, ած. *Յանկով փակուած՝ պատուած:*

**ՅԱՆԿԵԼ**, բ. *Յանկով պատել, ցանկապատ քաշել:*

**ՅԱՆԿՈՒԹԻՒՆ**, գ. *Յանկալը, ցանկալու կարողութիւնը: Սեռական կիրք, տարփանք: Բաղձանք:*

**ՅԱՆԿՈՒՄ**, գ. *Յանկանալը, ցանկութիւն: Փափագ:*

**ՅԱՆՈՎԻ**, ած. մկ. *Յանած:*

**ՅԱՆՈՅ**, գ. *Յանք անելու ժամանակը:*

ՑԱՆՈՒՑԻՐ, Տ. *Ցիրուցան: Ամէն կողմ ցրուած:*

ՑԱՆ-ՑԱԽ, գ. *Ցան, ցախ, աղբ:*

ՑԱՆՑ, գ. *Ծակոտկէն նօսր հիւսուածք հաստ թելերից՝ ձուկ բռնելու յարմար:*

ՑԱՆՑԱԹԵՒ, ած. *(Միջատ), որի թաղանթեայ թեւերը ցանցի ձեւ ունին:*

ՑԱՆՑԱԼԱԹ, գ. *Ցանցաւոր կտոր:*

ՑԱՆՑԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. *Ռոզման խողովակների ցանցի կառուցում:*

ՑԱՆՑԱԿԵՐՊ, ած. *Ցանցի կերպ:*

ՑԱՆՑԱՀԵՆ, գ. Հաքեր: *Համացանցանօրէն կերպով թափանցող:*

ՑԱՆՑԱՄԱՇԿ, գ. (Կազմախ*.) Աչքը պատող երեք մաշկերից ներքեւինը:*

ՑԱՆՑԱՌ, ած. մկ. *Նօսր, իրարից հեռու ընկած:*

ՑԱՆՑԱՌԱԲԱՐ, մկ. *Ցանցառ կերպով:*

ՑԱՆՑԱՌԱՄԻՏ, ած. *Ցանցառ, ծանծաղամիտ:*

ՑԱՆՑԱՌԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցանցառամիտ՝ խելքը պակաս լինելը:*

ՑԱՆՑԱՌԱՆԱԼ, բ. *Ցանցառ դառնալ, խենթանալ:*

ՑԱՆՑԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Նօսրութիւն: Խենթութիւն:*

ՑԱՆՑԱՎԱՆԴԱԿԱՅԻՆ, ած. *Ցանցահիւս վանդակներով:*

ՑԱՆՑԱՏԵՍԱԿ, ած. *Ցանցի նման, ցանցակերպ:*

ՑԱՆՑԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Ցանց ձգելը:*

ՑԱՆՑԵԼ, նբ. *Ցանցի մէջ առնել:*

ՑԱՆՑԵՆԻ, գ. *Այքի մաշկ:*

ՑԱՆՑԻԿ, գ. *Փոքր ցանց:*

ՑԱՆՑՄԱՄՈՒՌ, գ. (Բուս.) *Մամուռների մի տեսակը:*

ՑԱՆՑՆԵԼ, բ. *Այս եւ այնտեղ ցանել:*

ՑԱՆՑՈՐԴ, գ. *Ցանց ձգող:*

ՑԱՆՑՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. *Ցանցորդի արհեստը:*

ՑԱՆՔ, ՑԱՆՔՍ } գ. *Ցանելը, սերմանելը:*

ՑԱՆՔԱԴԱՇՏ, գ. *Ցանքի յատկացրած դաշտ:*

ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Միեւնոյն հողի վրայ յաջորդաբար մի քանի տեսակ հացահատիկ, բանջարեղէն կամ խոտ ցանելը:*

ՑԱՄԿՈՏ, ած. *Բարկացոտ, կրքոտ:*

ՑԱՍՄՆԱԼԻՑ, ած. *Ցասումով՝ զայրոյթով լի:*

ՑԱՍՄՆԱԿԱՆ, ած. *Ցասում արտայայտող:*

ՑԱՍՄՆՈՒԼ, նբ. *Բարկանալ, զայրանալ:*

ՑԱՍՈՒՄ, գ. *Զայրոյթ, սաստիկ բարկութիւն:*

ՑԱՏԿԱՔԱՅԼ, գ. *Ցատկելով քայլելը:*

ՑԱՏԿԵԼ, բ. *Ոստնուլ, լոք տալ: Թռիչք գործել:*

ՑԱՏԿՈՒՄ, գ. *Ցատկելը:*

ՑԱՏԿՈՏԵԼ, բ. *Շարունակ կմ զանազան տեղերում ցատկել:*

ՑԱՏԿՌՏՈՒՔ, գ. *Ցատկռտելը:*

ՑԱՏԿՏԱՆ, ած. *Շատ ցատկոտող, ցատկոտելու սովոր:*

ՑԱՐ, գ. *Ռուսաց թագաւորը կմ կայսրը:*

ՑԱՐԱԿԱՆ, ած. *Ցարերի, ռուսաց թագաւորների:*

ՑԱՐԱՄԻՆԵՐ, գ. (Բուս.) *Ծաղկապատեանով տունկերի դասին պատկանող տունկերի կարգ:*

ՑԱՐԴ, մկ. *Մինչեւ այժմ:*

ՑԱՒ, գ. *Անհաճոյ տանջող զգացմունք կենդանի մարմնի որեւէ մասում: Հիւանդութիւն, ախտ: Ծննդական երկունք:*

Նման. *Հոգեկան վիշտ:*

ՑԱՒԱԳԱՐ, ած. *Ցաւի՝ հիւանդութեան ենթարկուած:*

ՑԱՒԱԳԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Ցաւագար լինելը:*

ՑԱՒԱԳԻՆ, ած. *Ցաւերով լի:*

ՑԱՒԱԳՆԵԼ, բ. *Ցաւի ենթարկուել:*

ՑԱՒԱԳՆՕՐԷՆ, մկ. *Ցաւագին կերպով:*
ՑԱՒԱԼԻ, ածն. *Ցաւ՝ վիշտ պատճառող: Ափսոսալի:*
ՑԱՒԱԼԻՑ, ածն. *Ցաւերով՝ վշտերով լի:*
ՑԱՒԱԼԼՈՒԿ, ածն. *Ցաւերից՝ հիւանդութիւններից տանջուած:*
ՑԱՒԱԽԵՂԴ, ածն. *Ցաւից խեղդուած՝ մեռած:*
ՑԱՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Հիւանդ դրութիւն:*
ՑԱՒԱԿԻՐ, ածն. *Ցաւ կրող:*
ՑԱՒԱԿԻՑ, ածն. *Ուրիշի ցաւին՝ վշտին ընկեր:*
ՑԱՒԱԿՈՏՈՐ, ածն. *Ցաւը՝ հիւանդութիւնը մէջը մնացած:*
ՑԱՒԱԿՑԱԲԱՐ, մկ. *Ցաւակից լինելով:*
ՑԱՒԱԿՑԱԿԱՆ, ածն. *Ցաւակցութիւն արտայայտող:*
ՑԱՒԱԿՑԵԼ, բ. *Ցաւակից լինել:* Հկռ. *Խնդակցել:*
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Ցաւակից՝ վշտակից լինելը:*
ՑԱՒԱՀԱԼԱԾ, ածն. *Ցաւը՝ հիւանդութիւնը հալածող՝ փարատող:*
ՑԱՒԱՌԻԹ, ածն. *Ցաւ՝ վիշտ պատճառող:*
ՑԱՒԱՏԱՆՋ, ածն. *Ցաւերից՝ վշտերից տանջուած:*
ՑԱՒԱՐԱՐ, ածն. *Նա որ իրեն ցաւ է անում ուրիշի աղէտը:*
ՑԱՒԵԼ, բ. *Ցաւ զգացուել մարմնի որեւէ մասում:*
ՑԱՒԵՑՈՒՑԻՉ, ածն. *Նա որ ցաւացնում է:*
ՑԱՒԿՈՒԽ, ածն. *Ցաւազար:*
ՑԱՒՄԵԾԻԿ, ածն. *Փոքր ցաւը մեծացնող:*
ՑԱՒՈՂԱԿԱՆ, ածն. *Ցաւ արտայայտող:*
ՑԱՒՈՏ, ածն. *Ցաւ պատճառող:*
ՑԱՒՍԻՐՏ, Տ. *Սրտացաւ:*
ՑԱՔ, գ. *Փշոտ թուփ:*
ՑԱՔԱՆ, գ. *Տափանի մի տեսակ: Հողակոշտերը փշրող գործիք:*
ՑԱՔԱՆԵԼ, բ. *Ցաքանով ցանած արտը տափանել: Արտը հարթել:*
ՑԱՔԱՏ, գ. *Մեծ կեռ դանակ՝ ծառի ճիւղերը կտրելու:*
ՑԱՔԱՏԱՒՈՐ, ածն. գ. *Ցաքատ կրող:*
ՑԱՔԵԼ, բ. Տ. *Ցաքանել: Արտը հարթել:*
ՑԱՔԻ, գ. *Մի տեսակ փշոտ վայրի բոյս:*
ՑԱՔՃԱՂ, գ. *Ցաքանի երեք ճաղերը:*
ՑԱՔՈՒՏ, ածն. գ. *Որտեղ շատ ցաքեր են բուսած:*
ՑԱՔ ՈՒ ՑՐԻՒ, Տ. *Ցիրուցան:*
ՑԵԹ, գ. *Անասունների (կատուի, շան եւն), նաեւ (անարգաբար) մարդու մէզը:*
ՑԵԹԵԼ, Տ. *Ցայթել: Միզել:*
ՑԵԼ, գ. *Հող: Ընդհանրապէս՝ վարած հող, արտ:*
ՑԵԼԵԼ, բ. *Ճղել, պատառել: Հողը ճղել: Վարել:*
ՑԵԼՈՒՈՐ, ածն. գ. *Ցել անող:*
ՑԵԼ'ՍԻՈՒՍ, գ. (Ֆիզ.) *Ջերմաչափի մի տեսակը:*
ՑԵԽ, գ. *Ջրով թրջուած հողի փոշի: Ցեխի նման շաղախ:* Փոխ. *Կեղտ, բիծ, արատաւոր անուն: Տիղմ:*
ՑԵԽԱԹԱԹԱԽ, ածն. *Ցեխի մէջ թաթախուած: Տղմաթաթախ:*
ՑԵԽԱԾԵՓ, ածն. *Ցեխով ծեփած:*
ՑԵԽԱԿՈԼՈԼ, Տ. *Ցեխաթաթախ:*
ՑԵԽԱՆՄԱՆ, ածն. *Ցեխի նմանուող, անորակ:*
ՑԵԽԱՓԱԼԱԼ, ածն. *Ցեխով ամբողջովին ապականուած:*
ՑԵԽՈՏ, ածն. *Ցեխ քսուած:*
ՑԵԽՈՏԵԼ, բ. *Ցեխ քսել, ցեխով կեղտոտել՝ ապականել:*
ՑԵԽՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցեխոտ լինելը:*
ՑԵՂ, գ. *Մարդկանց բաժանում առանձին խմբերի ըստ նրանց ծագման: Ազգի բաժանումը մեծ խմբերի:* (Բնակ. Պատմ.) *Կենդանիների եւ բոյսերի դասակարգութեան:*
ՑԵՂԱԲԱՆ, ածն. գ. *Ցեղաբանութեան մասնագէտ:*
ՑԵՂԱԲԱՆԱԿԱՆ, ածն. *Ցեղաբանութեան*

*յատուկ:*
ՑԵՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Գիտութիւն, որ ուսումնասիրում է մարդկային ցեղերի կազմակերպութեան եւ նրանց ֆիզիկական յատկութիւնները:*
ՑԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Ցեղերն ուսումնասիրող գիտութիւն:*
ՑԵՂԱԿԱՆ, ած. *Ցեղին յատուկ:*
ՑԵՂԱԿԻՑ, ած. *Նոյն ցեղին պատկանող:*
ՑԵՂԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Ցեղակից լինելը:*
ՑԵՂԱՊԵՏ, գ. *Ցեղի պետը՝ աւագը. տոհմապետ:*
ՑԵՂԱՊԵՏԱԿԱՆ, ած. *Ցեղապետին յատուկ:*
ՑԵՂԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցեղապետ լինելը:*
ՑԵՂԱՍՊԱՆԱԳԷՏ, գ. *Ցեղասպանութիւնների ուսումնասիրութեամբ զբաղուող մասնագէտ:*
ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցեղասպանութիւնների ուսումնասիրութեամբ զբաղուող գիտաճիւղ:*
ՑԵՂԱՍՊԱՆԱՊԱՏՈՒՄ, գ. *Ցեղասպանութեան մասին պատմող ստեղծագործութիւն:*
ՑԵՂԱՍՊԱՆԴ, գ. *Ցեղասպանութիւն:*
ՑԵՂԸՆՏԻՐ, ած. *Ցեղով որոշուած:*
ՑԵՆՏ, գ. *Մանր դրամ մի քանի երկրներում:*
ՑԵՐԲԵՐ, գ. *Յունաց դիցաբանութեան մէջ՝ երեք գլխանի կատաղի շուն:*
ՑԵՐԵԿ, գ. *Օրուայ ժամանակը արեւը ծագելուց մինչեւ մայր մտնելը:*
ՑԵՐԵԿԱՅԻՆ, ած. *Ցերեկուայ յատուկ:*
ՑԵՐԵԿԱՊԱՀ, գ. *Ցերեկը պահապան կանգնող:*
ՑԵՐԵԿԵԱՅ, ՑԵՐԵԿԵԱՆ, ած. *Ցերեկուայ, ցերեկը կատարուող:*
ՑԵՐԵԿՈՅԹ, գ. *Հանդէս, հրաւէրք, որ տեղի է ունենում ցերեկը:* Հկռ. *Երեկոյթ:*
ՑԵՐԵԿՕԹԻԿ, ած. *Երթեւեկ: Ցերեկային:*
ՑԵՑ, գ. (Կենդ.) *Ցեցերի կարգին պատկանող մանր թիթեռ:*
ՑԵՑԱԿԵՐ, ած. *Ցեցից կերուած՝ վնասուած:*
ՑԵՑԿԵԼ, բ. *Հաւի քուջուջ անելը, կուտ փնտռելը:*
ՑԵՑԱԿԻՐ, ած. *Ցեց կրող, ցեցը կերած:*
ՑԵՑՈՏ, ած. *Ցեց դիպած:*
ՑԵՑՈՏԵԼ, բ. *Ցեցով վարակել, ցեցի կերակուր դարձնել:*
ՑԵՑՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցեցոտ լինելը:*
ՑԸ՛, ՑԸ՛Ք, միջ. *Մերժման՝ բացասելու հնչիւն:*
ՑԻԳԱՆ, գ. *Գնչու:* փոխ. *Սաստիկ ժլատ:*
ՑԻԹԻ-ՓԻԹԻ, ած. *Չնչին:*
ՑԻԹՌԱՆ, Տ. *Ցէթռիկ, շռան:*
ՑԻՆ, Տ. *Ուրուր:*
ՑԻՆԳԱ, գ. (Ախտ.) *Հիւանդութիւն, որ առաջ է գալիս կենսանիւթերի պակասութիւնից:*
ՑԻՆԵԼ, բ. *Ցնկնել, ձագ բերել:*
ՑԻՌ, գ. *Վայրի էշ:*
ՑԻՐԿՈՆ, գ. (Հանք.) *Կորունդի նման թանկագին քար:*
ՑԻՐԿՈՆԻՈՆ, գ. (Հանք.) *Պարզ քիմիական մետաղ:*
ՑԻՐՈՒՑԱՆ, ած. մկ. *Ցրուած ու ցանուած:*
ՑԻՑ, գ. *Փայտի ձող՝ մի ծայրը սրած: Երկայն ձող:*
ՑԻՑԵՐՕ, գ. (Տպագր.) *Տպագրական տառ:*
ՑԻՑՔԻԹ, ած. *Ցցուած՝ սուր քիթ ունեցող:*
ՑԻՒ, գ. *Տան ծածկ:*
ՑԼԱԳԼՈՒԽ, ած. *Ցուլի նման գլուխ ունեցող:*
ՑԼԱԾԻՆ, ած. *Ցլից ծնուած:*
ՑԼԱՁԵՒ, ած. *Ցուլի ձեւ ունեցող:*
ՑԼԱՄԱՐՏ, ՑԼԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. *Ցլի հետ կռիւ:*
ՑԼԱՄԱՐՏԻԿ, գ. *Ըմբիշ, որ կրկէսում*

*կռուում է կատաղած ցուլի հետ:*

**ՑԼԱՆ,** ած. *Ցուլ առնելու:*

**ՑԼԱՇՈՒՆ,** գ. (Կենդ.) *Շների մի տեսակը:*

**ՑԼԱՎԱՅՐԻ,** գ. (Կենդ.) *Այժմեան սովորական ցուլի նախնական տեսակը:*

**ՑԼԻԿ,** գ. *Փոքր ցուլ:*

**ՑԼԿՏԵԼ,** բ. *Անխնայ գործածելով մաշել (հագուստը):*

**ՑԼՈՒՈՐ,** ած. *Էգ անասուն (երինջ, կով, մատակ):*

**ՑԽԵԼ,** բ. *Ցեխով ծեփել:*

**ՑԽՐԵԼ,** բ. *Սաստիկ ջարդուել:*

**ՑԿԵԱՆՍ,** մկ. *Մինչեւ կեանքի վերջը:*

**ՑՄԱԽ,** գ. *Ձմեռուան ամպոտ՝ խոնաւ եւ ցուրտ օր:*

**ՑՄԱԽ,** գ. (Բուս.) *Բոյս, որի ոչ միայն տեսակը, այլեւ սեռը եւ կարգը տարբեր կերպով են բացատրուում:*

**ՑՄԱՀ,** մկ. *Մինչեւ մահ:*

**ՑՅԱԳ,** մկ. *Մինչեւ յագենալը:*

**ՑՆԳՈՒԻ**
**ՑՆԳՈՒՈՏ** } Տ. *Քնծռոտ:*

**ՑՆԴԱԲԱՆԵԼ,** բ. *Ցնդածի պէս խօսել:*

**ՑՆԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Ցնդաբանելը, յիմար յիմար դուրս տալը:*

**ՑՆԴԱԲԱՐ,** մկ. *Ցնդած:*

**ՑՆԴԱԾ,** ած. *Խելքը թռցրած:*

**ՑՆԴԱԿԱՆ,** ած. *Ցնդելու յատկութիւն ունեցող:*

**ՑՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Ցնդական լինելը: Ցիմարաբանութիւն:*

**ՑՆԴԵԼ,** բ. *Ցրիւ տալ, սփռել, տարածել: Վատնել: Ցնորել:*

**ՑՆԴԵԼ,** բ. *Ցրիւ գալ, ցիրուցան լինել:* (Ֆիզ.) *Հեղուկ մարմինների՝ գոլորշիանալով ցրուելը:*

**ՑՆԴԵՑՆԵԼ,** անց. ձեւ *Ցնդել'ի,* նոյն նշ.:

**ՑՆԴՈՒՄ,** գ. *Ցնդելը: Ցնորել:*

**ՑՆԾԱԲԵՐ,** ած. *Ցնծութիւն բերող:*

**ՑՆԾԱԼ,** բ. *Սաստիկ ուրախանալ: Կաշառք տալ:*

**ՑՆԾԱԼԻՑ,** ած. մկ. *Ցնծութեամբ լի:*

**ՑՆԾԱՏԵՍԱԿ,** ած. *Ցնծալի տեսք ունեցող:*

**ՑՆԾԱՏՕՆ,** գ. *Ցնծութեան տօն:*

**ՑՆԾԱՒԷՏՈՒԹԻՒՆ,** գ. *Ցնծաւէտ լինելը:*

**ՑՆԾԻՆ ՏԱԼ,** բ. *Ցնծալ:*

**ՑՆԾՈՒԹԻՒՆ,** գ. *Մեծ ուրախութիւն, բերկրութիւն, հրճուանք:*

**ՑՆԾՈՒՆ,** ած. *Ցնծացող:*

**ՑՆԾՈՒՀԻ,** գ. *Պարուհի: Վարձուած պոռնիկ:*

**ՑՆԿՆԵԼ,** բ. *Ձագ բերել:*

**ՑՆՈՐԱԽՕՍ,** ած. *Ցնորական բաներ խօսող: Ցիմար, խելագար:*

**ՑՆՈՐԱԿԱՆ,** ած. *Աչքին թուացող, յիմարական: Այլանդակ:*

**ՑՆՈՐԱԿՈԾ,** ած. *Ցնորքներով կծող՝ չարչարող:*

**ՑՆՈՐԱՄԻՏ,** ած. *Ցնորուած միտք ունեցող: Երեւական:*

**ՑՆՈՐԱՄՏՈՒԹԻՒՆ,** գ. *Ցնորամիտ լինելը: Ցիմարամտութիւն:*

**ՑՆՈՐԵՑՈՒՑԻՉ,** ած. *Նա որ ցնորեցնում է:*

**ՑՆՈՐԻՉ,** ած. *Ցնորեցնող: Խելագարող:*

**ՑՆՈՐՈՒՄ,** գ. *Ցնորուելը:*

**ՑՆՈՐՈՒԵԼ,** բ. *Խելքը միտքը կորցնել: Խօսել՝ գործել առանց գիտակցութեան: Ուշաթափուել:*

**ՑՆՈՐՔ,** գ. *Առաչօք երեւոյթ, կեղծ՝ երեւակայական կերպարանք: Երեւակայութեամբ տարուելը: Խելագարութիւն:*

**ՑՆՑԵԼ,** բ. *Հարուածի ոյժով դողացնել: Ուժով շարժել:*

**ՑՆՑԱԴԷՊ,** գ. *Զգայացունց:*

**ՑՆՑԱԴԷՊԱՅԻՆ,** ած. *Զգայացուն դէպքի վերաբերող:*

**ՑՆՑԻՉ,** ած. *Ցնցող, յուզող:*

**ՑՆՑԽԵԼ,** բ. *Ուրիշի ստացուածքը վատնել:*

**ՑՆՑՂԱԿԱՆ,** ած. *Ցնցուղին յատուկ:*

ՑՆՑՂԱՁԵՒ, ած. *Ցնցուղի ձեւ ունեցող:*
ՑՆՑՂԱՏԱՊ, գ. *Շնչափողի բորբոքում:*
ՑՆՑՂԵՆԻՆԵՐ, գ. (Բուս.) *Աղանգների կարգին պատկանող բոյսեր:*
ՑՆՑՂՆԵԼ, բ. *Ցնցուղով ջուր շաղ տալ:*
ՑՆՑՈՏԱՆՄԱՆ, ած. *Ցնցոտու նման:*
ՑՆՑՈՏԱՒՈՐ, ած. *Ցնցոտիներ հագած:*
ՑՆՑՈՏԻ, գ. *Մաշուած՝ պատառոտուած՝ կարկատուած հագուստ:*
ՑՆՑՈՏԻԱԶԳԵԱՑ, ած. *Ցնցոտի հագած:*
ՑՆՑՈՒՂ, գ. *Շնչառական խողովակ՝ անցք ջրելու ծակոտկէն բերանով աման:*
ՑՆՑՈՒՂԱԴՈՅԼ, գ. *Ցնցուղով դոյլ:*
ՑՆՑՈՒՄ, գ. *Ցնցելը:*
ՑՆՑՈՒՄՆԱԼԻ, ած. *Ցնցումով լի:*
ՑՆՑՈՒՄՆԱՇԱՏ, ած. *Բազմիցս ցնցման մէջ գտնուող, շատ ցնցումներ ունեցող:*
ՑՆՑՈՒՏ, Տ. *Ցնցոտաւոր:*
ՑՆՓՈՐ, ած. *Մեծ փոր ունեցող, հաստափոր: Չտես:*
ՑՆՔՈՒԱԿԱԼԵԼ, բ. *Ջիւնը սառոյցի շերտով ծածկուել:*
ՑՈԼԱԼ, բ. *Պսպղալ, փայլիլ, շողալ::*
ՑՈԼԱԿԱՆ, ած. *Ցոլացող:*
ՑՈԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ցոլալու՝ շողալու յատկութիւն:*
ՑՈԼԱՆԱԼ, բ. Տ. *Ցոլալ: Շողալ:*
ՑՈԼԱՐԱՆ, գ. *Ցոլացնող հայելի, ճառագայթներու կեդրոն:*
ՑՈԼԱՐՁԱԿ, ած. *Փայլ, ցոլք արձակող գործիք:*
ՑՈԼԱՑԻԿ, ած. *Փայլուն, ճառեգեյթող:*
ՑՈԼԱՑՆԵԼ, նբ. *Ճառագայթ հայելացնել, պատկերացնել:*
ՑՈԼԱՑՈՒՄ, գ. *Լոյսի հայելացնում, փայլք:*
ՑՈԼՔ, գ. *Ցոլում: Ճառագայթի փայլ:*
ՑՈԼՔԱԼ, բ. *Սուր եւ ծակող ցաւ զգացուել:*
ՑՈԿԼՈԼԱՅ, ած. *Բարձրահասակ ու նիհար:*
ՑՈՂԱՓՈՇԻ, գ. *Փոշենման ցող:*
ՑՈՅՑ, գ. *Ցուցնելը: Արտաքուստ երեւցնելը: Ապացոյց: Ցայտարարութիւն կմ գործողութիւն, որի տակ թաքնուած է մի որոշ դիտաւորութիւն: Հրապարակային կշտամբանք՝ բողոք:*
ՑՈՐԵԱՆ, Տ. *Ցորեն:*
ՑՈՐԵԿ, գ. *Ցերեկ:*
ՑՈՐԵԿՀԱՑ, գ. *Ցերեկուայ հաց:*
ՑՈՐԵՆ, գ. (Բուս.) *Հասկաւոր խոտազգիների կարգին պատկանող տարեկան բոյս: Ցորենի սերմը, հատիկը:*
ՑՈՐԵՆԱԲԱՇԽ, ած. *Ցորեն բաժանող:*
ՑՈՐԵՆԱԲԵՐ, ած. *Ցորեն բերող:*
ՑՈՐԵՆԱԶԳԻՆԵՐ, գ. (Բուս.) *Խոտազգիների կարգի տակ հացաբոյսերի ցեղ:*
ՑՈՐԵՆԱԼԻՒՐ, գ. *Ցորենից աղացուած ալիւր:*
ՑՈՐԵՆՀԱՏ, գ. *Ցորենի մի հատիկ:*
ՑՈՐԵՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Ցորեն ծեծելը:*
ՑՈՐԵՆԱՂԱՆՁ, գ. *Աղանձած ցորեն:*
ՑՈՐԵՆԱՇԱՀ, ած. *Ցորենի առեւտուրից ապօրինի շահ ստացող:*
ՑՈՐԵՆԱՇԱՏ, ած. *Որտեղ ցորեն շատ կայ:*
ՑՈՐԵՆԱՊՈՒՐ, գ. *Ցորենից պատրաստուած պասուայ ապուր:*
ՑՈՐԵՆԱՎԱՃԱՌ, ած. գ. *Ցորենի վաճառական:*
ՑՈՐԵՆԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Ցորենի առեւտուր:*
ՑՈՐԵՆԱՏԵՍԱԿ, ած. *Ցորենի տեսակ:*
ՑՈՐԵՆԱՏԷՐ, գ. *Ցորենի տէրը:*
ՑՈՐԵՆԱՒԵՐ, ած. *Ցորենը աւերող:*
ՑՈՐԵՆՀԱՑ, գ. *Ցորենալիւրից պատրաստուած հաց:*
ՑՈՐԵՆՈՒԿ, գ. *Մի տեսակ վայրի խոտ:*
ՑՈՐԵՆՔԱՂ, գ. *Ցորենը քաղելը:*
ՑՈՐՆԱԽՈՒՐՁ, գ. *Ցորենի՝ հասկի կապուկ:*
ՑՈՐՆԱՀԻՒՍՔ, գ. *Ցորենագոյն՝ ցորենագոյն հիւսք:*

**ՑՈՐՑԵՆԻ**, գ. (Բուս.) *Ցորցենիների ցեղին պատկանող ծառ եւ թուփ:*
**ՑՈՒԻՔ**, գ. *Ցիւ, ցիւեր: Փայտէ կտուր:*
**ՑՈՒԼ**, գ. (Կենդ.) *Խոշոր ընտանի չորքոտանի անասուն արական սեռի:* (Աստղաբ.) *Զոդիակոսի տասներկու կենդանակերպներից մէկը:*
**ՑՈՒՆՑ**, գ. *Ցնցում:*
**ՑՈՒՊ**, գ. *Ձեռքի գաւազան: Մահակ:*
**ՑՈՒՊԻԿ**, գ. *Փոքրիկ ցուպ:*
**ՑՈՒՌԻ-ՄՈՒՌԻ**, մկ. *Տակից վրայից:*
**ՑՈՒՐՏ**, ած. *Ջերմութիւն չունեցող: Պաղ:*
**ՑՈՒՑ**, գ. *Ուրախութեան պար ու երգ:*
**ՑՈՒՑԱԲԵՐԵԼ**, բ. *Ցոյց տալ, արտայայտել:*
**ՑՈՒՑԱԴԱՇՏ**, գ. *Հող կմ դաշտ, որ մշակւում է օրինակելի ձեւով:*
**ՑՈՒՑԱԴՐԵԼ**, բ. *Ի ցոյց դնել: Ցայտնել: Հրապարակացոյց տալ:*
**ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ցուցադրելը: Ցուցահանդէս:*
**ՑՈՒՑԱԿ**, գ. *Ինչ որ ցոյց է տալիս մի բան: Ցանկ:*
**ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼ**, բ. *Ցուցակի մէջ գրել, ցուցակ մտցնել՝ կազմել:*
**ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ցուցակագրելը: Ցուցակ կազմելը:*
**ՑՈՒՑԱԿԱՆ**, ած. *Ցոյցին յատուկ, վերաբերեալ:*
**ՑՈՒՑԱԿԱՐԱՐ**, ած. *Ցոյց անող:*
**ՑՈՒՑԱԿՈՒԵԼ**, բ. *Ցուցակով ներկայացուել:*
**ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ**, գ. *Գեղարուեստի կմ տեխնիկայի արտադրութիւններն ի ցոյց դնելը:*
**ՑՈՒՑԱՄԱՏ**, գ. *Բութ մատի կողքին եղած մատը:*
**ՑՈՒՑԱՄՈԼ**, ած. *Նա որ չափազանց սիրում է իրեն ցոյց տալ:*
**ՑՈՒՑԱՄՈԼԱԿԱՆ**, ած. *Ցուցամոլին յատուկ:*
**ՑՈՒՑԱՄՈԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ցուցամոլ լինելը:*
**ՑՈՒՑԱՆԱԿ**, ած. *Ցոյց տուող, ցուցիչ:* (Քրկն.) *Սա, դա, նա, այս, այդ, այն դերանունները:*
**ՑՈՒՑԱՆԱԿ**, գ. *Նշան, նշանակ:* Նման. *Խարդախութիւն: Խանութի, պանդոկի ցուցատախտակ:*
**ՑՈՒՑԱՆԱԿԱԿԻՐ**, ած. *Ցուցանակ կրող:*
**ՑՈՒՑԱՆԻՇ**, գ. *Ինչ որ ցոյց է տալիս մի բան: Արդիւնքի չափանիշ:*
**ՑՈՒՑԱՆՄՈՇ**, գ. *Ցոյցի համար դրուած նմոյշ:*
**ՑՈՒՑԱՆՔ**, գ. *Ցոյց տալու բան:*
**ՑՈՒՑԱՆՔԱՅԻՆ**, ած. *Հրէշային:*
**ՑՈՒՑԱՊԱԿԻ**, գ. *Ցուցափեղկի ապակին:*
**ՑՈՒՑԱՊԱՏՈՒԱՆԴԱՆ**, գ. *Պատուանդան, որի վրայ ներկայացւում են ցուցանմուշները:*
**ՑՈՒՑԱՄԷՐ**, Տ. *Ցուցամոլ:*
**ՑՈՒՑԱՐԱՐ**, ած. գ. *Ցոյց կազմակերպող, ցոյցին մասնակցող:*
**ՑՈՒՑԱՓԵՂԿ**, գ. *Խանութներում, թանգարաններում եւն տափակ արկղ ապակիատր կափարիչով: Վաճառքի նմոյշ ցուցադրող փեղկ:*
**ՑՈՒՑԻՉ**, ած. գ. *Նա որ ցոյց է տալիս, ցուցնող: Ցոյց տուող:*
**ՑՈՒՑՆԵԼ**, բ. *Ցոյց տալ: Ապացուցանել: Արտայայտել: Ցայտնել:*
**ՑՈՒՑՈՂԱԿԱՆ**, ած. *Ցուցնող. երեւցնող:*
**ՑՈՒՑՄՈՒՆՔ**, գ. *Նշան, նշանակ: Ապացոյց, փաստ: Մի բան ցոյց տալը: Դիտողութիւն, նկատողութիւն: Վկայութիւն: Հրահանգ, պատուէր:*
**ՑՈՒՑՈՒԱԾ**, ած. *Ցոյց տրուած:*
**ՑՈՒՓԼԻԿ**, ած. մկ. *Կոկիկ:*
**ՑՈՓ**, ած. *Մեղկ, թոյլ, թուլամորթ: Ջեղխ, անառակ:*
**ՑՈՓԱԲԱՆ**, ած. *Ցոփ բաներ խօսող:*
**ՑՈՓԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ցոփաբան լի-*

*նելը, լկտի բաներ խօսելը:*
**ՑՈՓԱԲԱՐ**, մկ. *Ցոփի պէս:*
**ՑՈՓԱԲԵՐԱՆ**, ած. *Ցոփ բերան ունեցող, անպարկեշտ բաներ խօսող:*
**ՑՈՓԱԽՕՍՈՒԹԻՒՆ**, Տ. *Ցոփաբանութիւն:*
**ՑՈՓԱԿԱՆ**, ած. *Ցոփին յատուկ:*
**ՑՈՓԱԿԵԱՑ**, ած. *Ցոփ, անառակ կեանք վարող:*
**ՑՈՓԱԿԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ցոփ՝ անառակ կեանք, անառակութիւն:*
**ՑՈՓԱՆԱԼ**, բ. *Ցոփ՝ անառակ դառնալ:*
**ՑՈՓԱՆՔ**, գ. յոգն. *Ցոփանալը, ցոփութիւն:*
**ՑՈՓՈՒԹԻՒՆ**, գ. *Ցոփ լինելը:*
**ՑՈՓՈՒՀԻ**, գ. *Ջէխ, շուայտ, անառակ կամ լկտի, լպիրշ կեանք վարող կին:*
**ՑՊԻԿ**, Տ. *Ցուպիկ:*
**ՑՌԱԼՈՃ**, ած. *Ալոճի վատ տեսակը, մանր:*
**ՑՌԱՆ**, ած. *Շարունակ փորլուծութիւն ունեցող:* Փոխ. *Վախկոտ, երկչոտ:*
**ՑՌԵԼ**, բ. *Փորը լուծել ջրալի կղկղանքով:*
**ՑՌԹԱՄԱՆ**, գ. *Շան՝ գայլի՝ իշու եւն արգանդ:*
**ՑՌԹԵԼ**, բ. Ցնկնելը: (Անարգաբար), *Կնոջ ծնելը:*
**ՑՌԻԿ**, գ. *Մանր ձուկ:*
**ՑՌԿԱԿԱՊ**, գ. *Ցռուկի կապ:*
**ՑՌԿԱՁԵՒ**, ած. *Ցռուկի ձեւ ունեցող: Քթուձեւ:*
**ՑՌԿԱՆԱՒ**, գ. *Հին պատերազմական նաւեւ ցռկաձեւ քթով:*
**ՑՌԿԱՒՈՐ**, ած. *Ցռուկ ունեցող:*
**ՑՌՈՏ**, ած. *Ցռող, ցռան: Սաստիկ փորլուծած:*
**ՑՌՈՏԵԼ**, բ. *Ցեռով ապականել:*
**ՑՌՈՒԿ**, գ. *Եզան եւ նման անասունների դուրս ցցուած քիթն ու բերանը:*
**ՑՌՊՏՂԻ**, գ. (Բուս.) *Մարգաւորների կարգին պատկանող թուփ կմ կարճահասակ ծառ:*
**ՑՌՑՌՈՒԿ**, գ. *Ցեռ, ցռոտուելը:*
**ՑՌՕՆ**, գ. *Աթար:*
**ՑՎՐՏԵԼ**, բ. *Ցրիւ տալ, ցիրուցան անել:*
**ՑՎՐՏՈՒԿ**, ած. *Ցիրուցան թափթփուած:*
**ՑՎՑՎԵԼ**, բ. *Բուրդը մատներով քրքրել:*
**ՑՏԵՍՈՒԹԻՒՆ**, միջ. *Հրաժեշտ տալու բանաձեւ:*
**ՑՐԵԼ**, բ. *Ցիրուցան անել, ցրիւ տալ: Բաժանել, Փարատել:*
**ՑՐԵԽ-ՑՐԵԽ**, մկ. *Փշուր-փշուր, ջարդուբուրդ:*
**ՑՐԻՉ**, ած. *Նա որ ցրում է, ծառայող:*
**ՑՐԻՒ**, մկ. *Ցիրուցան եղած: Քանդել, ոչնչացնել:*
**ՑՐՈՂԱԿԱՆ**, ած. (ժրգ.): *Խուսափողական:*
**ՑՐՈՒԱԾ**, ած. Անց. դերբ. *Ցրուել՚ի:*
**ՑՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ցրուած լինելը:*
**ՑՐՈՒԵԼ**, բ. *Ցիրուցան անել, ցրիւ տալ:* Հկր. *Կենտրոնացնել: Շարուածքը, տըպագրութիւնից յետոյ, քանդել: Անջատուել: Միտքը ուրիշ բանով զբաղուած լինել:*
**ՑՐՈՒԻՉ**, ած. գ. *Նա որ ցրուում է, ցրուող:*
**ՑՐՈՒՄ**, գ. *Ցրելը:*
**ՑՐՈՒՈՒԹԻՒՆ**, գ. *Ցրուելը:*
**ՑՐՏԱԲԱՆ**, ած. *Սառը բաներ խօսող:*
**ՑՐՏԱԲԵԿ**, Տ. *Ցրտահար:*
**ՑՐՏԱԲԵՐ**, ած. *Ցուրտ բերող:*
**ՑՐՏԱԳԻՆ**, ած. *Շատ ցուրտ:*
**ՑՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ցրտական լինելը:*
**ՑՐՏԱԿԵԶ**, ած. *Ցրտից զարկուած:*
**ՑՐՏԱՀԱՐ**, ած. *Ցրտից զարկուած:*
**ՑՐՏԱՀԱՐՈՒԵԼ**, բ. *Ցրտից զարկուել:*
**ՑՐՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ցրտահար լինելը:*
**ՑՐՏԱՄԻՏ**, ած. *Սառը՝ պաղ (մարդ):*
**ՑՐՏԱՆԱԼ**, բ. *Ջերմութիւնը պակասել:*

*Պաղիլ, ցրտիլ:*

**ՑՐՏԱՇՈՒՆՉ**, ած. *Երբ ցուրտ քամիներ են փչում:*

**ՑՐՏԱՉԱՓ**, գ. *Ցրտութիւնը չափելու գործիք:*

**ՑՐՏԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Պաղութիւն, ցուրտի պատճառած հիւանդութիւն:*

**ՑՐՏԱՄԱՌՈՅՑ**, ած. *Ցրտից սառած:*

**ՑՐՏԱՍՈՎՈՐ**, ած. *Ցրտին սովորած:*

**ՑՐՏԱՏԱՐ**, ած. *Ինչ որ ցուրտը տարել է, ցրտից սառած:*

**ՑՐՏԱՐԱՆ**, գ. *Սառը ջրով լիքը աման: Ուր որ ցուրտ է:*

**ՑՐՏԱՑՈՒՄ**, գ. *Ցրտանալը:*

**ՑՐՏԱՑՈՒՑԻՉ**, ած. *Նա որ ցրտացնում է:*

**ՑՐՏԵԼ**, բ. *Ցուրտն ընկնել:*

**ՑՐՏԿՈՆ**, գ. *Ցայտած հեղուկը:*

**ՑՐՏՈՒԹԻՒՆ**, գ. *Ցուրտ լինելը:*

**ՑՐՑԱՄ**, գ. *Բերանով, ձեռքով կմ աւելով ջուր սրսկելը:*

**ՑՐՔԵԼ**, բ. *Թափել:*

**ՑՐՕՆՔ**, յոգն. գ. *Ցրուելը:*

**ՑՑԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ցից զարնելը:*

**ՑՑԱՊԱՏ**, ած. *Ցցերով պատած:*

**ՑՑԱՊԱՏՆԷՇ**, գ. *Պատնէշ, մի շարք ցցեր կողք կողքի խփելով:*

**ՑՑԱՊՈՋ**, ած. *Ցցուն պոզեր ունեցող: Կոտոշներ:*

**ՑՑԱՄԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Խաղ ասելը:*

**ՑՑԱՎԱՐ**, ած. գ. *Մի տեսակ պակասաւոր հերկ:*

**ՑՑԵԼ**, բ. *Ցցի նման խրել մի բանի մէջ: Ցից կանգնեցնել:*

**ՑՑՈՒՄ**, գ. *Ցցելը:*

**ՑՑՈՒՆՔ**, գ. *Գլխի մազերի ցցուած փունջ:*

**ՑՑՈՒԱԾՔ**, գ. *Ցից կանգնելը:*

**ՑՓԼՌ**, ած. *Ցոփաբերան:*

**ՑՓՆԵԼ**, բ. *Սփռել:*

**ՑՓՆԻ**, գ. *Այծի մասէ հիւսուած կերպասեղէն:*

**ՑՓՌԱԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ցփռբերան լինելը: Անպարկեշտ բաներ խօսող:*

**ՑՔԱՀԱՆ**, ած. գ. *Ցքի ՝ օղի հանող:*

**ՑՔԻ**, գ. *Արմաւից քաշած օղի:*

**ՑՕՂ**, գ.*Օդի գոլորշի, որ հեղուկանալով՝ ջրի մանր կաթիլների նման նստում է:*

**ՑՕՂ**, գ. *Արեգակի ճառագայթ, շող, ցոլք:*

**ՑՕՂԱԲԵՐ**, ած. *Ցօղ բերող:*

**ՑՕՂԱԳՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ցօղագնելը:*

**ՑՕՂԱԶԱՐԴ**, ած. *Ցօղով զարդարուած:*

**ՑՕՂԱԹԱԹԱԽ**, ած. *Ցօղով թաթախուած:*

**ՑՕՂԱԹՈՒՐՄ**, ած. *Ցօղով թրջուած:*

**ՑՕՂԱԼ**, բ. *Բարակ անձրեւ գալ:*

**ՑՕՂԱԾԻՆ**, ած. *Ցօղ ծնող:*

**ՑՕՂԱԿԵՐՊ**, ած. *Ցօղի կերպ:*

**ՑՕՂԱՇԱՏ**, ած. *Որտեղ շատ ցօղ է իջնում:*

**ՑՕՂԱՊԱՃՈՅՃ**, ած. *Ցօղազարդ:*

**ՑՕՂԵԼ**, բ. *Ցօղ ՝ բարակ անձրեւ իջնել:*

**ՑՕՂԵՂՀԱՄ**, գ. *Բոյսերու վրայի սառած ցօղը:*

**ՑՕՂԻԿ**, գ. (Փաղաքշ.) *Փոքր ՝ մանր ցօղ, անուշ ցօղ:*

**ՑՕՂՈՒՄ**, գ. *Ցօղելը:*

**ՑՕՂՈՒՆ**, ած. *Ցօղ պարունակող, ցօղալից:*

**ՑՕՂՈՒՆ**, գ. *Բոյսի առանցքը կազմող մասը: Կոթ, մղոտ:*

**ՑՕՂՈՒԵԼ**, բ. *Թեթեւ անձրեւել:*

**ՑՕՇ**, գ. *Ծծումբ:*

**ՑՕՓԻԱՆ**, ած. *Կատաղի:*

# Ւ, ւ

ւ, Իւն գ. *Հայերէն այբուբենի երեսուն-չորրորդ տառը եւ եօթներորդ ձայնաւորը: Թուարկութեան եօթը հազարի համարժէք: Եօթը հազարերորդ:*
**ԻԹԵՂԻՆԱՋՈՒԱՐԹ**, ած. (Կրօն.) *Հիւթեղէն եւ զուարթուն:*
**ԻԻՆ**, գ. *Իիւն գրի անունը:*
**ԻԻՆԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ուղղագրական ձեւ:*
**ԻԻՍԱՊԱՅԾԱՌ**, փխկ. *Հիւսապայծառ:*
**ԻՒՔ**, գ. *Նախանձ:*

# Փ, փ

Փ, փ. Փիւր, գ. *Հայերէն այբուբենի երեսունհինգերորդ տառը եւ քսանութերորդ բաղաձայնը: Թուարկութեան ութ հազարի համարժէք: Ութ հազարերորդ:*
**ՓԱԳՈՒՐ**, գ. (Կենդ.) *Խեցգետինների կարգին պատկանող խեցգետին:*
**ՓԱԳՐՈՍ**, գ. *Նեղոս գետում ապրող մեծ ձուկ:*
**ՓԱԹ**, գ. *Մի կտոր կմ պարան առարկայի շուրջը մի քանի անգամ փաթաթելը: Անգամ:*
**ՓԱԹ**, (Մանկ.), գ. *Ընկնելը:*
**ՓԱ՛Թ**, միջ. *Պայթիւնի ձայն:*
**ՓԱԹԱԹԱՆ**, գ. *Ինչով որ փաթաթում են, լաթի երկայն երիզ: Լաթի կտոր: Կապոց, կապ:*
**ՓԱԹԱԹԵԼ**, բ. *Թել՝ թոկ կմ երկայն երիզ մի առարկայի շուրջը պտոյտ տալով առարկայի վրայ նստեցնել: Կապել:*
**ՓԱԹԱԹՈՒԿ**, գ. *Ինչ որ մի քանի փաթ փաթաթուած է, կծիկ:*
**ՓԱԹԱԿ**, գ. *Գինու մի չափ:*
**ՓԱԹԱՔՈՒՐ**, ած. *Խոչած:*
**ՓԱԹԵԹ**, գ. *Փաթաթած բան: Կապոց:*
**ՓԱԹԵԹՈՒԱԾՔ**, գ. *Փաթեթաւորում:*
**ՓԱԹԵԹՕՐՀՆԷՔ**, գ. (Եկեղ.) *Հարսի օժիտի փաթեթը օրհնելը:*
**ՓԱԹԵԼ**, Փխկ. *Փաթաթել:* բ. *Շրջապատել:*
**ՓԱԹԵՐԱԿ**, *թշնամութիւն*, գ. *Չար աչքից վնասուել: Փորձանք:*
**ՓԱԹԵՐԱԿԱՒՈՐ**, ած. *Փորձանքաւոր, վտանգաւոր:*
**ՓԱԹԹԵԼ**, Տ. *Փաթաթել: Կապել:*
**ՓԱԹԹՈՑ**, գ. Տ. *Փաթաթան:*
**ՓԱԹԹՈՒԿ**, ած. *Փաթաթուած:*
**ՓԱԹԻԼ**, գ. *Ձիւնի մեծ կտոր:*
**ՓԱԹԻԼԱԲՈՅՐ**, ած. *Փաթիլի բոյր ունեցող:*
**ՓԱԹԻՐԻ**, ած. *Կեղծ:*
**ՓԱԹՈՅԹ**, գ. *Փաթաթելը:*
**ՓԱԹՈՒԹԵԼ**, բ. *Փաթոյթ անել, փաթաթել:*
**ՓԱ՛Թ-ՓՈ՛ՒԹ**, միջ. *Հրացանի հարուածի, ուժգին բախիւնի եւն ձայներ:*
**ՓԱԼ**, գ. *Ճիւղ:*

**ՓԱԼԱԽԱ, ՓԱԼԱԽԱՅ**, (Թրք.) գ. *Թոկ՝ երկու ծայրը մի ձողի վրայ: Ոտքերու տակ ծեծելու համար:*
**ՓԱԼԿՏԱԼ**, բ. *Թաւալուել:*
**ՓԱԼՓԼԻԼ**, նբ. *Փայլիլ, պսպղալ:*
**ՓԱԼՓԼՈՒՆ**, ած. *Պսպղուն, փայլուն:*
**ՓԱԽ**, գ. *Փախչելը, փախուստ: Ժողովրդական աղէտ, երբ արշաւող թշնամու հալածանքից կմ երկիւղից՝ մի տեղի ազգաբնակութիւնը, տուն-տեղ թողնելով, խմբովին ու խուճապով հեռանում է:*
**ՓԱԽԱԾ**, ած. *Խենթ, յիմար: Փախուստ տուած:*
**ՓԱԽԱՏՈՒԱԾ**, ած. մկ. *Փախստական:*
**ՓԱԽՆԵԼ**, բ. *Փախչել:*
**ՓԱԽՆԷՓԱԽ**, մկ. *Մէկը միւսի յետեւից փախչելով:*
**ՓԱԽՈՒԿ**, ած. *Փախած: Անխելք:*
**ՓԱԽՈՒՍՏ**, գ. *Փախչելը, շտապով մի տեղից հեռանալը: Խուսափելը մի բանից: Դասալիք լինելը:*
**ՓԱԽՈՒՑԻՉ**, ած. *Նա որ փախցնում է, փախցնող:*
**ՓԱԽՉԵԼ**, բ. *Արագ ընթանալով հեռանալ մի տեղից: Հալածողներից հեռանալ: Չքանալ, անհետանալ: Դասալիք լինել:*
**ՓԱԽՉԵԼԻ**, ած. *Ինչից որ պէտք է կմ կարելի է փախչել:*
**ՓԱԽՉԿՈՏ**, ած. *Փախչող:*
**ՓԱԽՉՈՒԹԻՒՆ**, գ. *Փախչելը:*
**ՓԱԽՍ**, գ. *Փախուստ, Խուսափելը:*
**ՓԱԽՍՏԱԿ**, փխկ. *Փախստական:*
**ՓԱԽՍՏԱԿԱՆ**, ած. գ. *Փախչող, Կալանքից ճողոպրած: Տեղէ մը փախած:*
**ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Փախստական լինելը:*
**ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒՀԻ**, գ. *Փախստական կին:*
**ՓԱԽՍՏԱԿԻՑ**, ած. գ. *Փախուստին մասնակից*
**ՓԱԽՍՏԵԱՅ**, Տ. *Փախստական:*
**ՓԱԽՑՆԵԼ**, բ. անց. ձեւ *Փախչել'ի: Յափըշտակել ու փախչել: Գողունի կերպով սահմանից ապրանք անց կացնել առանց մաքսի:*
**ՓԱԽՑՆՈՎԻ**, ած. *Փախցրած:*
**ՓԱԽՑՈՒԿ**, ած. *Փախցուած:*
**ՓԱԾԵՂՆՈՏԵԼ**, բ. *Փայծաղի հիւանդութիւն ունենալ:*
**ՓԱԾԻՆ**, գ. *Վայրի թռչու խնձոր:*
**ՓԱԿ**, գ. Արմ. *Փակել'ի. Փակելը: Կողպէք: Գոց, կղպուած տան շրջափակը:* Հկր. *Բաց:*
**ՓԱԿԱԲԱՐ**, մկ. *Փակ կերպով:*
**ՓԱԿԱԳԻԾ**, գ. *Տրոհութեան նշան:* (Մաթ.) *Նոյն նշանը, որ գործ է դրուում հանրահաշուի մէջ:*
**ՓԱԿԱԳԻՐ**, գ. *Սղագրութեան մի ձեւ:*
**ՓԱԿԱԳԾԵԼ**, բ. *Փակագծի մէջ գրել:*
**ՓԱԿԱԿԱԼ**, ած. գ. *Նա որ պահում է մի շինութեան դրան փակը՝ բանալին, իրաւունք ունի դուռը բանալու:*
**ՓԱԿԱՂ**, գ. *Շինութիւն, որի մէջ փակուած պահում ու դարմանում են արջառներ եւ ձիեր:*
**ՓԱԿԱՂԱԿ**, գ. *Դուռը փակելու յարմարանք:*
**ՓԱԿԱՆ**, գ. (Կազմախ.*), Սրտի խուցերու միջեւ փականք կմ կափարիչ:*
**ՓԱԿԱՆԱԳՈՐԾ**, գ. *Կղպանք շինող արհեստաւոր:*
**ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ**, ած. *Փականագործին եւ փականագործութեան յատուկ:*
**ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱՐԱՆ**, գ. *Փականագործի արհեստանոց:*
**ՓԱԿԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Փականագործի կղպանք շինելու արհեստը:*
**ՓԱԿԱՆՔ**, գ. *Որեւէ յարմարանք, որով փակում են դուռը: Կղպանք:* Փոխ. *Կապ՝ արգելք մի բան անելու:*
**ՓԱԿԱՐԱՆ**, գ. *Փակելու յարմարանք:*

ՓԱԿԲԵՐԱՆ, ած. *Լռակեաց, զաղտնապահ։* Հկռ. *Բացբերան։*
ՓԱԿԵԼ, բ. *Բանալիով՝ կողպէքով կողպել։ Գոցել։*
ՓԱԿԵՂ, գ. (Կազախ.) *Սպիտակ՝ փայլուն՝ պինդ թաղանթ։*
ՓԱԿԵՂԱԿ, գ. *Ծխամորճի գլուխը։*
ՓԱԿԵՂՆ, գ. *Գլխի ծածկոյթ,* (Եկեղ.) *Վեղար։*
ՓԱԿԻՉ, գ. *Նա որ փակում է, փակող։*
ՓԱԿՈՏԵԼ, բ. յճխ. ձեւ *Փակել՛ի։*
ՓԱԿՈՑ, գ. *Ընդհանրապէս՝ փակելու յարմարանք։*
ՓԱԿՈՑ, *Ժամանակաւոր պատնէշ՝ պարիսպ։*
ՓԱԿՈՑԱՊԱՀ, գ. *Փակոցի՝ ուղեկալի պահապան եւ սպասարկող։*
ՓԱԿՈՒԿ, ած. *Փակուած, կողպուած։*
ՓԱԿՈՒՂԱՅԻՆ, ած. *Փակուղուն բնորոշ։*
ՓԱԿՈՒՂԻ, գ. *Երկաթուղային կայարաններում երկաթուղագծի կարճ ճիւղ՝ ծայրը արուեստական կերպով փակուած։*
ՓԱԿՈՒՄ, գ. *Փակելը, փակուելը։*
ՓԱԿՉԵԼ, բ. *Կպչել մի բանի։*
ՓԱԿՉՈՒՆ, ած. *Փակչելու յատկութիւն ունեցող։ Կպչուն։*
ՓԱԿՉՏԵԼ, յճխ. ձեւ *Փակչել՛ի։*
ՓԱԿՑԱՆՔ, գ. *Կպչան։*
ՓԱԿՑՆԵԼ, բ. անց. ձեւ *Փակչել՛ի,* նոյն նշ.։ *Կպցնել։*
ՓԱ՜Հ, միջ. *Զարմացական բացագանչութիւն։*
ՓԱՀԼ, գ. *Արուձի։*
ՓԱՂ, գ. *Կենդանիների զուգաւորուելը։*
ՓԱՂԱԲՈՒՇՏ, գ. *Միզափամփուշտ։*
ՓԱՂԱԿԵՐՊ, ած. *Համակերպ։*
ՓԱՂԱՂԵԼ, բ. *Բոցակիզել, տոչորել։*
ՓԱՂԱՂ, գ. *Հացի համար խմորէն փրցուած խոշոր։*
ՓԱՂԱՂԵԼ, նբ, *Ալիւրը շաղախել, փաղաղ դարձնել։ Բզկտել, լափել։*
ՓԱՂԱՂԻՉ, ած. *Լափող։*
ՓԱՂԱՆԳ, գ. *Զօրաբանակ, (մասնաւորապէս՝ մակեդոնական գունդ)։*
ՓԱՂԱՆԳ, (Կենդ.) *Սարդերի մի առանձին կարգի միջատ։*
ՓԱՂԱՆԳԱԿԱՆ, ած. *Փաղանգին՝ զօրաբանակին յատուկ։*
ՓԱՂԱՆԳԱՄՈՒՇԿ, գ. (Բուս.) *Շրթնածաղիկների կարգին պատկանող համեմաւոր բոյս։*
ՓԱՂԱՆՇԱՆ, ած. *Համանշան, նոյնանիշ։*
ՓԱՂԱՆՈՒՆ, ած. *Համանուն, անուանակից։ Հոմանիշ։*
ՓԱՂԱՆՈՒՆԱԲԱՐ, մկ. *Ինչպէս փաղանուն։ Անունակից։*
ՓԱՂԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. *Փաղանուն լինելը։*
ՓԱՂԱՌԵԼ, բ. *Մի քանի հնչիւն միասին վերցնել։ Վանկ կազմել։*
ՓԱՂԱՌՈՒ, ած. *Միասին վերցնող։*
ՓԱՂԱՍԵՌ, ած. *Նոյնասեռ, նոյն սեռի տակ մտնող։*
ՓԱՂԱՐԻԿ, գ. (Կենդ.) *Ջրային քաղցրաձայն թռչուն։*
ՓԱՂԱՐԻԿ, գ. (Բուս.) *Խոտազգիների կարգին պատկանող բոյս։*
ՓԱՂԱՔՇԱԲԱՆ, ած. *Փաղաքշական լեզուով խօսող։ Փայփայիչ, զգուանք արտայայտող։*
ՓԱՂԱՔՇԱԲԱՐ, մկ. *Փաղաքշանքով, փաղաքշելով։*
ՓԱՂԱՔՇԱԿԱՆ, ած. *Փաղաքշանք՝ փայփայանք արտայայտող։*
ՓԱՂԱՔՇԱԿԱՆՕՐԷՆ, բ. *Փաղաքշական կերպով, փայփայալից։*
ՓԱՂԱՔՇԱՆՔ, գ. *Փաղաքշելը։*
ՓԱՂԱՔՇԵԼ, բ. *Փաղաքշանք արտայայտել։*

ՓԱՂԱՔՇԵԼԻ, ած. *Ինչ որ կարելի է կմ պէտք է փաղաքշել: Գգուելի, փայփայելի:*
ՓԱՂԱՔՇՈՏ, ած. *Շատ փաղաքշող:*
ՓԱՂԱՔՇՈՒԹԻՒՆ, Տ. *Փաղաքշանք:*
ՓԱՂԱՔՈՒՇ, ած. *Անուշ լեզու, շողոքորթ:*
ՓԱՂԵԼ, բ. *Միացնել:*
ՓԱՂԷԺ, գ. *Ինչ-որ թունաւոր սարդ:*
ՓԱՂՈՒԹԻՒՆ, գ. *Խօսքի կապակցութիւն, պարբերութիւն:*
ՓԱՂՊԻԱԿԱՆ, ած. *Հռչակուած:*
ՓԱՂՓԻԼ, նբ. *Շողալ, փալփլիլ:*
ՓԱՂՓՈՒՆ, ած. *Փալփլուն, շողշողուն, պսպղուն:*
ՓԱՄՓԼԻԿ, ած. *Փափլիկ:*
ՓԱՄՓՇՏԱԺԱՊԱՒԷՆ, գ. *Փամփուշտների տեղաւորման ժապաւէն:*
ՓԱՄՓՇՏԱԿԱԼ, ած. գ. *Փամփուշտ տեղադրելու կաշիէ աման կմ կտորից զրպան կուրծքի վրայ, փամփուշտներ:*
ՓԱՄՓՇՏԱՀԱՏ, գ. *Փամփիշտահատութիւն կատարող բժիշկ:*
ՓԱՄՓՇՏԱՀԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Միզափամփուշտի վիրահատութիւն:*
ՓԱՄՓՇՏԱՅԻՆ, ած. *Միզափամփուշտին յատուկ:*
ՓԱՄՓՇՏԱՆՈՑ, Տ. *Փամփիշտակալ:*
ՓԱՄՓՇՏԱՆՈՑ, *Հրազէնի մաս՝ լիցքային խցիկ:*
ՓԱՄՓՇՏԱՊԱՐԿ, գ. *Փամփուշտ պարունակող պարկ:*
ՓԱՄՓՇՏԻԿ, գ. *Փոքրիկ փամփուշտ:*
ՓԱՄՓՇՏՈՒԿ, գ. (Բուս.*) Զրիմուռների մի տեսակ մինչեւ 30 սանտիմ. բարձրութեամբ:*
ՓԱՄՓՈՒՇՏ, գ. *Հրազէնի համար գործածուող գնդաձեւ սնամէջ իր:*
ՓԱՅԱՌԱԿԱՆ, (Պարս.) ած. *Ոտնառական, որտեղ ոտքը քարի դէմ է առնում:*
ՓԱՅԱՌՈՒԹԻՒՆ, (Պարս.) գ. *Ոտքը քարին դէմ քալը: Ոտնառութիւն:*

ՓԱՅԻԼ, նբ. *Շողալ, պսպղիլ, ճառագայթել:*
ՓԱՅԼ, գ. *Պայծառ լոյս:* Փոխ. *Պայծառութիւն: Ցոլք:*
ՓԱՅԼԱԾՈՒ, գ. *Արեգակնային համակարգի մոլորակներից մէկը:*
ՓԱՅԼԱԾՈՒՄ, գ. *Փայլածելը: Ցոլացում:*
ՓԱՅԼԱԿ, գ. *Կայծակի լոյսը:*
ՓԱՅԼԱԿԱԲԱՐ, Տ. *Փայլակնաբար:*
ՓԱՅԼԱԿԱՆ, գ. *Բուրգ:*
ՓԱՅԼԱԿԵՐՊ, ած. *Փայլուն կերպարանք ունեցող:*
ՓԱՅԼԱԿԻՐ, ած. *Փայլ կրող:*
ՓԱՅԼԱԿՆԱԲԱՐ, մկ. *Փայլակի նման:*
ՓԱՅԼԱԿՆԱԲՈՐԲՈՔ, ած. *Փայլակի պէս բորբոքուած:*
ՓԱՅԼԱԿՆԱԿԵՐՊ, ած. *Փայլակի նման, փայլակի տեսքով:*
ՓԱՅԼԱԿՆԱԿԵՐՏ, ած. *Փայլակներից կերտուած:*
ՓԱՅԼԱԿՆԱՀԱՐ, ած. *Կայծակնահար:*
ՓԱՅԼԱԿՆԱՁԵՒ, ած. *Փայլակի ձեւով, նման, փայլակնակերպ:*
ՓԱՅԼԱԿՆԱՆՄԱՆ, ած. *Փայլակի նըման:*
ՓԱՅԼԱԿՆԱՊԱՅԾԱՌ, ած. *Փայլակի նման պայծառ:*
ՓԱՅԼԱԿՆԱՑԱՅՏ, ած. *Փայլակներ ցայտող:*
ՓԱՅԼԱԿՆԱՒՈՐ, ած. *Փայլատակող կմ կայծեր արձակող:*
ՓԱՅԼԱԿՆԱՔԱՐ, ՓԱՅԼԱՔԱՐ, գ. (Հանք.) *Ապակենման՝ փայլուն քար:*
ՓԱՅԼԱԿՆԸՆԹԱՑ, ած. *Փայլակի նման ընթացող:*
ՓԱՅԼԱՆԱԽՇ, ած. *Փայլուն նախշերով, նախշափայլ:*
ՓԱՅԼԱՆԵՐԿ, գ. Լաքի *մի տեսակ:*
ՓԱՅԼԱՏ, ած. *Փայլից զուրկ:*
ՓԱՅԼԱՏԱԿԵԼ, բ. *Կայծակներ՝ շող արձակել:*
ՓԱՅԼԱՏԱԿՈՒԹԻՒՆ,

**ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄ**, գ. *Փայլատակելը:*
**ՓԱՅԼԱՏԵԼ**, բ. *Փայլատ՝ առանձ փայլի դարձնել:*
**ՓԱՅԼԱՐ**, գ. (Հանք.) *Խճաթթուուտների կարգին պատկանող հանք:*
**ՓԱՅԼԱՐԱՆՄԱՆ**, ած. *Թափանցիկ հանքաքարի՝ փայլարի նման:*
**ՓԱՅԼԱՐՁԱԿԵԼ**, գ. *Փայլ արձակել՝ փայլել:*
**ՓԱՅԼԵԼ**, բ. *Իրենից լոյս արձակել: Փայլատակել:*
**ՓԱՅԼԵՑՈՒՑԻՉ**, ած. *Նա որ փայլեցնում է:*
**ՓԱՅԼԻՆ**, գ. *Փայլ:*
**ՓԱՅԼՈՒԿ**, գ. (Հանք.) *Այլ եւ այլ մետաղների միաւորութիւնը:*
**ՓԱՅԼՈՒՆ**, ած. *Փայլ ունեցող:*
**ՓԱՅԼՓԼԵԼ**, բ. *Շողշողալ:*
**ՓԱՅԾԱՂ**
**ՓԱՅԾԱՂՆ** } գ. (Կազմ.) *Մարմնի ներքին գործարաններից մէկը:*
**ՓԱՅՏ**, գ. *Ծառի պինդ, հոծ մասը, բունը: Մահակ: Գօսացած:. Սառչել:*
**ՓԱՅՏԱԲԱՐՁ**, ած. *Որի վրայ փայտ է բարձած՝ դիզած:*
**ՓԱՅՏԱԲԵՐ**, ած. *Փայտ բերող:*
**ՓԱՅՏԱԳՈՂ**, գ. *Անտառից ապօրինի փայտ կտրող, անտառի գող:*
**ՓԱՅՏԱԳՈՐԾ**, Տ. *Փայտակերտ:*
**ՓԱՅՏԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փայտի վրայ փորագրութիւն:*
**ՓԱՅՏԱԾՈՒԽ**, Հկր. *Փայտէ պատրաստում՝ ածուխ:*
**ՓԱՅՏԱԿԵՐՏ**, ած. Տ. *Փայտաշէն:*
**ՓԱՅՏԱԿԵՐՏԻԿ**, գ. *Փոքրիկ փայտակերտ:*
**ՓԱՅՏԱԿԻՐ**, ած. *Փայտ կրող:*
**ՓԱՅՏԱԿՈԹ**, գ. *Փայտէ կոթը:*
**ՓԱՅՏԱԿՈՅՏ**, գ. *Փայտի կոյտ:*
**ՓԱՅՏԱՀԱՏ**, ած. գ. *Անտառում փայտ կտրող: Փայտ կտրող գործիք:*
**ՓԱՅՏԱՀԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Փայտահատի գործը:*
**ՓԱՅՏԱՄԱԾ**, ած. *Փայտերից կազմուած:*
**ՓԱՅՏԱՅԻՆ**, ած. *Փայտի բաղադրութիւն ունեցող:*
**ՓԱՅՏԱՆԱԳ**, գ. (Հանք.) *Անագաքարի մի տեսակը:*
**ՓԱՅՏԱՆԱԼ**, բ. *Փայտ դառնալ: Ցրտից սառչել:*
**ՓԱՅՏԱՆՈՑ**, գ. *Փայտ դարսելու՝ դիզելու պահելու տեղ:*
**ՓԱՅՏԱՇԱՐ**, ած. *Փայտով շարած:*
**ՓԱՅՏԱՇԷՆ**, ած. *Փայտից շինուած:*
**ՓԱՅՏԱՌԱՏ**, ած. *Փայտով առատ, առատ փայտ ունեցող:*
**ՓԱՅՏԱՎԱՃԱՌ**, գ. *Վառելափայտի առեւտուր անող:*
**ՓԱՅՏԱՏ**, գ. *Փայտ կտրելու գործիք, կացին:*
**ՓԱՅՏԱՑՈՒՄ**, գ. *Փայտանալը:*
**ՓԱՅՏԵԱՅ**, ած. *Փայտից շինած:*
**ՓԱՅՏԵՂԷՆ**, ած. *Ինչ որ փայտերու կը վերաբերի:*
**ՓԱՅՏԻԿ**, գ. *Փոքրիկ փայտ:*
**ՓԱՅՏՈՋԻԼ**, Տ. *Մլուկ:*
**ՓԱՅՏՓՈՐՆԵՐ**, գ. (Կենդ.) *Փայտ փորող ագալող թռչունների կարգին պատկանող թռչունների ցեղ:*
**ՓԱՅՏՓՈՐԻԿ**, Տ. *Փոքր փայտփոր սեւ թռչուն:*
**ՓԱՅՓԱՅԱՆՔ**, գ. *Հոգատար խնամք:*
**ՓԱՅՓԱՅԵԼ**, բ. *Հոգատարութեամբ՝ սիրով խնամել: Գգուել, շոյել:*
**ՓԱՅՓԱՅԻՉ**, ած. *Նա որ փայփայում է, փայփայող: Գգուող, շոյիչ:*
**ՓԱՅՓԵԼ**, բ. *Գթալ: Սփոփել:*
**ՓԱՆԱՔԻ**, ած. *Չնչին: Անիմաստ, նուաստ:*
**ՓԱՆԱՔԻՄԱՍՏ**, ած. *Աղքատիմաց:*
**ՓԱՆԱՔՈՒԹԻՒՆ**, գ. *Փանաքի՝ անիմաստ, նուաստ լինելը:*

**ՓԱՆԴԵՌՆԱՍԷՐ**, ած. *Փանդիռ եւ փանդիռի նուագ սիրող:*

**ՓԱՆԴԻՌ**
**ՓԱՆԴԻՌՆ** (Յուն.) գ. *Լարաւոր նուագարան երեք լարով:*

**ՓԱՇ**, գ. *Հաստ պարան:*

**ՓԱՇԱՄԱՆ**, գ. *Զղջում: Մեղադրութիւն:*

**ՓԱՇԱՅ**, (Թրք.) գ. *Քաղաքացիական եւ զինուորական բարձր աստիճանի անուն: Թուրքիայում նահանգապետ:*

**ՓԱՇԱՅԱԿԱՆ**, ած. *Փաշային յատուկ:*

**ՓԱՇԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Փաշայի աստիճանը:*

**ՓԱՇԿՈՒՃ**, գ. *Տոպրակ:*

**ՓԱՊ**, գ. *Ճեղք, ճեղքուածք, ծակ: Ծերպ:*

**ՓԱՊԱՐ**, գ. *Ծակ: Խոռոչ:*

**ՓԱՊԱՐԵԼ**, բ. *Ձեռքը կմ ոտքը ճեղքըռտել:*

**ՓԱՌ**, Տ. *Փառք:*

**ՓԱՌ**, գ. *Բարակ մաշկ:*

**ՓԱՌԱԲԱՆԱԿԱՆ**, ած. *Փառաբանութիւն պարունակող:*

**ՓԱՌԱԲԱՆԱՆՔ**, գ. *Փառաբանութիւն: Գովասանք:*

**ՓԱՌԱԲԱՆԱՐԱՆ**, գ. *Փառաբանութեան գործիք, լեզու:*

**ՓԱՌԱԲԱՆԱՒՈՐ**, ած. *Փառաբանող կմ փառաբանուող:*

**ՓԱՌԱԲԱՆԵԼ**, բ. *Մէկի փառքը խօսքով հռչակել: Գովաբանել, պանծացնել:*

**ՓԱՌԱԲԱՆԻՉ**, ած. գ. *Նա որ փառաբանում է, փառաբանող: Գովաբանող:*

**ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Փառաբանելը:*

**ՓԱՌԱԳԻՐ**, գ. *Փառաւոր՝ զարդարուն գլխագիր:*

**ՓԱՌԱԶԱՐԴ**, ած. *Փառքով զարդարուած:*

**ՓԱՌԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Փառազարդ լինելը:*

**ՓԱՌԱԶՕՐ**, ած. *Փառաւոր եւ հզօր:*

**ՓԱՌԱԽՆԴԻՐ**, ած. *Փառք փնտռող:*

**ՓԱՌԱԽՆԴՐԱԿԱՆ**, ած. *Փառախնդրին եւ փառախնդրութեան յատուկ:*

**ՓԱՌԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փառախնդիր լինելը:*

**ՓԱՌԱԿ**, գ. *Ընկոյզի միջուկի կէս մասը:*

**ՓԱՌԱԿԱԶՄ**, ած. *Շքեղ՝ փառաւոր՝ զարդարուն կազմ ունեցող:*

**ՓԱՌԱԿԱԼԵԼ**, բ. *Երեսին փառ կապել:*

**ՓԱՌԱԿԵՆՑԱՂ**, ած. *Փառաւոր կենցաղի տեղ:*

**ՓԱՌԱԿԻՑ**, ած. (Կրօն.) *Փառքի մասնակից:*

**ՓԱՌԱՀԵՂ**, ած. *Փառքով պհեղ: Մեծաշուք: Շքեղ:*

**ՓԱՌԱՀԵՂՈՒԹԻՒՆ**, գ. *Փառահեղ՝ մեծաշուք լինելը:*

**ՓԱՌԱՄՈԼ**, ած. *Մոլութեան չափ փառքի հետամուտ:*

**ՓԱՌԱՄՈԼԱԿԱՆ**, ած. *Փառամոլին եւ փառամոլութեան յատուկ:*

**ՓԱՌԱՄՈԼՈՒԹԻՒՆ**, գ. *Փառամոլ լինելը:*

**ՓԱՌԱՊԱՆԾ**, ած. *Փառաւոր եւ պանծալի:*

**ՓԱՌԱՊՍԱԿ**, գ. (Եկեղ.) *Փառքի պսակ, սրբերի պատկերների շրջանակ:*

**ՓԱՌԱՊՍԱԿՈՒՄ**, գ. *Փառքով պսակելը:*

**ՓԱՌԱՍԷՐ**, ած. *Փառք սիրող:*

**ՓԱՌԱՍԻՐԱԿԱՆ**, ած. *Փառասէրին յատուկ:*

**ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փառասէր լինելը: Մեծամտութիւն:*

**ՓԱՌԱՏԵՆՉ**, ած. *Փառասէր:*

**ՓԱՌԱՏԵՍ**, ած. *Փառաբանութեան արժանի տեսքով:*

**ՓԱՌԱՏԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Փառքը ատելը:*

**ՓԱՌԱՏՐԵԼ**, բ. (Կրօն.) *Փառք տալ:*

**ՓԱՌԱՒՈՐ**, ած. *Փառք ունեցող: Հռչակաւոր, Ճոխ:*

**ՓԱՌԱՒՈՐԱԲԱՐ**, Տ. *Փառաւորապէս:*

**ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ**, մկ. *Փառաւոր կերպով:*
**ՓԱՌԱՒՈՐԵԼ**, բ. *Փառաւոր դարձնել:*
**ՓԱՌԱՒՈՐԻՉ**, ած. *Նա որ փառաւորում է:*
**ՓԱՌԱՒՈՐՈՒՄ**, գ. *Փառաւորելը:*
**ՓԱՌԵՐԳ**, գ. *Փառաբանող երգ:*
**ՓԱՌՈՐՍԱԿ**, ած. *Փառք որսացող:*
**ՓԱՌ-ՓԱՌ**, գ. Տ. *Դանդուռ:*
**ՓԱ՛Ռ-ՓԱ՛Ռ**, մկ, *Փայլելով. Շողշողալով:*
**ՓԱՌՔ**, գ. *Փայլ: Բարձր պատիւ:*
**ՓԱՍԵԱՆ**, գ. (Կենդ.) *Հաւազգի թռչունների կարգից բուն հաւերի ցեղին պատկանող թռչուն:*
**ՓԱՍՏ**, գ. *Իսկական եղելութիւն:*
**ՓԱՍՏԱԲԱՆ**, գ. *Իրաւաբան:*
**ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ**, ած. *Փաստաբանին եւ փաստաբանութեան յատուկ:*
**ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ**, գ. *Փաստաբանների խմբի աւագը:*
**ՓԱՍՏԱԲԱՆԵԼ**, բ. *Պատճառաբանել:*
**ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Փաստաբան լինելը:*
**ՓԱՍՏԱԲԱՆՈՒՀԻ**, գ. *Փաստաբան իգական սեռից:*
**ՓԱՍՏԱԲԵՐ**, ած. գ. *Փաստեր բերող:*
**ՓԱՍՏԱԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**, ած. *Փաստագրական եւ գեղարուեստական:*
**ՓԱՍՏԱԳԻՐ**, ած. գ. *Փաստեր գրող:*
**ՓԱՍՏԱԹՂԹԱՅՆԱՑՈՒՄ**, գ. *Փաստաթղթայնացնելը:*
**ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Փաստաթղթերի շրջանառութիւն:*
**ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**, գ. *Օրինական ձեւով կազմուած որեւէ թուղթ:*
**ՓԱՍՏԱԿԱՆ**, ած. *Փաստեր պարունակող:* (Քրկն.) *Հայցական (հոլով):*
**ՓԱՍՏԱՍԷՐ**, ած. *Պատճառաբանութիւն սիրող:*
**ՓԱՍՏԱՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ**, ած. *Փաստերով վաւերացուող:*
**ՓԱՍՏԱՐԿՈՒՄ**, գ. *Փաստեր մէջ բերելը մի բան ապացուցելու համար:*
**ՓԱՍՏԱՑԻ**, ած. *Փաստերի վրայ հիմնուած:*
**ՓԱՍՏԲԱՆԱԿԱՆ**, Տ. *Փաստաբանական:* (Քրկն.) *Պատճառական (շաղկապ):*
**ՓԱՍՏԵԼ**, բ. *Փաստերով պաշտպանել՝ ջատագովել: Ապացուցել, փաստարկել:*
**ՓԱՍՏՕՐԷՆ**, մկ. *Փաստացի:*
**ՓԱՍՔՈՒՍ**, ած. *Բամբասող:*
**ՓԱՍՔՍԵԼ**, չբ. *Բամբասել:*
**ՓԱՍՔՍՈՒԹԻՒՆ**, գ. *Փասքուս լինելը, բամբասելը:*
**ՓԱՐ**, գ. *Ասեղնակարող լեցուն կտաւ:*
**ՓԱՐԱԽ**, գ. *Ոչխարների հանգստանալու պատսպարուած բաց տեղ, գոմ:*
**ՓԱՐԱԽԱՊԵՏ**, գ. (Եկեղ.) *Փարախի գլխաւոր հսկողը:*
**ՓԱՐԱՅ**, գ. *Անորոշ տեսակի բոյս:*
**ՓԱՐԱՋԱՅ**, գ. *Հոգեւորականների վրայի զգեստ:*
**ՓԱՐԱՋԱՒՈՐ**, ած. գ. (Եկեղ.) *Փարաջայ կրող:*
**ՓԱՐԱՏ**, ած. *Ջատուած: Անջատ:*
**ՓԱՐԱՏ**, գ. *Փուռ մաքրելու ձող:*
**ՓԱՐԱՏԵԼ**, բ. *Բաժանել, անջատել: Կտանքը անցկացնել:*
**ՓԱՐԱՏԻՉ**, ած. *Նա որ փարատում է, փարատող:*
**ՓԱՐԱՏՈՒՄ**, գ. *Փարատելը:*
**ՓԱՐԱՒԱՉ**, գ. *Սփոփանք:*
**ՓԱՐԱՒԱՉԵԼ**, բ. *Մխիթարել, սփոփել:*
**ՓԱՐԱՒՈՆ**, գ. *Ընդհանուր անունից հին Եգիպտոսի թագաւորների:*
**ՓԱՐԱՒՈՆԵԱՆ**, ած. *Փարաւոնին յատուկ:*
**ՓԱՐԵԼ**, բ. *Շուրջ ածել, ման ածել:*
**ՓԱՐԵԼԻ**, ած. *Սիրելի. ողջագուրելի:*
**ՓԱՐԹԱՄ**, ած. *Հարուստ. մեծատուն: Ճոխ, առատ:* Հկր. *Աղքատ, չքաւոր:*
**ՓԱՐԹԱՄԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. *Աւելի փարթամ:*

**ՓԱՐԹԱՄԱԴԷՋ**, ած. *Փարթամօրէն դիզուած:*
**ՓԱՐԹԱՄԱԿԵԱՑ**, ած. *Փարթամ՝ հարուստ, ճոխ կեանք վարող:*
**ՓԱՐԹԱՄԱՆԱԼ**, բ. *Փարթամ՝ հարուստ դառնալ:*
**ՓԱՐԹԱՄԱՇՆՈՐՀ**, ած. *Շնորհելու մէջ փարթամ: Ճոխ, առատ:*
**ՓԱՐԹԱՄՈՒԹԻՒՆ**, գ. *Փարթամ լինելը:*
**ՓԱՐԹԱՐ**, ած. *Փոքր:*
**ՓԱՐԹԱՐԱԲԱՐ**, մկ. *Հարեւանցի:*
**ՓԱՐԻԶԱԲՆԱԿ**, ած. *Փարիզ քաղաքում բնակուող՝ ապրող:*
**ՓԱՐԻԶԵԱՆ**, ած. *Փարիզին յատուկ:*
**ՓԱՐԻԶԵՑԻ**, ած. գ. *Փարիզի բնակիչ:*
**ՓԱՐԻԶՈՒՀԻ**, ած. գ. *Փարիզի բնակչուհի:*
**ՓԱՐԻՍԵՑԻ**, գ. *Հրէաստանում Քրիստոսի ժամանակ գոյութիւն ունեցող մի կրօնական կուսակցութեան անդամ:*
**ՓԱՐԻՍԵՑԻԱԿԱՆ**, ած. *Փարիսեցուն յատուկ, կեղծաւորական:*
**ՓԱՐԻՍԵՑԻՈՒԹԻՒՆ**, գ. *Փարիսեցու յատկութիւն, կեղծաւորութիւն:*
**ՓԱՐՈՍ**, *Լուսածակ աշտարակ՝ անցեալից սերած Աղեքսանդրիայում եղած թերակղզիի անունից:*
**ՓԱՐՈՒԱՆՑ**, գ. *Յայգաթիթեռ:*
**ՓԱՐՈՒԱԶ**, գ. *Զգեստի եզրերին կարուող ժապաւէն, շրջանակ:*
**ՓԱՐՈՒՄ**, գ. *Փարուելը:*
**ՓԱՐՉ**, գ. *Կաւէ աման:*
**ՓԱՐՉԻԿ**, գ. *Փոքր փարչ:*
**ՓԱՐՊ**, գ. *Դեղ:*
**ՓԱՐՊԵԼ**, բ. *Իբրեւ դեղ լաւ ազդել, բուժել:*
**ՓԱՐՍԱԽ**, գ. *Երկարութեան չափ:*
**ՓԱՐՍԱՆԳ**, գ. *Քար, որ դնում են կշեռքի թեթեւ կշռող թաթի մէջ:*
**ՓԱՐՍԵԿ**, գ. *Մուրացկան:*
**ՓԱՐՈՒԵԼ**, բ. *Փարել* (բ.), *Փաթաթուել:*
**ՓԱՐՏԵԼ**, բ. *Փարատել:*
**ՓԱՐՏԵԼ**, բ. *Պճնուել:*
**ՓԱՐՏՈՑ**, գ. *Լաթի կտոր:*
**ՓԱՓԱ**, գ. (Մանկ.), *Հաց:*
**ՓԱՓԱԳ**,
**ՓԱՓԱՔ**, գ. *Մեծ ցանկութիւն մի բանի: Ցանկական կիրք:*
**ՓԱՓԱԳԱԿԻՑ**, ած. *Միեւնոյն բանին փափագող:*
**ՓԱՓԱԳԵԼ**, բ. *Շատ ցանկալ մի բան:*
**ՓԱՓԱԳԵԼԻ**, ած. *Ինչ բան փափագում են, ցանկալի:*
**ՓԱՓԱԳՈՒՄ**, գ. *Փափագելը: Ցանկալը, ցանկութիւնը:*
**ՓԱՓԱՔ**, Տ. *Փափագ:*
**ՓԱՓԼԻԿ**, ած. *Գէր ու փափուկ:*
**ՓԱՓԼԻԿՈՒԹԻՒՆ**, գ. *Փափլիկ լինելը:*
**ՓԱՓԿԱԼԻ**, ած. *Փափկութեամբ լի, շատ փափուկ:*
**ՓԱՓԿԱԽՕՍ**, Տ. *Փափկախնչիւն:*
**ՓԱՓԿԱԿԱԶՄ**, ած. *Փափուկ կազմըուածք ունեցող:*
**ՓԱՓԿԱԿԵԱՑ**, ած. *Փափուկ կեանք վարող:*
**ՓԱՓԿԱԿԵՐ**, ած. *Փափուկ կերակուրներ ուտող:*
**ՓԱՓԿԱԿԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փափկակեր լինելը:*
**ՓԱՓԿԱԿԵՑՈՒԹԻՒՆ**, գ. *Փափկակեաց լինելը:*
**ՓԱՓԿԱԿՈՒՃ**, գ. (Հանք.) *Մի տեսակ փափուկ մարմարիոն:*
**ՓԱՓԿԱՁԱՅՆ**, ած. *Փափուկ՝ քնքոյշ ձայն ունեցող:*
**ՓԱՓԿԱՃԱՇԱԿ**, ած. *Փափուկ՝ նուրբ ճաշակ ունեցող:*
**ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆ**, ած. *Փափուկ մարմին ունեցող:*
**ՓԱՓԿԱՄՈՐԹ**, ած. *Փափուկ մորթ ունեցող:*
**ՓԱՓԿԱՆԱԼ**, բ. *Փափուկ՝ կակուղ դառնալ:*
**ՓԱՓԿԱՆԿԱՏ**, ած. *Փափկանկատու-*

*թիւն ունեցող: Նրբաճաշակ:*
ՓԱՓԿԱՆԿԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Փափուկ հանգամանքներն ի նկատի առնելը:*
ՓԱՓԿԱՆՔ, գ. *Փափկութիւն:*
ՓԱՓԿԱՄԷՐ, գ *Փափկութիւն՝ փափուկ կեանք սիրող:*
ՓԱՓԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Փափկասէր լինելը:*
ՓԱՓԿԱՍԻՐՏ, ած. *Փափուկ սիրտ ունեցող:*
ՓԱՓԿԱՄՆՈՒՆԴ, ած. *Փափուկ՝ փափկութեան մէջ սնուած:*
ՓԱՓԿԱՍՈՒՆ, ած. *Փափուկ մեծացած, փափկակեր:*
ՓԱՓԿԱՎԱՐ, ած. *Փափուկ կեանք վարող:*
ՓԱՓԿԱՑՈՒՄ, գ. *Փափկանալը:*
ՓԱՓԿԱՑՈՒՑԻՉ, ած. *Նա որ փափկացնում է:*
ՓԱՓԿԵԼ, բ. *Փափկանալ:*
ՓԱՓԿԵՐԱԽ, ած. *Փափուկ երախ, բերան ունեցող:*
ՓԱՓԿԻԿ, *ած. Փափուկ, փափլիկ:*
ՓԱՓԿՈՒԹԻՒՆ, գ. *Փափուկ լինելը:* Հկո. *Կոշտութիւն:*
ՓԱՓԿՕՐԷՆ, մկ. *Փափուկ կերպով:*
ՓԱՓՈՒԿ, ած. *Ընդհանրապէս՝ դուրեկան կակղութիւն ունեցող:*
ՓԱՔԱԼ, բ. *Հիւանդութեան պատճառով անասունների շատ հազալ:*
ՓԱՔԱՆԻ, ած. *Ֆիզիկապէս պակասաւոր, հաշմանդամ:*
ՓԱՔՈՏ, ած. *Յաճախ հազացող կմ փռնգացող անասուն:*
ՓԵԹԱԿ, գ. *Ճիւղերից հիւսուած կողով:*
ՓԵԹԱԿ, գ. *Մեղուներու բոյն:*
ՓԵԹԱԿԱԹՈՂ, գ. *Մեղուների՝ փեթակը թողնել-հեռանալը:*
ՓԵԹԱԿԱՆՈՑ, գ. *Այն տեղը, որտեղ դնում են փեթակները:*
ՓԵԹԱԿԱՏԷՐ, գ. *Փեթակի տէրը, փեթակ պահող մարդ:*
ՓԵԼ՚ԴՍՊԱԹ, գ. (Հանք.) *Ընդհանուր անուն սիլիկատների խմբի, որոնք պարունակում են կաւ, կիր:*
ՓԵԿՈՆ, գ. *Հաճարի ծառի պտուղ:*
ՓԵԿՈՒԴ, (Ֆրանս.) գ. *Օսլայի նման սպիտակ հատաձեւ նիւթ: Բոյսի ալիւր:*
ՓԵԿՌԱՏ, ած. *Ատամները թափած:*
ՓԵՂԿ, (Պրս., թրք.) գ. *Պատուհանի թեւերը բաժանուածք:*
ՓԵՂԿԱՀԱՆ, ած. *Փեղկը հանած:*
ՓԵՂԿԵԼ, բ. *Երկուսի բաժանել: Ճեղքել, փեղկով բաժանել:*
ՓԵՂՈՅՐ, գ. *Գլխարկ (կարտինալի), խոյր:*
ՓԵՃԵԿԵԼ, նբ. *Կեղեւը հանել:*
ՓԵՆԱԹԹՈՒ, գ. *Հականեխիչ նիւթ:*
ՓԵՇԱԾԱԼՔ, գ. (փխբ.): *Լերան լանջ:*
ՓԵՌԵԿ, գ. *Ճեղք, ճեղքուածք,*
ՓԵՌԵԿԱՏ, ած. *Ատամները կոտրած՝ փչացած:*
ՓԵՌԵԿԵԼ, նբ. *Բաժանել, բաժնել, կտրել:*
ՓԵՌԵԿՈՒՄ, գ. *Բաժանում, պառակտում:*
ՓԵՌԵԿՏԻԼ, նբ. *Երկուքի բաժանիլ, երկպառակիլ:*
ՓԵՌԵԿՏՈՒՄ, գ. *Երկուքի բաժանում, պառակտում:*
ՓԵՌՈՏ, ած. *Փսլնքոտ:*
ՓԵՍԱԲԱՂՆԻՔ, գ. *Փեսային, հարսանիքի նախընթաց շաբած օրը, բաղնիք տանելու ծէսը:*
ՓԵՍԱԽԱՂ, գ. *Փեսայի խաղ:*
ՓԵՍԱԿԱՆՉ, գ. *Փեսային կանչելը:*
ՓԵՍԱՀԱԳՈՒՄ, գ. *Հարսանիքի համար փեսային հագցնելու ծէսը:*
ՓԵՍԱՅ, գ. *Հարսի ամուսինը:*
ՓԵՍԱՅԱԲԱՐ, մկ. *Փեսայի պէս:*
ՓԵՍԱՅԱԶԳԵՍՏ, ած. *Փեսայի զգեստ հագած:*
ՓԵՍԱՅԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Փեսայածու լինելը:*

**ՓԵՍԱՅԱՊԷՍ**, մկ. *Փեսայի պէս:*
**ՓԵՍԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Փեսայ լինելը:*
**ՓԵՍԱՆՔ**, յոգն. գ. *Փեսայի ընտանիքը:*
**ՓԵՍԱՏԵՍ**, գ. *Աղջկայ ծնողների եւ նրանց ազգականների առաջին պաշտօնական այցելութիւնը փեսայի ծնողներին՝ փեսային տեսնելու համար:*
**ՓԵՍԱՏԷՐ**, գ. *Փեսայ ունեցող:*
**ՓԵՍԱՑՈՒ**,ած. գ. *Փեսայ լինելու յարմար:*
**ՓԵՍԽ**, գ. *Փախած նիւթը:*
**ՓԵՏԵԼ**, նբ. *Քաշել պոկել, կողոպտել:*
**ՓԵՏՈՒՄ**, գ. *Մազերի փետումը:*
**ՓԵՏՈՒՐ**, գ. *Թռչունների մարմնի վրայ եղջերային նիւթից բուսածը:*
**ՓԵՏՈՒՐՓՈԽ**, գ. *Հաւերի՝ փետուրների փոխելը:*
**ՓԵՏՐԱԶԱՐԴ**, ած. *Փետուրներով զարդարուած:*
**ՓԵՏՐԱԶԱՐԴՈՒԵԼ**, ած. *Փետուրները բուսնել:*
**ՓԵՏՐԱԶԱՐԿ**, ած. *Փետուրները կորսնցուցած:*
**ՓԵՏՐԱԹԱՓ**, ած. *Փետուրները թափած:*
**ՓԵՏՐԱԹԵՒԵՐ**, գ. յոգն. (Կենդ.) *Շատ մանր բզէզների ընտանիք:*
**ՓԵՏՐԱԼԻ**, ած. *Փետուրներով լի:*
**ՓԵՏՐԱԾԱԾԿ**, գ. *Փետրածածկոյթ:*
**ՓԵՏՐԱԿԵՐՊ**, ած. *Փետուրի նման:*
**ՓԵՏՐԱՀԱՆ**, Տ. *Փետրաթափ:*
**ՓԵՏՐԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Փետուր վաճառող:*
**ՓԵՏՐԱՎԵՐՄԱԿ**, գ. *Փետուրով լցուած վերմակ:*
**ՓԵՏՐԱՑԻՑ**, ած. *Ցցուած փետուրներով:*
**ՓԵՏՐԱՒԵԼ**, գ. *Փետուրներից կապած աւել:*
**ՓԵՏՐԱՒՈՐ**, ած. *Փետուր ունեցող:*
**ՓԵՏՐԱՓՈԽ**, ած. *Փետուրը փոխած, փետրաթափ:*
**ՓԵՏՐԻԿ**, գ. *Փոքր փետուր, փետուրիկ:*
**ՓԵՏՐՈՒԱՐ**, գ. *Քաղաքացիական տարու երկրորդ ամիսը:*
**ՓԵՐԵԶԱԿ**, *Մանր-մունր առարկաներ վաճառող,* գ. *Շրջիկ մանրավաճառ:*
**ՓԵՐԵԶԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Փերեզակ լինելը:*
**ՓԵՑԻ**, ած. *Ձեռքը կոտրած կմ վնասուած: Թեւատ:*
**ՓԷՃ**, գ. *Ուսին երեսը:*
**ՓԷՇ**, գ. *Զգեստի քղանցք:*
**ՓԷՐԻ**, գ. *Պարիկ, առասպելական բարի ոգի:* Նման. *Չքնաղազեղ:*
**ՓԸ՛Թ**, միջ. *Բնաձայն բառ:*
**ՓԸ՛ՏՏ**, ած. մկ. *Վրիպած:*
**ՓԹԱՆՈՑ**, ած. *Մի փութ ծանրութիւն կմ տարողութիւն ունեցող:*
**ՓԹԱՉԱՓ**, ած. *Մի փթի չափ:*
**ՓԹԵԼ**, բ. Տ. *Փտտել:* Փոխ. *Կատորակ դառնալ:*
**ՓԹԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Փթել՛ի: Ծաղկեցնել:*
**ՓԹԹԵԼ**, բ. Տ. *Փթթեցնել:*
**ՓԹԹԵԼ**, բ. *(Ծառերի) տերեւներ ու ծաղիկներ արձակել: Ծաղկիլ:*
**ՓԹԹԻԼ**, նբ. *Ծաղկիլ, բողբոջիլ:*
**ՓԹԹԻԹ**, գ. *Ծաղկում, բողբոջում:*
**ՓԹԹՈՒՆՈՒԹԻՒՆ**, գ. *Գեղեցկակազմութիւն, առոյգութիւն:*
**ՓԹԻՐ, ՓԹՐԻ**, գ. *Ձիու, իշու, ինչպէս եւ արջառների աղբ:*
**ՓԹՈՒՐ**, գ. *Մանր փշուր:*
**ՓԹՌԱԿ**, ած. *Փթած:*
**ՓԹՌՈՒԿ**, գ. *Հասարակ կերակուր:*
**ՓԹՈՒՐ**, գ. *Փշուր, խոշոր աւազ:*
**ՓԹՐԱՆՑՔ**, գ. *Փթիրի անցքը:*
**ՓԻԹ-ՓԻԹ**, ած. *Չափազանց մաքրասէր:*
**ՓԻԼԻԿ**, գ. *Այծի մի տեսակ:*
**ՓԻԼԻՍՈՓԱՅ**, գ. *Իմաստասէր:*
**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԲԱՐ**, Տ. *Փիլիսոփայօրէն:*
**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ**, ած. *Փիլիսոփային յատուկ:*
**ՓԻԼԻՍՈՓԱՅԵԼ**, բ. *Իմաստասիրել:*
**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ**, գ. *Իմաստա-*

*սիրութիւն: Ուսման դասընթաց: Տեսական՝ մեթոդաբանական սկզբունքներ:*

**ՓԻԼԻՍՈՓԱՅՕՐԷՆ,** մկ. *Փիլիսոփայի պէս:*

**ՓԻԼՈՆ,** գ. *Անթեւ վերարկու: Շուրջառ:*

**ՓԻԼՈՆԱԶՈՒՐԿ,** ած. (Եկեղ.) մկ. *Փիլոնից զրկուած:*

**ՓԻԼՈՆԱՒՈՐ,** ած. (Եկեղ.) *Փիլոն ունեցող:*

**ՓԻԼՈՆԱՑՈՒ,** ած. գ. *Փիլոն կարելու յարմար:*

**ՓԻՂ,** գ. (Կենդ.) *Պատիճաւոր կենդանիների կարգին պատկանող ամենամեծ ցամաքային կաթնասուն կենդանի:*

**ՓԻՃԵԿԵՐ,** գ. (Կենդ.) *Կնճիթաւոր բզէզների կարգին պատկանող միջատ:*

**ՓԻՃԻ ԹՈՒՆԱՒՈՐ,** գ. (Բուս.) *Գիհու նման ծառ:*

**ՓԻՃԻ ՀԱՄԱՐԱԿ,** գ. (Բուս.) *Կոնաբերների կարգին պատկանող ծառ:*

**ՓԻՆ,** գ. *Մարդկային աղբ:*

**ՓԻՆՁ,** գ. *Փայտ ճեղքելու համար սեպ:*

**ՓԻՇԻ,** (Մանկ.) գ. *Մէզ:*

**ՓԻՇԻ- ՓԻՇԻ ԱՆԵԼ,** բ. *Խնամել:*

**ՓԻՇՏ,** միջ. *Ձայնարկութիւն:*

**ՓԻՍ,** գ. *Ծառի խէժ:*

**ՓԻՍԻ-ՓԻՍԻ,** միջ. *Կատուն կանչելու ձայնարկութիւն:*

**ՓԻՍԻԿ,** գ. *Կատու:*

**ՓԻՒՆԻԿ,** գ. *Առասպելական թռչուն: Մոխիրնէրից վերակենդանացող:*

**ՓԻՒՆԻԿ,** գ. Տ. *Ոսկեգոյն փասեան ոսկի:*

**ՓԻՒՆԻԿԱԿԱՆ,** ած. *Փիւնիկեցիներին յատուկ, վերաբերեալ:*

**ՓԻՒՆԻԿԵՑԻ,** ած. գ. *Փիւնիկէի բնակիչ:*

**ՓԻՓԵՐԹ,** գ. (Բուս.) *Մոլոշների կարգից երկամեայ գեղեցիկ տունկ:*

**ՓԻՓԵՐԹԱՋՈՒՐ,** գ. *Փիփերթի ջուր:*

**ՓԻՓԻ,** (Մանկ.) գ. *Ուտելիք, կերակուր:*

**ՓԻՓԻԼ,** գ. *Մի տեսակ բլիթ:*

**ՓԼԱՆԱԼ,** բ. *Փուլ գալ:*

**ՓԼԱՏ,** ած. *Փլած:*

**ՓԼԱՏԱԿ,** գ. *Փուլ եկած շէնք:*

**ՓԼԱՒ,** գ. *Կերակուր:*

**ՓԼԱՒՔԱՄԻ / ՓԼԱՒՔԱՄԻՉ** գ. *Ծակոտկէն պղնձէ աման:*

**ՓԼՋՈՒՆ,** ած. *Փլչելու մօտ:*

**ՓԼՇՏՈՒԿ,** ած. *Փլփլած:*

**ՓԼՈՏ,** ած. *Փլփլած:*

**ՓԼՈՒԱԾՔ,** գ. *Ինչ որ փուլ է եկել:*

**ՓԼՈՒՋՈՒՄ,** գ. *Փլչելը:*

**ՓԼՈՒՔ,** գ. *Փլուածք:*

**ՓԼՉԵԼ,** բ. *Քարուքանդ լինելով թափուել գետին:*

**ՓԼՑՆԵԼ,** բ. անց. ձեւ *Փլչել՛ի:*

**ՓԼՓԸԼ,** ած. մկ. *Առկայծող:*

**ՓԼՓԼԱԼ,** բ. *Աղօտ լուսով վառուել:*

**ՓԼՓԼԱՆ,** ած. *Փլփլացող:*

**ՓԼՓԼՈՒԿ,** ած. *Փլփլկած:*

**ՓԼՕՇ,** գ. *Օղի քաշելու համար պատրաստուած մրգեղէն:*

**ՓԽԱԿՈՒՏ,** ած. *Փխակով՝ խոր ցեխով ծածկուած:*

**ՓԽԼՈՐԵԼ,** բ. *Բոլորովին փխլել:*

**ՓԽԿԱԼ,** բ. *Յանկարծ ծիծաղել:*

**ՓԽԿԵԼ,** նբ. *Մանրել, փշրել, խարհրել, աղանձել:*

**ՓԽԿՈՑ,** գ. *Փխկալը:*

**ՓԽՐԱԿԱՆ,** ած. *Հեշտ փխրող:*

**ՓԽՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ,** գ. *Փխրական լինելը:*

**ՓԽՐ-ՓԽԸՐ,** միջ. *Կերակուրի՝ պղպղջակներ արձակելով եփուելը:*

**ՓԽՐԱՑՈՒՄ,** գ. *Փխրանալը, փուխր դառնալը:*

**ՓԽՐԱՔԱՐ,** գ. (Հանք.) *Փուխր քար:*

**ՓԽՐԱՔԱՐԵԱՅ,** ած. *Փխրաքարից բաղկացած:*

**ՓԽՐԵԼ,** բ. *Փուխր դարձնել, աղանձել:*

**ՓԽՐՈՒԹԻՒՆ,** գ. *Փուխր՝ փխրուն լինելը:*

**ՓԽՐՈՒՆ,** ած. *Փուխր:*

**ՓԽՓԽԿՈՑ,** գ. *Զսպուած ծիծաղ:*

**ՓԾՆԻ**, ած. *Գէշ, անպիտան:*
**ՓԾՈՒՆ**, ած. *Պիղծ, զարշելի:*
**ՓՂԱԳԼՈՒԽ**, գ. *Փղի գլուխ:*
**ՓՂԱԿ**, ած. *Լաւ չեփած:*
**ՓՂԱԿՈՅՏ**, գ. *Փղերի կոյտ:*
**ՓՂԱՊԱՆ**, գ. *Փղի պահապան:*
**ՓՂԱՊԵՏ**, գ. *Փղակոյտի պետը՝ կառավարիչը:*
**ՓՂԱՍՊԱՆ**, ած. գ. *Փիղ սպանող:*
**ՓՂՁԿԵԼ**, բ. *Սիրտը դառնութեամբ կմ յուզմունքով լցուել:*
**ՓՂՁԿԵՑՈՒՑԻՉ**, ած. *Փղձկեցնող:*
**ՓՂՁՈՒԿ**, գ. *Փղձկելը: Լացի պոռթկում:*
**ՓՂՇՏԱՅԻ**, ած. գ. *Հին ժողովուրդ, խառն սեմական եւ եգիպտական ծագումով:*
**ՓՂՈՍՈՍ**, գ. (Բուս.) *Խոնդատի մի տեսակը:*
**ՓՂՈՍԿՐ**, գ. *Փղի ժանիքների ոսկորը:*
**ՓՂՈՍԿՐԷ**, ած. *Փղոսկրից շինուած:*
**ՓՂՈՐԴԻ**, գ. *Փղի որդի:*
**ՓՂՈՒՀԻ**, գ. *Էգ փիղ:*
**ՓՄՓՈՒԼԻԿ**, ած. *Քնքուշիկ:*
**ՓՄՓՈՒՍ**, ած. *Փափուկ:*
**ՓՆԴՈՐ**, ած. *Սուտ:*
**ՓՆԵԼ**, բ. *Փորից դուրս գնալ: Աղբել, քաքնել:*
**ՓՆԹԻ**, ած. *Փինի թիի նման կեղտոտ:*
**ՓՆԹԻՈՒԹԻՒՆ**, գ. *Փնթի լինելը:*
**ՓՆԹՓՆԹԱԼ**, բ. *Քթի տակից ցած ձայնով տրտնջալ:*
**ՓՆԹՓՆԹԱԼԻ**, մկ. *Փնթփնթալով:*
**ՓՆԹՓՆԹՈՑ**, գ. *Փնթփնթալը:*
**ՓՆՃԻՃ**, գ. *Լալկան տղայ:*
**ՓՆՈՎԵԼ**, բ. *Պախարակել:*
**ՓՆՉԱԼ**, **ՓՆՉԵԼ** } բ. *Շնչառական մկանների կծկումով օդը քթից ու բերանից ուժգնութեամբ եւ աղմուկով դուրս վանել, փռնգալ:*
**ՓՆՉԱՏԵԼ**, բ. *Ուժգին փնչել:*
**ՓՆՉԱՑՆԵԼ**, բ. *Փնչել, փնչալու ձայն հանել:*
**ՓՆՉՈՑ**, գ. *Փնչալու ձայն:*
**ՓՆՋԱԶԱՐԴ**, ած. *Փնջերով զարդարուած:*
**ՓՆՋԱԶԱՐԴԵԼ**, բ. *Փնջերով զարդարել:*
**ՓՆՋԱԾԱՂԻԿ**, գ. (Բուս.) *Ծաղկման տեսակ:*
**ՓՆՋԱՆՕԹ**, Տ. *Փնջաման:*
**ՓՆՋԱՒՈՐ**, ած. *Փնջեր ունեցող:*
**ՓՆՋԵԼ**, բ. *Փունջ կապել:*
**ՓՆՋԻԿ**, գ. *Փոքր փունջ:*
**ՓՆՋՈՏԵՍԱՆՆԵՐ**, գ. (Կենդ.) *Խեցեմորթների կարգ:*
**ՓՆՏՌԵԼ**, բ. *Որոնել, պտտել: Հետաքրքրքրել մի բանով: Պահանջել:*
**ՓՆՏՌՈՒՄ**, գ. *Փնտռելը:*
**ՓՆՏՌՏՈՒՔ**, գ. *Փնտռտելը:*
**ՓՇԱԲԵՐ**, ած. *Փուշ բերող:*
**ՓՇԱԲԵՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փշաբեր լինելը:*
**ՓՇԱԲՈՐԲՈՔ**, ած. *Փուշ խրուելուց բորբոքուած:*
**ՓՇԱԴԱԺԱՆ**, ած. *Դաժան փշեր ունեցող:*
**ՓՇԱՁԳԱԾ**, ած. *Փշով ծածկուած՝ պատած, փուշ հագած:*
**ՓՇԱԺԱՊԱՒԷՆ**, գ. *Փշերով ժապաւէն:*
**ՓՇԱԼԱՐԵԼ**, բ. *Փշալարով պատել:*
**ՓՇԱԼԻ**, ած. *Փշով լիքը:*
**ՓՇԱԽՆՁՈՐԵՆԻ**, գ. *Փշերով խնձորենի:*
**ՓՇԱԽՆՁՈՐԻ**, գ. (Բուս.) *Մորմազգիների կարգին պատկանող թունաւոր բոյս:*
**ՓՇԱԾԻՆ**, ած. *Փուշ ծնող:*
**ՓՇԱԿԵՐՊ**, ած. մկ. *Փշի նման:*
**ՓՇԱԿՌԶԻ**, գ. (Բուս.) *Կոզիների մի տեսակը:*
**ՓՇԱՀԱՆ**, գ. *Փուշը հանելը:*
**ՓՇԱՀԵՂՁ**, ած. *Փշերի մէջ խեղդուած:*
**ՓՇԱՄՈԼ**, ած. *Փշերով մոլած:*
**ՓՇԱՄՈՐԹՆԵՐ**, գ. (Կենդ.) *Ստորին կենդանիների տիպար:*
**ՓՇԱՆԱԼ**, բ. *Փուշ դառնալ:*
**ՓՇԱՆՄԱՆ**, ած. *Փշի նման:*

**ՓՇԱՊԱՏ**, ած. *Փշերով պատած:*

**ՓՇԱՊՍԱԿ**, ած. *Փշէ պսակ ունեցող:*

**ՓՇԱՄԵԽ**, գ. (Բուս.) *Կոզիների մի տեսակը:*

**ՓՇԱՏ**, գ. *Փշատի ծառի կմ փշատենու պտուղը: Փուշ չունեցող:*

**ՓՇԱՏԵՆԻ**, գ. (Բուս.) *Կռիզապտուղների կարգին պատկանող փշոտ ծառ:*

**ՓՇԱՏԵՍԱԿ**, ած. *Փշի տեսակ:*

**ՓՇԱՏԵՐԵՒ**, ած. *Որի տերեւները փշի նման են:*

**ՓՇԱՑԱՆԿ**, գ. *Փշոտ ճիւղերից սարքած պատնէշ:*

**ՓՇԱՔԱՂԵՑՆԵԼ**, անց. ձեւ *Փշաքաղուել'ի,* նոյն. նշ.:

**ՓՇԱՔԱՂՈՒԹԻՒՆ**, գ. *Փշաքաղուելը:*

**ՓՇԱՔԱՂՈՒԵԼ**, բ. *Զարհուրանքից՝ ցրտից մարմնի վրայ ծակոցներ զգալ, որպէս թէ փշերով ծակծկելիս լինէին:*

**ՓՇԵԱՑ** / **ՓՇԵՂԷՆ** } ած. *Որի նիւթը փուշ է, փշից շինուած:*

**ՓՇԵՆԻ**, գ. *Փուշ արտադրող բոյս:*

**ՓՇԻԿ**, գ. *Փոքր փուշ:*

**ՓՇԻ՛-ՓՇԻ**, միջ. *Կատու կանչելու ձայնարկութիւն:*

**ՓՇԿԵԼ**, բ. *Նստել:*

**ՓՇԿՈՒԼ**, գ. *Թթիր: Թրիք:*

**ՓՇՄԱՆԳԱՂ**, գ. *Փուշ կտրելու մանգաղ:*

**ՓՇՈՏ**, ած. *Որտեղ փուշ կայ բուսած:*

**ՓՇՈՒԿ**, ած. *Փշով ծածկուած:*

**ՓՇՈՒՐ**, գ. *Առարկայի շատ փոքր մասնիկ:*

**ՓՇՏՀԱՓՇՏ**, միջ. մկ. *Շտապով, երկիւղից շտապելով:*

**ՓՇՏԱՑՆԵԼ**, բ. *Փը՛շտ ձայն հանել:*

**ՓՇՐԱՆՔ**, գ. *Առարկայի փշուր-փշուր եղած մասերը:*

**ՓՇՐԵԼ**, բ. *Փշուր-փշուր անել: Ջախջախել, ջարդել: Ամօթից կոտրուել:*

**ՓՇՐԵԼԻ**, ած. *Ինչ որ պէտք է կմ կարելի է փշրել:*

**ՓՇՐՈՒԿ**, գ. *Կերակուր:*

**ՓՇՐՈՒՆՔ**, գ. *Փշրանք:*

**ՓՇՓՇԱԼԻ**, մկ. *Փշփշալով:*

**ՓՇՓՇՈՏ**, ած. *Շատ փշոտ:*

**ՓՇՓՇՈՒԿ**, գ. (Բուս.) *Վայրի բանջար:*

**ՓՇՔԱՂ**, գ. *Փոքրիկ նուրբ փուշ հանելիք՝ ունելիք:*

**ՓՈԹ**, գ. *Զգեստի վրայ աւելորդ դուրս ընկած կմ կախ ընկած տեղ: Դիտմամբ ձեւացրած ծալք:*

**ՓՈԹԵԼ**, նբ. *Ծալ ծալ անել:*

**ՓՈԹԱԼ**, բ. *Սահել:*

**ՓՈԹԻԿ**, գ. *Փոքր փոթ:*

**ՓՈԹՈԹ**, ած. *Տոհիպ: Լեզուն խածող: Խակ պտուղի համ:*

**ՓՈԹՈԹԱՀԱՄ**, ած. *Փոթոթ՝ խակ համ ունեցող, փոթոթ:*

**ՓՈԹՈԹԱՅԻՆ**, ած. *Փոթոթող յատկութիւն ունեցող:*

**ՓՈԹՈԹԵԼ**, բ. *Բերանը այրել:*

**ՓՈԹՈԹՈՒԹԻՒՆ**, գ. *Փոթոթ լինելը:*

**ՓՈԹՈԹՍԱԼՈՐ**, գ. *Սալորի մի տեսակ:*

**ՓՈԹՈՐ**, գ. *Հողի նման խաղալիք:*

**ՓՈԹՈՐԵԼ**, նբ. *Հողի պէս դարձնել:*

**ՓՈԹՈՐԻԿ**, գ. *Պտուտող քամի:* Փոխ. *Հոգեկան յուզմունք:* Փոխ. *Զգացմունքի տարերային՝ զանգուածային յայտնաբերումը:*

**ՓՈԹՈՐԿԱԼԻ** / **ՓՈԹՈՐԿԱԼԻՑ** } ած. *Փոթորիկներով լի:*

**ՓՈԹՈՐԿԱԾԻՆ**, ած. *Փոթորիկ ծնող:*

**ՓՈԹՈՐԿԱՀԱՐ**, ած. *Փոթորկի ենթարկուած:*

**ՓՈԹՈՐԿԱՀՈՂՄ**, գ. *Փոթորկի վերածուած հողմ:*

**ՓՈԹՈՐԿԱՅԻՆ**, ած. *Փոթորկին յատուկ: Փոթորկոտ:*

**ՓՈԹՈՐԿԱՇԱՏ**, ած. *Անկայուն՝ անհանգիստ:*

**ՓՈԹՈՐԿԱՇՈՒՆՉ**, ած. *Փոթորիկ կմ իբրեւ փոթորիկ շնչող՝ փչող:*

**ՓՈԹՈՐԿԵԼ**, բ. *Փոթորիկ դառնալ:*

ՓՈԹՈՐԿՈՏ, ած. *Ինչ որ յաճախ փոթորկում է:*
ՓՈԹՈՑ, գ. *Փորձանք:*
ՓՈԹՈՒԹԻՒՆ, գ. *Փոթ լինելը:*
ՓՈԽ, գ. *Փոխելը:*
ՓՈԽ, գ. (Եկեղ.) *Սաղմոս, որ երկու հոգի մի-մի տուն փոխ առ փոխ ասում են եկեղեցում:*
ՓՈԽ, գ. *Փոխարէն:*
ՓՈԽ, գ. (Եկեղ.) *Կամաւոր պահեցողութիւն:*
ՓՈԽԱԲԵՐԱԲԱՐ, մկ. *Փոխաբերական իմաստով: Մտքի մտապատկերաւոր առումը:*
ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ, ած. *Փոխաբերութիւն պարունակող:*
ՓՈԽԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոխաբերելը:*
ՓՈԽԱԲԵՐՈՒՈՒՄ, գ. *Փոխաբերելը:*
ՓՈԽԱԲՆԱԿԵԼ, բ. *Բնակութեան տեղը փոխել:*
ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոխագրելը, արտագրելը:*
ՓՈԽԱԴԱՐՁ, գ. *Փոխարէնը դարձնելը՝ տալ:* (Քրկն.) *Նախադասութեան մէջ նոյն գործողութեամբ միմեանց հետ կապուած երկու կմ աւելի անունների փոխարէն գործածուող դերանուններ:*
ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ, մկ. *Փոխադարձ կերպով:*
ՓՈԽԱԴԱՐՁԵԼ, բ. *Փոխարէնը դարձնել:*
ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ, գ. *Փոխանակութիւն, փոխարինում:*
ՓՈԽԱԴԱՐՁՕՐԷՆ, Տ. *Փոխադարձաբար:*
ՓՈԽԱԴՐԱԿԱՆ, ած. *Փոխադրելու յատուկ:*
ՓՈԽԱԴՐԱԿԱՌՔ, գ. *Հանրային փոխադրամիջոց:*
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԱՅԻՆ, ած. *Փոխադրամիջոցներին յատուկ:*
ՓՈԽԱԴՐԱՆԱՒ, գ. *Ապրանքներ փոխադրող նաւ:*

ՓՈԽԱԴՐԵԼ, բ. *Մի բանի տեղը փոխել՝ տանիլ: Անց կացնել մի բանից ուրիշ բանի վրայ: Մի լեզուից անց կացնել ուրիշ լեզուի, թարգմանել (ազատ):*
ՓՈԽԱԴՐԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է կմ կարելի է փոխադրել: Տեղափոխելի:*
ՓՈԽԱԴՐԻՉ, ած. գ. *Փոխադրող:*
ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադրելը:*
ՓՈԽԱԾԱՂԻԿ ԿԱՆԱՉ, գ. (Բուս.) *Քցմիների ցեղին պատկանող բոյս շատ մանր ծաղիկներով:*
ՓՈԽԱԾՈՒՐԻԿ, ած. *Կերպարանափոխ եղած:*
ՓՈԽԱԿԱՐԳԵԼ, բ. *Ուրիշ կարգի մէջ դնել:*
ՓՈԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. *Մի բանի տեղ ուրիշ բան դնելը:*
ՓՈԽԱԿԵՐՊԵԼ, բ. *Կերպարանքը փոխել:*
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. *Փոխակերպուելը:*
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ, գ. *Փոխակերպելը:*
ՓՈԽԱՀԱՏՈՅՑ, ած. *Փոխ առած գումարը հատուցանող:*
ՓՈԽԱՁԵՒՈՒԹԻՒՆ } գ. *Ձեւափոխում:*
ՓՈԽԱՁԵՒՈՒՄ
ՓՈԽԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ, գ. *Մասերի փոփոխութիւն:*
ՓՈԽԱՆ, Տ. *Փոխանորդ: Փոխարէն, դիմաց:*
ՓՈԽԱՆ, գ. *Սպիտակեղէնի փոխնորդ:*
ՓՈԽԱՆԱԿ, գ. *Փոխանորդ, փոխարինող:*
ՓՈԽԱՆԱԿ, *Մի բանի տեղ՝ փոխարէն:*
ՓՈԽԱՆԱԿԱԲԱՐ, մկ. *Փոխելով, հակառակ կերպով:*
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ, Տ. Չէք: *Փոխգիր, վճարագիր:*
ՓՈԽԱՆԱԿԱՎԱՐՁՈՒԹԻՒՆ, գ. *Փոխարէնը վարձատրութիւնը:*
ՓՈԽԱՆԱԿԵԼ, նբ. *Որեւէ բան առնել տալը:*

ՓՈԽԱՆԱԿԵԼԻ, ած. *Ինչ որ կարելի է կմ պէտք է փոխանակել:*
ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. *Մի բան ուրիշ բանի հետ փոխելը:*
ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, գ. *Փոխանակելը:*
ՓՈԽԱՆԱՑՈՒ, ած. *Փոխան կարելու յարմար:*
ՓՈԽԱՆԴԱՄՈՒԹԻՒՆ, գ. *Փոխանդամ լինելը:*
ՓՈԽԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, գ. *Փոխադարձ անդրադարձում:*
ՓՈԽԱՆՈՐԴ, գ. *Նա որ փոխարինում է մէկին մի պաշտօնի մէջ, տեղակալ:*
ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ, ած. *Փոխանորդին յատուկ, վերաբերեալ:*
ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. (եկեղ.) *Փոխանորդ լինելը:*
ՓՈԽԱՆՑԱՏՈՒՓ, գ. *Փոխանցման տուփ:*
ՓՈԽԱՆՑԱՓԱՅՏԻԿ, գ. *Փոխանցավազքի ժամանակ փոխանցուող փայտիկը:*
ՓՈԽԱՆՑԵԼ, բ. *Անց կացնել ուրիշ տեղ, փոխադրել:*
ՓՈԽԱՆՑԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է փոխանցուի:*
ՓՈԽԱՆՑԻԿ, ած. *(Հիւանդութիւն), որ կարող է փոխանցուել ուրիշին: Փոխանցիկ դրօշ:*
ՓՈԽԱՆՑԻՉ, ած. *Փոխանցող:*
ՓՈԽԱՆՑՈՒՄ, գ. *Փոխանցելը:*
ՓՈԽԱՌԵԱԼ, ած. *Փոխ առնուած:*
ՓՈԽԱՌՈՒ, ած. գ. *Դրամ փոխ առնող:*
ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ, գ. *Դրամ փոխ առնելը:*
ՓՈԽԱՍԱՑ, գ. (եկեղ.) *Եկեղեցում փոխ ասող:*
ՓՈԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ, գ. (եկեղ.) *Փոխասաց լինելը:*
ՓՈԽԱՏԱՌ
ՓՈԽԱՏԱՌՈՒԹԻՒՆ } գ. *Մի բառի տառերը տեղափոխելով ուրիշ բառ ձեւացնելը:*
ՓՈԽ-ԱՏԵՆԱՊԵՏ, գ. *Ատենապետի օգնական:*
ՓՈԽԱՏՈՒ, ած. գ. *Դրամ փոխ տուող:* Հկր. *Փոխառու:*
ՓՈԽԱՏՈՒՈՒԹԻՒՆ, գ. *Դրամ փոխ տալը:*
ՓՈԽԱՐԷՆ, գ. *Ինչ որ արւում է մէկին իբրեւ հատուցում:*
ՓՈԽԱՐԷՆԱՏՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոխարէնը տալը:*
ՓՈԽԱՐԺԷՔ, գ. *Տրուած արժէք (դրամի) փոխարէն ստացուելիք արժէք:*
ՓՈԽԱՐԺԷՔԱԽԱՂ, գ. *Փոխարժէքի տատանումներ:*
ՓՈԽԱՐԻՆԱԲԱՐ, մկ. *Արուած բանի փոխարէն համապատասխան մի բան անելով:*
ՓՈԽԱՐԻՆԵԼ, բ. *Փոխարէնը տալ, հատուցանել:*
ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ, գ. *Փոխարինելը:*
ՓՈԽԱՐԿԱԿԱՆ, ած. *Փոխարկուող:*
ՓՈԽԱՐԿԵԼ, բ. *Փոխել՝ վերածել ուրիշ բանի: Ձեւափոխել:*
ՓՈԽԱՐՔԱՅ, գ. *Մի պետութեան որեւէ մասում բարձրաստիճան պաշտօնեայ:*
ՓՈԽԱՐՔԱՅԱԿԱՆ, ած. *Փոխարքային յատուկ:*
ՓՈԽԲԱՑԱՌՈՒՄ, գ. *Փոխադարձ բացառելը:*
ՓՈԽԳԻՐ, Տ. *Փոխանակագիր:*
ՓՈԽԳՈՐԾՈՒՆԱԿ, ած. *Փոխադարձ կերպով գործունակ:*
ՓՈԽԴԵՍՊԱՆ, գ. *Դեսպանի տեղակալ:*
ՓՈԽԵԼ, բ. *Մի բան առնել, տեղը ուրիշ բան տալ, փոխանակել:*
ՓՈԽԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է կմ կարելի է փոխել:*
ՓՈԽԵՆԹԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ ենթակայութիւն:*
ՓՈԽԵՐԷՑ, գ. (եկեղ.) *Երէցի օգնական:*
ՓՈԽԶԻՋՈՒՄԱՅԻՆ, ած. *Փոխադարձ զիջումներ պարունակող:*

ՓՈԽԸՆԿԱԼՈՒՄ, գ. *Իրար ընկալելը:*
ՓՈԽԸՆՁԱՅՈՒ, ած. *Փոխինձ շինելու յարմար կմ փոխինձ շինելու համար պահուած:*
ՓՈԽԻՆԴ, գ. *Խարկած ալիւրով, իւղով ու մեղրով ուտելիք:*
ՓՈԽԻՆԴ, գ. *Բոռված եւ ապա աղացած ցորենի կմ գարու ալիւր:*
ՓՈԽԽՄԲԱԳԻՐ, գ. *Խմբագրի տեղակալ:*
ՓՈԽ-ԾՈՎԱԿԱԼ, գ. *Ծովակալի տեղակալը:*
ՓՈԽ-ԾՈՎԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. *Փոխծովակալի պաշտօնը:*
ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ կապակցուածութիւն:*
ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒԵԼ, բ. *Փոխադարձաբար կապակցուել:*
ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ համագործակցութիւն:*
ՓՈԽՀԱՇՈՒԱՆՑՈՒՄ, գ. *Փոխադարձ հաշուանցում:*
ՓՈԽՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ հասկացողութիւն:*
ՓՈԽՀԱՑ, գ. *Թարմ հաց:* Նման. *Ընծայ, պատիւ:*
ՓՈԽ-ՀԻՊԱՏՈՍ, գ. *Երկրորդ կարգի հիւպատոս:*
ՓՈԽՃԱՆԱՉԵԼԻՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ ճանաչելիութիւն:*
ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոխադարձ յարաբերութիւնը:*
ՓՈԽՅԱՐԳԱՆՔ, գ. *Փոխադարձ յարգանք:*
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ, գ. *Նախագահի տեղակալ:*
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ, գ. *Փոխադարձ ներթափանցում:*
ՓՈԽՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, գ. *Ներկայացուցչին փոխարինող անձ:*
ՓՈԽՆՈՐԴ, ած. գ. *Սպիտակեղէն, որ հագնում են վրայի կեղտոտ սպիտակեղէնը հանելիս:*
ՓՈԽՇՓՈՒՄ, գ. *Փոխադարձ շփում:*
ՓՈԽՍ, *Միայմամբ մի բան մի բանի հետ փոխելը:*
ՓՈԽՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ, գ. *Փոխկապակցուած տեղեկատուութիւն:*
ՓՈԽ—ՏԵՍՈՒՉ, գ. *Տեսչի օգնական:*
ՓՈԿ, գ. *Առջարի կաշուց կտրած երկար ու նեղ շերտ: Գօտաձեւ կաշի:*
ՓՈԿ, գ. (Կենդ.) *Տոննեոտ(ն)եանների կարգին պատկանող կաթնասուն ջրային կենդանի:*
ՓՈԿ, գ. (Կենդ.) *Ծովաշուն:*
ՓՈԿԱԿԱՊ, ած. *Փոկով կապած:*
ՓՈԿԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Փոկով ծեծելը:*
ՓՈԿԱՐԱՐ, ած. գ. *Փոկ շինող արհեստաւոր:*
ՓՈԿԷՄԱՂ, գ. *Կաշիէ խոշոր ծակոտիներով մաղ:*
ՓՈԿԱՄՏՐԱԿ, գ. *Փոկերից՝ կաշուի կամ այլ ամուր նիւթերի բարակ ու երկար շերտերից հիւսուած մտրակ:*
ՓՈԿՈՏՆ, ած. *Փոկի նման ոտներ ունեցող:*
ՓՈՂ, գ. *Խողովակաձեւ իր, խողովակ: Խողովակաձեւ նուագելու գործիք: Տաբատի վերեւը: Նեղ անցք:* (Բուս.) *Ուղղաբուն՝ սնամէջ բոյս:* (Կազմախ.) *Նեղ անցք:*
ՓՈՂ, գ. *Շատ մանր եւ չնչին արժէքի մետաղեայ դրամ:*
ՓՈՂԱԲԵՐ, ած. *Փող բերող, շահութաբեր:*
ՓՈՂԱԳՈՉ, ած. *Փող փչող:*
ՓՈՂԱՁԱՐԿ, ած. *Դրամազուրկ:*
ՓՈՂԱԽԵՑԻ, գ. (Կենդ.) *Խեցեմորթների մի կարգը:*
ՓՈՂԱԾԱՂԻԿՆԵՐ, յոգն. գ. (Բուս.) *Բոյսերի դաս:*
ՓՈՂԱԿ, գ. *Փոքր փող:*
ՓՈՂԱԿԵՐՊ, Տ. *Փողաձեւ:*
ՓՈՂԱՀԱՉ, գ. *Փող ստանալու համար հաչելը:*

ՓՈՂԱՀԱՐ, գ. *Փող փչող:*
ՓՈՂԱՀԱՐԱԿԱՆ, ած. *Փողահարութեան յատուկ:*
ՓՈՂԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Փողահար լինելը:*
ՓՈՂԱՁԵՒ, ած. *Ինչ որ խողովակի ձեւ ունի:*
ՓՈՂԱՄԱՆ, գ. *Փողի քսակ:*
ՓՈՂԱՊԱՇՏ, Տ. *Դրամապաշտ:*
ՓՈՂԱՏԱՊ, գ. *Շնչափողի կոկորդի բորբոքում:*
ՓՈՂԱՍԷՐ, Տ. *Դրամասէր:*
ՓՈՂԱՏԷՐ, Տ. *Դրամատէր:*
ՓՈՂԱՐԿՂ, գ. *Դրամարկղ, դրամ դնելու արկղ:*
ՓՈՂԱՑԱՒ, գ. *Փողի՝ կոկորդի ցաւ:*
ՓՈՂԱՔՍԱԿ, գ. *Փողի քսակ:*
ՓՈՂԵՐԱԿ, գ. *Շնչափողի երակ:*
ՓՈՂԵՐԱՆՈՑ, գ. *Պետական հիմնարկ, որտեղ հնչուն դրամ են պատրաստում:*
ՓՈՂԵՐԳԵԼ, բ. *Փողել:*
ՓՈՂԿԱՊ, գ. *Շապիկի օձիքին կապուող լաթէ զարդ:*
ՓՈՂԿԱՊԱՒՈՐ, ած. *Փողկապ կրող, փողկապ կապած:*
ՓՈՂՈՏԵԼ, բ. *Մորթելով արիւնը թափել:*
ՓՈՂՈՏԻՉ, ած. *Սպանող:*
ՓՈՂՈՐԴՈՒԿ, գ. (Կենդ.) *Փողի մէջ ապրող որդ:*
ՓՈՂՈՑ, գ. *Տների երկու շարքի միջեւ թողնուած ազատ տարածութիւն անցուդարձի համար:*
ՓՈՂՈՑԱԿ, գ. *Փոքր կմ նեղ փողոց:*
ՓՈՂՈՑԱՁԵՒ, ած. մկ. *Փողոցի նման:*
ՓՈՂՈՑԱՅԻՆ, ած. *Փողոցին յատուկ:*
ՓՈՂՓՈՂԵԼ, բ. *Փայլեցնել: Շածանել:*
ՓՈՂՓՈՂՈՒՆ, ած. *Փայլփլող:*
ՓՈՂՔ, գ. *Տաբատի կմ վարտիքի ներքեւի մասը:*
ՓՈՃՈԿԱՒՈՐՆԵՐ, յոգն. գ. (Բուս.) *Խաչաքաների կարգին պատկանող բոյսերի ցեղ:*

ՓՈՄՓՈՇ, ած. *Փափուկ:*
ՓՈՄՓՈՇԱՆԱԼ, բ. *Փոմփոշ դառնալ: Փափկիլ:*
ՓՈՅԹ, գ. *Հոգ, խնամք: Եռանդ:*
ՓՈՅԹԱՐԱԳ, ած. *Փութով եւ արագ:*
ՓՈՅԹԵՌԱՆԴՆ, ած. *Ջերմ եռանդով:*
ՓՈՅԹԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. *Փոյթեռանդ լինելը:*
ՓՈՅԹԸՆԹԱՑ, ած. *Արագընթաց:*
ՓՈՇԱԿԱԼԵԼ, բ. *Փոշիով բռնուել, փոշիով ծածկուել:*
ՓՈՇԱՀԱՄ, ած. *Փոշիի համ՝ տուող՝ ունեցող:*
ՓՈՇԱՀԱՐ, բ. *Փոշոտուած:*
ՓՈՇԱՀՈՂ, գ. *Փոշիացած հող:*
ՓՈՇԱՀՈՏ, ած. գ. *Փոշու հոտ ունեցող:*
ՓՈՇԱՑ, (արեւմտահայ լեզուով), Տ. *Բոշայ:*
ՓՈՇԱՆՕԹ, գ. (Բուս.) *Բոյսի ծաղկի մէջ բուսնող կոթնաւոր սեպաձեւ գործարան:*
ՓՈՇԵԹԱԹԱԽ, ած. *Ալիւրի կմ այլ փոշիով թաթախուած՝ ծածկուած:*
ՓՈՇԵԼԻՑ, ած. *Փոշիով լցուած:*
ՓՈՇԵԾԱՂԻԿ, գ. (Բուս.) *Այն ծաղիկը, որ միայն փոշանօթներ ունի:*
ՓՈՇԵԿԱՆԱՉ, ած. *Կանաչ գոյն ունեցող փոշի:*
ՓՈՇԵՀԱՆ, գ. *Փոշին հանող:*
ՓՈՇԵՊԱՏ, ած. *Փոշիով պատած:*
ՓՈՇԵՊԱՐԿ, գ. (Բուս.) *Փոշանօթի վերեւի փոքրիկ պարկը:*
ՓՈՇԵՍՈՒՆԿԵՐ, յոգն. գ. (Բուս.) *Մանրադիտական մանր՝ փոշու նման սընկիկների կարգ:*
ՓՈՇԵՏԵՍԱԿ, ած. *Փոշու նման, շատ մանր:*
ՓՈՇԻ, գ. *Փշրած՝ մանրամաղ հող: Ծաղկափոշի: Չափազանց մանրած ալիւրի: Մոխիր:*
ՓՈՇԻԱՁԵՒ, մկ. *Փոշու պէս:*
ՓՈՇԻԱՆԱԼ, բ. *Փոշի դառնալ:*

**ՓՈՇԻԱՑՈՒՄ**, գ. *Փոշիանալը։*

**ՓՈՇՈՏ**, ած. *Փոշու մէջ թաթախուած։*

**ՓՈՇՈՏԵԼ**, բ. *Փոշիով կեղտոտել։*

**ՓՈՇՏ**, գ. *Ամորձիքի պարկը։*

**ՓՈՇՏԱՆԿ**, գ. *Փոշտի՝ աղեթափութեան մի տեսակը։*

**ՓՈՇՏԱՆԿԱՒՈՐ**, ած. *Փոշտանկ՝ աղեթափութիւն ունեցող։*

**ՓՈՇՏԱՆԿՈՒԹԻՒՆ**, գ. *Փոշտանկ ունենալը։*

**ՓՈՉՈՉ**, գ. *Խառնուած մազեր։*

**ՓՈՉԽԵԼ**, նբ. *Շիւղով ակռաները մաքրել։*

**ՓՈՌԹԿԱԼ**, նբ. *Յանկարծակի եւ պոռթկուն ծիծաղիլ։*

**ՓՈՍ**, գ. *Հարթ մակերեւոյթի վրայ ներս ընկած՝ խոր ընկած տեղ։ Գետնի մէջ փորուած տեղ։ Խոռոչ։*

**ՓՈՍԱՀԱՏ**, ած. *Փոս կտրող փոս փորող։*

**ՓՈՍԱՆԱԼ**, բ. *Փոս դառնալ։*

**ՓՈՍԱՆՈՐՈԳՈՒՄ**, գ. *Ճանապարհի փոսերը նորոգելը։*

**ՓՈՍԵԼ**, նբ. *Փոս բանալ։*

**ՓՈՍԻԿ**, գ. *Փոքր փոս։*

**ՓՈՍՈՐԱԿ**, ած. *Ներս ընկած։*

**ՓՈՍՈՐԱԿՈՒԹԻՒՆ**, գ. *Փոսորակ լինելը։*

**ՓՈՍՈՒՌԱՅԳ**, գ. *Կայծոռիկ։*

**ՓՈՍՏ**, (Պարսկ.) գ. *Չմշակուած՝ հում մորթ։*

**ՓՈՍՓՈՐ**, գ. *Քիմիական ոչ մետաղային տարր որ մութի մէջ լոյս կուտայ, լուսածին։*

**ՓՈՐ**, գ. *Փոս ընկած տեղ։ Փորոտիք։ Կնոջ արգանդ։ Ուռուցիկ ամանների կմ իրերի միջի տարածութիւնը։*

**ՓՈՐԱԳԻՐ**, ած. *Փորագրուած։ Փորելով գրուած։*

**ՓՈՐԱԳՐԱՆԱԽՇ**, ած. *Փորագրութեամբ նախշուած։*

**ՓՈՐԱԳՐԱՊԱՏԿԵՐ**, գ. *Փորագրուած պատկեր, փորագրանկար։*

**ՓՈՐԱԳՐԱՔԱՆԴԱԿ**, գ. *Փորագրուած քանդակ։*

**ՓՈՐԱԳՐԱՔԱՐ**, գ. *Փորագրուած քար։*

**ՓՈՐԱԳՐԵԼ**, բ. *Կարծր նիւթերի վրայ (պողպատ, պղինձ, փայտ, ակներ) երկաթէ գրչով փորելով գրել։*

**ՓՈՐԱԳՐԻՉ**, գ. *Նա որ փորագրում է, փորագրող արուեստագէտ։*

**ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փորագրելը։*

**ՓՈՐԱԳՐՉՈՒԹԻՒՆ**, գ. *Փորագրութիւն։*

**ՓՈՐԱԾ**, անց. դերբ. *Փորել'ի։*

**ՓՈՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Փորը կտրելը։*

**ՓՈՐԱՄԱՍ**, գ. *Փորի մասը։*

**ՓՈՐԱՅԻՆ**, ած. *Փորին յատուկ։*

**ՓՈՐԱՏԱԿ**, գ. *Փորի տակ։*

**ՓՈՐԱՑԱՒ**, գ. *Փորի ցաւ։*

**ՓՈՐԱՑԱՒՈՒԹԻՒՆ**, գ. *Փորացաւ։*

**ՓՈՐԵԼ**, բ. *Գետինը քանդելով եւ հողը դուրս ածելով փոս ձեւացնել։ Փորելով ծակել։*

**ՓՈՐԵՂ**, ած. *Մեծ փորով։*

**ՓՈՐԹԱՓԵԼ**, բ. *Փորը աւրել։*

**ՓՈՐԻԿ**, (Փաղաքշ.) գ. *Փոքր փոր։*

**ՓՈՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ**, գ. (Ախտ.), *Հիւանդութիւն, որի ժամանակ փորի արտաթորութիւնը ջրալի է լինում։*

**ՓՈՐԽՈՑ**, գ. *Բարձրաձայն անզուսպ ծիծաղ։*

**ՓՈՐԿԱՊՈՒԹԻՒՆ**, գ. (Ախտ.), *Փորի կապ լինելը։ Փորի պնդութիւն։*

**ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆ**, Տ. *Փորլուծութիւն։ Փորքղուք։*

**ՓՈՐՁ**, գ. *Փորձելը, փորձուելը։ Գործ։ Գործողութիւն։ Գիտութիւն կմ հմտութիւն։ Բեմական երկի խմբական կատարում, առանց այցելուների։ Գրական աշխատանք։ Չարչարանք։ Վարժ մարզըուած։*

**ՓՈՐՁԱԳԷՏ**, ած. *Փորձերի միջոցով մի բանի հմտացած։*

**ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. *Փորձագէտ լինելը։*

**ՓՈՐՁԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Փորձերի արձանագրում:*

**ՓՈՐՁԱԴԱՇՏ**, գ. *Դաշտ կմ արտ, որի մէջ գիտական փորձեր են անում զանազան բոյսերի վրայ:*

**ՓՈՐՁԱԹՈՒԻՉՔ**, *Թռչող սարքի փորձարկման ձեւ:*

**ՓՈՐՁԱԼԻՑ**, ած. *Փորձանքներով լի:*

**ՓՈՐՁԱԿԻՑ**, ած. *Փորձին մասնակից, միասին փորձող՝ փորձուած:*

**ՓՈՐՁԱՆԱԿ**, գ. *Անօթ կմ սարած, որ գործ են ածում քիմիական, ֆիզիկական եւ բժշկական զանազան փորձերի համար:*

**ՓՈՐՁԱՆՔ**, գ. *Փորձելը: Աղէտ, պատուհաս:*

**ՓՈՐՁԱՆՔՈՏ**, *Փորձանքներով լի:*

**ՓՈՐՁԱՆՕԹ**, Տ. *Փորձանակ:*

**ՓՈՐՁԱՌԱԲԱՐ**, մկ. *Փորձի միջոցով:*

**ՓՈՐՁԱՌԱԳԷՏ**, ած. գ. *Փորձառու:*

**ՓՈՐՁԱՌԱԿԱՆ**, ած. *Ինչ որ հիմնուած է գիտական փորձերի վրայ:*

**ՓՈՐՁԱՌՈՒ**, ած. *Մի բանի փորձն առած՝ փորձած: Հմուտ, գիտակ, վարժ:*

**ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Փորձառու լինելը:*

**ՓՈՐՁԱՍԷՐ**, ած. գ. *Նա որ սիրում է փորձել:*

**ՓՈՐՁԱՐԿԵԼ**, բ. *Փորձել:*

**ՓՈՐՁԱՐԿԻՉ**, ած. գ. *Նա որ փորձարկում է:*

**ՓՈՐՁԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. *Փորձարկելը, փորձելու համար բանեցնելը:*

**ՓՈՐՁԵԼ**, բ. *Մի բան անել մի նպատակի հասնելու համար:*

**ՓՈՐՁԸՆԿԱԼՈՒՄ**, գ. *Փորձի ընկալում:*

**ՓՈՐՁԻՉ**, ած. գ. *Նա որ փորձում է, փորձող: Սատանայ:*

**ՓՈՐՁՆԱԿԱՆ**, ած. *Իբրեւ փորձ կատարուած:*

**ՓՈՐՁՈՒԹԻՒՆ**, գ. *Փորձ՝ հմուտ՝ վարժ լինելը:*

**ՓՈՐՁՈՒԿ**, ած. *Փորձուած:*

**ՓՈՐՁՏԵՍ**, գ. *Փորձի համար թխուած հաց:*

**ՓՈՐՄՇԱԿ**, գ. *Մշակ:*

**ՓՈՐՈՎ**, ած. *Փորը մեծացած:*

**ՓՈՐՈՏԱՅԻՆ**, ած. *Փորոտիքին յատուկ:*

**ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ**, յոգն. գ. (Կենդ.) *Խըղունջների այլ՝ գիտական անունը:*

**ՓՈՐՈՏԻՔ**, գ. *Փորի մէջ գտնուող գործարաններ՝ աղիք, ընդերք:*

**ՓՈՐՈՒԱԾՔ**, գ. *Փորելը, փորուելը: Փոս:*

**ՓՈՐՈՒՄ**, գ. *Փորելը:*

**ՓՈՐՈՒՐԱՐ**, գ. (Եկեղ.) *Փորի ուրար, քահանայի եւ եպիսկոպոսի զգեստաւորման մաս:*

**ՓՈՐՈՔ**, գ. *Գետնի վրայ փորուած տարածութիւն:*

**ՓՈՐՈՔԱՀԱՏ**, ած. գ. *Փորոք կտրող, փորոք շինող:*

**ՓՈՐՍԻՎԵՐ**, մկ. *Փորը դէպի վեր:*

**ՓՈՐՍՈՂ**, գ. *Փորի վրայ սողալը:* Փոխ. *Մէկի առաջ սողալով:*

**ՓՈՐՍՈՒՈՐ**, մկ. *Փորի վրայ:*

**ՓՈՐՑԱՒ**, գ. *Փորի ցաւ:*

**ՓՈՐՓՈՇ**, ած. *Փափուկ:*

**ՓՈՐՓՈՇԱՆԱԼ**, բ. *Փորփոշ դառնալ:*

**ՓՈՐՓՈՇՈՒԹԻՒՆ**, գ. *Փորփոշ լինելը:*

**ՓՈՐ-ՓՍՈՐ**, գ. *Փորը եւ շուրջը եղած մասը:*

**ՓՈՐՔԱՇ**, գ. *Գօտի:*

**ՓՈՐՔԵԼ**, բ. *Աղջիկների մեծանալ, արբունքի հասնել:*

**ՓՈՐՕՔ**, մկ. *Փորովը մէկ:*

**ՓՈՑԽ**, գ. *Խոտ ժողուելու երկրագործական գործիք:*

**ՓՈՑԽԱՒՈՐ**, ած. գ. *Փոցխ ունեցող:*

**ՓՈՑԽԵԼ**, բ. *Փոցխով՝ քաղած:*

**ՓՈ՛Ւ**, միջ. *որ արտայայտում է արհամարհանք եւ նախատինք:*

**ՓՈՒԹ**, ած. *Թնթղուց, առանց ոսկորի եւ ճարպի:*

**ՓՈՒԹ**, գ. *Ծանրութեան ռուսական հին*

չափ:
ՓՈՒԹԱԲԱՆ, ած. Շտապ-շտապ խօսող:
ՓՈՒԹԱԲԱՆԵԼ, բ. Շտապ-շտապ խօսել, վրայ տալ:
ՓՈՒԹԱԼ, բ. Փոյթ ունենալ, հոգ տանել: Շտապել:
ՓՈՒԹԱԼԻ, ած. Ինչ բանի որ մարդ փոյթ՝ հոգ է տանում:
ՓՈՒԹԱԿԱՄ, ած. Ջանասէր:
ՓՈՒԹԱՃԵՄ, ած. Արագ ճեմող:
ՓՈՒԹԱՄԱՀ, ած. Մահն արագացնող:
ՓՈՒԹԱՆԱԼ, Տ. Փութալ:
ՓՈՒԹԱՆՑԻԿ, ած. Շուտով անցնող, վաղանցուկ:
ՓՈՒԹԱՇԱՐԺ, ած. Փոյթ՝ արագ շարժուող:
ՓՈՒԹԱՊԷՍ, մկ. Փութով, շտապով:
ՓՈՒԹԱՋԱՆ, ած. Արագ եւ յօժարակամ մի բան անող: Ջանասէր, եռանդուն:
ՓՈՒԹԱՋԱՆՈՒԹԻՒՆ, գ. Փութաջան լինելը:
ՓՈՒԹԱՋԱՆՕՐԷՆ, մկ. Փութաջան կերպով:
ՓՈՒԹԱՍԻՐՏ, ած. Սրտով շտապող:
ՓՈՒԹԱՑՈՒՑԻՉ, ած. Նա որ փութացնում է, փութացնող:
ՓՈՒԹԱՔԱՅԼ, ած. մկ. Արագ՝ շտապով քայլող:
ՓՈՒԹԸՆԹԱՑ, ած. Փոյթ՝ արագ ընթացող:
ՓՈՒԹԿՈՏ, ած. Շատ փութացող:
ՓՈՒԹԿՈՏՈՒԹԻՒՆ, գ. Փութկոտ լինելը:
ՓՈՒԹՈՎ, մկ. Շուտով:
ՓՈՒԹՈՏ, ած. Փութացող, փութկոտ:
ՓՈՒԼ, գ. Փլչելը, փլատակ: Հմմտ. Փլչել: Փլած տեղ:
ՓՈՒԼ, գ. Լուսնի՝ լրումից յետոյ հետըզհետէ նուազելը: Հանգրուան,իրադարձութիւն:
ՓՈՒԼԱՅՆԱՑՈՒՄ, գ. Փուլերի վերածելով իրականացնելը:
ՓՈՒԼԱՆՑՈՒՄԱՅԻՆ, ած. Փուլից փուլ անցնող:
ՓՈՒԼԱՇՐՋԱՆ, Որոշակի ժամանակահատուածում զարգացման աւարտուն շրջան:
ՓՈՒԼ ԳԱԼ, նբ. Փլչիլ:
ՓՈՒՂՋ, գ. Երկրաչափական մարմին:
ՓՈՒԽ }
ՓՈՒԽՐ } ած. Փխրուն:
ՓՈՒՆԴ, գ. Սուտ:
ՓՈՒՆՋ, գ. Բոյսի արմատ: Խուրձ:
ՓՈՒՇ, գ. Պինդ ու սրածայր յաւելուած: Ոզնիի մորթը ծածկող ասեղնաձեւ խայթոցները:
ՓՈՒՇԻ, գ. Մետաքսէ փայլուն թաշկինակ:
ՓՈՒՇՏ, գ. Իզացող:
ՓՈՒՇՏԻՊԱՆ, գ. Թիկնապահ զինուոր:
ՓՈՒՉ, ած. Մէջը դատարկ: Փոխ. Ունայն: Վատ, անպիտան, սրիկայ: Յանցանք:
ՓՈՒՉԻԿ, գ. Փամփուշտ՝ պղպջակ կենդանական մարմնի մէջ: Միզափամփուշտ: Զզախեժիկ օդով լեցուելիք տոպրակ. Ballon:
ՓՈՒՉՔ, գ. Առանձին-առանձին դրուած իրեր:
ՓՈՒՉՔԱՐ, գ. Ծակոտկէն քար:
ՓՈՒՌ, ած. Շատ-շատ, կմ լիքը:
ՓՈՒՌ, գ. Հաց կամ կերակուր եփելու հնոց թրձոց (բրուտի):
ՓՈՒՌԱԿ, Տ. Օջաղ:
ՓՈՒՌԹԻԿ, Տ. Փրթիկ:
ՓՈՒՌՆԻԿ, գ. Թանձր ու կլոր հաց:
ՓՈՒՌՆՈՒՋ, գ. Ձուաձեւ հաց:
ՓՈՒՍ, գ. Մշուշ:
ՓՈՒՍՏ, ած. Պարապ, դատարկ:
ՓՈՒՏ, գ. Փտելը, փտութիւն: Փտած, փթած:
ՓՈՒՏԱՆՈՒՆ, գ. Ծաղրանուն:
ՓՈՒՐ, գ. Ծառի տերեւ: Սոխի կեղեւը:

**ՓՈՒՐՁ**, գ. *Բուրդ, խուճուճ:*
**ՓՈՒՐՓՈՒՋՆԱՅ**, գ. *Խաղողի մի տեսակ:*
**ՓՈՒՓ**, (Մանկ.), գ. *Ուտելիք:*
**ՓՈՒՓՈՒ**, (Մանկ.), գ. *Ուտելիք:*
**ՓՈՒՓՈՒԼ**, գ. *Ականջի քովի խոպոպիկ:*
**ՓՈՒՓՈՒԼԻԿ**, (Մանկ.), ած. *Փամփլիկ:*
**ՓՈՒՓՈՒՇ**, գ. *Ճակատի վրայի խոպոպիքը: Հաւի գլխի փնջաձեւ ցցունքը:*
**ՓՈՒՔ**, գ. *Շնչող օդ, օդի շարժում:* Հմմտ. *Փուքս: Յուզմունք, բարկութիւն, վիշտ: Փքուած, ուռած: Յուրտ հով, մէջը դատարկ:*
**ՓՈՒՔՆԻ**, գ. *Մի տեսակ շուտ հասնող խաղող:*
**ՓՈՓՈԽ**, ած. մկ. *Փոխնիփոխ, փոխ առ փոխ:*
ՔԱՐԿՇԵՌՔ, գ. *Հայկի աստեղատունը։*
ՔԱՐԿՈԾ, ած. *Քարկոծուած։*
ՔԱՐԿՈԾԱՆՔ, գ. *Քարկոծելը, քարկոծում։ Քարով զարնելը։*
ՔԱՐԿՈԾԵԼ, բ. *Քարերով կոծել։ Զարնել։*
ՔԱՐԿՈԾԻՉ, ած. գ. *Նա որ քարկոծում է, քարկոծող։*
ՔԱՐԿՈՂԻՆՁ, ած. *Խիստ կարծր կորիզ ունեցող (պտուղ)։*
ՔԱՐԿՈՓ, Տ. *Քարակոփ։ Քարաշէն։*
ՔԱՐՀԱԼԱԾ ԱՆԵԼ, բ. *Քարեր նետելով հալածել։*
ՔԱՐՀԱՆՔ, գ. *Քարահանք։*
ՔԱՐՀԱՏ, ած. գ. *Քարահատ։*
ՔԱՐՀԱՑԻ, գ. *Անորոշ տեսակի անտառային ծառ։*
ՔԱՐՁ, ած. *Որի մորուքը ցանցառ է։*
ՔԱՐՁԳՈՒԹԻՒՆ, Տ. *Քարաձգութիւն։*
ՔԱՐ-ՃԱՐ ԱՆԵԼ, բ. *Ամէն միջոց գործ դնել, ջանալ, ճար ու ճուր անել։*
ՔԱՐՃԻՆ, գ. *Վայրի տանձ։*
ՔԱՐՃՆԻ, գ. *Վայրի տանձենի։*
ՔԱՐՄԱՂ, գ. *Խճաքարի խոշոր ծակոտկիներով մաղ։*
ՔԱՐՇ, գ. *Քաշելը, քաշ տալը։*
ՔԱՐՇ, գ. *Շարականի երաժշտական խաղերից մէկը։*
ՔԱՐՇԱԾ } ՔԱՐՇԱՀԵՏ } գ. *Օձի՝ սողունների հետքը գետնի վրայ։*
ՔԱՐՇԱՀԵՏ} գ. *Օձի՝ սողունների հետքը գետնի վրայ։*
ՔԱՐՇԱԿԱՐԹ, գ. *Քարշակելու՝ քարշ տալու համար նախատեսուած կարթ։*
ՔԱՐՇԱՆՔ, գ. *Քաշ տալը գետնի վրայով։ Չարչարանք։*
ՔԱՐՇԱՐ, գ. Քարեր շարելը։
ՔԱՐՇԵԼ, բ. *Քաշել, քաշ տալ։*
ՔԱՐՇՈՂԱԿԱՆ, ած. *Դէպի ինքը քաշող՝ ձգող։*
ՔԱՐՇՈՒԹԻՒՆ, գ. *Ինքն իրեն քաշելը։*
ՔԱՐՇՔԱՐՇԵԼ, բ. *Քաշքշել։*
ՔԱՐՈԶ, գ. *Մունետիկ, որ հրապարակներում բարձր ձայնով յայտարարում էր իշխանութեան հրամանները։ Քարոզի յայտարարածը։* (Եկեղ.) *Ինչ որ եկեղեցում սարկաւագն ասում է՝ իբրեւ պատուէր։* (Եկեղ.) *Քահանայի կմ բարձրաստիճան հոգեւորականի բեմբասացութիւնը եկեղեցում։* (Եկեղ.) *Ներբողեան։ Երկար ու անհամ խօսել, շատախօսութիւն անել։*
ՔԱՐՈԶԱԳԻՐՔ, Տ. *Քարոզգիրք։*
ՔԱՐՈԶԱԾԱՐԱՒ, ած. (Կրօն.) *Քարոզի ծարաւ զգացող։*
ՔԱՐՈԶԱԿԱՆ, ած. *Քարոզին կմ քարոզչին յատուկ։*
ՔԱՐՈԶԱԿԻՑ, ած. գ. *Միասին քարոզող։*
ՔԱՐՈԶԱՐԱՆ, գ. *Եկեղեցական քարոզ խօսելու տեղ։*
ՔԱՐՈԶԳԻՐՔ, գ. (Եկեղ.) *Գիրք, որ պարունակում է քարոզների ժողովածու։*
ՔԱՐՈԶԵԼ, բ. *Բարձր ձայնով՝ հրապարակով իբրեւ մունետիկ յայտարարել իշխանութեան հրամանը։* (Եկեղ.) *Բարձր ձայնով (քահանայի) պատուէրը։ Քաղափար մը տարածել։*
ՔԱՐՈԶԻՉ, ած. գ. *Նա որ քարոզում է, քարոզող։*
ՔԱՐՈԶՉԱՆԻՒԹ, գ. *Քարոզելու նիւթ։*
ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ, գ. *Քարոզելը, հրապարակով յայտարարելը։*
ՔԱՐՈԶՉԱԿԱՆ, ած. *Քարոզչին յատուկ։*
ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆ, գ. *Քարոզիչ լինելը, քարոզելը։*
ՔԱՐՈՎ-ՔԱՐԱՏԱԿ, ած. *Բոլորովին քարատակ։*
ՔԱՐՈՏ, ած. *Որտեղ քարը շատ է։*
ՔԱՐՈՏԵԼ, բ. *Քարկոծել։*
ՔԱՐՈՑ, գ. *Մամուլ, ճնշան։*
ՔԱՐՈՒԱԿ, ած. *Ամօթալից, խաղք ու*

*խայտառակ:*
**ՔԱՐՈՒԱՏԱԿ**, Տ. *Քարուքանդ:*
**ՔԱՐՈՒԿ**, գ. *Փոքր քար:*
**ՔԱՐ ՈՒ ԿԱՊԱՆ**, Տ. *Քարէկապան:*
**ՔԱՐՈՒԿԻՐ**, ած. մկ. *Քարի շարուածք:*
**ՔԱՐ ՈՒ ԿՇԵՌՔ**, Տ. *Կշեռք:*
**ՔԱՐՈՒՂԻ**, գ. *Գետաքարերով սալայատակուած ճանապարհ:*
**ՔԱՐՈՒՏ**, ած. *Քարերով լիքը:*
**ՔԱՐՈՒԱՆ**, Տ. *Կարաւան:*
**ՔԱՐՈՒԱՆԿՈՐՈՒՍ**, *Քարւան*, գ. *Արուսեակից առաջ ծագող մեծ լուսաւոր աստղ:*
**ՔԱՐՈՒԱՆՍԱՐԱՅ**, գ. *Իջեւան ճանապարհների վրայ: Ընդարձակ շինութիւն, ներսի բակով:*
**ՔԱՐՈՒՐԱԳ**, **ՔԱՐՈՒՐԱԳԻ**, գ. *Քար տաշելու ուրագ, քարի մուրճ:*
**ՔԱՐՈՒՔԱՆԴ**, ած. *Բոլորովին քանդուած, հիմնայատակ եղած:*
**ՔԱՐՈՒՔԱՆԴԱԿ**, ած. Տ. *Քարուքանդ:*
**ՔԱՐՈՒՔԱՑԱԽ**, գ. *Անպէտք կերակուր:*
**ՔԱՐՈՒՔՌԱՅ**, ած. գ. *Խոշոր քարեր թափթփած:*
**ՔԱՐՋԱՐԴ**, գ. *Քարեր խփելով ջարդելը:*
**ՔԱՐՍԻՐՏ**, ած. Տ. *Քարասիրտ: Անգութ:*
**ՔԱՐՏ**, Տ. *Քարտէս:* Հմմտ. *Այցաքարտ: Հաստ թուղթ:*
**ՔԱՐՏԱՇ**, ած. գ. *Քար տաշող:*
**ՔԱՐՏԱՇՈՒԹԻՒՆ**, գ. *Քարտաշ լինելը:*
**ՔԱՐՏԱՊԱՆ**, գ. *Քարտատէր:*
**ՔԱՐՏԷՋ**, **ՔԱՐՏԷՍ**, գ. *Մագաղաթի կմ թղթի կըտոր, որի վրայ գրում են: Գիր, նամակ: Աշխարհագրական պատկեր:*
**ՔԱՐՏԷՋ**, գ. *Կիլիկեան դրամ:*
**ՔԱՐՏԷՋԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քարտէզներ գծագրելը՝ վիմագրելը:*
**ՔԱՐՏԻԿԱՅ**, գ. *Յորենի եւ գարու խառնուրդից ալիւր:*
**ՔԱՐՏՈՒՂԱՐ**, գ. *Պաշտօնական անձ ատեաններում: Գրասենակի գրաւոր հաղորդակցութիւն կատարող:*
**ՔԱՐՏՈՒՂԱՐԱԿԱՆ**, ած. *Քարտուղարի յատուկ:*
**ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ**, գ. *Քարտուղարի պարապմունքի սենեակը:*
**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քարտուղար լինելը:*
**ՔԱՐՓԱԿ**, գ. *Արտերի մէջ դիզուած քարերի կոյտ:*
**ՔԱՐՔԱՄ**, գ. *Քարով քամելը:*
**ՔԱՐՔԱՆԴԵԼ**, բ. *Քարուքանդ անել:*
**ՔԱՐՔԱՇ**, գ. *Շարականի երաժշտական խաղերից մէկը:*
**ՔԱՐՔԱՇ**, գ. *Տախտակէ ամաններ:* մկ. *Քաշքշելով, գետնի վրայով քաշ տալով:*
**ՔԱՐՔԱՇԱՄ**, գ. *Անորոշ տեսակի ջրային կենդանի*
**ՔԱՐՔԱՇԱՆ**, ած. գ. *(Գերեզմանի վրայ) քար քաշող:*
**ՔԱՐՔԱՇԱՆ**, գ. *Մեծ պասի վերջին շաբաթը:*
**ՔԱՐՔԱՐՈՏ**, ած. *Որտեղ քար շատ կայ:*
**ՔԱՑԱԽ**, գ. *Թթուեցրած գինի:* գ. Փոխ. *Դաժան՝ բարկացկոտ:*
**ՔԱՑԱԽԱԳՈՅՆ**, ած. *Շատ քացախած կմ քացախի գոյնը:*
**ՔԱՑԱԽԱԳՈՐԾ**, ած. գ. *Քացախ շինող:*
**ՔԱՑԱԽԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Քացախագործի արհեստը*:
**ՔԱՑԱԽԱԹԱՆ**, գ. *Բժշկական ըմպելիք:*
**ՔԱՑԱԽԱԿԱՆ**, ած. *Քացախի:*
**ՔԱՑԱԽԱՀՈՏ**, գ. *Քացախի հոտ:*
**ՔԱՑԱԽԱՄԱՆ**, գ. *Քացախը պահելու աման:*
**ՔԱՑԱԽԱՄԱՅՐ**, գ. *Քացախի ամանի տակ նստած դիրտը:*
**ՔԱՑԱԽԱՅԻՆ**, ած. *Քացախին յատուկ, վերաբերեալ:*
**ՔԱՑԱԽԱՉԱՓ**, ած. *Գործիք, որով չափում են քացախի ոյժը:*
**ՔԱՑԱԽԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Քացախ վա-*

*ճառող:*
**ՔԱՑԱԽԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Քացախավաճառ լինելը:*
**ՔԱՑԱԽԱՏ**, գ. (Քիմ.) *Ընդհանուր անուն քիմիական աղերի, որոնք ստացուում են քացախային թթուուտի միացումից:*
**ՔԱՑԱԽԵԼ**, բ. *Թթուելով քացախ դառնալ: Թթուել:*
**ՔԱՑԱԽԻԿ**, գ. *Փոքր ինչ քացախ:*
**ՔԱՑԱԽՈՏ**, ած. *Քացախ քսուած՝ խառնըուած:*
**ՔԱՑԱԽՈՏԵԼ**, բ. *Քացախ քսել:*
**ՔԱՑԻ**, գ. *Աքացի:*
**ՔԱՑԱԽՈՒԹԻՒՆ**, **ՔԱՑԱԽՈՒՄ** } գ. *Քացախելը:*
**ՔԱՑԽԱՆ**, գ. *Խմոր շաղուելու տաշտ:*
**ՔԱ՛Ի**, միջ. (արմ. Քաւել՚ի), *Հեռու ինձանից:*
**ՔԱՒ**, գ. *Վէրքի նախնական դարման, արիւնը կանգնեցնելու համար:*
**ՔԱՒԱՆԿ**, ած. *Կակուղ:*
**ՔԱՒԱՐԱՆ**, գ. *Մահէնետի՝ մեղքերու թողութեան վայր:*
**ՔԱՒԱՐԱՐ**, ած. գ. *Քաւող:*
**ՔԱՒԱՐՋ**, գ. *Շատ կարծր զանազան գոյնի քար:*
**ՔԱՒԻԴ**, գ. *Մտացածին:*
**ՔԱՒԻԴԷՈՒԹԻՒՆ**, Տ. *Քաղդէութիւն:*
**ՔԱՒԵԼ**, բ. (Կրօն.) *Մեղքերը սրբել՝ փարատել: Արած սխալն ուղղել: Ապաշխարելով արդարանալ:*
**ՔԱՒԵԼ**, բ. *Վէրքը խնամել, դարմանել:*
**ՔԱՒԻՉ**, ած. գ. (Եկեղ.) *Նա որ քաւում է:*
**ՔԱՒՈՐ**, գ. *Կնքաւոր:*
**ՔԱՒՈՐԱԿԻՆ, ՔԱՒՈՐԿԻՆ**, Տ. *Կնքակին:*
**ՔԱՒՈՐԱՄԱՅՐ, ՔԱՒՈՐԱՄԷՐ**, Տ. *Կնքամայր:*
**ՔԱՒՈՒԹԻՒՆ**, (Եկեղ.) գ. *Քաւելը՝ մեղքերը սրբելը:*
**ՔԱՒՈՒԹԻՒՆԱԲԵՐ**, ած. *Քաւութիւն բերող:*
**ՔԱՒՉԱԿԱՆ**, ած. *Քաւութեան վերաբերեալ:*
**ՔԱՒՉԱՊԵՏ**, գ. (Կրօն.) *Գլխաւոր քաւիչ:*
**ՔԱՒՉԱՊԵՏԱԿԱՆ**, ած. *Քաւչապետին յատուկ, քահանայապետական:*
**ՔԱՓԱՆԱԿ**, գ. *Անասունների, մանաւանդ ոչխարների թոքերի հիւանդութիւն:*
**ՔԱՓՈՒՐ**, գ. *Հաստատուն՝ բիւրեղական՝ թափանցիկ եւ սպիտակ նիւթ:*
**ՔԱՓՐԱԽԱՌՆ**, ած. *Որի մէջ քափուր է խառնած:*
**ՔԱՔ**, գ. *Կերակրի աւելորդը:* Նման. *Քըթի կեղտ: Անպէտք՝ անարժէք բան: Կըղկղանք:*
**ՔԱՔ**, գ. *Չոր հաց,* պաքսիմատ:
**ՔԱՔԱՀԱՅՐ**, ած. *Որի հայրը քաք է,* (նախատ. բառ):
**ՔԱՔԱՀՈՏ**, գ. *Քաքի հոտ:*
**ՔԱՔԱՅԵԼ**, բ. *Մէկին քննադատել, մեղադրել:*
**ՔԱՔԱՆՈՑ**, ած. գ. *Որտեղ լիքը քաք է:*
**ՔԱՔԱՆՈՑՆԱԼ**, բ. *Քաքանոց դառնալ:*
**ՔԱՔԱՇԱԼԱԿ**, ած. *Այն երեխան, որից յետոյ ծնուածը աղջիկ է լինում:*
**ՔԱՔԱՐ**, գ. *Իւղով տապակած մի տեսակ կարկանդակ:*
**ՔԱՔԲԵՐԱՆ**, ած. *Քաքոտ բերան:*
**ՔԱՔԵՐԵՍ**, ած. *Անպիտան, փչացած* (նախատ. բառ):
**ՔԱՔԷՆ**, ած. *Անպէտք, անարժէք:*
**ՔԱՔԼԱՆ**, ած. *Տակը շուտ-շուտ կեղտոտող:*
**ՔԱՔԿՈԿՈՐԴ**, ած. *Ամէն բան անխտիր ուտող:*
**ՔԱՔՄԷՋ**, ած. *Փչացրած, վնասած:*
**ՔԱՔՆԵԼ**, բ. *Փորից դուրս կղկղանք արտաքսել:*
**ՔԱՔՆՈՑ**, գ. *Բաց տեղ, ուր զնում են բնական կարիքը հոգալու:*
**ՔԱՔՈՏ**, ած. *Քաքով կեղտոտուած:*
**ՔԱՔՈՏԵԼ**, բ. *Քաքով ապականել:*

**ՔԱՔՈՒՌ**, գ. *Տաւարի կու:*
**ՔԱՔՈՒՌԱՀՈՏ**, գ. *Քաքուռի՝ կուի հոտ:*
**ՔԱՔՑՆԵԼ**, անց. ձեւ *Քաքնել՛ի*, նոյն նշ.:
**ՔԱՕՍ**, Տ. *Քաոս:*
**ՔԵԱԼ**, գ. *Գոմէշ:*
**ՔԵԱՀՐԷԶ**, գ. *Գետնի տակով փորած ջրի ճանապարհ:*
**ՔԵԱՒԱՌ**, գ. (Բուս.) *Վայրի սոխ:*
**ՔԵԶ**, *Դու, դերանուն եզ. տր. Հոլովը:*
**ՔԵՋԱՐ**, գ. *Կալում մնացած խոշոր յարդ:*
**ՔԵԶԷՆ** / **ՔԵԶՈՅՆ** } անձն. դեր. *Հէնց քեզ:* մկ. *Ինքդ քո կողմից:*
**ՔԵԹՐ**, ած. *Խէթ, ծուռ:*
**ՔԵԹՐՕՇ**, ած. *Ծուռ:*
**ՔԵԼԵԽ**, գ. *Նոր թաղուած ննջեցեալի յիշատակին տրուած ճաշկերոյթ, հոգեհաց:*
**ՔԵԼԵԽԱԿԵՐ**, ած. *Քելեխ ուտող:*
**ՔԵԽ**, գ. *Իշի համետի վրայ փայտից յարմարանք:*
**ՔԵԾ**, ած. *Թոյլ:*
**ՔԵՂ**, գ. *Անուն, որ տրուում է զանազան բոյսերի:*
**ՔԵՂԱՎԱՐ**, ած. *Քեղիով վարուող, ղեկավարուող, (նաւ):*
**ՔԵՂԵԼ**, բ. *Փրցնել, պոկել, քաղել:*
**ՔԵՂԻ**, գ. *Նաւի ղեկ: Մայլի փայտ որու երկու կողմերուն եզները կը լծեն:*
**ՔԵՂԻԿՈՆ**, գ. *Պարուրաձեւ գիծ գլանի շուրջը:*
**ՔԵՂՊԵԼ**, բ. *Բանջարի զոխը մատներով կեղեւել:*
**ՔԵՂՔԵՂՈՒԵԼ**, բ. *Պատառոտուել:*
**ՔԵՄԽՏԱԳՈՐԾ**, ած. գ. *Քեմուխտ շինող, կաշեգործ:*
**ՔԵՄԽՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Քեմխտագործի արհեստը:*
**ՔԵՄԽՏԱՊԱՏ**, ած. *Քեմուխտով պատած:*
**ՔԵՄՈՒԽՏ**, գ. *Ողորկուած բարակ կաշի զանազան պէտքերի համար:*
**ՔԵՆԱԿԱԼ** / **ՔԵՆԵԿԱԼ** } գ. *Քենու ամուսինը:*
**ՔԵՆԹԻԿ**, ած. *Ագահ ուտող:*
**ՔԵՆԹԻԿՈՒԹԻՒՆ**, գ. *Քենթիկ լինելը:*
**ՔԵՆԻ**, գ. *Ամուսնու համար կնոջ քոյրը:*
**ՔԵՆՈՆՔ**, գ. *Քենու ընտանիքը:*
**ՔԵՆՁ**, գ. *Մաշուած իր:*
**ՔԵՆՋԵԼ**, գ. *Աման, որով խաբի կաթը չափում են փոխ տալիս:*
**ՔԵՇ**, գ. *Չորթան: Մածուն:*
**ՔԵՇԻԿ**, գ. *Պահակ:*
**ՔԵՊԷ**, գ. (Մնոտ.) *Երեւակայական վնասակար ոգի:*
**ՔԵՌԱԴՈՒՍՏՐ**, գ. *Քրոջ աղջիկը:*
**ՔԵՌԱԿԻՆ**, Տ. *Քեռեկին:*
**ՔԵՌԱՅՐ**, գ. *Քրոջ ամուսինը:*
**ՔԵՌԵԿԻՆ**, գ. *Քեռու կինը:*
**ՔԵՌԻ**, գ. *Մօր եղբայրը:* (Ծածկ.) *Լրտեսուտիկան:*
**ՔԵՌԿԻՆ**, Տ. *Քեռեկին:*
**ՔԵՌՈՐԴԻ**, գ. *Քրոջ որդին:*
**ՔԵՌՈՒՄ**, ած. *Համեղ, լաւ:*
**ՔԵՌՊԱՊ**, գ. *Քեռու հայրը:*
**ՔԵՍԱՏ**, (Արաբ.) ած. *Նուազ, սակաւ, կարիքաւոր:*
**ՔԵՍԱՏԱՆԱԼ**, բ. *Քեսատ դառնալ, նուազել:*
**ՔԵՍԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Քեսատ լինելը, նուազում: Անբաւարարութիւն:*
**ՔԵՍՏ**, ած. *Միրտը առնուած:*
**ՔԵՏԱԳԱՄԵԼԻ**, բ. *Գրելու է, փորագրելու է:*
**ՔԵՐԱԾ**, գ. *Քերուածք, քերելը:*
**ՔԵՐԱԾՈՅ**, ած. *Քերելով կազմուած:*
**ՔԵՐԱԿԱՆ**, ած. *Քերածոյ, քանդակուած: Քերականութեան հմուտ, քերականգէտ:*
**ՔԵՐԱԿԱՆԱԳԷՏ**, ած. *Քերականութեան հմուտ, մասնագէտ:*
**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ**, ած. *Քերականութեան յատուկ:*
**ՔԵՐԱԿԱՆԱՅԻՆ**, Տ. *Քերականական:*

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Արուեստ կմ գիտութիւն՝ կանոնաւոր կերպով մի լեզուով խօսելու եւ գրելու:*
**ՔԵՐԱԿԱՆՕՐԷՆ**, մկ. *Ըստ քերականութեան, քերականական կանոնների համաձայն:*
**ՔԵՐԴԱԾ**, Տ. *Քերթած:*
**ՔԵՐԵԼ**, բ. *Մի սուր գործիք մի առարկայի մակերեւոյթին քսելով՝ նրանից մասնիկներ հեռացնել:*
**ՔԵՐԹԱԾ**, գ. Տ. *Քերթուած:*
**ՔԵՐԹԱԾՈՒԹԻՒՆ**, գ. *Քերթուածք:*
**ՔԵՐԹԵԼ**, բ. *Դանակով մորթը մսից հեռացնել: Կեղեբել: Տաշիլ, յղկել:*
**ՔԵՐԹԵԼ**, բ. *Բանաստեղծութիւն յօրինել:*
**ՔԵՐԹՈՂ**, գ. Տ. *Բանաստեղծ: Քերական:*
**ՔԵՐԹՈՂԱԲԱՆԵԼ**, ն. բ. *Իբրեւ քերթող գրել:*
**ՔԵՐԹՈՂԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ քերթող՝ բանաստեղծ:*
**ՔԵՐԹՈՂԱԿԱՆ**, ած. *Բանաստեղծական:*
**ՔԵՐԹՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քերթողական հմտութիւն:*
**ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ**, գ. *Քերթողների մէջ գլխաւորը:*
**ՔԵՐԹՈՂԱՊԷՍ**, Տ. *Քերթողաբար:*
**ՔԵՐԹՈՂՈՒԹԻՒՆ**, գ. *Բանաստեղծական երգ:*
**ՔԵՐԹՈՒԱԾ**
**ՔԵՐԹՈՒԱԾՔ** } գ. *Բանաստեղծական գրուածք:*
**ՔԵՐԹՈՒԹԻՒՆ**, գ. *Քերթողութիւն, բանաստեղծելու արուեստը:*
**ՔԵՐԹՈՒՀԻ**, Տ. *Քերթողուհի:*
**ՔԵՐԻՃ**, գ. *Թոնրի կողին կպած հաց:*
**ՔԵՐԻՉ**, գ. *Քերելու գործիք:*
**ՔԵՐԻ-ՔԵՐԻ ԱՆԵԼ**, բ. *Շարունակ քերել՝ քորել:*
**ՔԵՐԾ**, գ. *Մեծ քարաժայռ:*
**ՔԵՐԾԵԼ**, բ. *Ձեռքի շփումով կեղեւը հեռացնել, սկրթել:*
**ՔԵՐԾԷ**, գ. *Բարձր ոտքերով որսաշուն:*
**ՔԵՐԾԻՎԱՅՐ**, մկ. *Քերծի վրայով դէպի ներքեւ:*
**ՔԵՐԾԻՎԵՐ**, մկ. *Քերծի վրայով դէպի վեր:*
**ՔԵՐՄԱՂ**, գ. *Անորոշ տեսակի լեռնային բոյս:*
**ՔԵՐՈՎԲԷ**, գ. (Կրօն.) *Հին կտակարանում՝ հրեշտակ մարդկային կերպարանքով: Քրիստոնէական եկեղեցին նրան դասում է հրեշտակների ինը դասի մէջ բարձրագոյն տեղում:*
**ՔԵՐՈՎԲԷԱԿԱՆ**, ած. *Քերովբէներին յատուկ, վերաբերեալ:*
**ՔԵՐՈՎԲԷԱԲՆԱԿ**, ած. (Կրօն.) *Որտեղ քերովբէներ են բնակւում:*
**ՔԵՐՈՎԲԷԱԳՈՒՄԱՐ**, ած. (Կրօն.) *Քերովբէների խմբից բաղկացած:*
**ՔԵՐՈՎԲԷԱԹՈՌ**, գ. (Կրօն.) *Քերովբէական աթոռ:*
**ՔԵՐՈՎԲԷԱՆԿԱՐ**, ած. (Կրօն.) *Քերովբէի նման նկարուած կմ քանդակուած:*
**ՔԵՐՈՎԲԷԱՏՈՉՈՐ**, ած. (Կրօն.) *Քերովբէներին կմ երկնքից ընկած քերովբէին տռչորող՝ վառող:*
**ՔԵՐՈՑ**, Տ. *Քերիչ:*
**ՔԵՐՈՒԱԾՔ**, գ. *Քերելու ձեւը:*
**ՔԵՐՈՒՄ**, գ. *Քերելը:*
**ՔԵՐՏՈՒԵԼ**, ն. բ. *Մարմինը շարունակ եւ զանազան տեղերում քորել:*
**ՔԵՐՈՒԸՏՈՒՔ**, գ. *Քերուըտելը:*
**ՔԵՐՑԵԼ**, բ. *Քերթել:*
**ՔԵՐՔԵՇԵԼ**, բ. *Չարաչար քերել.* կր. բ. *Վէրք բացուել:*
**ՔԵՐՔԷՋ**, գ. *Մի աստղի անուն Հայկ համաստեղութեան մէջ:*
**ՔԵՐՔԷՇ**, գ. *Մարդու եւ անասունների մարմնի վրայ գոյացած թեփ:*
**ՔԵՐՔԷՇԱԿԱԼԵԼ**, բ. *Քերքէշ գոյանալ մի տեղում, թեփոտել:*
**ՔԵՐՔԷՇԱՀԱՆ ԱՆԵԼ**, *Քերքէշը՝ թեփը*

*հանել:*
**ՔԵՑԵԼ,** բ. *Ջատել:*
**ՔԵՑԽՏԱԼ,** բ. *Առանց ախորժակի եւ դանդաղ ուտել:*
**ՔԵԻԱՆ,** յոգն. գ. *Աչքի ընկնող կանայք:*
**ՔԵԻԷ,** մկ. *Իբր թէ:*
**ՔԵՔԵՐԹ,** գ. *Բոյս:*
**ՔԵՔԵԻՈՒԹԻՒՆ,** գ. *(Կնոջ) անպարկեշտ մերկութիւն, լկտիութիւն:*
**ՔԵՔՈՒՐԴ**
**ՔԵՔՈՒՐՏ** } գ. *Ջգայռելը,զկռտոց: Ստամոքսի պարունակութիւնը բերանէն դուրս տալ, ձգեռտ:*
**ՔԵՔ ՏԱԼ,** նբ. *Ջգռտալ, զկռտալ, զգայռել:*
**ՔԵՕԽՎԱՅ,** գ. *Գիւղի տանուտէր:*
**ՔՋՈՒԽ,** ած. *Շատ կարճահասակ:*
**ՔԷ,** գ. *Ք գրի անունը:*
**ՔԷԼՔ,** գ. *Քայլուածք:*
**ՔԷՆ,** գ. *Վրէժխնդրութեան զգացմունք մէկի դէմ: Գժտութիւն: Ոխ պահել:*
**ՔԷն,** գ. *Վախ, երկիւղ:*
**ՔԷՆԱՀԱՏՈՑՑ,** Տ. *Քինահատոյց:*
**ՔԷՆԹ,** ած. *Քած, էգ. (շան եւ կատուի մասին):*
**ՔԷՆ-ՔԻԹ ԱՆԵԼ,** *Գժտուած՝ խռով լինել:*
**ՔԷՆՈՎ,** ած. *Գժտուած:*
**ՔԷՆՈՏԵԼ,** բ. *Մէկի հետ գժտուել,*
**ՔԷՇ,** գ. *Ջրաղաշտական կրօնը կմ հին պարսից կրօնը:*
**ՔԷՇ,** գ. *Նետի կապարճ:*
**ՔԷՇԱԿԱՐԿԱՏ,** ած գ. *Քէշ՝ աղանդ կցկցելով հնարող:*
**ՔԷՍ,** գ. *Նպատակ (նետի):*
**ՔԷՍԵԼ,** բ. *Նպատակին նետել:*
**ՔԸ՛Խ,** գ. *Ոչխարի կմ այծի աղբ, կտրտոր:*
**ՔԸ՛Շ,** միջ. *Ձայնարկութիւն, որով վանում են հաւերը:*
**ՔԸ՛Ս,** միջ. *Ձայնարկութիւն, որով շանը գրգռում են մէկի դէմ:*
**ՔԸՍ-ՔԸՍ ԱՆԵԼ,** *Շներ կռուեցնել:*
**ՔԹԱԳԻՆԴ,** գ. *Քթից կախած զինդ:*
**ՔԹԱԽՈՏ,** գ. *Փոշիացրած ծխախոտ:*
**ՔԹԱԾԱԿ,** գ. *Քթի ծակ:*
**ՔԹԱՀԱՋ,** գ. *Քթի միջով հազալը:*
**ՔԹԱՀԱՐԵԼ,** բ. *Գայթելով՝ սայթաքելով, սահելով քթի բերանի վրայ վեր ընկնել:*
**ՔԹԱՄԱՋ,** գ. *Քթի մազ:*
**ՔԹԱՆ,** գ. *Կտաւատի բոյսի թելը:*
**ՔԹԱՆԱՋԳԵՍՏ,** ած. *Քթան հագած:*
**ՔԹԱՆԷ,** ած. *Քթանից պատրաստուած:*
**ՔԹԱՇՐԹՈՒՆՔԱՅԻՆ,** ած. *Քթին եւ շրթունքին վերաբերող:*
**ՔԹԱՊԻՆՉ,** գ. *Քթածակ:*
**ՔԹԱՌԻՉ,** գ. *Մկրատի մի տեսակ:*
**ՔԹԱՏ,** ած. *Քիթը կտրած:*
**ՔԹԱՏԱՆԿ,** գ. *Քթի երկու կողմի դրսի պատերը, պինչ:*
**ՔԹԱՏԵԼ,** բ. *Քիթը կոտրել:*
**ՔԹԱՏՈՒՓ,** գ. *Տուփ, որի մէջ քթախոտ են ածում:*
**ՔԹԱՒ,** գ. *Ջիու եւ իշու հարբուխ:*
**ՔԹԱՒՈՐ,** ած. *Քիթ ունեցող:*
**ՔԹԱՓՈՂ,** Տ. *Քթածակ:*
**ՔԹԱՓՈՍ,** գ. *Քթի փոսը:*
**ՔԹԵԹ,** գ. *Քթանի կտորից պատրաստուած պատրոյգ, կապ*
**ՔԹԵԹԳԼՈՒԽ,** գ. *Աղջիկ:*
**ՔԹԵԹՕՐՀՆԷՔ,** Տ. *Հալաւօրհնէք:*
**ՔԹԵՐ,** գ. *Բրուտի գործիք, որով կոկում է կաւէ ամանը:*
**ՔԹԷԹ,** գ. *Քթեթ, հարսի հալաւը: Հագուստը:*
**ՔԹԹԵԼ,** բ. *Աչքը արագ բանալ-խփել:*
**ՔԹԹԵԼԻՔ,** Տ. *Քթիթ, Քթթում:*
**ՔԹԹՈՒՄ**
**ՔԹԻԹ** } գ. *Աչքը քթթելը:*
**ՔԹԻ,** գ. *Անորոշ տեսակի ծաղիկ:*
**ՔԹԻԿ,** գ. *Փոքրիկ կմ սիրուն քիթ:*
**ՔԹԻՒ,** գ. *Քթուելու գործողութիւնը:*
**ՔԹԿԱԼ,** գ. *Լաթի կտոր, լաչակ:*
**ՔԹԿԱԼԱԳԻՆ,** գ. *Մի քթկալ գնելու չափ փող:*
**ՔԹԿԱԼԱՋՈՒՐԿ,** ած. *Քթկալից զուրկ:*

**ՔԹՄՌԹԵԼ**, բ. *Քիթ ու մռութ անել:*

**ՔԹՆՔԱՇ**, մկ. *Քթի՝ երեսի վրայ քաշ գալով:*

**ՔԹՈՑ**, գ. *Պտուղ քաղելու կողով:*

**ՔԹՈՅ**, գ. *Քարկտիկ խաղի ձեւերից մէկը:*

**ՔԹՈՄԿՐ**, գ. (Կազմախ.) *Քթի ոսկոր:*

**ՔԹՈՒԵԼ**, բ. *Մարմնի կմ զգեստի վրայ միջատներ (ոջիլ, լու) որոնել:*

**ՔԹՈՒԹ ԱՆԵԼ**, Տ. *Քթիւ անել: Որոնել:*

**ՔԹՈՒՆ**, գ. *Քամած թանից մնացած իւղը:*

**ՔԹՎՏԵԼ**, Տ. *Քթվուել: Որոնել:*

**ՔԹՎՏՈՒՔ**, գ. *Քթվտելը, քթվուելը: Որոնում:*

**ՔԹՏՈՑ**, գ. *Ձիու քիթը կապելու կապ:*

**ՔԹՔԹԱԼ**, բ. *Ջրալի կերակրի հանդարտ եռ գալով եփուելը:*

**ՔԹՔԹԱԼԻ**, մկ. *Քթքթալով:*

**ՔԹՔԹԵԼ**, բ. *Քթվտել: Ոջիլ որոնել:*

**ՔԹՔԹԻԿ**, ած. *Ուտելիքի մաքրութեան եւ ճաշակի վերաբերմամբ շատ բծախընդիր:*

**ՔԻԹՔ**, գ. (Կազմախ.) *Երեսի վրայ, ճակատից ներքեւ եւ բերանից բարձր դուրս ցցուած մաս:*

**ՔԻԹԻԿ**, գ. *Քթիկ. Մանկական խաղ:*

**ՔԻԹԿԱԽ**, ած. *Քիթը կախած:*

**ՔԻԼ**, գ. *Տարածութիւնը լայն բացուած բթամատի ծայրից մինչեւ ցուցամատի ծայրը:*

**ՔԻԼ**, ած. գ. *Բանսարկու:*

**ՔԻԽԻ**, ած. *Քիթը ծուռ:*

**ՔԻԾԵՓ**, գ. *Շատ պինդ:* Փոխ. *Ժլատ:*

**ՔԻՂԱՆ**, գ. *Կաւէ աման լայն բերանով:* Հմմտ. *Քրեղան:*

**ՔԻՄԻԱԲԱՆ**, **ՔԻՄԻԱԳԷՏ** (Յուն.) Տ. *Քիմիկոս, տարրաբան:*

**ՔԻՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, **ՔԻՄԻԱԳԻՏՈՒԹԻՒՆ** Տ. *Քիմիա: Տարրաբանութիւն:*

**ՔԻՄԻԱԿԱՆ**, ած. *Քիմիային յատուկ, վերաբերեալ:*

**ՔԻՄԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քիմիական գիտութիւն, քիմիա:*

**ՔԻՄԻԱՊԷՍ**, մկ. *Ըստ քիմիայի:*

**ՔԻՄԻԱՐԱՆ**, գ. *Քիմիական աշխատանքներ կատարելու տեղ:*

**ՔԻՄԻԿՈՍ**, գ. *Քիմիայի մասնագէտ: Տարրաբան:*

**ՔԻՄՄԱՔՐՈՒՄ**, գ. *Քիմիական մաքրում:*

**ՔԻՄՔ**, գ. (Կազմախ.) *Բերանի խոռոչի վերին կամարաձեւ ծածկոյթը:* Փոխ. *Հաճոյք:*

**ՔԻՆԱԹԱԳՈՅՑ**, Տ. *Քինապահ:*

**ՔԻՆԱԼ**, բ. *Քէն պահել:*

**ՔԻՆԱԽՆԴԻՐ**, ած. *Նա որ միջոց է փնտռում իր քէնը հանելու:*

**ՔԻՆԱԽՆԴՐԱԿԱՆ**, ած. *Քինախնդրին եւ քինախնդրութեան յատուկ:*

**ՔԻՆԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քինախնդիր լինելը:*

**ՔԻՆԱՀԱՆ**, ած. *Իր քէնը հանող, վրէժը լուծող:*

**ՔԻՆԱՀԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քինահան լինելը, քէնը հանելը:*

**ՔԻՆԱՅՈՅԶ**, Տ. *Քինախնդիր:*

**ՔԻՆԱՆԱԽԱՆՁ**, Տ. *Քինախնդիր:*

**ՔԻՆԱՊԱՀ**, ած. *Քէն պահող:*

**ՔԻԱՆՊԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Քինապահ լինելը, ոխակալութիւն:*

**ՔԻՆԹ, ՔԻՆԹԱՀԱՐԵԼ**, Տ. *Քիթ:*

**ՔԻՆԻՆ**, գ. *Սպիտակ բիւրեղային նիւթ:*

**ՔԻՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քինաւորութիւն:*

**ՔԻ՛Շ**, Տ. *Քըշ:*

**ՔԻՉ**, գ. *Փոքր քանակութիւն:* Հկռ. *Շատ:* մկ. *Փոքր ինչ: Կամաց կամաց:*

**ՔԻՉԻԿ**, Տ. *Քչիկ:*

**ՔԻՉԿԵԿ**, մկ. *Բաւական քիչ:*

**ՔԻՍ**, գ. *Անորոշ տեսակի խոտ:* Հմմտ. *Քիստ:*

**ՔԻՍ**, գ. *Մարսելը:*

**ՔԻՍ**, *Քիս տալ:*

**ՔԻՍԱՄՆ**, գ. (Բուս.) *Թիթեռնածաղիկների կարգին պատկանող բոյս:*

**ՔԻՄՆԵԼ**, բ. *Պատահել, հանդիպել: Դէմ առնել:*

**ՔԻՍԻԿ**, Տ. *Քսակ:*

**ՔԻՍՏ**, գ. *Երկայն փշանման մազ:*

**ՔԻՍՏ**, գ. *Ջուլհակի ոստայնի սանդրը:*

**ՔԻՍՏ**, գ. *Փոքր երեխաների առնի անդամը:*

**ՔԻՍՏԱՒՈՐ**, ած. *Քիստ ունեցող:*

**ՔԻՐԻՇԱՆ**, գ. *Նշանադրութիւն:*

**ՔԻՐՏ**, Տ. *Քրտինք:*

**ՔԻՒ**, գ. *Շէնքի կտուրի դուրս երկարացած մասը:*

**ՔԻՒԹ**, ած. *Ծայրը բութ:*

**ՔԻՒՌ**, ած. *Անխելք*

**ՔԻՒՓ / ՔԻՒՓԻԿ** } ած. *Քիփ, մարմնի ճիշտ չափով պատրաստուած, մարմինը գրկող:*

**ՔԻՓ**, մկ. *Իրար շատ մօտ, անմիջապէս կողքին, կից: Սեղմ, մարմինը գրկող:*

**ՔԻՓՈՒԼԻԿ / ՔԻՓՈՒԿ** } Տ. *Քփլիկ:*

**ՔԻՔԻՐ**, գ. *Քոյր, քոյրիկ:*

**ՔԻՔՍ ՏԱԼ**, բ. *Արած լաւութիւնը երեսովը տալ:*

**ՔԼԱՒԱՆԴ**, ած. մկ. *Փէշերը հաւաքած:*

**ՔԼԵՊ / ՔԼԵՒ** } Տ. *Կլեպ: Ծխախոտի մնացած մասը: Սոխի միջուկը:*

**ՔԼԵՒՀԱՆ ԱՆԵԼ**, բ. *Քլեւը հանել, կճպել:*

**ՔԼԹՔԼԹԱԼ**, բ. *Քը՛լթ-քը՛լթ ձայն հանել:*

**ՔԼԹՔԼԹԱԼԻ**, մկ. *Քլքլթալով:*

**ՔԼԻՆԳՈՇ**, գ. *Գալաճոշ:*

**ՔԼԼԱՆ**, գ. *Քլլելու փայտ կմ ձող:*

**ՔԼԽՄՈՒՆ**, ած. *Քլխած:*

**ՔԼՄՍՏՈՐԵԼ**, բ. *Խաղալու համար իրար հրել:*

**ՔԼՄՍՏՐԻ ԱՆԵԼ**, Տ. *Քլմստորել:*

**ՔԼՈՐ**, գ. (Քիմ.) *Պարզ գազային մարմին կանաչաւուն դեղին գոյնով:*

**ՔԼՈՐԱԿԱՅԱՆ**, գ. *Քլորամաքրման կայան:*

**ՔԼՈՐԱԿԱՆ**, ած. *Քլոր պարունակող:* (Քիմ.) *Քլորական թթուտ:*

**ՔԼՈՐԱՅԻՆ**, ած. *Քլոր պարունակող:* (Քիմ.) *Քլորային թթուտ:*

**ՔԼՈՐԱՏ**, գ. (Քիմ.) *Ընդհանուր անուն բոլոր աղերի:*

**ՔԼՈՒՆԳ**, գ. *Քարի ուրագ:*

**ՔԼՈՒՈՐԴԻ**, գ. *Անորոշ տեսակի վայրի ծառ:*

**ՔԼՓԱՏ**, ած. *Ատամները թափած:*

**ՔԼՔԼԱԼ**, բ. *Ջրի մեղմ հոսանքով ձայն հանելը:*

**ՔԼՔԼԱԼԻ**, մկ. *Քլքլալով:*

**ՔԼՔԼԵԼ**, բ. *Ջառամել:*

**ՔԼՔԼՄԱՆ**, մկ. *Սաստիկ տաք:*

**ՔԼՔԼՈՑ**, գ. *Քլքլալու ձայնը:*

**ՔԽՍԵԿ**, գ. *Տանձի մի տեսակի անուն:*

**ՔԾԻԾ**, գ. *Բուրդ գզելը:*

**ՔԾԻՆՔ**, գ. յոգն. *Քծնելը:*

**ՔԾԾԵԼ**,

**ՔԾԾՈՒԵԼ**, բ. *Կնճռոտուել:*

**ՔԾՆԱԲԱՆ**, ած. *Քծնելով խօսող, շողոքորթ:*

**ՔԾՆԱԲԱՆԵԼ**, բ. *Քծնելով խօսել, շողոքորթել:*

**ՔԾՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Խօսքերով քծնուելը, շողոքորթութիւն:*

**ՔԾՆԱՆՔ**, գ. *Սիրաշահելու կեղծ ձեւեր, շողոքորթութիւն:*

**ՔԾՆԱՆՔԱԿՈՅՏ**, գ. *Քծնանքների խումբ, կոյտ:*

**ՔԾՆԱՍՊԵՏ**, գ. *Քծնելու մէջ հմուտ՝ վարպետ:*

**ՔԾՆԵԼ**, բ. *Մէկին սէր՝ զգուանք ցոյց տալ՝ հաճոյանալ նուաստանալով:*

**ՔԾՆԻ**, ած. *Քծնող, շողոքորթող:*

**ՔԾՆՈՂ**, ած. *Շողոքորթ, նուաստ:*

**ՔԾՆՈՂԱԿԱՆ**, ած. *Քծնութեան եւ քըծնողին յատուկ:*

**ՔԾՆՈՂՈՒԹԻՒՆ**,

**ՔԾՆՈՒԹԻՒՆ**, գ. *Քծնելը, շողոքորթելը:*
**ՔԾՈՒԱՐ**, գ. *Մետաղի մի ձոյլ կտոր:*
**ՔԾՈՒԵԼ**, բ. *Գզուել՝ իրար ծեծլ (շների՝ կատուների):*
**ՔՁՁԵԼ**, բ. *Բուրդը գզգզել, խզզել:*
**ՔՂԱՀԱՆ**, գ. *Երկայն երկաթի ձող հրացանէն ոլորած թելը հանելու համար::*
**ՔՂԱՄԻԴ**, գ. *Թագաւորական կամ իշխանական ծիրանի պատմուճան:*
**ՔՂԱՆՑԱՒՈՐ**, ած. *Քղանց ունեցող, երիզներով՝ծոպերով զարդարուած:*
**ՔՂԱՆՑՔ**, գ. *Զգեստի վրայ այն տեղը, որտեղ քուղեր՝ երիզներ են անցկացրած: Զգեստի ներքեւի եզրը:*
**ՔՂԵԼ**, բ. *Զգեստի թեւերի բերանին կմ օձիքին քուղ՝ երիզ կարել:*
**ՔՂԼԻԿ**, գ. *Կարճ՝թեւաւոր զգեստ:*
**ՔՂՄԱ**, գ. *Մոխ:*
**ՔՄԱՋԱՐԴ**, ած. *Լսողի քիմքի համաձայն զարդարուած:*
**ՔՄԱՋԱՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Քմազարդ՝ լսողին հաճոյական լինելը:*
**ՔՄԱԾԻՆ**, ած. *Քմահաճ, իր ախորժակին համեմատ:*
**ՔՄԱԿԻՑ**, ած. *Քիմքով արտասանող, քմքային:*
**ՔՄԱՀԱՃ**, *ած. Իր քիմքը՝ իր ճաշակը հաճեցնող: Կամակոր:*
**ՔՄԱՀԱՃԱԲԱՐ**, Տ. *Քմահաճօրէն:*
**ՔՄԱՀԱՃՈՅ**, ած. *Ինչ որ իր քիմքին ախորժելի է:*
**ՔՄԱՀԱՃՈՅՈՒԹԻՒՆ**, գ. *Քմահաճոյ լինելը: Կամակորութիւն:*
**ՔՄԱՀԱՃՈՒԹԻՒՆ**, գ. *Քմահաճոյ լինելը:*
**ՔՄԱՀԱՃՈՅՔ**, գ. *Անկայուն կամք: Քմայք, իր ախորժակի համեմատ անտրամաբանական փափագ:*
**ՔՄԱՀԱՃՕՐԷՆ**, մկ. *Ըստ քմահաճոյքի:*
**ՔՄԱՅԱՅՆ** } **ՔՄԱՅԻՆ** } Տ. *Քմքային:*
**ՔՄԱՅՔ**, Տ. *Քմահաճոյք:*

**ՔՄԻՆ**, գ. *Դարան, թակարդ:*
**ՔՄԼԵԼ**, բ. *Ծառը առատ պտուղներով բեռնաւորուել:*
**ՔՄԾԻԾԱՂ**, գ. *Քթի տակից ծիծաղ, հեգնական ծիծաղ:*
**ՔՄԾԻԾԱՂԵԼ**, բ. *Քմծիծաղ տալ, քթի տակ ծիծաղել:*
**ՔՄՔԱԾԻԾԱՂ**, Տ. *Քմծիծաղ:*
**ՔՄՔԱՅԻՆ**, ած. *(Հնչիւն), որ արտասանուում է լեզուի եւ քիմքի միջով:*
**ՔՄՕՔ**, գ. *Քիմքով:*
**ՔՆԱԲԱՆ**, գ. *Քնաբանութեան մասնագէտ:*
**ՔՆԱԲԵՐ**, ած. *Քուն բերող:*
**ՔՆԱԶՂԵՂ**, ած. *Քունը գլուխը:*
**ՔՆԱԹԱԹԱԽ**, ած. մկ. *Քնից դեռ նոր արթնացած:*
**ՔՆԱԹԱԹԱԽՈՒԹԻՒՆ**, գ. *Քնաթաթախ լինելը:*
**ՔՆԱԼ**, բ. Տ. *Քնանալ, քնել:*
**ՔՆԱԼԻՑ**, ած. *Քնով լիքը:*
**ՔՆԱԽՏ**, գ. *Օրերով քնացնող հիւանդութիւն:*
**ՔՆԱԾՈՒ**, ած. Տ. *Քնաբեր:*
**ՔՆԱԿԱԼԱԾ**, ած. *Քունը եկած:*
**ՔՆԱԿԱՐՕՏ**, ած. *Քնի կարօտ:*
**ՔՆԱԿԻՑ ԼԻՆԵԼ**, բ. *Միասին քնել:*
**ՔՆԱԿՈԼՈԼ**, ած. *Քնաթաթախ:*
**ՔՆԱԿՈԽ**, ած. *Որի քունը կոխել է:*
**ՔՆԱԿՈՏՈՐ**, ած. *Քունը կոտրած:*
**ՔՆԱՀԱՐ**, ած. *Քունը կոտրուած՝ խանգարուած:*
**ՔՆԱՀԱՐԵԼ**, բ. *Քնահար լինել:*
**ՔՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, Տ. *Քնափութիւն:*
**ՔՆԱՆԱԼ**, բ. Տ. *Քնել, Քուն լինել:*
**ՔՆԱՇՈՐ**, գ. *Քնելու շոր:*
**ՔՆԱՇՐՋԻԿ**, ած. գ. *Քնաշրջութեամբ հիւանդ:*
**ՔՆԱՇՐՋԻԿՈՒԹԻՒՆ** } **ՔՆԱՇՐՋՈՒԹԻՒՆ** } գ. (Ախտաբ.) *Մի տեսակ՝դեռ լաւ չբացատրուած հիւանդութիւն: Քունի մէջ շրջիլը:*

**ՔՆԱՄԷՐ**, ած. *Շատ քնել սիրող:*
**ՔՆԱՏ**, Տ. *Քնհատ: Անքուն մնացած:*
**ՔՆԱՏԵՂ**, գ. *Քնելու տեղը:*
**ՔՆԱՏԷՐ**, գ. *Քնած մարդը:*
**ՔՆԱՐ**, գ. *Հին լարաւոր նուագարան:* Փոխ. *Բանաստեղծական ձիրք:* Նման. (Աստղաբ.) *Աստեղատուն հիւսիսային երկնակամարում:*
**ՔՆԱՐ**, գ. *Այգու միջնակի երկու կողմի թմբերի երեսները:*
**ՔՆԱՐԱԿԱՆ**, ած. *Քնարի վերաբերեալ:*
**ՔՆԱՐԱՀԱՐՈՒ**, ած. գ. *Քնար զարնող, քնար նուագող:*
**ՔՆԱՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քնար զարնելը, քնար նուագելը:*
**ՔՆԱՐԱՁԱՅՆ**, ած. *Քնարի ձայն ունեցող, քաղցրաձայն:*
**ՔՆԱՐԱՁԵՒ**, ած. *Քնարի ձեւ ունեցող:*
**ՔՆԱՐԱՆ**, գ. *Քնելու տեղ:*
**ՔՆԱՐԱՒՈՐ**, ած. գ. *Քնար կրող, քնար նուագող:*
**ՔՆԱՐԱՏՈՒՏՆ**, գ. (Կենդ.) *Փասեանի մեծութեամբ թռչուն:*
**ՔՆԱՐԳԵԼ**, ած. *Քունն արգելող:*
**ՔՆԱՐԵԼ**, բ. *Քնար զարնել:*
**ՔՆԱՐԵՐԳ**, գ. *Քնարերգութիւն:*
**ՔՆԱՐԵՐԳԱԿ**, *Քնարերգող: Քնարերգութիւն պարունակող:* (Երաժ.) *Մեղմ՝ քնքոյշ արտայայտութիւն ունեցող:* Հկր. *Դրամատիկական: Բանաստեղծ:*
**ՔՆԱՐԵՐԳՈՂ**, ած. գ. *Քնարով՝ քնարի նուագակցութեամբ երգող:*
**ՔՆԱՐԵՐԳՈՒ**, ած. գ. *Քնարերգական բանաստեղծութիւններ գրող:*
**ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ**, գ. *Քնարի ներդաշնակութեամբ երգելը:*
**ՔՆԱՐԻԿ**, գ. *Փոքր քնար:*
**ՔՆԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Քնանալ՛ի*, նոյն նշ.:
**ՔՆԱՑՈՒՑԻՉ**, ած. *Քնացնող, քուն բերող:*
**ՔՆԱՒՈՐ**, ած. *Քուն ունեցող:*
**ՔՆԱՓՈՒԹԻՒՆ**, գ. (Ախտ.) *Խոր՝ մահանըման քուն:*
**ՔՆԱՔՈՒՆ**, ած. մկ. *Քունը կիսատ մնացած:*
**ՔՆՏՈՒԿ**, գ. *Փայտէ աման:*
**ՔՆԵԼ**, բ. *Քնով հանգստանալ:* Փոխ. *Անփոյթ լինել:*
**ՔՆԵԼԱՀԱՆԳ**, գ. *Այն ժամանակը, երբ քնում են:*
**ՔՆԵՐԱԿ**, գ. Տ. *Քունք:*
**ՔՆԵՐԱՆ**, ած. *Քունը զլուխը:*
**ՔՆԷԱԾ**, ած. *Քնկոտ, քնափ:*
**ՔՆԷԱԾԵԼ**, բ. Տ. Հիպնոզացել: *Ձեռքի շարժումով քնացնել:*
**ՔՆԷՈՒԹԻՒՆ**, գ. *Քնեալ՝ քնոտ լինելը:*
**ՔՆԹԵԼ**, բ. *Ծառը քշտել՝ ճիւղերը կըտրել:*
**ՔՆԱԹԵՌՆ**, գ. *Խաղողի ողկոյզի չէչը:*
**ՔՆԱԹԵՌՆԱՀԱՆ**, ած. *Քնթեռնը հանած, քնթեռնից մաքրած:*
**ՔՆԹՄՆԹԱԼ**, բ. *Ուտելու ժամանակ քիթ-պռունկ շարժել:*
**ՔՆԹՈՒԿ**, գ. Տ. *Քնթեռն: Խաղողի ողկոյզի չենչը:*
**ՔՆԹՈՒԱՀՈՐՄ ԱՆԵԼ**, բ. *Ճռաքաղ անել, պտուղ հանել: Խաղողի ողկոյզ:*
**ՔՆԹՈՒԵԼ**, բ. *Քունը փախչել:*
**ՔՆԹՈՒՆՈՑ**, գ. *Փղի պատիճի զալարները՝ կնճիռները:*
**ՔՆԹՈՒՈՒՇ**, ած. *Քիթ-մռութ կախած, թթու դէմքով:*
**ՔՆԹՓՆԹԱԼ**, բ. *Քթի տակից խօսել, փնթփնթալ:*
**ՔՆԻՆ**, գ. *Քննութիւն:*
**ՔՆԻՆՔ**, գ. *Խոր մտմտուք, մտածութիւն:*
**ՔՆԻՆՔԱՐԱՐ**, ած. *Խորամանկ, նենգամիտ:*
**ՔՆԻՇՏ**, գ. *Հրեաների սինագոգա:*
**ՔՆԽՕՍ**, ած. *Քուն չունեցող ու միշտ լացող: Քունի մէջ խօսող:*
**ՔՆԾՈՐ**, մկ. *Իբր թէ:*
**ՔՆԾՈՒՆԵԼ**, բ. *Քթի տակ ծիծաղել:*
**ՔՆԿԱՆ**,

ՔՆԿՈՏ, ած. *Շատ քնող:*

ՔՆԿՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Քնկոտ լինելը:*

ՔՆՀԱՏ, ած. *Քունը կտրուած:*

ՔՆՀԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Քնհատ լինելը, քունը պակաս լինելը:*

ՔՆՁԼՈՏ }<br>ՔՆՁՈՏ } ած. *Չնչին:*

ՔՆՁՌՈՏ, ած. *Չնչին, անպէտ, քոսոտ, խեղճ, թշուառ, ողորմելի:*

ՔՆՁՌՈՏՈՒԹԻՒՆ, գ. *Քնձռոտ լինելը:*

ՔՆՃԱՆ, գ. *Գօտիի երկայն ծոպերը:*

ՔՆՆԱԲԱՆ, Տ. *Քննադատ:*

ՔՆՆԱԲԱՆՈՒՄ }<br>ՔՆՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ } գ. *Քննաբանելը:*

ՔՆՆԱԴԱՏ, ած. գ. *Նա որ քննադատում է, քննադատող:*

ՔՆՆԱԴԱՏԱԲԱՐ, մկ. *Իբրեւ քննադատ, քննադատելով:*

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ, ած. *Քննադատութիւն պարունակող:*

ՔՆՆԱԴԱՏԵԼ, բ. *Քննել մի գրական կմ արուեստի գործ եւ դատել նրա առաւելութիւնները: Պարսաւել:*

ՔՆՆԱԴԱՏԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է քննադատել:*

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Գրական կմ արուեստի գործը քննելն ու դատելը:*

ՔՆՆԱԴԱՏՕՐԷՆ, Տ. *Քննադատաբար:*

ՔՆՆԱԽՆԴԻՐ, ած. *Քննող ու փնտռող, բծախնդիր:*

ՔՆՆԱԽՕՍԵԼ, բ. Տ. *Հետազօտել:*

ՔՆՆԱԿԱՆ, ած. *Քննող, զննող: Ինչ որ պէտք է քննուի:*

ՔՆՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Քննական եւ քննելի լինելը:*

ՔՆՆԱԿԻՑ, ած. գ. *Միասին քննող:*

ՔՆՆԱՅՈՅԶ, ած. *Հետախոյզ, հետազօտող:*

ՔՆՆԱՍԷՐ, ած. *Նա որ սիրում է քննել, հետաքրքիր:*

ՔՆՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. *Քննասէրին եւ քննասիրութեան յատուկ:*

ՔՆՆԱՍԻՐԵԼ, բ. *Քննասէր դարձնել:*

ՔՆՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Քննասէր լինելը:*

ՔՆՆԱՐԱՆ, գ. *Քննութիւն կատարելու տեղ:*

ՔՆՆԱՐԿԵԼ, բ. *Քննութեան ենթարկել, քննել:*

ՔՆՆԵԼ, բ. *Զննել, տնտղել, մանրամասնութիւնները դիտել: Խորամուխ լինել մի բանի մէջ: Հարցաքննել գիտութեան աստիճանն ստուգելու համար:*

ՔՆՆԵԼԻ, ած. *Ինչ որ պէտք է քննել:*

ՔՆՆԻՉ, ած. գ. *Նա որ քննում է, քննող:*

ՔՆՆՈՂ, ած. գ. ներկ. դերբ. *Քննել՛ի:*

ՔՆՆՈՂԱԿԱՆ, ած. *Քննողին յատուկ:*

ՔՆՆՈՂԱՀՐԱՇ, ած. *Քննողներին հրաշալի երեւցող:*

ՔՆՆՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Քննելու կարողութիւն:*

ՔՆՆՈՒԹԻՒՆ, գ. *Քննելը, քննուելը: Զըննութիւն, մանրամասն տնտղելը: Դատական հարց եւ փորձ: Հարցաքննութիւն:*

ՔՆՆՈՒՄ, գ. *Քննելը:*

ՔՆՈՏ, Տ. *Քնկոտ: Քնաթաթախ, շատ քնել սիրող:*

ՔՆՈՏԵԼ, բ. *Քնաթաթախ լինել:*

ՔՆՈՑ, գ. *Քուն, մարդու քուն եղած ժամանակը:*

ՔՆՈՒԿ, ած. *Քնկոտ, քնոտ:*

ՔՆՋՈՒԹ, Տ. *Քունջութ:*

ՔՆՓՈՒՇ, գ. *Ձիու ծածկոյթ:*

ՔՆՔԼԻԿ, գ. *Ծառի վերի ծայրը:*

ՔՆՔՇԱԲԱՐ, մկ. *Քնքոյշ կերպով:*

ՔՆՔՇԱԳԵՂ, ած. *Քնքոյշ եւ գեղեցիկ:*

ՔՆՔՇԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Քնքուշ՛ի, Աւելի քնքոյշ:*

ՔՆՔՇԱԶԳԱՑ, ած. *Քնքոյշ զգացմունքներով:*

ՔՆՔՇԱԿԱՆ, ած. *Քնքշութիւն արտայայտող, քնքոյշ:*

ՔՆՔՇԱԿԵՑՈՒԹԻՒՆ, գ. *Նրբակեցութիւն, փափկակեցութիւն:*

ՔՆՔՇԱՅՈՅԶ, ած. *Քնքշութեամբ յուզող:*

**ՔՆՔՇԱՆԱԼ**, բ. *Քնքոյշ դառնալ, քնքշութիւն արտայայտել:*
**ՔՆՔՇԱՆՔ**, գ. *Քնքշութիւն:*
**ՔՆՔՇԱՇՇՈՒԿ**, ած. *Քնքշօրէն եւ շշուկով:*
**ՔՆՔՇԱՄԻՐՏ**, ած. *Քնքոյշ՝ նուրբ, փափուկ սիրտ ունեցող:*
**ՔՆՔՇԱՄՐՏՈՒԹԻՒՆ**, գ. *Քնքշասիրտ լինելը: Փափկասրտութիւն:*
**ՔՆՔՇԱՑՈՒՑԻՉ**, ած. *Քնքշացնող, նուազափաղաքշական: Փափկացնող:*
**ՔՆՔՇՈՒԹԻՒՆ**, գ. *Քնքոյշ լինելը:*
**ՔՆՔՇՕՐԷՆ**, Տ. *Քնքշաբար: Նրբօրէն:*
**ՔՆՔՈՅՇ**, ած. *Փափկութեան մէջ սընուած:* Հկր. *Խիստ: Դիւրազգած, զգայուն:*
**ՔՆՔՈՄԿՐ**, գ. (Կազմախ.) *Քունքի ուկոր:*
**ՔՆՔՈՒՄ**, գ. *Անպարկեշտ ծիծաղ կմ շարժուածք:*
**ՔՆՔՈՒՐ**, Տ. *Կղակ:*
**ՔՇԱ՛, ՔՇԷ՛, ՔՇԱ՛-ՔՇԱ՛**, Տ. *Քը՛շ:*
**ՔՇԵԼ**, բ. *Յետեւից ոյժ տալով առարկան առաջ շարժել: Հողը վարել: Վանել, վռնտել: Հալածել, աքսորել: Ընթացք տալ: Շեշտակի գնալ մի ուղղութեամբ:*
**ՔՇԵԾԱՅՐ**, գ. *Քուշի՝ կրակարանի ծայրը:*
**ՔՇԹԵԼ**, բ. *Անվերջ խօսել:*
**ՔՇՄԱՏ**, գ. *Անորոշ տեսակի բոյս:*
**ՔՇՈՑ**, գ. *Ճանճերը քշելու յարմարանք:*
**ՔՇՈՑՔ**, Տ. *Քշոց:*
**ՔՇՈՒՔ**, գ. *Փորը քշելը:*
**ՔՇՊԱՆՔ**, գ. *Յանդիմանութիւն:*
**ՔՇՏԱՆ**, ած. *Քշտող: Ծեծող, արհամարհող:*
**ՔՇՏԵԼ**, բ. Տ. *Քշել: Ծեծել: Արհամարհել:*
**ՔՇՏԵԼ**, բ. *Պատահել: Սոփթել, մերկացնել, ծառի ճիւղերը կտրել:*
**ՔՇՏՈՒԿ**, ած. *Քշտած:*
**ՔՇՔՇՈՏԱԾ**, ած. *Կնճռոտած, ծըռմռկուած:*
**ՔՇՕ**, Տ. *Քշա՛, քը՛շ:*

**ՔՈ**, Իբրեւ գ. *Քո ունեցածը:*
**ՔՈԲ**, գ. *Կաթսայ:*
**ՔՈՋ**, գ. *Գոմերում բաժանմունք:*
**ՔՈ՛Ջ-ՔՈ՛Ջ**, միջ. *Գառներ եւ ուլեր քոզելու՝ գոմ տանելու ձայնարկութիւն:*
**ՔՈՋԱՌ**, գ. *Խոշոր յարդ:*
**ՔՈՋԵԼ**, նբ. *Գառները եւ ուլերը գոմ տանիլ:*
**ՔՈԹԱՆԱԿ**, գ. *Մարմնի ծածկոյթ:*
**ՔՈԹԹԱԼ**, բ. *Քո՛թ ձայն հանել:*
**ՔՈԹԻԹ**, գ. *Արջի ձագ:*
**ՔՈԹՈԹ**, գ. *Արջի ձագ:*
**ՔՈԹՈԹՈՒԵԼ**, բ. *Իրերը հաւաքելով ու բեռնաւորելով պատրաստուել մի տեղ գնալու:*
**ՔՈԹՔՈԹ**, գ. *Վայրի մեկոնի հունդը:*
**ՔՈԼ**, գ. *Անտառ: Վարդի թփի արմատը: Բոյսերի տրցակ: Շերամի որդերու վրայ դրուող թուփ վրան բուժող հիւսելու համար:*
**ՔՈԼԱԲԵՐԱՆ**, գ. *Անտառի բերանը:*
**ՔՈԼԱԳԵՐԱՆ**, գ. *Քոլ ու գերան:*
**ՔՈԼԱԶԿԵՌ**, գ. *Քոլի՝ վայրի զկեռ:*
**ՔՈԼԱԽՆՁՈՐ**, գ. *Քոլի՝ վայրի խնձոր:*
**ՔՈԼԱԽՆՁՈՐԻ**, գ. *Քոլի՝ վայրի խնձորենի:*
**ՔՈԼԱԾԱԿ**, գ. *Քարայր:*
**ՔՈԼԱՇԼՈՐ**, գ. *Քոլի՝ վայրի շլոր:*
**ՔՈԼԱՇԼՈՐԻ**, գ. *Քոլի՝ վայրի շլորենի:*
**ՔՈԼԱՊՏՈՒՂ**, գ. *Վայրի թփերի եւ խոտերի վրայ բուսած մանր պտուղ:*
**ՔՈԼԱՏԱԿ**, գ. *Քոլի թփի տակը:*
**ՔՈԼԷՃ**
**ՔՈԼԷՋ** } (արեւմտահայ տառադարձութեամբ), գ. *Կոլէջ: Վարժարան:*
**ՔՈԼԸՆԿԵՐ**, գ. *Քոլի՝ անտառի ընկեր:*
**ՔՈԼՆԻԴՈՒՍ**, մկ. *Քոլի՝ անտառի ուղղութեամբ:*
**ՔՈԼՈՋ**, գ. *Կանանց հին ձեւի գլխանոց:*
**ՔՈԼՈՋ**, գ. *Սալորի տեսակ:*
**ՔՈԼՈԼ**, գ. *Շների զզզուելը:*
**ՔՈԼՈԼԵԼ**, բ. *(Շան) կռուելով գետին*

*տապալել ախոյեանին:*
ՔՈԼՈԼՈՒԵԼ, բ. *Իրար հետ զգուրտել (շների մասին):*
ՔՈԼՈԼՓԱԽԻ, ած. *Գործը վերիվերոյ կմ անմաքուր կերպով կատարող:*
ՔՈԼՈՄՈՍՏ, ած. *Վերիվերոյ, ձախ ու ծուռ:*
ՔՈԼՈՄՈՍՏԵԼ, բ. *Վատ կերպով՝ վերիվերոյ մի բան անել:*
ՔՈԼՈՒԲԱՍՏՈՒՄ, Տ. *Քոլոմոստելի:*
ՔՈԼՈՒՄՈԼ, ՔՈԼՈՒՔՈՄ } գ. *Յախ-ցուխ, խռիւ վառելու համար:*
ՔՈԼՔ, գ. *Գործուած կտորի վրայի մազմըզուք:*
ՔՈԼՔՈԼՈՏՈՒԵԼ, բ. *Քոլքեր ձեւանալ:*
ՔՈԼՔՈՏ, ած. *Քոլք ունեցող:*
ՔՈԽՏԻԿ, գ. *Փոքրիկ՝ համարակ տուն:*
ՔՈՂ, գ. *Քօղ, բարակ ծածկոյթ:*
ՔՈՂԱԶԳԵՍՏ, *Գունաւորմամբ տեղանքը նմանարկող վերնազգեստ:*
ՔՈՂԱԾԱԾԿՈՅԹ, գ. *Քողարկող ծածկոյթ:*
ՔՈՂԱԿ, գ. *Անյայտ տեսակի քաղցր խէժ:*
ՔՈՂԱՐԿԱԶԳԵՍՏ, գ. *Քողարկող զգեստ:*
ՔՈՂԱՐԿԱԶԵՐԾՈՒՄ, *Քողարկման խախտում:*
ՔՈՄՈՑ, գ. *Գամփռ:*
ՔՈՄՌՈՆ, ած. *Չարաճճի:*
ՔՈՅԻՆԱԳՈՐԾ, ած. *Քո գործած:*
ՔՈՅԻՆԱԶԷՆ, ած. *Քո զէնքը դարձած:*
ՔՈՅԻՆԱԿՐՕՆ, ած. *Քո կողմից կարգադըրրուած՝ սահմանուած: Քո կրօնք:*
ՔՈՅԻՆԱՀՐԱՄԱՆ, ած. *Քո կողմից հրամայուած:*
ՔՈՅԻՆԱՇՈՒՆՉ, ած. *Քեզանից շինուած՝ ներշնչուած:*
ՔՈՅԻՆԱՋԱՆ, ած. *Քո ջանքով եղած:*
ՔՈՅԻՆԱՏՈՒՐ, ած. *Քո տուած:*
ՔՈՅՐ, գ. *Աղջիկ զաւակը միեւնոյն ծնողներից ծնուած :* Նման. (Եկեղ.) *Կուսանաց վանքերում՝ ամէն մի կոյս միւս կոյսերի վերաբերմամբ:* Փոխ. *Իգական սեռի միեւնոյն ծագումն ունեցող, իրար ազգական:*
ՔՈՅՐԱԲԱՐ, մկ. *Իբրեւ քոյր:*
ՔՈՅՐԱԳԻՐ, գ. *Քոյր գրուած կմ համարուած:*
ՔՈՅՐԱԴՈՒՍՏՐ, Տ. *Քեռադուստր:*
ՔՈՅՐԱՏԵԱՑ, ած. *Քրոջն ատող:*
ՔՈՅՐԻԿ, գ. (փաղաքշ.), *Փոքր քոյր:*
ՔՈՆԹ, գ. *Էգ շան՝ գայլի՝ կատուի կըտղանք: Զուգաւորման ցանկութիւն:*
ՔՈՆԹԱԼ, բ. *Զուգաւորուելու կտղանք ունենալ: Ցանկութիւն:*
ՔՈՆԹԻԿ, ած. *Սեռական ցանկութեամբ կտղած:*
ՔՈՆԹՈՒԿ, գ. Տ. *Քնթուկ: Խաղողի ողկոյզի չենչը:*
ՔՈՆՔՈՌՈՋ, ած. *Գոռոզ:*
ՔՈՆՔՈՌՈՍՏԱԼ, բ. *Բարձր ձայնով ծիծաղել:*
ՔՈՇԱԿ, գ. *Ուղտի ձագ:*
ՔՈՇԻԿ, գ. *Մեծ պասի առաջին օրը կատարուող ժողովրդական հանդէսում խեղկատակի դեր կատարող տղան:*
ՔՈՇԿԵԼ, բ. *(Քնից նոր զարթնած ժամանակ) յօրանջել, ճապկտել:*
ՔՈՉ, գ. *Ոչխարների զոմ:*
ՔՈՉ, Տ. *Քօչ:*
ՔՈՉԱԼ, գ. *Կալսելուց յետոյ հասկի մէջ դեռ մնացած ցորեն:*
ՔՈՉՈՒՈՐԱԾԻՆ, ած. *Քոչուոր ցեղից ծնուած:*
ՔՈՉՈՒՈՐԱԿԱՅԱՆ, գ. *Քոչուորաւան՝ քոչուորների կայան:*
ՔՈՌ, գ. *Արմտիքների չափ:*
ՔՈՌ, գ. *Յեխ, տիղմ:*
ՔՈՌ, Տ. *Քօռ:*
ՔՈՌԹԻԿ, գ. *Ծառի բնի մէջ գոյացած խոռոչ:*
ՔՈՌԻՆ, գ. *Թիկնապահների խումբը:*

**ՔՈՒԿՈԽ**, գ. *Քոռը կոխելը:*
**ՔՈՒՈՏ**, ած. *Ցեխոտ, տղոտ:*
**ՔՈՍ**, գ. *Մորթի վարակիչ հիւանդութիւն:*
**ՔՈՍԱԲՈՅՍ**, Տ. *Քոսքսուկ:*
**ՔՈՍԱՂԲԻՒՐ**, գ. *Հանքային ջրի աղբիւրը:*
**ՔՈՍԱԿ** / **ՔՈՍԱՅ** } ած. *Որի մօրուքը շատ ցանցառ եւ դժուար է բուսնում:*
**ՔՈՍԱԿԱԼԵԼ**, բ. *Վէրքի վրայ քոս կապել:*
**ՔՈՍՄԻՐՈՒՔ**, գ. *Անորոշ տեսակի բանջար:*
**ՔՈՍՈՏ**, ած. *Վրան քոսեր ունեցող:*
**ՔՈՍՈՏԵԼ**, բ. *Քոսով հիւանդանալ:*
**ՔՈՍՈՏՈՒԹԻՒՆ** / **ՔՈՍՈՒԹԻՒՆ** } գ. *Քոսոտ լինելը:*
**ՔՈՍՔՍՈՒԿ**, գ. (Բուս.) *Փոշածաղիկների դասին պատկանող բոյս:*
**ՔՈՎ**, (արեւմտահայ բարբառներում), գ. *Կողք, կուշտ:* Նխղր. *Մօտ, կողքին: Մօտ, համեմատութեամբ:*
**ՔՈՎԱՆՑ**, մկ. *Քովէն, մօտով:*
**ՔՈՎԱՑԱՒՈՒԹԻՒՆ**, Տ. *Կողացաւութիւն:*
**ՔՈՎԻԿ**, (փաղաքշ.) Տ. *Քով:*
**ՔՈՎԼԱՆԱԼ**, բ. *Հպարտանալ, պանծալ:*
**ՔՈՎՆՏԻ**, ած. *Կողքի, մօտի:*
**ՔՈՎՏԱՆՔ**, գ. մկ. *Քովերը, մօտերքը:*
**ՔՈՐ**, գ. *Մարմնի մորթի գրգիռ:*
**ՔՈՐԴՈՍ**, գ. *Անորոշ տեսակի դառն արմատ:*
**ՔՈՐԵԼ**, բ. *Քերել քոր եկած տեղը եղունգներով:*
**ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ**, գ. (Եկեղ.) *Թեմի եպիսկոպոսին ստորադրեալ՝ գաւառի եպիսկոպոս:*
**ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ**, ած. *Քորեպիսկոպոսին յատուկ:*
**ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԱԶՈԿ**, ած. *Քորեպիսկոպոսների խմբից բաղկացած:*
**ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Քորեպիսկոպոսի աստիճանը, քորեպիսկոպոսի պաշտօնը:*
**ՔՈՐՈՏԵԼ**, բ. *Այս եւ այնտեղ քորել:*
**ՔՈՐՈՑ**, գ. *Ասեղի նման մետաղեայ բարակ ձող:*
**ՔՈՐՈՒՏԵԼ**, բ. *Ինքն իրեն քորել:*
**ՔՈՐՔՈՇ**, Տ. *Փորփոշ: Փափուկ, փխրուն:*
**ՔՈՐՔՋՆԱԼ**, բ. *Ձիու խրխնջալ:*
**ՔՈՐՔՈՐԵԼ** / **ՔՈՐՔԵԼ** } բ. *Շարունակ քորել:*
**ՔՈՑԻ**, գ. *Կիսակարաս, գինու աման կարասի կէսի չափ:*
**ՔՈՒԱՀԱՐՑՈՒԹԻՒՆ**, գ. *Քուէ ձգելով գուշակութիւն:*
**ՔՈՒԱՐ**, գ. *Պաշտամունք:*
**ՔՈՒԱՐՑ**, Տ. *Կուարզ, Կուարց: Որձաքար:*
**ՔՈՒԱՒՈՐ**, ած. *Քիւ ունեցող:*
**ՔՈՒԲ**, գ. *Բահի վիզ:*
**ՔՈՒԵՐՈՐԴԻ**, գ. *Քրոջ որդի:*
**ՔՈՒԶԱՑ**, գ. *Կապիճ, արմտիքների չափ:*
**ՔՈՒԷ**, գ. *Խորանարդ ձեւի մարմին: Նարդի խաղալու զառ՝ խորանարդ ձեւի: Խորանարդ զառ: Հմայող: Գնդաձեւ փոքրիկ առարկայ, կաղնու մեծութեամբ, (սովորաբար գդթոր), որով քուէարկութիւն են կատարում: Ընտրական ձայն:*
**ՔՈՒԷԱԽՈՅԶ**, ած. գ. *Ժողովի մէջ այն անձը, որ ստուգում է քուէները:*
**ՔՈՒԷԱՏՈՒՓ**, Տ. *Քուէտուփ:*
**ՔՈՒԷԱՐԿԵԼ**, բ. *Քուէարկութեան միջոցով ընտրութիւն կատարել:*
**ՔՈՒԷԱՐԿՈՒ**, գ. *Քուէարկող:*
**ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. *Մի անձի ընտրութիւն:* Նման. *Ձայնատուութիւն թերթիկների միջոցով:*
**ՔՈՒԷԱՐԿՈՒՄ**, Տ. *Քուէարկութիւն:*
**ՔՈՒԷԹՈՒՂԹ**, գ. *Թղթի կտոր, որի վրայ քուէարկողը գրում է իր ընտրելիի ա-*

*նունը:*
**ՔՈՒԷՀԱՄԱՐ**, գ. *Քուէները համարելը՝ քուէարկութեան հետեւանքն իմանալու համար:*
**ՔՈՒԷՏՈՄՍ**, Տ. *Քուէթուղթ:*
**ՔՈՒԷՏՈՒՓ**, գ. *Փայտէ տուփ:*
**ՔՈՒԹԻ** / **ՔՈՒԹԻԿ** } (Մանկ.) գ. *Շուն, շնիկ:*
**ՔՈՒԹՈՒՌԿԷՆ**, ած. *Կերած ժամանակ խեղդող (տանձ):*
**ՔՈՒԹՈ՛Ի-ՔՈՒԹՈ՛Ի**, Տ. *Քութի՛-քութի՛, (շունը կանչելու ձայն):*
**ՔՈՒԼԱՅ**, գ. *Գզած փռփռշ բամբակի փաթիլ:*
**ՔՈՒԿԻՆ**, ած. (արեւմտ. լեզուով), *Քո, քեզ պատկանած:* Իբրեւ գ. *Քոնը:*
**ՔՈՒՂ**, գ. *Ոլորած դերձան՝թել:*
**ՔՈՒՃԱՊ**, գ. *Անամօթ՝լիրբ խօսք:*
**ՔՈՒՄԱՅԹ**, գ. *Արմաւագոյն՝ սեւի զարնող մուգ կարմիր գոյնով ձի:*
**ՔՈՒՆ**, գ. *Պարբերական հանգիստ:* ած. *Քնած:*
**ՔՈՒՆԳ**, գ. *Կաւէ մեծ փողրակ:*
**ՔՈՒՆԵԼ**, բ. *Քնել, քնանալ:* *Կնոջ հետ քնել, սեռական յարաբերութիւն ունենալ:*
**ՔՈՒՆԵԼ**, բ. *Անպատշաճ՝ անգործածական բառ հասարակութեան եւ գրականութեան մէջ: Գռեհիկ արտայայտութիւն, որով սպառնում են մէկին:*
**ՔՈՒՆԵՑՈՒՑԱՆԵԼ**, բ. անց. ձեւ *Քունել'ի:*
**ՔՈՒՆԻՉ**, գ. *Առնի անդամ:*
**ՔՈՒՆԾԻԿ**, ած. *Կծծի, ժլատ:*
**ՔՈՒՆԿՈՒԻԻ**, գ. *Քնի հետ կռիւ, երբ երեխայի քունը եկած ժամանակ լաց է լինում:*
**ՔՈՒՆՃ**, գ. *Քուրջ:*
**ՔՈՒՆՋՈՒԹ**, գ. (Բուս.) *Բիկնոների սեռից տարեւոր բոյս:*
**ՔՈՒՆՎՌՏԵԼ**, բ. *Կաւաշուտ շարժումներ անել:*
**ՔՈՒՆՎՌՏՈՒՔ**, գ. *Քունվռտելը:*
**ՔՈՒՆՑՆԵԼ**, բ. անց. ձեւ *Քունել'ի:*
**ՔՈՒՆՔ**, գ. (Կազմ.) *Երեսի երկու կողմը:*
**ՔՈՒՆՔՈՒՆԱՏԵԼ**, բ. *Յաճախակի մերձաւորուել:*
**ՔՈՒՇ**, գ. *Կրակարան:*
**ՔՈՒՇԱՆ**, **ՔՈՒՇԱՆՆԵՐ**, գ. *Թաթարական ցեղ:*
**ՔՈՒՇԱՆԱԲԱՐ**, մկ. *Քուշանների պէս, ասպատակելով:*
**ՔՈՒՇԻ-ՔՈՒՇԻ**, միջ. *Էշը կանչելու փաղաքշական ձայն:*
**ՔՈՒՇԿԷՆ**, գ. (Եկեղ.) *Փոքրիկ ուրար:*
**ՔՈՒՇՆԱՅ**, գ. *Ուտելի մի բոյս:*
**ՔՈՒՇՏԻԿ**, գ. *Գօտեմարտութիւն:*
**ՔՈՒՉ**, գ. *Հաւի կտնառք: Նախաստամոքս:*
**ՔՈՒՉԱԿ**, ած. գ. *Տասնհինգերորդ դարի վերջերում կմ տասնվեցերորդ դարի սկզբներում ապրող յայտնի հայ աշուղ Նահապետի մակդիրը:*
**ՔՈՒՉԻ** / **ՔՈՒՉԻԿ** } (Մանկ. եւ փաղաքշ.), գ. *Շուն, շնիկ:*
**ՔՈՒՉԻ – ՔՈՒՉԻ** / **ՔՈՒՉՈՒ – ՔՈՒՉՈՒ** } կոչ. ձեւեր *Քուչիկ'ի:*
**ՔՈՒՉՈՐԵԼ** / **ՔՈՒՉՈՒՐԵԼ** } Տ. *Կուչուռ անել:*
**ՔՈՒՋՈՒԼԱՅ**, **ՔՈՒՉՈՒԼԱՅ**, գ. *Անորոշ տեսակի բոյս:*
**ՔՈՒՋՈՒՋ ԱՆԵԼ**, բ. Տ. *Քջուջ անել: Փորփրել:*
**ՔՈՒՌ**, ած. *Գարշահոտ:*
**ՔՈՒՌԱԿ**, գ. *Ձիու ձագ:*
**ՔՈՒՌԱԿԱՄԷՐ**, գ. *Քուռակի մայր:*
**ՔՈՒՌԱԿԱՏԵԼ**, բ. *Քուռակը վիժել:*
**ՔՈՒՌՈՒԿ**, Տ. *Քուռակ:*
**ՔՈՒՌՈՒ-ՔՈՒՌՈՒ**, գ. *Շունը մեղմով կանչելու ձայն:*
**ՔՈՒՌՈՒԿԻԿ**, գ. *Ձիու քուռակ:*
**ՔՈՒՌՈՒՆԻԹ**, գ. *Հաւի ձուարանում՝*

*մանր՝ դեռ չզարգացած ձուիկները,* :
**ՔՈՒՌԻՉ**, գ. *Ապառաժ ժայռ:*
**ՔՈՒՌՉԱԼ**, գ. *Մազերի գանգուրները:*
**ՔՈՒՍԻ, ՔՈՒՍԻ-ՔՈՒՍԻ**, Տ. *Քըս, Քըս-քըս: Շունը գրգռել մէկի վրայ յարձակուելու:*
**ՔՈՒՐԱԿԱՆ**, ած. *Քրոջը յատուկ:*
**ՔՈՒՐԱՑ**, գ. *Մետաղի հանքը հալելու մեծ հնոց: Բաղնիքի հնոց:*
**ՔՈՒՐԱՆՔ**, գ. *Քրոջ ընտանիքը:*
**ՔՈՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քոյրերի կմ կոյս քոյրերի միմեանց սիրելը:*
**ՔՈՒՐԴ**, գ. *Իրանական ցեղի ժողովուրդ:*
**ՔՈՒՐԴԱՄՈՐԹ**, ած. *Քրդի մորթած:*
**ՔՈՒՐԻԿ**, Տ. *Քոյրիկ:*
**ՔՈՒՐՁ**, գ. *Այծի մազից կոպիտ գործըուածք՝ կտոր:*
**ՔՈՒՐՁԻԿ**, ած. (Եկեղ.) *Խաբեբայ կմ լիրբ:*
**ՔՈՒՐՄ**, գ. *Հեթանոսական կրօնների քահանայ:*
**ՔՈՒՐՄ**, գ. *Խաղողի որթ:*
**ՔՈՒՐՇ**, գ. *Պնդացած ձիւն:*
**ՔՈՒՐՈՑ**, գ. *Քարկտիկ խաղի մի ձեւը:*
**ՔՈՒՐՈՒ-ՔՈՒՐՈՒ**, գ. *Էշ կմ ձի կանչելու ձայնը:*
**ՔՈՒՐՈՒԿ**, գ. *Մարգարիտ:*
**ՔՈՒՐՉ**, գ. *Հին ու մին կտոր, ցնցոտի:*
**ՔՈՒՐՋ ՈՒ ԲՈՒՐՋ**, գ. *Քուրջ, ցնցոտիք:*
**ՔՈՒՑԻՆ-ՔՈՒՑԻՆ ԱՆԵԼ**, բ. *Ուսերը վեր-վեր շարժել: Մէկին հաճոյանալու համար կեղծ խոնարհութիւն եւ յարգանք ցոյց տալ:*
**ՔՈՒՑՈՒԼ**, ած. *Անճարակ:*
**ՔՈՒՔ**, գ. *Հեծութիւն, հառաչանք, բողոք:*
**ՔՈՒՔՈՒ**, գ. *Մանրած թարխունով եփած ձուածեղ:*
**ՔՈՒՔՈՒՌԻԿ**, Տ. *Սիմինդր, Եգիպտացորեն:*
**ՔՈՒՔՎԱ**, (Մանկ.), գ. *Գդակ:*
**ՔՈՓՍ**, գ. *Հեղուկի մէջ խիմած ու խիւս դարձած հաց:*

**ՔՈՔ**, (արեւմտ. բարբ.), Տ. *Կոկս:*
**ՔՈՔՈՃ**, գ. *Մաշած ցախաւելի կոթունը:* Նման. *Ցրտից փայտացած:*
**ՔՈՔՌՈՇԱՆԱԼ**, բ. *Մեծամտել, հպարտանալ:*
**ՔՉԱԿԱԶՄ**, ած. *Քչաքանակ:*
**ՔՉԱՄԱՆ**, գ. *Քուչ: Հաւի նախաստամոքս:*
**ՔՉԱՆԱԼ**, բ. *Նուազել, պակասել:*
**ՔՉԱՑՆԵԼ**, բ. անց. ձեւ *Քչանալ'ի:*
**ՔՉԸ-ՓՉԸ**, գ. *Փսփսոց:*
**ՔՉԻԿ ՄԸ, ՔՉԻԿ-ՔՉԻԿ**, Տ. *Քիչ մը, Քիչքիչ:*
**ՔՉՈՌ ԱՆԵԼ՝ ԳԱԼ**, Տ. *Կուչուռ անել, Քուչուրել:*
**ՔՉՈՒԹԻՒՆ**, գ. *Թուով՝ քանակով քիչ լինելը:*
**ՔՉՈՒՈՐ**, ած. *Սակաւամարդ:*
**ՔՉՈՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քչուոր լինելը, սակաւամարդութիւն:*
**ՔՉՏԱԿ**, ած. *Քիչ մը:*
**ՔՉՓՈՐԵԼ**, բ. *Մի սուր բանով փորփրել:*
**ՔՉՓՈՐԻԿ**
**ՔՉՓՈՐԻՉ** } Տ. *Ականջփորիկ:*
**ՔՉՓՈՐՈՒՄ**, գ. *Քչփորելը:*
**ՔՉՓՉԱԼ**, բ. *Քչը-փչը անել, փսփսալ:*
**ՔՉՓՉԻՒՆ**
**ՔՉՓՉՈՑ** } գ. *Քչփչալը, փսփսոց:*
**ՔՉՔՉԱԼ**, բ. *Փոքր ջրի հանդարտ հոսելիս կարկաչելը: Հաւի՝ կաչաղակի կարկաչելը:*
**ՔՉՔՉԱԼԻ**, մկ. *Քչքչալով:*
**ՔՉՔՉԱՆ**, ած. *Քչքչացող:*
**ՔՉՔՉՈՑ**, գ. *Քչքչալու ձայնը:*
**ՔՊՍԵԼ**, բ. *Ներս կոխել, սեղմել:*
**ՔՊՍՈՒԿ**, ած. *Լաւ հուպ տուած:*
**ՔՋՄԱՃ**, գ. *Անորոշ տեսակի ուտելի բանջար:*
**ՔՋՈՒՋ**, գ. *Հաւերի՝ մագիլներով գետինը փորփրելը:*
**ՔՋՈՒՋ ԱՆԵԼ**
**ՔՋՈՒՋԵԼ** } բ. *(Հաւի) մագիլներով հողը յետ-յետ տալը, փորփրելը:*

**ՔՌԱԼ**, բ. *Եռ գալ, եփուել:*
**ՔՌԱՀՈՏ**, ած. *Գարշահոտ:*
**ՔՌԱՅ**, ած. գ. *Քարքարոտ (տեղ՝ բլուր):*
**ՔՌԵԿ**, ած. *Ուլ:*
**ՔՌԵԿ, ՔՌԵԿԱՆ, ՔՌԻՌԵԿԱՆ**, Տ. *Կաղանչան:*
**ՔՌԷՃ**, գ. *Քարի մանրուք, խիճ:*
**ՔՌԹԱՄ**, գ. *Կաշառք:*
**ՔՌԹԱՆՔ**, գ. *Թելը քոթելիս՝ քոթիչի վրայ մնացած կմ գետին թափած մազմըզուքը:*
**ՔՌԹԱՆՈՒՈՐ**, ած. *Հին ու մին շորեր հագած:*
**ՔՌԹԵԼ**, բ. *Թելի մազմզուքները քոթիչով մաքրել:*
**ՔՌԹԵԼ**, բ. *Շատ վատ կարել:*
**ՔՌԹԵՆԱՒՈՐ**, ած. *Խարազանազգեստ, քրձեղէն հագած:*
**ՔՌԹԻԿ**, գ. *Օճառի մաշուած բարակ կտոր:*
**ՔՌԹԻՇ**, գ. *Գործ է ածուում կռիւ բառի հետ՝ իբրեւ կրկնական. կռիւ-քոթիշ:*
**ՔՌԹՈԹ**, ած. *Պատառոտուն:*
**ՔՌԹՈՒԿ**, ած. գ. *Քոթած: Վատ կարած:*
**ՔՌԻ**, ած. *Գարշահոտ, գարշելի:*
**ՔՌԻ-ՔՌԻ ԱՆԵԼ**, Տ. *Քոշտել: Հրել:*
**ՔՌԻԿ**, ած. գ. *Մի տեսակ ընտիր ցորեն:*
**ՔՌԽԵԼ**, բ. *Բարկանալ:*
**ՔՌԾԸԼ**, ած. *Չնչին, աննշան:*
**ՔՌՆԵԼ**, բ. *Ծաղիկ հիւանդութիւնից երեսն աւերուել:*
**ՔՌՆՈՒԿ**,ած. *Քոնած, ծաղկահար:*
**ՔՌՆՉԵԼ**, բ. *Քոինչ կմ քոիշ տալ: Հրել, բօթել:*
**ՔՌՈԽ**, ած. *Որբ:*
**ՔՌՈՇԱԼ**, բ. *Խմբուել, հաւաքուել:*
**ՔՌՈՒԹԻՒՆ**, գ. *Գժութիւն: Կոպտութիւն, բրտութիւն:*
**ՔՌՈՒՋ ՏԱԼ**, բ. *Քոշտել, բօթել:*
**ՔՌՈՒՑ ԸՆԿՆԵԼ**, բ. *Քնի մէջ խորդալ, խռմփալ:*
**ՔՌՍՏԱԼ**, բ. *Քայլելիս ոտը գետնին պինդ քսուել:*
**ՔՌՍՏԱԼ**, բ. *Կաշառք խոստանալ կմ տալ, կաշառք ուզել:*
**ՔՌՍՏԱՆՔ**, գ. *Կաշառք:*
**ՔՌՍՏԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Քոստալ՝ի:*
**ՔՌՍՏՈՑ**, գ. *Ոտքը գետին քսուելու ձայն:*
**ՔՌՓՇՏՈՒՆ**, ած. *Անհարթ, խորտուբորտ:*
**ՔՌՓՈՒԽ**, ած. *Գիրուկ:*
**ՔՌՔՌԱԼ**, *բ. Անպատշաճ կերպով բարձրաձայն ծիծաղել:*
**ՔՌՕ-ՔՌՕ՛**, միջ. *Էշ կանչելու ձայնարկութիւն:*
**ՔՍԱԿ**, գ. *Պարկ, տոպրակ:*
**ՔՍԱԿԱԳԻՆ**, ած. *Քսակով գնուած:* Հկռ. *Ժառանգական:*
**ՔՍԱԿԱԳՈՐԾ**, ած. գ. *Քսակներ շինող արհեստաւոր:*
**ՔՍԱԿԱԿԱԼ**, ած. գ. *Փողի քսակը իր մօտ կրող:*
**ՔՍԱԿԱՀԱՏ**, գ. *Ճարպիկ գրող:*
**ՔՍԱԿԱՎԱՃԱՌ**, ած. գ. *Քսակներ վաճառող:*
**ՔՍԱԿԱՒՈՐ**, ած. *Քսակ ունեցող:*
**ՔՍԱՆ**, թւ. ած. *Երկու անգամ տասը:*
**ՔՍԱՆԱԿԱՆ**, թւ. ած. *Ամէն մէկը կմ ամէն մէկին քսան:*
**ՔՍԱՆԱԿՈՂՄ**, ած. *Քսան կողմ ունեցող:*
**ՔՍԱՆԱՄԵԱԿ**, գ. *Քսան տարին իբրեւ մի միաւոր: Այն տարին, երբ լրանում է քսան տարի որեւէ անցքի:*
**ՔՍԱՆԱՄԵԱՅ**, ած. *Քսան ամիս տեւող:*
**ՔՍԱՆԱՄԵԱՆ**, ած. *Քսան տարի տեւող:*
**ՔՍԱՆԱՆԻՍՏ**, գ. (Երկրաչ.) *Երկրաչափական մարմին քսան երեսով:*
**ՔՍԱՆԱՆՈՑ**, ած. *Քսան միաւոր պարունակող:*
**ՔՍԱՆԱՊԱՏԻԿ**, մկ. *Քսան անգամ:*
**ՔՍԱՆԵԱԿ**, գ. *Քսանը իբրեւ մի միաւոր:*
**ՔՍԱՆԵՐՈՐԴ**, դաս. թւ. ած. *Տասն եւ*

*իննին յաջորդող (միաւորը):*
**ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿ**, գ. *Այն տարին, երբ լրանում է մի անձի գործունէութեան (կմ մի անգքի) քսան եւ հինգ տարին:*
**ՔՍԱՆԻՑՍ**, մկ. *Քսան անգամ:*
**ՔՍԱՆՈՐՁԱՅ**, գ. (Բուս.*), Քսան որձայ ունեցող:*
**ՔՍԱՆՈՒՄ**, ածն. *Քսաներորդ:*
**ՔՍԱՆՆՈՑ**, Տ. *Քսանանոց:*
**ՔՍԱՆՕՐԵԱՅ**, ած. *Քսան օր տեւող:*
**ՔՍԱՍ ԱՆԵԼ**, բ. *Պատմութիւնը երկարացնել:*
**ՔՍԵԼ**, բ. *Քսութիւն անել, զաղտնապէս չարախօսել:*
**ՔՍԵԼ**, բ. *Շփել: Մի բանի մակերեւոյթը ծածկել մի լոյծ՝ կակուղ նիւթով:*
**ՔՍՈՒԵԼԻՔ**, ած. գ. *Օծանելիք, քսուելու նիւթ:*
**ՔՍՈՒԸՌՏԵԼ**, նբ. *Սրան նրան քսուել:*
**ՔՍԸՐ-ՓՍԸՐ**, գ. *Ցած ձայնով զաղտնի խօսակցութիւն, փսփսոց:*
**ՔՍԻ ՏԱԼ**, Տ. *Քուսի տալ, Քուսի'ի տակ:*
**ՔՍԻՆՈՂՈՃԻՆՔ**, գ. *Վանքի հիւրատուն:*
**ՔՍԻՉ**, ած. գ. *Նա որ քսում է:*
**ՔՍԻՓԻԷ**, Տ. *Թրքաձուկ:*
**ՔՍԻՔ**, գ. *Քսութեան խօսք:*
**ՔՍԽԱՅ**, գ. *Տնկելու սոխ:*
**ՔՍՄՈՍ**, Տ. *Քսու:*
**ՔՍՄՈՍՈՒԹԻՒՆ**, Տ. *Քսութիւն:*
**ՔՍՈՒ**, ած. *Խօսք տանող բերող, բանսարկու:*
**ՔՍՈՒԹԻՒՆ**, գ. *Քսու լինելը: Քսութեան խօսք, զաղտնի չարախօսութիւն:*
**ՔՍՈՒՄ**, գ. *Քսելը:*
**ՔՍՈՒՐ**, գ. *Տան հանդերձեղէն:*
**ՔՍՈՒՐ-ԾՐՈՒՐ**, գ. *Կարի պարագաներ, մատնոց:*
**ՔՍՊԵԼ**, Տ. *Քպսել:*
**ՔՍՊԼԱԹ**, գ. *Փոքրիկ բրդէ քսակ:*
**ՔՍՊՆՈՏԵԼ**, բ. *Քցիմ բուսնել:*
**ՔՍՊՈՒԿ**, ած. *Քսպուն, սեղմ:*

**ՔՍՎԻՍ**, գ. *Մլուկ, փայտոջիլ:*
**ՔՍՈՒՌՏԵԼ** / **ՔՍՈՒՌՏԿԵԼ** } բ. *Ցաճախակի կմ այս ու այնտեղ քսուել:*
**ՔՍՈՒՌՏՈՒՔ**, գ. *Քսվռտելը:*
**ՔՍՏԱԽՈՏ**, գ. *Անորոշ տեսակի խոտ՝ ցորենի քիստի նման ծայրով:*
**ՔՍՏԱՑՆԵԼ**, բ. *Քայլելիս ոտներով քը՛ստ-քը՛ստ ձայն հանել:*
**ՔՍՏԱՒՈՐ**, ած. *Քիստ ունեցող:*
**ՔՍՏԻԿ**, ած. *Փոքրիկ, փստիկ:*
**ՔՍՏԼԻԿ**, ած. *Փանաքի, չնչին:*
**ՔՍՏՄՆԱԾԱԾԱՆ**, ած. *Վէտ-վէտ՝ մանր ալիքներով ծածանող:*
**ՔՍՏՄՆԱՓՈՒՇ**, ած. (Կրօն.) *Քստմնեցնող՝ ծակծկող փշի նման:*
**ՔՍՏՄՆԵԼ**, բ. *Զարհուրանքից՝ զզուանքից փշաքաղուել:* Նման. *Ջրի երեսին մանր ալիքներ խաղալ:*
**ՔՍՏՄՆԵԼԻ**, ած. *Քստմնեցնող, փշաքաղող, սոսկալի: Ամենազազիր, ամենազըզուելի:*
**ՔՍՏՄՆԵՑՈՒՑԻՉ**, ած. *Ինչ որ քստմնեցնում է, քստմնելի:*
**ՔՍՏՄՆՈՒԹԻՒՆ** / **ՔՍՏՄՆՈՒՄ** } գ. *Քստմնելը, փշաքաղուելը:*
**ՔՍՏԸՌ – ՔՍՏԸՌ** / **ՔՍՏԸՐ – ՔՍՏԸՐ** } մկ. *Ոտները քքսելով:*
**ՔՍՏՔՍՏԱՑՆԵԼ**, բ. *Ման գալիս՝ շարունակ քը՛ստ-քը՛ստ ձայներ հանել:*
**ՔՍՏՔՍՏՈՑ**, գ. *Քքստացնելու ձայնը:*
**ՔՍՓՈՒՍ**, ած. *Փասքուս, քսու:*
**ՔՍՔԸՍ**, ած. *Դանդաղաշարժ:*
**ՔՍՔՍԵԼ**, բ. *Այս եւ այնտեղ կմ շարունակ քսել:*
**ՔՎԱՆՏ**, գ. (Ֆիզ.) *Լոյսի ճառագայթի ամենափոքր մասնիկը:*
**ՔՈՒԱՆՏԱՅԻՆ**, ած. (Ֆիզ.) *Քուանտների վերաբերեալ:*
**ՔՈՒՔՈՒԱԼ**, բ. *Սրտի խորքից հեկեկալ:*
**ՔՐԴԱԲՆԱԿ**, ած. *Որտեղ քրդեր են*

*բնակում:*
**ՔՐԴԱԳԵՂ**, գ. *Քրդի գիւղ:*
**ՔՐԴԱԿԱՆ**, ած. *Քրդերին յատուկ:*
**ՔՐԴԱՆԱԼ**, բ. *Քուրդ դառնալ:*
**ՔՐԴԱՆԱԿ**, մկ. *Քրդի ձեւով:* Հմմտ. *Հայնակ:*
**ՔՐԴԱՆՈՑ**, գ. *Որտեղ շատ քրդեր են ապրում:*
**ՔՐԴԱԽՕՍ**, ած. *Քրդերէն խօսող:*
**ՔՐԴԱՑՆԵԼ**, անց. ձեւ *Քրդանալ՛ի,* նոյն նշ.:
**ՔՐԴԵՎԱՐ**, **ՔՐԴԵՐԷՆ** } ած. գ. մկ. *Քրդի (լեզու), քրդի լեզուով:*
**ՔՐԴԵՐԵՆԱԽԱՌՆ**, ած. *Քրդերէնի իրողութիւններով խառն:*
**ՔՐԴՈՒԹԻՒՆ**, գ. *Քուրդ լինելը:*
**ՔՐԴՈՒՀԻ**, գ. *Քուրդ իգական սեռի:*
**ՔՐԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Ոձիրների ուսումնասիրութիւն:*
**ՔՐԷԱԳԷՏ**, ած. գ. *Իրաւաբան:*
**ՔՐԷԱԿԱՆ**, ած. *Ոճրային ծանր պատիժի արժանի:*
**ՔՐԷԻՔՈՒՐ**, ած. *Գարշելի, վատթար:*
**ՔՐԷՀ**, գ. *Վարձ:*
**ՔՐԷՀԵԼ**, բ. *Վարձով բռնել:*
**ՔՐԷՀՏԱՐ**, գ. *Այն մարդը, որ ձի՝ սայլ ունի:*
**ՔՐԷՀՏԱՐՈՒԹԻՒՆ**, գ. *Քրէհտար լինելը:*
**ՔՐԹԵԼ**, բ. *Քերթել, Քերելով մաքրել:*
**ՔՐԹՄՆՋԱՆՔ**, գ. *Քրթմնջելը: Տրտջանք:*
**ՔՐԹՄՆՋԵԼ**, բ. *Քթի տակից կմ ցած ձայնով տրտնջել:*
**ՔՐԹՄՆՋՈՒՄ**, գ. *Քրթմնջելը:*
**ՔՐԹՈՒԿ**, գ. *Փոքր եւ տափակ կողով:*
**ՔՐԻԱՅ**, գ. (Կրօն.) *Քրիստոսի յիշատակը:*
**ՔՐԻԿ-ՔՐԻԿ**, ած. մկ. *Բոլորովին քըրքրուած:*
**ՔՐԻՆ**, գ. *Վէզի տափակ կողմը:*
**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**, ած. գ. (Կրօն.) *Քրիստոսի կրօնը դաւանող:* Հկր. *Հրեայ, մահմետական:* Փոխ. (Կրօն.) *Բարեպաշտ, արդար:*
**ՔՐԻՍՏՈՆԵԱՅԱՍԷՐ**, (Կրօն) Տ. *Քրիստոնէասէր:*
**ՔՐԻՍՏՈՆԵԱՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ**, ած. *Միջնադարեան քրիստոնէութեանը յատուկ:*
**ՔՐԻՍՏՈՆԷ**, ած. գ. (Կրօն.) *Քրիստոնեայ:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱԲԱՐ**, մկ. (Կրօն.) *Իբրեւ քրիստոնեայ:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի քարոզած, Քրիստոսի հիմնած:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱՄԻՏ**, ած. (Կրօն.) *Քրիստոնեայի պէս մտածող:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱՆԱԼ**, բ. (Կրօն.) *Քրիստոնեայ դառնալ:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱՊԷՍ**, Տ. *Քրիստոնէաբար:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱՍԷՐ**, ած. *Քրիստոնեաներին սիրող:*
**ՔՐԻՍՏՈՆԷԱՎԱՅԵԼ**, ած. *Ինչ որ վայել է քրիստոնեային:*
**ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Քրիստոնեայ լինելը:*
**ՔՐԻՍՏՈՆԷՈՒՀԻ**, գ. (Կրօն.) *Քրիստոնեայ իգական սեռի:*
**ՔՐԻՍՏՈՍ**, ած. *Օծուած: Փրկիչ:*
**ՔՐԻՍՏՈՍԱԲԱՐ**, մկ. (Կրօն.) *Իբրեւ Քրիստոս, Քրիստոսի պէս:*
**ՔՐԻՍՏՈՍԱԲԵՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի բերած:*
**ՔՐԻՍՏՈՍԱԳԵՂ**, ած. (Կրօն.), *Քրիստոսով գեղեցկացած, մաքուր (հոգու վերաբերմամբ):*
**ՔՐԻՍՏՈՍԱԳՈՐԾ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի գործած՝ կատարած:*
**ՔՐԻՍՏՈՍԱԴԱՒԱՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին իբրեւ աստուած դաւանող:*
**ՔՐԻՍՏՈՍԱԴԷՏ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին դիտող:*
**ՔՐԻՍՏՈՍԱԴԻՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի դրած:*

**ՔՐԻՍՏՈՍԱԴՐՈՇՄ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի դրոշմը իր վրայ կրող:*

**ՔՐԻՍՏՈՍԱԶԳԱԾ**
**ՔՐԻՍՏՈՍԱԶԳԵԱՑ** } ած. (Կրօն.) *Քրիստոսի շնորհը վրան կմ մէջը կրող:*
**ՔՐԻՍՏՈՍԱԶԳԵՍՏ**

**ՔՐԻՍՏՈՍԱԶՕՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսով զօրացած:*

**ՔՐԻՍՏՈՍԱԹԵՒ**, ած. (Կրօն.) *Քրիստոսով թեւաւորուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱԺՈՂՈՎ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից կմ Քրիստոսի անունով ժողովուած, քրիստոսախումբ:*

**ՔՐԻՍՏՈՍԱԽՐԱՏ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի խրատը պարունակող:*

**ՔՐԻՍՏՈՍԱԽՕՍ**, ած. (Կրօն.) *Քրիստոսով խօսող:*

**ՔՐԻՍՏՈՍԱԾԱՆՕԹ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին ճանաչող:*

**ՔՐԻՍՏՈՍԱԾԻՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին ծնող:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի, քրիստոնեան:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿԱՐԱԳ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից կարգուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿԵՑՈՅՑ**, ած. (Կրօն.): *Նա, որին Քրիստոս կեանք է տալիս, ապրեցնում է:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿԻՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին իր մէջ կմ վրայ կրող, քրիստոսազգեստ:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿՈՉ**, ած. (Կրօն.) *Որին Քրիստոս կանչում է իր մօտ:*

**ՔՐԻՍՏՈՍԱԿՐՕՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի պատուէրի համաձայն կենցաղ վարող:*

**ՔՐԻՍՏՈՍԱՀԱՅՐ**, ած. գ. (Կրօն.) *Քրիստոսի հայր:*

**ՔՐԻՍՏՈՍԱՁԻՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից շնորհուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱՄԱՏ**, Տ. *Քրիստոսազօր:*

**ՔՐԻՍՏՈՍԱՄԱՐՏ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի դէմ մարտնչող. (հրեաների՝ հերետիկոսների մասին):*

**ՔՐԻՍՏՈՍԱՄԵԾԱՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին մեծարող:*

**ՔՐԻՍՏՈՍԱՄԵՐՁ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին մօտ եղող՝ մերձաւոր:*

**ՔՐԻՍՏՈՍԱՅԻՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսական, Քրիստոսի:*

**ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին նման:*

**ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) *Քրիստոսանման լինելը:*

**ՔՐԻՍՏՈՍԱՆՇԱՆ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի նշանը՝ խաչի ձեւը կրող:*

**ՔՐԻՍՏՈՍԱՆՈՐՈԳ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից նորոգուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱՆՈՒԷՐ**, ած. (Կրօն.) *Քրիստոսի նուիրուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱՇԱՐԺ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից շարժուող՝ շարժուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱՊԱՇՏ**, ած. (Կրօն.) *Քրիստոսին պաշտող, քրիստոնեայ:*

**ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ**}
**ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ**} ած. (Կրօն.) *Քրիստոսից պսակուած՝ թագադրուած:*

**ՔՐԻՍՏՈՍԱՌԱՔ**, ած. (Կրօն.) *Քրիստոսից առաքուած:*

